



ՀՐԱՄԱՆԱԲ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

По благословению

**Его Святейшества ГАРЕГИНА II**

Верховного Патриарха и  
Католикоса Всех Армян



ПЕРВОИСТОЧНИКИ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

**III**

ПАРУЙР М. МУРАДЯН

**АРМЯНСКИЕ ЦЕРКВИ  
СТАРОГО ТИФЛИСА**

ИССЛЕДОВАНИЕ И ИСТОЧНИКИ

ИЗДАТЕЛЬСТВО ПЕРВОПРЕСТОЛЬНОГО СВЯТОГО ЭЧМИАДЗИНА  
СВ. ЭЧМИАДЗИН – 2009

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԳԲՅՈՒՐՆԵՐ

Գ

ՊԱՐՈՒՅՐ ՍՈՒՐԱԴՅԱՆ

ՀԻՆ ԹԻՖԼԻՍԻ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԳԲՅՈՒՐՆԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ – 2009

ՀՏԴ 23/28:27:941(479.25)  
ԳՄԴ 86.37+63.3(2Հ)  
Մ 992

**ՊԱՐՈՒՅՐ ՍՈՒՐԱԴՅԱԼ**

Մ-992 Հին Թիֆլիսի հայոց եկեղեցիները: Ուսումնասիրություն և աղբյուրներ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: - Ս. Էջմիածին, 2009, 400 էջ + 30 ներդիր:

Հին Թիֆլիսի մասին վկայություն բովանդակող հիշատակարանների, ուղեգրությունների, վավերագրերի և այլ նյութերի քննությամբ հեղինակը ճշգրտում ու սահմանում է Վիրքի մայրաքաղաքում հայոց եկեղեցիների կառուցման ժամանակագրությունը, տեղորոշումը, հիմնադիրների ու սպասավորների ինքնությունը, վերծանում վիմագրերը: Պաշտամունքային ու մշակութային օջախների պատմությունը դիտարկվում է տեղի հայկական համայնքի կազմավորման և գործունեության համատեքստում:

ԳՄԴ ԳՄԴ 86.37+63.3 (2Հ)

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ԴԵԿՏԱՆՈՒԹՅԱՆ

**ՏԵՐ և ՏԻՎԻՆ**  
**ԱՐՄԵՆ և ՆՈՒԿԵ ՍԵՐԳՎԱՆՆԵՐԻ**

ISBN 978-9939-59-017-2 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009 թ.

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Երկու տասնամյակ առաջ, երբ «Armeno-Georgica»-ի հերթական 5-րդ պրակն էր հրատարակվում, անհնար էր կանխատեսել, թե մեր երկրներից յուրաքանչյուրի քաղաքական ինքնացումը (Խորենացու գործած եզրն է) ո՛ւր կառաջնորդի, և այդ նոր կացությունը ինչպես կարձագանքվի մշակութային ժառանգության գնահատության ու տեր կանգնելու ավանդական կեցվածքի մեջ:

Խնդիրն այն է, որ ահադ. Նիկողայոս Մառի պատմա-բանասիրական աշխատանոցում «Հայ-վրացական բանասիրություն» անունով մկրտված գիտակարգի նպատակներն ու հետազոտական եղանակները սահմանելիս ուսուցչապետն ու նրա ազգի-ազգի աշակերտները համոզված էին, թե Կայսրության կազմ ընդգրկված և պատմական ճակատագրի գրեթե նույնական ճամփաներով քայլած ու մեկը մյուսի տանը օթևանած ժողովուրդների անցյալի ուսումնասիրությունը մշակութային ժառանգությունը սակարկելու առաքելություն չունի, եթե չասենք հակառակը՝ մեկով մյուսի տունը շեն պահելու կոչվածություն:

Բայց կացութաձևի մեջ տեղի ունեցած կտրուկ փոփոխությունները, մանավանդ արտագիտական մղումների տասնամյակներ տևած կաշկանդվածության չքացումը, սեփական հանրության ճակատագիրը այլևս սեփական հայեցումով տնօրինելու կարևելիություն հետ բերեց նաև գիտության սահմանների տեղաշարժ, և վերևում հիշված աշխատանոցի դռնով իսկ չանցած առանձին «գրչի մշակներ» սկսեցին հարևան ժողովուրդների պատմա-մշակութային ժառանգության ճանաչման ու հատկացման ջրբաժաններ սահմանել: Գուցե այս բանաձևումը խիստ է, գուցե այս տողերի արանքում բավականաչափ ճանաչելի մարդիկ իրենց պատկերացումների մեջ անկեղծ են ու քաջալերելի՝ անհատների կամ խմբակցությունների համար, սակայն եթե մեկը օրթոդոքսություն պատճառով հակված է ժխտել հարևան ժողովրդի ազգային եկեղեցու (հետևաբար և նրա հետ կապված մշակույթի) գոյությունը՝ այն անվանելով «հունածես», իսկ մյուսը զարմանքով գրքի խորագիր է ընտրում «Հայկական եկեղեցիներ Վրաստանում», գրչի մեկ շարժումով ավերելով սեփական երկրի մայրաքաղաքի պատմությունն ու մերժելով նրա բնակչության կեսից ավելի կազմողների դարավոր գոյությունը: Այս գուգակչուող և

մեկը մյուսից վարկպարագի «տեսությունները» միայն «եկեղեցի» բառի «ժողով», ուստի և «ժողովուրդ» եզրերով չէ որ ընդհանրանում են, նրանք այդպիսին են նաև իրենց բովանդակած քամահրանքով և «ոչ ուսեալ՝ ուսուցանելու» կեցվածքով: Եվ, դժբախտաբար, այդ «տեսությունները» ոչ սակավ դեպքերում չէ թե պաշտպաններ են գտնում, այլ նաև նյութականանում են՝ այլակերպված պաշտամունքային կառույցի տեսքով:

Երբ «Armeno-Georgica»-ի վերևում հիշված պրակն էր պատրաստվում (այն լույս է տեսել 1988 թվականին ուսերեն՝ «Վրաստանի Հայերեն արձանագրությունները. Թբիլիսի» բովանդակությամբ) Թիֆլիսի բարձրագիր Բեթղեհեմի եկեղեցին, ինչպես նաև նրանից մի քանի քայլի վրա գտնվող Կուսանաց Ս. Ստեփանոս մենաստանը ունեին արձանագիր խաչքարեր ու տապանագրեր, ուխտավոր Հայորդյաց «ողորմացէք» Հայցումներ, նպաստավորող մարդկանց անուններ ու հիշատակագրություններ և էլի հավատի ու հավաստման գրառումներ (ցանկացողները դրանց կարող են ծանոթանալ հիշատակածս գրքի 28-39, 41-44 էջերում): Վերջին տարիներին մեկ-երկու անգամ վերստին այցելեցի այդ եկեղեցիները և, ո՛վ գարմանք, թվարկածս պարագաները այլևս չկային: Չեմ կարծում, թե նրանք բոլորը միասնաբար կարող էին խանգարել այդ իսկ Աստծո տներում վրացերենով աղոթելուն կամ վրացի քահանայի սպասավորությամբ պատարագ մատուցելուն, որովհետև ամենակարող Տիրոջ համար «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարո՞ք՝ գՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր ոչ Հրէի և ոչ ճեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի, ոչ արուի և ոչ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս: Ապա եթէ դուք Քրիստոսի էք, ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ աւետեացն ժառանգորդ» (Առ Գաղատ., Գ, 27-29):

Ճիշտ է՝ մեր պատմությանն ու մշակույթին միջնադարում կատարված ուրիշ դեպքեր էլ են հայտնի, երբ միաբնակ դավանության աղոթարանը վեր էր անվում երկաբնակի, ինչպես օրինակ՝ Պղնձահանքի Ս. Աստվածածին եկեղեցին («առեալ ի Հայոց վրացի» (= երկաբնակ - Պ. Մ.) վանս հաստատեաց» կամ Տիգրան Հոնենցի կառուցած եկեղեցին, հակառակ նրա անեծք-սպառնալիքի՝ «զոր ինչ արձանագրիս է խաբանել ջանա[յ]... երեք սուրբ ժողովոցն և :Թ: դասուց հրեշտակաց նզովեալ եղիցի» («Դիվան...», I, 63), մի քանի տասնամյակ անց առատորեն որմնադարձվեցին և քաղկեդանական եկեղեցու վերածվեցին:

Հարկավ կարելի է ավելի ցցուն օրինակներ ևս վկայակոչել. նույն Անիում Կատրանիդե թագուհու ավարտած Կաթողիկեն սել-

Չուկները տիրապետության տարիներին, աղբյուրների հավաստմամբ, մահամեղականների աղոթարանի վերածվեց և ապա կրկին իր բուն նշանակումին վերադարձվեց: Այսպիսի իրողությունները անծանոթ չեն և վրաց միջնադարյան մշակույթին ու պատմությանը: Բայց այդ բոլորով հանդերձ՝ չենք կարող ասել, թե Անիի քաղկեղոնականները որևէ արձանագրություն են ջնջել, խաչ ու խաչկալ փոխել, նույնիսկ Կաթողիկեին տիրացող մահամեղականները անվնաս էին պահել պատերի գրություններն ու դեկորը, Կատրանիդեի դամբարանը, ինչպես որ Պղնձահանքի երկաթակահավատավորները ձեռք չէին տվել ձախ ավանդատանը թաղված Մովսեսի հայատառ տապանագրին (այժմ այն չքացել է): Ուրեմն կառույցի՝ մեկ դավանությունից մյուսին անցնելը մեզանում աննախադեպ չէ, շատ հաճախ այդ փոփոխությունը կատարվում է նույն համայնքի ներսում, այլևայլ պարագաների թելադրանքով, բայց նախորդ պատկանելության հիշատակի ջնջումը խորթ է ճշմարիտ հավատացյալին, քանզի «մեք ամենեքեան մի եմք ի Քրիստոս», «Աբրահամու զաւակ եմք», «աւետեացն ժառանգորդ»:

Աններելի այդ մերժողական կեցվածքը կարող են ունենալ թափառական տոհմերի ժառանգորդները (սույն եզրը փոխառություն է վրացերենից՝ մթա<sup>+</sup>բառի - սար ու ձոր, աստ-անդական), բայց ոչ մեր մշտապես բախտակից ու ասպետական այն հարևանները, որոնք կարոտ չեն ոչ բազմադարյան պատմության, ոչ էլ լիովին ինքնահատուկ ազգային մշակույթի ու մատենագրություն:

Հարկավ, ի սեր կառույցի պահպանության, գործող եկեղեցի դառնալը նախընտրելի է, քան պարապության մատնվելն ու աստիճանական կործանումը, մանավանդ եթե խոսքը վերաբերում է Թիֆլիսի պես երևելի քաղաքի տարբեր ծայրերից դիտարկելի հուշարձանին, սակայն ո՛չ սեփական մայրաքաղաքի պատմության էջերը կտրել-կպցնելու գնով: Ընդունենք, թե պատերի արձանագիր քարերը կարելի է հանել կամ նույնիսկ փոխարինել նորով, բայց գոնե փոխարինումը գրագետ պետք է լինի, այլապես Նախշիգորայի եկեղեցու մուտքի արձանագրության պես «եկեղեցիս ննջման սուրբ Աստուածածնի» փոխարեն պիտի կարդանք վրացերեն փոխարինագիրը՝ առանց «ննջման» (վրաց. միճինեբա): Կամ՝ միթե Գրեմիի եկեղեցիներից մեկի ճակատակալ երեք խաչքարերը ձեփելով «զարդարում ենք» հուշարձանն ու պատմությունը:

Քանի որ քսան տարի առաջ մեր վերծանած արձանագրությունները և նրանց իսկությունը հավաստող աղբյուրների ու լուսանկարների հրապարակումը չկանխեց «հայկական եկեղեցիներ թիֆլիսում» գարմացումն ու բացականչությունը, անհրաժեշտ նկատեցինք հրատարակության տալ նաև պատմական այն վկայություններն ու հաստատագրերը, որոնք նախորդ աշխատության մեջ պարզապես հղվում էին:

Հուսով ենք, այլևայլ աղբյուրներից քաղված ու մեկտեղված վկայությունների այս համահավաքը կսաստի հիվանդագին դրդումները, և պատկան մարմինները ազնվութուն կունենան առաջնորդվելու ավետարանական իմաստութեամբ՝ «ցուցէք ինձ զդահեկանն, ... և նոքա ցուցին, և ասէ: Ձո՞յր պատկեր և զգիր ունի: Պատասխանի ետուն և ասեն՝ զկալսեր: Եւ նա ասէ ցնոոս. արդ, երթա՛յք տո՛ւք զկալսերն՝ կալսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ» (Ղուկ. Ի, 22-24)\*:

Արդ, առաջարկվող աղբյուրները նպատակ ունեն ճշտելու, թե ներկայացվող պաշտամունքային կառույցները «զո՞յր պատկեր և զգիր» ունեն և ո՞ր համայնքի մշակութային ժառանգություն են ներկայացնում: Գուցե այլևս ուշ է Բեթղեհեմի, Կոստանաց Ս. Ստեփանոսի, Ս. Կարապետի, Նախշիգորայի Ս. Աստվածածնի, Գրեմիրի ծեփածածկ խաչքարերի դարձի մասին խոսելը, բայց գոնե Նորաչենի շուրջ եղած ամոթալի աղմուկը պիտի դադարեցնել:

\*\*\*

Վրաց մայրաքաղաքի պատմությունը շարադրված է բազում գրքերում, այդ թվում և հատորավոր, ուստի պատմության ամբողջական ներկայացումը մեր խնդրից դուրս է: Հարկավ՝ այստեղ հրապարակվող նյութերը կարող են լրացումներ ու սրբագրություններ ունենալ, բայց մենք չենք էլ հավակնել սպառնիչ համահավաք կազմել: Տողերիս հեղինակի հիմնական նպատակը Հայոց պաշտամունքային կառույցների գոյացման ժամանակագրությունն ու նրանց պատմա-մշակութային միջավայրը բացորոշելն է: Պարտքս եմ համարում ի թիվս այլոց մասնական երախտագիտությունս հայտնել հարգարժան Վազգեն Խուրլարյանին և Կարեն Մուրադյանին՝ լուսանկարների իրենց հավաքածոները գրքիս հեղինակին տրամադրելու ազնվության համար:

\* Վերահայոց պատմությունը լուսաբանող նյութերի ժողովածու կազմելու ցանկություն է ունեցել Գյուլտ ա. ք. Աղանյանցը, առ այդ հատկացնելով «Դիւան Հայոց պատմութեան» հատորներից մեկը (տե՛ս Գ. ա. ք. Աղանեանց, Վրաստանի հայերը. «Տարագ», 1919, № 6, էջ 44):

## ԹԻՖԼԻՍԸ ՎԻՐՔԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՎ ՆՐԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Դատելով Հնագիտական գտածոների ժամանակագրության փաստից՝ վաղնջական ժամանակներից (համենայն դեպս՝ Դ-Գ. հազարամյակներից սկսած) Թիֆլիս քաղաքի տարածքը բնակեցված է եղել: Հնագետ-պատմաբանները մատնացուցում են իրեղեն բազմաթիվ ապացույցներ, որոնք այսօրվա քաղաքի տարբեր հատվածներում անընդմեջ բնակություն մի քանի կենտրոնատեղիներ են վկայում<sup>1</sup>: Նրանց մեջ Հնագույններից ու կարևորագույններից մեկը «Ջջճ» (Յոբջ) - «Մայր ամրոցն» է, որ հայտնի է այլևայլ անուններով՝ Կալա, Շուրիսցխե, Նարիդալա և Քաղաքաբերդ: Ինչ խոսք ժամանակն ու արտաքին հարձակումները բազմիցս և մեծապես ավերել են այս պաշտպանական կառույցը, փոփոխության ենթարկել կիրառական կազմվածքը, բայց որ նա մշտապես ուղեկցել է բնակավայրի գոյությունը և նույնքան բազմիցս էլ վերականգնվել ու գործել է՝ կարելի է հավաստիանալ «Մայր ամրոցի» տարածքում կատարված պեղումների արդյունքներից ու գտածոներից: Արդեն կրած անունների զանազանությունն էլ տարբեր դարաշրջաններում նրա գործնականության հետևանք է:

Քաղաքի տեղանքը մերօրյա ընդգրկմամբ ֆիզիկա-աշխարհագրական մի քանի ինքնատիպություններ ունի. նախ՝ հարավ և արևմտյան եզրերը ամփոփված են բնակավայրը գրկող բավական դժվար հաղթահարելի լեռնապարով, որը այդ կողմերի անակնկալներից ու քամիներից պաշտպանում են նրա թաղամասերը:

Այսրկովկասում անկարելի պիտի լինի գտնել մեկ այլ քաղաքի տարածք, ուր ի մի ամփոփվեն մի քանի կիրճեր ու ձորեր՝ Սուլուակի, Էկալխևի (Թարգմ. Փշաձոր, Մացառաձոր), Վարդիսուբնիսի (իմա՝ Վարդաթաղի ձոր), Գաբաանց ձոր, Կուկիայի ձոր, Չուղուրեթի, Վարագիս խևի (իմա՝ Վարագաձոր) և այլն: Այս ձորերն ու կիրճերը ավարտվում

<sup>1</sup> Հնագիտական նկարագրի նախնական ամփոփում կարելի է գտնել «Թոփուսիսի օնթոփոս» («Թիֆլիսի պատմություն») գրքի առաջին հատորում, որ ընդգրկում է քաղաքի պատմությունը Հնագույն ժամանակներից մինչև ԺԸ. դ. վերջը (Թոփուսիս, 1990, թթ. 32-46): Խմբագիրներ՝ Մ. Դուբրաձե, Վ. Գուչուա:

են մեծ ու փոքր հարթակներով, քաղաքը արևելյան և արևմտյան կեսերի բաժանող Կուր գետը թափվող վտակներով ու առվակներով, տարբեր բարձրություններից միմյանց ու քաղաքամեջը դիտարկող վերելք-վայրէջքներով:

Քաղաքի տարածքը Վիրքի չորս կողմերը միմյանց կապող, ազգագավառները հավաքող նախադուռն է, որով և պայմանավորված է նրա ռազմավարական դերը Վիրքի և առհասարակ Այսրկովկասի պատմության մեջ: Հարկավ նաև այս պարագաները նկատի առնելով է, որ 1939 թ. երեք տասնամյակը նոր բոլորած պատմաբան Ս. Տ. Երեմյանը առաջինը կռահեց, թե այսպես կոչված «Պետինգերյան քարտեզի» (Tabula Peutingeriana) Արտաշատից Արմազիս խև (Արմազաձոր) տանող ճանապարհին Pila-do/Philado, Tilida տարբերակներով հիշատակվող բնակատեղին այսօրվա Թիֆլիսն է (վրաց.՝ Թբիլիսի-ն)<sup>1</sup>: Այս կռահումը, կարելի է ասել, այսօր ընդհանուր ճանաչում ունի, իսկ ինչ վերաբերում է նրա ստուգաբանությանը, ապա վրացագիտական գրականության մեջ գերիշխողը վրաց. Ծցոլո (Tbil-i) - տաք, ջերմ բառն է (Հր. Աճառյանը հայ. տապ բառի նմանությունը պատահական է նկատում), որ պայմանավորված է ճիշտ և ճիշտ հին Թիֆլիսի տարածքում, բերդի մատույցներում հանքային ջերմուկների առկայությունը<sup>2</sup>: Վրացական աղբյուրներում այս տեղանունը՝ Ծցոլոսի, սկսում է հիշատակվել Զ-է. դարերից մասնավորապես «Նվատաթիոս Մցխեթացու վկայաբանության» և «Քարթլիի դարձի» բնագրերում<sup>3</sup>:

Փաստորեն նույն Զ. դարին է վերաբերում մեզ դբաղեցնող քաղաքանվան հիշատակությունը բյուզանդական աղբյուրներում: Այսպես՝ 572 թ. հայոց, ապա և վրաց ապստամբության մասին պատմելիս դարի երկրորդ կիսի ժամանակագիր Թեոփանես

<sup>1</sup> С. Т. Еремян, Торговые пути Закавказья в эпоху Сасанидов, ВДИ, 1939, т. 1, с. 79-97. Վերջերս այդ քարտեզի Հայաստանը հատող ճանապարհներից ադրադառնալիս Հմ. Մարտիրոսյանը առանց հարցի մեջ խորամուխ լինելու և Ս. Երեմյանի անունը հիշատակելու Philado կայանի կապակցությամբ նկատում է «Которую кое-кто (?!) - П. М.) из исследователей принимает за Тбилиси»: Տե՛ս Աмаяк Мартиросյан, Мировые пути через Армению и Переднюю Азию по карте Пейтингера, Ереван, 2003, стр. 53.

<sup>2</sup> აკაკი შანიძე, საქართველოს დედქალაქის სახელწოდებისათვის.- “თბილისი 1500” თბ., 1958, გვ. 20-22. Վրաց բանահյուսության մեջ կան այս քաղաքանվան առաջացման հետ կապված գեղեցիկ ավանդություններ:

<sup>3</sup> Տե՛ս «ძველი ქართული აგიოგრაფიული ლიტერატურის ძეგლები», ი. აბულაძის რედაქციით, თბ., 1964, გვ. 32, 92 (ჩერს տარღնթხრეოմნერ იუნსეჟ ცვილისს] ცვილის; ცვილისად] ცვილის).

Բյուզանդացին նկարագրում է, թե պարսից մարզպան Սուրենը ինչպես էր հավատքի համար չարչարում հայերին, և հայերը սպանեցին նրան ու ըմբոստացան պարսից դեմ՝ հարելով հռոմեացիներին: Եվ ապա «...ἀπέστησαν δὴ παραυτίκα καὶ Ἰβηρες καὶ προσεχώρησαν Ῥωμαίοις, Γοργένους αὐτῶν ἡγεμονεύοντος: ἦν δὲ τῶν Ἰβήρων τότε ἡ Τίφιλις μετρόπολις - այնժամ իսկ պարսիկներին ըմբոստացան նաև իբերները և հարեցին հռոմեացիներին. նրանց գլխավորում էր Գորգենը, իսկ իվերաց մայրաքաղաքն էր Թիֆլիսը»<sup>1</sup>:

Չմտնելով սույն վկայություն պատմական կարևորության մանրամասների մեջ, այստեղ իսկ նկատենք, որ քաղաքիս հայկական Թիֆլիս անունը հունական այս ձևից է գալիս՝ թերևս ռուսական նորօրյա Тифлис-ի միջնորդավորմամբ: Ինչ վերաբերում է հայկական միջնադարյան աղբյուրներին, ապա մեզ համար ավանդական անունը Տփղիսն է: Այսպես է այն առաջին անգամ վկայված «Գիրք թղթոց» ժողովածուի է դարի առաջին տասնամյակին գրված պաշտոնական գրություններում<sup>2</sup>: Սմբատ Գուրկան մարզպանին հասցեագրած նամակում Յուրտավի եպիսկոպոս Մովսեսը տեղեկացնում է, որ տարակարծությունները հարթելու համար ինքը «գինն ակր ի Տփղիս ի նորա (իմա՛ Վրաց կաթողիկոսի - Պ. Մ.) դուրս կացի, և յանդիման չարար»<sup>3</sup>: Այստեղ մեզ համար կարևորը «յանդիման», անել-չանելը չէ, այլ այն, որ մինչև 608/9 թվականի հայ-վրացական եկեղեցական բաժանումը Մովսեսը վրաց կաթողիկոսի հետ առերես բացատրվելու համար Թիֆլիս է այցելել: Նույն առիթին վերաբերող երկրորդ տեղեկությունը ավելի ընդարձակ է և «Գիրք թղթոց» է մուծվել Ուխտանեսի «Պատմությունից» քաղելով. «Արդ՝ մեք ի բանէդ յայտմանէ ուսեսալք յաղագս թղթոյդ, և լուեալ ի հաւատարիմ մարդոց՝ որպէս ասացաք, ի խնդիր ելեալ գտաք ի Տփղիս քաղաքի, որ է ի Վրաց

<sup>1</sup> «Ճիշտագրություն միջնադարյան ճանապարհորդների ճամբարագրություններից»։ Երևանի Մատենադարանի հրատարակած, 1936, թ. 256-258. Այսուհետև՝ Georgianica. Այս տեղեկությունը առաջինը քննության է առել անվանի բյուզանդագետ-վրացագետ ակադ. Միմոն Ղաուխչիչվիլին (տե՛ս նրա՝ Յուրջվանի ճամբարագրությունների ճանապարհորդների ճամբարագրություններից, Երևան, 1927, թ. 283-284):

<sup>2</sup> Զգուշանանք «Տփղիս»-ը որևէ ձևով միջին հայերենում գոյություն ունեցող թաղի, թեպի, թեպո, (զիվահար, դարնված, «հանդէպ») բառին առնչելուց, որովհետև, ինչպես Նորայր Բյուզանդացին է ենթադրում, վերջինս թերևս փոխառություն է արար. թղպա ձևից (տե՛ս Նորայր Բիզանդացի, Բազմբար ստորին հայերենի ի մատենագրությունից ԺԱ-ԺԷ դարուց, [աշխատասիրութեամբ] Մարտ. Մինասեանի, Ժնև, 2000, էջ 225):

<sup>3</sup> «Գիրք թղթոց», երկրորդ հրատարակություն, Երևան, 1994, էջ 320:

նահանգին մերձ առ ստորոտով լերինն Կովկասու, ի վերայ գետոյն որ կոչիւր Կուր»<sup>1</sup>: Ավելորդ չէ նկատել, թե, միջնադարյան Հայ մատենագիրները նմանակելով հայերենի հայցական-ուղղական հոլովածների կիրառության կանոնավորությանը, հոգնակի թվում, Թփղիս-ը ևս ընդունել են իբրև հայցական, ուստի սեռականում ունենք Տփղեաց (Հմմտ. Մասիք-Մասիս-Մասեաց)<sup>2</sup>:

Մասնագիտական գրականության մեջ վաղուց արծարծվում է այն հարցը, թե ինչպես պետք է մեկնաբանել «Քարթլիի դարձի» պարսից բղեչխի «Ծցօլօնսօ յօլօյօ Եօնցօ - դեպի Տփղիս քաղաք ամրոց» գալու տեղեկությունը, որը ձեռիչյան տարբերակում լրացվում է յճ հապավումով: Եթե այստեղ սովորական յճօլօնսօ կարգանք, ապա ստիպված պիտի լինենք բղեչխին «դարձյալ», «վերստին» քաղաք բերել: Կարծում ենք կարելի կլիներ այն «յօլօնսօ» (դեպի բերդ, ամրոց) վերծանողների առաջարկն ընդունել, եթե այդ եզրի տակ արաբ. դալա (ամրոց) բառ տեսնելու գայթակղություն չառաջանա<sup>3</sup>:

Ինչպես երևում է Դ-Ե. դարում կատարված փոփոխությունները, ներառյալ ավատատիրության հաստատումն ու նոր վարդապետության ընդունումը, մանավանդ Վախթանգ Գորգասալ արքայի կատարած բարենորոգումները, կազմավորվող ավագանուն և տոհմիկ ազնվականությանը թելադրում էին մոտ գտնվել երկրի վարչական նորահաստատ կենտրոնին, որը թերևս ավելի ապահով էր պաշտպանական տեսակետից և երկրի արևելք-արևմուտքի հետ առավել կապված: Թիֆլիսը մայրաքաղաք դարձնելը, կարծում ենք, Վրաց թագավորությանը հնարավորություն էր տալիս ի մոտո հետևել ու հսկել Պարսից իշխեցողների վարած քաղաքականությանը, հնարավոր սահմաններում ուղղորդել այն:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 229: Երկրորդ վկայակոչության Տփխիս (փոխ. Տփղիս-ի) ձևը նախական չէ և հետևանք է ձեռագրական ընդօրինակման ուշ լինելու: Բուն «Գիրք թղթոցի» Աբրահամի երրորդ թղթում ևս ունենք Տփղիս ճիշտ գրությունը (Սահակ եպիսկոպոս Տփղեաց, ն. տ., էջ 343), որ չի արտացոլված հատուկ անունների ցանկում:

<sup>2</sup> Նման կարգի իրողությունների մասին տե՛ս П.М. Мурадян, Винительные фермы в именительном по данным топонимики Армении (к постановке вопроса). - Вестник - общ. наук АН Армении, 1971, стр. 21-38. Թիֆլիսին նվիրված մենագրություն է հրատարակել հանգուցյալ ակադ. Վաչե Նալբանդյանը «Թիֆլիսին Հայ մատենագրության մեջ (սկզբից մինչև 18-րդ դարի վերջը)», Երևան, 1958: Գիրքը լույս է տեսել նաև ուսսերեն և վրացերեն թարգմանություններով:

<sup>3</sup> Ընդ որում ուշ շրջանի վկայություններում Կալա / Կալո թաղամասը միջնաբերդից հյուսիս-արևմուտք ընկած հարթ տարածքին է վերաբերում և այս պարագայում կարող էր ստուգաբանվել իբրև յօլօ (հասկերը մաքրելու կլոր տարածք, Հմմտ. Հայկալ, կալատեղ, կալամասունք - յօլօմսեօծ եզրերը): Սա, անշուշտ, ընդամենը աշխատանքային վարկած է: Բառի ստուգաբանությունը տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ հատոր, Երևան, 1973, էջ 483-485:

Ճիշտ է, Վախթանգ Գորգասալը չհասցրեց մայրաքաղաքի տեղափոխությունը ինքն անձամբ կատարել և այդ պատգամեց որդուն՝ Դաչիին<sup>1</sup>: Այս տեղաշարժը, բնականաբար, պիտի առաջ բերեր բնակչության նկատելի ավելացում, մանավանդ այն խավերի, որոնք անմիջական առնչություն ունեին երկրի վարչական, տնտեսական ու մշակութային կյանքին:

Սակայն շատ չանցած, Հայաստանի և Աղվանքի նման, Վրաստանը ևս կորցրեց սեփական թագավորությունը, և Թիֆլիսն այլևս մինչև Հերակլ կայսեր արշավանքները պարսից պաշտոնեությունն անտոց մնաց: Բայց այդ չէր նշանակում, թե քաղաքը դադարեց վրաց բնակչության ու նրա մշակութային-դավանական կենսագործունեության կենտրոնատեղի լինելուց: 506 թ. Դվինի ժողովին մասնակցած վրաց բարձրաստիճան հոգևորականների կազմում էր Թիֆլիսի Սահակ եպիսկոպոսը, ուրեմն այստեղ արդեն թեմական կենտրոն (աթոռ) էր հաստատվել<sup>2</sup>: Ավելացնենք նաև, թե թագավորական արքունիքի Թիֆլիսում հաստատվելու հետ միաժամանակ Մցխեթից այստեղ պիտի տեղափոխվեր նաև թագավորական տան եպիսկոպոսը, որ և հիշատակված է մեր աղբյուրներում՝ «Պաղգին եպիսկոպոս թագավորութեան տան»<sup>3</sup>: Այս երկու եպիսկոպոսի ներկայությունը արդեն կարևոր վկայություն է պնդելու համար, թե Ե-Ձ. դարերում քաղաքում անհրաժեշտ քանակությամբ պաշտամունքային կառույցներ պիտի լինեին, մանավանդ որ, ինչպես Մովսես Յուրտավեցու նամակն է հավաստում, Մցխեթում նստող վրաց կաթողիկոսը մայրաքաղաքում վանատուն ուներ, ուր ընդունելության էր սպասում Յուրտավից եկած եպիսկոպոսը:

Արդ, մեզ ծանոթ եկեղեցիներից ո՞րն էր իբրև վանատուն ծառայում: Մեր համոզմամբ՝ թերևս Անչխիսուտին, որովհետև Սիոնի տաճարի կապակցությամբ աղբյուրներից հստակ տեղեկություն ունենք, թե երբ է այն կառուցվել<sup>4</sup>: Ճիշտ է, այդ տեղեկությունները ուշ շրջանից են (ԺԱ. դար), բայց գրավոր կամ բանա-

<sup>1</sup> «ქართლის ცხოვრება». ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით ს. ყაუხჩიშვილის მიერ, ტ. I, თბილისი, 1955, გვ. 205. (այսուհետև՝ *ԲՅ*).

<sup>2</sup> «Սահակ» անձնանունը ոմանց, թյուրիմացաբար, նրան հայազգի կարծելու առիթ է տվել, մինչդեռ այն սուրբգրական նույն «Իսահակն» է, որ գործածական էր նաև քրիստոնյա Վրաստանում:

<sup>3</sup> Գիրք թղթոց, էջ 343:

<sup>4</sup> *ԲՅ*, I, էջ 222, 227. «Այս նույն Գուարամ Կյուրոպաղատը նորոգեց Տիֆլիսի Սիոնի հիմքը» (222), «...և Ջվարի պատվական եկեղեցին և Տիֆլիսի Սիոնը ավարտեց Քարթլիի իշխան Ադարնասեն» (227):

վոր ավանդույթի վրա են հենված: Մենք տասնամյակներ առաջ առիթ ունեցել ենք ճշգրտելու հիշյալ աղբյուրներում եղած անձանց ժամանակագրությունը: Ադարնասեն հյուպատոսի տիտղոս կարող էր կրել միայն Հերակլ կայսեր արևելյան արչավանքից հետո՝ 626 թվականից ոչ շուտ, քանի 605/6 ~ 626 թթ. միջոցին Քարթլին Պարսից գերիշխանությունից տակ էր<sup>1</sup>: Ուրեմն Սիոնի կառուցումը կարելի է ժամանակագրել այսպես՝ հիմնարկել է Գուարամ/Գուրգենը և ավարտել Ադարնասեն, 626/7թ. ոչ առաջ<sup>2</sup>:

Այսպիսով, հնարավոր է հասել, թե Մովսես եպ. Յուրտավեցին ընդունելությունից էր սպասում Սիոնի առաջ: Հիմքեր կան ենթադրելու, որ քաղաքի վաղմիջնադարյան պաշտամունքային կառույցների շարքում պիտի լինեին նաև Ը. դարի երկրորդ կիսին գրված «Աբո Թփիլելու վկայաբանություն» մեջ հիշատակվող Քառասուն մարտիրոսաց եկեղեցին, որի գավթում գլխատեցին նահատակին<sup>3</sup>: Թե որքան հիմնավորված է այժմյան Քաջվեթի տաճարի տեղում երբեք գոյություն ունեցած մատուռի կամ եկեղեցու թվագրումը Զ. դարի երկրորդ քառորդով՝ դժվարանում ենք ասել, բայց և նման վարկածը մերժելու հիմքեր չենք գտնում<sup>4</sup>:

Թիֆլիս քաղաքի դրությունը խիստ բարդացավ Հերակլ կայսեր՝ Այսրկովկաս արչավելու տարիներին. Ջուանչերի տեղեկությունամբ Վիրքի էրիսմթավար Ստեփանոսը չէր կամենում ապստամբել պարսիկների դեմ, ուստի ջանում էր ընդդիմանալ բյուզանդացիների ու նրանց դաշնակցած խազարների կազմակերպած պաշարմանը<sup>5</sup>: Եվ այնուամենայնիվ, 628 Հերակլը տիրացավ քաղաքին և Կախեթից կանչելով Դաչիի ազգական Ադարնասենին՝ նրան հանձնեց Թիֆլիսն ու Քարթլիի իշխանությունը<sup>6</sup>, իբրև օժանդակ թողնելով խազար Զիրզային (հայերենում Զեբուլ)<sup>7</sup>: Հայ

<sup>1</sup> Ավելի հանգամանորեն տե՛ս Մ.Մ. Мурадян, Армянская надпись храма Джвари. - «Вестник общественных наук», 1968, № 2, стр. 66-68.

<sup>2</sup> Մեկ դեպքում հենվում ենք Կ. Կեկելիձեի ճշգրտման վրա (յճժո. ԼՕԾ. օՆԾ., I<sup>4</sup>, թ. 510-511), մյուս դեպքում՝ «Գիրք թղթոցի» (հմմտ. օց. Ջձձձձձձձձ, ձեղձձ ձեղձձձձձ... «յճժո. ձձձձձձձձձ», 1949, թ. 288-289).

<sup>3</sup> Այդ եկեղեցուն հանգամանորեն կանգրագուռանք ստորև:

<sup>4</sup> «Նձյ-Ն օՆԾ. Նձձձձձձձ», Ծ. II, տձ., 1973, թ. 131-132 .

<sup>5</sup> Ք.Յ., I, 224:

<sup>6</sup> Այս կարևոր անցուղարձը կարոտ է նոր աղբյուրների վկայություններով առավել հանգամանալի քննություն, որ ներկա դեպքում մեր հիմնական խնդիրը չէ:

<sup>7</sup> Վերջինիս և նրա դեմ եղած պայքարի մասին կարելի է կարդալ Մովսես Կաղանկատվացու երկում (տե՛ս Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխատասիրությունամբ Վ. Առաքելյանի, Երևան, 1988, էջ 137-140):

պատմիչը պաշարված քաղաքը կոչում է «փափկասուն, վաճառաշահ, հոչակավոր մեծ քաղաքն Տփլիս»<sup>1</sup>:

Մինչև է. դարի կեսերը Թիֆլիսը փաստորեն վրաց էրիսմթավարների նստոցն էր, ուր այլևս չկային օտար գորամիավորներ, իսկ քաղաքական առումով բյուզանդական գերիշխանությունը շարունակվում էր: Այս պարագայում իշխանությունները հաստատուն պաշտպանություն էին գտնում այլևս քաղկեդոնական դավանություն ընդունած վրաց եկեղեցու կողմից: Սակայն այս ներքին համերաշխ ընթացքը կարճատև եղավ: Դարի 40-ական թվականներին արաբներն արդեն նվաճեցին Բյուզանդական ենթակայություն շատ ծայրագավառներ (Սիրիա, Պաղեստին, Եգիպտոս), ապա և ողջ Պարսկաստանը: Այդ նշանակում է, թե հերթը հասնում էր Այսրկովկասին: Եվ հերթավի, Դվինը նվաճելուց հետո արաբները Հաբիբ իբն Մասլամայի գորապետությունը անցան Վիրքի նվաճմանը: Քարթլիի էրիսմթավար Ստեփանոս Գ.ը այլևս հույս չունեց, թե որևէ տեղից օգնություն կարող է ստանալ, ուստի խելամտորեն փորձեց հնազանդություն հայտնելով երկիրը փրկել կոտորածից ու նոր վայրագությունից: Նա Թիֆլիս եկած գորապետի հետ «Պաշտպանության համաձայնագիր» ստորագրեց, որով մի շարք պարտավորություններ էր ստանձնում (ամեն մի ընտանիք իբրև «Ջիզա» մեկ դինար էր վճարում, հասարակությունը զինական պարտույթ էր ստանձնում, օգնության էր գալու արաբների թշնամիների դեմ կռվին, իսլամ ընդունողները հավասարվում էին արաբներին և այլն): Սակայն նման հարաբերական խաղաղությունը տևական լինել չէր կարող. նախ՝ բյուզանդա-խազարական հարձակումները արաբների դեմ և ապա նվաճված երկրներում ծայր առած ապստամբություններն ու նրանց հնազանդության ուղարկված պատժիչ արշավները անմասն չէին կարող թողնել Վիրքը: Ճիշտ է, արաբները այստեղ այնքան էին հիմնավորվել, որ Թիֆլիսում նույնիսկ դրամահատարան հիմնեցին և 704 թ. դրամ կտրեցին, դրանով իսկ՝ Թիֆլիսը դարձրել էին արաբական լուծը հաստատուն պահելու կենտրոնակայան: Այստեղից էին վարում թյուրք-խազարների դեմ մղվող կռիվները, իսկ այդ նշանակում էր, թե քաղաքը ենթակա էր այդ հակառակորդների հարձակումներին, ինչպես այդ եղավ 764 թվականին, որից հետո Խուլասրո ամիրան ստիպված էր խազարների ավերած Թիֆլիսը վերականգնել<sup>2</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 137:

<sup>2</sup> Ք. Յ., I, 250: Խուլասրոն ողջ Այսրկովկասի ամիրան էր:

Քանի դեռ Թիֆլիսում նստող Վիրքի ամիրան ենթակա էր Հայաստանը կառավարող տեղապահին (վալիին), նրա ձեռքն էր կենտրոնացված քաղաքական ու զինվորական իշխանությունը, քաղաքի վարչական պաշտոնները, իրավարարությունը և այլն: Հարկավ այս պարագաները նպաստավոր պիտի լինեին քաղաքի մահամեղական բնակչության ստվարացմանը<sup>1</sup>:

Աբասյանների տիրապետության վերջին տասնամյակներին խալիֆայության տարբեր հատվածներում կենտրոնախույս ուժեր էին ձևավորվում: Այդ շարժմանը անմասն չէին Այսրկովկասի երկրները, մասնավորապես նաև Քարթլիի էրիսմթավարները՝ Ներսեհից սկսած: Արաբ ամիրայի իշխանության իրավասություններից աստիճանաբար դուրս եկան Քարթլին ու Կախեթը: Թեև այդ ընթացքում տեղի ունեցավ Քարթլիի էրիսմթավար Աշոտ Բագրատունու հարկադրյալ հեռացումը Շավշք ու Կղարջք, սակայն ամիրայության հաղթանակը այլևս ժամանակավոր էր: Աստիճանաբար Քարթլիի ամիրայությունը վերածվեց Թիֆլիս քաղաքի շրջանակված ամիրայության: Հետևանքներից մեկն այն էր, որ Թ. դարի սկզբներից քաղաքի ամիրաները այլևս իրենց ենթակա վրացի պաշտոնյաներ չունեին: Այս ընթացքում սրվում են նաև Թիֆլիսի ամիրաների և խալիֆայության կենտրոնական իշխանության հարաբերությունները՝ մանավանդ ժողոված հարկերը ուղարկել-չուղարկելու խնդրի շուրջ: 829 թ. Մուհամադ իբն Աթաբին հնազանդեցնելու համար պատժիչ արշավախումբ ուղարկեց, և ամիրայությունը վերստին Շուաբյաններին տրվեց: Այս ու սրան հաջորդած փոխարինումները հնազանդություն չապահովեցին: Իսահակ իբն Իսմայիլ ամիրան (ընդունված է կոչել Սահակ ամիրա) շարունակեց Խալիֆայից անկախանալու պայքարը: Շարունակականությունը հարկադրեց Բուղա Թուրքի գլխավորությամբ 852-853 թվականներին պատժիչ նոր զորքեր ուղարկել Հայաստան, ապա և Վրաստան: Երբ դժվարացավ Թիֆլիսի գրավումը, Բուղան որոշեց հրո ճարակ դարձնել այն: Եթե հավատանք ժամանակակից արաբ պատմիչ Թաբարիի հաղորդմանը, հրդեհին զոհ գնաց 50000 բնակիչ<sup>2</sup>: Ամիրայական ընտանիքը ջանում էր քաղաքի կառավարումը ժառանգական դարձնել, ինչը դարձյալ հնազանդություն չէր նշանակում: Թ. դարի 80-ական

<sup>1</sup> Այդ իրողության արձագանքը լսելի է վրաց վկայաբանական հուշարձաններում, հատկապես «Աբո Թիդիսեցու» վկայության մեջ:

<sup>2</sup> Հմմտ. Պ. ԵՋՈՑՈՄՅՈՒՆ, ძველი տბილისის ისტորიոս, ԵՊ. ՊՅՍՆ. ԵՊՍՏ. «Մոսթոյ», 1963, № 5, 33-153, նաև՝ «տბილისის ისტորիա», I, 33-66.

Թվականներից Թիֆլիսի ամիրայությունը իրենց ձեռքն առան Զաֆարյան ընտանիքի ներկայացուցիչները, այդ պաշտոնը վարելով շուրջ 200 տարի:

Այս հարստության հաստատումը, կարելի է ասել, որոշ հանգստություն բերեց քաղաքին (խալիֆների պատժիչ արշավներից ազատ մնացին), բայց քաղաքը առավել կտրվեց շրջապատող վրաց ազգային իշխանություններից, որը իր հերթին ջլատում էր բերում վրաց դպրության ու մշակույթի ընդհանուր վերընթացին: Զաֆարյանները ընդունում էին խալիֆայության գերազանցությունը, դրամի վրա հիշատակում խալիֆին, սակայն փաստորեն ինքնուրույն էին՝ քանի դեռ չէր ձևավորվել միացյալ կամ միավորյալ վրաստանը:

ԺԱ. դարում սկիզբ առած վրաց կազմավորումների միավորման ընթացքը, հասկանալի է, չպիտի շրջանցեր երբեմնի մայրաքաղաքը, որ կոչված էր կենտրոն լինելու երկրի չորս կողմերի միջև: Եվ հիրավի, Բագրատ Դ. Թագավորը գործնական քայլեր առավ Թիֆլիսի ամիրայության դեմ:

Աբո Թբիլելու վկայության հաղորդումից գիտենք, որ սրբին այրեցին «այն տեղում, որը քաղաքի ամրոցի արևելքում էր գտնվում և Սադիկեո անունը կրում»<sup>1</sup>: Մասնագիտական գրականության մեջ այս միկրոտոպոնիմը այլևայլ բացատրություն է ստացել: Մեր համոզմամբ առավել հավաստին պրոֆ. Ի. Աբուլաձեի կռահումն է, ըստ որի «գիլեգի»-ն մեր նույն դռակ, ամրոց, բանտ տերմինն է, որ կարող էր իրոք էլ «քաղաքից դուրս» գտնվել և միաժամանակ ամրոց կամ բերդ նշանակել<sup>2</sup>: Կարևորն այն է, որ արդեն ամիրայության շրջանում Կուրի ձախ ափը ևս բնակեցված էր (այժմյան Հավլաբարը, Իսանին): Դժվար է ասել՝ աջ և ձախ հատվածները բնակչության էթնիկ պատկանելության տարբերակում ունեին թե ոչ: Պաշտոնեությունն ու մահմեդական արիստոկրատիան պիտի գերադասեր քաղաքի այն մասում բնակվել, ուր ամիրան էր հաստատված և նրա ձեռնավորները:

Թիֆլիսը իսթահրիական նկարագրի համաձայն հարստությանը լեցուն վայր է, թեև Դերբենտից փոքր է, բայց ողջ Արանում նրանցից ու Պարտավից մեծ քաղաքներ չկան: 942-943 թվականներին Թիֆլիսում եղած իբն Հաուկալի դիտարկմամբ մե-

<sup>1</sup> Տե՛ս Ժ. լատ. Վեյդեր. Լուծ. Ժեյլեյ, I, տ. 1964, թ. 73.

<sup>2</sup> Իլոն Բալաձե, Մրոմեյ, Ե. II, տ. 1976, թ. 246-249.

ծուծյամբ այն միայն Դերբենդին է գիջում<sup>1</sup>: Քաղաքի մեծուծյան վկայուծյուն կարող է համարվել նաև հինգ մուտք (դուռ) ունենալու Թաբարիի տեղեկուծյունը. դրանք են՝ Մեդանի դուռ, Կարսի դուռ, Փոքր դուռ, Սողդերեի դուռ և Ռաբադի դուռ<sup>2</sup>: Սրանցից պարզաբանման կարոտ է մանավանդ Սողդերեի կոչվածը: Այն հարկավ Կուրի ձախ մասում է, քաղաքից դուրս, իսկ եթե Սողդերեին նույն Նաջոճըճըն է<sup>3</sup>, ապա ուրեմն խոսքը դեպի քաղաքային գերեզմանոց բացվող դռան մասին է, ուր Աբոյի հիշատակին նվիրված մատուռ է կառուցված եղել:

Այսպիսով, «Ժ. դարի վերջին Թիֆլիսը մեծ քաղաք է եղել, բաղկացած երեք հիմնական մասից, լավ պաշտպանված պարիսպներով ու քաղաքային դռներով»<sup>4</sup>:

Թիֆլիսի բնակչուծյան էթնիկական, դավանական ու սոցիալական կազմի մասին մեր ունեցած պատկերացումները հաճախ ավելի ենթադրական են, քան փաստական: Ինչպես նշեցինք, երկրի մայրաքաղաք հռչակելուց հետո, սկսած Զ. դարի առաջին տասնամյակներից քաղաքային բնակչուծյունը պիտի համալրվեր վրաց պաշտոնեուծյամբ, ազնվականուծյան ընտանիքներով, բարիքներ ստեղծող ազատ և կիսազատ բնակչուծյամբ, արհեստավորներով ու առևտրական ճանապարհների այս հանգույցում հաստատված վաճառականներով:

Ամիրայուծյան կազմավորմամբ, բնականաբար, այստեղ պետք է հաստատվեին պարսիկ ու արաբ մահմեդական ձեռնավորներ, հոգևոր սպասավորներ և աշխատավոր սովորական զանգված: Քաղաքի պատմուծյամբ զբաղվող վրացի գիտնականները այդ չեն ժխտում<sup>5</sup>: Կարծում ենք բավարար հիմքեր ունենք ենթադրելու, թե այստեղ տակավին հայ-վրացական դավանական միասնուծյան շրջանում կարող էր գոյուծյուն ունենալ հայկական ոչ մեծ համայնք. ժամանակին Մովսես Յուրտավեցի եպիսկոպոսի կապակցուծյամբ նշել ենք այդ: Եկեղեցադավանական խնդիրների առնչուծյամբ Մովսես եպիսկոպոսը Կյուրիոնի ընդունելուծյանն էր սպասում Թիֆլիսում: Այդ նույն արծարծումների ժամանակ Աբրահամ կաթողիկոսի հանձնարարուծյամբ առ Կյուրիոն էր գա-

<sup>1</sup> Ե. Նոնարուճը, օմն ձաշյակալ տծոլոսիս Մեխաքե, “Նայ. օստորոսիս ալմոսա-վելյուրի մասալեքո”, Գ. I, տծ., 1976, քք. 35.

<sup>2</sup> Օ. Եքիճիճը, նչվ. աշխ., էլ 152:

<sup>3</sup> Ե. Կեքելուճը, տծոլոսի ժեքլ յարուճըլ մսաճըրուճը և լիճըրաճըրաճի. “Եճի-ւլեքո...”, Գ. VI, տծ., 1960, քք. 120.

<sup>4</sup> “տծոլոսիս օստորոս”, I, քք. 75.

<sup>5</sup> Անդ, էլ 80:

լիս «այր կորովամիտ և ճոխախօս, և ճարտասան, և բանիբուն դպիր» Պետրոս եպիսկոպոսը, որին «յերկրորդում նուագի անդ սպառնացեալ նմա իշխանքն Վրաց՝ եթե է մի առներ երթևեկ ի մեզ վասն հաւատոյ ինչ իրաց...»<sup>1</sup>:

Անկարելի է ենթադրել, թե եկեղեցական բաժանումից հետո երբեմնի դավանակիցների պաշտամունքային կառույցներից որևէ մեկը կարող է շարունակել միաբնակ պատկանելութունը, ուստի և տեղացի և եկվոր հայոց հոգևոր սպասավորութունն ստանձնել<sup>2</sup>: Այստեղ մոռանալու է Ուխտանեսի հաղորդած տեղեկությունը վրացագետ Կիրակոս Թիֆլիսեցի քահանայի մասին. «...որ և նա մեծաւ աշխատութեամբ գրեալ և թարգմանեալ ի մերս լեզու՝ ետ մեզ գրով. վասն զի ինքն իսկ կարի քաջ գիտէր զգիր և զլեզու Վրաց»<sup>3</sup>:

Ավելորդ է բացատրել, որ վրացերենին քաջագիտակ քահանան Թիֆլիսում եկեղեցի և ծխականներ պիտի ունենար ժ. դարի կեսերին՝ Ուխտանեսի այցելութունից էլ առաջ և, հավանական է, տեղացի լինել<sup>4</sup>: Իսկ որ ամիրայության շրջանում այստեղ իրոք հայկական եկեղեցի կար՝ հավաստի է «Շարակնոցի» 1073 թ. ընդօրինակություն հիշատակարանի տեղեկությամբ<sup>5</sup>: Հավանաբար այս նույն աղբյուրից օգտվելով է, որ Գ. ա. ք. Աղանյանցը մատնացուցում է 1037 թ. գրված հիշատակարանում Աստվածածնի և Ս. Սարգսի տեղում եղած ավելի հին կառույց<sup>6</sup>:

Միավորման ճանապարհին գտնվող Վրաստանը երկար չպիտի հանդուրժեր մայրաքաղաքի օտարապատկան լինելը: Այդ իրողությունը մտահոգում էր թե թագավոր Բագրատ Դ. ին և թե խոշոր ավատատերերին, մանավանդ Կլդե-կարիի տիրակալ Լիպարիտ Բաղվաչին: Վերջինս երկու անգամ (1032 և 1037 թվականներ) փորձեց տիրանալ քաղաքին, բայց Բագրատ Դ-ի դեմ ունեցած թշնամանքը դրան չէր նպաստում: Թիֆլիսը ազատագրելու հարմար պահ ստեղծվեց 1045 թվականից հետո, երբ Ջաֆար ամիր-

<sup>1</sup> Ուխտանես, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, էջ 91:

<sup>2</sup> Ինչպես արդեն նկատել ենք, 506 թ. Դվինի ժողովին մասնակցող Թիֆլիսի եպիսկոպոսին հայագգի համարելու հաստատուն հիմք չկա:

<sup>3</sup> Ուխտանես, նշվ. աշխ., էջ 14:

<sup>4</sup> Իր տեղում կհամոզվենք ս. Գևորգ եկեղեցու պատին եղած արձանագրության վկայութունը, թե եկեղեցին կառուցվել է Հայոց 80 թվականին (= 631 թ.) վրիպյալ ընդօրինակման արդյունք է: Հմմտ. Մ. Ա. Օրբելի, Избранные труды, Ереван, 1963, стр. 218.

<sup>5</sup> Մատ., կաթողիկոսական դիվան, թղթ. 228, գործ 17, թերթ 67Վ. Տե՛ս նաև սույն գրքի «Հիշատակարաններ» բաժնի սկզբում:

<sup>6</sup> Հավանաբար առկա է 1073/1037 թվերի վրիպում («Տարագ», 1919, Թիֆլիս, № 1-12):

րան այլևս չկար, և աշխուժացել էին «ծերք քաղաքին», որոնց համար Բագրատի հովանավորությունը նախընտրելի էր: Եվ հի-րավի՛ Կուրից արևմուտք ընկած քաղաքամասը հանձնվեց նրան, մինչդեռ Իսանին շարունակում էր մահամեղական ավազանու ձեռ-քը մնալ: Լիպարիտի զորքերի Թիֆլիս շտապելուն տեղեկացած Բագրատը գերադասեց թողնել քաղաքը և ետ քաշվել, մանա-վանդ որ նրա օգնությունն էին սպասում անեցիները՝ Գագիկ Բ-ի Բյուզանդիա կանչվելուց հետո<sup>1</sup>: Եվ միայն սելջուկների կողմից Լիպարիտին գերեվարելուց հետո է, որ Բագրատը փորձեց վերս-տին տիրանալ Թիֆլիսին և վերստին էլ թողնել այն:

Ի վերջո, «ծերք քաղաքին» դիմեցին Կախեթի թագավոր Աղ-սարթանին, որը և շատ չանցած այն վաճառեց Բագրատ Դ. թա-գավորին<sup>2</sup>, իսկ վերջինս գերադասեց Ջաֆարյանների տնօրինու-թյանը թողնել ստացած քաղաքը: Շատ չանցած այն գրավեց սուլթան Ալփ-Արսլանը (1067 թ.): Մի քանի անցուղարձերից հե-տո քաղաքն անցավ Բագրատի իրավասության, սակայն ոչ վերջ-նականապես, քանի որ վրաց թագավորը զգուշանում էր զորացած «մեծ թուրքության» հետ նոր ընդհարումից: Ալ-Ֆարիդի տեղե-կությունք քաղաքի տերեր դարձան տեղական բնակչության ներ-կայացուցիչները, որոնց թվում և արհեստավորության ու վաճա-ռականության խավեր ներկայացնողները<sup>3</sup>:

1089 թ. թագավորությունն ստացած Դավիթ Դ-ը հմուտ զորա-վար ու նրբանկատ դիվանագետ էր: Թագավորության առաջին տասնամյակներին նա ջանում էր թուրք-սելջուկներից ետ գրավել Թիֆլիսին հարող շրջաններն ու քաղաքները: Նրան ապավինում էին ոչ միայն Վրաստանի, այլ նաև Հայաստանի բնակիչներն ու քաղաքները: Առհասարակ հանձին Դավիթ Շինարարի Այսրկով-կասի ժողովուրդները տեսնում էին իրենց ազատարարին, ուստի ջանադիր մասնակցություն էին բերում նրա իրագործած արշա-վանքներին ու մղած ճակատամարտերին<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ք. Յ., I, 300:

<sup>2</sup> Աղբյուրագիտական ավելի հանգամանալի քննություն տե՛ս Ք. յօ՞ճճձձ, XI-XIII სს. 112-114.

<sup>3</sup> Հմմտ. Ք.Յ., I, 340:

<sup>4</sup> Քաղաքական հեղհեղուկ կացությունը պակաս ավերածություն չէր գործել և երկրի հոգևոր կյանքում. Դավիթ կենսագրի վկայությամբ «Հայեցաւ Դաւիթ իմաստու-թեամբ յեկեղեցիս, զի ոչ գոյր նոցա ճրագ, այլ առաջնորդք կոյրք և զաւշաքաղք, այլ և աւազակք, որք ընդ որմ և ընդ երդս մտանէին, և ոչ հովուաբար ընդ դրունս: Այս-պէս էին ժամանակին եպիսկոպոսք և ձեռնադրէին կաշառաւք քահանայս՝ նման իւ-րեանց. և կացուցանէին քորեպիսկոպոս անմիտս և ազահս, և անկէին զանաւրէնու-թիւն ի տան Աստուծոյ...» (Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հա-

Բագրատունյաց տոհմի ռազմավարական հմտության լավագույն կարողությունները իր մեջ կուտակած թագավորը նախ գրավեց Կյուրիկյանների մայրաքաղաք Սամշվիլդեն (1118 թ.), որոշ ժամանակ առաջ՝ Ռուսթավը (1116 թ.), ապա 1118-1120 թվականներին ստեղծեց մշտական բանակ և փաստորեն նախապատրաստեց Թիֆլիսի վերջնական ազատագրումը: 1121 թ. օգոստոսի 12-ին Դավթի զորքերը քաջության ու անձնագոհության բացառիկ կարողություն ցուցաբերեցին Դիդգորիում կայացած ճակատամարտում, երբ իրենց մի քանի անգամ գերազանցող մահմեդական ուժերի դեմ փայլուն հաղթանակ տարան, դրանով իսկ ապահովելով Թիֆլիս քաղաքի գրավումը հաջորդ տարին<sup>1</sup>: Տպավորիչ այդ հաղթանակը անարձագանք չի մնացել հայոց մատենագրության մեջ. «Յայնժամ գայր Մելեքն սուլտանն Գանձակայ չորս հարիւր հազար ձիաւորով արանց քաջաց, և խաղացին ահագին բազմութեամբ և մտանէին յաշխարհն Վրաց ի կողմն Տիխեաց քաղաքին ի լեառն որ Դեկոր կոչի (կարդա՛ Դիդգոր - Պ. Մ.) և լուեալ զայս Դաւիթ Վրաց թագաւորն՝ որդի Բագրատայ որդւոյ Գորգէնի, և հասանէր ի պատերազմ ընդդէմ Թուրք զօրացն քառասուն հազարով կորովեաց և արանց քաջաց և կիրթ պատերազմողաց. ունէր և այլ զօրս ի Խափշախաց թագաւորէն արս տասն և հինգ հազար քաջս և ընտիրս, և յազգէն Ալանաց արս հինգ հարիւր և Փռանգ՝ հարիւր: Եւ յօգոստոս ամսոյ ԺԳ (13) և ի պահոց Աստուածածնի հինգշաբթի օրն եղև սաստիկ պատերազմ ի մէջ երկուց լերանց, որ և յահագին ճայթմանէ զօրացն գոչէին լերինքն. և յայնժամ օգնութեան հասանէր յԱստուծոյ ի վերայ Վրաց զօրացն. և ի խմբել պատերազմին զամենայն զօրան Թուրքաց դարձուցանէին ի փախուստ: Եւ յայնմ աւուր եղև սաստիկ և ահաւոր կոտորած զօրացն Թուրքաց, և լցան դիակամք գետք և ձորք լերանց, և ամենայն քարափունք լերանցն ծածկեցան. և եղև համար կոտորածոյն զօրացն Թուրքաց քառասուն բիւր, և ձերբակալս արարին արս երեսուն հազար...»<sup>2</sup>:

Դավթի անձին ու վարած քաղաքականությանը ապավինած հայոց զինական կազմավորումները պիտի որ անմասն չմնային

յերեն թարգմանությունը: Վրացերեն բնագիրը և հին հայերեն թարգմանությունը ուսումնասիրությունը և բառգրքով լույս ընծայեց Իլիա Աբուլաձեն: Թբիլիսի, 1953, էջ 239-240):

<sup>1</sup> Ճակատամարտի պատմական նշանակությունը հանգամանորեն գնահատված է պրոֆ. Յոտա թյեևոսյի ժլջլջլո նոյննոյն (Ջարմանահրաչ հաղթություն) գրքում (տժ., 1972):

<sup>2</sup> Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 349-350:

այս ճակատամարտին: Ուռհայեցու տեղեկությունը ձեռքին ունեցող Սմբատ Սպարապետը այս պատերազմը ներկայացնելիս, ինչպես երևում է, օժանդակ աղբյուր է ունեցել, ուր խոսվել է նաև Հայոց զորագնդի մասնակցություն մասին. ըստ նրա տեղեկության խփչախներից (իմա՛ զփչաղներից) մասնակցել է ԽՌ (40000) հեծյալ, ալաններից ԺԼՌ (18000), «ի Ֆոանգաց ԵՃ (500), ի Հայոց՝ ԺՌ (10000)»<sup>1</sup>:

Ի տարբերություն այլ աղբյուրների, Սպարապետը Թիֆլիսի գրավումը ևս դնում է 1121 թվականի տակ՝ «եւ ի սոյն ամի էառ զՏիփլիս ի Պարսից պատերազմաւ, և արար սաստիկ կոտորածս և ԵՃ (500) սրահանգ կախեաց զփայտէ»<sup>2</sup>: Պատմիչները այս փաստն այնքան են կարևորում, որ անհրաժեշտ են համարում մայրաքաղաքի՝ օտարի ձեռքին լինելու տարիները հաշվել, և ըստ այդմ՝ Դավիթ Թագավորը «էառ զմայրաքաղաքն Հայոց զԱնի որ եկաց ձեռս այլազգեացն ամս Կ (60)»<sup>3</sup>, իսկ Վրաց մայրաքաղաքը՝ «400 տարի»<sup>4</sup>:

Մտաթէոս Ուռհայեցու մոտ ոչ պակաս կարևոր այլ տեղեկություն էլ կա, որ մասամբ կրկնված է նրան հաջորդած պատմիչների երկերում ևս. «Եւ էր Դաւիթ արքայ սուրբ և առաքինի, զարդարեալ ամենայն աստուածապաշտութեամբ և բարի արդարութեամբ, և սա երևեցաւ ընդունող և սիրող ազգին Հայոց: Առ սա ժողովեցան մնացեալ զօրքն Հայոց, և սա շինեաց քաղաք Հայոց յաշխարհն Վրաց և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս, և անուանեաց զանուն քաղաքին Գօղա, և ունէր մեծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ զամենայն ազգն Հայոց»<sup>5</sup>:

Դավիթի շուրջ Հայոց «մնացեալ զօրաց» ժողովումը ինքնին նշանակում է, թե մայրաքաղաքն ազատագրող արքան որքան խիստ էր իրեն ընդգրկմացողների՝ «պարսիկների» հանդեպ, նույնքան էլ ընդառաջող պիտի գտնվեր զորակցողների նկատմամբ, որոնց մեջ նկատելի տեղ էին զբաղեցնելու արհեստներով ու

<sup>1</sup> Սմբատ Սպարապետի Տարեգիրք, [աշխատասիրութեամբ Հ. Սերոբէ Վ. Ազըլեանի], Վենետիկ, 1956, էջ 150:

<sup>2</sup> Անդ: Հրատարակիչը արձանագրել է թվագրման տարբերությունը. Աբուֆարաջ՝ 1121-ին, Իբն-Ալ-Ասիր՝ 1122-ին, Իբն-Բեթիր՝ 1124-ին (անդ, ծան. 16):

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 155:

<sup>4</sup> Ք. Ց., I, 342: Այս և մյուս աղբյուրները հաճախ մահմեդականների տիրապետության գտնվելը կոչում են «Պարսից»:

<sup>5</sup> Մատթ. Ուռհայեցի, էջ 356: Հմմտ. Սմբատ Սպարապետ, էջ 154: Նույնը կա նաև Կիրակոս Գանձակեցու երկում և «Քարթլիս ցխովրեբայի» հայերեն թարգմանության լրացումներում (տե՛ս Պարույր Մուրադյան «Վրաց պատմության» հայերեն թարգմանության գնահատության հարցի շուրջ.՝ «Էջմիածին», 2008, Զ-է, էջ 93-101):

առևտրով անուն վաստակած հայազգի մարդիկ, հայ ազնվականության մնացորդների ժառանգները: Եվ հիրավի, ԺԲ-ԺԳ. դարերի Թիֆլիսաբնակ որոշ ընտանիքներ, ի մասնավորի Ռեմեկյանները, այստեղ էին հաստատվել Մանազկերտից Կարին, ապա Կարինից Թիֆլիս տեղափոխվելով<sup>1</sup>: Նրանք այդ արել էին թե գործունեություն լայն ասպարեզ գտնելու և թե Վրաց Բագրատունի արքայական տոհմի քաջայերանքն ու վրաց բնակչության հանդուրժողականությունն ունենալու հիմունքով: Թիֆլիս հաստատվածների շարքին էին նաև Սարավանի որդիներ Շնորհավորը և Մկրտիչը: Նրանցից առաջինը, ինչպես ապացուցել է Հ. Մարգարյանը, «Վրաց ժամանակագրության հիշատակած նույն Շաղինն է, որը բացառիկ հեղինակություն էր վայելում Հուլիանոս խանի մոտ և 1259-1265 թվականներին վրաց թագավորի հարկադրական ընդհատումներով բացակայություն տարիներին կառավարել է «Գուրջիստանի վիլայեթը»<sup>2</sup>: Ահա այս Շնորհավոր > Շահաբադին > Շաղինն է, որ Թիֆլիսում 1267 թ. եկեղեցի է կառուցում<sup>3</sup>, իսկ մինչ այդ՝ 1264 թ. Հուլիանոսի մոտ գնալիս ուղեկցում էր վարդապետներ Վարդան Արևելցուն, Սարգսին և Գրիգորին, նրանց հետ էր նաև «աւազ երէցն Տփխեց Տէրտէրն»<sup>4</sup>:

Ցավոք, աղբյուրները չեն հաղորդում, թե Թիֆլիսում այս տարիներին քանի Հայոց եկեղեցի կար, որոնց ավազ երէցին իր հետ տանում էր Շնորհավոր/Շաղինը, ինչպես որ չգիտենք նաև, թե առկա եկեղեցիներից որն է նրա կառուցածը: Բայց արդարացի է նկատված, որ 1251 և 1267 թվականներին երկու նոր եկեղեցիների կառուցումը Թիֆլիսի հայ բնակչության թվական ավելացմամբ է պայմանավորված: Հիմքեր կան ենթադրելու, որ մինչ այդ էլ, քաղաքը մասնեղականներից ազատագրելուց հետո, հայերի այստեղ հաստատվելու մի քանի ալիք է եղել: Համենայն դեպս, Գրիգոր Տղայի կաթողիկոսության տարիներին, 1179 թ. Հռոմկլայի ժողովի որոշումները հաստատող հայոց նշանավոր գործիչների թվում հիշատակվում է Թիֆլիսի Հայոց Բասիլիոս արքեպիսկոպոսի ա-

<sup>1</sup> Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, 1957, էջ 206-208: Ումեկի և նրա տոհմի մասին տե՛ս նաև Ս. Ավագյան, Նորահայտ վիճակի արձանագրություն Ումեկյան տոհմի մասին «Վիճակագրական պրպտումներ», Երևան, 1986, էջ 94-111:

<sup>2</sup> А. Г. Маргарян, К вопросу о личности и деятельности “Некоего Шагина”.- Кавказ и Византия, вып. 3, Ереван, 1982, стр. 64-72.

<sup>3</sup> Սամուէլի քահանայի Անեցոյ՝ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղ., 1893, էջ 161: Եկեղեցու կառուցման թվականի ճշտումը ըստ Հ. Մարգարյանի (նշվ. աշխ., էջ 70):

<sup>4</sup> «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 156:

նունը<sup>1</sup>: Այլ-Ֆարիկիի հաղորդումը հաստատում է, թե պարսիկների (իմա՛ մահմեդականների) տիրապետության շրջանում ևս, բացի իսլամներից, քաղաքում բնակվում էին վրացիներ, հայեր և հրեաներ<sup>2</sup>: Նույն աղբյուրներից տեղեկանում ենք նաև, որ Գանձակը գրավելուց հետո Վրաց արքան նրա քաղաքային բնակչության մեկ մասը գերեց և վերաբնակեցրեց ազատագրված Թիֆլիս: Ֆարիկիի տեղեկությունները «ժողովուրդը դրանց մեծ մասին (իմա՛ գերիներին ~ Պ. Մ.) գնեց ու ազատ արձակեց»<sup>3</sup>: Հագիվ թե Դավիթը շտապեր մեծացնել մահմեդականություն դավանող բնակչության թիվն այնտեղ, ուստի հակված ենք կարծելու, թե խոսքը գերյալ գանձակաբնակ հայերի վերաբնակեցմանն է վերաբերում<sup>4</sup>: Պատահական չէ, որ արդեն հաջորդ դարում քաղաքում եղած հայկական պաշտամունքային կառույցները այլևս չեն տեղավորում համայնքի անդամներին, ուստի ծայր է առնում նոր եկեղեցիների կառուցում, որոնց կանգնադրառանք առանձին-առանձին քննարկելիս: Հայ բնակչության ստվարացումը վկայություն է գտել հարյուրամյակ անց՝ մոնղոլական շրջանում Վրաստանով անցած նշանավոր ճանապարհորդ-գիվանագետ Մարկո Պոլոյի գրառումներում. «...այս երկրում (իմա՛ Վիրքում ~ Պ. Մ.) Թիֆլիս անունով սքանչելի քաղաք կա: Բնակիչները՝ հայերն ու վրացիները քրիստոնյաներ են, կան նաև մահմեդականներ և հրեաներ, սակայն վերջիններս շատ չեն»<sup>5</sup>:

Թիֆլիսի՝ վերստին Վրաստանի մայրաքաղաք դառնալը հաճախակի դարձրեց նրա հիշատակումը նաև հայ մատենագիրների երկերում, ուր կարելի է գտնել թե գովասանք ու ներբողում, թե ողբ ու կական՝ թշնամիներից քաղաքի ավերածության պարագայում<sup>6</sup>:

<sup>1</sup> «Թուղթ Գրիգորիսի կաթողիկոսի, գրեալ ի կաթողիկէ եկեղեցին Հոռոմոց... Պատասխանի թղթոյն Միքայէլի պատրիարգին, որ նախքան գայս փոխեցաւ յաշխարհէ ի Քրիստոս» ~ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հատ. Ա, կազմեց Ն. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 350:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Մերեթելու կազմած «Արաբական քրեստոմատիան», Թիֆլիս, 1949, էջ 71: Հմմտ. Ա. Տեր-Ղևոնդյան, Ֆարիկիի «Նփրկերտի պատմությունը» (ԺԲ դար) Հյուսիսային Հայաստանի դեպքերի մասին. - «Հոգիվածների ժողովածու», Երևան, 2003, էջ 270:

<sup>3</sup> Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 271:

<sup>4</sup> Պրոֆ. Ս. Կակաբաձեն այս շրջանով է թվագրում հայկական համայնքի հաստատումը Թիֆլիսում:

<sup>5</sup> М. Полиевктов и Г. Натадзе, Старый Тифлис в известиях современников, [Тифлис], 1929, стр. 7.

<sup>6</sup> Թիֆլիսի և տեղիս հայության պատմության շարունակություն կարելի է գտնել ալիադ. Վ. Ս. Նալբանդյանի «Թբիլիսին հայ մատենագրության մեջ» (Ակզբից մինչև

Թիֆլիսում հաստատված վանքերն ու եկեղեցիները, որոնց համահավաք ուսումնասիրությունն է նվիրված սույն աշխատությունը, միաժամանակ դարձան հայոց դպրություն ու գրչություն կենտրոնատեղիներ: Արվեստագետ Աստղիկ Գևորգյանի նախնական հաշվումներով Երևանի Մատենադարանի հավաքածուում այժմ կարելի է հաշվել Թիֆլիսի հայոց գրչատներում գրված ու ընդօրինակված շուրջ 80 ձեռագիր: Ընդ սմին՝ նրանցից առանձին օրինակներ օժտված են մանրանկարներով և առանձնանում են այնպիսի մանրամասնություններով, որ կարող են հայոց մանրանկարչական արվեստի ինքնահատուկ դպրոց ներկայացնել<sup>1</sup>: Հավանաբար նույնը կարող են ասել ճարտարապետության պատմաբանները՝ եթե ի մոտո քննություն առնեն Թիֆլիսի վրաց և հայոց պաշտամունքային կառույցների ընդհանրություններն ու տարբերությունները:

Մեր այս գրքում եղած ուսումնասիրությունն ու այլազան աղբյուրների համահավաքը, համոզված ենք, կխթանեն այդ կարգի հետազոտությունների երևան գալը մեզանում և այլուր:

ԺԸ. դ. վերջ) գրքում (Երևան, 1958): Այն լույս է տեսել նաև վրացերեն և ռուսերեն լեզուներով: Հմմտ. նաև՝ Լ. Մելիքսեթ-Քեկ, Հայերը Վրաստանում.- "ԿԻՅ", 1, 167-179.

<sup>1</sup> А. Б. Геворкян, Армянские средневековые миниатюры из Тбилиси.- КИВ, 1, 155-166.



ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՀՊԱՆԱԾ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ



## ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Քաղաքի հնագույն եկեղեցիներից մեկն է, որ դարերի ընթացքում աղբյուրներում հիշատակվում է նաև «Քառասնից եկեղեցի» և «Բերդի Փոքր եկեղեցի» անվանափոխություններով, սակայն, դատելով տեղագրությանը վերաբերող ակնարկումներից՝ խոսքը իրապես նույն կառույցի մասին է: Ընդ սմին անվանափոխությունները կարող էին տեղի ունենալ գործառական ընդհատումների և նրանց հաջորդած վերանորոգում-վերագործարկումների ժամանակ, առավել ևս՝ եթե այդ ընթացքում այն դավանական մեկ խմբից անցում էր կատարում մեկ այլ խմբի: Մեր ունեցած խիստ պատահական տեղեկությունները թույլ են տալիս նման անցումներ տեսնելու այս եկեղեցու պատմության փուլերում: Նրա գոյության հնագույն հիշատակություն, ինչպես նկատեցինք նախորդ բաժնում, գտնում ենք Ը. դարի վրաց նշանավոր վարքագիր Հովհան Սաբանա որդու (Սաբանիսձե) «Աբո Թփիլելու վկայաբանությունը» երկում: Այստեղ պատմվում է թե ինչպես արարների ձեռքով նահատակված Աբոյի մարմինը պատանում են, դնում սայլին և վարվում՝ ինչպես հանրահայտ քառասուն վկաների հետ: Այդ թելադրված է համարվում նաև նրանով, որ սրբին գլխատել են հենց Քառասուն վկաներին նվիրված եկեղեցու գավթում<sup>1</sup>: «Սագողերելին» (իմա՝ ողբանոց = գերեզմանոց) մոտ գտնվելու հիշատակությունը, ինչպես նաև Մետեխի կտրվածքի տակ Աբոյի մատուռի տեղորոշման շուրջ ժողովրդական հիշողությունը կասկած չեն հարուցում<sup>2</sup>: Այս և նման իրողություններից ելնելով է, որ հին Թիֆլիսի պատմության լավագույն գիտականներից պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը եզրակացնում է, թե «Քառասուն սրբերի եկեղեցի պիտի ճանաչվի քաղաքաբերդի եկեղեցիներից մեկը, որը և նշված շրջանում կարող էր գոյություն ունենալ: Կողմնակի տվյալներով բարեբախտաբար մեզ հաջողվեց

<sup>1</sup> «Վկայաբանություն սրբոց քառասուն վկայիցն» բնագիրը տե՛ս «Վարք և վկայաբանությունք սրբոց, հատրնտիր քաղեալք ի ճառրնորաց», հատոր Բ, Վենետիկ 1874, էջ 506-514: Հայերենից կատարված հին վրացերեն թարգմանությունն ու նրա բնագրական քննությունը տե՛ս օլոժձ ԺՅՂԵԾԵՅ, ՄՐՕՄԵՅԾԻ, Ծ. I, տձ., ԶԶ. 91-144:

<sup>2</sup> Բնագրի վերջին գիտական հրատարակությունը տե՛ս «Ժց. յճրտ. յճօժճր. ԼՅԾ. Ժցճլլլլլլլ», Ծ. I, տձ., 1963, ԶԶ. 46-81. Տեղագրական մասնավորեցումների վերաբերյալ տե՛ս Գ. ԵՅԵՅԼԼԼԼԼԵՅ, ԵՅԾՅՂԵՅԾԻ, Ծ. XII, տձ., 1974, ԶԶ. 105-106

ճշգրտել, որ «Քառասնից եկեղեցին» այն է, որը գտնվելիս է եղել այժմյան Հայոց Հրեշտակապետաց եկեղեցու տեղում...»<sup>1</sup>:

Հիմքեր չունենք կասկածելու, թե Թիֆլիսի այդ հնագույն եկեղեցիներից մեկը կարող էր գոյություն ունենալ հայ-վրացական եկեղեցական միասնություն շրջանում և է. դարի բաժանումից հետո դառնալ նրանցից մեկի աղոթարանը: Աբոյի վկայաբանություն տեղի լինելը, կարծում ենք, կարող է դիտվել իբրև երկրի պաշտոնական դավանության ցուցում: Այդ մասին է խոսում նաև մինչև ժ. դ. սկզբները գոյություն ունեցող և էգն. Իոսելիանի կողմից 1837 թ., գրառած ավանդությունը, թե Քառասնից եկեղեցին հիմնվել է հույների կողմից<sup>2</sup>: Հարկավ այստեղ «հույն» եզրը դավանական կիրառություն ունի, քանի որ Թիֆլիսում վաղ միջնադարում հունական համայնք չի վկայվում:

ԺԲ. դարի վերջին (1197 թ.) տեղի ունեցած Ծռագատի կապակցությամբ Բար-հերբեոսի (նույն Աբուլ-Ճարաջն է) հաղորդումները հերյուրված նկատելու կռվաններ չունենք (թեև չափազանցությունը ակնբախ է), ուստի պիտի ընդունել, թե Թիֆլիսի ամիրայություն վերջին շրջանում մեզ այսօր անծանոթ պարագաներում Քառասնից եկեղեցին միաբնակ դավանության հավատացյալներին էր պատկանում, այսինքն՝ անցել էր հայերին (վկայության երկու խմբագրությունների լատիներեն թարգմանությունները բերված են Լ. Մելիքսեթ-Բեկի հիշյալ հոդվածում, էջ 50-51): Որ այս տեղեկությունը պատմիչի հորինվածք չէ, հաստատվում է 1238 թվականին Թիֆլիսում եղած և թերևս հենց այս եկեղեցու միաբանների մոտ իջևանած Վանական վարդապետի ինքնագրով պահպանված հիշատակարանի հաղորդումով. «Ես՝ Վանականս, գրեցի իմով ձեռամբս ի Տփլիս քաղաքի, ի դրան Սուրբ Քառասնիցս, զի գերեալ էր Աւետարանս ի Տաւրշոյ ի Մուղան ի Թաթարէն և ետ երից ամաց աստ բերեալ անվնաս՝ վաճառեցին ՈԶԷ (1238) թուիս, զոր փառաւոր աւագերէց Սարգիս, հասարակ պատուական քահանայիւք և աստուածասէր ժողովրդական տանուտէրաւք, բազում ծախաւք և աշխատութեամբ գնե[ա]լ ետուն մեզ...» (Մատենադ., ձեռ. 4823, էջ 155r):

<sup>1</sup> Л. М. Мелксет-Беков, О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу Кривой Пасхи (Вокруг старого Тифлиса), Известия КИАИ, т. III, Тифлис, 1925, стр. 57.

<sup>2</sup> Տե՛ս ստորև ներկայացված թարգմանությունը: Էգնատեի որդի Պատոն Իոսելիանին ևս հիշեցնում է, թե հույները վիճարկում էին եկեղեցու պատկանելությունը Գեորգի ժԲ. Թագավորի օրոք (տե՛ս. II. Иоселлиани, Описание древностей г. Тифлиса, Тифл., 1866, стр. 233).

Վանականի գործածած փառալուր աւագերէց, պատուական քահանայիւք և ժողովրդական տանուտէրաւք արտահայտութիւնները թույլ են տալիս ամփոփել, որ հիշյալ եկեղեցին ժամանակի հայոց պաշտամունքային կարևոր օջախներից է եղել և իբրև այդպիսին հետագայում Սանահնի վանքի վանատուն ծառայել Վրաց մայրաքաղաքում: Թե երբ է այս եկեղեցին դադարել գործելուց՝ չգիտենք: «Բերդի Փոքր եկեղեցի» կոչվելը հուշում է, որ այդ անունը կարող էր ձևավորվել «Բերդի Մեծ եկեղեցու» կառուցումից հետո, իսկ վերջինս, ինչպես ստորև կհամոզվենք, 1251 թվականից հետո պիտի լիներ: Եվ այնուամենայնիվ, Մելիք-Աղա Բեհբուդյանի 1745 թ. հրատարակած հրովարտակում թվարկվող հայոց գործող եկեղեցիների ցանկում «Բերդի Փոքր եկեղեցի» չի հիշվում<sup>1</sup>, սակայն առկա է Մինաս արքեպիսկոպոսի և Ստեփանոս վարդապետի կազմած եկեղեցիների ցանկում (1831/2 թ.)<sup>2</sup>: Ուրեմն պիտի եզրակացնել, որ նրա վերականգնում-գործարկումը տեղի է ունեցել ԺԸ. դ. երկրորդ կեսին կամ ԺԹ. դարի սկզբներին, մինչև 1831/2 թվականի ցանկի կազմումը: Այդ տևական ընդմիջման ընթացքում մոռացվել է «Բերդի Փոքր եկեղեցի» կոչումը ևս և արդեն վերջին վերականգնման ընթացքում ստացել «Հրեշտակապետաց» նվիրումը<sup>3</sup>: Առաքել վանահոր կազմած տեղեկանքից<sup>4</sup> և պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակումից<sup>5</sup> գիտենք, որ մուտքի բարավորի վրա եղել է վերականգնման մասին պատմող արձանագրութիւն.

ՇՆՈՐՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՈՐՈԳԵՑԱԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ ԻՐ / Ի ՀԻՄԱՆԷ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ / ՀԱԽՊԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴ ԴԱԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՒ ՀԵՐԱԿԼ / ԱՐՔԱՅԻՆ ՎՐԱՅ ԵՒ ԴԱԻԹ ՍԱՐԴԱՐԻՆ՝ ԱՐԴԵԱՄ<Բ>Բ / ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՏԷՐ ՕՉԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ, ԿՈՂԱԿԻՑ ՆԱԹԷԼԻՆ / ԵՒ ԻՄ ԵՂՔԱՅՐ ՏԷՐ ՍՏԵՓԱՆԻՆ, ԿՈՂԱԿԻՑ ՄԱՐԻԱՄԻՆ, ԳԱՆՁԱՊԵՏ / ԴԱՆԻԷԼԻՆ, ԿՈՂԱԿԻՑ ԽԱՆՓԵՐՈՒՆ, ԴՈՆԱՊԱՆ ՓԱՐՍԱԴԱՆԻՆ, ԿՈՂԱԿԻՑ / ՇՈՒՇԱՆԻՆ, ՍՊԱՍԱԻՈՐ ԱԶԸԶԻՆ: ԹՎԻՆ ՌՄԼ (1781):

<sup>1</sup> Տե՛ս ստորև «Վավերագրական վկայութիւններ» բաժինը:  
<sup>2</sup> Տե՛ս Վրաստանի կենտրոնական պատմական արխիվ (ԱԳՄԱ), Փոնդի 209, գործ 394: Ի դեպ, այս եկեղեցին նշանակված է նաև Վախուշտի կազմած Թիֆլիսի հատակագծում:  
<sup>3</sup> Ուշ շրջանի աղբյուրների համեմատաբար ամբողջական քննութիւն տե՛ս տողերիս հեղինակի «Армянская эпитафия Грузии: Тбилиси» աշխատութիւն (Երևան, 1988) 14-15 էջերում:  
<sup>4</sup> ՄՄ Կաթ. դիվան, թղթ. 29, գործ 125, թերթ 8ր (տե՛ս ստորև):  
<sup>5</sup> Լ. Թեյլոր-Պրոքտեր, Նոյն-Նոյն, Շրջ., 1930, թ. 76.

Արձանագրությունը հստակ է և լրացուցիչ մեկնաբանություն կարիք չունի, մանավանդ որ Լ. Մելիքսեթ-Բեկը արդեն ասել է, որ սարգար Դավիթը Թիֆլիսի մոուրավն է՝ Յիցիշվիլի տոհմից, իսկ Դավիթ եպիսկոպոսը՝ Դավիթ Խերոզինյանը<sup>1</sup>:

Հրեշտակապետաց եկեղեցու պատմությունն ու շրջանի համար բավարար նյութեր ենք գտնում եկեղեցու ավագերեց Տեր-Առաքել Սուքիասյանցի՝ ի պատասխան Ներսես Աշտարակեցու դիմումին գրած վկայություններում.

«Այսպես լսեալ եմ իմ վարժապետներէն, որ ի Հայաստանէն Հայք եկեալ են մինչև Ծ. (50) տուն, բնակեալ են ի քաղաքս: Նոքա չեն ունեցեալ եկեղեցի. վաճառական ոմն Զուղա[յ]եցի Զափուազ անուամբ շինեալ է գեղեղեցիս Հրեշտակապետաց՝ անուամբ Միքայէլի և Գաբրիէլի ի թուականութիւն ԵՃՂԳ. (1144).

Ի թուին Քրիստոսի 1748 Հերակլ արքայն ի ձեռանէ Տաճկաց սոյն քաղաքս առեալ է. այնմ ժամու Սօմխէթու քահանայք՝ քանի մի անձինք եկեալ բնակեալ են ի մէջ քայքայեալ եկեղեցոջս: Տէր-Յօհան ոմն քահանայն շինութեան սկիզբն է արարեալ իբր հիմանէ, որպէս գրեալ ի վերա[յ] արձանի ունի այսպէս...

Ի անբնական քաղաքս ի ՌՄԽԵ. (1796) ի Տաճկներէն այրեալ էր եկեղեցին, կրկին վերանորոգեցի իմով արդեսմբն ես՝ Սուքիասանց Տէր Առաքել աւագ քահանայս: Տէր Առաքել»<sup>2</sup>:

Առաջին դրվագում նշանակված 1144 թվականը պարզապես վրիպյալ հիշողության կամ սխալ հաշվարկման արդյունք պիտի լինի, քանի որ, ինչպես վերևում համոզվեցինք այդ տարիներին, ինչպես և Վանականի օրոք եկեղեցին կրում էր «Քառասնից» անունը և ապա՝ Զափուազ Զուղայեցին այլ աղբյուրներով (այդ թվում և Թիֆլիսի հայոց եկեղեցիների ցանկում)<sup>3</sup>, ժէ. դարի գործիչ է, ուրեմն հավաստի պիտի համարել 1654 թ. նորոգված լինելը<sup>4</sup>:

Գրություն հաջորդ դրվագների տեղեկությունները հիմնականում քաղված պիտի լինեն բարավորի վրա եղած և վերևում բերված արձանագրությունից, ուստի և հավաստի են: Սրբագրելի է

<sup>1</sup> Ը. Թեմալյան-Չոբանյան, անդ:

<sup>2</sup> ՄՄ Կաթ. դիվան, թղթ. 29, գործ 125, թերթ 8ր (տե՛ս ստորև):

<sup>3</sup> Arm. doc. 156, p. 12r.

<sup>4</sup> Աղբյուրների քննության մանրամասներ տե՛ս մեր ուսուերեն հրատարակության 17 էջում:

միայն քաղաքի ավերումը 1796-ին վերագրելը: Խոսքը, անշուշտ, 1795 թ. Աղա-Մահմեդ-խանի գործած ավերածություն մասին է<sup>1</sup>:

Անցյալ դարի 20-30-ական թվականներին Հրեշտակապետաց եկեղեցին համարվում էր խարխուլ, ուստի և (գաղափարական դրդման առումով) վերացման ենթակա: Մ. Կ. Կալաչնիկովը չափազորումով արձանագրեց այն, իսկ Կովկասի պատմա-հնագիտական ինստիտուտի աշխատակիցներ պրոֆ. Ս. Ն. Կակաբաձեն և Դ. Պ. Գորդեևը հոգ տարան պահպանելու «քանդվող կառույցի հետաքրքիր մասերը՝ աղյուսաշար պատերին ագուցված քարե սալերի վրա եղած վիմագրեր, դրվագավոր քարերի բեկորներ (ըստ երևույթին խաչքարերի կտորներ ~ Պ. Մ.), ձայնարկիչ ամաններ, որպիսիք ենթակա էին Հին Թիֆլիսի թանգարան տարվելու»<sup>2</sup>:

Մեկ-երկու տարի առաջ Թիֆլիսում գտնվելիս այցելեցի Ս. Գևորգ Կաթողիկե եկեղեցուց մի քանի քայլի վրա գտնվող Հրեշտակապետի գտնված վայրը և ուրախությունով տեսա, որ վարպետները ի հիմանց վերաշինում են այն: Կգտնվե՞ն նրա ի պահ տրված բեկորները և կամ՝ եթե գտնվեն կղետեղվե՞ն նրա պատերին՝ դժվար է ասել: Բայց որ Թիֆլիսի հնագույն պաշտամունքային կառույցներից մեկը արժանի է նորոգյալ վերականգնման՝ անկասկած է:

<sup>1</sup> Մատենադարանի Կաթ. գրիվանում պահպանվել են 1805-1806 թվականներին Հրեշտակապետաց եկեղեցին վերականգնելու համար վերահայոց հավաքած նվիրատվությունների և կատարած ծախսերի ցուցակներ ու ցանկեր (թղթ. 16, վավ. 110, թղթ. 17, վավ. 152):

<sup>2</sup> Бюллетень КИАИ, №6, стр. 1. Թանգարանը հետագայում կոչվեց Հին Թիֆլիսի խոշոր գիտակ-հետազոտող-բանաստեղծ Իոսեբ Գրիչաշվիլու անունով, մասամբ սրբազրելով բնույթը՝ Ք. Թիֆլիսի պատմաազգագրական թանգարան: Անցյալ դարի 80-ական թվականներին տողերիս հեղինակը եղել է այդ թանգարանում և տեսել որոշ բեկորներ: Թե նոր շենք տեղափոխվելիս (քարվանսարայ Ս. Սիոնի շարքում) ուր մնացին այդ բեկորները՝ դժվարանում եմ վկայել:

3 - Տնն Թիֆլիսի հայոց եկեղեցիները

## Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԿԱՌՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ

Աղբյուրներում ու մասնագիտական գրականության մեջ հայտնի է նաև «Բերդի մեծ եկեղեցի» կամ «Մեյդանի Ս. Գեորգ» անուններով: Նրա շուրջ եղած գրականության հարստությունը բացատրելի է հիմնարկությանը (°) վերաբերող արձանագրության առկայությամբ, արաբատառ արձանագիր խաչքարի բեկորի գոյությամբ ու կառույցի մինչև օրս գործառությանը՝ իբրև վիրահայոց առաջնորդանիստ: Հ. Միքայել Չամչյանը Հովհ. Երզնկացու մասին խոսելիս համառոտակի հիշեցնում է նրա՝ 1284 թ. Թիֆլիսում արտասանած «Յաղագս երկնային շարժմանց» ճառի ներածական մասի հաղորդումները, մասնավորապես. «...և ես նուստ Յոհաննէս Երզնկեցի, աշակերտ հոգելից հօրն և սուրբ վարդապետին Վարդանայ, սպասաւոր Սուրբ Գրոց բանից, ի թվին ՉԼԳ. (1284) պատահեաց գալ ի կողմանս աստուածապահ թագաւորութեանս աշխարհիս Վրաց, ի հռչակաւոր և ի մեծ մայրաքաղաքս ի Տիֆլիս՝ Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց, և հանդիպեցաւ խօսել մեզ բանս քարոզութեան ի դուռն եկեղեցւոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխանին Հայոց պարոն Քարիմատինին, զոր շինեալ էր աստուածասէր և բարեհոգի հայրն նորա պարոն Ոմեկն և էր խօսեցեալ բանն յաղագս երկնային շարժման»<sup>1</sup>:

Ղ. Ինճիճյանը կամ նրա տեղեկատուն կարդացել է Կաթողիկե եկեղեցու հարավային պատին փորագրված արձանագրությունը և կառուցումը թվագրել 631 թվականով<sup>2</sup>: Հարկավ այս նկարագրության ծանոթության պատճառով կառուցման նույն թվականի կրկնություն ենք գտնում Arm. d. N 156, թերթ 17-19 հեղինակ Ղամազյանի 1817 թ., ինչպես նաև Մ. Բրոսսեի նկարագրության մեջ<sup>3</sup>: Եթե կառուցողը Երզնկացու հիշատակած Ոմեկ կամ Ումեկ

<sup>1</sup> Վեջին հրատ. տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, 1984, էջ 561: Հմմտ. Միք. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 272-273: Ս. Զալալյանցը Ծորձորեցու հիշատակած 1284 թ. վրիպմամբ ընդունել է իբրև շինարարության տարի (տե՛ս նրա «Ճանապարհորդութիւն»..., Բ, էջ 60):

<sup>2</sup> «Աշխարհագրութիւն չորից մասանց...», էջ 277:

<sup>3</sup> M. Brosset, *Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, exécuté en 1847-1848*, St. Pétersbourg 1850, p. 2.

«աստուածասէր և բարեհոգի» այրն էր՝ Քարիմատինի հայրը, ապա նա հայկական և վրացական աղբյուրներից քաջ հայտնի և ԺԳ. դարում ապրած դեմք է<sup>1</sup>: Հետևաբար, ինչպես ժամանակին ասել ենք, գործ ունենք նախնական արձանագրությունների վրիպյալ ընդօրինակման և ընթերցման հետ. փորագրված Ձ-ն շփոթվել է Ձ-ի հետ և 700 փոխարեն 80 ընկալվել ( $700+551=1251$ ,  $80+551=631$ ): Պատահական չէ, որ 1850 թ. «Արարատ» հանդեսում եղած Թիֆլիսի նկարագրություն անձանոթ հեղինակը կուհեի է եղելությունը և պատմողաբար վերականգնել արձանագրություն սկզբնական ընթերցումը՝

[ՇԻՆԵՑԱԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՍ ԱՐԴԵԱՄԲ ԻՇԽԱՆԻ ՀԱՅՈՑ ՈՒ ՄԷՔԱՅ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ Ձ]<sup>2</sup>:

Այս Ոմէք/Ումեկը, ինչպես ասացինք, վիճաբար ու պատմողական աղբյուրներով լավ հայտնի անձնավորություն է: Վարդան Արևելցու տեղեկությունները «Ի վեցհարիւր իննսուն և մի թուին Հայոց (=1242 թ.) Բաշալ նուրինն փոխեաց զիշխանութիւնն Չարմաղանին և եառ զԿարնոյ քաղաք, հանեալ անտի զայրն երևելի մեծատուն և երկիւղած ի Տեառնէ զՈւմեկին և զազգականս նորա զորդիսն պարոն Յոհաննու՝ զՍտեփաննոս և զեղբարսն իւր հինգ»<sup>3</sup>: Կիրակոս Գանձակեցին ավելի մոտիկից գիտե Ումեկին, որին համարում է մոնղոլներից մեծարված «այր մեծատուն վաճառական, Ումեկ անուն, զոր ինքեանք Ասիլ կոչէին. այր բարեգործ, զոր երբեմն յիշատակեցաք, որ ապրեցաւ յաւերիլն Կարնոյ քաղաքի ի թաթարէն հանդերձ որդւովքն Յոհաննու Ստեփանոսիւ և եղբարք իւրովք: Եւ էր յայնժամ ի Տիֆլիս քաղաքի բնակութիւն կալեալ և հայր անուանեալ թագաւորին Վրաց Դաւթի, և մեծարեալ ի դանէն գրով և յամենայն աւագանւոյն: Սա առատ տուրս ետ Արդունին և որ ընդ նմա, և մեծարեցաւ յոյժ ի նոցունց»<sup>4</sup>: Ուշագրավն այն է, որ այս մեծատունը Թիֆլիսում հայտնվելուց 10 տարի անց արդեն Վրաց թագաւորի հայր է հորջորջվում և եկեղեցի կառուցում:

<sup>1</sup> Ումեկի մասին տե՛ս Ս. Ա. Ավագյան, Նորահայտ վիճական արձանագրություն Ումեկյան տոհմի մասին.- «Վիճաբարական պրպտումներ», Երևան, 1986, էջ 94-111:

<sup>2</sup> Տե՛ս այստեղ հավելվածում: Հմմտ. Ս. Մ. Мирадян, նշվ. աշխ., էջ 20:

<sup>3</sup> Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսաբանեալ ի շ. Ղ. Ալիշանէ], Վենետիկ, 1862, էջ 147:

<sup>4</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 363: Այստեղ ավելորդ ենք նկատում քննարկման առարկա դարձնել «ազգականների» ով լինելու հարցը: Պատմիչների մոտ, մեզ թվում է, կետագրություն և հոլովի շտկման անհրաժեշտություն կա: Ավելի հանգամանորեն այս տոհմի և նրա ճյուղավորումների մասին տե՛ս Գարեգին արքեպ. Յովսէփեան, Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պրակ Ա, Երուսաղէմ, 1935, էջ 1-14:

Ավելին, նոր Գետիկի արձանագրության մեջ տեղեկություն կա, թե ճարի հայր Ումեկը այն գնել է 40000 կարմիր դուկատով (իմա՝ ոսկով): Նշանակալի է նաև նրա ծառայությունը վրաց հասարակությանը: Մասնավորապես 1264 թ. մոնղոլական գերությունից ազատեց Դավիթ թագավորին<sup>1</sup>:

Գ. Հախվերդյանը հավանաբար ծանոթ է եղել այս Կաթողիկե եկեղեցու հիմնարկության ժամանակին վերաբերող գրականությունը և դժվարացել է հստակ կողմնորոշվել, ուստի գերադասել է հարցը թողնել քննարկման ոլորտում և արձանագրել՝ կառուցվել է 631 կամ 1251 թ.<sup>2</sup>: Հ. Օրբելին այս եկեղեցու պատին ագուցված խաչքարի վրա եղած արաբերեն արձանագրության հրապարակման առիթով անդրադարձ է կատարել «Արարատի» հաղորդմանը և արդարացված նկատել նրանում եղած վերապահությունը, ասել է թե իրական համարել 1251 թվականը<sup>3</sup>: Եկեղեցու 631 թ. կառուցված լինելու մեր օրերում ևս չըջանառող թյուրիմացություն աղբյուրը պարզելու համար անհրաժեշտ ենք համարում բերել հարավային պատին եղած արձանագրության վերծանությունը.

ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻ ՀԻՄՆԵԱԼ Է ՅՈՒԹՍՈՒՆ ԹՈՒԱԿԱՆԻ / ՀԱՅՈՑ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՅՈՎ/ՀԱՆՈՒ: ՆՈՐՈԳԵՑԱԻ ԿԱԹՈՒՂԻԿԵՒ ԼՕՐՓԳԵՆՆ (Պ) ԿՂՄԻՆՏՐՆ, ԾԵՓՆ, / ՇԻՆԵՑԱԻ ՎԱՅԵԼՈՒՉ ՎԵՐՆԱՏՈՒՆՆ ԵՒ ՃԱՆԱ/ՊԱՐՀ: ԵԿԵՂԵՑԻՆ ՍԱԼԱՅԱՏԱԿ ԵՂԵՒ Ի ՆԵՐՔՈՒՍՏ / ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԶԱՐԴԻԻ ԶԱՐԴԱՐԵՑԱԻ Ի ԶԵՌՆ ՀԱՐԱԶԱՏԻ / ԵՐԷՑՓՈԽԱՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ ՔԷՓԻՆԵԱՆՑ: 1832:

Այստեղ հիշատակվող անձիք և նրանց ժամանակագրությունը քննության կարող է, հետևաբար 1832 թվականին նորոգություն կատարողները պարզապես կրկնել են այն, ինչ կարգացել են Ղ. Ինճիճյանի նկարագրության մեջ: Ի հաստատումն այս բացատրության կարելի է վկայակոչել Կաթողիկեի ավագ քահանա Մելքիսեդեկ Ղամազյանի 1817 նոյեմբերի 9-ի գրության հղումը Ինճիճյանի աշխատության էջին: Նորոգությանը նախորդող արձանագրության անխաթար պահպանվածության պարագայում մենք անվերապահորեն հիշատակություն կունենայինք Ումեկի և նրա որդիների մասին: Եկեղեցու պատերին պահպանվել են այս ու այլ վերանորոգումների ու կառուցումների մասին պատմող վիմագ-

<sup>1</sup> «Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Հակոբյան, 1951, հ. I, էջ 43:

<sup>2</sup> Սայաթ-Նովայ, լուս գրած աշխատասիրությունով Գէորգեայ Ախվերդեան, Մոսկվա, 1852, էջ XIX:

<sup>3</sup> Ի. Ա. Օրբելի, Избранные труды, Ереван, 1963, стр. 218.

րեր, որոնք ամբողջովյա՛մբ վերծանված ու թարգմանված են Թիֆլիսի հայկական վիճազրերին նվիրված մեր աշխատության մեջ<sup>1</sup>: Արդեն ասվածը չկրկնելու համար ասենք, որ ըստ Տեր Առաքելի որդի Մելքիսեդեկի հաղորդած տեղեկության՝ հայրն ունեցել է «խարջարարութեանց դաւթարն մի առ մի գրեալ՝ ընդ նմին զայլ բազում շահաւետ գրեանս, նաև գիրովարտակս և գկոնդակս ի երանելի արքայից ի կորուստ գնացին, որք եթէ ներկայիս պատրաստ գտանիցէին իբրու զպսակ պարծանաց ունէի ընկալնուլ ի գլուխ իմ»<sup>2</sup>:

Այստեղից հետևում է, որ Կաթողիկէ եկեղեցին ունեցել է նշանակալի ձեռագրական (գուցե և տպագիր գրքերի) հավաքածո («բազում շահաւետ գրեանս»), նրանց թվում և հրովարտակներ ու «խարջարարութեան դաւթար», ասել է թե՛ նաև Քեթուկ գիրք (հիշատակարան): Ուշագրավն այն է, որ երկար ժամանակ, մինչև ժԸ. դարի 70-ական թվականները, եկեղեցու կիսավեր մնալու, չգործելուն հակառակ՝ մինչև Աղա-Մահմեդ-խանի գործած ավերածությունը Կաթողիկէի գրադարանը պահպանելիս է եղել, իսկ նրա վաղուց ի վեր գոյություն մասին մեզ պատմում է 1444 թ. գրված մի հիշատակարան. Կաթողիկէի առաջնորդ, «ամենամաքուր և ամենաբարի, հեզ և ընտրեալ կրոնաւոր և անյաղթ փիլիսոփա Տէր Սարգիսը» վերստին նորոգել է տալիս 1293 թ. Սկևռայում ընդօրինակված Ավետարանը «Զի ետ ստանալոյ բազում տառից և բազում արդեանց, զոր ունէր յեկեղեցի Աստուծոյ՝ յաւել և սա ի գանձս աստուածային...»<sup>3</sup>: Հիմք չունենք կասկածելու, որ խոսքը Սարգսի առաջնորդությունը կառավարվող Կաթողիկէ եկեղեցու ունեցած հավաքածոն հավելելու մասին է:

Թե այս «անյաղթ փիլիսոփա» Սարգիսը ինչպես է հավաստել իր անհատությունը՝ առայժմ չգիտենք, բայց որ նրա առաջնորդած ուխտը բազմանդամ է եղել՝ կարելի է տեղեկանալ նշված հիշատակարանում Կաթողիկէ եկեղեցում սպասավոր քահանաների թվարկումից՝ «ընդ նոսին և զձեռնասնունդ աշակերտն իւր (իմա՛ Սարգիս արեղայի-Պ. Մ.) զորդի պարոն թումանին զՂուկաս սարկաւագ և զհոգևոր եղբայրն իւր զՍտեփանոս քահանայ և զՇմաւոն քահանայ, և զԿիրակոս քահանայ, և զԱստուածատուր քահանայ, և զԽաչատուր քահանայ»<sup>4</sup>:

<sup>1</sup> Ս. Մ. Мирадян, նշվ. աշխ., էջ 18-28:

<sup>2</sup> Տե՛ս 1817 թ. Ներսես արքեպ. Աշտարակեցուն ներկայացված Մելքիսեդեկ Ղամազյանի զեկույցը:

<sup>3</sup> Տե՛ս այստեղ «Հիշատակարաններ» հավելվածում:

<sup>4</sup> Նույն տեղում:

Հոգևոր սպասավորների թվի մեծացումը հարկավ պայմանավորված է ծուխերի ստվարացմամբ. վկայակոչված հիշատակարանից չորս տասնամյակ հետո է գրվել այժմ Ս. Էջմիածնի ձեռագրերից մեկը (թիվ 129), վայելուչ ձևավորմամբ ու զարդարումներով, որի հիշատակարանում կարդում ենք. «Արդ, գրեցաւ զսուրբ Աւետարանս ձեռամբ մեղապարտ և անարժան գրչի՝ Մկրտիչ սուտանուն քահանայի ի թիվս ՋԼԷ. (1488) ի մայրաքաղաքս Տփղիս ընդ հովանեաւ կամակատար Սուրբ Աստուածածնիս և Գեորգայ զարավարիս ի դառն և շիրոթ ժամանակիս: Արդ, աղաչեմ զամենաւեան, որ կարդայք և կամ արիմակէք յիշեսչիք անխասացեալ զսուացող սորա զՏէր Ղազարն զիրսն ամենայն, ընդ մինն և զհոգևոր եղբայր և զքեզ վարդապետն զԱբրահամ, զԱկարող և զկազմող սորա, այլն զհոգևոր եղբայրքն զՏէր Վարդան և զՏէր Յովհաննէսն, և զՏէր Եսայի աւագ երէցն և զԲարսեղն...» (էջ 447-448):

Կաթողիկէ եկեղեցու կրած վերանորոգչական փոփոխութիւնները պատկերացնելու համար հիշեցնենք արաբերեն արձանագրութեան պատառիկ պահպանած խաչքարի բեկորի տեղից տեղ փոխադրված լինելը. 1910 թ. Հ. Օրբելին այն տեսել է «եկեղեցու բակը շրջափակող աղյուսէ նոր պարսպի վրա՝ ներքուստ, արևելյան կողմում»<sup>1</sup>, մինչդեռ մերօրյա այցելուն այն գտնում է եկեղեցու հարավային պատին ագուցված: Ի վերջո, եկեղեցու վիճակն ու ապրած փոփոխութիւնները հանգամանորեն թվարկված են Հերակլ Բ. Թագավորի հասցեագրած Առաքել Սահառունու խնդրագրում<sup>2</sup>:

Եկեղեցու պատերին պահպանված արձանագրութիւններին այլևս չենք անդրադառնում՝ քանի որ նրանք վերծանված, թարգմանված և մեկնաբանված են տողերիս հեղինակի ռուսերեն աշխատութեան մեջ:

<sup>1</sup> Н. А. Орбели, *նշվ. աշխ.*, էջ 220.

<sup>2</sup> Տե՛ս «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քէօթուկը)»: Աշխատասիրութեամբ Պարոյր Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 238-240:

## ՆՈՐԱՇԵՆԻ ԱՎԵՏՅԱՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Վերջին տարիներին ինչ-ինչ զրդումներով ոչ մասնագիտական մամուլի էջերում պատկանելությամբ քննարկելի դարձած Թիֆլիսի Նորաշեն անունով հայտնի Ավետյաց Սուրբ Աստվածածին եկեղեցին գմբեթավոր բազիլիկ կառույցների տիպին է պատկանում և ուշագրավ է թե իր արտաքին հարդարանքով, թե գտնված տեղով (վրաց Սիոն գլխավոր տաճարից և քաղաքի հայտնի հյուրատուն-քարվանսարայներից ոչ հեռու) և թե ճարտարապետական առինքնող տեսքով:

Իբրև Թիֆլիսի հայկական գործող եկեղեցիներից մեկը այն հիշատակվում է 1673 թվին այս քաղաք այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի «Ճանապարհորդություն Պարսկաստան և Արևելքի այլ երկրներ» գրքի երկրորդ հատորում. «Հայկական գլխավոր եկեղեցիներն են՝ Փաշա-վանքը (նշանակում է Փաշայի վանք) ... Սուրբ Նշանը (կիրառվում է Սուրբ Խաչ ձևը), Բեթլեմ կամ Բեթղեմեմ, Նորաշեն կամ Նոր շինություն և Մողնի»<sup>1</sup>: Ֆրանսերեն բնագրի 1811 թ. հրատարակիչ-խմբագիր Լ. Լենժլեն (հ. II, էջ 73-79) Շարդենի այս վկայությունը օժտել է ԺԸ. դարի ճանապարհորդներ Գյուլդենշտեդտի և Ռայնեգսի ուղեգրություններից քաղված ծանոթագրություններով, ըստ որոնց Թիֆլիսում գործում է 15 վրացական և 20 հայկական եկեղեցի: Ընդ որում անուն առ թվարկած քսան եկեղեցիներից՝ 7-րդը «Նորաշենի՝ նոր եկեղեցին» է<sup>2</sup>:

Շարդենից շուրջ երեք տասնամյակ անց՝ 1701 թվին Թիֆլիս է այցելել նրա հայրենակից կենսաբան Ժոզեֆ-Պիտտոն Տուրնեֆորը, որի «Արևելյան ճափորդության տեղեկագիր» աշխատությունը լույս է տեսել 1717 թ. Ֆրանսերեն, ապա թարգմանվել այլ լեզուների, այդ թվում նաև ռուսերեն ու վրացերեն: Նրա արձանագրմամբ «Թիֆլիսում կա շուրջ 20000 բնակիչ՝ 14000 հայ, 3000 մահմեդական, 2000 վրացի և 500 հռոմեադավան կաթոլիկ: Այս վերջիններս դարձի բերված հայեր են, իրենց մնացած հայրենակիցների երգվյալ թշնամիներ: Իտալացի կապուչինները ոչ մի

<sup>1</sup> Տե՛ս այստեղ «Ուղեգրություններ» բաժնում:

<sup>2</sup> Նույն տեղում:

կերպ չեն կարողանում հաշտեցնել»<sup>1</sup>: Տուրնեֆորը ևս անհրաժեշտ է նկատել հիշատակել Թիֆլիսում եղած պաշտամունքային կառույցների քանակը. «Թիֆլիսում հունական դավանության (հմա՛ վրացական-Պ. Մ.) 5 եկեղեցի կա, 4-ը քաղաքում, մեկը արվարձանում, հայկական՝ 7 [եկեղեցի], և 2 մզկիթ ամրոցում»<sup>2</sup>:

Այստեղ մեկ կարևոր վրիպում կա. Տուրնեֆորը վրաց Ս. Սիոն կաթողիկոսանիստ եկեղեցին կոչում է հայկական և թյուրիմացաբար տեղորոշում «Կուրի մյուս կողմում, դիք ժայռի վրա», ըստ ամենայնի այն շփոթելով Մետեխի Ս. Աստվածածին վրացական եկեղեցու հետ, ուր նոր շրջանի տեղագրողները ավանդաբար Ս. Շուշանիկի գերեզման են վկայում: Հիշյալ շփոթությունը սրբազրելուց հետո Թիֆլիսի հայկական եկեղեցիների թիվը կդառնա 6, ինչպես որ ունենք Շարդենի մոտ: Ուրեմն այստեղ էլ հայկական եկեղեցիների շարքին է նորաշենը: Արդեն ասացինք, թե Գյուլգենչտեղտի կազմած հայկական եկեղեցիների ցանկում նորաշենը 7-րդ եկեղեցին է<sup>3</sup>:

Հայոց Սիմեոն կաթողիկոսի 1773 թ. կոնդակում ասվում է, թե Թիֆլիս օրհնյալ քաղաքի երեք եկեղեցիները՝ Մուղնու, նորաշենի և Բեթղեմի «հրամանալ առաջին հայրապետացն» Հաղբատի վանքին են տրուած<sup>4</sup>: Ի պատասխան կաթողիկոսի հորդորի Թիֆլիսի հայկական եկեղեցիների ավագերեցներն ու քահանաները «համահալանութեան ձեռագիր» են ուղարկում էջմիածին<sup>5</sup>, այն օժտելով գործող 6 եկեղեցիների հոգևորականների ստորագրությամբ, որոնցից չորրորդը նորաշենի ավագերեց Տեր Մելիքսեթն ու քահանա Տեր Գաբրիլն են:

Ժամանակագրական առումով հաջորդ աղբյուրը, ուր նորաշենը քանիցս հիշատակվում է պաշտոնապես իբրև Հաղբատի թեմին պատկանող Թիֆլիսի հայոց եկեղեցի՝ հաստատագրվում է դատական մի վեճի կապակցությամբ՝ 1779 թ. Հերակլ արքայի կողմից նշանակված հեղինակավոր հանձնաժողովի կազմած ու ստորագրած վրացերեն վավերագրում<sup>6</sup>: Վրացական աղբյուրներով քաջ

<sup>1</sup> Տե՛ս «Ուղեգրություններ»:

<sup>2</sup> Անդ:

<sup>3</sup> Տե՛ս «Ուղեգրությունների» Գյուլգենչտեղտին վերաբերող բաժինը:

<sup>4</sup> ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 243, վավ. 36:

<sup>5</sup> Նույն տեղ, վավ. 35:

<sup>6</sup> «Եճճճ. Նձձձձձ. յձձձձձ», Ե. 5, տձ., 1974, թձ. 72-74: Հայերեն թարգմանությունը տե՛ս Վ. Մ. Մարտիրոսյան, Վրաց իրավունքի հուշարձանները վրահայության մասին, «Լրաբեր» հաս. գիտ. 1998, № 3, էջ 188-189: Նաև՝ Պ. Մուրադեան, Յիշատակարան Սանահնոյ վանից, Ս. էջմիածին, 2007, էջ 235-237:

Հայտնի Հայագետ-վրացագետ, թարգմանիչ և թելավի ու թիֆլիսի հոգևոր սեմինարիաների ուսուցչապետ Փիլիպոս քահ. Ղայթմազյանը<sup>1</sup> ժամանակին դիմել է Հերակլին և Նորաշենի շրջակայքում տան տեղ խնդրել: Հերակլը բավարարել է խնդրանքը և եկեղեցու պարսպից դուրս տան տեղ է տվել: Ժամանակ անց վեճ է առաջացել պարսպի տակ ապրող գլխիներ (գեղջուկների) և Տեր Փիլիպոսի միջև: Ըստ գլխիների և Հաղբատի թեմակալի վկայություն Ղայթմազյան (Ղայթմազաշվիլի) քահանան «պարսպից ներս է տեղ գբաղեցնում»: Վրաց կաթողիկոս Անտոն Ա-ի և թագավոր Հերակլի կարգադրությամբ վրացի և Հայ բարձրաստիճան մարդկանցից կազմված հանձնաժողովը (այդ թվում և մղիվանբեզ, մղիվան, ամիլախոր, մոլարեթուխացես, արքեպ., քահանաներ և այլն) քննություն է կատարում և վճռում, որ պարսպապատ կավածքը, ինչպես և եկեղեցին Հաղբատին է պատկանում: Ընդ որում ստորագրողները անհրաժեշտ են նկատել անդրադարձ կատարել անցյալին և ասել, որ երբ Հերակլը թիֆլիսի բերդը թաթարներից առ ինքը գրավեց, «այն ժամանակ բերդի ներսում Նորաշենի այս հին տաճարը երևան եկավ, և քանի որ հնում Հաղբատի եկեղեցուն էր պատկանել՝ նույն եկեղեցուն էլ միղեց»:

Ուրեմն Նորաշենի դավանական ու էթնիկական պատկանելությունը անվերապահ է եղել, ուստի վեճը տան ու խանութների տեղերի՝ Հաղբատի վանքին թե Տեր Փիլիպոսին պատկանելուն է վերաբերել:

Մենք չգիտենք՝ Մխիթարյան հայր Ղուկաս Ինճիճյանը թիֆլիսն ու տեղի հայոց եկեղեցիները նկարագրելիս կամ թվարկելիս գրառել է տեղում տեսածը, թե աղբյուրներից ու ականատեսներից կարդացածն ու լսածը: Բոլոր պարագաներում նրա աշխատասիրությամբ Վենետիկում 1806 թ. լույս տեսած գրքի Ասիային նվիրված Ա հատորում թիֆլիսի 13 հայկական եկեղեցիների շարքում 10-րդը Նորաշենն է<sup>2</sup>:

Ղ. Ինճիճյանին հաջորդած Մխիթարյան ուղեգիրը Մինաս Բժշկյանցն է, որը թիֆլիսում եղել է 1824 թ. հետո, բայց մինչև 1830 թվականը, քանի որ այդ տարի նա հրատարակել է իր «Ճանապարհորդությունն ի Լեհաստան և յայլ կողմանս՝ բնակեալս ի

<sup>1</sup> Նրա մասին տե՛ս Յ. ՅՅՅՅՅՅՅ, յճԹ. ԸՅԸ. ԵԸԸ., Ը. Ը, ՅՅ. 366-369. Ս. Մ. Мырдян, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ереван, 1966, стр. 178-186.

<sup>2</sup> Աշխարհագրությունն չորից մասանց աշխարհի: Աշխատասիրությամբ տեսան Հայր Ղուկաս վարդ. Ինճիճյանի Կոստանդնուպոլսեցւոյ, Վենետիկ, 1806, էջ 277:

Հայկազնեաց...» գիրքը (Վենետիկ, 1830): Այստեղ գիտնական հայրը տալիս է զանազան վիճակագրական տեղեկություններ: Մասնավորապես՝ «Բնակիչք մեծի քաղաքիս են զանազան ազգք ընդ ամենայն հաշուին քսան հազար տունք, իսկ տունք Հայոց են 5000, որք յառաջագոյն ունէին 24 եկեղեցիս. այլ յառնուլ Մէհէմէտ խանին զայս քաղաք՝ (խոսքը Աղա-Մահմեդ-խանի 1795 ավերածութեան մասին է - Պ. Մ.) շատք քանդեցան: Այժմյան եկեղեցիք Հայոց, բաց ի Վանուց (իմա՛ բացի Փաշի վանից - Պ. Մ.) են 10, զորս նոքա կոչեն ա) Սուրբ Նշանի, բ) Մօղնու, գ) Ճիկրաչէն, դ) Բեթղեհեմի, ե) Մեծ բերդի, զ) Փոքր բերդի, է) Սուրբ Գէորգայ, ը) Սուրբ Սարգսի, որ է արտաքոյ քաղաքին մերձ ի վանս, թ) եկեղեցի Խօժենց որ ի Հաւլապարն, ժ) Սուրբ Սարգ[իս] մերձ բաղանիս, Սուրբ Կարապետի յայնկոյս գետոյն» (§ 616):

Այստեղից պիտի եզրակացնել, թե Նորաշենը այն եկեղեցիների շարքին է, որոնք Աղա-Մահմեդ-խանի կատարած կոտորածից, ավերածութիւններից հետո մինչ Մ. Բժշկյանցի Թիֆլիս գալու տարին դադարել են գործելուց, թեև Մողնի եկեղեցու հայ համայնքի 1796 թ. մարտի 22 որոշման տակ կարգուժում ենք նաև Նորաշինի սպասավոր Տեր Հակոբի ստորագրութիւնը<sup>1</sup>:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում (թղթ. 21, վավ. 20) պահպանվել է Նորաշենի վերականգնման ծախսերի մատյանը. «Ի 1809 թուին սոյն տարւոյ մարտի 10-ին ըսկիզբն եղև Նորաշինու Սուրբ եկեղեցւոյ շինութիւնն. որպէս և կամ որ ինչ խարջ լինի՝ բոլորն նշանօք յատորև սորին՝ սոյն դաւթարումս գրելոց եմք»։ Եվ հիրավի, մեծադիր տետրի 17 էջերին խումբ առ խումբ թվարկված են աշխատանքներն ու ծախսերը: 18-րդ էջին ամփոփված են բոլոր էջերին գրառված ծախսերը. «Վերոյ 17 դալամ ջամերու բոլոր ջամն եղև չորս հարիւր երկու թուման եօթն հազար երկու հարիւր եօթանասուն հինգ դիան. ԴճԲ. թ. ԷՌԲՃՀԵ. դ.»։ Այնուհետև հիշատակարանային բնույթի երկու գրառում ևս կա. «Աւագ քահանայ Տեր Ղազարի և

<sup>1</sup> ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 6, վավ. 69: Ընդ որում ավերածութիւնը այնքան մեծ է եղել, որ Նորաշենի համայնքը Հովսեփ Խատինի միջոցով (սա հայտնի բանագնաց Ռաֆայել Դինբեկեանցի հայրն է) դիմել է Մադրասի հայութեանը հանգանակութիւն կազմակերպելու: Պահպանվել է Հովսեփի տված պարտուց գիրքը, որով նա այդ դրամը պիտի հանձնի Նորաշենի ավազերեց Տեր Առաքել Շմափոն[եան]ին (Մատ. ձեռ. № 10756, 9ր, հմտ. Պ. Զորաւնյան, Հայ-ուսու-վրացական փոխհարաբերութիւնները ԺԼ. դարի երկրորդ կեսին, Ս. էջմ., 2006, էջ 111): Նորաշենի մի շարք քահանաներ ու ավազերեցներ են հիշատակվում ԺԼ. դ. վրացերեն վավերագրերում՝ հաճախ իրենց կնիքներով. նրանց թվում են Տեր Հակոբը, Տեր Դավիթը, Տեր Հոբը, Տեր Մելիքսեթը, Տեր Մկրտիչը ևն (տես «დოკუმენტები თბილისის ისტორიისათვის (XVI-XVII სს.)», I, შვაბციხეს ნიკო ბერძენიშვილმა და მამასა ბერძენიშვილმა, თბ., 1962, გვ. 363):

այլոցն սոյն եկեղեցւոյ ժողովրդոց խնդրանօքն Նորաշէնու սուրբ եկեղեցւոյ խարջի հէսապն, զոր ինչ խարջուել էր Տէր Մովսէսի և այլոց ձեռօք, այսպէս գրեցի և ջամերն ժողովեցի որպէս իմ միտքն վերահասու եղև: Նուաստ Եօվանէ Մուշրիբով»: «Սոյն Նորաշէն եկեղեցւոյ խարջի վրացերէն դաւթարն տեսանելով, համեմատ վրացերէնին հայերէն թարգմանեալ օրինակեցի. ծառայ մահտեսի Տէր Սիմէօն Տէր Յովսէփեան Մօղնու եկեղեցու»: Մասամբ հիշատակարանային են նաև այս գրառումները. «Ձոր ինչ խաչկալի վերայ և կամ կանանց վերնատան փանջարուց վերայ խարջ կլինի՝ երբ կաւարտենք նուխասյով ջամն կգրենք՝ զոր ինչ խարջ կլինի» (էջ 11): «Մկրտում Մուհթօյեանն իւր խոստացած դրամի հաշուումն 1 տօփ էր առեալ: Մկրտում Մուհթօյեանն 3 մեծ լէզգու դում էր առեալ եկեղեցւոյ համար, որն եկեղեցւոյ ժողովքիցն տուեալ էին, մնացեալն Մկրտում Մանթօյեանն տուեալ էր իւր խոստացեալ փողի հէսաբումն» (էջ 16):

Մի երկու տասնամյակ հետո աղբյուրներում նորաշենը վերստին հայոց գործող եկեղեցի է հիշատակվում: Վրաց արքունիքի երբեմնի ավագերեց, ծանոթ պատմաբան Պլ. Իոսելիանիի հայր էգնատե Իոսելիանիի (1764-1844) 1837 թ. կազմած «Թիֆլիսի հուլյն-ուղև-վրաց և հայկական եկեղեցիների» նկարագրությունը<sup>1</sup>, ուր իբրև Հայոց չորրորդ եկեղեցին Թիֆլիսում ներկայացված է մեզ գբաղեցնող կառույցը: Այստեղ կարդում ենք. «Թագավորական քարվանսարայի արևմտյան կողմում կա Նորաշեն (Ախալշենի) կոչված մի եկեղեցի՝ հանուն վերափոխման Աստվածածնի, գմբեթավոր, բարեշեն աղյուսով ու կրով, չորս սյան վրա կառուցված: Գմբեթը սև տաշած սալաքարով է ծածկված, իսկ թևերը՝ կարմիր աղյուս-կղմիրդրով: Դրսից սրա տեսքը ավելի դուրեկան է, քան ներքուստ: Հիմնադրված է նախ ոմն Խոջա Նազարի ծախքով և ապա շենքը շարունակել են և ավարտել Տիֆլիսի կանանց և արանց ձեռներեցությամբ <հավաքած> միջոցներով՝ 1737 թվին. և նրանից հետո մինչև այժմ էլ շինվում է: Այստեղ են մի ավագ քահանա և հինգ քահանա»<sup>2</sup>: Ուրեմն իսկապես՝ Մ. Բժշկյանցի այցելությունից որոշ ժամանակ անց եկեղեցին նորից գործել է, նույնիսկ հինգ քահանա ունեցել:

<sup>1</sup> Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտ S-3034: Ի պատասխան Թիֆլիսի մոտորով Դավիթ Սարգսրի հարցման 1784 թ. տված հայ քահանաների շարքում է նորաշենի քահանա Տեր Հակոբը («ԵՊՊ. Խոջ», III, թջ. 1910, թջ. 15-17: Տե՛ս նաև ստորև):

<sup>2</sup> Ձեռ. S-3034, վրաց. բնագիրը հրատարակել, ապա և հայերեն է թարգմանել պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը:

Արդեն ասացինք, որ էգն. Իոսելիանիի նկարագրությունը վերաբերում է 1837 թվականին: Նրանից հետո եղած բոլոր ցանկերում (Մ. Բրոսե, Պլ. Իոսելիանի, Ս. Ջալալյանց, Անանուն և այլն) Նորաչենը մշտապես ներկայանում է իբրև հայոց հաղթատապառկան գործող եկեղեցի:

Վավերագրական տեղեկությունն առավել լիակատար դարձնելու համար անհրաժեշտ ենք նկատում վկայակոչել ևս երկուսը. 1745 թ. Խոջա Բեհբուդի թոռնորդի Մելիք Աղան և նրա եղբայր Ստեփանոսը Թիֆլիսի հայոց եկեղեցիների շաբաթ և կիրակի օրերի պատարագիչ քահանաներին արտոնում են Խոջի բաղնիսում անվարձ լողանալ և դրամարկղից 100 դիան ստանալ: Թվարկված եկեղեցիների մեջ է նա Նորաչենը<sup>1</sup>: Երկրորդ փաստաթուղթը վրացերեն է. Թիֆլիսի մոռերավ Դավիթ սարգարը (Հերակլի փեսան) քաղաքի հայ քահանաներից պահանջում է Աստծո առաջ վկայել, թե քաղաքում քանի՞ մոռերավ, մելիք և նացվալ է եղել նախորդ թագավորների ժամանակ: Պատասխանողների մեջ է Նորաչեն եկեղեցու «փոքր ծառա» Տեր Հակոբը<sup>2</sup>:

Գուցե ավելորդ է ասել նաև, թե ԺԹ. դարում վրացերեն կազմված հայոց եկեղեցիների մեկ այլ ցանկում ևս (Տճ-2343) 21 գործող պաշտամունքային կառույցների շարքում 12 համարի տակ նշանակված է Նորաչենը:

Այս ամենը փաստում են, որ ԺԷ. դարից սկսած մինչև Ի. դարի 20-ական թվականները Թիֆլիսի Նորաչեն եկեղեցին գոյություն ունեցող բոլոր աղբյուրների վկայությամբ գործել ու ճանաչվել է իբրև անվերապահորեն լուսավորչադավան հայոց եկեղեցի:

Այժմ անհրաժեշտ է պարզել նրա հիմնադրության և վերանորոգությունների ժամանակագրությունը և արդյունավորողների ինքնությունը: Նորաչենին վերաբերող գրականության մեջ այս հարցերը հատուկ քննության առարկա չեն եղել՝ որովհետև նրա մասին խոսողները ձեռքի տակ աղբյուր չեն ունեցել և կամ ոչ մի բանական պատմաբանի կամ վանականի միտքը այնքան չի խաթարվել, որ Աստծո այդ տունը մի համայնքից ու դավանանքից վերցնի և ետին հաշվով մեկ այլ հանրության հատկացնի: Եթե վերևում մեր բերած արխիվային ու պատմողական տարբեր լեզու-

<sup>1</sup> «Լուծայ», 1899, գիրք Բ, էջ 279-281: Այս Տեր Հակոբի կապակցությամբ 1812 թ. նամակով Ներսես Աշտարակեցուն է դիմել Հովսեփ Մեհրաբյանը, առաջարկելով Նորաչենում քահանայության թողնել Տեր Հակոբին, իսկ Տեր Մովսեսին ուրիշ կերպ հոգալ (ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 23, վավ. 45):

<sup>2</sup> «Նճ. կոմպլեյնո», Ծ. III, թ. 15-17.

ներով եղած փաստերը անծանոթ են մնացել վեճեր ու կասկածանքներ հարուցողներին, ապա գոնե երկու տպագիր աշխատություն հետաքրքրվողները կարող էին բացել ու կարդալ. դրանցից մեկը հանգուցյալ պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին» գրքի 3-րդ հատորն է<sup>1</sup>, ուր հայերեն թարգմանություն հրատարակված է «Անանուն հնագետ» կոչվածի (իրականում էգն. Իոսելիանի) տեղեկանքը այդ եկեղեցու մասին (վրացերենը հրատարակված է 1924 թվին), մյուսը տողերիս հեղինակի «Армянская эпиграфика Грузии: Тбилиси» գիրքն է<sup>2</sup>: Այս երկրորդում կարելի է գտնել աղբյուրների ու գրականության բավական հարուստ ցանկ և որ կարևոր է՝ վիճաբերի լիակատար հրատարակություն ու թարգմանություն, այդ թվում և այնպիսիների, որոնք այսօր մի չար ձեռքի «խնամքով» չքացել են:

Վիրահայոց հոգևոր առաջնորդ Ներսես արքեպ. Աշտարակեցին, ինչպես բազմիցս հիշատակեցինք, ԺԹ. դարի առաջին քառորդում Թիֆլիսի հայոց եկեղեցիների ավագ քահանաներից պահանջում էր գրավոր տեղեկացնել, թե ինչ գրավոր ու բանավոր հիշատակներ կան իրենց սրբարանների կառուցման, նորոգումների, երախտավորների ու ունեցած եկամուտների մասին: Բացառություն չի կազմել նաև Նորաշենը: Բարեբախտաբար, պահպանվել են Աշտարակեցու ստացած պատասխանները, ուր ներկայացված են շինարարական ու նորոգչական արձանագրությունները<sup>3</sup>:

Ահա դրանք.

1. «Ի թուին ՋԾԶ (956+551=1507): Յանուն Աստուծոյ եւ Սատաթս մուքլս շինեցի զեկեղեցի՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ հօրն իմոյ պարոն Սուլտանին և պապուն իմոյ պարոն Թաւաքալին, և կողակցոյն իմոյ Վիշէլին, որդոցս՝ Նարիմանին, Սուլտանին և Ծարիմանին»:

2. «Ի թուին ՌՂԹ (1650) շինեալ է Խօջայ Նազարն և զկնի շինութեան եկեղեցոյ բոլոր իշխանութիւնն յանձնեալ է ի ձեռս հանգուցեալ Մելիք Աշխարբեգին Բեհբուղեան հաստատուն գրով, որոյ սոյն գրոյ թիւն է 1714»:

3. «Ի ՌՄԽԳ թուին (1795) հանգուցեալ Տէր Գրիգորն Նորաշէնու սկիզբն է արարել նորոգ շինութեանն՝ հրամանաւ հանգուցեալ Մելիք Աւետիքին Բեհբուղեան»:

<sup>1</sup> Երևան, 1955, էջ 266:

<sup>2</sup> Ереван, 1988, стр. 74-81:

<sup>3</sup> ՄՄ, Կաթ. դիվան, թղթ. 6, վավ. 69: Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտ Arm. d. 156:

4. «ՌՄՄԷ թուին (1808) գործակալ Տէր Ղազարն համակամութեամբ պարոն Մկրտում Մունթօյեանին և քանի մի պատուելի անձանց սկիզբն արար շինութեան»:

Հետևաբար՝ Նորաշենի պատմության այս անխարդախ վկաները որևէ երկմտանքի տեղ չեն թողնում, որ Սատաթ անուն մի հայ մեծատուն 1507 թվականին ծախսել է իր ունեցվածքը (մուլք) և իշխանական կամ տոհմիկ ծագում ունեցող (այդ պարագայում միայն նրանք պարոն կարող էին կոչվել) պապի՝ Թավաքալի, հոր՝ Սուլտանի, իր կողակից Վիրշելի, որդիներ Նարիմանի, Սուլտանի (պապի անուն է կրում), Շարիմանի և իր հիշատակի պահպանության համար եկեղեցի է կառուցել<sup>1</sup>:

Կառուցումից շուրջ հարյուր հիսուն տարի անց եկեղեցին հիմնավոր նորոգության պետք է ունեցել, ուստի ջուղայեցի հայտնի մեծատուն Խոջա Նազարը նորոգումը ավարտելուց մեկ տարի առաջ՝ 1649 թ. եկեղեցու պատի մեջ ներքուստ խաչքար է տեղադրել, այն օժտելով իրողությունը հաստատող արձանագրությամբ, որ «Արարատ» հանդեսի 1850 թվականի N4 պրակում (էջ 53) հրատարակել է Թիֆլիսը նկարագրող անստորագիր մի հեղինակ:

«Սուրբ Խաչս բարեխաւս է Նազարին եւ / կողակցուն Եագունդուն եւ որդւոցն / Պաղինին, Բաղդասարին և ծնօղացն / Բերդիմին, Բեգիխաթունին եւ եղբարցն՝ / Ծարոյին եւ Զուրապին: Ի թուականին ՌՂԸ (1649)»,

Ընդ որում՝ Խոջա Նազարը նորոգումը ավարտելուց հետո եկեղեցու «բոլոր իշխանությունը» պաշտոնական «հաստատուն գրով» (իմա՝ հատուկ նվիրագրով) հանձնել է Թիֆլիսի պատմության մեջ քաջ հայտնի Աշխարբեկ Բեհբուդյանին, որը ոչ միայն

<sup>1</sup> Նորաշենի կառուցման հանգամանքների կապակցությամբ ուշագրավ վարկած ունի Թիֆլիսում հրատարակվող «Արարատ» հանդեսի «Ստորագրութիւն Տփիսի քաղաքի» անանուն հեղինակը. նրա տեղեկությամբ Շահ Աբասը 1617 թ. գրավում է Թիֆլիսը և հայերի ձեռքից վերցնում Նարիդալայի մոտ գտնվող ս. Կաթողիկէ եկեղեցին: «Այն ժամանակն Հայոց ազգն եկան քաղաքի մէջ, շինեցին միւս Փոքր Կաթողիկէ եկեղեցի և անունն դրին Նորաշէն: Նորաշէն Կաթողիկէ եկեղեցւոյ շինութիւնն, որ էլաւ 1649 և 1650 թուին, Հայոց ՌՂԸ և ՌՂԹ թուին, այլ պատճառ ևս ունի: Որովհետեւ հին Կաթողիկէ եկեղեցին շինուած էր այն հրապարակի մօտ, որ կապի թուրքի մէջտան, մեր Հայոց կանանց պարկեշտութեան չէր վախելում թուրքաց մէջէն անցուղարձ անել, էնտուր համար Նորաշէն Կաթողիկէն ուզեցան ունենալ քաղաքի մէջ, որ իսկական Հայոց թաղումն էր, և կանանց՝ թուրքաց աչքէն պահպանվելու յարմար: Նորաշէն եկեղեցւոյ մէջ կան երեք մարմարիոն խաչքարի վրայ գրած յիշատակներ...» («Արարատ», Ա տարի, համար 4, 1850, սեպտեմբերի 23, էջ 53-54):

Հայագրի էր, այլ նաև Նազարի Հայրենակիցը Նոր Զուղայից<sup>1</sup>: Նվիրագիրը թվագրված է եղել՝ 1714 թ.: Պատահական չէ, նաև, որ Աշխարհեկ Բեհբուդյանի ժառանգներից (թոռնորդի) Մելիք Ավետիք Բեհբուդյանը 1795 թ. Նորաշենի քահանայ Տեր Գրիգորին Հանձնարարել է «նորոգ շինութիւն», այսինքն հիմնավոր նորոգութիւն սկսել, որ հետագայում շարունակել են էջմիածնի գործակալ Տեր Ղազարը՝ Մկրտում Մունթոյանի և մի քանի այլ «պատուէլի անձինք», առ այդ թողնելով հատուկ արձանագրութիւն (1808):

Անհրաժեշտության պարագային՝ թվարկված բազմակի աղբյուրներին կարելի է և ուրիշները գումարել ու Հայոց Նորաշեն եկեղեցու պատմության նորանոր մանրամասնութիւններ պարզել<sup>2</sup>: Երկու-երեք տասնամյակ առաջ, երբ Թիֆլիսի Հայերեն արձանագրութիւնների դիվան էի կազմում, Նորաշենի պատերին, ցանկապատի վրա, բակում կային մեկ տասնյակից ավելի շինարարական, նորոգչական, տապանային վիճաբեր, որոնք լուսանկարված ու հրատարակված են «Армянская эпиграфика Грүзии: Тбилиси» գրքի 6 էջ կազմող Ը. աղյուսակում: Այսօր նրանց մեծ մասը այլևս գոյութիւն չունի: Ցավալի, նույնիսկ անհավատալի իրողութիւն է՝ վրացագրի մարդու իսկ ձեռքով ոչնչացվում են վրաց մայրաքաղաքի պատմության հուշարձանները... և այդ կատարվում է իշխանութիւնների աչքի առաջ...

<sup>1</sup> Նորաշենը նորոգող Խոջա Նազարը ըստ ամենայնի Արաքսի երկու ափերն իրար կապող կամուրջի կառուցող և հետագայում Թիֆլիս հաստատված Խոջա Նազարի թոռն է կամ թոռնորդին: Խոջա Նազար ավագը մահացել է Թիֆլիսում 1578 թ.: Նրա տապանաքարը պահպանվելիս է եղել Վրաստանի Պետթանգարանում «Այսէ հանգիստ Մանուկ Նազարին: ԹՎ. ՌԻԷ» արձանագրութեամբ (տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրութիւններ, հատ. 2, Երևան, 1934, էջ 492):

<sup>2</sup> Այսպես, օրինակ, Կաթ. դիվանում (թղթ. 21, վավ. 21) առկա է 11 էջ կազմող մի ընդարձակ ցուցակ, ուր ներկայացված են Թիֆլիսահայ բնակչութեան նվիրատիւութիւն կատարած գրեթէ բոլոր խավերը: Ցուցակը նախապես եղել է վրացերեն և Հայերենի է վերածվել 1809 թ.: Նվիրատուների մեջ մեկ այլագրի կա՛ ուս: Նորաշենի նորոգութեան ծախսերի մեծագիր 17 էջանոց ցանկը տես նույն Կաթ. դիվանի թղթ. 21, վավ. 20-ում, որով «բոլոր ջամն եղև չորս հարիւր երկու թուման եօթն հազար երկու հարիւր եօթանասուն հինգ դիան»: Նորաշենին վերաբերող նամակներ, դիմումներ ու գրութիւններ կան Կաթ. դիվանի այլ թղթապանակներում ևս (տե՛ս, օրինակ, թղթ. 25, վավերագրեր 71, 75, 76 ևն):

## ՍՈՒՐԲ ՆՇԱՆ

Հին Թիֆլիսի Կալոյի թաղը (Կալոս ուբանի) այժմյան Լեսելի-ձեի փողոցով երկու ենթաթաղամասի էր բաժանվում՝ վերին և ներքին: Այս բաժանումը պայմանավորում է նաև բնակիչների էթնո-դավանական խմբավորում: Վերին թաղում են կենտրոնացված վրացական պաշտամունքային առավել նշանակալի հուշարձանները՝ Սիոնը, Անչխախատին, Սուրբ Գիորգին, Հովհ. Մկրտչի և Կվիրացխովելի եկեղեցիները, իրենց շրջակայքում կենտրոնացնելով հին Թիֆլիսի վրացի բնակչության հոծ զանգված: Թաղամասի կենտրոն էր համարվում Տիրոջ (Ուփլիս կամ Վերին) հրապարակը, որ միաժամանակ իբրև շուկա էր ծառայում: Ընդ յայտ թաղամասում է գտնվում հայոց Սուրբ Նշան եկեղեցին, իսկ այդ նշանակում է, թե այստեղ կար նաև բավական մեծ թիվ կազմող հայ բնակչություն, որոնց շարքին էին հասարակական նկատելի դիրքեր ու տիտղոսներ ունեցող հայազգի գերդաստաններ: Սուրբ Նշանի շրջակայքը հայտնի էր նաև եկեղեցու անունը կրող միկրոտոպոնիմով, իսկ ռուսական իշխանություն հաստատումից հետո կրում էր նաև Серебряный ряд հորջորջումը: Արձանագրենք նաև, որ բաժանարար փողոցի մյուս կողմում, բացի «Հայոց շուկայից» մոտակայքում էին գտնվում Նորաշենի, Սահակաշենի, Մուղղնու, Զիզրաշենի, Կոզմասի և Դամիանոսի, Սուրբ Ստեփանոսի, Բեթղեհեմի և այլ հայկական եկեղեցիներ<sup>1</sup>: Հիշենք միաժամանակ՝ այս վերին թաղում էր գտնվում թագավորական պալատը:

Հակառակ Ս. Նշանի կառույցը ի մոտո շրջապատող նորօրյա կացարանների սեղմումին և բարձրիկ վիճակին, հուշարձանի անցյալը ներկայացնող վիճակագրությունները տակավին պահպանվում են և ընթեռնելի են: Նրանցից գլխավորը փորագրված է հյուսիսային մուտքի վերին մասում.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ:

ՇՆՈՐՀՕՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՅՆ ԵՂԵԻ ՀԻՄ/ՆԱՐԿՈՒՄՆ ԵԻ ՇԻՆՈՒՄՆ  
ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ/ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԹՎԻՆ ՌՃԾԲ. Ի ԹԱԳ/ԱՒՈՐՈՒԹԵԱՆ  
ԼԷՎԱՆ ԽԱՆԻՆ ԵԻ ԻԻՐ ՈՐԴՈ/ՑՆ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ:

<sup>1</sup> Հմմտ. Յանկա Երմոնիցովա, տոլոսիս ցարեջանի ևսեջ XVIII ևսեյսեյնի, տձ., 1965, թթ. 6-7.

ՆԱՀԱՊԵՏԻՆ:/ ԵՍ ՄԷԼԻՔ ԿԻՕՐԿԻՍ, ՈՐԴԻ ՏԱՆՈՒՏԷՐ ԱՍԼԱՄԱԶԻ, ՇԻՆԵՑԻ/ ԶՏԱՃԱՐՍ ԶԱՅՍ, ՈՐ ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ, ՅԻՇԱՏԱԿ Ի/ՆՁ ԵՒ ԾՆՕՂԱՑՍ ԵՒ ԵՂԲԱՐՑՍ ԻՄՈՑ ԵՒ ԿՈՂԱԿՑՈՅՍ ԽԱՆՓԷՐ/ՎԱՆԻՆ ԵՒ ՈՐԴՈՑՍ՝ ԶՈՒՐԱՊԻՆ ԵՒ ՊԱՊԻՆ, ԴՍՏԵՐՑՍ ԵՒ / ԲԱԶՄԱՇԽԱՏ ՔԱՀԱՆԱՅԻՍ ԻՄՈՑ ՏԷՐ ՄՈՎԱԷՍԻՆ, ԵՒ ԵՍ ՄԷԼԻՔ ԳԻՕՐԳԻՍ /ՎՃԱՐԵՑԻ ԸԶԿԻՆ ՍՄԱՅ ԱՄԵՆԱՅԻՆ ԱՄԻ ՌՃԿԹ-ԻՆ: ՄՆԱՑ ԿԱԹՈՂԻԿ/ԷՆ՝ ՅԻՇԱՏԱԿ ԱՆԶՆՁԵԼԻ ԱԻԱՐՏՈՂԱՑ<sup>1</sup>:

Հիմնարկության և կառուցման ՌՃԾԲ (1703) թվականը (բացառուկամբ կաթողիկեի) կարոտ է որոշ պարզաբանման. Շարդենի Թիֆլիս այցելուկության տարին, այն է 1673 թվականին Հայոց եկեղեցիների շարքում Սուրբ Նշանը հիշատակվում է Փաշա վանքից անմիջապես հետո<sup>2</sup> և, դատելով Տուրնեֆորի թվարկուկության քանակից (7-1) առկա է նաև նրա ճանապարհորդության տարիներին (1700-1702)<sup>3</sup>: Չենք կարծում, թե ուղեգրների գրառումները ընդմիջարկված են, ուստի ստիպված ենք շինարարական արձանագրության «Հիմնարկումն եւ շինումն» ոչ «ի կորոյ» հասկանալ, այլ որ տեղում մինչ այդ խարխլված կամ ավերակված պաշտամունքային մի նախնական կառույց է եղել, որ հիմնավին ի նորո շինել է քաղաքի մելիք և տանուտեր Ասլամազի որդի Գիորգին (var. Կիորկին): Կարծեք այդ մասին է խոսում նաև «բազմաշխատ քահանայ Տեր Մովսէսի» ներկայութիւնը վիճաբանում: Հազիվ թե նա երկար ժամանակ առանց կաթողիկեի ավարտման մնացած եկեղեցում ժամասացութիւն կատարեր: Ուրեմն, պիտի ենթադրել, Տեր Մովսեսը նախորդ աղոթարանի կամ մատրան քահանան պիտի լիներ<sup>4</sup>:

Հետաքրքիր է, որ մելիք Գիորգու Ամիր պապն ու Ասլամազ Հայրը կոչված են տանուտեր, իսկ ինքը կրում է «մելիքի» պաշտոնն ու տիտղոսը: Վանական վարդապետի 1238 թ. հիշատակարանից գիտենք, որ Թիֆլիսի պատմական թաղամասերը ունեին իրենց տանուտերերը (համենայնդեպս հայկական աղբյուրներում նրանք այդպես են կոչվում), մինչդեռ ժէ դարի սկզբներից, ինչպես բեր-

<sup>1</sup> Սրբագրված վերջին հրատ. տե՛ս Ս. Մ. Мурадьян, նշվ. աշխ., էջ 69:

<sup>2</sup> Տե՛ս այստեղ՝ Շարդենի «Ուղեգրության» հատվածը:

<sup>3</sup> Տե՛ս «Ուղեգրություններ» հավելվածում:

<sup>4</sup> Այս ենթադրության օգտին է խոսում եկեղեցու «Յիշատակարանից» (Синодикон, քէօթուկ) պահպանված այն տեղեկությունը, որ իբրև հիմնարկության մասնակցի հիշում է Գիորգիի պապ տանուտեր Ամիրին՝ Ասլամազ տանուտերի հորը (տե՛ս ստորև՝ Սուրբ Նշանին վերաբերող գրառումներից առաջինը): Պատահական չէ, որ մեկ այլ գրառության մեջ Գիորգին վերատին շինող ու նորոգող է (տե՛ս Armd. 156):

4 - Տին Թիֆլիսի հայոց եկեղեցիները

ված արձանագրությունից է պարզվում, թաղապետը թե քաղաքապետը այլևս «մեղիք» են կոչվում:

Շինարարական բովանդակությունն ունի նաև նախորդ վիճակից վար գտնվող բնագիրը.

ՇՆՈՐՀԻԻ ՏԵԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՇԻՆԵՑԱԻ ԿԱԹՈՒՂԻԿԵՆ/ ԵԿԵՂԵՑ-ԻՈՅՍ Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԹԱԳԱԻՈՐՈՒ/ԹԵԱՆ ՎՐԱՑ ՀԵՐԱԿԼԵԱ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ/ԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՍԻՄԷՕՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻ/ԿՈՍԻՆ՝ ԱՐԴԵԱՄԲ ՂԱԶԱՐԻ ՈՐԴԻ ԵՆՕՔԻՆ՝ / ՅԻՇԱՏԱԿ ՀԱՄԱՅՆ ԿԵՆԴԱՆԵԱՑ ԵՒ / ՆՆՋԵՑԵԼՈՅՆ ԻԻՐ: Ի ԹՈՒԻՆ ՌՄԻԹ. (1780)<sup>1</sup>:

«Յիշատակարանը» պահպանել է և այլ շինարարների անուններ՝ Խոջա Պարխուտար, կինը՝ Դարեճան, նրանց դուստր Էագուճի, որոնք զանգակատուն են կառուցել «իւր խցովն», իսկ էագուճը ՌՃԿԸ. (1719) թվին նորոգել է հոր ու մոր կառուցածը:

Սուրբ Նշանի ծուխը կազմելու թե այն հովանավորած լինելու հանգամանքով եկեղեցու արևմտյան մուտքի առաջ է իր հանգիստը գտել Հերակլ Բ արքայի «վիցե կանցլեր» դիվանադպիր, իշխան (թավաղ) Սուլխան Բեգթաբեգովը (վախճանվել է քրոնիկոնի 476-ին և փրկչական 1788 թվին)<sup>2</sup>: Դժբախտաբար եկեղեցու շրջափակը վաղուց ոտատակ է դարձել, և շատ տապանագրեր այլևս կամ հիմնովին մաշվել-վերացել են, կամ խիստ պատռիկային դարձել<sup>3</sup>:

Իրավունքի պատմության համար կարևոր է մասնավորեցնել, որ ըստ «Յիշատակարանի» գրառման վրաց թեյմուրազ արքան և Հերակլը «շաղավաթլամայ գիր»<sup>4</sup> են տվել և սահմանել (հարկավ Ս. Նշան եկեղեցու հետ կապված առիթով), որ անժառանգ մահացությունը դեպքում հանգուցյալին պատկանող ինչքը, հավանաբար նաև հոգևոր կառույցի վերաբերմամբ ունեցած իրավունքը անցնում է համայնքին՝ «որպէս որ քաղաքացիք կամենան՝ այնպէս առնեն, որպէս և մեք ձեռագրով հաստատեալ եմք»<sup>5</sup>:

Ուշագրավ է, որ Ս. Նշանի արձանագրությունների ու հիշատակարանային գրառումների մեջ, բացի քաղաքի տանուտեր-մե-

<sup>1</sup> П. Мурадян, *նշվ. աշխ.*, էջ 70:

<sup>2</sup> Տապանագիրը վրաց մխեդրուլի գրչությունը է: Հրատարակություն տե՛ս Պ. Մ. Меликсет-Бекоев, *Усыпальница кн. Бегтабеговых*, Тифл., 1914, стр. 4; ср. П. М. Мурадян, *Армянская эпитафическая Грузия*: Тбилиси, стр. 71.

<sup>3</sup> Ընթերցվողների հրապարակում տե՛ս մեր վերոբերյալ աշխատության էջերում:

<sup>4</sup> «Շաղավաթլամայ» - վրացերենում գործածություն գտած შვედური (արաբ. սախավաթ) - «արտոնություն» բառով կազմված տերմին է (արտոնագիր):

<sup>5</sup> Տե՛ս «Յիշատակարանից» պահպանված քաղումը:

լիքներին, իբրև միաբանողներ կամ այստեղ հանգչողներ մի քանի հայտնի գերդաստանների անունների ենք հանդիպում՝ Բեգթաբեգյաններ, Փիրոյաններ, Բոտինյաններ և այլն:

Ի դեպ, Թիֆլիսի հայերեն հիշատակարանների մեջ Ս. Նշանի շինության առիթով է, որ «ողորմիսի» է արժանանում «ուստայ Բանահ Յակոբը», որը իր Սարգիս անուն աշակերտին նվիրել է եկեղեցուն (հարկավ իբրև ճորտ), որպեսզի «ծառայութիւն անի, տարին մէկ լիտր ձէթ, մի չարէք մոմ տայ» եկեղեցուն:

## ՄՈՒՂՆԻ

Մուղնի/Մողնի անունով թիֆլիսում հայտնի է երկու եկեղեցի՝ մեկը Կամակատար Սուրբ Աստվածածին, մյուսը՝ Սուրբ Գևորգ։ Նրանց հիմնարկության աղբյուրներով վկայված ստույգ ժամանակը չգիտենք։ Արդեն Աշտարակեցու հարցումին պատասխանող Մկրտում Մունթոյան, Բեժան Բաստամյան և Գրիգոր Բաշինջալյան երախտավորները նշում են, թե «հնագույն շինութիւն ինչ Մուղնոյ եկեղեցւոյն ոչ ինչ երևի», սակայն միաժամանակ առաջնորդին ներկայացված նյութերի մեջ առկա է «վաղ ուրեմն կառուցեալ յայսմիկ տեղի՝ յամի Տեառն 1356» հիշատակություն։ Այն, հարկավ, ինչ-որ աղբյուր պիտի ունենա։ Հիշյալ թվականից շուրջ հարյուր տարի անց ունենք այստեղ ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններ. 1447 թվականին Հովհաննես անուն գրիչը «ի մայրաքաղաքս Տփլիս, ընդ հովանեաւ Կամակատար Սուրբ Աստուածածնիս» ընդօրինակում է Ավետարան։ Հինգ տարի անց՝ 1452 թ. «ի լաւ և ընտիր աւրինակէ Սըսցի» մեկ այլ Ավետարան է գրչագրում նույն անունը կրող թերևս մեկ այլ ընդօրինակող։ Արդեն երրորդ անգամ Հովհաննես գրչի անուն ենք կարդում Գրիգոր Տաթևացու «Քարոզգրքի» հիշատակարանում, պատվիրատու ունենալով «այսմ հոգելից և արդիւնաշահ մատենիս երիցս երանեալ երջանիկ և սրբասնեալ և գերիմաստ, գիտութեամբ ճոխացեալ և շքեղացեալ քաջ ըաբունիս Ստեփանոս» (1452 թ.)։ Բաբունի Ստեփանոսին բնութագրող բառերից կարելի է եզրակացնել, թե Մուղնին ժե. դ. թիֆլիսում գործող նշանավոր եկեղեցի է և գրչօջախ։ Այս վերջին պարագան լավագույնս հաստատվում է 1485 թ. այստեղ ընդօրինակված «Շարակնոցով»։ «...գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, ձեռամբ յոգնամեղ և անարժան գրչի Մկրտչի յիրիցի, ի թուի Հայոց ԶԼԴ (1485)-ի. գրեցաւ սուրբ երգարանս ի քաղաքիս Տրփլիս, ընդ Հովանեաւ սուրբ Կաթողիկէիս և բժիշկ ցաւոց Մաղնոյ սուրբ Գեորգիս»։ Պատվիրատու Տիրատուր քահանան չի գոհացել «մեծաւ ծախիւք» ընդօրինակել տալով, այլև երկու տարի անց այն նկարագարել է «ձեռամբ Ստեփանոս եպիսկոպոսի յԱռնջեցոյ»։ Բացաված չէ, որ նկարիչ Ստեփանոսը երեք տասնամյակ առաջ նույն եկեղեցու ըաբունի Ստեփանոսն է։

Անկախ այդ պարագայից, այստեղ մեզ համար կարևոր է «Մաւղնոյ սուրբ Գէորգ» հիշատակութիւնը, որով վստահանում ենք, որ եկեղեցին Մաւղնի / Մօղնի / Մուղնի անունը կրել է հիմնարկութիւնից ի վեր: Ուրեմն այն ավանդութիւնը, թե այստեղ է պահպնել Արագածոտնի Մուղնի գյուղից բերված Ս. Գեորգի գանգի մասունքը, պատճառաբանում է առկա հորջորջումը<sup>1</sup>: Ուշագրավ է, որ «Մուղնի» անունը կրում է նաև ԺԱ. դարի հայոց նշանավոր ավետարաններից մեկը (այժմ Մատենադարան, N 7736), այս անգամ արդեն Թիֆլիսի Մուղնի եկեղեցում երկար ժամանակ գտնվելու հանգամանքով<sup>2</sup>: Մուղնու ձեր միաբան Տեր Գրիգորի վկայութեամբ «առաջին Փոքր եկեղեցումն ես դպրութիւն եմ արարեալ, ունէր երեք սեղան փոքրիկ՝ քիրաջով շինեալ»: Այս տեղեկութիւնը Կամակատար Աստվածածնի եկեղեցուն է վերաբերում, թե «բժիշկ ցաւոց Ս. Գէորգին» դժվարանում ենք ասել: Համենայն դեպս՝ ԺԸ. կեսերին նրանցից մեկի շինարարական արձանագրութիւնը պահպանվելիս է եղել, որտեղից և նկարագրողները տեղեկացել են 1356 թ. շինարարութեան մասին:

Ցավոք, այժմ անհայտ է, բացի այդ հնագույնից, նաև 1751 թվականի հիմնավոր նորոգման մասին պատմող արձանագիր քարը: Առաջինը այն տեսել է ուղեկցի օգնութեամբ վերծանելու փորձ է կատարել Գյուլդենշտեդտը, աղավաղումով կարդալով թե թվականը, թե կառուցողի անունը<sup>3</sup>: Արձանագրութիւնը կարդացել և հրատարակել են նաև Մ. Բրոսեն, Ս. Զալալյանցը, Աղ. Երիցյանը և այլք<sup>4</sup>: Վերջինի տեղեկութեամբ Ս. Գեորգի ավերակված եկեղեցին վերացնելուց հետո արձանագիր քարը տեղափոխվել ու ագուցվել է գավթի հյուսիսային պատին<sup>5</sup>, որը նույնպես վաղուց գոյութիւն չունի:

<sup>1</sup> Սուրբ Գեորգի մասունքների Թիֆլիսում հայտնվելու տարբերակված պատմութեանը առանձին գլուխ է նվիրել Զաքարիա Քանաքեռցին՝ վերապատմելով Առաքել պատմիչից լսածը (տե՛ս Закарий Канакерци, Хроника, М., 1969, стр. 269-271 (кн. III, гл. XIV): Շարդենը նույնպես անհրաժեշտ է նկատել գրառել Մուղնիի հետ կապված ավանդական պատմութիւնը (տե՛ս այստեղ՝ «Ուղեգրութիւններ» բաժինը): «Մուղնի» տերմինը փոխառութիւն է արաբերենից և «երգել», «սաղմոսել» է նշանակում: Փաստորեն կրկնված ենք գտնում «Սաղմոսավանքի» անվանումը, որ Մուղնուց հեռու է:

<sup>2</sup> Ձեռագրի մասին տե՛ս Т. А. Измайлова, Армянская миниатюра XI века, М., 1979, стр. 124-139.

<sup>3</sup> Գերմաներեն բնագիրն ու նրա վրացերեն թարգմանութիւնը տե՛ս «Յօղալոյն Յօղալոյն Յօղալոյն Յօղալոյն Յօղալոյն Յօղալոյն Յօղալոյն Յօղալոյն Յօղալոյն Յօղալոյն», Ե. II, տձ., 1964, ՅՅ. 300.

<sup>4</sup> Արձանագրութեան տարրնթերցումավոր հրատարակումը տե՛ս տողերիս հեղինակի «Армянская эпиграфика Грузии» գրքում (1988, էջ 45-46):

<sup>5</sup> Աղ. Երիցյան, Հարիւր տարուայ համախօսական վճիռ Մուղնու եկեղեցույ, «Արձագանք», 1897, № 11:

*Այստեղ բերում ենք վիճաբարի ամենավաղ ընդօրինակումը, որ կատարել է Մուղնու միաբան Տեր Գրիգորը.*

Կամաւ և կարողութեամբն Աստուծոյ ի հիմանէ շինեցաւ սուրբ եկեղեցիս, / ուրոյ անունն կոչի Կամակատար Աստուածածին, ի հայրապետութեան Ղազարու / երջանիկ կաթողիկոսին և ի թագաւորութեան աշխարհիս մերում Վրաց Թէմուրազ քրիստոնէապսակի / և որդւոյն նորին Հերակլ տերութեամբ զօրացելոյն եղև շինեալ արդեամբ թիֆլիզեցի Մունթօյենց Մամաչանի որդի Մկրտումին և Բաստամենց Ստեփանի որդի մահտեսի Մելքօյին և Բաշինչաղեցի Ղուկի/ջանի որդի Պողոսին և սորայ առ Աստուած հանգուցեալ աներ Մկրտիչին: Եղև ի աւագ քահանայութեանն մահտեսի Տէր Աբրահամին: Ով կարդաք ողորմի ասէք, Աստուած ողորմի: ԹՎին ՌՄ(1751), Մարտի Ժ(10) սկիզբ է<sup>1</sup>:

*Մուղնու թաղում ապրող հայ ընտանիքները, ինչպես պահպանված տեղեկություններից կարելի է եզրակացնել, Թիֆլիսի համագրիները չըջապատում լայն ճանաչում են ունեցել և ապահովել եկեղեցու պետքերը: 1816 թ. հունվարի 23-ի բացատրագրում ասվում է, որ «ի մէջ ամենայն եկեղեցեաց սոյն եկեղեցւոյ արդիւնքն կրկնապատիկ և եռապատիկ առաւել է»: Նորոգութեան իրողութիւնը պատշաճ արձագանք է գտել հանրածանոթ Սայաթ-Նովայի երգերից մեկում.*

Հիմքըս վերըստին նորեցին, չաղ արին, Մողնու սուրի Գևորք.

Քար ու կիրքս ոչխարի կաթ շաղ արին, Մողնու սուրի Գևորք.

Աչ ու ձախ կախեցին՝ բրոյլե ճաղ արին, Մողնու սուրի Գևորք.

Յինգնոց լուսըն վըրետ կամար-թաղ արին, Մողնու սուրի Գևորք<sup>2</sup>:

*Շատ հնարավոր է, որ բանաստեղծը ներկա է եղել նորոգված եկեղեցու օժման հանդիսությունը և հենց այդ առիթով հորինել այս խաղը:*

*Թիֆլիսի մյուս եկեղեցիների պես Մուղնին ևս 1795 թվականի սեպտեմբերին կորցրեց իր պայծառությունը՝ թալանի ու ավերածությունների ենթարկվելով Աղա-Մահմեդ-խանի հրոսակների ձեռքով: Ավերածությունն այնքան խափանիչ էր, որ 1797 թ. հունվարին Մուղնու եկեղեցու գավթում Հովսեփ Արքեպ. Արղու-*

<sup>1</sup> Տե՛ս այստեղ՝ «Թիֆլիսի հայոց եկեղեցիների պատմության նյութեր» բաժինը:

<sup>2</sup> Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, աղբբջաններն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյան: Երևան, 1963, էջ 82, հմմտ. էջ 255:

թյանցի նախաձեռնությունները ծխականների ժողով հրավիրեց և եկեղեցու գործունեությունը վերականգնելու «Համախոսական վճիռ» կայացվեց՝ հոգաբարձու, կառավար և երեցփոխան կարգերով ընդհանուր վստահություն վայելող պարոն Եսայի Ֆիթոյանին<sup>1</sup>:

Մուղնիի սուրբ Գեորգ եկեղեցին բավական լայն ճանաչում է ունեցել նաև վրաց միջավայրում և հիշատակություն գտել այլազան վավերագրերում<sup>2</sup>: Եղածների մեջ թերևս առավել ընդարձակը էգն. Իոսելիանիի 1837 թ. նկարագրությունն է. «Իշխան Բեհբուլունիների պալատին կից կա գմբեթավոր եկեղեցի հանուն Սուրբ Գեորգի՝ Մուղնին կոչեցեալ, որ կանգուն է չորս սյան վրա: Բացի մեծ գմբեթից, այս եկեղեցու երեք կողմում անկյուններում դրսից շինված են երեք փոքր գմբեթներ: ... Սա կառուցված է քաղաքացիներ (մոքալաքներ) Մանդենովի, Բաստամովի և Բաշինջաղելովի ծախքով: Ներքուստ ավելի դուրեկան տեսք ունի, քան թե դրսից: Այստեղ են մի ավագ քահանա և չորս քահանա: Այս եկեղեցու գավթում, հինգ սաժեն հեռավորությամբ, կա մի այլ եկեղեցի՝ նույնպես Սուրբ Գեորգի, նույնպես Փոքր Մուղնին կոչեցեալ, գմբեթավոր քարուկրով կառուցված հնուց Տեր-Շմավոնիների ծախքով, որոնք այժմ իշխան Աբիմելիքով են կոչվում: Սա էլ մեծ Մուղնին է վերագրված»<sup>3</sup>:

Եկեղեցու թաքստոցներից մեկի ապահով մնալու պատճառով փրկվել են արձանագիր որոշ առարկաներ<sup>4</sup>: Դրանցից մեկը արձաթյա պատկեր է՝ նշխարների հետ պահարան կազմած, հետևյալ յիշատակարանով.

Յիշատակ է Յովսէփին, ծնողացն Գօրգուն, Խամփերվանին, կողակցոյն Եագունդին և որդոց ամենեցուն ի դուռն Մողնոյ Սուրբ Գեորգայ ի քահանայութեան սերոյ Տեր Շմաւոնին: ԹՎին ՌՃԿԹ. (1720):

<sup>1</sup> Համախոսական վճիռ բնագիրը տե՛ս այստեղ՝ «Վավերական վկայություններ» բաժնում: Ի դեպ, Մուղնու ավագ քահանա Տեր Գրիգոր Տեր Շմավոնյանը դաժանագույն չարչարանքի էր ենթարկվել սրբարանի առաջ և մահանդական չարչարողներին չէր հայտնել եկեղեցու գաղտնարանի տեղը: Ժողովրդական հիշողությունը այս իրողությունը վերագրեց Սայթ-Նովային:

<sup>2</sup> Ն. ԿՅԿՃՅԺՁ, օնցտորոյլո սաճոյտցո, V, ՇՅ., 1913, թց. 36, Ձ. թցլոյթցո-ճցլո, սաօտոնոցա; սոմնոյրո Ձցլոյթցո յարոյլոլո, ՇՅ., 1935, թց. 34.

<sup>3</sup> Տե՛ս այստեղ «Նկարագրական վկայություններ» բաժինը: Վկայակոչություն հայերեն թարգմանությունը Լ. Մելիքսեթ-Բեկի:

<sup>4</sup> Ս. Զալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 70:

*Մյուս արծաթե պահարանում գտնվելիս են եղել Սուրբ Հակոբի, սուրբ Ղուկկիանոսի և սուրբ Թեոդորոսի մասունքները.*

Մահտեսի Տէր Աբրահամ Արիմելիքեանց ընծայեցի զայս արծաթեայ պատկերս եռեխաչ սուրբ մասամբք լի յիշատակ ի դուռն Մօղնի եկեղեցին Թիֆլիզոյ՝ վասն իմ հոգոյ և մարմնոյ զօր վախճանի իմոյ

*Հետաքրիքիր կլիներ ճշտել՝ արդյոք պահպանվե՞լ են արվեստագիտության համար հետաքրքրություն ներկայացնող այս մասունքներ բովանդակող առարկաները: Նրանց հիշատակարաններում ներկայացող անձինք հայտնի են վիմագիր ու պատմողական այլ աղբյուրներում նույնպես:*

*Մեր խոսքն ամփոփենք ցավալի մի կանխիմացությամբ, որ անհապաղ ամրացման որևէ հնար չգտնելու դեպքում վերից վար ասեղի ճեղք տված Մուղնին օր-օրի ենթակա է տապալման:*

---

## ՔԱՐԱՓԻ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ

Բեթղեհեմի և սուրբ Ստեփանոսի տաճարներից փոքր-ինչ արևելք, հին Թիֆլիսի Կղիս ուբանի կամ հայերեն հնչմամբ՝ Քարափի թաղում, քաղաքի մելիքի հիմնական ապարանքի հարևանությամբ է գտնվում Սուրբ Գեորգ եկեղեցին (հին Թիֆլիսահայերի միջավայրում հայտնի էր նաև Խիլտլի ժամ անունով), որ Թիֆլիսի հայկական պաշտամունքային կառույցներից առավել համեստն է, թեև նրա գմբեթը նկատելի է բավական հեռու տարածքից: Եկեղեցու շինարարության հանգամանքների մասին պատմող հիմնական աղբյուրը հյուսիսային պատին պահպանված երկնեզու արձանագրությունն է: Բրոսեն փորձել է կարգալ վիմագրի վրացերեն հատվածը, սակայն նշանակալի բացթողումներով, իսկ այն թվագրելիս դիմել է հայերեն տեքստի ավարտին եղած ՌՄԵ. (1756) գրերի վկայակոչմանը, որը ինչպես կտեսնենք, նույնպես սրբագրելի է<sup>1</sup>: Ս. Զալալյանցը կարգացել է հայերեն մասը և անուշադրության մատնել շարունակության վրացերենը:

Քննությունը հեշտացնելու համար բերենք մեր ամբողջական վերծանությունը<sup>2</sup>.

ՅԻՇԱՏԱԿ Է ՍԱ ԳՈՎԵԼԻ, ԲԱԶՄԱՑ ԽՆԴԻՐ ԱՍՏ ԿԱՏԱՐԻ.

ՍԱ ԱՆՈՒԱՆԵԱԼ ԵԿԵՂԵՑԻ՝ ՏՈՒՆ ԱՂՕԹԻՑ ՏԵԱՌՆ ԲԱՆԻ,  
ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳԱ ՏԱՃԱՐ ԱՍԻ, ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՋ ՊԱՏԱՐԱԳԻ.

ՍԱ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՅԱՆԿԱԼԻ՝ ՆՄԱՆ ՎԵՐՆՈՅՆ ՍՈՒՐԲ ՍԻՈՆԻ,  
ՇԻՆՕՂՔ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻ՝ ԱՐԴԵԱՄՔՔ ԶՕՀՐԱԲԻՆՑ ՊԵՏՐՈՍԻ  
ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅՆ ԼԱԼԻԹԱՍԻ, ՍԱ ՅԻՇԱՏԱԿ ՄԵՐ ՇԻՆԵՑԻ,  
ՆԱԵՒ ԾՆՕՂԱՑ ՄԵՐ ԲԱՐԻ ԵՒ ԾՆԵԱԼ ՄԵՐՈՑ ԶԱԻԱԿԻ,  
ԵՒ ՈՐՔ ԱՍԷՔ ՄԵՋ ՈՂՈՐՄԻ՝ ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ԶԵՋ ՈՂՈՐՄԵՑԻ:

ԹՎԻՆ ՌՄԲ. 1753):

Վրաց. Քրոնիկոնի 441 (1753):

Մենք՝ Զոհրաբանց Պետրոսս և իմ կողակից Լալիթա/սուրբ Գեորգի այս տաճարը կառուցեցինք՝ ի հիշատակ մեր հոգու և /

ծնողաց՝ Մելքոյի և Դուհիաջավրի:

Ով կարդաք՝ թողություն ասեք...

*Թվում է՝ կառուցման հետ կապված հարցերը այլևս պարզ են, այդ շարքում և ժամանակը: Սակայն կան և լրացուցիչ տեղեկու-*

---

<sup>1</sup> M. Brosset, *Rapport sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, exécuté en 1847-1848, St. Pétersbourg, 1850, p. 24.*

<sup>2</sup> П. М. Мурадян, *նշվ. աշխ.*, էջ 40:

թյուններ. *Armd. 156 նյութերի մեջ եղած Թիֆլիսի Հայոց եկեղեցիների ցանկում № 14-ի տակ ներկայացված Քարափի Սուրբ Գեորգը՝ վերոբերյալ շինարական տեքստի վերաշարադրմամբ է կազմված և հետևյալ լրացուցիչ տեղեկություններով լրացված*. «Թուրք 1753 թ-ի սուլթան Կեմալեթին շիշատակ գրչեա Աւետարանի, որ գրեալ է ի թուրք 1496-ական գիղէ Կամարակապ կոչեցեալ Լատիգենց Կիրակոսի որդի մահտեսի Յովակիմն շիշատակ է տուել Վարազայ Սուրբ Գեորգայ եկեղեցուն թուրքն՝ 1728»<sup>1</sup>: Այսինքն՝ 1496 թ. Կարմրակապ գյուղում գրված և 1728 թվականին Վարազի Սուրբ Գեորգ վանքին նվիրված Ավետարանը 1753 թ. հասել է Թիֆլիս և հանգրվանել նորակառույց այս եկեղեցում:

Միանգամայն այլ աղբյուրից քաղված տեղեկության վրա է կառուցված էգն. Իոսելիանիի 1837 թ. հաղորդումը. «Տիֆլիսի հարավային կողմում՝ Քարափի թաղում, բարձր ժայռի վրա կառուցված է փոքր եկեղեցի՝ փոքր գմբեթով, լավ և գեղեցկատեսիլ, հանուն Սուրբ Գեորգի, ուր ամփոփված է Սուրբ Գեորգի սքանչելագործ մասունքը: Այս եկեղեցին կառուցված է 1600 թվին ոմն ղարիբ հայ վանականի սեփական ծախքով: Սա կղմինդրով է ծածկված և Քարափի եկեղեցի է կոչվում»<sup>2</sup>:

Շինարարական արձանագրության մեջ եղած հաղորդումները, որոնց էգն. Իոսելիանիին հարկավ ծանոթ պիտի լիներ, բնավ հիմք չեն տալիս այնտեղ հիշատակված անունների մեջ «ոմն ղարիբ հայ վանական» տեսնել: Ընդ որում առաջարկած թվականը ևս ստիպում է մինչև 1753 թ. գոյություն ունեցող այլ կառույց ենթադրել, որի մասին հեղինակը տեղեկացել է, հավանաբար, բանավոր աղբյուրից:

Եկեղեցու ներսում պատին ագուցված խաչաքանդակ սալ կա, որի շրջանակող եզրերին հայերեն հիշատակարանային արձանագրություն է փորագրված՝ ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ... ՆԱՐԴԱՆԻՆ, ԳԻՔՈՒՆ, ԽԱԼԱԹԻՆ, ՈՒՍՏԻԱՆԻՆ<sup>3</sup>:

Թե ովքեր են այս բարեխոսություն ակնկալողները՝ չգիտենք: Քանդակի մշակվածության աստիճանը թույլ չի տալիս համայնքում գործող մեծատուն մեկը ենթադրել: Բայց որ մերձակայքի 3-4 նշանավոր պաշտամունքային կառույցների հարևանությունում (Մուղնի, Բեթղեհեմ, Ս. Ստեփանոս) կարելի է եղել նոր աղոթարան կառուցել՝ հնարավոր է բացատրել քաղաքի այս մասում հայ բնակչության խտությունը և կամ զուտ միջթաղային խնդիրների թելադրություններ:

<sup>1</sup> Տե՛ս այստեղ «Պատմության նյութերի» մեջ:

<sup>2</sup> Տե՛ս այստեղ «Նկարագրական վկայություններ» բաժնում:

<sup>3</sup> Խաչաքանդակի պատկերը տե՛ս Ի. Մ. Мираян, նշվ. աշխ., աղյուսակ IV, 2:

## ԷՏՄԻԱԾՆԵՅՈՑ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ

Վրաց մայրաքաղաքում այսօր գործող երկու եկեղեցիներից մեկն է: Կառուցված է Կուրի ձախ ափին գտնվող հին Թիֆլիսի Հավլաբար արվարձանի սկզբնամասում՝ բարձրադիր դիրքով ու Հայոց թատրոնի մերձավորությամբ:

Արքայազն Վախուշտիի նկարագրությամբ Հավլաբար և Իսանի առևտրային տարածքները ծածկում են իրար, թեև եթե նոր ժամանակների ընկալմամբ փորձենք պատկերացնել տարածքը՝ այստեղ մասի և ամբողջի գանազանություն պիտի տեսնենք: Իհարկե, շատ գայթակղիչ կլիներ «Հավլաբար» տեղանունը ընկալել վրացերենով՝ «ասվլա/ավլա» (վեր բարձրանալ, գառիվեր ելնել) և «բառի» (հարթակ, դաշտ), ինչը շատ համապատասխան է տեղանքի նկարագրին, բայց սա գրեթե «ժողովրդական ստուգաբանություն» է: Մասնագիտական գրականության մեջ վաղուց դիտված է, որ այդ տեղանունը արաբերեն - պարսկերեն բացատրություն ունի՝ «Հավալի» (մերձակայք, կողմանք) և «բոր» (բերդ, ամրոց, ապարանք)<sup>1</sup>: Քաղաքի Ը-Թ. դարերի պատմությունը, կարծյոք, ծառայում է նման ստուգաբանության հավաստիությանը: Ձմտնելով քաղաքի այս հատվածի պատմության մանրամասների մեջ, նկատենք, որ Վախտուշտիի վկայությամբ «Իսկ Իս[ա]նիի բերդը մեծ է եղել, որը նորոգում էին օսմանցիները Քրիստոսի 1728 թվականին, և կիսավարտ մնաց: Իս[ա]նիում կա մեկ եկեղեցի առանց գմբեթի, իսկ գմբեթավոր՝ երկու. անգմբեթ մեկը տիրում են հայերը: Տփղիսում, Կալայում և Իսանիում հնում բազում եկեղեցիներ են եղել, սակայն այժմ ավերված են»<sup>2</sup>:

«Իս[ա]նի/Հավլաբար» լայն ընկալման դեպքում դժվար է ասել, թե հայերի ունեցած (տիրած) ո՞ր եկեղեցու մասին է խոսքը, որը ժԸ. կեսերին առանց գմբեթի էր: Համենայն դեպս, ժամանակագրական առումով այն Հավլաբարում գտնվող և այստեղ մեզ զբաղեցնող Սուրբ Գեորգին չպիտի վերաբերի՝ որքան էլ հրապուրիչ լինի նրա նույնացումը էգն. Իոսելիանիի նկարագրած և Հավլաբարում գտնվող անգմբեթ եկեղեցու հետ. Վերընթերցենք

<sup>1</sup> Գրականության վկայությունը տե՛ս օգոմյոճՅ Զեթոճե, ժեցլո տճոցլոսե ըար-յըճեճեճե օեճոթոճ, տճ., 1977, ըճ. 134.

<sup>2</sup> Ժ. Ը., IV, 337.

1837 թ. գրված այդ տեղեկությունը. «Հավլաբարից դեպի ձախ, Դարիվերին կից, Կախեթ տանող ճանապարհի սկզբին կա եկեղեցի՝ հանուն Սուրբ Գեորգի էջմիածնեցոց կոչեցյալը, առանց դմբեթի, փոքր, փոքր զանգակատնով փայտով ծածկված, որ կառուցվել է ժողովրդի ծախքով 1805 թվին»<sup>1</sup>:

Եվ հիրավի, Տեր Հովհան քահ. Մարտիրոսովի կազմած և 1815 թ. դեկտեմբերին Ներսես Աշտարակեցուն ներկայացրած գեղուցազրույթում հանգամանորեն պատմվում է էջմիածինցիների Թիֆլիսում հայտնվելու պարագաների մասին<sup>2</sup>: Երևանի Մահմադ խանը տեղահանած բնակչությանը քչելիս է եղել Օսմանցոց աշխարհ. Արփաչային հասնելիս ժողովուրդը հրաժարվել է անցնել գետը և կովի է բռնվել վարողների հետ: «Փայակ» (ներկայացուցիչ) են ուղարկել Ռուսաց կառավարչի մոտ (կուսակալ Յիցիանով) և խնդրել «անցուցէ զմեզ յերկիր մեծի Կայսեր»։ Բազում նեղություններով հասնում են Փամբակ և հինգ ամիս մնում այնտեղ ու Լոռիում, ապա Յիցիանովի հետ Երևանից վերադարձող Ռուսաստանի Հայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսի միջնորդությամբ նրանց մի մասին բնակեցնում են Հավլաբարում, փոքր մասին՝ Տափի թաղում: Այս ամենը, ըստ գեղուցազրի, տեղի է ունենում 1806 թվականին: Աննա Դեղե (մայրիկ) Գուլիփաչեանց անունով անզավակ կինը «ի վերայ հայրենի գետնի» պատրաստակամություն է հայտնում նորահաստատ էջմիածինցիների համար կառուցել այս եկեղեցին, որը 1815 թ. «բաց ի յինքեն է ունի յարկս ծածկեալս 7, միաբան քահանայս՝ 6, ունի էջմիածնեցի ժողովուրդս թէ աստ ի քաղաքս և թէ ցրուեալք ի գեղօրեայս երկու հարիւր է փոքր ինչ պակաս տունս»<sup>3</sup>:

Այլևս պարզ է, որ էգն. Իոսելիանի հաղորդած տեղեկությունները քաղված են տեղում գործող քահանաներից, մեկ տարով շփոթելով կառուցման իրական թվականը: Սակայն այս ամենը վերաբերում է նախնական անգմբեթ կառույցին և ոչ այսօր գոյություն ունեցող բարձրագմբեթ եկեղեցուն: 1846 թ. այն ենթարկվել է հիմնավոր նորոգման, որի ժամանակ էլ վեր է ածվել գմբեթավոր տաճարի: Եկեղեցու արևմտյան մուտքի վերևում մարմարե տախտակի վրա գետեղվել է նոր շինարարության մասին պատմող երկլեզու արձանագրություն.

<sup>1</sup> Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Գ, Երևան, 1955, էջ 270: Տե՛ս նաև այստեղ «Նկարագրական վկայություններ» բաժինը:

<sup>2</sup> Տե՛ս այստեղ «Թիֆլիսի Հայոց եկեղեցիների պատմության նյութեր» բաժնում:

<sup>3</sup> Նույն տեղում:

Ի ՓԱՌՍ ԱՄԵՆԱԿԱՐՈՂԻՆ / ԱՍՏՈՒԾՈՅ, ՄԵՔ՝ ՇԻՐԱԶԻ ԵՐԵՔԻՆ ԸՆԿԵՐՔՍ, / ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆՑ, ԿԻՐԱԿՈՍ / ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԻՍԵԱՆՑՍ, ՄԵԾԱԻ / ՅՈՒՍՈՎ ՅԱՆԶՆ ԱՌԱՔ ԶՇԻՆՈՒԹԻՒՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԴՐԱՆ / ԷԶՄԻԱԾՆԵՑ-ԻՈՑ ՆՈՐԱՇԷՆ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑ/ԻՈՅՍ ՀԱԻԼԱԲԱՐԱՅ ՎԱՍՆ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ՈՐԴԻՈՑ ԵՒ / ԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՄԵՐ ՆՆՋԵՑԵԼՈՅՍ, ՈՒՍ/ՏԻ ՄԻԱԲԱՆ ԱՂԱԶԵՄՔ ԶԱՍՏՈՒԱԾ, ԶԻ ԲԱՑՑԷ ՆԱ ՄԵԶ / ԶԴՈՒՌՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՅԱՒՈՒՐ ՀՐԱՇԱՓԱՌ ԳԱԼՍՏԵԱՆ / ԻՒՐՈՒՄ, ԱՄԷՆ: 1846, Յ 9-Ն ՄԱՅԻՍԻ:

**Վրաց.** Ի փաստ ամենակարող Աստծո և նրա օժանդակությամբ մենք երեք ընկեր-  
 անք՝ Ստեփանե Բեթանի որդի Աբրահամյան, Կիրակոս Արուսիանյան և Հարություն Մո-  
 սեստյան, մեծ հույսով ու ձգտումով հանձնառու եղանք Սուրբ Գեորգ եկեղեցու արևմտյան  
 դռան շինության՝ մեր որդոց արևշատության և մեր ու մեր հանգուցելոց մեղքերի թողու-  
 թյան համար: Ամեն: 1846՝:

*Նույն արևմտյան ճակատին խաչապատկերի մոտ Աղեքսանդր  
 Թալիրյանցի արձանագրությունն է, հյուսիսային մուտքի խաչի  
 վրա՝ Հովակիմ Սեյրանյանցի, իսկ հարավային մուտքի խորքում՝  
 Ավետիք Պետրոսի Հակոբջանյանի «յիշատակ հոգևոցը», որը, ինչ-  
 պես վրացերեն տարբերակում է ասված՝ «Եկեղեցու կառուցման  
 նեղություն ժամանակ նվիրվել է հինգ հարյուր արծաթ դրամ»:  
 Եվ այս բոլոր հիշատակարանները գրված են 1846 թ. շինարարու-  
 թյան առիթով:*

Նորոգումներ ու շինարարական հավելումներ կատարվել են այ-  
 նուհետև ևս, մասնավորապես այդ է վկայում Ոսկերչյանցի որդե-  
 գրի խոսքը հայրացուի մահից քսան տարի անց (1854 թ.)<sup>2</sup>, մանա-  
 վանդ հյուսիսային մուտքի ամպհովանին կառուցելիս. «Հայաստա-  
 նեայց Մայր աթոռի հովուապետի՝ վեհափառ Խրիսեան Հայրիկի հաստատութեան  
 վսեմ յիշատակին տաճարիս դուռն ամպհովանեաւ հանդերձ կառոյց իւր ծախիւք սոյն  
 եկեղեցոյ ծխական, օրիորդաց Մարիամեան ուսումնարանի մշտական պատուաւոր  
 խնամակալ Գեորգ Մարտիրոսեան Յակոբեանցը ի 1-ն Օգոստ. 1893 ամի»:

*Եկեղեցին այժմ վերից վար ճաք ունի և հուսանք, որ ընթացիկ  
 վերանորոգումները կերկարացնեն նրա գոյությունը:*

<sup>1</sup> Արձանագրության մեր բուն վերձանությունը գետեղված է Թիֆլիսի վիմագրերին  
 նվիրված ուղևորների գրքում՝ Ս. Մ. Мурадян, նշվ. աշխ., էջ 90: Ի դեպ՝ անհրաժեշտ  
 ենք համարում արձանագրել, որ 80-ական թվականներին եկեղեցում եղած վիմագիր  
 հիշատակարաններն ընթերցելու համար ստիպված եղանք վրացի գիտնական ներկա-  
 յանալով հաղթահարել ոմն Վորոնցով անունը կրող վերակացուի արգելքները: Նույ-  
 նիսկ ամբողջապա առաջնորդը չհանդգնեց միջնորդել վերակացուի առաջ:  
<sup>2</sup> Ա. Արարատեան, Համառոտ վարք և գրաւոր գործ տեառն Յովհաննու ա.ք. Մարտիրո-  
 սեան Ոսկերչեանց Վաղարշապատեցւոյ, Տիֆլիս, 1859, էջ 25:

## ՇԱՍՔՈՐԵՑՈՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Գտնվում է էջմիածնեցոց Ս. Գեորգից ոչ հեռու, նույն Գարե-  
Հավլաբար թաղամասում, շրջապատված միահարկ բնակելի տնե-  
րով: Եկեղեցին հայտնի է նաև «Կարմիր Ավետարան» անունով,  
որ սովորաբար այդպես են կոչվում Ավագ խորանում կարմրա-  
կազմ ծիսական Ավետարան ունենալու հանգամանքով: «Շամքո-  
րեցոց» կոչվելու պատճառը հարկավ թիֆլիսի այս թաղամասում  
Շամքորից ու շրջակայքից վերաբնակածների ներկայութունն ու  
չինարարութանն ունեցած մանակցութունն է (Հմմտ. «Հին  
երևանցիների Ս. Մինաս», «էջմիածնեցոց Ս. Գեորգ» ևն): Նախ-  
կին բնակավայրի անունով աղոթարանի առկայութունը վկայում  
է վերաբնակչության գանգվածային լինելու մասին: Աստիճանա-  
կան հաստատման պարագայում պահպանվում և գործածութան  
մեջ են մտնում հին միկրոտոպոնիմները:

Միայն թագավորական ընտանիքի անդամները կամ վրացա-  
կան իշխանական տոհմերը չէ, որ Հավլաբարում կալվածքներ ու-  
նեին և շահագրգռված էին այստեղ հողամշակ կամ արհեստավոր  
վերաբնակիչներ հաստատել: Այդպես վարվում էին նաև թիֆլի-  
սին տիրացած օտարները: Թուրք պատմիչ Քուչուկ Չելեբի-զա-  
դեն հաղորդում է, որ սեր-ասկեր Իբրահիմը Գանձակից վերա-  
դառնալիս 1723 թ. այստեղ է բերում 3000 աշխատավոր հայ գեր-  
յալներ<sup>1</sup>: Հանրածանոթ են Հերակլ Բ-ի տարիներին Արարատյան  
դաշտից, Լոռիից, Ղարաբաղից ու հայաբնակ այլ տեղերից կա-  
տարած վերաբնակեցումները<sup>2</sup>: Թիֆլիսի ֆրանսիական հյուպա-  
տոս Գամբան (1820-1824) նկատել է, թե «Թիֆլիսի բնակչութուն-  
ը աճում ու աճում է հայերի հոսքից, որոնք այստեղ ապաստան  
են փնտրում թուրքերի բռնութուններից ու պարսիկների հալա-  
ծումներից... 1820 թ. Թիֆլիսում կար շուրջ 24 հազար բնակիչ:  
1825 թ. նրա բնակչութունը հաշվվում էր առնվազն 33000: Այս  
տարի ինչպես բուն քաղաքում, այնպես էլ նրա արվարձաններում

<sup>1</sup> «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի ժողովուրդների մա-  
սին»: Թարգմանութուն թուրքերեն բնագրից, ներածականով և ծանոթագրութուննե-  
րով..., հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 138: Հմմտ. ՉըրչոՅՈՒՅՈՒՅՅԵ,  
տժօղջօնօն ճձձըթօնօն Վօջնօ..., ՅձթօնՅձ Յօնօնօն ձձըլլօնօն, տժ., 1975, թ. 51.

<sup>2</sup> Այդ անցուղարձերի մասին տե՛ս Պավել Չոբանյան, Հայ-ուս-վրացական փոխհարաբե-  
րութունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. էջմիածին, 2006, էջ 201-203:

կային՝ 2500 հայկական ընտանիք, 1500 վրացական և 500 թաթարական ու պարսկական, ընդամենը 4500 ընտանիք...»<sup>1</sup>:

Ֆրանսիացի հյուպատոսը ճշմարիտ է իր դիտարկմամբ ու գնահատություններով, բայց «ապաստան գտնելը» չպետք է բացարձակապես անցնել: 1779 թ. Հերակլի կողմից «հարիւր յիսուն գեղ քշեալ» տանելու պատմությունը<sup>2</sup> և նրանց մեկ մասի վերադարձը հայրենի բնակավայր փաստում են, թե բռնագաղթը զարհուրելի դժբախտություն էր բնավեր եղած ժողովրդի համար: 1781 թ. երկու տարի առաջ քշվածները արտոնություն ստացան վերադառնալ, և ահա թե այդ կապակցությունները ինչ է պատմում էջմիածնեցոց եկեղեցու կապակցությամբ հիշատակված Հովհան Ոսկերչյանցը. Հավլաբարում հաստատված վերաբնակյալները զանգվածով շտապում են օգտվել այդ իրավունքից, ինչից դուրս գալու հնարակը նորոգման պատրվակով քանդել է տալիս Հավլաբարից միջնաբերդ տանող կամուրջը՝ ելքը խափանելու համար, «բայց նոքա, որք տաղտկացեալ էին ի վրաց աշխարհէն, որ սպառէր զնոսա և վասն ճարտարացուցանելոցն զինքեանս յանիրաւի, ոչ ինչ զանգիտեալ ի Կուրայ գետոյն՝ անցին զնա և խառնեցան ի բանակն, որք ընդ կամուրջն էին անցեալք, և գնացին յԵրևան՝ հազիւ թէ ի երկց մասանց զմին, և այն ևս մուրացկանաց աստիճանի: Բայց զժողովուրդն Քէալակարխու, զՂուրդուղուլու և Գէօկ-քիլիսայի ոչ եթող Հերակլ զնալ, որք և կացին և մնացին ի վրաց տուն մինչև ցայսօր ըստ կարգի շինականաց, զի ոչ ոք ի մնացելոցն յայնցանէ կարաց յառաջել (իմա՛ առաջադիմել ~ Պ. Մ.) և երևիլ ի կարգի արանց, թէև ի 25 յամս միջոցի կան ոմանք, որք բնակեալ են ի Հաւլաբարն քաղաքին»<sup>3</sup>:

Հարկավ՝ այլ տեղերից վերաբնակածների վիճակը ևս, այդ թվում և Շամքորից Հավլաբար հասածներինը, էպպես քիչ էր տարբերվում, բայց պիտի խոստովանել, որ տեղացի իշխեցողները դավանափոխություն չէին հարկադրում, ուստի ինքնուրույն պահպանություն և համայնքային ամբողջականություն ապահովման համար Թիֆլիս հաստատված հայերը իրենց ծուխերի հավաքումով եկեղեցիներ էին կառուցում: Այդպես սկիզբ առավ և Հավլաբարի Շամքորեցոց Ս. Աստուածածին եկեղեցին:

<sup>1</sup> М. Полевктов и Г. Натадзе, Старый Тифлис в известиях современников, [Тифлис], 1929, стр. 79-80.

<sup>2</sup> «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, Մանր մատենագիրք, [կազմեց և] հրատարակեց Պ. ա. ք. Աղանեան, Ժ, Թիֆլ., 1912, էջ 145-146:

<sup>3</sup> «Կուրնկ Հայոց աշխարհին», Գ տարի, թիւ Դ, 1862, էջ 280-281: Հմմտ. Պ. Չորանյան, նշվ. աշխ., էջ 203:

Շինարարութեան ժամանակի մասին մեր ունեցած տեղեկությունները, ինչպէս երևում է, նրա կայացման տարբեր շրջաններում եղածի փաստագրմանն են վերաբերում: Էդն. Իոսելիանիի գրառմամբ «Հավլաբարի միջում, ժողովրդական շէնքերի կենտրոնում, կա եկեղեցի Շամքորեցոց կոչեցյալը, կառուցված 1775 թվին, հանուն Աստվածածնի, առանց դմբեթի և փայտով ծածկված, որ կառուցվել է ժողովրդի ծախքով 1775 թվին»<sup>1</sup>:

Ներսէս արքեպիսկոպոսի կարգավորած եկեղեցիների ցանկում, որ կազմվել է 1827 թվականին, Շամքորեցոցը 11-րդն է, բայց առանց թվականի, մինչդեռ մեր ձեռքի տակ եղած «Յանկ Հայոց եկեղեցեաց ի Թիֆլիս և շրջակայից»-ում Ց-րդ համարի տակ ունենք «Սուրբ Աստուածածին Շամքորեցոց, շինեալ ի հասարակութենէ 1809»<sup>2</sup>:

Սակայն նկատենք, որ այս երկու տեղեկությունն էլ վերաբերում են այժմյան Շամքորեցոցի տեղում եղած անգմբեթ կառույցին, որը հետագայում հիմնովին վերակառուցվել է իր չափերով ահագին և զանգվածեղ գմբեթավոր եկեղեցու: Դռների ու պատուհանների պսակներին կամ քիվերին, պատկերների հարևանութեամբ պահպանվել են վերջին շինարարութեան ժամանակին վերաբերող կարճառոտ արձանագրություններ, որ անհրաժեշտ ենք համարում այստեղ վկայակոչել<sup>3</sup>:

1. Հյուսիսային մուտքից աջ, պատուհանի պսակին.

ՅԻՇԱՏԱԿ Է ՅՈՂԱՆՆԷՍ ՄԻՐՈՒՄԵԱՆՅԻՆ ԵՒ ԻՐ ԾՆՈՂԱՅՆ: ԹՎ. 1293 (1844)

2. Մուտքից ձախ, պատուհանի պսակին.

ՅԻՇԱՏԱԿ Է ՂԱԶԱՐ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆՅԻՆ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅ ԻԻՐՈՅ ՄԱՐԹԱՅԻՆ: 1844: Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՌՄՂԳ (1844):

3. Նախորդից վերև.

ՅԻՇԱՏԱԿ Է ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԱՌԱՔԵԼ ԵՒ ԱՆՆԱՅ ՂԱՐԱՄԵԱՆՅԻՆ: 1845:

4. Արևելյան ճակատի միջին պատուհանի քիվին.

ՅԻՇԱՏԱԿ Է ԱՆՏՕՆ ՇԱՐԲԱԲՉԵԱՆՅԻՆ ԵՒ ԻՐ ԾՆՈՂԱՅՆ: 1845:

5. Աջ խորանի պատուհանին.

<sup>1</sup> Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 268:

<sup>2</sup> Տե՛ս այստեղ «Թիֆլիսի Հայոց եկեղեցիների պատմութեան նյութեր» բաժնում:

<sup>3</sup> 80-ական թվականներին, երբ մենք ուսումնասիրում ու լուսաբանում էինք կառույցը, այն լիովին կանգուն էր, մինչդեռ պատահած վերջին երկրաշարժը խորխուրջ ու նշանակալի չափով փլուզեց այն:

ՅԻՇԱՏԱԿ Է ԱԻԵՏԻՔ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆՑԻ ԿՈՂԱԿԻՑ ԱՆԱ-ԽԱՆՈՒՄԻՆ: ՌՄՂԳ (1844);

6. *Զախ խորանի պատուհանին.*

ՅԻՇԱՏԱԿ Է ՏԻՐԱՑՈՒ ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻՆ: ԹՎԻՆ ՌՄՂԳ (1844);

7. *Գմբեթի թմբկին.*

ՅԻՇԱՏԱԿ Է ԵՂԻՍԱԲԷԹ ՆԱՐԻՄԱՆԵԱՆԻՆ: 1858:

8. *Նույն տեղում.*

ՅԻՇԱՏԱԿ Է ՄԱՐԻԱՄԱՅ ԶՕՀՐԱԲԵԱՆՑ: 1858:

9. *Նույն տեղում.*

ՅԻՇԱՏԱԿ Է ՄԿՐՏՈՒՄԻ ԻՇԽԱՆԵԱՆՑ: 1858:

10. *Նույն տեղում.*

ՅԻՇԱՏԱԿ Է ՊԱՏԿԵՐՍ ՊԵՏՐՈՍ ԵՍԱՅԵԱՆՑ: 1859 ԱՄ:

*Այսպես թվարկվում են այլ հիշատակներ ևս, բոլորն էլ գրված չինարարուծության ընթացքում կամ նրանից քիչ անց, ինչպես ընդունված էր պաշտամունքային կառույցների պատերին հիշատակ գրելու արտոնուծյուն ստանալու պարագային: Հիշատակագրողների առատուծյունը իրապես հասարակական մասնակցուծյուն է վկայում, որի մասին արդեն խոսում են եկեղեցին նկարագրողները: Ավելացնենք, որ քանդակի հեղինակ Մ.Տ.Պ.-ի ով լինելը չգիտենք: Արվեստագիտական ուսումնասիրուծյունը պիտի պարզի, թե առկա քանդակները մեկ հեղինակ ունեն, թե այլևայլ<sup>1</sup>:*

*Ցավոք, ավերածուծյունն այնքան մեծ է, որ վերականգնելու համար նոր եկեղեցի կառուցելու չափ ծախս է հարկավոր: Կարտոնվի՞ այդ կատարել և ո՞վ պիտի ծախսը հոգա՝ ապագայի խնդիր է:*

<sup>1</sup> Արձանագրուծյունների կանոնավոր վերծանուծյունները կարելի է գտնել տողերիս հեղինակի արդեն հիշված ուսերեն աշխատուծյուն մեջ (էջ 93-96): Նրանց լուսանկարները տես անդ, աղյուսակ XI, 1-16 (կատարող՝ Ս. Գ. Դարչինյան):



ԵՐԲԵՍՆԻ  
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ



## ԲԵՌԴԵՎԵՍԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Եկեղեցու հնագույն հիշատակութիւնն ունենք այժմ Անթիւ-լիասի հավաքածոյում № 74-ի տակ պահպանվող ձեռագիր «Գանձարանի» 1437/8 թվականին գրված հիշատակարանում. «Շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբն Աստուծոյ կատարեցի զսուրբ գիրքս, որ կոչի Գանձարան: Գրեցաւ սայ ի թվականութիւնս Հայոց ՊԶԶ. (1437), և ի փոքր թվականութիւնս ՅԾԴ. (1438), և ի Հռոմոցն ՌՃԶԹ. (+248=1437), ի թագաւորութիւն Վրաց Ալէքսանդրու, ի մայրաքաղաքս Տփղիս, ի լանապատս Բեդրահեւմ, ի դրան Սուրբ Աստուածածնիս, ձեռամբ սուտանուն արեղայի Կարապետի՝ ըստ անուանս որ ունիմ, ի գործոցն խիստ թափուր և ունայն գտանիմ: Արդ, աղաչեմ գամենեսեան, որ աւգտիք ի սմանէ եղանակելով կամ աւրինակելով, կամ տեսութեամբ՝ յիշեսլիք ի սուրբ յաղաւթս ձեր զիս և զծնաւդսն մեր՝ զՊետրոս քահանայ և զՇնահաւոր, և Աստուած զձեզ յիշէ»<sup>1</sup>:

Ուրեմն կառուցումը հիշյալ 1437/8 թվականից առաջ պիտի փնտրենք: Արդեն բոլոր եկեղեցիների պատմութեան կապակցութեամբ վկայակոչվող նյութերում Բեթղեհեմի Ս. Աստվածածնի վերաբերյալ ևս տեղեկութիւններ կան. Տեր Հովանեսի (Օհանես) և Տեր Մխիթարի 1816 թ. հունվարի 28-ին գրած տեղեկանքում հանգամանորեն խոսվում է եկեղեցու տեղանորեն ձգձգված շինարարութեան մասին<sup>2</sup>: Ըստ այդմ՝ նախապես հիմնարկվել է մատուռ, «զոր այժմ կանանց կացութեան տեղին է» և որի կիսկատարութեան հասցնողը Տեր Բարսեղի պապ Տեր Գրիգորն է: Վերջինիս թոռ Տեր Բարսեղն ավարտել է շինարարութիւնը և «յոյժ բազում միջոց ի նմա պաշտօն իցեն կատարեալ»:

«Բեթղեհեմ» է կոչել՝ որովհետև Տեր Գրիգորը Երուսաղեմի Բեթղեհեմից հող է բերել և «ի հիմնարկութեան գործածեալ»:

Մեծ եկեղեցու հիմնարկողները եղել են վերոհիշյալ անձանց հաջորդ սերունդները՝ դարձյալ Գրիգոր ու Բարսեղ անուններով: Բայց այս ընացքում «մեծ մահ իցէ անկեալ ի մէջ քաղաքիս, և

<sup>1</sup> «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան»: Կազմեց՝ Անուշաւան վարդապետ Դանիէլեան, Անթիլիաս-Լիբանան, 1984, էջ 293: Հմմտ. «Ժեզարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401-1450 թթ.): Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 384:

<sup>2</sup> Տե՛ս այստեղ «Թիֆլիսի Հայոց եկեղեցիների պատմութեան նյութերի» բաժնում:

սոքա ևս այնու իցեն մահացեալ»։ Կառուցումը շարունակել է Նազարալի խանի թագավորության տարիներին ապրած (1688-1703) Տեր Սարգիսը։ Ի վերջո՝ մի քանի ձեռնարկող-շարունակողների վախճանից հետո ավարտին է հասցրել Աղա Մելիք Բեհբուդյանը, իսկ նրա որդի Մելիք Ավետիքը եկեղեցին պարսպապատել է<sup>1</sup>։

Փաստորեն խոսքը վերաբերում է տարբեր ժամանակներում կատարված մատուռի և եկեղեցու շինարարությանը։ Եթե «մեծ մահ» ասելով հեղինակը հասկանում է Ժ. Դարի կեսերին բազում զոհեր տարած համաճարակը, ապա կարող ենք շինարարությունը թվագրել այդ դարի երկրորդ կիսով, մանավանդ որ մեր ունեցած 1437 թ. հիշատակարանը ավարտուն կառույցի (անապատի) գոյության հաստատուն վկայություն է։ Եղիազար և Ալեքսանդր կաթողիկոսների ու վրաց Նազարալի խան թագավորի ու այլոց հիշատակությունները կարող են վերաբերել հետագա նորոգչական աշխատանքներին։ Միաժամանակ, ինչպես երևում է, մատուռ կարող էին հորջորջվել և միաբաններ ունեցող և գրչության տեղիներ հանդիսացող ազդեցիկները ևս։

Բեթղեհեմի եկեղեցու մասին խոսող հեղինակներից ուշագրավ է Էգն. Իոսելիանի բնութագրությունը. «Սա կառուցված է 1500 թվին Տփղիսի քաղաքացիներ (մոքալաքներ) Խոջա Փարուխի, Տեր Սարգսի, Նարիմանովների և Ղութլոտովների ծախսով։ Վերջինիս թևերը և սալաքարերը պատրաստված են Վրաց իշխան Գիւրի Ամիլխախուարովի Շահ Ղուլի-խան կոչեցյալի ծախքով։ Այստեղ են՝ մի ավագ քահանայ և հինգ քահանա»<sup>2</sup>։

Կարծում ենք՝ հեղինակը ի մի է հարասել տեղի սպասավորներից լսածն ու արձանագրություններից քաղածը։ Այս պարագայում հասկանալի է դառնում շինարարությունը 1500 թվականին վերագրելը։ Հեղինակն այն քաղել է խորանից աջ պատի մեջ ագուցված խաչքարի արձանագիր շրջանակի վրա (վերին մասում) եղած ՁԾ. (1501) թվականությունից։ Ցավոք, շրջանակող արձանագրությունը ժամանակին զժվարացել ենք վերծանել և փաստագրել ենք միայն թվականը<sup>3</sup>։ Արևմտյան մուտքի ձախ կողմում

<sup>1</sup> Վերջին շրջանին գործուն մասնակցություն են բերել Խոջա Փարուխը, Տեր Սարգիս քահանան, Բաղդասարը, Հարությունը և Ստեփանոսը։

<sup>2</sup> Տե՛ս «Նկարագրական վկայություններ» բաժինը։

<sup>3</sup> Տե՛ս Պ. Մ. Мырдян, նշվ. աշխ., էջ 33 (աղ. XIII, 1)։ Այդ ու մյուս արձանագիր շատ այլ հիշատակարաններ այսօր այլևս գոյություն չունեն. նրանք կամ հանվել են իրենց տեղերից, կամ ծեփով ծածկվել՝ վրացական գործող եկեղեցու վերածելիս, որ տեղի է ունեցել վերջին երկու տասնամյակում։

ևս թվակիրը խաչքար կար՝ «Թւին ՌՃԸ. (1679): Յիսուս Քրիստոս», որը դարձյալ ոչ ևս է: Եղած կարևոր վկայությունների թվին պիտի դասել Հյուսիս-արևելյան պատին, քիվի տակ պահպանված արձանագրությունը, որի առաջին տողը ներքևից չի ընթերցվում, իսկ շարունակությունն այս է. «...եւ ամուսին իմ Մանին շինեցաք ժամ/տունս հոգոց մերոց և ծնողաց և եղբարց եւ որդւոց, իշխանութիւն Ծահնվաս խանին, թուին ՌՃԷ (1658)»: Մյուս արձանագրությունները վերաբերում են ԺԸ. և ԺԹ. դարերին և միաբանական կամ նորոգչական բովանդակություն ունեն<sup>1</sup>:

Արձանագրությունների բազմությունն ու ժամանակագրական հետևողականությունը ապացույց են հոգևոր այս կառույցի նկատմամբ թիֆլիսահայերի առանձնակի հարգանքի ու ուշադրության: Նույնիսկ ԺԹ. դարի ավարտին նրանք հոգացել են ավագ խորանում առանձնահատուկ խաչկալի կառուցումը, որի թիվունքին հիշատակի արձանագրություն էին փորագրել.

ԿԱՌՈՒՑԱԻ ՔԱՐԱՇԷՆ ԽԱԶԿԱԼՍ 200 ՌՈՒԲԼԻ/ ԿՏԱԿԵԱԼ ԳՈՒՄԱՐԱԻ Ի ՅՈՂԱՆՆՈՒ ՍՏԵՊԱՆԵԱՆ/ ՅՈՎՆԱՆԵԱՆԷ ԵՒ ՄԵՐՁ 1500 ՌՈՒԲԼԻ/ ԱՐԴԵԱՄԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ, ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ/ ԵՐԻՑՓՈՒԱՆ ԲԺՇԿԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՖԴԱՆ/ԴԻԼԵԱՆ ԿՈՒԿՈՒՋԱՆԵԱՆՑԻ, Ի 25 ՄԱՐՏԻ 1898 ԱՄԻ:

1981 թվականի աշնանը եկեղեցու ներսում կատարվում էին պեղումներ (համենայն դեպս մասնակիցներն այդպես էին ասում), որոնց ընթացքում բացվել էին նախնական կառույցի (մատուռի կամ միանավ եկեղեցու) հիմքերը: Բեմառաջի պատերին երևան էին եկել տասնյակ մակագրություններ, գերազանցապես ծեփի վրա. նրանցից մի քանիսը թվականներ ունեին (1694 թ., 1708 թ. և այլ)<sup>2</sup>:

Պատկերացնելու համար, թե վիրահայոց մշակութային կյանքում ինչ նշանակալի դեր է ունեցել Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցին և դպրության ու գրչության ինչ համբավավոր օջախ հանդիսացել, արժե այստեղ վկայակոչել 1639, 1641 և 1643 թթ. նրանում գրված հայերեն ձեռագրերն ու նրանց հիշատակարանները: Ահավասիկ՝ 1639-ին «աստուածասէրն Կարապետ», «քաջ քարտուղար» Մկրտչի աշակերտ և «համշիրագ» Մուքայելին պատվիրում է Ավետարան ընդօրինակել՝ «սև գիրն և խամ ծա-

<sup>1</sup> Նրանք բոլորը վեժանված, թվագրված ու փաստագրված են մեր հիշյալ աշխատության 33-39 էջերում:

<sup>2</sup> Նրանց լուսանկաներն ու վերծանության փորձերը տե՛ս մեր հիշյալ աշխատության մեջ՝ էջ 38-39, աղ. XIII, 15-29:

դիկն առնել տալով»: «Արդ՝ եղև զրաւ կատարման սորայ ի թվիս ՌՁԸ. (1639), յորում դեգերեալ կամք առ դրան սորայ...», իսկ ինքը Մկրտիչն ավելացնում է. «Դարձեալ ևս հուսք Մկրտիչ դպիրս զոր ի պանդխտութեան ժամ զայս Սուրբ Աւետարանս գրել տուի աշակերտին իմոյ ի դուռն Ս. Բէտլահէմու Աստուած[ածնի]ն դուռն, և սպասաւոր և տէր սորա Տէր Գրիգորն զի յոյժ կարի աշխատեցաւ Գ. (3) ամ ի վերայ իմ համչիրագութեամբ, յիշողքն սորա ի Քրիստոս յիշեալ լինին»<sup>1</sup>:

Նույն Բեթղեհեմի եկեղեցու Մկրտիչ դպրի իսկ մասնակցութեամբ Ովթանդիլ անունով մեկը Ավետարան է պատվիրել 1641 թ., գաղափար օրինակ ունենալով «որ գրեալ և ծաղկեալ ի ժամանակին Հայոց թագաւորութեան Հեթմոյ»<sup>2</sup>: Ինչպես երևում է, Վերին Քարթլիի Վաղա գյուղում հաստատված Հայոց իշխանական տոհմից սերող Ծանշիանները, որոնք ավելի ուշ Բեգթաբեկյաններ կոչվեցին ու հսկան ծառայութիւններ մատուցեցին Քարթլիի իշխանութիւններին ու վրաց մշակույթին, սերտ առնչութիւններ ու մտերմութիւն ունեին Բեթղեհեմում գործող Հայոց դպրութեան օջախի հետ<sup>3</sup>:

Վերևում քանիցս հիշատակված Մկրտիչ դպրի աշակերտներից է նաև Բեթղեհեմի այս եկեղեցում 1643 թ. Ավետարան ընդօրինակող Գրիգոր դպիրը, որի պատվիրատուն «նորընծայ Գրիգոր քահանան է»: Վերջինս իբրև ստացող թողել է իր հիշատակարանը. «Արդ, աշխատող եղև սբ. Աւետարանիս հեղահոգի և բարէմիտ աստուածասէր Յովասափ քահանայն, մեծաւ ջանիւ պատճառ եղև այսմ աստուածաշունչ սբ. Աւետարանիս ինքենէ տրաւք և իւրոցն [յ]որդորելովք՝ վարձահատուցն ամենայնի Քրիստոս Աստուածն մեր հարիւրապատիկ հատուցէ և ի հանդերձելումն, ամէն»<sup>4</sup>:

Այսպես, ուրեմն, մի քանի ժամանակ առաջ իր հայերեն հիշատակարաններից, խաչկալից ու խաչքարերից զրկված Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցին Հայոց դավանութեան և մշակույթի երևելի կենտրոնատեղի է եղել:

<sup>1</sup> «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ», հատ. Բ, կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1978, էջ 770-771:

<sup>2</sup> Նույն հրատ., հատ. Գ, էջ 28-29:

<sup>3</sup> Հմմտ. Ս. Մ. Мурадян, նշվ. աշխ., էջ 119-120:

<sup>4</sup> Տե՛ս այստեղ «Հիշատակարաններ» բաժինը:

## Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԿՈՒՄԱՆԱՑ ԱՆԱՊԱՏ

Բեթղեզեմի Ս. Աստվածածնից մի քանի քայլի վրա, Բեհբուդյանների առանձնատան հարևանությամբ է կառուցվել Ս. Ստեփանոս եկեղեցին: Թիֆլիսի մյուս եկեղեցիների պես, անկախ նրանց դավանական պատկանելությունից, պարսից արչավանքի օրերին հայոց Կոնստանց անապատը ևս ավերածություն ու թալանի է ենթարկվել: Այդ փորձանքից որոշ ժամանակ անց կոնստանցի մայրապետ Գայանեն Նոր-Ջուղայի Սուրբ Կատարինե վանքի միաբանների նամակին պատասխանելիս գրում է. «...Առ ի լնուլ զգոմելի փափագ սրտի սրբասնունդ քերցղ ցանկալի և կարի ցանկալի էր ինձ գրել ոճով իմն զհիմնարկութենէ մերում կոնսաստանի զփոփոխութեանց, զանցից և զայլոց կարևորաց դիպելոց նմին մինչև ցմեր աւուրս, այլ աւաղ, զի ի լրումն այսպիսի բարի ցանկութեան Ձերոյ և այլոց բազմաց պակասին հաւատարիմ փաստք, քանզի ի ժամանակի աւերման քաղաքիս յանօրէն բռնաւորէն Աղայ-Մահմադ-խանէ, ի ցաքուցրիւ փախստական լինիլ ընդ բոլոր բնակչաց քաղաքիս և կոնսակրօն միաբանութեան մերում ի վայրս օտարօտիս, ընդ անդարձ գերութեան սրբազան անօթաց և եկեղեցական զարդոց մատնեցան ի կորուստ և մատեանք յիշատակաց, մուրհակք և պարգևագիրք և այլ թուղթք անապատի մերոյ, և ցայսօր ժամանակի ամենայն հետազօտութիւնք մեր ելեալ են ի դերև: Բայց առ ի լնուլ զտենչանս սրտի Ձերոյ ահաւասիկ ոչ ձանձրանամ դրոշմել ի գիր ընդ այժմեան վիճակի մերում կոնսաստանի և զանցելոցն տեղեկութիւնս, զորս ի հատուկտոր թղթոց և յաւանդութեանց որդի ի հօրէ ընկալեալ եմք»<sup>1</sup>:

Նկարագրված իրողություն մասին վկայություններ կարելի է գտնել հայկական այլևայլ աղբյուրներում, այդ թվում և 1795 թ. կոնստանցի մայրապետ Թագուհի Միրիմանյանի և սարկավագուհի Գայանէ Խոջա-Բեհբուդյանի (Մելիք աղայի դուստր) նամակից՝ հասցեագրված Հովհ. Լազարյանին և նրա կին Կատերինային<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Սարգիս եպս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հատ. Բ, Տիֆլիս, 1858, էջ 62-63: Տե՛ս նաև այստեղ «Ուղեգրությունների» բաժնում:

<sup>2</sup> Ռուզան Տիտանյան, Նորահայտ մի փաստաթուղթ 1795 թ. Թբիլիսիի աղետի մասին. «Բանբեր Մատենադարանի», № 5 (1960), էջ 483-490:

Քանի որ այս սարկավագուհի Գայանեն մահացել է 1798 թ. Ղզլարում, ապա Նոր-Ջուղա ուղարկված նամակի հեղինակը, հավանաբար, 1799 թ. կուսանոց մտած մեկ այլ Գայանե է<sup>1</sup>:

Նամակում եղած հղումը, թե եկեղեցու հիմնարկության պարագաներին վերաբերող տեղեկությունները «հատուկտոր» են, կարելի է փաստարկված նկատել, քանի որ «Ցանկ Հայոց եկեղեցեաց ի Թիֆլիս և շրջակայից»-ում 13-րդ համարի տակ ներկայացված Սուրբ Ստեփանոս եկեղեցին ուղեկցվում է «անյայտ» որակումով (այսինքն՝ Ցանկ կազմողը անհրաժեշտ տեղեկություններ չունի)<sup>2</sup>: Սակայն Գայանե մայրապետը, այնուամենայնիվ, ընտանիքի կենդանի ավանդություններից ու հատուկտոր նյութերից բավական ստուգապատում պատմություն է հյուսել. մասնավորապես՝ կուսանոց հաստատելու միտքը պատկանում է Ասլան Խոջա Բեհբուդյանի որդի Մելիք-Աշխարբեկին, սակայն նա զոհվեց թուրքերի ձեռքով 1724 կամ 1727 թվականին, ուստի անապատի փաստական հիմնադիրը դարձավ վերջինիս որդի Մելիք Աղա Բեհբուդյանը<sup>3</sup>: Սակայն այդ նախնական կառույցը մատուռի դերակատարում ուներ, և էգն. Իոսելիանի տեղեկությունը նրան է վերաբերում<sup>4</sup>: Միաբանող կույսերի թիվը փոփոխական էր. ԺԸ. դարի վերջին, մայրապետի տեղեկությամբ, 27 հոգի էր, մինչդեռ 1837-ին՝ 10 միաբան: 1911 թ. վախճանված Եփրոսինէ Աբամելիքյանի տապանագրի վկայությամբ 1727-ին կառուցված եկեղեցին հիմնական վերանորոգման է ենթարկվել 1868 թվականին, ապա նաև 1910-ին:

Մայրապետ Գայանեի նամակում փաստորեն բերված է անապատի կանոնադրությունը (տիպիկոնը), ըստ որի «ի միաբանութիւն վանացս ընկալեալ լինին օրիորդք ո՛չ կարի մանկահասակք և ո՛չ անցեալ զաւուրբք», ովքեր «պարտին վկայեալ լինիլ ըստ բարի վարուց և գիտել գոնէ զհասարակ հայերէն ընթերցումն»: Նրանք անցնում են փորձության շրջան՝ ստուգելու համար «Թե կարո՞ղ է արդեօք բառնալ զլուծ գինուորութեան Քրիստոսի ցօր

<sup>1</sup> Եկեղեցու պատմության համառոտ ուրվագիծ տե՛ս А. КИРИШИЛОВ, Женский монастырь св. Стефана в Тифлисе.- “Тифлисский листок”, 1912, № 36.

<sup>2</sup> Տե՛ս այստեղ «Թիֆլիսի եկեղեցիների պատմության նյութերի» վերջին էջերում:

<sup>3</sup> Խ. Խուցեան, Թիֆլիսի ս. Ստեփանոս Կուսանաց անապատի պատմությունը, Թիֆլիս, 1914, էջ 16, 87-88:

<sup>4</sup> Տե՛ս ստորև «Նկարագրական վկայություններ» բաժինը: Հեղինակը հիմնարկությունը դնում է 1717 թվին: Այս թվականների մեջ մենք որոշ շփոթ ենք արձանագրում, բայց տարբերության աննշան լինելու հանգամանքով այն քննության առարկա չենք դարձնում:

վախճանի կենաց իւրոց»։ Ինչ վերաբերում է միաբանողի ծախսերը հոգալուն՝ «ձնօղք, ազգականք կամ հոգաբարձուք օրիորդին նուիրելոյ զանձն ի կուսութիւն պարտական են ըստ իւրեանցն կարողութեան մատուցանել ի կուսանոցն զօժիտն, զորս տալոց էին ի հարսնացուցանել զնա աշխարհի»<sup>1</sup>։

Միաբանութեան մայրապետն ուներ երկու օգնական, ի ձեռն որոնց հոգում էր ծախսերը, որոնք համաձայնեցվում էին վիճակավոր իշխանութեան հետ, իսկ «երիզապատեալ մատեանի» մեջ գրվում էին «ամենայն մուտք և ելք»։ Ընդ որում՝ «Մի սեղան է բոլոր միաբանութեան վանացս՝ մեծաց և փոքրունց և միատեսակ զգեստ, ի միասին ննջեն և ի միասին յառնեն, մի կամք են ամենեցուն և միատեսակ խորհուրդ, ստորադրութիւնն ճշգիւ պահպանի ի կուսանոցիս...» և այլն<sup>2</sup>։

Անդրադառնալով միանձնուհիների ու միաբանութեան հասարակական պարտականութիւններին, պիտի ընդգծել գլխավորը՝ «այցելութիւն և մխիթարութիւն սգաւոր կանանց քաղաքիս», ապա նաև «անտերունջ որբ աղջկունք եթէ ի սպառ մնան անխնամ, գտանեն ինքեանց ժամանակաւոր ապաստանարան ի վանս Կուսանաց, յորոց ոմանք ի մտանելն յամուսնութիւն ընդունին ի կուսանոցէն և զչափաւոր զօժիտ»։

Ինչպէս համոզվում ենք՝ Ս. Ստեփանոս Կուսանաց անապատը սոսկ առանձնարան կամ ճգնարան չէր և կոչված էր համայնքի կյանքում կարևոր գործառնութեան։

Որքան էլ զարմանալի է՝ եկեղեցու բուն շինարարութեանը վերաբերող որևէ արձանագրութիւն չի եղել և կամ չի պահպանվել։ Եղածները գրեթե բացառապէս նորոգութեան շրջանին են վերաբերում և հավաքված ու հրատարակված են Խ. Խուցյանի աշխատութեան մեջ<sup>3</sup>։ Որոշ լրացումներով ու սրբագրութիւններով վերահրատարակութիւն կարելի է գտնել Թիֆլիսի վիմագրութեանը նվիրված մեր գրքում<sup>4</sup>։ Նրանց ժամանակագրական սահմանները 1870-1885 թվականներն են, իսկ ավանդ ունեցողները՝ Թիֆլիսի ընչեղ խավի ընտանիքների դուստրերը՝ Հռիփսիմե Բեգթաբեգյանց, Եփրոսիմե Աբիմելիքյանց, Աննա Խոջամիխասյանց, Գայանե Հախնազարյանց, Շուշան Խարազյան, Փեփրոնիա Խուբյանց։ Արձանագրութիւնները գերազանցապէս գեղագիր են և ցավոք՝

<sup>1</sup> Տե՛ս ստորև Ս. Զալալյանցի «Ճանապարհորդութիւնը»։

<sup>2</sup> Անդ։

<sup>3</sup> Խ. Խուցյան, նշվ. աշխ., էջ 58-60։

<sup>4</sup> Ս. Մ. Мурадян., նշվ. աշխ., էջ 42-44։

վերջին տարիներին տեղի ունեցած «վերանորոգման-վերադասավորման» ընթացքում լիովին անհետացան<sup>1</sup>: Ավելորդ է հիշեցնել, որ վերանորոգված եկեղեցին այլևս իր սկզբնական դավանունության աղոթարան չէ:

---

<sup>1</sup> Նրանց լուսապատճենները տե՛ս մեր գրքում. աղ. V. 1-5:

## ՉՈՒՂՈՒՐԵԹԻ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Նոր ժամանակների Թիֆլիսի այս թաղամասը նախապես քաղաքի արվարձանները կազմավորող գյուղերից մեկն էր: Այն ընկած էր Կուր գետի ձախ ափին և հարևան թաղամասերից բաժանված է մեծ ու փոքր փոքրերով: Արդեն ինքը անվանումն էլ այդ է հուշում (թուրքերեն «Չուխուր» - Շուխուր - փոս)<sup>1</sup>: Սուրբ Կարապետ եկեղեցին գտնվում է թաղամասի հարավային փորակի աջ կողմում:

Հայ բնակչության այստեղ հաստատվելու ժամանակագրությունը դժվար ճշգրտելի է: Սակայն այն փաստը, որ ձորերով ամփոփված այս ոչ այնքան մեծ բնակավայրում հայկական երեք եկեղեցի է եղել՝ Ս. Կարապետի, Ս. Աստվածածնի և Ս. Գեորգ, խոսում է հայ վերաբնակիչների ալիք առ ալիք Չուղուրեթում հաստատվելու մասին: Հավանական է ենթադրել, որ այդ հաստատումը կայացել է ժ.Ը. դարի ընթացքում, երբ առկա տեղեկությունների համաձայն Հավլաբարի հրահանությունով գտնվող այս տեղանքը ևս թագավորական ընտանիքին էր պատկանում<sup>2</sup>: 1795 թվականին Հերակլը մասնահատուկ հրովարտակով Չուղուրեթ գյուղն ու Թիֆլիսում անժառանգ թաթարական կալվածքները, այդին ու կուղպակները նվիրում է Սարգիս-Աղա Կարապետին ու Գեորգուն՝ «ի հավերժ տիրություն»<sup>3</sup>: Հիշատակված անձինք հայոց Ամատունի տոհմից էին, որոնք մինչ այդ արդեն արժանացել էին վրաց պետություն թավադուլթյան տիրոջ (իշխան)<sup>4</sup>: Հավանական է ենթադրել, թե վերոհիշյալ հայոց երեք եկեղեցիներից մեկը-երկուսը կարող էին կառուցվել Ամատունիների տիրության օրոք և նույնքան հավանական է, որ Աղա-Մահմեդ-խանի արշավանքի ու ավերածությունից հետո վրաց արքունիքն զբաղված էր բուն Թիֆլիսի ու նրա այլ մերձավանների վերականգնման

<sup>1</sup> Հր. Աճառեան, Թուրքերենի փոխառեալ բառեր հայերէնի մէջ, Մոսկուա - Վաղարշապատ, 1902, էջ 278:

<sup>2</sup> Թեյմուրազ Բերիձեի հավաստմամբ «Չուխուր» ձևով այս տեղանունը առաջին անգամ հիշատակվում է 1707 տրված նվիրագրում (տե՛ս նրա՝ ძველი თბილისის გარეუბნების ისტორია, თბ., 1977, გვ. 153):

<sup>3</sup> Տե՛ս Թ. Ծղրոծց. նշվ. աշխ., էջ 169:

<sup>4</sup> Ինչպես երևում է, Ամատունիները թավադուլթյան տիրոջին արժանացել են 1783 թվականից հետո, այդ պատճառով էլ նրանք չկան Հերակլի ներկայացրած ցանկում (տե՛ս «გეორგივესის ტრავტატი», თბ., 1983):

Հոգսառատ գործով, իսկ Ամատունիների խնդրանքը ինչ-որ չափով թեթևացնում էր արքունիքի հոգսը:

Ցավոք, Ս. Կարապետ եկեղեցու կառուցման ժամանակի ու այլ Հանգամանքների մասին ստույգ և անվերապահ աղբյուր չունենք: Այն հիշատակվում է Թիֆլիսի Հայոց եկեղեցիների գրեթե բոլոր ցանկերում, սակայն մանրամասներ քիչ են հաղորդվում: Այսպես, օրինակ, ցանկերից մեկում Սուրբ Կարապետ եկեղեցին կոչված է «Զարիվերի», որ փաստորեն տեղանքը բնորոշող միկրոտոպոնիմ է, իսկ շարունակության մեջ ասված է «չինեալ յազնուական Բաղդասար Իսահակ Ղամազովենց[է] 1705 և գկնի նորոգեալ ի հասարակութենէ»<sup>1</sup>: Ղամազով/Ղամազյաններին Թիֆլիսի Հայոց այլ եկեղեցիների շինարարության կամ նորոգության առիթով էլ ենք ճանաչում, բայց որ նրանք ազնվական են եղել՝ այստեղից ենք իմանում: Այլ է էգն. Իոսելիանիի տեղեկությունը. «Չուղուրեթ տանող ճանապարհի կողքին, արևելքից գտնվող ձորում դեպի Հավլաբար տանող դարիվերին կից, գտնվում է եկեղեցի գմբեթավոր, վայելչատես, քարուկրով շինված հանուն Սուրբ Կարապետին, որ կառուցված է՝ նախ հիմնադրությամբ քաղաքացի (մոքայաք) Ղազազովի ծախքով 1400 թվին, իսկ վերջին անգամ նորոգված 1790-ին: Այստեղ է ամփոփված Սուրբ Կարապետի սքանչելագործ մասունքը, որը և տոնում է ժողովուրդը»: Հարկավ այս Ղազազովն ու նախորդ ցանկի Ղամազովը նույն անձն է, ուստի քննելին 1400 և 1705 թվականների երեք հարյուր տարով տարբերությունն է: Քանի որ Չուղուրեթը ԺԸ. դարից առաջ եղած աղբյուրներից տակավին հայտնի չէ, կարելի է ենթադրել, թե Իոսելիանիի ձեռագրում 7-ի և 4-ի շփոթ կա, ուստի առայժմ գերադասում ենք ցուցակի 1705-ը: Այս պարագայում խնդիր է հարուցում Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի թմբուկի 1664 թվականի արձանագրության ընթերցումը.

«ԿԱՄԱԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՄ՝ ԱՄԻՐԱՂԷՍ ԵՒ ԿՈՂԱԿԻՑՆ ԻՄ ԲԵԿԻ-ԽԱԹՈՒՆՍ ՇԻՆԵՑԱՔ ՍՈՒՐԲ/ ԿԱՐԱՊԵՏՍ ՅԻՇԱՏԱԿ ՄԵԶ/ ԵՒ ԾՆՕՂԱՑ ՄԵՐՈՅ, ԱՐԵԻՇԱՍՈՒԹԻՆ ՈՐԴԻՈՅ: ԹՎԻՆ ՌՃԺԳ. (1664)»<sup>2</sup>:

Սուրբ Կարապետի կառույցի հիշատակությունը, ինչպես ժամանակին նկատել ենք, բնավ բավարար չէ այն Չուղուրեթի եկեղեցուն վերագրելու համար, քանի որ վերջինս գտնվում է քա-

<sup>1</sup> Տե՛ս ստորև «Թիֆլի. Հայոց եկեղ. պատմ. նյութեր» բաժնի առաջին ցանկում:

<sup>2</sup> П. М. Мурадян, նշվ. աշխ., էջ 35:

ղաքի միանգամայն այլ թաղամասում և ապա՝ հիշյալ թվականն ու շինարարները որևէ ընդհանուր բան չունեն վերևում բերված հաղորդումների հետ: Այս պարագաները հուշում են, որ խոսքը կարող է վերաբերել Ս. Կարապետի անունը կրող մեկ այլ պաշտամունքային կառույցի, որպիսին իրոք եղել է մոտակա Տափիթաղում (խոսքը վերաբերում է Քամոյանց կոչվող եկեղեցուն): Այս նույն թաղամասում երբևէ գոյություն է ունեցել Ս. Կարապետի անունը կրող և գրեթե Չուղուրեթի եկեղեցու հետ միաժամանակ կառուցված Սահակաշեն եկեղեցին (1703 թ.):

Եկեղեցու լավ պահպանված պատերին, որքան էլ զարմանալի է, որևէ արձանագրություն չկա: Շրջակա հարթակի վրա անցյալ դարի 80-ական թվականին կար երկու հողմնահարված տապանագիր, որոնցից մեկը Մարգարիտ անունով կնոջ էր հիշում, մյուսը՝ Պլատոն անունով արեղայի<sup>1</sup>: Ի. Գրիշաչվիլու անվան Պատմա-ագագրական թանգարանի բակում, քանի այն գտնվում էր Բուսաբանական այգու հարևանությամբ, պահպանվել էր Ս. Կարապետ տանող քարե աստիճանները 1891 թ. նորոգող Ավետիք Հախնազարյանի երեք քառատողից բաղկացած հայերեն հանգավոր հիշատակարանը, որ մենք հրատարակել ենք<sup>2</sup>:

Չուղուրեթի Ս. Կարապետ հայոց եկեղեցին արդեն քանի տարի է վեր է ածվել գործող վրացական եկեղեցու՝ կրելով առ այդ պահանջվող որոշ փոփոխություններ, թեև արտաքին նկարագիրը, մանավանդ գմբեթն ու քիվերի որոշ մանրամասներ հայտնում են իրենց սկզբնական էթնո-դավանական պատկանելությունը: Չքացել են հայագիր տապանագրերը:

\* \* \*

«Գարեթուբանի» կամ «Տափիթաղ» կոչվող թաղամասը տարածվելու միայն մեկ հնարավորություն ուներ՝ դեպի հյուսիս, Վերե գետի ավազանը: Եվ Տափիթաղի բնակիչները տեղում այլևս ընդարձակվելու կամ օժանդակ տնտեսությունների ու քաղաքային բնակչությանը անհրաժեշտ հարակից հաստատությունների համար ստիպված էին Վերեի ավազան դիմել: Այդ պարագաները թելադրեցին այստեղ այգիներ հիմնել, ջրաղացներ կառուցել, գերեզմանատուն-հանգստարան հաստատել և այլն: Շինարարական առաջնահերթ կառույցներից մեկը խոջա Բեհբուդ-

<sup>1</sup> Տե՛ս Ս. Մ. Мурадян, նշվ. աշխ., էջ 87, նակ՝ աղ. XI, 2-3:

<sup>2</sup> Անդ, էջ 86 (աղ. IX, 1):

յանի նախաձեռնած կամուրջն էր Վերե գետի վրա: Այն հարկավ նպաստեց շրջակայքում կալվածքներ ստեղծելուն, իսկ այդ նշանակում է հողը մշակովի դարձնել, անջրդի տարածքները ոռոգելու համար ջրատար առուներ ու ջրավազաններ պատրաստել և աստիճանաբար տարածքը բնակելի դարձնել:

Քարթլ-Կախեթի թագավորութունների միավորումից հետո Արևելյան Վրաստանում համեմատաբար խաղաղ տասնամյակներ եղան, որի ընթացքում երկրի տերերը առանձնակի ջանադրությամբ փորձեցին նոսրացած բնակչությունը համալրել եկվոր կամ հարկադրանքով այստեղ բերվող նոր զանգվածներով: Իբրև կանոն այդ վերաբնակեցվածները, եթե խոսքը զանգվածին է վերաբերում, Վրաստանի գավառներից չէին (ճորտատեր ավատատերերը արքունիքին թույլ չէին տա սեփականել իրեն ճորտերին), ուրեմն դրսեկ բնակիչները կամ հայեր էին և կամ մահմեդականներ: Հիմքեր կան պնդելու, որ Տափիթաղը դեպի հյուսիս ընդարձակողները հիմնականում հայազգիներ էին. այդ վկայող կարևոր փաստը Վերեի գերեզմանոցի հիմնումն է և երբեմնի հայոց Սուրբ Խաչ հանգստարանային եկեղեցու գոյությունը նրանում: Այս աղոթարանի պատմությունը մեր ձեռքին եղած բազմաբնույթ նյութերի մեջ ներկայացված չէ<sup>1</sup>: Կարծում ենք՝ սույն պարագան բացատրելի է ծուխեր չունենալու փաստով: Այստեղ հոգեհանգստյան արարողությունից բացի ամենօրյա ժամասացություն կամ պատարագի անհրաժեշտություն չկար: Եղե՞լ են արդյոք երբևէ հայերեն արձանագրություններ կամ արձանագիր առարկաներ՝ չենք կարող ասել: Մեր այցելություն տարիներին այն վաղուց դադարել էր հայոց գործող եկեղեցի լինելուց: Եվ որովհետև քաղաքի այս թաղամասում ու նրա մերձակայքում հայ բնակչությունը բավական նոսրացել էր, հազվադեպ էին դարձել նաև հայոց թաղումները, ուրեմն նաև պարապություն էր ենթարկվել եկեղեցին: Այս պարագայում նրա աստիճանական վերածումը ուղղափառ դավանության պիտի դիտվեր իբրև բնականոն ընթացք<sup>2</sup>: Հարկավ արխիվային հավաքածուներում կարելի է

<sup>1</sup> Ս. Ջալալյանցի հաղորդումից գիտենք, որ գերեզմանատան Ս. Խաչ եկեղեցու կառուցողը պ. Դավիթ Թամամչյանցն է (Ճանապարհորդութիւն ... Բ, էջ 69):

<sup>2</sup> Վերեի Ս. Խաչի շուրջը կան ոչ քիչ երևելի հայ ընտանիքների դամբարաններ, տապանային կառույցներ, տոհմերի ու ճանաչելի գործիչների անուններ, որոնք դատապարտված են մոռացություն:

Թիֆլիսի գերեզմանատների նկարագրություն կարելի է գտնել Խ. Աբովյանի ակնարկներից մեկում («Թիֆլիսու Հայոց հանգստարանը», տե՛ս Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, ութ հատորով, Գ. հատոր, Երևան, 1947, էջ 40-46):

պրպտել Ս. Խաչին վերաբերող նյութեր: Թերևս այդ խնդրով երբևէ զբաղվեն ճարտարապետություն պատմաբանները:

Հին Թիֆլիսի վերե թաղամասի նորակառույցների շարքին պիտի դասել 1633 թ. Ռոտոմ թագավորի հրովարտակով սախլթուխուցես Քալխոսրո Բարաթաշվիլուն շնորհված Նախշիգորան, որ վերեի կիրճի բնակավայրերից է: Որոշ ժամանակ անց այս տարածքը, տակավին քննելի պարագաներում, անցնում է վրաց պատմություն ժե. դարի առաջին տասնամյակներից քաջ հայտնի Բեհբուդյան ընտանիքին: Այս գերդաստանի ներկայացուցիչները, հակառակ իրենց վարած պաշտոնական բարձր դիրքին (փողերանոց, մելիքություն), հետևողականորեն պահպանեցին իրենց դավանական պատկանելությունը և գործունյա մասնակցությունը ունեցան Թիֆլիսահայ համայնքի մշակութային-դավանական անցուղարձին: Հետագայում նրանց ժառանգները մտան զինվորական ծառայություն մեջ և կարևոր դերակատարություն ունեցան ռուսական բանակի ռազմական հաջողությունները կերտելիս: Վրաց թագավորություն մինչև կարբաշ Հովսեփ Բեհբուդյանն ու նրա կին Մարիամը (վերջինս միլախվար Հովսեփի դուստրն էր) ութ զավակ ունեցան, որոնցից մեկը Կովկասի պատերազմներում հերոսություն ցուցաբերած Վասիլի Բեհբուդովն է (1791-1858), որ գեներալություն աստիճանի հասավ և 1830-1838 թվականներին Հայկական մարզի կառավարիչ եղավ: Նրա եղբայրն էր Դավիթ Բեհբուդովը (1793-1867), դարձյալ գեներալ, որ զոհվեց ու հանգչեց Վարչավայում: Հովսեփի դուստրերից մեկը՝ Գայանեն, (1840-1875) Ս. Ստեփանոս Կուսանաց անապատի մայրապետն էր, նրա քույրը՝ Սոփիա անուկով, Ա. Գրիբոյեդովի հետ սպանված Սողոմոն Մելիքյանի կինը: Որ տոհմի ներկայացուցիչները հավատարիմ էին իրենց պապենական հավատամքին՝ կարելի է հավաստիանալ Նախշիգորայում նրանց կառուցած եկեղեցու հայագիր շինարարական արձանագրության առկայությամբ.

ԵԿԵՂԵՑԻՍ ՆՆՋՄԱՆ ՍՈՒՐԲ  
ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԱՌՈՒՑԱԻ Ի ԿՆԻԱՋ  
ՎԱՍԻԼ, ԴԱԻԹ ԵՒ ԳՐԻԳՈՐ  
ԲԷՀԲՈՒԴԵԱՆՑԷ Ի ՅԻՇԱՏԱԿ  
ԾՆՈՂԱՑ ԻԻՐԵԱՆՑ՝ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ  
ՊՈԼԿՈՎՆԻԿ ՅՈՎՍԷՓԱՅ ՄԻ-  
ՆԻՇԿԱՐԲԱՇԻՈՅ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅ  
ՆՈՐԻՆ ՄԱՐԻԱՄԱՅ: Ի 1835<sup>1</sup>:

<sup>1</sup> Վերծանությունն ու լուսանկարը տե՛ս Ս. Մ. Мурадян, նշվ. աշխ., էջ 103 (աղ. XII, 5):

Պահպանվել է Հովսեփ Բեհբուդյանի կողմից 1818 կազմած «Ծառայողական գործունեություն» ամփոփագիրը: Ե. Թաղալ՝ վիրու գնահատությունում Հովսեփ Բեհբուդյանը «մեծ դերակատարություն է ունեցել Հերակլ Բ-ի թագավորության վերջին տարիներին, և Գեորգի ԺԲ. թագավորության և Կովկասում ռուսների տիրապետության առաջին տարիներին: Հերակլ Բ, Գեորգի ԺԲ. թագավորներն ու կառավարիչները բազմիցս դիվանագիտական նպատակներով նրան ուղարկել են Գանձակի խանի, Ախալցխիսի փաշաների և այլ տիրակալների մոտ: Նա մասնակցություն է ունեցել բոլոր պետական գործերում և այնպիսի ազդեցություն է ունեցել, որ արքայազները իրենց անձնական գործերով դիմել են նրան՝ օգնության կամ թագավորի առաջ միջնորդության համար: Նա մեծ ծառայություն է մատուցել ռուսական պետությանը և պարզևատրվել է գնդապետի աստիճանով, շքանշաններով ու տիրություններով՝ Բորչալուի գավառում և Կախեթում»<sup>1</sup>:

Արքայազն Յուլիոսին տեղյակ պահելով Աղա-Մահմեդ-խանի գործողությունների մասին մինչև Անդրկովկասյան արշավանքը, Հովսեփ Բեհբուդյանը ավելացնում է. «Այժմ դուք կասեք՝ մենք ինչու գորք չենք խնդրում: Բայց մենք ինչպես կարող ենք գորք խնդրել. մի խան է, իսկ մենք երկուսս հայ, մնացած բոլորը այս անհավատի կողմնակիցներ են»<sup>2</sup>: Ազգությունում ու դավանությամբ հայ լինելը վրաց ազգային ու պետական շահերին ծառայելու և համապատասխան գնահատության արժանանալու խոչընդոտ չէր: Այս պարագան, ցավոք, երբեմն անտեսվում է: Հարկավ այդ է դրդել անանուն մի վանդալի հանել Բեհբուդյան եղբայրների հոր հիշատակին նվիրված Նախադրորայի հայերեն արձանագրությունը և նրա փոխարեն տեղադրել վրացերենով թերատ թարգմանված մերօրյա մի հորինվածք:

<sup>1</sup> «საქართველოს სიძველეები», ტ. III, ტფ. 1910, გვ. XVI-XXV. Այստեղ հրատարակված է Բեհբուդյանի «ծառայողական գործունեության» ամփոփագիրը:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 108: Նկատենք, որ Բեհբուդյանի հետ եղած երկրորդ հայը վրաց պատմության մեջ իր ծառայություններով հայտնի Հովսեփ Ղորղանյանն է:

ՉՊԱՀՊԱՆՎԱԾ

ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ



## ՀԱՐԱՆՅ ՎԱՆՔ

Հայոց եկեղեցու որդեգրած ավանդույթի համաձայն թեմական առաջնորդարանները իբրև կանոն վանքերում էին լինում՝ եթե այդպիսիք թեմի շրջանակներում կային: Հետևաբար վանքի հիմնադրմամբ վերահայոց եպիսկոպոսը կամ արքեպիսկոպոսը Բերդի Մեծ եկեղեցուց պիտի փոխադրվեր Վանք: Խնդիրն այն է, թե երբ է կառուցվել այդ առաջնորդական նստոցը: Աղբյուրներում ու գրականությունում մեջ իրարամերժ տարբեր թվականներ ու հիմնարկություն պարագաներ են հիշատակվում: Ժամանակով այդ հարցադրումը կատարել ու նրան պատասխանել է արդեն բազմիցս հիշատակված Շարդենը: Թիֆլիսում գտնվելու ամիսներին (1673 թ.), ինչպես երևում է, տեղացի ուղեկցորդներից հետաքրքրվել է Վանքի հիմնարկության ժամանակի և կառուցողի ով լինելու հարցերով, ուստի և գրառել, թե հայկական գլխավոր եկեղեցիներից է «Փաշա-վանքը (նշանակում է փաշայի վանք): Թիֆլիսի հայ եպիսկոպոսը նստում է այս վանքում: Հայերը պատմում են, որ այդպես են կոչում, որովհետև այն կառուցել է Թուրքիայից փախած մի փաշա, որն այս քաղաքում քրիստոնեություն է ընդունել...»<sup>1</sup>: Պարզ երևում է, թե Թիֆլիսահայոց միջավայրում կառույցը թուրք քրիստոնեացած փաշային վերագրելու բանավոր ավանդություն է գոյություն ունեցել<sup>2</sup>: Իհարկե, միամիտ կլիներ միջնադարյան այդ ավանդությունը այժմ իբրև իրողություն ընդունել, ուստի պիտի փորձել այլ աղբյուրներով ճշտել թե նրանում եղելություն ինչ արձագանք կա:

Երբ ներսես Աշտարակեցու առաջնորդության տարիներին այդ կարգի մասնավորեցումներ էին կատարվում, ցանկեր կազմվում, այսօր մեզ անհայտ աղբյուրներից քաղելով ու ամփոփելով՝ Վանքի մասին հետևյալ տեղեկանքն է կազմվել. «Վանքի եկեղեցին, շինեալ [է] ի 931 թիւն Փրկչի յերից եղբարց, որոց անուանքն են Ումեկ, Առիւծ և Զալապ, 1430 թուիւն, նորոգեալ ի Պապա Յովսէփեան Ծերօրեանց քառապատիկ մեծ քան

<sup>1</sup> Տե՛ս ստորև՝ Շարդենի «Ճանապարհորդության» գրվագը:

<sup>2</sup> Միջնադարյան քրիստոնեական միջավայրում օտարների դարձը, ինչպես նաև հայրենի մեծատոհմիկներին օտար ծագում վերագրելը բազում դրվագներով ապացուցվող և ուշագրավ իրողություն է (այդ վերաբերում է նաև ազգային եկեղեցու օտարազգի սրբերի առկայությունը):

զառաջիճն, և 1715 ամիճ նորոգեալ է դարձեալ ի Փերիղուկեան Գեորգէ և ի Բաստամեան Մելքոնէ»<sup>1</sup>:

Այստեղ հիշված 931 թիվն ու երեք անվանյալ եղբայրները անկարելի է համատեղել: Նախ՝ Ումեկ (կամ Ոմեկ/Ումիկ) անձնանունը ժ.Գ. դարից առաջ մեր աղբյուրներին հայտնի չէ, իսկ եթե խոսքը 1251 շինարարությամբ զբաղված ծանոթ մեծատան մասին է, ապա նրա եղբայրները այլ անուններ ունեին: Թե իսկ Փրկչի 931-ին Վանքի տեղում պաշտամունքային ինչ-որ կառույց եղել է, ապա 1430 թ. վերակառուցումից հետո նրանից բան չէր կարող պահպանվել, քանի որ նորը նախորդից «քառապատիկ մեծ էր»:

Հավանաբար սույն 1430 թ. կառույցը նկատի ունի հանգուցյալ պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը, երբ այն կոչում է «Հայոց ճարտարապետության անկման շրջանի շինություն»<sup>2</sup>: Վանքը ճարտարապետության պատմության կտրվածքով քննության առած մանազետները այն համարում են ունիկալ՝ կոմպոզիցիոն առումով<sup>3</sup>: Հարցի ճարտարապետական քննությունն այստեղ ավելորդ ենք համարում՝ քանի որ հուշարձանն այլևս գոյություն չունի: Թիֆլիս այցելած Մինաս Բժշկյանցը Վանքի կապակցությունը գրում է, թե հին եկեղեցին կոչվում է Կաթողիկե, հիմնված 600 թ. Փրկչի, ունի երեք միանման խորան և 5 գմբեթ<sup>4</sup>: Նախորդի նման առեղծվածային է փրկչական այս թվականը ևս: Ամենևին հիմք չունենք ենթադրելու, թե հայ-վրացական եկեղեցական բաժանման տարիներին Տափիթաղի այն մասը, որ հետագայում պիտի կոչվեր «Վանքի թաղ» արդեն բնակեցված էր և քաղաքի «Գարեթուբանի» ընդգրկված: Մ. Բժշկյանցից մեկ տասնամյակ հետո Վանքի նկարագրությունը տողեր նվիրած է՛զն. Իոսելիանին նրա հիմնարկումը թվագրում է 1480-ով, իսկ կառուցողներ համարում մոքալաքներ Ամսարգիսով, Բաստամով, Նազարբեկով և Օղաանց անուն կրող մարդկանց, ինչպես նաև վրաց թավաղ Սուլղոմլին<sup>5</sup>: Բայց այս տեղեկությունն էլ, եթե ոչ ժամանակի, ապա գոնե հիմնարկողների տոհմանունների առումով վստահություն չի ներշնչում. նրանք բոլորը ավելի ուշ ժամանակներում պիտի ապրած լինեն

<sup>1</sup> Տե՛ս ստորև՝ «Ցանկ Հայոց եկեղեցեաց ի Թիֆլիս և շրջակայից»:

<sup>2</sup> Л. М. Меликсет-Бекоев, Кахтубанский храм.- "Христ. Восток", т. III, вып. III, Пгд, 1915, с. 312.

<sup>3</sup> Мурад Асратян, Памятники средневековой архитектуры в Тбилиси.- II международный симпозиум по армянскому искусству, Ереван, 1978, стр. 6.

<sup>4</sup> Տե՛ս այստեղ՝ նրա «Ճանապարհորդությունից» բերված հատվածը:

<sup>5</sup> Տե՛ս ստորև՝ է՛զն. Իոսելիանի նկարագրությունը:

(*ուշադրութեան առնելիք է նրանց «մոքալաքութիւնը» և ազգանունների ուսականացած ձևը*):

Հին Թիֆլիսի գիտակ Գ. ա.ք. Աղանյանցը Վանքի տեղում եղած աղոթարանը վերագրում է Լուսավորչի ժամանակներին, որից իբրև թե արևելյան մասում պատի բեկորներ են պահպանվել, իսկ Վանքը կառուցվել է 931 թ.: Կարծում ենք՝ Գ. Աղանյանցի միակ աղբյուրը վերևում բերված ցանկի տեղեկութունն է, որի մասին արդեն խոսել ենք: Այլևս չմտնելով այլևայլ թեական քննութիւնների մանրամասնութեան մեջ, ասենք, որ արձանագիր աղբյուրների բացակայութեան պարագայում գոյութիւն ունեցող միակ հավաստի տեղեկութիւնը գտնում ենք 1432 թ. գրված ձեռագրական հիշատակարանում<sup>1</sup>:

«...Շնորհի Տեառն սկսալ [1] և ողորմութեամբ Տեառն Աստուծոյ կատարեցի ի ՊԶԱ. (1432) թվականի Հայոց, յԱւգոստոս ամսոյ ի ԺԶ. (16): Գրեցաւ ձեռամբ սուտանուն արեղայի Կարապետի, ի մայրաքաղաքս Տփլիսիս, ի վանքս պարոն Սալաղենց, ի դրան սուրբ Ամենափրկչիս, զոր Տէր Աստուած զանձեռակերտ խորանն պարգևեացէ զերկնից արքայութիւնն՝ շինողաց սուրբ ուխտիս, ամէն: Եւ ես մեղսամած գրիչ աղաչեմ զամենեսեան, որք աւօտիք ի ամանէ կարդալով կամ արիւնակելով, յիշեցէք ի սուրբ յաղաթս ձեր զիս և զծնադան մեր՝ զՊետրոս քահանայ և զՇնորհուոր, և զեղբայրն իմ զՅոհանէս, և զքեռն իմ զՍուլտանն՝ զհանգուցեալսն ի Քրիստոս, որ և միս եղբայրս, որ աւօնական եղև ի կոկել թղթիս...: Եղբայրք, խոշորութեան գրիս և սղալանացս անմեղադիր լեռուք, զի կարն մեր այդ չափ էր:

Այս ամի փոխեցաւ ի Քրիստոս պարոն Չալաբէն, և ետ Խ. (40) ատր փոխեցաւ ի Քրիստոս արհեսպիկոպոսն տէր Յովանէս՝ եղբայր նորին, որդիք պարոն Փաշի, երիտասարդական մահուամբ, թողին սուք անբժշկելի իւրոցն և ատարաց, զոր տէր Աստուած թողցէ զամենայն սխալանս նոցա ի յաւոր դատաստանին, ամէն»<sup>2</sup>:

Այս հիշատակարանը լուծում է առեղծված դարձած մի քանի խնդիր. Շարգենի հիշատակած «Թուրքիայից փախած փաշան» իրականում, պարզվում է, ոչ թե «փաշա» տիտղոսը կրող մեկն է, այլ Փաշա անունով հայազգի մի պարոն (իմա մեծատուն), որի որ-

<sup>1</sup> «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն 1, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 420-421: Տե՛ս նաև այստեղ «Հիշատակարաններ» բաժնում: Վրացերեն թարգմանութիւնը տե՛ս «Լոմեջը՝ ԵղենաՎճրտա XIV-XV Նաչքոյնցեծիս անցրոյցեծիս (Յո՛Մաճաճարանցեծիս) Երո՛ժեծի Նաճարտեղլոս Մեճանցեծ», ժգլո Նոմեջրոյժան տարցմնա, Մեճանցալոյ ժա... ժաջրտո ա. անժալոյժ, տժ., 1978, ՅՅ. 46-47.

<sup>2</sup> Այս հիշատակարանի գոյութիւնը բացառիկ բերպատեհութիւն է, որովհետև № 9223-ի տակ եղածը պատահիկ է (ԺԲ), իսկ բուն ձեռագիրը մեզ չի հասել:

դին է հոր կառուցած վանքում նստող Հովհաննես արքեպիսկոպոսը՝ այսինքն Թիֆլիսի հայոց առաջնորդը: Նա և նրա Չալաբե եղբայրը, որը հոր պես պարոնությամբ է մեծարվում, մահացել նույն 1432 թ.՝ քառասուն օրվա տարբերությունով: Նրանք բոլորը՝ հայր Փաշան և երկու որդիները ունեցել են «Սոլաղենք» տոհմանունը: Նրանց հիմնած կառույց լինելու պատճառով է, որ գրիչը կոչում է «ի վանքն Սոլաղենց»: Պարզվում է նաև, որ Թուրքիայից գալու և Թիֆլիսում քրիստոնյա դառնալու ավանդությունը «փաշա» բառի ժողովրդական ստուգաբանության արդյունք է: Թյուրիմացություն մեջ է նաև էգն. Իոսելիանին. «Վրաց թավադ Սոլաղովը» նույն Փաշա Սոլաղենցն է՝ Հայոց արքեպիսկոպոսի հայրը: Ստույգ չէ նաև վանքի կառուցումը 1480 թվին վերագրելը: 1432 թ. գրիչ Կարապետը (Աղթամարից Թիֆլիս հաստատված)<sup>1</sup> ժամանակակից է «երիտասարդական մահուամբ» կյանքից հեռացած եղբայրներին, ուրեմն առնվազն 2-3 տասնամյակ առաջ պիտի լիներ վանքի հաստատումը: Հետևաբար «Պապա Յովսէփեան Շերգիլեանցը» վանքի «1430 թ.» նորոգողը չէ, այլ պես երկու տարի հետո հիշատակարան գրողը չէր խնայի նրա անունով ևս ողորմի խնդրել: Հավանաբար 1715 թ. Գեորգ Փերիդոլյանի ու Մելքոն Բաստամյանի կատարած նորոգումից տարիներ առաջ կամ հետո Շերգիլյանց ազգանունով ուրիշ մեկ նորոգող ևս է եղել:

Վանքը իր հարակից կառույցներով, մանավանդ բավական ընդարձակ ազգային գերեզմանոցով, քաղաքաչինական պատճառաբանությունով քանդվեց 1930-ական թվականներին: Ճիշտ վանքի տեղում կառուցվեց դպրոցի շենք, կանգուն մնաց և այսօր էլ կա զանգակատունը՝ Սարգիս Հասան-Ջալալեանցի շինարարական արձանագրությունով:

Ի ԼՐՈՒՄՆ ԲԱՆԱԻՈՐ ԿՏԱԿԻ ՀՈԳԵՒՈՐ ԾՆՈՂԻ ԻՄՈՑ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԱԶԳԱՍԷՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԱԻԱՐՏԵՑԻ ԶԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՍ ՏՓԽԻՍՈՑ Ի 1861 ԱՄԻ ԵՄ ՍԱՐԳԻՍ ՆՈՒԱՍՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑ: ԱՂԱԶԵՄ ՅԻՇԵԼ ԶԻՍ ՅԱՅՆՄ ԱԻՈՒՐ, ՅՈՐԺԱՄ ԲԱՆՔ ՍՊԱՌԻՆ ԵՒ ԳՈՐԾՔ ԹԱԳԱՒՈՐԵՆ:

<sup>1</sup> «Աղթամարցի» լինելը վերծանել է հիշատակարանի հրատարակիչ Լ. Խաչիկյան (նշվ. աշխ., էջ 420, ծան. 2):

Վանքի ու կից կառույցների պատերին, ինչպես նաև գերեզմանոցի տապանաքարերի վրա Թիֆլիսի պատմության համար կարևոր բազում արձանագրություններից պահպանվել է միայն այն, ինչ Սարգիս Ջալալյանցն ու Մարի Բրոսեն անհրաժեշտ են նկատել հրատարակել և նաև այն սակավաթիվ բեկորները (հիմնականում տապանաքար), որ քանդելիս անհրաժեշտ է նկատվել պահպանել ի. Գրիշաշվիլու անվան թանգարանում: Ժամանակին մենք գտել ու վերծանել ենք պահպանվածը և, գումարելով Բրոսեի ու Ջալալյանցի մոտ եղածներին, հրատարակել մեր ուսուցանող պրակում:

Նրանց ի նորո վկայակոչումը նպատակային չենք համարում, բացառությամբ ԺԸ. դարի առաջին տասնամյակների նորոգչական այս արձանագրության.

ՇՆՈՐՀԻՒ ԱՍՏՈՒԾՈՅՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՎԱԽՏԱՆԿԱ/ ԵՒ ՈՐԴՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԱԶՕՐ ԲԱԳՐԱՏԻ, ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ /ՄՐԲԱԶԱՆԵՒ, ԻՍԿ ՅԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՊԱՏՃԱՌԱԻ ԱՍՏԱՊԱՏՅԻ ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՇԻՆԵԱՅ/ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱՆՈՒՆ ՄԵՐՈՅ ԼՈՒՍԱՒՈՐԶԻՆ, ԱՐԴԵԱՄԲԲ ԻՒՐ՝ ՂՈՒԼՈՒՆՅ ԽՕԶԱՅ ԳԻՈՐԳԻ ԲԱՐԵ/ՊԱՇՏԻ՝ ՅԻՇԱՏԱԿԻ ԻՒՐՆ ԵՒ ԾՆՈՂԱՅՆ, ԵՒ ԿՆՈՋ, ԵՒ ՍԱՏՈՒԱԾԱԶՕՐ ՈՐԴՈՅՆ ԱՄԵՆԱՅՆԻ: ԱՐԴ ՈՐՔ ԿԱՐԴԱՅՔ՝ ԱՍԱՅԷՔ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ:

Մ. Բրոսեն արձանագրության ժամանակը սահմանում է Վախթանգ Զ.-ի թագաւորութեան տարիներով (1719-1724) և Աստվածատուրի պատրիարքությամբ (1715-1725), իսկ «քրիստազօր Բագրատին» իրավացիորեն նույնացնում արքայազն Բագրատի հետ<sup>1</sup>:

Հաջորդ շինարարական հիշատակարանը գրված է 1760 թ. և նորոգողներն են Շերկիլենց Հովսեփի որդի Պապան և նրա հարազատները<sup>2</sup>:

«Հարանց վանքի» վերջին նորոգության ժամանակ, Գ. ա. ք. Աղանյանցի վկայությամբ «նորոգող ճարտարապետը մաքրեց

<sup>1</sup> Տե՛ս M. Brosset, *Rapports sur un voyage archéologique ...*, St. Pétersbourg, 1850, p. 14 և շար.:

<sup>2</sup> Տեքստերն ու վերծանում-վերականգնումները տե՛ս П. М. Мурадян, *նշվ. աշխ.*, էջ 53-64: Վանքի հիմնադրության է նվիրված Լ. Մելիքսեթ-Բեկի «Ծցօցօսեօս յճնյօս ճճճնյօս ևճյօտեօստօյօս» - «Ծց. Կն-օս մօճմօյ», IV, 1924, ՅՅ. 82-91.

սրբեց թէ եկեղեցու հին արձանագրութիւնները և թէ Վանքի բակում 4-500 տարւայ տապանաքարերն ու նրանց արձանագրութիւնները»<sup>1</sup>:

\*\*\*

Տասնամյակներ առաջ երևանում կայացած մշակութային ցուցադրումներից մեկի ժամանակ տողերիս հեղինակը տեսել է Վանքի եկեղեցու փայտե մանրակերտը, որ ներկայացրել էր Թիֆլիսաբնակ մի հայորդի: Թե ինչ եղավ այդ հաջող կերտվածքը՝ հայտնի չէ:

Վանքի քանդմանը, ինչպես և սպասելի էր, պիտի հաջորդէր մերձավոր հանգստարանի վերացումը: Թիֆլիսահայ մշակութի երախտավորներ Պահարեի, Սուրեն Ավչյանի, Հովհաննես Դավթյանի և այլոց ջանքերով տեղիս գերեզմանոցում հանգչող հայ զորավարների նշխարները տեղափոխվեցին Ս. Սարգիս եկեղեցու գավիթ, իսկ մշակութային առավել երևելի ներկայացուցիչների մասունքները՝ Խոջիվանքի Հայոց պանթեոն:

<sup>1</sup> Գ. ա. ք. Աղանեանց, Վրաստանի հայերը. - «Տարագ», 1919, № 6, էջ 5:

## «მე კენკა» ტეტრისი

Այս ანსოვიორ ანონურ კროკ ხეხეგინ ზინ მრჰქრისი ყათამონ-  
ქჟამე ვეაოქოღინერე თეოროზონდ ხნ վանքი მერდակაქეონდ, მե-  
რორჟა რარაქოაქვილი ქოოოგი վრა, նჯანավორ მեծ ჯენքი (გե-  
ղეგლიქჟიან თან) თეოონდ: «Այս ხეხეგინ ზანღეყონდ է მեგ  
1789-1815 ქოქანანერე მრჰოგი վოქეროგერეონდ: Մրათամանակ  
սოქն ხეხეგეო ზრჯათակლიქჟიან კոնկრետ ყարოგայონდ აսված  
է, որ აյն գთնվონდ է Գարեթուբանուն [= Տափիթաղուն]: «მեკենամի» ხ-  
կეგინ ხერე ჯგործოგ 1828 ქ. ყլანի (= ზათოქოგდო) վრა გե-  
თეղված է აյნ თეოონდ, ուე აյოორ რარაქოაქვილი ქოოოგი վრა  
გთნվოგ მեծ ჯენքն է: Այս ხეხეგეო გოქოქჟიან მწანგოქն է  
Текенамский переулоч-ը, որე რარაქოაქვილი ქოოოგინ გოქოგჰე  
էრ ლ გოლრა էრ გოქრა վანքი (այოორ` Գოგჯայի) նრբანგე: მե-  
კենամი նრբანგეը ձანեթի նრբანგე ანონով გოქოქჟიონ ուნե-  
გოქ մինჯև მեր դարე 30-ოქან ქოქანანერე, ხერე აյս ამეოგ  
ჯრჯოქოქეը քანդվեგ նორ თონდ կოოուგելეო ზამარ»<sup>1</sup>:

Նոქն თեოորոზონდն է նաև მ. რերիձեի գրքეոն, իսկ կოოույვე  
Ֆամարված է ԺԸ. դարე<sup>2</sup>: Պოქաս նჯანավորոქჟიან ქե վանքի  
մերდավորոქჟიან ქելգրանքով այս ხეხეგინ աոանձին ուჯո-  
րոქჟიან չի արժանացել: Մինաս Բժլեանցը «მեკենամ» ზო-  
րღմանը ձანոթ չէ, բայց ხეხეგინერე ქოქოქելիս ხერე 7-րդ  
ნերქოქոგնոնდ է. «Սուրբ Սարգիս, որ է արთოგոյ քოղաքին მերձ  
ի վանս»<sup>3</sup>: իսկ վանքին ამենամերձը მեკենամն էր: Եթե այս  
ყարოգան ზოქասთի է, ուրեմն ხეხეგინ կոչվել է Ս. Սարգիս:  
Ներես Աჯտարოქեგეო սთոგած նյոქթերոնდ მեკենամին վերաբե-  
րոგ თեղեկლიქჟიან բացოქოქჟიონը ყրთի აყოგოქց ზამარել,  
որ ხეხეგინ აյդ տარինერին չի გործել, ինჯყես აյդ արձանագր-  
ված է 1828 ქ. կოգմված ზათოქოგდონდ: Պათձოնერე կարოგ ხն  
տარերე լինել, բայց აოოավել ზოქանოქանն აյն է, որ Աղո-Մո-  
մեղ-խանի მრჰქრის ներխოქոქան օრերին մյოև ჯათ ყოჯთამონ-  
քოქին կოოուქցინერე ყես მեკենამը ლս ավերածოქჟიან է ხն-

<sup>1</sup> მამისა ბეթոնՊեղե, თბოლისის გარეგանი სახე XVIII სոქეքეմ, (ქოთელო  
დოქექეթეթეო მასոლის მხევეგოთ), თბ., 1965, გვ. 50-51.

<sup>2</sup> თეოմურոზ ბეթოქ, քველო თბოლისის გარეքეթეթის ისტორო, თბ., 1977, გვ. 56.

<sup>3</sup> Տե՛ս սთորև Մ. Բժլեանցի «ձանոქարჯորոქჟიონ...» 616-րդ ყარերეოქჟიონը:

Թարկվել, ընդ որում այնքան հիմնավոր, որ նրա վերականգնումն արդեն հայ համայնքն այլևս ավելորդ է համարել՝ մանավանդ Վանքի ընդգրկուն եռանավ աղոթարանի մոտ գտնվելու պարագայում:

Թեկենամ եկեղեցին հիշատակված չէ 1827 թ. Թիֆլիսում գործող 13 եկեղեցիների շարքում, այլև գլխավորում է 10 ավերակվածների կամ նորոգման կարոտ նկատվածների ցանկը<sup>1</sup>: Այն չի ընդգրկված նաև Թիֆլիսում գործող 18 եկեղեցիների 1830 թ. Վրաստանի Հայոց առաջնորդի պաշտոնակատարի հրապարակած եկեղեցիներ ցուցակում<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս այստեղ բերվող 1827 թ. ցանկը:

<sup>2</sup> Տե՛ս Սիմէոն արքեպ. Բզնունեանցի ստորագրած ցուցակը:

## ՍԱՀԱԿԱՇԵՆ ԵԿԵՂԵՑԻ

Անունն արդեն հուշում է, որ կառուցված է Սահակ անուն մեկի կողմից: «Թիֆլիսի Հայոց եկեղեցիների պատմության նյութերի» մեջ Սահակաշենին վերաբերող մեկ ամփոխ պարբերություն կա. «Սկզբնաւորութիւն Սահակաշէն եկեղեցւոյն եղեալ է ի թուին Փրկչին 1703-ին ի ժամանակս Վախտանգ արքային Վրաց, որոյ հրամանաւ շինէ գոյն եկեղեցիս ազնիւ Աբեղինեան Խօջայ Աւետիքի որդի բժշկապետ Սահակն, և զիւր անուն եղեալ ի վերայ եկեղեցւոյն, որ և կոչի Սահակաշէն»<sup>1</sup>:

Խոջա Ավետիք Աբեղինյանի մասին պատմող աղբյուրներ մեր ձեռքի տակ չկան, բայց Թիֆլիսի Հայոց պատմության այլ նյութերից գիտենք, որ նույն տիտղոսն էին կրում Նորաշենի, Սուրբ Ստեփանոսի, Խոջիվանքի գերեզմանոցի, Վերեի Կամուրջի և որոշ այլ շինությունների կառուցողները, որոնք բոլորն էլ ժէ. դարում Նոր-Ձուղայից Թիֆլիս հաստատված նշանավոր տոհմեր էին, գերազանցապես առևտրական գործունեությունը զբաղվող գերդաստաններ: Խոջա Ավետիք Աբեղինյանը նրանցից մեկն է, որը հասցրել է վրաց արքաներից ազնվականության աստիճանի արժանանալ<sup>2</sup>: Եկեղեցին կառուցողը նրա որդի բժշկապետ Սահակն է: Վրաստանի կենտրոնական արխիվում պահվող վավերագրի հիման վրա (Փոնդ 1448. (226), № 3897) Մ. Բերձնիշվիլին եզրակացնում է. «Այս Սահակի որդի բժիշկ Հովհաննեսի (Օհանեզա) որդի Աբեղինյանց բժիշկ Ստեփանոսը վրաց դավանությունը ընդունեց և սույն պատճառով նախնիներից ժառանգած եկեղեցու ավագերիցությունից հրաժարվեց: Նա ավագերիցությունը փոխանցեց Բայանդուրանց Տեր Ասատուրին, իսկ ինքը Աղա-Մահ-մադ-խանի հարձակման ժամանակ այրված այս եկեղեցու վերականգնմանը ձեռնամուխ եղավ: Այս տեղի ունեցավ 1799 թվին»<sup>3</sup>:

Սահակաշենի եկեղեցին հիշատակված ենք գտնում Ղ. Ինճիրճյանի թվարկված հայկական եկեղեցիների շարքում 4-րդ համարի տակ և այստեղից ենք տեղեկանում, որ այն «Ս. Աստվածածին»

<sup>1</sup> Տե՛ս ստորև նյութերի շարքում:

<sup>2</sup> Վրաց իշխանական տների և ազնվականների լիակատար ցանկ տե՛ս «ქართლ-კახეთის თავადები და აზნაურები», տბ., 2005.

<sup>3</sup> Յամոսա ԶյճմնոՅցոլլո, տժոլլոսոս ևսեց..., թց. 23. վրացերեն վավերագրերի համարներն ու տեղեկությունները այս աշխատությունից ենք քաղում:

նվիրում է ունեցել<sup>1</sup>, սակայն նրա բացակայությունը 1829-ին գործող եկեղեցիների Սիմեոն արքեպ. Բզնունյանցի վավերացրած ցուցակում վկայություն է, թե նրա վերականգնումը դեռ չի ավարտվել:

Ուշ միջնադարի Թիֆլիսի միկրոտոպոնիմիկան ուսումնասիրելու առումով, այդ թվում և այսօր չպահպանված Սահակաշենի տեղորոշման համար, ուշագրավ է Թ. Բերիձեի բերած Ներքի թաղի (Քվեմո ուբանի) հետևյալ նկարագրությունը. «Ներքի թաղը այն է՝ ամբողջությամբ Ղարա մզիվանի ապարանքից բռնած պարսպի ընթացքով Կոզմասի թաղ, Մողնիսի թաղ, Ղորղանանց և Փիթոենաց թաղ, Մանդենանց թաղ և նրանից ներս ընկած Մելիքի պալատից գալով Փեթխայինի Քարափի թաղ, նրանից վար իջած մինչև Մեյդան և Մեյդանի թաղ: Քաղաքի մուշրիբ Ավթանդիլի տանից իջնում գալիս է Շերգիլանց թաղ, Չիթխանցի թաղ, Մելիքի հին թաղ, Բեհբուլթի տանից անցնում է Սահակաշենը և իջնում Մեյդան...»<sup>2</sup>: Այստեղից իրավացի է մակաբերել, թե Սահակաշենը գտնվել է Նորաշենի և Թաթարի մեյդանի միջև<sup>3</sup>:

Հայտնի է, որ այժմյան Լեսելիձե փողոցի վրա էր գտնվում Թիֆլիսում հայտնի «Հայոց շուկան» (Армянский базар): Քաղաքի այս հատվածը բավական շուտ ենթարկվեց վերակառուցման ու փոփոխություն: Ինչպես երևում է՝ 1795 հրդեհումից հետո ձեռնակված նորոգումները արդյունավոր չեն եղել, և այդ պատճառով է 1830 թ. 18 գործող եկեղեցիների ցանկում Սահակաշենը չի ներկայացված: Թե ստուգապես ե՞րբ է այն դադարել գոյություն ունենալուց՝ մեզ հայտնի չէ:

<sup>1</sup> Մարի Բրոսեն իր ունեցած տեղեկությունը քաղել է Ինճիճյանի աշխատությունից և նույնպես հիշատակել 4-րդ համարի տակ (տե՛ս M. Brosset, Voyage..., p. 2), Մ. Բերձենիվիլին Սահակաշենը համարում է Հովհ. Մկրտչի անվան եկեղեցի (տե՛ս նրա աշխատ., էջ 30):

<sup>2</sup> Տե՛ս Յաճոնա Ծղոմեոսյան, նշվ. աշխ., էջ 28-29:

<sup>3</sup> Անդ:

## ՏԻԳՐԱՇԵՆ ԵԿԵՂԵՑԻ

Ակներևաբար տարօրինակ անվանում է, որ պայմանավորված է բարբառներից մի քանիսում գործածվող «Ջիգր»-ի (ոխ, ոխակալուծթյուն, «ինադ» Կարնո բբբ.) բառով, ժողովրդական լայն կիրառություն գտնելու պատճառով մասամբ հասկանալի դարձած նաև Թիֆլիսի խոսակցական վրացերենում<sup>1</sup>: Այս եկեղեցին ևս կառուցվել է Ներքի թաղի հայաբնակ միջավայրում, մերօրյա Լեսելիձե փողոցի աջ կողմում (այս փողոցով բաժանվում էին Ներքի և Վերին անունները կրող շուկաները, այդ պատճառով էլ փողոցը երկար ժամանակ Շուկայամեջ կամ Հայոց բազար անունն էր կրում (Շուկաբազար-ի կամ Սոմխիս բազարի):

Եկեղեցու շինարարությունը պատմությունը ծանոթանում ենք Ջիգրաշենի կամ Ջգրաշենի ավագ քահանա Տեր Սիմեոնի 1815 թվականին Ներսես արքեպիսկոպոսին հասցեագրած հաշվետալուծությունից<sup>2</sup>: Ըստ այդմ՝ եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1654 թ. Վախթանգ Շահնավազի թագավորության (Վախթանգ Ե., 1658-1675) և, ըստ երևույթին՝ Հակոբ Զուղայեցու հայրապետության տարիներին (1655-1680): Այս պարագային 1654-ը ենթակա է սրբագրության՝ հավանաբար պիտի ունենայինք 1659 (4 և 9 թվերը դյուրին շփոթելի են): Եկեղեցու ավագ քահանա Տեր Սիմեոնի «ի ծերոց լսած» ավանդության համաձայն Ս. Նշան եկեղեցին կառուցելիս նրա միաբանությունից բաժանվել են Տեր Բարսեղ և Տեր Դավիթ քահանաները և ձեռնամուխ եղել հետագայում Ջգրաշեն կոչված եկեղեցու շինարարության: Սուրբ Նշանի պատմության կապակցությամբ նկատեցինք, թե նրա շինարարական արձանագրության 1703 թվականը ի կորդո հիմնարկությանը չի վեհաբերում, որովհետև այն իբրև գործող եկեղեցի հիշատակված է Շարդենի ճանապարհորդական գրառումներում (1673 թ.), իսկ

<sup>1</sup> Նման կազմության տեղանուն կա Ջավախքում (գյուղ Ջիգրաշեն):

<sup>2</sup> Տե՛ս այստեղ «Թիֆլիսի Հայոց եկեղեցիների պատմության նյութերի» շարքում: Ի դեպ, Ջգրաշենի եկեղեցու պարսպից ներս հարավային պատի մոտ գտնվող գերեզմանի մատնացուցման համար պատին ագուցված է եղել մարմարե տախտակ՝ հինգ տողանոց արձանագրությամբ, «ՀԱՆԳԻՍՏ ՈՍԿԵՐԱՅ / ՄՈՎՍԷՍ / ԱԻԱԳ Բ(Ա)Հ(Ա)Ն(Ա)ՅԻ / ՍԱՅԱԹՆԵ(Ա)ՆՅ / 1810-1883»: Խոսքը Սայաթ-Նովայի թոռան մասին է, որը պապի անունը ազգանուն է դարձրել: Արձանագրությունը կարդացել և հրատարակել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը (տե՛ս Գ. Թեմոսյան-Սեյդ, ՆՈՒՆՈՒՄՅԱՆ ՎԵՐՈՒՄՆԵՐԸ, ԵՐԵՎԱՆ, 1930, թթ. 159):

այստեղ էլ արդեն մինչև եկեղեցու կառուցումը գոյություն ունեցող միաբանությունից անվանապես նրանից հեռացած քահանաների մասին է խոսվում: Ուրեմն հիրավի Ս. Նշանը ավելի վաղ է կառուցված, քան արձանագրությունն է հիշում:

Այսպիսով, Ջիզրաչենի շինարարության 1659 թվականը մենք հիմնավորված ենք նկատում, ինչպես որ պատճառաբանված ենք համարում այդ անվան մեկնաբանության առիթը (երկու հեռացած և հիմնարկեք կատարած քահանաներ) թիֆլիսահայոց միջավայրում: Տեր Սիմեոնը նույնիսկ մասնավորեցնում է, թե ովքեր են եղել եկեղեցու համար տարածք հատկացնողները (Փիրղոլյանք և Տեր-Դանիելյանք): Ժողովրդական գոհողություններով շինարարությունը հասցվել է «մինչ ցերկուս մարդաչափս»: Այս վիճակում մնացել է «բազում ամք», մինչև որ գորեցի Բեժան-բեկը վախճան թուման է կտակում, որով շինարարությունը հասցվում է «մինչև ի թաղն»: Այսպես մնում է մինչև Հովհ. Ամատոնեանի (նույն Ամատունին է) թիֆլիս գալն ու 1777 թ. «նորոգ շինելն ընտրելը»: Սակայն դարձյալ ավարտի չի հասնում: Տեր Սիմեոնը կարողանում է համոզել Հովհաննես աղայի որդուն՝ շարունակել հոր սկսած շինարարությունը. այս ընթացքում մեծացվում է եկեղեցին արևմտյան կողմից և ավարտի հասնում «ի մէջ եօթն ամի»:

Ղ. Ինճիճյանցի նկարագրության տարիներին Ջիզրաչենը վաղուց արդեն ավարտուն և գործող եկեղեցի էր: Նույնը կարելի է ասել և Մ. Բժշկյանցի այցելության տարիների մասին: Վերջինս հետաքրքրվել է նրա անվան բացատրությամբ և Աստվածածնին նվիրված լինելու փաստով: Մ. Բրոսեն արդեն գրականությամբ հայտնի նկարագրությանը ավելացնում է Ջիզրաչենի շինարար մահտեսի Հովհաննեսի արձանագրությունը՝ ճշգրտման կարոտ որոշ ընթերցումներով.

ՇՆՈՐՀԻԻՆ ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՄ ՄԵԾ ՆԱԽԻՋԵՒԱՆՈՒ  
 [ՆՈՒՌ]ՆՈՒՍՅԻ\* ԱՋԱՐԵԱՆ ԱՄԱՏՈՒՆՈՅ ՊԵՏՐՈՍԻ  
 ՈՐԴԻ ՄԱՀՏԵՍԻ ՅՈՎՀԱՆՆԷՍՍ,\*\* ԵԿԻ Ի ՏԻ-  
 ՐԱՊԱՀ ՔԱՂԱՔՍ ԵՒ ՏԵՍԻ ՔԱՅՔԱՅԵԱԼ  
 ՋԱՅՍ ԱԻԵՏԵԱՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑԻՍ  
 ԵՒ ԱՊԱԻՆԵԱԼ ՅԱՄԵՆԱԿԱՐՈՂՆ ԱՍՏՈՒԱԾ՝  
 ՁԵՐՆԱՐԿ ԱՌԻ ՇԻՆԵԼ Ի ՏԵԱՌՆԱՊԱՐԳԵԻ

\* Մ. Բրոսեն կարդացել է «սնուցի» և հարցականով ծանոթագրել «անուանի»:

\*\* Բրոսեի մոտ վրիպակով՝ «Հովհաննէսս»:

ԸնՁից ՄԵՐՈՑ ՆԱԽ ԶԱՐԵՒՄՏԵԱՆ  
 ԿԱՍԻ [Պ] ՈՐՄՆ Ի ՀԻՄԱՆԷ, ԱԻԵԼԱՄԲ  
 ՏԵՂՈՑ, ԵՒ ԱՊԱ ԶԵՐԵՍԻՆ ՈՐՄՆ Ի ԿԻ-  
 ՍՈՑ, ԵՒ ՍԿՍԵԱԼ ՀԱՆԴԵՐՁ ԿԱԹՈՒՂԻԿԷ [ԻԻ]Ն  
 ԵՒ ԶԱՆԳԱԿԱՏԱՄԲ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ [Յ]ՕՐԻՆՈՎԱԾ-  
 ՈՎՔ: ԱԻԱՐՏԵՑԱԻՆ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
 ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՂՈՒԿԱՍՈՒ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՒՂԻ-  
 ԿՈՍԻՆ ԵՒ Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՐԻՆ ՎՐԱՑ  
 ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԱԿԼԵԱՑ ՔՐԻՍՏՈՊՍԱԿԻ, Ի ՌՄԼԳ (1785)  
 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ, Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՄՈՒՏՆ<sup>1</sup>:

*Այստեղ տրված թվականը համապատասխանում է Տեր Սիմեոնի նշածին. 1777-ին 7 գումարելով կունենաք 1784 (մեկ տարվա տարբերությունը կապված է Սեպտեմբեր ամսվա որ տարվա մեջ հաշվելու հանգամանքով:*

*Դատելով Զգրաչենի պահպանված լուսանկարով, եկեղեցու արևմտյան ճակատը գտնվել է մայթեզրին, հարևան երկհարկանի շինություն հետ սրահի ունեցած հավասար բարձրությունը: Նոր ժամանակներում քաղաքի այս մասն ազատվեց ավանդական շուկայական կուտակումից, այդ իսկ առիթով սկիզբ առած նոր շինարարությունն ու տարածքի վերամշակումը ուրիշ կառույցների հետ Լեսելիձեի փողոցն «ազատեց» և Զգրաչեն եկեղեցուց՝ ապագա ուսումնասիրողին թողնելով բացիկ-լուսանկարը:*

<sup>1</sup> M. Brosset, Voyage..., p. 19-20:

7 - Տիւ Թիֆլիսի հայոց եկեղեցիները

## ՔԱՍՈՅԵՆՑ ԵԿԵՂԵՑԻ

«Ցանկ Հայոց եկեղեցեաց ի Թիֆլիս և շրջակայից» ցուցակում Քամոյենց տոհմին հատկացվող երկու եկեղեցի է հիշվում՝ «Սուրբ Կարապետ Քամոյենց, շինեալ ի Տէր Գաբրիէլէ 1778 և նորոգեալ ի Տէր Ահարօն թողանէ նորա 1804 [թուին]», իսկ երկրորդ եկեղեցին ներկայացված է այսպես. «Սուրբ Գեորգ Քամոյենց. տեղն ընծայեալ է Բէժանբէկէ և շինեալ ի Տէր Գաբրիէլէ և նորոգեալ ի Կարապետի Խատակովեանց»<sup>1</sup>: Քանի որ երկու դեպքում էլ շինարարութիւնը կապվում է Տեր Գաբրիէլի անվան հետ՝ կարելի է մտածել, թե խոսքը մեկ նույն եկեղեցու մասին է, բայց այս պարագային քննելի է մնում նորոգող Տեր Ահարոնի և Կարապետ Խատակովեանցի ստուգապես չնույնացող խնդիրը: Առեղծվածային մեկ ուրիշ վկայութիւն էլ կա. Մ. Բրոսեն եկեղեցու վրա կարգացել է.

ՇԻՆԵՑԱԻ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻ  
ԵԿԵՂԵՑԻՍ ՅՈՐԴՈՐՄԱՄԲ ՏԵԱՌՆ  
ՅԱԿՈՒ ԱԻԱՔ ՔԱՀԱՆԱՅՍ ԵԻ  
ԱԻԱՔ ԳԱՄԱՀՕԻՆՑ ԱՄ [՞] ՕԳ-  
ՈՍՏՈՍԻ ԿԱ ... Թ ԹՄԼԷ (1788)<sup>2</sup>:

Որ վերծանութիւնը բավական անհաջող է՝ կարելի համոզվել ոչ միայն բազմակետերից, այլ նաև ոճական անհարթութիւններից (քահանայա]քահանայիս, աւաք Գամահօինց]աւազայ Գամահօինց ևն), բայց եղածից ինքնին պարզ է, որ Տեր Հակոբը իր տոհմի ավագն է և ոչ թե շինել, այլ հորդորել է շինարարութիւնը: Առեղծվածն այն է, որ այստեղ արդեն եկեղեցին Սուրբ Կույսին է նվիրված, իսկ արևելյան պատին առկա է Աստվածածնի քանդակ՝ արձանագրութեամբ.

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՍՈՒՐԲ ԿՈՅՍ,  
ՀԻ (կարդա՝ ԼԵՐ - Պ. Մ.) ԻՆՁ ԱՊԱԻԷՆ ԵԻ ՅՈՅՍ:

Այս հակասութիւնները լուծող երկու բացատրութիւն կարող է լինել՝ խոսքը կամ տարբեր խորանների նվիրումներին է վերա-

<sup>1</sup> Տե՛ս ստորև:

<sup>2</sup> M. Brosset, Voyage..., էջ 11:

բերում, կամ տարբեր հատվածների շինարարության, ինչի վկայություն կարող են դիտվել առկա երեք թվականները՝ 1778, 1788, 1804: Բրոսեի նկարագրմամբ եկեղեցու սրահը փոքր է եղել, բայց և պատին ունեցել է երկրորդ արձանագրություն:

ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ ՔԱՋ ՋՈՐԱԻՈՐ,  
ՅՈՅՑ ԻՆՁ ԸԶՇԱԻԻՂՆ ԼՈՒՍԱԻՈՐ՝:

Ի դեպ, Թիֆլիսի ոչ բոլոր եկեղեցիներն ունեին ավագ քահանայության իրավունք՝ ըստ նախադասության: Այն ունեցող հինգ եկեղեցիներից մեկը Քամոյենցն էր: Պատճառը, կարծում ենք, նրա տեղագրությունն էր (այն գտնվելիս է եղել այսօրվա մետրոյի «Թավիսուփլեբիս մոեղանի» (Ազատության հրապարակ) կայարանի դիմաց, նախկին Երևանյան/Լենինի հրապարակի անմիջական մերձությամբ, հրապարակից դեպի հյուսիս ձգվող Կոլովինսկու/Ռուսթավելու պողոտայի սկզբում): Քամոյենց Սուրբ Գեորգը 1827 թ. Ներսես արքեպիսկոպոսի սահմանած «Կարգ եկեղեցաց Հայոց ի Տփլիս» 13 հիմնական եկեղեցիներից 8-րդն էր: Այդ նույն թվարկման համարի տակ է եկեղեցին ներկայացված նաև էգն. Իոսելիանիի նկարագրության մեջ. «Տփղիս քաղաքի դրսում (իմա Գարեուբանի / Տափիթաղում - Պ. Մ.) կառուցված է մի եկեղեցի գմբեթավոր, որ Քամոյանց ժամ է կոչվում, հանուն Սուրբ Գեորգի, բավականին մեծ, կարմիր աղյուսով և քարուկրով շինած քաղաքացի (մոքալաք) Խուղինովի և Տեր Գաբրել Քամուկի ծախքով 1727 թվին [°], ծածկված է կղմինդրով»<sup>2</sup>: «Բավական մեծ» կոչելիս էգն. Իոսելիանին, հավանաբար աչքի առաջ ունի եկեղեցու կրկնակի գմբեթ ունենալն ու արտաքին ծավալները:

Կառույցը գոհ է գնացել պողոտայի բարեկարգմանն ու «անաստվածություն» գաղափարախոսությունը:

<sup>1</sup> M. Brosset, նշվ. աշխ., էջ 12:

<sup>2</sup> Տե՛ս այստեղ «Նկարագրական վկայություններ» բաժնում:

## ՏԱՓԻԹԱՂՈՒՄ ԵՂԱԾ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Գարեուբանում կամ Տափիթաղում եղած և չպահպանված եկեղեցիների թվարկումը գրեթե ավարտած կլինենք՝ եթե հիշատակենք երկուսը ևս՝ Զրկինանց ու Կոզմասի և Դամիանոսի եկեղեցիները: Նրանցից երկրորդը գտնվելիս է եղել «այսօրվա Էնգելսի փողոցի սկզբին դեպի հարավ»<sup>1</sup>: Ավելի հարավ գտնվում է նշանավոր Մուղնին և իր անունով կոչվող թաղը: Մեր ձեռքի տակ եղած աղբյուրները այս եկեղեցու կառուցման մասին տեղեկություն չեն բովանդակում, այլ պարզապես հիշատակում են<sup>2</sup>: Նույն կերպ է վարվել նաև ահադ. Մ. Բրոսեն՝ 20 անուն բովանդակող հայկական եկեղեցիների ցուցակում իբրև 11-րդը հիշելով Կոզմաս և Դամիանոսը (*Cozma et Damien*)<sup>3</sup>: Նրանից տասնամյակներ առաջ Թիֆլիս այցելած Յոհաննես Գյուլղենշտեդտը ևս գոհացել է Հայոց 20 անուն եկեղեցիների շարքում 12-րդ անվանելով «Կոզմանք»<sup>4</sup>: Կասկած չունենք, որ ԺԼ.-ԺԹ. դարերի վրացական արխիվային նյութերն ավելի մանրակրկիտ ուսումնասիրելու պարագայում երևան կբերվեն մեր պատկերացումները լրացնող նյութեր, ինչպես, օրինակ, այդ կատարվել է Մամիսա Բերձնիշվիլու գրքում Զրկինանց եկեղեցու վերաբերմամբ<sup>5</sup>: Զրկինանց մահտեսի Սահակը Տափիթաղի բնակելի տարածքը դեպի հյուսիս ընդարձակող առաջնեկներից է: «Նա ԺԼ. դարի սկզբին, գրում է Մ. Բերձնիշվիլին, վավերագրի բառերով որ ասենք՝ «Քաշվեթի [եկեղե-

<sup>1</sup> Յոհաննես Զյոմբոնցով, նշվ. աշխ., էջ 28:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, «Յանկ Հայոց եկեղեցեաց ի Թիֆլիս և շրջակայից» 36 համարանոց ցանկի 29-րդ համարը:

<sup>3</sup> M. Brosset, *Voyage...*, p. 2-3.

<sup>4</sup> Տե՛ս ստորև նրա «Ճանապարհորդություն» դրվագը:

<sup>5</sup> Եթե ընթերցողին անհրաժեշտ է տեղեկանալ «Անարծաթ» մականունն ստացած այս երկրորդակ եղբայրների մասին, ապա երկուսն էլ բժիշկ էին և մերժում էին բժշկության համար որևէ վարձ ընդունել: Ամբաստանությունը նահատակվեցին Դ. դարի սկզբներին: Տիեզերական եկեղեցին նույնանուն ուրիշ սրբեր էլ է ճանաչում: Մեզ զբաղեցնող սրբերի վարքը Հայոց ու վրաց հնագույն թարգմանական երկերից է (տե՛ս «Լիակատար վարք ու վկայաբանություն սրբոց», հատ. Ժ, Վենետիկ, 1814, էջ 222-231): Ի դեպ, Սուրբ Շուշանիկի վախճանի օրը՝ հոկտեմբերի տասնյոթին Սուրբ Կոզմասի և Դամիանոսի հիշատակի օրն էր, ինչպես վկայում է Շուշանիկի վրացերեն վարքի ընդարձակ խմբագրությունը (տե՛ս Պարույր Մուրադյան, Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը, Երևան, 1996, էջ 86):

ցուց] անդին իրենց համար հանգստարանային եկեղեցի շինողներին է (Խոսքը, հավանաբար, Վերելի ս. Խաչ եկեղեցու մասին է- Պ. Մ.), շուրջը այգեկետ տեղանքներով ու ջրով\* : «Մեծ ծախսով հեռավոր քարափից քարուկրե խողովակներով ջուր է բերել եկեղեցի և այգիներ ու ավազաններ պատրաստել» : «Զրկինանց Սահակի կառուցած եկեղեցին, այսպես կոչված Զրկինանց եկեղեցին, գոյություն ունեցավ մինչև վերջին ժամանակներս : Այն գտնվում էր մերօրյա «Զարյա Վոստոկայի» խմբագրություն\* : Այս եկեղեցու կառուցումը անհեղինակ մի ձեռագիր դնում է 1717 թվականին\*\* : Բրոսեն այս եկեղեցու շենքի վրա կարդացել է 1713, ինչն էլ, նրա խոսքով, այս եկեղեցու հիմնադրություն կամ նորոգություն ժամանակը պիտի նշանակի : Սակայն քանի որ մեր վավերագրերը այս եկեղեցու հիմնարկումը ժԸ. դարի առաջին քառորդում ապրած Զրկինանց Սահակին են վերագրում, ուստի 1713 թվականը պիտի նկատենք այս եկեղեցու կառուցման (և ոչ նորոգության) ժամանակ»<sup>1</sup> :

Հիրավի՝ եկեղեցու հարավային մուտքի վրա Մ. Բրոսեն կարդացել է ՌՃԿԲ թվականը (1713), որը, ինչպես նկատված է, Զրկինանցի հիմնարկությանն է վերաբերում : Այն լիակատար հաստատում է գտնում վերը հիշված 36 անուն ցանկում, ուր ասված է. «16. Սուրբ Գեորգ Զրկինենց : Ղամազենց Զուրաբի որդի մահուտի Պետրոսս և իմ եղբայր Յովսեփն, Սահակն և Դաիթն, որ շինեցաք այս նոր հանգստարանս Սուրբ Գեորգայ եկեղեցին՝ յիշատակ մեզ և մեր ճնողացն ի թագաորութեան Վախթանգի, թուին 1713»<sup>2</sup> :

Բարբախտաբար, Մ. Բրոսեն չի գոհացել միայն արձանագիր թվականը նշելով, այլև վերծանել ու բնագրով և թարգմանություններ է բերել է այստեղ տեսած բավական տեղեկատու երկու տապանագիր.

1) Եր նյրսյեսս Մջլո | յորայոջսս ժյ | սաճանճար օճյլո, սսմարսճլոս [°] մսսնյրոճլոսո ճս ժյ | ճսմճարճո Մյլոսս յճ | ճս

\* Հղումը՝ Վրաստանի Կենտրոնական արխիվ, 1450 ֆոնդ, տետր № 41, վավ. № 250:

\*\* Հղումը՝ Վրաստ. Կենտր. արխիվ, 1450 ֆոնդ, տետր № 52, վավ. № 98:

\*\*\* Նկատենք, որ 70-ական թվականներին խմբագրությունը մի քիչ հյուսիս գտնվող այլ շենք տեղափոխվեց - Պ. Մ.:

\*\*\*\* Հղումը՝ Զեռ. ինստ. Տ-3034: Խոսքը, հարկավ, մեր սույն աշխատության մեջ բազմիցս վկայակոչված և «Վավերական վկայություններում» թարգմանաբար բերվող էգն. Իոսելիանի 1837 թ. նկարագրության մասին է:

<sup>1</sup> Յ. Երմոնիճյոց, նշվ. աշխ., էջ 44:

<sup>2</sup> Տե՛ս ստորև:



Շահրիմանյանի կենսագրության հետ կապված մի առեղծված. առանձին առիթներով անվանի բժիշկը իրեն ներկայացնում է «Լոյինով» ազգանունով, թեև նրա «Շահրիմանյան» տոհմանունը վաղուց և բազմաթիվ վկայություններով հաստատված է: Պրոֆ. Ստելա Վարդանյանը սրամիտ լուծում էր առաջարկել. «չահմ»-ը արաբերենում «ճարպ» է նշանակում, ինչը հարավուսական միջավայրում «λοιύ» է թարգմանվում, ուրեմն Ստեփանոս Շահրիմանյանը պարզապես թարգմանել է իր ազգանունը Λοιύνοս<sup>1</sup>. Այժմ պարզվում է, որ այդպես է հորջորջվել նրա տոհմը՝ Լոյինանք, որի ներկայացուցիչները Նոր Զուղայից թիֆլիս էին տեղափոխվել բժշկապետի ծնունդից տասնամյակներ, գուցե և մեկ-երկու դար առաջ<sup>2</sup>: Հայոց միջավայրում բավական հաճախ տոհմանունը չի նույնանում մերօրյա ազգանվան հետ (օրինակ՝ Քոչոյենք, բայց Մուրադյան):

Այս դրվագը վերջացնելուց առաջ անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ ակադ. Մ. Բրոսեն «Ս. Գևորգ հայկական փոքր եկեղեցի է» հիշատակում «Փոստի փողոցից ներքև գտնվող» Ղափլանյան/Ղափլանիշվիլի իշխանական ընտանիքի պալատին կից, կառուցված 1813 (ՌՄԿԲ) թվին ընտանիքի ճորտ Դավիթ քահանայի համար<sup>3</sup>:

<sup>1</sup> Ստելա Վարդանյան, Հայաստանի բժշկություն պատմություն..., Երևան, 2000, էջ 223: ԺԸ. դարի վրացերեն մի շարք վավերագրերում այլևայլ առնչությամբ հիշատակվում են այս (Լոյինանց) տոհմի ներկայացուցիչներ Ասատուրը (1719 թ.), Գիգորը, Ստեփանոսը, Հունանը, Գաբրիելը (1733 թ.), Խաչատուրը (1751) և այլք, մեկ մասը հայկական կնիքներով (տե՛ս «Ջուշթյեթյեթո տծօցօսօն օնթօրօօ-նօտյօն (XVI-XIX նն.)», Բժշկ. թղթեր, 1962, թ. 117-180, 238.

<sup>2</sup> Ստ. Շահրիմանյանի մասին տե՛ս Կ. Ս. Մարձջանյան, «Ботаника или флора Армении Степаноса Шариманяна» (Из истории ботаники в Армениии на рубеже XVIII-XIX вв.).

<sup>3</sup> M. Brosset, *Voyage...*, p. 13. Հմմտ. Ս. Մ. Մուրադյան, Կ. Սոց., էջ. 105-016.

## ՍԵՅՂԱԲԱԴԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Թաբոր լեռան հարավ-արևելյան լանջերին հաստատված Սեյ-դաբադ բնակավայրը հարուժ էր հին Թիֆլիսի միջնաբերդին՝ նրանից հարավ գտնվելով: Թաղամասը վավերագրերում և ժողովրդական կենդանի հիշողության մեջ մերթ «Բաղնիսների թաղ» է հորջորջվում, մերթ «Սեյդապատ» կամ «Խարփուխ»: Իհարկե, այս անունները ոչ միշտ են իրար ծածկում և հաճախ մեկ ամբողջի հատվածներ են՝ դերակատարության շեշտադրումներով: Կուրի առափնյա շերտը հայտնի էր իր այգիներով, տեղ-տեղ ջրաղացներով ու դեպի բուն քաղաք նեղ անցումներով: Մասնավորապես նրանցից մեկը բացվում էր քաղաքի արևելյան պարսպից՝ Ծավկիսի ձորի բերանում և հայտնի էր «Բաղնիսի դուռ» անունով<sup>1</sup>:

Հին Թիֆլիսի այս թաղամասը քաղաքը հարավի և հարավ-արևելքի երկրների ու բնակավայրերի հետ կապող հիմնական ճանապարհն էր, որը և պատճառ դարձավ Աղա-Մահմեդ-խանի արշավանքի օրերին այնքան ավերածության ենթարկվելուն, որ գրեթե անբնակ էր դարձել (ողջ թաղամասում 34 ընտանիք էր մնացել):

Վախուշտի տեղեկությամբ այս թաղամասում պարսից շահերը «սեիդ» ցեղի պարսիկներ բնակեցրին, ուստի տեղանքը երկար ժամանակ Սեյդաբադ էր կոչվում<sup>2</sup>:

Ռուսական տիրապետության շրջանում, մասնավորապես Երմոլովի կառավարչության օրոք, Սեյդաբադը դարձյալ Թիֆլիսին միացվեց և քաղաքային շրջապատույտ ընդգրկվեց: Թաղամասի հին անունը կամաց-կամաց մոռացության տրվեց, և բնակիչներն սկսեցին այն Խարփուխ կոչել: Հին Թիֆլիսի նորօրյա ուսումնասիրողները համոզված են, որ «այս բառը հայերեն է, տեղանքը նշյալ անունն ստացել է Թաբորի լեռան ստորոտում, Գորխանի մոտիկ (Թաթարական գերեզմանոց) գտնվող պաշտամունքային նշանակության քարի պատճառով, որի վրա պատկեր էր նկար-

<sup>1</sup> Ավելորդ է ենք նկատում, ասել, որ ուշ միջնադարի ավարտին գործող 6 բաղնիսներից կեսից ավելին տիրացել էին Թիֆլիսի մեծատուն հայ ընտանիքները (Մելիքի բաղնիս, Թամաչևի, Միրզոևի... ևն):

<sup>2</sup> Յանշևիցի, «Երջրա Նաբյոցոնա Նախրոցյեղոնա, տձ., 1973, (շ. Ե., IV), թ. 334.

ված: «Խարփուխ» հայերեն լեզվով «սուրբ» (հարբուխ - Պ. Մ.) է նշանակում: Ուստի Թիֆլիսեցի քրիստոնյա բնակիչները հարբուխով բռնված երեխաներին տանում էին նշված քարի մոտ: Ուխտավորները իբրև նվեր իրենց հետ տանում էին կտորեղենից պատրաստված տիկնիկներ, որոնց կողքից տոպրակ (խուրջին) էր կախված, իսկ տոպրակի գրպաններում շաքարի կտորներ դրված...»<sup>1</sup>:

Ազգագրական առումով այս ամենը հետաքրքիր է և ուսանելի, բայց հազիվ թե մեկնությունը ճիշտ լինի. կարծում ենք, որ այն ժողովրդական ստուգաբանության մատնացուցելի օրինակ է:

Եվ այնուամենայնիվ, «Խարփուխ» տեղանվան հիշյալ բացատրությունը գալիս է վկայելու, որ հին Թիֆլիսի այս թաղամասում ևս այլ էթնիկական հանրությունների հետ ապրել են նաև հայեր: Եթե այդպես է, ուրեմն այստեղ ևս հայերը պաշտամունքային կառույցներ պիտի ունենային (հարկավ խոսքը պատկերակիր քարին չի վերաբերում):

Հիրավի, այս թաղամասում է գտնվել հայոց Սուրբ Սարգիս եկեղեցին: Սույն կառույցի նշանակության ապացույցներից մեկը եկեղեցուց վերև ձգվող կիրճի «Սուրբ Սարգսի կիրճ» անվանումն է: Եկեղեցուց պահպանվել են բնակելի կից կառույցներին հենարան ծառայող պատերի հատվածներ: Այն գտնվել է այսօր Իոսեփ Գրիշաչվիլու անունը կրող երկարավուն փողոցի վրա, ուր և հիմնվել է հին Թիֆլիսի գրական թոհոբոհի հայտնի գիտակ ալադ.- բանաստեղծի թանգարանը: Մ. Բրոսեն այն ընդգրկել է իր կազմած ցանկում և տեղորոշել բաղնիսների դեմ-հանդիման (*visa-vis des bains*)<sup>2</sup>:

Նախորդ գլուխներում բազմիցս հղված 36 անուն ընդգրկող ցանկում Սուրբ Սարգսի անունը կրող երկու եկեղեցի է հիշվում առանց գտնված տեղը հիշատակելու. «15. Սուրբ Սարգիս. կայ ի ճակատին գրեալ այսպէս. «Աստուած յիշեա եկեղեցոյս շինող Սաքէ-օղլան, նորա որդի Տէր Դաւիթին և Գրիգորն և փեսայ Յօհաննէսն, թուին 1770»: Հաջորդը նույն ցուցակի 23-րդ համարի տակ է. «Սուրբ Սարգիս շինեալ է Եւաւանգուլենց Գիօրգին իրեանց հանգստարան: Ծինեալ է ի ժամանակս Ռօստօմ խանին թուին Հայոց ՌճԿԵ. (1716) (!). մէկ պատն որ քակեալ է Պապայ Մոլդորուքն է նորոգեալ, որոյ թիւն ոչ գոյ»:

<sup>1</sup> Երզնկյան Գ. Գրքեր, նշվ. աշխ., էջ 81:

<sup>2</sup> M. Brosset., *Voyage...*, p. 3 (№ 14), 26 (№ XXVII).

Այս երկուսից մեկը կոչվել է նաև «Սուրբ Սարգսի վանք» և պատկանել հայրապետական աթոռին և ոչ վիճակավորին<sup>1</sup>: Մեկ այլ թվական է նշված ստուգապես Սեյդաբաղում գտնվող Սուրբ Սարգսի կառուցման մասին էջն. Իոսելիանիի նկարագրությունների մեջ. «Բաղնիքների կամրջից» հայնկույս, մեծ Դարիվեր գնացող խճուղու վերջում կան այլևայլ շենքեր և բնակարաններ և սրանց միջում՝ Սուրբ Սարգիս եկեղեցին: Այս եկեղեցին կառուցել է յոթերորդ կեսում նկարագրված Տփղիսի Նորաշեն եկեղեցու ավագերեց Տեր Սուքիասը 1737 թվին: Այս եկեղեցում գտնվում է Սուրբ Սարգսի սքանչելագործ մասունքը, և այս սրբի հիշատակը տոնում են մաքսավորի և փարիսեցու շաբաթ օրը, և այստեղ ժողովրդի մեծ բազմություն է գալիս, մանավանդ կանանցից»<sup>2</sup>:

Սեյդապատի էջմիածնապատկան այս Ս. Սարգիս եկեղեցին վերաշինելու կանչվեց Մանուել Կյումյուլշխանեցին: Վերջինս 1832 թ. «քակե[ա]լ որպէս թէ ի հիմանց՝ նոր ի նորոյ շինեցաք... վայելուչ և կարև կերպիւ, որ յառաջն էր իբր աղքատ գիւղացւոյ խարխուլ տուն մի՝ փոքրիկ և անվայելուչ»: Մանուել Կյումյուլշխանեցու «Անճապակա պատմութեան» 47-րդ գլուխը նվիրված է 1833 թվականին այս եկեղեցու օծման նկարագրությունը համապատասխան արձանագրության վկայակոչմամբ. «Նուիրօք սերագնէի, ի ձեռն կառավարչի Թահմեան Կյումյուլշխանցի Մանուէլ վարդապետի շինեցաւ Ալտապատի Ս. Սարգիս ուխտատեղի ի 1832 և ի Մայիսի սէկիւն»<sup>3</sup>:

Տարօրինակ է, որ այս իրողությունից հինգ տարի անց Ս. Սարգսի եկեղեցին ներկայացնելիս էջն. Իոսելիանին անձանոթ է մնում Կյումյուլշխանեցու արձանագրությունը, որը ունեցել է նաև վրացերեն տարբերակ «այսունակ և վրացերէն տառիւք գրեալ կայ ի նոյն արձան»<sup>4</sup>:

Կարծում ենք, բացատրությունն այն է, որ էջն. Իոսելիանին օգտվում է մինչև 1832/3 թվականների վերանորոգումը եղած նյութերից, որպիսիք Թիֆլիսի առաջնորդարանում Աշտարակեցու պահանջով պիտի ներկայացված լինէին:

Այսպիսով, Սեյդաբաղի Ս. Սարգիս եկեղեցին սկզբնապես կառուցվել է ԺԸ. դարի առաջին տասնամյակներին (Սաքե-օղլանը կարող է 1737-ի Տեր Սուքիասը լինել, իսկ ինչ վերաբերում է 1716

<sup>1</sup> Տե՛ս այստեղ կաթողիկոսապատկան 6 վանքերի ցանկում, № 5:

<sup>2</sup> Տե՛ս այստեղ «Նկարագրական վկայություններ» բաժինը: Վախուչտի տեղեկությունները «Սեյդաբաղում եղել են շքեղ եկեղեցիներ, սակայն արդ (իմա՝ ԺԸ. դ. կեսերին - Պ. Մ.) ավերված են» (ՅճԵՄՁԹ ԾՃԹԵՆԹՅՈՋԸ, ՏԵՄՅԵԹԻՍ, ՅՅ. 334):

<sup>3</sup> Տե՛ս նույն բաժնում:

<sup>4</sup> Անդ:

Թվականին, այն ոչ մի կերպ Ռոստոմ խանի օրոք չէ, քանի որ վերջինս Քարթլիի թագավոր է եղել 1632-1658 թվականներին: Ծղզրտելու է մնում Սեյդաբադում մեկ թե երկու եկեղեցի ունենալու հարցը: Այս պարագայում չմոռանանք, որ Ս. Սարգիս եկեղեցի է եղել և Տափիթադում (Վանքի թաղ), ինչը հիշատակվում է 1800 թ. «План города Тифлиса», VIII, Замок Ванк հատվածում, 82-րդ համարի տակ<sup>1</sup>:

---

<sup>1</sup> План-ում ընդգրկված կառույցների ցանկը տե՛ս մամոս Զերմեմշვილი, *Իշվ. աշխ.*, էջ 83-87:

## ԿՐԾԱՆԻՍԻ ԾԻՐԱՆԱԿՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Կրծանիսը ուշ միջնադարում հին Թիֆլիսի Սեյդաբադ թաղամասին հարող այգեվետ գյուղ էր: Այն վրաց կաթողիկոսությանը պատկանող կալվածք էր և այդ կապակցութեամբ քանիցս հիշատակվում է ԺԴ-ԺԵ. դարերի կալվածագրերում ու նվիրագրերում<sup>1</sup>: Քաղաքի ագարակավայր համարվող այս բնակավայրը հայտնի էր իր մշակովի հողամասերով ու քաղաքային շուկաներում իրենց ունեցածը վաճառահանող առևտրականներով: ԺԸ. դարի 80-ական թվականներին այստեղ կալվածքներ ունեցող ընտանիքներից էին և Ղորղանաշվիլի/Ղորղանյանները, որոնց տիրույթը թագուհի Դարեջանի միջնորդութեամբ Անտոն Ա կաթողիկոսը ազատեց եկեղեցու հարկապահանջությունից: Նկատենք, որ Կրծանիսի հատված էր համարվում հետագայում խրախճանքի ու վայելչության տեղ համարվող Օրթաճաղան:

Մյուս արվարձանների պես Կրծանիսը ևս բազում փորձություններ ապրած բնակավայր էր՝ երբեմն բնակախիտ, երբեմն՝ կիսավեր<sup>2</sup>:

Քաղաքամերձ այլ թաղամասերի պես այստեղ էլ աստիճանաբար հայկական համայնք էր ձևավորվել: Ս. Ջալալյանցի տեղեկութեամբ Սամշվիլիների մոտ գտնվող Կրծանիս գյուղի բնակիչները «նեղեալք ի հանապազօրեայ հինահարութեանց վերաբնակեալ են մերձ ի քաղաքն Տփլիս յարևելու հարաւոյ Կուր գետոյ, ուրանօր շինեալ զնոր գիւղ անուանեալ են Կրծանիս»<sup>3</sup>:

Կարծում ենք, որ ԺԹ. դարի կեսերի վերահայոց առաջնորդը այս տեղեկությունը քաղած պիտի լինի այդ գյուղում բնակվող հայերի միջավայրում սերնդից սերունդ փոխանցվող ավանդությունից: Համենայնդեպս, գոնե ԺԵ. դարի առաջին կեսերից հայերի ներկայությունն այս բնակավայրում անվերապահ իրողությունն է: Առ այդ ունենք 1436 թ. գրված հույժ կարևոր մի հիշատակարան. «Գրեցաւ սաչ ի թվականիս Հայոց ՊՁԵ. (1436), ի յաշխարհս Վրացտան, ի մայրաքաղաքիս Տփլեսաց մերձակայ գեղս Կրծանիս, ընդ հովանեաւ կաթողիկէ Սուրբ Աստուածածնիս և

<sup>1</sup> Օ. Ծղճոժց, նշվ. աշխ., էջ 98-99:

<sup>2</sup> Եկեղեցապատկան այլ կալվածքների պես Կրծանիսում նույնպես իրար լրացնող ու փոխարինող վարչական պաշտոնյաներ էին նշանակվում ու ազատվում մոտրավ, տանուտեր, սախլթուխուցես ևն:

<sup>3</sup> Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն... Բ, էջ 95-96:

այլ ամենայն Սուրբ եկեղեցեացս ի Հայրապետութեան տեառն Կոստընդնայ, ի Աղուվանից Տէր Մատթէոսի և մեր բազում երախտաւոր, քաջ և իմաստուն եզեկիէլ վարդապետին, ի թագաւորութեան Վրաց Ալէքսանդրին, ի նեղ և ի դառն ժամանակիս...»<sup>1</sup>:

Ինչպէս տեսնում ենք, 1432 թ. Հայերը Կրծանիսում Ս. Աստվածածին եկեղեցի ունեն: Ձեռնպահ ենք մնում «և այլ ամենայն սուրբ եկեղեցացս» արտահայտութեան մեկնաբանութիւնից, որովհետև «այլերի» տակ նա կարող էր տեղի Հայոց կամ վրաց եկեղեցի Հասկանալ և կամ՝ նկատի ունենալ Թիֆլիսի Հայոց եկեղեցիները: Հիշատակարանում կան այլ ուշագրավ մանրամասներ. Շահրոխի պատճառած ավերածութիւնը տեսած գրիչը ուխտի է գնացել Երուսաղեմ և վերադարձին Դամասկոսից գնել-բերել այս ու այլ գրչագրերի թուղթ ու այլ պարագաներ<sup>2</sup>, թողել Կրծանիսում ու գնացել Գանձակ, «որովհետև ընդանեաց կարաւտ էաք»: Սակայն «անաւրէն Ջաղաթին նեղեցուց զմեզ, այլ մեք առաք զմեր եկեղեցւոյ Հանդերձն՝ շուրջառներ, զԱւետարան ու զգր- [ե]անք ու զբուրվառ և զայլ ամենայն հոգւոյ և մարմնոյ զինչ որ կայր՝ զամէն առաք ի Վրացտուն կու գայաք բազում կարւան»: Աղստեում Ջաղաթայի զորքը հարձակվում է կարավանի վրա և թալանում բոլոր քրիստոնյաներին՝ «և մեկացուցին, որ քան զոտից ամանն այլ իրք չթողին, այլ ձմերան աւուրք և ցուրտ»: Այդ վիճակով հասնում են Գավագանի բերդ, և «քրիստովնեայքն ի վերա եկին և ծածկեցին զմեր մերկութիւնն: Այլ մեք եկաք և լաւագին աչաւք առաք զթուղթս»<sup>3</sup>:

Հիշատակարանի շարունակութիւնից պարզվում է, գրիչ քահանային «Գանձարանի» մայր օրինակ է շնորհել Կաթողիկէ եկեղեցու ավագերեց Սարգիս արեղան, իսկ գրչի «համշիրայ» հոգևոր եղբայրներն են Հորդանան արեղան և Ստեփանոս քահանա Կրծանեցին: Նա թվարկում է նաև բազում այլ անուններ՝ «և զԿրծանեց զամէն ժողովուրդն՝ զայր և զկին, զձեր և զտղայ, զայգապան և զամենայն աշխատաւոր, որք մեզ մէկ կտոր հաց բերե-

<sup>1</sup> «Փե դարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ», մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 461: Տե՛ս նաև այստեղ՝ «Հիշատակարաններ» բաժնում: Հիշատակարանի վրացերեն թարգմանութիւնը տե՛ս «Նօմեյր եյլ-նօմեյր» XIV-XV եճյոյնցն անդրձեյն...», տձ., 1978, շջ. 49-50.

<sup>2</sup> Դամասկոսից թուղթ բերելը գրեկական պարագաներ հայթայթելու մշակված եղանակ է եղել. նման մի տեղեկութիւն էլ XV դ. գրիչ Մատթէոս Գանձասարեցու Հիշատակարանում ունենք (տե՛ս Ծ. ՏՃՅԸԸԸԸ, ՄՐԹՄԸԸ, IV, շջ. 49):

<sup>3</sup> Անդ: Այս տեղեկութիւնը խորագին պարտավորեցնող է մեր թե հաջորդ սերունդների համար և դուռ չի թողնում վարկաբարձի հայտարարութիւնների ու վեճերի համար, որպիսիք, ցավոք, երկուստեք անպակաս են:

լով, կամ մէկ քարեղէն (իմա՛ քրեղան - Պ. Մ.) ապուր, և կամ մէկ փառչ ջուր տալով»<sup>1</sup> նպաստավոր են եղել գրչին:

Թե հայ բնակչութեան քանի վերաբնակյալ ալիք է Կրծանիսում հանգրվանել, կամ ինչքան մնացել ու հարկադրված այլ տեղ տեղափոխվել՝ դժվար է ասել: Փաստ է, որ նրանք էլ երկրի բնիկների պես պիտի կրեին բոլոր անդիպությունները: Համենայնդեպս, ժե. դարի առաջին կիսին գոյութիւն ունեցող եկեղեցին բնակչութեան նոսրացումին զուգընթաց աստիճանաբար դադարել է գործելուց ու մոռացութեան տրվել: Հավանաբար այդ է պատճառը, որ մեր ունեցած 36 համարանոց ցուցակում «Սուրբ Աստուածածին Ծիրանաւոր» եկեղեցին (№ 12) օժտված է «անյայտ» մեկնաբանութեամբ, իսկ 32-րդ համարի տակ «Կրծանիսայ Սուրբ Աստուածածին» նույն եկեղեցին կից ունի հետևյալ բացատրութիւնը. «Շինեալ [յ]արդեանց ժողովրդեանս քաղաքի թուին Հայոց ՌՄԻէ. (1778) և նորոգեալ կրծանիսեցի Սուլոյինց Ամիրանի դուստր Աննայէ՛ յորդորմամբ և արդեամբ քաղաքի»<sup>2</sup>:

Խնդրական է՝ Կրծանիսում 1778 թ. կառուցված եկեղեցին նույն ժե. դարում եղածի վերականգնում պիտի հասկանալ, թե՞ իրապես նոր հիմնադրված<sup>3</sup>: Շատ հնարավոր է, որ այս տեղեկանքի հեղինակը 1778 թվականն ու նորոգողի անունը եկեղեցու պատին եղած որևէ արձանագրութիւնից է քաղել:

Այս կառուցին վերաբերող և առաջնորդանիստ սուրբ Գեորգ եկեղեցի տեղափոխմամբ պահպանված միակ արձանագրութիւնը գրված է կնքավագանի կողմից, ուր կնունքի պատկեր է քանդակված.

ՅԻՇԱՏԱԿ Է ԱԻԱԶԱ-  
ՆՍ ԳՐԻԳՈՐ ՄԱՄՈՒ-  
ԼԵԱՆՑԻՆ  
Ի ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ[Ս]  
ԾԻՐԱՆԱԻՈՐԻ:

Ի վերջո ասենք, որ Ծիրանավոր եզրը Աստվածածինն տրվող որակումներին է, ինչպես որ՝ Իսկուհի, Տիրուհի և այլն, իսկ Գեղարդավանք է կոչվել, ամենայն հավանականութեամբ հայոց եկեղեցու այդ նշմարքը թիֆլիս տեղափոխելիս այս եկեղեցում կայանելու հանգամանքով:

<sup>1</sup> Նշվ. աշխ., էջ 462-463. տե՛ս և այստեղ:

<sup>2</sup> Տե՛ս ստորև:

<sup>3</sup> Նախորդ հրապարակման ժամանակ տողերիս հեղինակը հակված է եղել առաջին ենթադրութեանը (Պ. Մ. Мурадян, նշվ. աշխ., էջ 105): Ծիրանավոր եկեղեցուց պահպանված պատերի ու տեղանքի լուսանկար տե՛ս մեր հիշյալ աշխատութեան մեջ՝ աղ. XVI:

## ՉՈՒՂՈՒՐԵԹԻ ԵՎ ԿՈՒԿԻՈՒ Ս. ԳԵՈՐԳ ԵՎ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Չուղուրեթ գյուղի (արվարձանի, թաղամասի) վերաբերյալ խոսք եղավ տեղիս Ս. Կարապետ (այժմ վրացական) եկեղեցու հետ կապված հարցեր արծարծելիս:

Ինչպես երևում է՝ հայ բնակչության ստվարեցումը բերում է այս՝ ձորերով ու Կուր գետով սահմանագծված բնակավայրում նոր եկեղեցիներ հիմնելու անհրաժեշտության: Նրանցից մեկն է «Ցանկ Հայոց եկեղեցեաց ի Թիֆլիս և շրջակայս» 36 համարանոց ցուցակում 24-րդ թվահամարի տակ ներկայացվող «Չուղուրեթու Ս. Գեորգ» եկեղեցին, որին կից տրված է հետևյալ բացատրությունը. «Երևանցի Պապեն և Յակոբն Քօչօրովն է շինեալ թուին 1807»<sup>1</sup>:

Այս եկեղեցուն վերաբերող այլ տեղեկություններ մեր ձեռքի տակ չկան (չենք բացառում նրան վերաբերող նյութերի առկայությունը ժ. Գ. վավերագրերում): Սակայն կառուցման թվականը հուշում է, որ հիշյալ շինարարները կարող էին 1779 թ. Հերակլ թագավորի կամ քառորդ դար հետո Հայաստանից այստեղ բնակեցվածներից լինել («Երևանցի» մասնավորեցումը թարմ հիշողություն է թելադրում): Պիտի ենթադրել, թե ցուցակ կազմողի և նրա ժամանակակիցների համար հիշյալ անունով ներկայացվող մարդիկ արդեն ճանաչելի են եղել, ինչը ենթադրվում է նաև բուն շինարարության փաստով:

Նույնքան անհայտության մեջ է Չուղուրեթում եղած երրորդ Հայոց եկեղեցու տեղն ու կառուցման պատմությունը: Տասնամյակներ առաջ, երբ բուսաբանական այգու մոտ գտնվող և քանիցս արդեն սույն գրքում հիշատակված Ի. Գրիշաչվիլու անվան թանգարանի բակում եղած արձանագիր բեկորներն էինք փորձում ուսումնասիրել և տեղորոշել, թե նրանք ինչ կառույցից են պոկված, մեր ուշադրությունը գրավեց Չուղուրեթի Ս. Աստվածածին եկեղեցու կնքավազանը, որի վրա գրված էր՝

ՀԻՇԵԱ՛, ՏԵՐ, ՋՀՈԳԻ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԳԷՈՐԳԱՅ ՄԻՐՈՒ  
ՅԵԱՆ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑ: 1857 ԱՄԻ, ՄԱՐՏ ԱՄՍՈՅ 29:

Երկրորդ պահպանված նմուշը տապանաքար էր.

ՅԻՇԵԱ՛, ՏԵՐ, ՋՀՈԳԻ ՀԱՆԳՈՒՑԵ(Ա)Լ

<sup>1</sup> Տե՛ս ստորև բերված «Ցուցակը»:

ԳԷՈՐԳԱՅ ՄԻՐՈՅԵԱՆ ՄԻՐԻՄԱՆ-

ԵԱՆՑ: 1857 ԱՄԻ, ՄԱՐՏ ՄԱՍՈՑ 29<sup>1</sup>:

Կարծում ենք, որ այս միաժամանակ զբված արձանագրու-  
թյունները ավելի շատ եկեղեցին նորոգողի մասին են վկայում,  
քան կառուցողի:

\* \* \*

Նույնքան պակասավոր են մեր ունեցած տեղեկությունները  
Հարևան Կուկիա թաղամասում եղած Հայկական եկեղեցիների մա-  
սին: Հարկավ այստեղ էլ տարբեր դավանանքների հետևող բնակ-  
չություն էր ապրում: Մյուս արվարձանների նման Կուկիան ևս  
նախ ինքնակա գյուղ պիտի լիներ Կուրի ձախ ափին ի վեր, ապա  
ընդարձակվելով ձորակից դառնար Չուղուրեթին:

Վերևում նշված եկեղեցիների ցանկում 25-րդ համարի տակ  
կարգում ենք. «Կուկիոյ Սուրբ Գրիգոր, շինեալ են ի Կուկիայ բնակողքն թուին  
Հայոց ՌՄԼԸ-ին (1789)»: Կարծում եմ սա նույն Ս. Գեորգ անունով ե-  
կեղեցին է, որ լուսավորչական եկեղեցիների շարքում № 4-ի  
տակ գտնում ենք Թ. Բերիձեի կազմած ցանկում ու ուրվագծում<sup>2</sup>:

Դատելով պահպանված լուսանկարից<sup>3</sup>, Կուկիայում (երբեմնի  
Վորոնցովի անվ. հրապարակից ու կամուրջից ոչ հեռու) գտնվող  
Ս. Աստվածածին եկեղեցին մեծապես տարբերվել է մյուս կա-  
ռույցներից իր արտաքին հանդիսավոր տեսքով՝ ողորկ շարված-  
քով, կեղծ կամարաշարով, ինչպես նաև միջավայրի վրա իշխող  
վերձիգ գմբեթով: Հավանաբար իրոք ԺԹ. դարի կառույց է:

Բոլոր պարագաներում Սիմեոն արքեպ. Բզնունեանցի ստորագ-  
րած 1830 թ. 18 գործող եկեղեցիներից մեկը (18-րդը) «Սուրբ Աս-  
տուածածին Կուկիոյն» է, որի երեսփոխանն է «պր-ն Զօհրաբ Զօ-  
նոյեանցը»:

Այս թաղամասում (երբեմնի Պլեխանովի և այժմյան Դավիթ  
Աղմաշենեքելու փողոցում), Վորոնցովի հրապարակի մերձու-  
թյամբ եղել է Հայոց լուսավորչական մեկ եկեղեցի ևս՝ Թանդոյանց  
հորջորջումով: Նրան վերաբերող հարցերը նոր աղբյուրներով  
ճշգրտելիք են<sup>4</sup>:

<sup>1</sup> Սույն արձանագիր նմուշների լուսանկարը տե՛ս մեր հիշյալ գրքում (աղ. IX, 4,5):  
Այժմ նրանց գտնվելու տեղը մեզ անհայտ է: Հիշյալ գրքում կարելի է գտնել Ս.  
Աստվածածին եկեղեցու կողային պատերից մեկի պատկերը (աղ. XVI):

<sup>2</sup> օ. ծյճոժոյ, նշվ. աշխ., էջ 155, 156:

<sup>3</sup> Տե՛ս Ս. Մ. Мирадян, նշվ. աշխ., (աղ. XVI (№ [27]):

<sup>4</sup> Թանդոյանց եկեղեցու կողային պատերից մեկը ներկայացված է մեր նույն գրքում՝ ա-  
ղ. XVI (№ 28):

## ՀԱՎԱԲԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Հին Թիֆլիսի հայկական եկեղեցիներով առավել հարուստ թաղամասերից մեկն է Հավլաբարը: Այնտեղ գործող միակ Ս. Գեորգ էջմիածնեցոց եկեղեցու մասին մենք արդեն խոսել ենք: Սակայն ուշ միջնադարում հայաստան այս թաղամասը իր երկու հիմնական հատվածներով՝ Դրսի և Ներսի Հավլաբար, ուրիշ մի քանի տարժամանակյա պաշտամունքային կառույցներ էլ է ունեցել: Նրանցից շատերը վաղուց արդեն խոնարհվել են, մեկ մասն էլ պահպանվել է հատվածական տեսքով:

Ա. Այս թաղամասում եղած հայոց եկեղեցիներից երիցագույնը թերևս Խոջիվանք անունով հայտնի հանգստարանի տարածքում գոյություն ունեցած Ս. Աստվածածին եկեղեցին է: Նրա կառուցման ժամանակի և պարագաների վերաբերյալ տեղեկություններ ենք քաղում 1621 թ. Խոջա Բեհբուզի (նույն Ասլան Մելիք Բեհբուզ) պարսից շահ Աբաս Ա-ի և 1654 թ. վրաց թագավոր Ռոստոմի տված արտոնագրերից: Խոջա Բեհբուզը իբրև վրաց թագավորության դրամահատարանի կառավարիչ (գարաթուխուցես) դիմել է արքունիքին՝ «Հավլաբարի կողմում, Մախաթ սարի ստորոտին» իր հայրենի հանգստարանում եկեղեցի կառուցելու արտոնության խնդրանքով<sup>1</sup>: Թագավորը արտոնել է և միաժամանակ հողատարածք հատկացրել այգի տնկելու համար՝ եկեղեցուց վերև: Հետագայում Ռոստոմի հրովարտակը վերահաստատվել Թեյմուրազ Բ և Հերակլ Բ թագավորների կողմից (1756 թ.)<sup>2</sup>:

Այս եկեղեցու մասին բավական տեղեկություններ է հաղորդում էգն. Իոսելիանին. «14: Հավլաբարից դուրս, հարթավայր տեղում, Հավլաբար թաղից մի փոքր հեռավորությամբ, կա եկեղեցի փառաշեն գմբեթավոր, քարուկրով <կառուցված>, պարսպով պատած, հանուն ամենասրբուհի ծիրանազարդ Աստվածածնի, որ Խոջա Բեհբուզովի ժամ է կոչվում և որը կառուցված է հենց նույն իշխան Բեհբուզովների ծախքով 1780 թվին և հետա-

<sup>1</sup> «ქართულ - სპარსული ისტორიული საბუთები», გამოსცა ვ. ფუთუხოძემ, თბ., 1955, გვ. 244.

<sup>2</sup> Պարսկերեն տարբերակը հաստատում է ստացել մեկ տարի ուշացումով (1657, III-IV ամիս), այդ իսկ պատճառով նրանում հիմնականում խոսվում է այգին ու հանգստարանը Բեհբուզի սեփականություն ճանաչելու մասին:

գայում նրանցից բազմիցս նորոգված: Այս եկեղեցին կառուցված է իշխան Բեհբուզովներից իբրև իրենց դամբարան»<sup>1</sup>:

Վկայություն մեջ հիմնական ճշգրտելիքը կառուցման թվականին է վերաբերում: Բարեբախտաբար վերևում բազմիցս հիշված հին Թիֆլիսի Պատմա-ազգագրական թանգարանի բակի նյութերի մեջ գտնվեց Խոջա Բեհբուզի կառուցած Ս. Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրությունը, ուր կարդում ենք.

Ի ԹԻՒՍ ՀԱՅՈՑ ՌՃԴ. (1655) ԿԱՄՈՔՆ ԱՍՏՈՒԾ-  
ՈՅ ԵՄ ԽՈՋԱՅ ԲԵՀԲՈՒՏ ԵՒ  
ԵՂԲԱՐ ԻՄ ԽԱՏԻՆ, ԵՒ ԿՈՂԱԿԻՑ ԻՄ ԼԱԼԻՆ,  
ՇԻՆԵՑԻ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ ԱՂՕՈՐ (՞) ԱՍԼԱՆԻՆ:

Այլևս պարզ է, որ էգն. Իոսելիանիի 1780 թիվը կամ թյուրիմացություն արդյունք է, կամ պատերին եղած նորոգչական արձանագրության թվական: Ընդ որում պիտի հստակ տարբերակել եկեղեցի և մատուռ հասկացությունները. Հայոց եկեղեցին բուն աղոթարանում թաղումներ չի հանդուրժում, ուստի Բեհբուզյան տոհմի Ասլան նախնին թաղված է եղել կամ գավթում, կամ եկեղեցու մերձավորությունում:

Հավլաբարի Խոջավանք անունը կրող հանգստարանը, դատելով պահպանված լուսանկարներից, լեցուն է եղել արձանագիր դամբարաններով, տապանաքարերով, մեմորիալ այլազան հուշարձաններով, որոնք հին Թիֆլիսի պատմության, առավել ևս այդ քաղաքի հայկական համայնքի պատմության բացառիկ կարևոր աղբյուրներ էին: Անցյալ դարի 30-ական թվականներին այս կարգի խնդիրների հետ հաշվի չէին նստում: Պատկերացնելու համար, թե միայն տապանազրերի տեսքով ինչ ահռելի կորուստներ են եղել, բավական է վկայակոչել Ա. Երեմյանի հրատարակությունը<sup>2</sup>: Որ հայերեն տապանազրերից բացի այստեղ եղել են նաև վրացալեզու կարևոր արձանագրություններ՝ կարելի է համոզվել ժամանակին հրապարակման արժանացած այս երկու նմուշով.

յ(տրտնոյոն)և ջնց.  
յ. ևսցլլսցևս  
սմսև ջոնս ջս-

<sup>1</sup> Տե՛ս ստորև «Նկարագրական վկայություններ» բաժնում:

<sup>2</sup> Ա. Երեմյան, Թիֆլիսի Հայոց պանթեոններում, Վիեննա, 1940:

ր ՆՈՒՅՆՈՎՈՒՄ  
Ն ՄԵՍԵՆՆԵՐ  
ՄԱՐՄԱՐ, ՄԵ-  
ՆՏՈՒՄ ԹԻ-  
ՅՈՒՆՅԵՏՆԵՐ<sup>1</sup>։

**Թարգմ.** Քրոնիկոնի 456 (=1768)-ին: Ք(րիստո)ս: Այս տապանի մեջ են Սալաթ-Նովայի կողակից Մարմարս: Թողություն ասացեք:

*1920-ական թվականներին պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը խոջիվանքում փնտրել է այս տապանագիրը և չի գտել, բայց այդ ընթացքում լույս աշխարհ է բերել մեկ այլ տապանագիր (գերեզմանոցի հին մասում)*

<ձ> Թճճճճճ Վճճ  
<ժոլ> ՆՈՒՅՆՈՒՄ ԵՄԵՆՆԵՐ  
<ՆՈՒՅՆ> ՄԵՍԵՆՆԵՐ  
<ՅԵ> ՄԱՐՄԱՐ ՄԵ-  
ՍԵՆՆԵՐ ՄԱՐՄԱՐՈՒՄ  
ՎԵՆՏՈՒՄ ԹԻ-  
ՅՈՒՆՅԵՏՆԵՐ  
ԵՏ. <ՄԵՍԵՆՆԵՐ> ՄԵ-ՆՅԵՆՆԵՐ

**Թարգմ.** Այստեղ են Մուղնիսի եկեղեցու քարանձավի Տեր Դավթի կողակից Մարմարս: Ողորմի ասեք: 420 (1732) թվին:

*Բ. Քաղաքի այս թաղամասում Հայոց եկեղեցիների ցանկում հիշատակվող Հաջորդ կառույցը Սուրբ Մինասն է: Էդն. Իոսելիանի հաղորդած տեղեկությունները «Հավաքարի վրաց եկեղեցուն մոտ կա Հայոց ժամհանուն Սուրբ Մինասի, հեռու այն տեսարանից, որ բացվում է Տիգրիսի Կուր ավազոտ գետափի վերևից, առանց գմբեթի, որը հին տան նման է, շինված 1790 թվին Հավաքարցիների ծախքով, կղմինդրով ծածկված, հանուն Սուրբ Մինաս վկայի»<sup>4</sup>:*

<sup>1</sup> Տե՛ս Սալաթ-Նովայ, լուս գրած աշխատասիրությունով Գեորգեայ Ախվերդեան, Մոսկվա, 1852, էջ XI: Հմտ. Վ. Մեղուքյան-Յեզո, ՆՈՒՅՆՈՒՄ, [ԵՅ.] 1930, թ. 55.  
<sup>2</sup> Վ. Մեղուքյան-Յեզո, նշվ. աշխ., էջ 56:  
<sup>3</sup> Բառացի բնակիչ:  
<sup>4</sup> Տե՛ս ստորև տասներորդ համարի տակ ներկայացված նկարագրության մեջ:

Գտնված տեղանքը ճիշտ որոշելու համար էլն. Իոսելիանին երկու ցուցում է տալիս՝ «Վրաց եկեղեցուն մոտ», հարկավ նկատի ունենալով Մետեխի Ս. Աստվածածինը, և ապա «հեռու այն տեսարանից, որ բացվում է... ավազոտ գետափի վերևից», նշանակում է Մետեխի ոլորանով Հավլաբար խորացող ճանապարհի (փողոցի) վրա, բնակելի տների շարքում: Եկեղեցու հարավային մուտքի պատը պահպանվել է, մուտքի երկու կողմերի պատուհանները մեր այցելության տարիներին երկաթապատ էին (ներսում հավանաբար ինչ-որ պահեստարան էր), իսկ նրանց շարունակության վրա՝ կեղծ պատուհանախորշեր<sup>1</sup>: Իհարկե, պատի ոճական նկարագրից երևում է արդեն նոր ժամանակների հակումը՝ պալատական ճարտարապետության հարդարանքի կիրառումը:

Ասենք նաև, որ Հայոց եկեղեցին երկու Ս. Մինաս է ճանաչում՝ մեկը Մինաս Եգիպտացին է, որ ծառայում էր Կոստինայում Դիոկղետիանոս կայսեր հալածանքի տարիներին<sup>2</sup>, մյուսը՝ Մինաս Մեծ «ազգալ և աշխարհալ և ուսմամբ աթենացի»<sup>3</sup>: Վերջինիս անունով նրա հետ նահատակվածները կոչվում են «Մինասեանք»:

Գ. Հաջորդ լքված կամ խոնարհված եկեղեցին Հավլաբարի Զորաբաշ կոչվող տեղանքի Սուրբ Գեորգն է: 39 անուն ընդգրկող ցուցակում այն հիշատակվում է Ս. Մինասից անմիջապես հետո՝ 22-րդ համարի տակ: Կարծում ենք, այն պիտի նույնանա 36 համարանոց ցանկի 11-րդ համարի տակ եղած Քարաբաշի եկեղեցու հետ, որ նույնպես Ս. Գեորգին է նվիրված և ունի հետևյալ լրացուցիչ բացատրությունը. «չինեալ է հրամանալ Հերակլ արքայի և որդւոյ նորա Գեորգւոյ»<sup>4</sup>: Այստեղից չի կարելի եզրակացնել, թե այն Հերակլի կամ Գեորգի ԺԲ. արդյամբ է կառուցված, այլ որ, ինչպես Թիֆլիսի մյուս բոլոր եկեղեցիները, Զորաբաշի Ս. Գեորգը ևս Վրաց թագավորների արտոնմամբ է կառուցվել: Պարզապես երկուսի միաժամանակ հիշատակումը ժամանակի՝ ԺԸ. դարի վերջի կառույց լինելն է վկայում:

Թեյմուրազ Բերիձեն հարկավ չի սխալվել, երբ այս եկեղեցին գետեղել է Մետեխի և Շամքորեցոց (Կարմիր Ավետարանի) միջև

<sup>1</sup> Մեր հրատարակած լուսանկարը տե՛ս Պ. Մ. Мирадян, նշվ. աշխ., աղ. XVI (№ 25):

<sup>2</sup> «Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց...», հատ. Ը, Վեն., 1813, էջ 318-330:

<sup>3</sup> Նույն տեղում, հատ. Թ., էջ 341-

<sup>4</sup> Տե՛ս ստորև:

և թվագրել ժԸ. դարով<sup>1</sup>: Ինչ վերաբերում է միկրոտոպոնիմին, այն հայերեն ձոր և թուրքերեն բաշ (գլուխ) բառերով է կազմված, և իսկապես նրա վրացերեն թարգմանությունը կլինի «Խևխիսթավի», ինչպես Բերիձեի գրքում է նկատված:

Դ. Քաղաքային տնտեսություն աննախընթաց զարգացումը, բնականաբար, իր հետ բերում է բնակչության հոսք դեպի արտադրական ձեռնարկությունները: Թիֆլիսում էին հաստատվում շրջակայքի բնակավայրերից զարգացող ու ծավալվող քաղաք շտապող և մանավանդ ճորտությունից ազատագրվող բազում բնակիչներ: Նրանց մեջ նշանակալի թիվ էին կազմում և հայերը: Այսպես, օրինակ, եթե 1803 թ. քաղաքի 11.906 բնակչից հայեր էին 8.982-ը, ապա 1864-ին 60.085 բնակչից հայեր էին 28.488-ը: Հայերի ստվարացման այլևայլ պատճառների թվում մոռանալու չէ նրանց ունեցած ուսումնասիրական հակումը՝ առավել ևս Թիֆլիսի՝ ուսական կառավարչի կամ փոխարքայի նստոց դառնալու պարագայում:

Հայազգի բնակչության ստվարացումը հարկադրում էր հոգևոր շրջաններին հին եկեղեցիները նորոգելուց բացի՝ հոգալ քաղաքի զանազան հատվածներում նոր եկեղեցիների կառուցումը: Մասնավորապես այս պարագայի ծնունդ է Սուրբ Գրիգոր Լուսավորչի մեծաշեն եկեղեցին Հավլաբարում («Գոգիլայի» բաղնիսի վերին հարթակում) և Սողանլուի Ս. Աստվածածնի եկեղեցին՝ «չինեայ Նաթլուղու և Սողանլուղու ժողովրդականաց թուին 1805»<sup>2</sup>: Այս նույն տարածքում ժԹ. դարում կառուցվեց «Ծաղկեվանք» կոչված եկեղեցին:

Վավերագրեր պրպտելիս գուցե կարելի կլինի քաղաքում գործած մեկ-երկու աղոթարան էլ հիշատակված գտնել<sup>3</sup>, բայց մեր

<sup>1</sup> Ծ. Ծղոճոճ, նշվ. աշխ., էջ 255-256: 1892 թվականի կաթողիկոսական ընտրություններին մասնակցել է այս եկեղեցու քահանա, «Ոսկի բարեկամ հայ ընտանեաց» հանրագիրտարանի կազմող Գրիգոր Մանդակունին: Իզմիրում գտնված ձեռագիր «Խորհրդատերի» հիշատակագրության մեջ կարգում ենք. «Ես՝ Գրիգոր քահանայ Մատթէոսի Մանդակունույ Զորաբաշի Ս. Գէորգ եկեղեցույ Տփլիսի, կտամ յիշատակ Ս. Աստուածածին եկեղեցույ Նիկոմիդույ ի ձեռն եկեղեցական և աշխարհական պատգամաւոր կաթողիկոսի ընտրութեան (Խրիմեան Մկրտիչ արքեպ.) ամենապատիւ Ստեփանոս եպիսկոպոսի Նիկոմիդույ և մեծապատիւ Գասպար էֆենտի Տ. Թ. Գասպարեանի: Գրիգոր քահանայ Մանդակունի: 1892, Մայիս 11ի Տփլիս» (տե՛ս «Ցուցակ հայ. ձեռագրաց Նիկոմեդիոյ և շրջակայից»: Կազմեց Ստեփանոս արքեպ. Յովակիմեան, 1903, Վենետիկ, 1969, էջ 26):

<sup>2</sup> Տե՛ս ստորև՝ 36 միավոր ցանկի № 31:

<sup>3</sup> Այսպես, օրինակ, Թիֆլիսի «Մետեխ» բանտի հայազգի բանտարկյալների համար եկեղեցի կառուցելու որոշումը կայացվել է 1889 թ.: Գործը գլուխ բերողն ու առ այդ

*նպատակը թվարկումը մեծացնելը է, այլ գիտական հետաքրքրությունն ներկայացնողների ուսումնասիրությունը:*

---

*նվիրատվություններ հավաքողը եղել է «Թիֆլիսի տոհմական պատուաւոր քաղաքացի պ. Նիկողայոս Սպրիգոնեան Փրիզոնեանցը»: Օծումը տեղի է ունեցել 1893 թ. փետրվարի 14-ին: Մյուսոնը բերել են մոտիկ գտնվող Ջորաբաշի Ս. Գեորգ եկեղեցուց (տե՛ս «Արարատ», 1894, № 4, էջ 369-370): Հիշատակելի են նաև «Սասախու Ս. - Գեորգը», «Ջրատարի Ս. Հակոբը» և այլն, որոնք վաղուց վերացել են:*

ՄԻ ՔԱՆԻ ԱՄՓՈՓԻՉ

ՎԵՐԱՐԾԱՐԾՈՒՄ



## ՀԱՅԱՆՈՒՆ ՄԻԿՐՈՏՈՊՈՆԻՄՆԵՐ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Բավականաչափ համոզիչ նկատելով ժամանակակից վրացագիտության մեջ արմատացած համոզմունքը, թե *ბვთღობო/თბოღობო* (Տփղիս/Թբիլիսի) տեղանունը պայմանավորված է հին քաղաքի սահմաններում գտնվող հանքային տաք ջրերի գոյությունը (ბვთღ-ო/თბოღო - տաք, ջերմ, տապ), ինչպես նաև այդ կազմության առկայությունն այլուր (Ջերմուկ, Ծղալտուբո, Горняеводск ևն), տեղանվան ստուգաբանական քննությունը մեր նպատակից դուրս ենք համարում: Սակայն վաղուց արդեն նկատված ու արձանագրված է, որ հայկական բազմաթիվ միջնադարյան աղբյուրներում «Տփղիս»-ի կողքին, հաճախ իբրև նրա զուգանուն կամ բացատրություն ունենք նաև «Փայտակարան»․ այսպես, օրինակ, վաղմիջնադարյան «Վկայաբանություն Հայոց սուրբ քահանայապետեր Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորի [և] Դանիելի» երկի հայերեն բնագրում «...Վասն որոյ եկեալ գործակալք կողմանցն արևելից և հիւսիսոյ և վերակացուք հետաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան, ասեն ցարքայն...» հատվածը հին վրացերեն թարգմանելիս փոխադրողը անհրաժեշտ է նկատել ընդմիջարկել «որ է Տփղիս»<sup>1</sup>: Թովմա Արծրունու մոտ բացատրությունն ավելի ընդարձակ է. Բուդան «ել խաղաց հասանել ի վերայ արևելից աշխարհին և հրաման ետ հասանել ի վերայ քաղաքին Տփղիք կոչեցեալ, որում յառաջագոյն Փայտակարան անուանէին. և ի փայտից մայրեաց չինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պատուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և ամենայն կազմած պատրաստութեան նոցա»<sup>2</sup>: Թեպետ շարունակությունը վկայում է, որ Արծրունին լավածանոթ է քաղաքին («իսկ քաղաքապետն Սահակ ելեալ ընդ դուռնն, որ ելանէ ի բերդն Շամշղտայ...»)<sup>3</sup>, սակայն քաղաքի ա-

<sup>1</sup> օղոս აბუღაბძე, ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა IX-X სს. - ში. გამომკვევა და ტექსტები, თბ., 1944, გვ. 65. Հմտ. Հայոց «Վարք սրբոցի» վրացերեն թարգմանությունը, Ս. Էջմիածին, 2008, էջ 70:

<sup>2</sup> Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլ. 1917, էջ 284: Թիֆլիսը «Փայտակարան» անվանելը բնավ «իսկական Փայտակարանի տեղադրությանը» անծանոթ լինելու հետևանք չէ, ինչպես հակված է կարծել Արծրունու երկի աշխարհաբար թարգմանիչը (տե՛ս 1978 թ. հրատ., էջ 187, ծան. 2):

<sup>3</sup> Անդ, էջ 285: «Շամշղտայ»-ն Նամթուղուց է (Շամշ(ու)ղտայ) և ոչ Шамшагут, որ գոյություն իսկ չունի, ինչպես գրադարձած է Թովմայի ուսերեն թարգմանության

մեն ինչը փայտից շինելու բացատրությունը պարզապես «Փայտակարան» անվան պատճառաբանության փորձ է (Համատ. միջնադարյան «Պղնձե քաղաքի» զրույցը)<sup>1</sup>:

Եվ այնուամենայնիվ, այդ անունը թելադրել է հանգուցյալ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկին առաջադրելու մի վարկած, ըստ որի Հայոց արևելյան կողմանց բուն Փայտակարանը, սասանական ու արաբական տիրապետության շրջաններում օտարներին ընդիմանալով հանդերձ, ի վերջո նրա բնակչությունը հարկադրված է եղել թողնել քաղաքը և ապաստան գտնել Վիրքի մայրաքաղաքում՝ իր հետ բերելով և պահպանելով «Փայտակարան» անունը: Ըստ այդ տեսության «փայտ», «փայտակ» իմաստավորումները հաստատում են գտնում հանձին վրաց. ზაფხის/დაფხის/დაფხის/დვფხის/დვფხის անունների վերջին ձևիս-ի (փայտ/փայտի/փայտե) անվան, որ Թիֆլիսի նախնական անունը պիտի լիներ<sup>2</sup>:

Ի դեպ, ահադ. Ն. Մառը նույնպես Փայտակարանի կազմության մեջ «փայտ»-ի ներկայությունը պատահական չէր համարում, այն կապելով տոտեմի հետ<sup>3</sup>: «Փայտակարան» տեղանվան առաջացումը p'ayt/fayt ցեղանվան հետ է կապում Ա. Փերիխանյանը<sup>4</sup>, որ մեր համոզմամբ արդարացված չպիտի լինի, քանի որ ենթադրելի այդ ցեղանունը վաղուց մոռացված պիտի լիներ<sup>5</sup>: «Փայտ» բաղադրիչով մեկ այլ տեղանուն էլ է հայտնի մեզանում՝ «Փայտակչտան գեօղ»<sup>6</sup>, սակայն փաստորեն այն նկարագրական կառուցվածք ունեցող տեղանուն է՝ Փայտի կուշտը գտնվող գյուղ: Մենք հնարավոր ենք նկատում Փայտակարանը ծագած համարել պարս. «Փայթախտ-արան»-ից (փայթախտ - արքունի, մայրաքաղաք, գահանիստ), որը Փայտակարանի է հնչյունափոխվել<sup>7</sup>:

մեջ (էջ 209):

<sup>1</sup> Փայտակարան-Տիֆլիս համադրության հիշատակությունների գրեթե բոլոր մատենագրական վկայակոչումները տրված են պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի ძაფხის-თბოფხის-ფაფხის-დვფხის հոդվածում («თბოფხის-1500», თბ., 1958, გვ. 29-30).

<sup>2</sup> Ը. Թջևոյնց-Չջջո, նշվ. աշխ., էջ 37-38:

<sup>3</sup> Н. Марр, Борьба классов в грузинских версиях евангельского текста (К датировке Адышского евангелия и опять к вопросу о скифах-русах).- Избранные работы, III, М.-Л., 1934, стр. 355.

<sup>4</sup> А. Г. Периханян, Этимологические заметки, I, ИФЖ, 1982, № 1, стр. 55.

<sup>5</sup> П. М. Мурадян, նշվ. աշխ., էջ 9, ծան. 3:

<sup>6</sup> Թովմա Արծրունի, նշվ. աշխ., էջ 415:

<sup>7</sup> «Փայթախտ»-ը գահանիստ իմաստով գործածված ենք գտնում Աբել Գուլասպեան Թիֆլիսեցու «Նկարագրական վկայություն» տեքստում (տե՛ս այստեղ): Ագաթանգեղոսը Հայոց կողմանց Փայտակարանը հիշատակելիս ավելացնում է «քաղաք արքայությունեան Հայոց» (Ագաթ., 1909, էջ 439): Արդյո՞ք այստեղ փայթախտարանի իմաստ է կա:

Վարկածները կարող են հաստատվել կամ մերժվել, սակայն անվերապահ է այն, որ հայկական էթնիկական միավորը վաղ միջնադարից ի վեր ներկա է եղել այս քաղաքում, մասնակցել նրանում կատարված անցուղարձին և առանձին դեպքերում քաղաքի այս ու այն թաղամասի տեղանվանութայն մեջ թողել իր ներկայութայն լեզվական հետքը:

Հայոց պաշտամունքային կառույցների մասին խոսելիս նշեցինք, որ շատ հաճախ նրանց անունով են կոչվել նաև թաղերը կամ թաղամասերը: Միջնադարյան քաղաքի համար այդ միանգամայն հատկորոշ տեղաճանաչում է<sup>1</sup>: Ուստի զարմանալի չէ «Սուրբ Սարգսի խևի», «Վանքի ուբանի», «Մողանի ուբանի», «Սուրբ Նշանի ուբանի», «Նորաշնի ուբանի» և այս կարգի միկրոտեղանունների հաճախակի գործածությունը (խևի - կիրճ, ձոր, փոր, ուբանի - ավան):

Ունենք դեպքեր, երբ նույն տարածքը վրաց միջավայրում կոչվում է վրացերենով, հայոց միջավայրում՝ հայերեն համապատասխանությամբ. վրաց. Կլդի ուբանի, հայ.՝ Քարափի թաղ, Կալու ուբանի - Տափի թաղ և այլն: Կան նաև անուններ, որոնք կազմված են երկու տարբեր լեզվական միավորների բաղադրմամբ, ամենևին խորթ չհնչելով թիֆլիսաբնակ մարդու ականջին՝ ինչ տոհմի ու դավանանքի էլ նա պատկանի: Այսպես, օրինակ, Ձորաբաշի թաղ տեղանքը վրացերենի թարգմանելիս կունենանք եջջոետջոետ շոճո (Խևիսթավիս ուբանի): Ուրեմն ձորը հայերեն է, բաշը՝ թուրքերեն, կամ՝ Դրսի ճալա, ուր ճալա-ն վրացերեն է (կղզի, հովիտ), իսկ դրսի-ն՝ հայերեն (վրացերեն թարգմանելիս՝ Գարե ճալա), նմանակությունը թիֆլիսում ունենք Օրթա ճալա (օրթա թրք. միջին)<sup>2</sup>:

Թիֆլիսում ապրող նշանավոր հայազգի ընտանիքներին պատկանելու հանգամանքով կարող էին նրանց անունով հոդամասեր, շինություններ, թաղեր կոչվել, ինչպես, օրինակ՝ Բեհբուդյանց, Ղորղանյանց, Մաղաթովանց, Շահրիմանյանց (Լոյինովանց), Սահականց և այլն: Հայտնի է մանավանդ «Մաղաթովի կղզին»:

Հին Թիֆլիսի միկրոտոպոնիմներից առավել անսովորն ու այդ իսկ պատճառով հատկապես քննության առարկա դարձածը այսօր «Մամա Դավիթ» անունը կրող լեռնալանջի «Իշխոտու-

<sup>1</sup> Ի դեպ՝ Թիֆլիսի պատմությամբ զբաղվողները վրիպել են ուշադրության առնել Թովմա Արծրունու տեղեկությունը քաղաքի այն դռան մասին, «որ ելան է ի բերդն Շամշղտայ» (էջ 285): Հավանաբար «Դուռն Շամշղտայ» (իմա՝ Սամշղիլդեի դուռ) է կոչվել հետագայում «Գանձակի դուռ» կոչվածը:

<sup>2</sup> «Դրսի ճալայի» կապակցությամբ դիտենք, որ այդ անունը ոմանց առեղծվածային է թվացել (տե՛ս, օրինակ Թեյմուրազ Բերիձեի բազմիցս հղված գիրքը (էջ 148-149):

րուք»-ի հորջորջումն է, որի ուսումնասիրությունը Լ. Մելիքսեթ-Բեկը առանձին հոդված է նվիրել<sup>1</sup>:

Վախուշտիի «Աշխարհագրություն» ու «Պատմություն» մեջ, ինչպես նաև Բերի էգնատաշվիլու «Նոր Քարթլիս ցխովրեբայում» քանիցս վկայված է այդ անունը. «... և դարձյալ արևմուտք՝ Իշխուտրուքի քարափի մեջ, կա Մթածմինդայի (իմա՝ Սուրբ լեռան - Պ. Մ.) վանք, և այժմ՝ պարապ»<sup>2</sup>, «Պատմություն» շարադրանքում ևս այդ տեղանունը հիշված է իբրև հանդիպման վայր<sup>3</sup>, էգնատաշվիլին Ռոստոմ արքայի կառուցած մեջիտի տեղը նշում է «Իշխուտրուքից ներքև» արտահայտությամբ<sup>4</sup>:

Հարկավ հազվագեպ հանդիպող տեղանուն է, կամ թերևս, իբրև այդպիսին գործածության աղբյուրներում եղած միակ վկայությունը: Գուցե այդ է պատճառը, որ հին Թիֆլիսը ուսումնասիրողներից ոմանք պարզապես զանց են առնում այդ տեղանունը կամ միանգամայն այլ իմաստ վերագրում նրան<sup>5</sup>: Լանջին աճող բույսի անունով սարը անվանակոչելը արտառոց ոչինչ չունի, ուստի իրավացի է Լ. Մելիքսեթ-Բեկը, երբ այդ անվան տակ հայերենում առկա և Ալիշանի մոտ արձանագրված «Իշտատրակ» («Կարմրածաղիկ բոյս մի կըսուի, լայնկեկ տերեւներով. երկայն ցողունի մի վրայ իրարմէ հեռու երկու փունջ ծաղիկներով») կամ «այլ աւելի տգեղ անուամբ»՝ «Իշտոռուկ» - «Պրասի նման, որոյ յարմար և նոյնանիչ լսուի Փ. Pet d'âne. Լ. այլ ի յունականէն առած՝ Onopordon...»<sup>6</sup> բույս է տեսնում: «Մամա Դավիթ» սարի երբեմնի անջրդի լանջը պարզապես քաղաքի արոտավայրերից մեկն է եղել:

Վախուշտիի մոտ, անվան արձանագրումից բացի, նկատված է նաև, որ ԺԸ. դարի կեսերին Մթածմինդայի «վանքը պարապ է»:<sup>7</sup> էգն. Իոսելրանին ևս այդ գիտե. «... Գարեթուբանում է գտնվում Մթածմինդա լեռան վրա հանուն ամենասուրբ Աստվածածնի եկեղեցին, կառուցված 1542 թվին Դավիթ և Նիկողայոս կուսակրոն

<sup>1</sup> Լ. Թեմուրջյան-Պետրոսյան, Վախուշտի «Պատմություն»-ի «Պատմություն»-ի մասին (Պետրոսյանի «Պատմություն»-ի մասին), - «Պետրոսյանի «Պատմություն»-ի մասին», 1924, № 2, ԳՅ. 229-232.

<sup>2</sup> Ժ. Գ. IV, ԳՅ. 338.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 458:

<sup>4</sup> Ժ. Գ., II, էջ 418:

<sup>5</sup> Վախուշտիի վերջին հրատարակության տողատակին օմիցրոտրուքի-ին տրված է «այսինքն՝ սուրբ» բացատրությունը: Ընդ սմին ակադ. Ս. Ղաուխչիզվիլին անհրաժեշտ է նկատել հղում կատարել «ՄԵՍԵՅ», 1970, № 5, 195, ուր հավանաբար այդ նշանակությունն է պատճառաբանված:

<sup>6</sup> [Չ. Ղ. Ալիշան], Հայրենասկ կամ Հայկական բուսաբանություն, Վենետիկ, 1895, էջ 208-209 (№ 873 և 874):

քահանաներ Գաբայեաների կողմից: Հետագայում, 1808-ին հնությունից գոյացած փլուզումները Թիֆլիսի բնակիչ վրացի և հայ կանաց կազմակերպությունները իրենց հավաքած սեփական ծախսով մաքրեցին նրա հիմքերը: 1810 թվականին նույն կանայք մաս առ մաս հավաքած միջոցներով նորոգեցին այժմ եղած եկեղեցին...»<sup>1</sup>:

Վրաց այս ողջամիտ քահանան, ինչպես տեսնում ենք, անաչառ է ինչպես բուն հայոց եկեղեցիները ներկայացնելիս, այնպես էլ վրաց սրբարանները գնահատելիս. նա չի խորշում ասել, որ հայ կանայք ևս մասնակցություն են բերել Դավիթ Գարեջացու անունը կրող լեռան վանքը մաքրելիս ու վերականգնելիս: Եվ այստեղ զարմանալի ոչինչ չկա: Չմոռանանք, որ նույնիսկ հեռավոր Անիից հայ ուխտավորներ էին գալիս Դավիթ Գարեջայի անապատ և հիշատակարաններ թողնում<sup>2</sup>:

Ի վերջո ասենք, որ Թիֆլիսում ԺԼ. դարի վերջերին եղել է «Բռնի» անունով թաղամաս (թերևս հետագայի նախաձեռնություն կամ Нахаловка-ն), որտեղ կամուրջ (վիհի վրա) ու շուկաներ կառուցելու համար պարոն Կարապետ Գասպարի Թիֆլիսեցին մադրասահայերից հանգանակել է 760 ռուպի («Թիֆլիսու Բռնի թաղին վերայ մին կարմունջ կազմեն...»)<sup>3</sup>: Այդ նշանակում է, թե Թիֆլիսի առաջընթացին սատար էին այլուր գոյություն ունեցող հայկական համայնքները ևս:

<sup>1</sup> Տե՛ս այստեղ՝ էջն. Իոսելիանիի նկարագրությունը:

<sup>2</sup> Այդ մասին տե՛ս լ. Թեղոյան-Ջեյո, «Գարեջայի մրავալմտոս» Երևանի թանգրաֆիկա և թանգրաֆիկա թանգրարի Մարկոսյանի թանգրարի մասին, «Երևանի մոսթր», տժ., 1940, V-VI, թթ. 153-175. Հմմտ. Ս. Մ. Մուրադյան, Արմյանսկայա էնիգրաֆիկա Գրուզիա: Կարտլի և Կախեթի, Երևան, 1985, էր. 171-193.

<sup>3</sup> Մատենադարանի ձեռ. № 10756, 10r: Հմմտ. Պավել Չոբանյան, Հայ-ուս-վրացական փոխհարաբերությունները ԺԼ. դարի երկրորդ կեսին, Ս. էջմիածին, 2006, էջ 110-111:

## ԷԹՆՈ-ԴԱՎԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՏԵՂՈՒՄՆԵՐ

Հայ-վրացական միջհամայնքային հարաբերությունները սերտացման ու խորթացման մի շարք միջնադարյան փուլեր ապրեցին. քանի դեռ նրանք նույնադավան էին՝ մինչև է. դարի առաջին տասնամյակում եկեղեցական բաժանումը, երկթև մեկ կազմվածք էին ներկայացնում, ուստի և արևելյան եկեղեցու առանձին կենտրոններում ընկալվում էին իբրև Գրիգոր Լուսավորչի գլխավորած աթոռի թեմեր (հիշենք Ջաքարիա Հռետորի հաղորդած տեղեկությունը «հյուսիսային շրջանում կան հինգ հավատացյալ ժողովուրդ, որոնք ունեն քսանչորս եպիսկոպոս, և իրենց կաթողիկոսը Դվինում է՝ Պարսկական Հայաստանի գլխավոր քաղաքում (մայրաքաղաքում): Իրենց (առաջին) կաթողիկոսի անունը Գրիգոր էր, արդար և հայտնի մի մարդ»)<sup>1</sup>:

Բնականաբար, այս շրջանում կարևորություն չէր տրվում հոգևոր սպասավորի էթնիկական պատկանելիությանը. վրացերենին հմուտ հայ հոգևորականը կարող էր ծառայել վրաց եկեղեցուն (Հոբ Հայ), հայերենին գիտակ վրացին՝ Հայոց եկեղեցուն (Կյուրիոն): Թե իսկ խնդիրներ առաջանում էին, ապա դրանք հիմնականում լեզվական ու այսպես կոչված տեխնիկական կողմին էին վերաբերում (օրինակ՝ Կյուրիոն կաթողիկոսը Ցուրտավի եկեղեցու հայերեն ժամասացությունը խափանե՞լ է, թե՞ լրացրել վրացերենով: Առաջնորդ եպիսկոպոսը հմուտ է երկու լեզվին ևն)<sup>2</sup>:

Է-Ը. դարերը աստիճանաբար միմյանցից հոգևոր իմաստով խորթացման և մշակութային նոր կողմնորոշումների ընտելանալու ժամանակամիջոց կարելի է նկատել: Հակառակ հոգևոր պետերի կտրուկ պահանջների՝ շփումները երկու համայնքների միջև շարունակվում էին, իսկ մշակութային գործիչները դժվարանում էին մեկուսանալ և միմյանց լեզվից թարգմանություններ էին կատարում (Դիոնիսիոսի վարք, Սահակ Ձորոփորեցի, Գրիգոր Օշկեցի և այլք): Որքան սերտանում էր վրաց-հունական մշակութա-

<sup>1</sup> «Ասորական աղբյուրներ», Ա, թարգմանությունը բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 313:

<sup>2</sup> Այս հարցերը արծարծված են «Գիրք թղթոց» ժողովածոյի նյութերում:

յին-դավանական հաղորդակցումը, նույնքան մեծանում էր հայոց և վրաց համայնքների միջև բացված մշակութային ճեղքը: Հարկավ վրաց իշխանությունների տիրույթներում հայտնված հայկական համայնքները (Տայքում-Կղարջքում, Գարե-Կախեթում, Արեշում և այլուր) չէին կարող անջրպետվել այն հասարակությունից, որի մաս էին կազմում, ուստի վրացերեն լեզվի իմացությունը նրանց միջավայրում գորեղանում էր՝ տեղ-տեղ նույնիսկ մայրենիի հաշվին, իսկ հայերենը տակավին մատչելի էր վրաց հոգևոր շրջանակներին:

Այս պարագայում հայրենի ավանդներին հավատարիմ մնալու գիտակցումը մշակութային ելքեր էր որոնում, որի նյութականացման եղանակներից մեկն էր հայերենով ստեղծված վարքերի ու վկայաբանությունների թարգմանումը վրացերենի: Ուստի պատճառաբանված կարելի է համարել հայկական «Վարք սրբոցի» թարգմանությունը վրացերեն<sup>1</sup>:

Հայ-վրացական միջհամայնքային խնդիրները քննարկելիս, անշուշտ մոռանալու չէ բավական երկար ժամանակ հայկական միջավայրում բյուզանդական եկեղեցու գորեղ ազդեցությունը գոյատևած և ժամանակ առ ժամանակ պաշտոնականացման հավակնող քաղկեդոնական համայնքի առկայությունը: Մանազկերտի ժողովից հետո, ինչպես և նրանից որոշ ժամանակ առաջ, հայ քաղկեդոնականները կամ պետք է դարձի գային՝ որդեգրելով ազգայնացող եկեղեցու գաղափարախոսությունը, կամ հեռանային հոռոմների ու վրացիների երկիր: Վիրք հասնողներն անշուշտ պիտի նպաստեին տեղական հայկական համայնքներում այս կամ այն չափով ծայր առնող մշակութային-դավանական խորթացմանը և աստիճանաբար սերտաճմանը վրաց հասարակության մեջ<sup>2</sup>:

Հայ-վրացական եկեղեցա-դավանական համերաշխության հեռանկարը առավել ևս մթազնվեց, երբ բյուզանդական կայսրության սահմաններից դուրս հանվեցին հայազգի և հայադավան տասնյակ հեղինակություններ, որոնց մասին խոսում է Ստեփանոս Տարոնացին: Վրաց միջավայրում բյուզանդացիների այդ քայլը կարող էր ընկալվել իբրև հակամիաբնակ ջատագովությունը գորացնելու մարտահրավեր: Անիի Բագրատունյաց թագավորության դադարումից հետո նկատելի աշխուժացան Բագրատուն-

<sup>1</sup> Հայոց «Վարք սրբոցի»-ի վրացական խմբագրությունը, թարգմանությունը հին վրացերենից ու ուսումնասիրությունը Պարույր Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2008:

<sup>2</sup> Հարցի ելակետային քննության համար տե՛ս Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1955, стр. 209-306.

յաց վրաց ճյուղի միջամտությունները հայկական խնդիրներում, նորից կենդանացան հայ-վրացական քաղաքական ու դավանական միասնության հասնելու դինաստիական ձգտումները: Այլ կերպ դժվար է բացատրել Բագրատ Դ թագավորի հորդորմամբ Ղրտիալում վրաց և հայոց վարդապետների՝ դավանության շուրջ վարած քննարկումները: Աղբյուրները հակասական ամփոփումներ են հաղորդում այդ ժողովի ընթացքի ու ավարտի մասին: Ըստ վրացական տեղեկությունների Մարմաչենի Սոսթենոս առաջնորդը կատարյալ պարտություն է կրել, մինչդեռ Սոսթենոսին ու նրա կուսակիցներին վրաց հոգևորականների նկրտումների մերժումը հաղթանակի հավասար ելք է դիտվել:

Ուշագրավ է, որ քաղաքական իշխանությունների մերձեցման ձգտումներին սատար էին կանգնում նաև հարևան երկրների դավանական համայնքների հոգևոր ներկայացուցիչները (հիշենք Աբուկուրի առաքելությունը), բայց տարածաշրջանի էթնո-դավանական կացությունը ամենևին նպաստավոր չէր: Եվ այնուամենայնիվ ԺԲ. դարի սկզբներից, Վրաց Դավիթ Շինարարի թագավորության տարիներին, հայ-վրացական միջհամայնքային դավանական հանգստություն թե համերաշխություն հաստատելու փորձերը նորից օրակարգ մտան: Շատ բնական է, որ Հյուսիսային Հայաստանը օտար իշխեցողներից ազատելու և Դավիթ Շինարարի տիրապետության սահմաններ ընդգրկելու երկստեք շահեկան ծրագիրը համակրանք պիտի շարժեր նաև երկու երկրների հոգևորականների միջավայրում: Դավիթ և Հովհաննես Սարկավազի մտերամական առնչություններին վերաբերող պատմիչների տեղեկությունները (Մատթ. Ուռհայեցի, Կիր. Գանձակեցի, Վարդան Արևելցի, Ստ. Օրբելյան), ինչպես նաև «Քարթլիս ցխովրեբայի» հայերեն թարգմանություն-խմբագրության հավելումները կյանքի են կոչվել այդ նոր միջավայրում: Եթե վրաց որոշ հոգևորականներ շարունակում էին «յոթն անգամ անիծյալ» կոչել բանակցող դիմացի կողմին, ապա նույն միջավայրի բարձրաստիճան այլ հոգևորականներ Սարկավազին հարցումներ էին ուղում՝ սուրբբրական առանձին տեղիներ մեկնաբանելու խնդրանքով, իսկ Հյուսիսային Հայաստանի երկաբնակ վանքերի հայազգի գործիչները ջանում էին հայերենի թարգմանել վրաց մատենագրության ձեռքբերումները<sup>1</sup>:

<sup>1</sup> Այս շրջանի մատենագրական-մշակութային խնդիրների ուսումնասիրությանն են նվիրված Լ. Մելիքսեթ-Բեկի «Խճճճճճճ մեծայտա կոմպլեքս մոմլեզնոն» և մատո յոնոմոմ... մենագրությունը (Թիֆլ., 1928), Ի. Աբուլաձեի մի շարք հոդվածներ (տես

Միջամտություններով հանդերձ, «Քարթլիս ցխովրեբայի» միաբնակ հայ թարգմանիչը լիովին գիտակցում էր բախտակից հարևան ժողովրդի պատմական անցյալը ճանաչելու կարևորությունը իր հայազգի կուսակիցների համար: Հայոց դիրքորոշումը այս խնդիրներում առավել լիարժեք դրսևորվում է Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թղթում: Նա գտնում է, որ նույնադավանության հասնելն այլևս անկարելի է, ուստի ամենքս մնանք մեր դավանանքին, բայց հարգենք դիմացինի ավանդները, որո՞մ չցանենք ու թշնամություն չսերմենք:

Լոռեի ու Անիի ժողովները ևս փաստական արդյունքի չբերին, բայց հայկական և վրացական համայնքներում այլևս գիտակցվում էր ընդհանուր շահագրգռության առկայությունը. այդ են վկայում Սադուն Մահկանաբերդցու, Շահաբադինի, Ումեկի ու մյուս հայազգի գործիչների ձեռնարկումները Վրաց թագավորության շրջանակներում: Այս գիտակցությունը բավական երկար ժամանակ շարունակում էր իրեն զգացնել տալ, սակայն ներքին ու արտաքին հարատև ազդակների ներգործությամբ Վրաստան երկիրը բաժանվեց առանձին թագավորությունների ու իշխանությունների, բնականաբար խաթարելով նաև երկրում ձևավորված հայկական համայնքների քաղաքական ու մշակութային հաղորդակցությունը:

Այս դարերում վերջիններիս հիմնական կենտրոնատեղին Քարթլին ու Կախեթն էին, մանավանդ նրանց մայրաքաղաքներ Թիֆլիսն ու Գրեմին: Այդ է պատճառը, որ ուշ միջնադարյան Վրաստանում հայոց եկեղեցիների այդքան նկատելի կուտակումներ ենք գտնում վերոհիշյալ երկու քաղաքներում: Հիշյալ պարագան բացատրելի է նաև նրանով, որ Վրաց թագավորության սահմաններում ավանդաբար քաղաքները մտնում էին արքունապատկան տիրույթների մեջ, իսկ քաղաքներում բավական կշիռ ունեին արհեստավորական ու առևտրական խավերը, որոնք հիմնականում արքունի ճորտեր էին ներկայացնում: Ընդ որում՝ քաղաքների հայկական համայնքները չէին մասնակցում ավատատիրական կազմավորումների ներքաղաքական քաջքշուկներին, չունեին սեփական վարչա-քաղաքական ծրագրեր և որպես կանոն կայուն ու վստահելի հենարան էին թագավորական իշխանության համար: Սակայն այդ բնավ չի նշանակում, թե հայկական

նրա «Յճոթթճո», թ. IV, տձ., 1985), նաև Պ. Մուրադյանի «Հայաստանի վրացերեն արձանագրությունները» (Երևան, 1977) գիրքը:

9 - Տին Թիֆլիսի հայոց եկեղեցիները

Համայնքները մասնակցություն չէին բերում տեղի վարչական, տնտեսական ու մշակութային խնդիրներին: Այդ առումով նրանք վրացական հասարակության լիիրավ անդամներ էին և իրենց վրա կրում էին հասարակական կյանքի բոլոր վարուվերումները:

Հիշյալ առումով ոչազրավ արձանագրումներ են կատարում պարբերաբար Վատիկան զեկուցագրեր ուղարկող լատին քարոզիչները: 1633 թ. հոկտեմբերի 1-ին Դոն Պիետրո Ավիտաբիլեի գրած զեկույցում կարդում ենք. «...Այս կողմում նոր ապստամբության ձայն է ընկել, քանզի նոր թագավորը (խոսքը Ռոստոմ թագավորի մասին է - Պ. Մ.) չահին ուղարկելու համար յուրաքանչյուր երեսուն ընտանիքից բարետես տղա է պահանջում: Հայերը մերժեցին այս [պահանջը]: Գեմ են նոր կարգերին, երիտասարդի փոխարեն գերադասելի են համարում փող տալ: Վրացիների որոշման մասին ցայսօր ոչինչ չգիտեմ: Միայն, ինչպես ասացի, ժողովրդի մեջ բացորոշ խոսում են թեյմուրազի արձագանքի մասին, վախենում են, թե այսպիսի հարկը ամենամյա հարկ չդառնա...»<sup>1</sup>:

Հարկավ Գորիի հայկական համայնքը մտահոգվում էր ողջ բնակչության անունից և այս հարցում ավելի վճռական լինելու պատճառն այն էր, որ «Ամենամեծ առևտուրը, որով զբաղվում են այս տեղի դիդեբուլները (բոլորը հողագործ են, նրանց մեջ միջին խավ չկա. կամ պարոններ են, կամ՝ ճորտեր) աղջիկ-տղա թուրքերին ծախելն է: Եվ այն էլ քիչ հո չեն ծախում՝ տարեկան համենայն դեպս չորս հազար դոնե տանում են, կամ հարկի տեսքով ուղարկում»<sup>2</sup>:

Գուցե և այստեղ չափազանցում կա, բայց դժբախտաբար ցավալի իրողություն է: Հայերը տեղական դիդեբուլներ չէին և այդ առևտրով չէին էլ կարող զբաղվել: Բայց նրանք իբրև վրաց հասարակության մեջ ներգրված համայնք (անկախ պատրոն կամ ճորտ լինելուց) կրում էին երկրին հասնող բոլոր փորձությունները և համապատասխանաբար արձագանքում:

Միջնադարյան վրաց իրավունքի հուշարձաններից տողերիս հեղինակին ծանոթ չէ որևէ հոդված, վճիռ կամ որոշում, որով էթնիկական հիմքի վրա սահմանափակվեր հայկական համայնքի կամ նրա անդամների իրավունքը: Հայ մարդն ուներ դասային ու դասակարգային նույն կարգավիճակը, ինչ նրա կողքին ապրող վրացին: Հայազգին առիթ ու պատճառ չունեին թաքցնելու իր էթ-

<sup>1</sup> Ըոն քոյքրո սցոթաձոլլը, ցնոձքո Նախարտցեղոջ (XVII Ն.), Մեջցալո, տարց-ձանո ձա կոմբոնարքո ձքյան ցոորցաձոսն, տձ., 1977, ցք. 59.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 34:

նրիկական պատկանելությունը, ոչ իսկ դավանական նախասիրությունը: Հայկական եկեղեցի կառուցելիս կամ նրանում խոստովանելիս հայազգին ինքնըստինքյան բացահայտում էր իր ազգությունն ու դավանությունը: Վրաց արքունի երևելի պաշտոնյաներ Հովսեփ Ղորղանյանն ու Հովսեփ Բեհբուզյանը իրենց դիվանագիտական առաքելություններից մեկի ժամանակ՝ 1795 թվականի արշավանքից առաջ հանդիպում են Աղա-Մահմեդ-խանին ու նրա զորքին: Այդ մասին տեղեկացնում են արքայազն Յուլոնին: Ի պատասխան սպասելի հանդիմանություն, թե այդ պարագայում ինչո՞ւ նրանք զորք չեն պահանջել, գրում են. «Բայց մենք ինչպես կարող ենք զորք պահանջել. մեկ խան, իսկ մեք երկու հայ, բոլոր մնացյալները այս անհավատի կողմնակիցներ են»<sup>1</sup>: Ուրեմն՝ էթնիկական կամ դավանական իմաստով հայ լինելը հանդիմանելի իրողություն չէր ոչ արքունիքի և ոչ վրաց հասարակության համար<sup>2</sup>: Ավելին, աղբյուրներում կարելի է գտնել հիշատակություններ, երբ այս կամ այն անհատը կարող էր էթնո-դավանական մեկ հանրությունից հրապարակավ անցնել մեկ այլ համայնք: Այսպես, օրինակ, նույն Ավիտաբեիլի զեկուցագրում ունենք նման իրողություն հիշատակություն. հայրենակիցների ու դավանակիցների պարսավանքին ի պատասխան կաթոլիկությանը հարած Նիկոլո Չոլոզաշվիլին (ապագայում հայտնի գործիչ) իրեն դատապարտողներին պատասխանում է. «Ամեն օր մեր աչքերով ենք տեսնում, որ վրացիները հայանում են, իսկ մեծասանությունն էլ թուրքանում է, ծառայության են գնում ինչպես պարսիկներին, այնպես էլ թուրքերին: Արդյոք ինչո՞ւ մարդ կաթոլիկություն չպիտի ընդունի»<sup>3</sup>:

Գուցե «ամեն օր աչքով տեսնելը» չափազանցություն է, որովհետև «հայանալը» (իմա՝ հայոց եկեղեցու ծուխ դառնալը) ուղղափառությունից հրաժարվողին որևէ արտոնություն չէր օժ-

<sup>1</sup> «საქართველოს სიძველეები», ტ. III, ტფ. 1910, გვ. 108.

<sup>2</sup> Միայն ժԸ. դարի վերջին, երբ Կորգանովի կազմած կանոնակարգով վրաց արքունիքում փոխվեց գահաժառանգության կարգը և այդ իսկ պատճառով էլ Գեորգի ԺԲ-ի մահից հետո ստեղծված շփոթից օգտվելով ուսուսաց կայսրը վերացրեց թագավորությունը, անիշխանության մատնված արքայազները հետին թվով սկսեցին մեղադրել այդ նոր կարգը սահմանողներին: Դավիթ արքայազնը հորինեց մի նոր իրավական փաստաթուղթ, որով կարելի և անկարելի սահմանափակումների էր ենթարկում Վրաստանի հայ համայնքի կարգավիճակը: Սակայն հիմք չկա նոր մտածումները (և ոչ օրենքները) տարածել միջնադարի վրա, ինչպես այդ կատարում է հայ-վրաց-ուսու հարաբերությունների պատմությանը նվիրված ծանրակշիռ աշխատության հեղինակ Պավել Չորանյանը (նշվ. աշխ., էջ 109-126):

<sup>3</sup> Ջոն Զոյգերոս Բյուզանդացի, նշվ. աշխ., էջ 66:

տում, ապահարկ չէր դարձնում, հետևաբար «հայացումը» կարող էր թեղադրված լինել ընտանեկան կամ բարոյական պարագաներով: Հայ արհեստավորին, առևտրականին կամ հողագործին ճորտագրվելը և այդ հանգամանքով «հայանալը» գործնականում ճորտին ճորտանալ էր նշանակում, որ պարզապես անիմաստ էր: Ուրեմն այդ կարգի եղելությունները, կրկնում ենք, կենցաղային հողի վրա էին կատարվում:

Աղբյուրներին անծանոթ չեն և հակառակ դեպքերը. Թիֆլիսի հայոց Սահակաշեն եկեղեցու հիմնադիր Աբեղինանց Սահակի թոռ բժիշկ Ստեփանոսը մերժեց պապենական աղոթարանի ավագերիցությունը, այն հանձնեց Տեր Ասատուրին, իսկ ինքը ուղղափառություն ընդունեց, որ ասել է թե «վրացիացավ»<sup>1</sup>: Պրոֆ. Ս. Կակաբաձեի հրատարակած 1706 թ. վրացական մի վավերագրում ասված է. «ես հայ էի և ձեր եկեղեցում մկրտվեցի»<sup>2</sup>: Նման փաստի ենք հանդիպում ժԱ դարում. «Վարք Հովհանի և Եփթուհիմեի» երկում կարդում ենք. «եկավ նաև Գյուրպելին՝ Ջոշիկի գանձապահաց ավագը, և մկրտվեց, քանզի հայ էր, և Արսեն կոչեցին» (1946 թ. հրատ., էջ 41, § 85: 1967 թ. հրատ. էջ 80): Այս կարգի վկայություններին մեր օրերում կարելի է այլևս լիովին վրացականացած մի շարք գյուղեր ու համայնքներ ավելացնել՝ Քարթլիում ու Կախեթում, ուր իբրև երբեմնի հայություն վկայություն հայերենագիր արձանագրություններ ունեցող եկեղեցիներ են (ճիշտ կլինե՞ր էին) պահպանվել<sup>3</sup>:

Հարկավ, վրացիացող հայերը ևս որևէ տնտեսական կամ բարոյական առավելության չէին հասնում, բայց այս դեպքում տվյալ ընթացքը կարելի է բնականոն նկատել. հարյուրամյակներ վրաց միջավայրում ապրելով ու երկրի տերերի հետ շփվելով վիրահայությունից գավառաբնակ գանգավածները կտրված էին հայկական միջավայրից, նրա սնող մշակույթից ու վարչական միավորող պաշտոնեությունից, ուստի կենցաղի մակարդակում նրանք ոչնչով չէին տարբերվում հարևան վրացիներից՝ բացի ազգային եկե-

<sup>1</sup> Վրաստանի կենտրոնական արխիվ, ֆոնդ 1448 (226), վավ. № 3897: Հղումը ըստ Մամիսա Բերձնիշվիլու «თბილისის ვარჯჯახი სახე XVIII ს-ში», გვ. 31.

<sup>2</sup> «ისტორიული საბუთები», წ. V, გვ. 8. Վավերագրերից մեկում (Կաթ. դիվան, թղթ. 18, վավ. 214) թագուհի Դարիան վկայում է Փիրալովի «խսկական հայ լինելը»: Արդյոք սա նշանակո՞ւմ է, թե Վիրքում կային «ոչ իսկական հայեր», այսինքն՝ լուր գավառանքով հայ հորջորջվողներ:

<sup>3</sup> Ի թիվս այլ հրատարակությունների՝ նրանց կարելի է ծանոթանալ տողերիս հեղինակի «Армянская эмиграция Грузии: Картли и Кахети» գրքում (Ереван, 1985).

ղեցուց, որտեղ գործող լեզուն ևս անհասկանալի էր դառնում այլևս<sup>1</sup>:

Վրացախոս դարձող այս զանգվածն է, ահա, որին ժԹ. վերջերին սկսեցին մամուլում «վրացի գրիգորյաններ» հայտարարել և գործնականորեն խթանել նրանց իրական վրացականացումը<sup>2</sup>: Այս հորինովի «տեսության» դեմ ժամանակին հանդես եկավ վաստակաշատ աղբյուրագետ-պատմաբան Գյուլտ ա. ք. Աղանյանցը, խոստանալով «Դիվան հայոց պատմության» հատորներից մեկում ամփոփել Վրաստանի հայերին վերաբերող անտիպ նյութեր<sup>3</sup>: Հարցի վերստին արծարծումներին փորձեց պատասխանել տողերիս հեղինակը, սակայն, ցավոք, ընթացքն այլևս անկասելի էր<sup>4</sup>:

Ամփոփենք. դարերով կողք-կողքի ապրող ժողովուրդները, բնականաբար պիտի ունենային էթնիկական, քաղաքական, մշակութային ու դավանական փոխատեղումներ ու փոխթափանցումներ, առավել ևս՝ երբ նրանց պատմական ճակատագրերը միմյանցից քիչ են տարբերվել, երբ մեկի գոյությունը պատենչել է մյուսին արտաքին վտանգներից: Այս իրողությունը գիտակցող մատենագիրները չէ, արքաներն իսկ շրջահայացություն են ունեցել դուրս գալ ամեն կարգի նեղմտությունից ու արժեվորել զրկից ու բակկից հանրությունը: Ահա, օրինակ, Հերակլ Բ արքային վերաբերող մի քանի բնութագրումներ հայ հեղինակների երկերում. «Իսկ իշխողն Վրաց, որ էր ի վաղուց հետև անտի մեծ երախտաւոր երկրիս, որ քանիցս անգամ սաստիկ պատերազմաւ ի յօտար թշնամեաց գերծուցեալ էր գերկիրս և յատկապէս զիշխօղսն սորին իսկ, և որպէս թէ զիւրն համարելով՝ քաղցր ակամբ հայեր...»<sup>5</sup>: Իր երկրի քաղաքական ու

<sup>1</sup> «Գավառաբնակ զանգվածներ» հասկացությունը շեշտում ենք, որովհետև մայրաքաղաքում բնակվողները ազգային մշակույթին ու ավանդներին հաղորդակից դառնալու լայն հնարավորություններ ունեին. Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գրքի» հիշատակարանում պատահականորեն չի շեշտվում, թե սուրբը ուսման գնաց Թիֆլիս քաղաք և այնտեղ աշակերտեց «Մեծ վարդապետին Հայոց Յոհաննու Որոտնեցոյ՝ աշակերտին մեծին Յեսայեայ» («Հայ. ձեռ. հիշատակարաններ», Ժէ դար, հատ. Բ, էջ 321):

<sup>2</sup> Ազգայնական այդ գործընթացը վերակենդանացավ անցյալ դարի վաթսուներկան թվականներից սկսած, երբ Վրաստանի ԳԱ Պատմության ինստիտուտում ստեղծվեց վրացախոս հայերի «երբեմնի վրացական ազգանուն-տոհմանունը վերականգնող» հանձնաժողով, որի տված տեղեկանքների հիման վրա հարյուրավոր (եթե ոչ հազարավոր) հայեր էթնիկական նոր պատկանելություն ու անձնագրեր ստացան:

<sup>3</sup> «Տարազ», 1919, № 6, էջ 44:

<sup>4</sup> «Грузины григорианского вероисповедания?!». Миф или реальность.- “Эпоха”, 1990, № 8 (11 октября).

<sup>5</sup> Գարեգին կաթողիկոս, Նիւթեր և ուսումնասիրություններ հայ արուեստի և մշակույթի պատմության, պրակ Ե., Անթալիաս, 1951, էջ 50:

տնտեսական շահը հստակ գիտակցող Հերակլը հարգում էր նաև Հայոց եկեղեցին ու նրա սրբությունները. նրան դիմավորող էջմիածնի հոգևորականները արշավանքի ելած արքային մեղմելու համար հանում են «աստվածամուկ սուրբ Գեղարդն և զայլ սրբութիւնսն, որոց ջերմեռանդ հաւատով երկրպագեալ՝ կատարեաց զուխտն հանդերձ իւրայնովք»<sup>1</sup>: Եվ սա սոսկ ցուցական քայլ չէր. ԺԸ. դարի վերջերին Մոսկվայում ապրող Աբել Գուլասպյան Թիֆլիսեցին «Պատմութիւն թագաւորաց»-ում հավաստում է, թե Հերակլը «և եկեղեցի մեր ընդունի և ի սիրով մտանէ երբեմն եկեղեցի մեր և աղօթեանդ և ուխտ առնէ, և երբեմն տալ նուէրս եկեղեցոյ և ի քահանայից և կուսանաց մերոց ի տօնի ծննդեան Քրիստոսի և ի Զատկի և ոչինչ հարկ առնու եկեղեցական կղերիկոսաց»<sup>2</sup>:

Ուստի ճանաչենք մեր արժանավոր նախնիներին և մեր կեցվածքով չմթագնենք նրանց թողած հիշատակը. վերջին հաշվով «որք միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք՝ զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր... զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս...» (Ա՛ն Գաղատ., Գ, 27-29):

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>2</sup> Տե՛ս ստորև «Նկարագրական վկայություններ» բաժինը:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ



# ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՅՈՒԹԵՐ

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Կաթողիկոսական դիվանի № 29 թղթապանակում 125 համարի տակ պահպանվում է կապտագույն երկարավուն թերթերից կազմված մի պրակ, ուր ամփոփված են վերահայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպ. Աշտարակեցու պահանջով ԺԹ դարի առաջին տասնամյակներին Թիֆլիսի եկեղեցիների ավագերեցներից կամ հոգաբարձուներից ստացված պատասխան գրությունները՝ թե ինչ գիտեն իրենց եկեղեցու հիմնական թյուրքերից կամ նորոգության մասին, գրավոր կամ բանավոր ինչ վկայություններ կան, ինչ հասույթ ունեն և այլն:

Պատասխանների թվագրություններից կարելի է վստահանալ, որ Ներսես արքեպիսկոպոսը հիշյալ խնդիրներով սկսել է հետաքրքրվել առաջնորդի նշանակում ստանալու առաջին իսկ ամիսներից: Մեզ հասած զեկուցումներից մի քանիսը կրում են 1815 թվականը: Նրանց մեկ մասը ստացված իսկազիր է՝ ստորագրություններով, որ ի մի են հավաքվել և պրակ կազմել, մյուս մասը, ինչպես երևում է, ընդօրինակվել և մուծվել են պրակ:

Կազմ ծառայող կիսաթերթի վրա կարդում ենք. «Վասն եկեղեցեաց Թիֆլիզոյ և այլոց»: Իբրև մասնավորեցում նույն էջում ավելացվում է. «Վասն ծամանակի շինութեանց և շինողաց եկեղեցեաց Թիֆլիզոյ. վկայութիւնք ծերունեաց և արձանագրութեանց օրինակի: Նաև Մարմաշինոյ և յԱնույ քաղաքի ոմանց եկեղեցեաց արձանագրութիւնք»:

Անիին և Մարմաշենին վերաբերող էջերը (18-25) գրված են ավելի վաղ, համեմայնաբար նրանցից մեկը (էջ 20) կրում է 1814 թվականը և ուղարկված է Ղոչավանից (Հոռոմոսից): Այդ նշանակում է, թե արքեպիսկոպոսը նման խնդիրներով զբաղվել է ավելի վաղ: Պրակը կազմողը նյութերը մեկտեղելիս նկատի է ունեցել նույնական բնույթ կրելը և նույն անձի հանձնարարություն լինելը:

Արդ, կաթողիկոսական դիվանի այս միավորը (թղթ. 29, վավ. 125) մինչև հիշյալ հասցեն ստանալը, հավանաբար, գտնվել է Թիֆլիսում, ուր ավելի ուշ նախանձախնդիր մեկը ընդօրինակել է բոլոր այն էջերի նյութերը, որոնք վերաբերում են վրաց մայրաքաղաքի հայոց եկեղեցի-

ներին: Ընդօրինակողը ճանաչել է նյութերը, ուստի երբեմն ավելացրել է պատկան եկեղեցու անունը: Նա նույնիսկ նոր խորագիր է մտածել՝ «Թիֆլիզու Մողնի, Բեթղեհեմ, Նորաշեն, Սուրբ Նշան և Սահակաշեն եկեղեցեաց պատմութիւն»: Այս ընդօրինակութիւնն այժմ պահպանում է Թբիլիսիի Զեռագրերի ինստիտուտի հայկական վավերագրերի հավաքածոյում (*Arm.d. 156*): Դատելով վավերագրերում եղած վրացերեն հատվածների ու ստորագրութիւնների զանց առնելուց և փոխարենը «վրացերէն» մատնանշում կատարելուց, ընդօրինակողը անձանոթ է եղել վրացերէնին: Միավորը ժամանակին կրել է 1633 համարը: Առաջին էջի վերին ճախ անկյունում ծանոթագրված է վրացերէնով. «Տեղեկութիւններ հայկական եկեղեցիների վերաբերյալ Թիֆլիսում»: Գուցե մեղանշած չլինենք, եթե ենթադրենք թե այս վավերագրերի ընդօրինակողը Հարութիւն ավագ քահանա Ալամդարյանն է. միավորի 23-րդ էջին զետեղված է Ալամդարյանի և Մինաս արքեպիսկոպոսի ստորագրութեամբ 1828 թ. մարտի 15-ին ուղարկված ազդարարութիւնը՝ «Յարգոյապատիւ աւագերիցանց և պատուական քահանայից Տիգրանայ», գրված մյուս էջերի հետ նույնացող գրչութեամբ: Ընդ որում ընդօրինակութեան 15-րդ էջից հետո լրացված նյութերը չկան կաթողիկոսական դիվանում պահվող մայր օրինակի մեջ, ուստի ստորև «Ներսի Հալաբարու Սուրբ Գեորգայ եկեղեցու» սկզբնավորութեանը վերաբերող 1816 թ. փետրվարի 3-ին կարճառոտ գրութիւնից հետո եղածները հրապարակվում են ըստ *Arm. d. 156*-ի:

Այսպիսով՝ *A*-ն Երևանի օրինակն է, *B*-ն՝ Թիֆլիսի: Ընդ որում՝ բառային կամ գրադարձութեան ոչ կարևոր տարբերութեցումները ավելորդ համարեցիքն արտացոլել:

Ընթերցողին զգուշացնենք, որ «Հավելվածի» նյութերը հիմնականում ուշմիջնադարյան են, ուստի նրանցում այլագրութեան բազմաթիվ օրինակներ կան, ինչպես նաև քիչ չեն տեղական խոսվածքով պայմանավորված գրութիւնները: Միօրինակ դասական կամ ավանդական ուղղագրութեան վերածելը կխաթարեր նրանց բանասիրական արժեքավորութիւնը, ուստի ջանացել ենք քիչ միջամտել:

## [ՍՈՂՆԻ / ՍՈՒՂՆԻ]

*Թիւ առաջին հիմնարկութեանն հնոյ սրբոյ տաճարիս Մողնին, որ էր վաղ ուրեմն կառուցեալ յայսմիկ տեղի, յամի Տեառն 1356:*

*Թիւ երկրորդապէս նորոգմանն ի հիմնարկութենէ նորոյ սրբոյ տաճարիս, որ կայ աժմ հաստատեալ, յամի Տեառն՝ 1752:*

*Կամաւ և կարողութեամբն Աստուծոյ ի հիմանէ շինեցաւ սուրբ եկեղեցիս, որոյ անունն կոչի Կամակատար Աստուածածին, ի հայրապետութեան Տեառն Ղազարու երջանիկ կաթողիկոսին և ի թագաւորութեան աշխարհիս մերում Վրաց Թէմուրազ քրիստոսապսակի և որդւոյ նորին շերակլ տերութեամբ զօրացելոյն եղև շինեալ արդեամբ թիֆլիզեցի Մուրթօյնց Մամաչանի որդի Մկրտումին և Բաստամենց Ստեփանի որդի մահտեսի Մելքոյին և Բաշինչաղեցի Ղուլիչանի որդի Պօղոսին և սորայ առ Աստուած հանգուցեալ աներ Մկրտիչին, եղև ի աւագ քահանայութեանն մահտեսի Տէր Աբրահամին: Ով կարգաք ողորմի աւէք, Աստուած զձեզ ողորմի: Թիւն ՌՄ. (1751) Մարտի Ժ. (10) սկիզբ է:*

\* \* \*

*Ես՝ Մողնու միաբան ծերունի Տէր Գրիգորս, առաջի Աստուծոյ ականատես գուրով այսպէս վկայեմ, որ առաջին Փոքր եկեղեցումն ես դպրութիւն եմ արարեալ, ունէր երեք սեղան փոքրիկ՝ քիրաջով շինեալ, առաստաղն ցածր, նման Սհակաշիմու: Ի ժամանակս աւագ քահանայութեանն հանգուցեալ մահտեսի Տէր Աբրահամին եկեղեցւոյ չորս անկիւնն տեղիք առեալ ի պատճառս լայնացուցանելոյ, որոյ վերոյիշեալ երեք անձինքն եղեն պատճառք վերստին նորոգմանն և լայնատարած մեծացուցանելոյ մինչև ի վերին կամարներն և յետոյ Մեծ կաթողիկէն և ներսի բոլոր պայծառութիւնն աշխատութեամբ հանգուցեալ մահտեսի Տէր Աբրահամին է շինեալ՝ որն հանգուցեալ Ստեփան Փիթոյեանի արդեամբ, և որն սոյն եկեղեցւոյ արդեամբ, բայց հին Փոքր եկեղեցին նախ Տէր Ծմաւոնեանց է շինեալ, և զկնի քայքայելոյն Մանդեմեանք նորոգեալ էին: Այս է իմ գիտացածն առաջի Աստուծոյ:*

Հոգևորական ծայրագոյն կառավարիչ ի տանս  
Վրաց եւ ալլոց բարձր սրբազան Ներսէս  
արքեպիսկոպոս

Ի Մունթօյեան Մկրտումէ,  
Ի Բաստամեան Բէժանէ և  
Ի Բաշինջաղեան Գրիգորէ

Խոնարհաբար յայտարարութիւն

Սրբազնութիւն ձեր զոր հրամայեալ է յաղագս ի Թիֆիզ կառուցեալ Մուղնոյ եկեղեցւոյ շինութեան որպիսութեանն ցուցակ տալոյն, և ոմանք անձինք այլ իմն եղանակաւ գյայտարարութիւնս են մատուցեալ, իբր թէ ինքեանք իմասցին պանծալիք և երևելիք, բայց ոչ ամենեին այնպէս, «Քանզի քաղաք, որ ի վերայ լերին կայցէ, զի՞ արդ կարէ թագչիլ»<sup>1</sup>, վասն զի հնագոյն շինութիւն ինչ Մուղնոյ եկեղեցւոյն ոչ ինչ երևի՝ որով ոք ի կածիս ինչ մտցէ, այլ ի հիմանէ մինչև ցկատարն ի հաւուց մերոց տէր ի Մունթօյեան Մկրտումէ, ի Բաստամեան մահտեսի Մելքօյէ և ի Բաշինջաղեան Պօղոսէ է շինեցեալ, զոր Թիֆիզու հասարակութիւնն լաւապէս գիտէ, և ի յիշատակութեան յօր ի սուրբ պատարագւոջ ևս յայտնի երևի: Եւ յետ այնորիկ՝ եթէ հարկաւորութիւն և կամ պակասութիւն ինչ պատահեալ է սրբոյ եկեղեցւոյն, իւր եկեղեցական արդեամբք ստացեալ է ամենայն կերպիւ զբաւականութիւն, և ոչ ոք է, որ ի քահանայից և կամ ի յաշխարհականաց ոք ի յարդեանց իւրոց զծախս ինչ արարեալ իցէ ի պէտս սրբոյ եկեղեցւոյն, վասն այն, զի ի մէջ ամենայն եկեղեցեաց սոյն եկեղեցւոյ արդիւնքն կրկնապատիկ և եռապատիկ առաւել է, քան զայլոցն, և մինչև ցայսօր ամենայն հարկաւորութիւնք և պայծառութիւնք ի նոյն արդեանցն եկեղեցւոյ է եղեալ և ոչ ումեքէ, և է մինչև ցարդ, և յապագայն ևս, և զայս, զորս մեք յայտնի արարաք՝ եթէ ոչ իցէ սմա ճշմարտութիւն, և կամ քահանայից և ի յաշխարհականաց ոք իցէ, որ կարող գտանիցի ներհակօղ լինիլ բանից մերոց և ունիցի զիրաւունս խօսելոյ, թող ի ներկայութեան բարձր սրբազնութեան ձեր, առաջի երևելի իշխանաց և հանդիպմամբ աւագ քահանայից խօսիցի ընդ մեզ, և մեք օրինօք և հաստատութեամբ բանից

<sup>1</sup> Մատթ. Ե, 14:

տալոց եմք զպատասխանիս, իսկ եթէ ոչ՝ ճշմարիտ յայտարարութիւն մեր այս է առաջի սրբազնութեան ձեր, զի այնոքիկ, որ գաղտաբար այլ և այլ կերպիւ յայտ են արարեալ առաջի սրբազնութեան ձերոյ՝ յուսամք ոչ ընկալնուլ զայն ի տեղի ճշմարիտ յայտարարութեան և տալ մեզ ըստ խնդրանաց մերոց զբաւականութիւնս:

*1816 թուին Յունուարի 23-ին ի Թիլֆիզ:*

Յօյորժիմ մլնտոց [Մկրտում Մունթոյեւ]

Յեյսն Եսեճամոց [Բէժան Բաստամով]

Յրօյր Եսմօնճաւոց [Գրիգոր Բաշինճաղով]

## [ՆՈՐԱՇԷՆ]

Բարձր հրամանաւ սրբազան Առաջնորդին մերոյ Նորաշէն եկեղեցւոյ հնագոյն շինութեան և վերստին նորոգութեան թիւքն և անուանքն նշանօք գրեցաք յստորև

Առաջինն

*Ի թուին ԶԺԶ-ին (1467)<sup>1</sup>: Անունն Աստուծոյ ես Սատաթս մուլքս շինեցի զեկեղեցի՝ յիշատակ ինձ և ծնողացն իմոց՝ Հօրն իմոյ պարոն Սուլտանին և պապուն իմոյ պարոն Թաւաքալին, և կողակւոյն իմոյ Վիշելին, Նարիմանին, Սուլտանին և Շարիմանին:*

Երկրորդ շինութիւն

*Ի թուին ՌՂԹ-ին (1650) շինեալ է Խօջայ Նազարն և զկնի շինութեանն եկեղեցւոյ բոլոր իշխանութիւնն յանձնեալ է ի ձեռս Հանգուցեալ Մելիք Աշխարբեգին Բեհբուդեան Հաստատուն գրով, որոյ սոյն գրոյ թիւն է 1714:*

Երրորդ շինութիւն

*Ի ՌՄԽԳ (1795) թուին Հանգուցեալ Տէր Գրիգորն Նորաշինու սկիզբն է արարեալ նորոգ շինութեանն Հրամանաւ Հանգուցեալ Մելիք Աւետիքին Բեհբուդեան:*

Եւ չորրորդն

*ՌՄԾԷ (1808) թուին գործակալ Տէր Ղազարն Համակամութեամբ պարոն Մկրտում Մունթօյեանին և քանի մի պատուելի անձանց սկիզբն արար շինութեան:*

---

<sup>1</sup> B ԶԾԶ (1507):

## [ԲԵՌՂԵՎԷՍ]

Կամօքն Աստուծոյ հաստատեալ հոգևորական  
ծայրագոյն կառավարիչ բոլոր Վրացտանեայցս Հայոց  
Ներսէս շնորհագարդ արքեպիսկոպոս

Ողորմածագունեղ տէր,

Նախ քան զայս, որ ի ձերդ բարձր սրբազնութենէն հրամայեցաւ ստորագրեալ ծառայիցս ձերդ բարձր սրբազնութեան վասն Բեղղեհեմ եկեղեցւոյն՝ նախ թէ ո՞ւմ է շինեալ, երկրորդ՝ թէ որո՞յ թագաւորութեան ժամուոյ իցէ շինեալ, երրորդ՝ թէ որո՞յ սրբազան կաթողիկոսութեանն իցէ կառուցեալ և կամ քաղաքիս որո՞յ սրբազան առաջնորդութեանն, կամ թէ զի՞նչ է տարեկան զարդիւնս նորին:

Իսկ առ այն ամենախոնարհաբար այսպէս յայտ առնեմք ձերդ բարձր սրբազնութեանն, զի որպէս լուեալ եմք ի նախնեաց մերոց, քանզի այն փոքր մատուռն զոր այժմ կանանց կացութեան տեղին է, իբր թէ մեծ Տէր Բարսեղի պապ Տէր Գրիգորի շինեալ իցէ և ի մէջ կիսակատարութեանն սա վախճանեալ իցէ, զկնի որոյ թոռն նորին Տէր Բարսեղն իցէ աւարտեալ, և յոյժ բազում միջոց ի նմա պաշտօն իցեն կատարեալ, և վերոյ յիշեալ հիմնարկող Տէր Գրիգորն ի սուրբ յերուսաղեմայ Բեղղեհեմու հող իցէ բերեալ և ի հիմնարկութեանն գործածեալ, յաղագս այնորիկ Բեղղեհեմ իցեն անուանեալ, զկնի որոց թոռորդի սորին Տէր Գրիգոր իցէ եղեալ, որ սա այսօր ի մէջ եկեղեցւոյն է հանգստացեալ, որ սա և որդի սորին Տէր Բարսեղն զայս մեծ եկեղեցւոյ հիմն մասնաւորապէս իցեն արկեալ. և յայնժամ մեծ մահ իցէ անկեալ ի մէջ քաղաքիս, և սոքա ևս այնու իցեն մահացեալ:

Եւ այսպէս կիսակատար մնացեալ իցէ եկեղեցին մինչ ի յառաջանալ Տէր Սարգսին, և սա սկսեալ լինի շինել, որոյ շինութեան ժամանակ թագաւորն է եղեալ Նազարալի-խանն\*, զկնի որոյ Վախտանգ նէփէն, սրբազան կաթողիկոսութեանն իցէ եղեալ Եղիազարն, զկնի որոյ Աղեքսանդր, և Հախբատայ Սուրբ Նշանի առաջնորդ սրբազան

\* A-ն նույն գրչութեամբ լուսանցում է «Հերակլ՝ պապն երկրորդ Հերակլեայ»:

Բարսեղ Եպիսկոպոսն, զկնի որոյ սրբազան Թօմայ Եպիսկոպոսն, և սոյն Տէր Սարգիսն ի ժամ կիսակատարութեանն իցէ վախճանեալ, բայց զբոլոր նիւթքն շինութեան եկեղեցւոյն պատրաստի իցէ թողեալ, զկնի որոյ փոքր ի շատէ Խօջա Փարոյսն իցէ ձեռնարկեալ, և սա ևս վախճանեալ իցէ: Եւ զկնի սորա Բաղդասարն և Յարութիւնն իցեն ձեռնարկեալ, և սոքա ևս իցեն վախճանեալ, յետ որոց Փիլօլեանց Ստեփաննոսն իցէ ձեռնարկեալ, և սա իցէ վախճանեալ: Վերջ ամենից վերին սեաւ քարինքն մինչ ի կատարածն Աղայ Մելիք Բեհրուդեանն իցէ շինեալ և աւարտ հասուցեալ, և զկնի որոյ հարազատ որդի նորին հանգուցեալ Մելիք Աւետիքն շուրջանակ պարսպին եկեղեցւոյն սա լինի բոլորեալ, բայց այժմ Խօջա Փարոյսն ի մէջ հինգ նաւակատեաց պարտին յիշատակել, իսկ Տէր Սարգիս քահանայն, Բաղդասարն, Յարութիւն և Ստեփաննոսն՝ անխափան յամենայն ժամ, բայց Մելիք Աղայն և Մելիք Աւետիք, ըստ որում վերջին աւարտողքն են՝ ի մէջ «Վերստին նորոգմանն», և պատարագիչն ծածկաբար ի մէջ պատարագի յիշատակին, և բաց յայսմանէ հինգ քարինք գոն արձանագրեալ արտաքուստ ի մէջ որմւոյն եկեղեցւոյն՝ մինն ի պատճառ բարձրութեանն ոչ կարացաք ընթեռնուլ և արտագրել, և չորսին արտագրեալքն ձեռամբ տիրացու Գրիգորին առ արժանապատիւ վէքիլ Յօհաննէս հօրն է, թէպէտ կամէի ի սմա արտագրել, որովհետև աւագ քահանայն մեր ստորագրեալ ունէր ի նմա ոչ ետուն, վասն որոյ և մեք՝ ծառայքդ բարձր սրբազնութեան խոնարհաբար այսպէս կարողացաք յայտ առնել, և վասն տարեկան արդեանն ոչ գիտեմք, զայն ևս պատուելի երիցփոխան և աւագ քահանան ունեն ծանուցանել ձերդ բարձր սրբազնութեան, և մեք ներքոյ ստորագրողքս այսպէս եմք լուեալ ի նախնեաց մերոց:

Այժմ կամք սրբազնութեանդ կատարի:

1816 և Յունվարի 28

Եր ԹՅՅԵԵԵ Եր ԹՅԵԵԵԵԵ [Տէր Օհանէս Տէր Մակրտիչով]

Ամենախոնարհ ծառայ Տէր Միսիթար Տէր Ստեփաննոսեան

\* \* \*

Ես ի նախնեաց իմոց այսպէս եմ լուեալ առաջի Աստծոյ, որ եկեղեցին մեր ունեցել է բաղ, դուքան, ջաղաց, ոչխար և տաւար, և Տէր Սարգիս պապ Տէր Միսիթարին ծախեալ է և նոյն ծախսովն հիմն է արկեալ նոր եկեղեցւոյն, և եղեալ չորս անձինքն զորս եղին ընդ Տէր Սարգիս քահանային, այսինքն՝ Խօջա Փարոյսն, ի հինգ

*նաւակատեաց, և Բաղդասարն, Յարութիւնն և Ստեփանն յամենայն յաւուր. սոքա են աւարտ հասուցեալ:*

*Այսպէս եմ լուեալ առաջի Աստծոյ՝*

*Ծառայ Տէր Մելքիսէդ Բէթլէհէմու,*

*Ծառայ Տէր Մեսրօփ Տէր Գրիգորեան:*

\* \* \*

*ԹՎ. ՌՃԿԷ. (1718): Կամալն Աստծոյ մեք՝ Նարիմանեանց Բաղդասարի որդիք՝ Յովսէփս և Նարիմանս, շինեցինք մեր հանգստարանիս պարիսպն՝ մեր և մեր ննջեցելոցն ի Տէր, ամէն:*

Ճ. Թօսեկեյնց, յոջալո, մօնա Մյնո օտեյց՝ Եւ Նարիմանս. Ճօրօնօյնե ՅՅ [Յիշեա, Տէր, զծառայս քո Յովսէփ և Նարիման Քրոնիկոնի 406 (1718)] ունելով զհայեցս յարևմուտս:

*Ծան. B-ն վրացերենի գոյությունը հիշատակում է, բայց չի օրինակում:*

\* \* \*

*Կամալն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի ես Ամիրադէս և կողակիցն իմ Բէգի-խաթունս շինեցանք Սուրբ Կարապետս՝ յիշատակ մեզ և ծնողաց մերոց և արևշատութեան որդոցս: ԹՎին ՌՃԺԳ. (1664):*

*Որ էր գրեալ ընդ մէջ հարաֆոյ և յարևմտից ի ներքոյ կոփածու իմիք խաչի:*

*1704:*

\* \* \*

Ի կողմն հիւսիսոյ ի վերին կողմն դրան.

*Թիվ ՌՃԿԷ. (1718). Ծնորհօքն ամենագորին Աստուծոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ծառայքս Նարիմանի որդիքս՝ Բաղդասարս և իմ կողակից Սինդոխս և իմ որդիքս Յովսէփս և Նարիմանս, և իմ հարս Քեթեվանս, Մարեխս և իմ թոռունքս՝ Յարութիւն և Ստեփան, Սողոմօն և Գեորքս մեք [...]*

*Եւ այլն եղծեալ է սուրբ Աստուածածնի եկեղեցիս... և այլն եղծեալ:*

*Ծան. ԹՎականից առաջ այլ գրչությամբ B-ի վրա գրված է «Հրեշտակապետաց»*

յ. մյ Շոքոզիլման խեղանոտ մեղքոս Մշոկմա ՆՇրեջանամ ալեգաՄեյե Նանատյե (sic) Նեմոտ Նայլարո յեյ Կոջլադ Մժոնդոնա ժալոտ մլտոնստա. ճոնՇ Մոյոյոտեյեդեթ Մեյնդոնաս ցեյոննեյեդեթ. յորոնոյոն Նլլ.

*[Նա մեղավորս՝ խեղանոց Մեղքոյի որդի Ստեփանս կառուցեցի Սանաթու (?) վերև Ամենայն սրբի այս տաճարը Աստծո զորութեամբ: Ով կարդայք՝ ողորմի ասեք: Քրոնիկոնի 434 (1746)]:*

*Ման. Բ-ն վրացերենը չի օրինակում:*

\* \* \*

*ՌՃՂԷ (1748) շորհոքն ամենագորին Աստուծոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ծառայքս Խեչոյենց Մեղքոյի որդիս Ստեփանս և կողակից Աննայն ծնողացն մերոց Մեղքոյի և Թինաթինին, որդւոյն Փ[ա]րս[ա]ղանին և կողակցոքն [նորոգեցաք եկեղեցւոյս]... Ով ոք կարդայք մեզ և ծնողացն մերոց ողորմի ասացէք:*

Ի կողմէ հիւսիսաց արևմտեան կողմն, լուսամտին դրուատելոյ:

*Ման. Ա-ի հաջորդ երեք էջերը ազատ են:*

## [ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅ]

*Այսպէս լուեալ եմ իմ վարժապետներէն, որ ի Հայաստանն Հայք եկեալ են մինչև Մ (50) տուն բնակեալ են ի քաղաքոջս: Նոքա չեն ունեցել եկեղեցիք: Վաճառական ոմն Ջուղա[յ]եցի Զափուզ անուամբ շինել է գեկեղեցիս Հրեշտակապետաց՝ անուամբ Միքայէլի և Գաբրիէլի ի թիւին ԵՃՂԳ. (1144) ձևով սագաշէն:*

*Ի թուին Քրիստոսի 1748 Հերակլ արքայն ի ձեռնէ Տանկաց սոյն քաղաքս առեալ է, այնմ ժամու Սօմխէթու քահանայք քանի մի անձինք եկեալ բնակեալ են ի մէջ քայքայեալ եկեղեցոջս, Տէր Յօհան ոմն քահանայն շինութեան սկիզբն է արարեալ իբր ի հիմանէ, որպէս գրեալ ի վերայ արձանի ունի այսպէս.*

*Յնորհին Աստուծոյ նորոգեցաւ Սուրբ եկեղեցիս իբր հիմանէ ի ժամանակս Ղուկաս կաթողիկոսին և Հաղբատայ առաջնորդ Դաւթի եպիսկոպոսին և Հերակլ արքային Վրաց և Դաւիթ սարդարին, արդեամբ և աշխատութեամբ Տէր Յօհան քահանային աւարտեցաւ ի ՌՄԶ. (1757):*

*Ի աւերման քաղաքիս ի ՌՄԽէ. (1798) ի Տանկներէն այրեալ էր եկեղեցին, կրկին վերանորոգեցի իմով արդեամբն ես՝ Սուրբասանց տէր Տէր Առաքել աւագ քահանայս:*

*Տէր-Առաքել:*

*Ծան. ՌՄԽէ. թվականը պիտի ուղղել ՌՄԽԴ. (1795):*

## ՍԱՀԱԿԱՇԻՆԻՈՅ ԱՂԱԳԱԲ ԳՐՈՒԹԻՒՆՆ՝ ՎԱՍՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԺԱՍԱՆԱԿԻՆ \*

*Սկզբնաւորութիւն Սահակաշէն եկեղեցւոյն եղեալ [է] ի թուին Փրկչին 1703-ին ի ժամանակս Վախտանգ արքային Վրաց, որոյ հրամանաւ շինէ զսոյն<sup>1</sup> եկեղեցիս ազնիւ Աբեդիմեան Խօջայ Աւետիքի որդի բժշկապետ Սահակն<sup>2</sup> և զիւր անունն եղեալ ի վերայ եկեղեցւոյն, որ և կոչի Սահակաշէն:*

\* Թղթի ծալման պատճառով այս խորագիրը դարձել է A-ի 17v էջ: B-ն նրա փոխարեն ունի պարզապէս «Սահակաշէն»:

<sup>1</sup> B շինեալ է սոյն:

<sup>2</sup> A Սհակն:

## ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Արդ, յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք տանուտէր Ամիրին և իւր որդի տանուտէր Ապամագին և իւր առու արեան մերձաւորացն, որ շինեցին Սուրբ Նշանիս Սուրբ Նիկողայոսի եկեղեցիս իւր ժամատանովն և շրջապատովն: Աստուած ողորմի: Ամէն:

\* \* \*

Արդ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք Խօջայ Պարխուտարին և կողակցւոյն Գարեճագին, որ շինեաց զՍուրբ Նշանի եկեղեցւոյն զանկակատունն իւր խաչովն, զոր Տէր Աստուած երկնից արքայութիւնն պարգևեացէ և Գաբրիէլեան փողոյն արժանի արասցէ: Ամէն:

\* \* \*

Աստուած ողորմի Պարխուտարի դուստր Եագունդուն, որ իւր հօր շինած զանկակատունն քակվել էր, կրկին նորոգեց իւր խաչովն՝ իւր հոգւոյն յաւիտենական յիշատակ: Աստուած ողորմի: ՌՃԿԸ. (1719) թուին Յուլիսին:

\* \* \*

Աստուած օրհնէ տանուտէր Գիօրգին և իւր ծնողացն արքայութիւն պարգևէ, իւր որդիքն անփորձ և անասան պահեսցէ, որ եկեղեցւոյ պարիսպն յետ քաշեց՝ վասն իւրեանց հոգւոյ փրկութեան:

\* \* \*

Աստուած ողորմի տանուտէր Ապամագին և կողակցւոյն Ծափորուբանին և որդւոյն, որ վերստին նորոգեցին զեկեղեցին:

\* \* \*

Աստուած ողորմի պարոն Փէրիխանին, որ եկեղեցւոյ խաչկալն շինեց:

\* \* \*

Օրհնութիւնն աստուածային և այլն եկեացէ պարոն Մելիք Գիօրգուն, որ վերստին շինման և նորոգման եկեղեցւոյս Սուրբ Նշանի, որ զօրութեամբ արիացեալ կրկին ի հիմանէ շինեաց և մեծացոյց կամարածև և գեղեցիկ յօրինուածովք անջինջ և յաւիտենական յիշատակ անձին իւրոյ և ծնօղացն, և եղբարցն, և կողակցւոյն Սամփէրվանին, և նորաբողբոջ ծաղկեալ որդւոցն Զուրապին և Պապին, և դստերացն, և ամենայն արեան մերձաւորացն: Աստուած ողորմի ասացէք: Ամէն:

Որ եղև հիմնարկութիւն սուրբ եկեղեցւոյս ի ՌՃԾԲ. (1703) թուին, սորին աշխատութեան և ձեռնատու՝ մեր քահանայ Տէր Մովսէսին: Յետ այսորիկ ՌՃՂ. (1741) թուին օրհնեցին գեղեցիցին և մատուցին զփրկագործ պատարագն, որ պարոն Գիօրգին ելից զփափագ սրտին իւրոյ և արժանաւորեցաւ ականատես լինել սրբոյ եկեղեցւոյս, որ և յայսմ ամի եղև վախճան Մելիք Գիօրգուն, զոր Տէր Աստուած ողորմեացի իւրն և գերկնային արքայութիւնն պարգևեացէ և իւր որդւոցն երկար կեանս շնորհեացէ, որք զօրանան Աստուծով և զմնացեալ կաթողիկէն շինեն և աւարտեն՝ որքան ի մարմնի կան խաղաղութեամբ և խնդութեամբ վայելեն զկեանս իւրեանց և յետ աստեացս ելնելոյ տեսլեան փառաց աստուածութեանն արժանիս արասցէ, և Աստուած ողորմեացի ի միւս անգամ գալստեանն, ամէն:

Այլև յիշեցէք ի Քրիստոս, և Աստուած ողորմի ասացէք Մելիք Գիօրգին և կողակից Խամփերվանին և որդւոցն Զուրապին և Պապին, որ մէկ ակուռխանայ շինեց եկեղեցւոյս յիշատակ երես, Աստուած ողորմի:

Աստուած ողորմի ուստայ Բանահ Յակոբին հոգին, որ մի Սարգիս աշակերտ ունէր եկեղեցի շինման ժամանակին, բաշխեց եկեղեցւոյն, որ ծառայութիւն անէ, տարին մէկ լիտր ձէթ, մի չարէք մոմ տայ, Աստուած լուսաւորէ նորա հոգին:

Աստուած ողորմի Խօցօյեց Առաքելին և իւր կողակցւոյն, որ եկեղեցւոյս մէկ խցի տեղ առաւ և գերեզմանատուն: Աստուած ողորմի:

Աստուած ողորմի Ալահղուլունց Մուրադի որդի Մարտիրոսին և Փանոսին և ծնողացն և կողակցացն, իւր որդի Մուրադին, որ ժամատան մեծ դուռն շինեց իւրեան հոգւոյ յիշատակ:

Աստուած ողորմի Անդօյին, կողակից Գարեշանին և որդւոցն Գիօրգուն և Յարութիւնին՝ իւրեանց հոգւոյ լուսազին եկեղեցւոյս մօտ մէկ դուռքան տուին:

*Աստուած ողորմի Գասպարի որդի Մովսէսին, Յօհաննիս և Յոսէփին, որ իւրեանց քուեր որդի Մկրտումն անյիշատակ մեռաւ, մնաց տունն գրաւ, սրանք թափեցին, Մկրտումին յեկեղեցումն թաղեցին, տունն տուին եկեղեցւոյն, որ իւրեանցն էլ գերեզմանատուն լինի:*

\* \* \*

*Տէր Աստուած ամենազօր ընդ երկայն աւուրս արասցէ բարեպաշտ և աստուածասէր թագաւորն մեր օծեալն Թէմուրազ և որդի նորին Աստուածով զօրացեալ Հերակլ արքայն, որ առաջին թագաւորաց ողորմութեան գրեանքն տեսին, իւրեանք ևս նորոգեցին և շաղափաթլամայ գիր ետուն. այսպէս՝ Թէ մարդ որ մեռանի անյիշատակ, ոչ ուստր մնայ և ոչ դուստր, որպէս որ քաղաքացիք կամենան՝ այնպէս առնեն, որպէս որ մեք ձեռագրով հաստատեալ եմք, այսուհետև ոչ մենք և ոչ մերայինքն, և ոչ մեր առաջակայ իշխանքն հրաման չունին եղծելոյ: Կատարօղքն լիցին օրհնեալք՝ ասասցեն հրեշտակք և մարդիկք: Ամէն, եղիցի, եղիցի:*

\* \* \*

*Աստուած ողորմի դիւան Օթարին, իր կողակից Խամփերվանին, որ էլնալ մէլիքի տղայ Ռոստոմիցն մէկ դուքան գնեց իւր նաղդ փողովն քաղաքիս եկեղեցեացն վախմ երես՝ Վանքին, Սուրբ Նշանին, Ջկրաշէնին, Նորաշինին, Մօղնին, Փեթղեմէմին, Քամօյենց եկեղեցւոյն. էն դուքանի քրեհէն ութ մոմապատ մէկ մէկ ստել ամսենն մէկ անգամ տան ամէն եկեղեցւոյն, որ հանապազ Այսմաւուրքն կարդան, ասեն՝ Աստուած ողորմի:*

\* \* \*

*Աստուած ողորմի մահտեսի մեծ Տէր Նիկողոսին. Սուրբ եկեղեցւոյս դուռն փոխեց նոր տաշած քարով շինել ետ իւրեան հոգւոյ յիշատակ, Աստուած ողորմի ասէք:*

\* \* \*

*Բարեսէրն Աստուած որ կամի զի ստեղծուածքն իւր միշտ ի բարիս յառաջասցեն և գնոյնն գործեսցեն անյապաղ ջերմեռանդ սիրով, ուստի և յատկապէս շարժեցաւ ի գութ սիրոյ առ Սուրբ Նշան անուն հիմնեցեալ յեկեղեցիս, որ իսկ ի յիշատակ ոմանց բարեպաշտից յիսուն ամաւ յառաջ շինեցեալ գոյր, որոց անուանքն*

գրեալ կան ի կոնդակոջ յիշատակարանի եկեղեցւոյս: Սակայն ոչ էին լրացուցեալ, այլ կիսակատար շինուածովք թողեալ կայր առանց գմբեթի, զորոյ գշինումն բազումք խոստացան, բայց ոչ կարացին՝ վասնզի ոչ էր Աստուծով և մանաւանդ զի շատ ծանր մասրաֆ<sup>1</sup> ունէր շինումն սորա: Յետոյ Նա որ քննէ գծածուկն սրտից, ձգեաց ի սիրտ ումեմն բարեպաշտի և աստուածասիրի առն Մէհրապ-աղայ կոչեցելոյ, որդւոյ Ենովք-աղայիմ, որ յիրաւի ըստ անուանն և գործով ևս աղայ երեցեալ, զի այսպէս<sup>2</sup> ծանր և բազմածախ գործոյն եղև ձեռնարկօղ, որ մեծաւ ջերմեռանդութեամբ<sup>3</sup>, սիրով սկսեց գշինումն գմբեթին և հրաշալի կաթնուղիկէին, յոյժ գեղեցիկ և վայելուչ ձևով, շքեղ և զարմանալի տեսեամբ կանանչագոյն փայլուն և պայծառ շինուերի<sup>4</sup>, հոյակապ և բարձրաբերձ գմբեթիւ, լայն և արձակ միջոցաւ, ծաղկեալ գաւազանիւք և օրինաւոր լուսանցիւք. համարի թէ զհարսն լուսոյ զարդարուն կանգնեաց ի վերայ երկրի: Եւ ճշմարիտ է այս՝ զի քաղաքիս այս Թիֆլիզոյ պայծառութիւն և գեղեցկութիւն ետ, որոյ զգլուխն ոսկիզօծ խաչիւ պսակեաց և ամրափակեաց, սոյնպէս ևս ի ներքոյ գմբեթին բոլորակի վերնատուն շինել ետ, և շուրջանակի վերնատանն երկոտասան առաքելոց և չորս ակետարանչաց պատկերիւք շրջափակեալ զարդարեաց. ըստ ամենայնի ո՛չ խնայեաց զբազմութիւն ծախիցն, այլ միայն անխնայաբար ծախելով գեղեցկութեան ջանայր: Նաև ըստ երկայնութեան բեմին քարիւք քանդակելովք պատեաց և եօթն պատկերիւք տնօրինականաց շարակարգեաց, վասն որոյ, ով հաւատացեալ ժողովուրդք, ամենեքեանս ասացուք՝ Օրհնեալ լիցի յիշատակ մարդոյս այսմիկ, և զարդարիչն Աստուած զարդարեսցէ զհոգի սորին ծնողացն և համայն իւր ննջեցելոցն և զանուանս նոցա գրեսցէ ի գիրն կենաց:

<sup>1</sup> B-ի գրիչը ավելացնում է՝ ծախ:

<sup>2</sup> B այս:

<sup>3</sup> A ջերմնի:

<sup>4</sup> Վրաց. շինուերի - սքանչելի:

## [ՊԱՏՄՈՒԹԻՒՆ] ՏԳՐԱՇԵՆ ԵԿԵՂԵՑՈՒ, ՈՐ Ի ԹԻՖԼԻՉ

Սրբազան և շնորհազարդ առաջնորդիդ՝ տեառնդ Ներսէս գերազանցագոյն Արքեպիսկոպոսիդ

Խ ո ճ ա Ր Ի Վ Ա Ր Ա Ր Յ Ա Յ Կ Մ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

*Ըստ հրամանի մեծի տերութեանդ (որ զշինութենէ և զարդեանց Սրբոյ եկեղեցւոյս Ջգրաշինու), ահաւասիկ ուղղութեամբ և պարզապէս գրեալ ծանուցանեմ, զի Սուրբ եկեղեցին մեր գերկուս թիւս ունի. առաջինն է ի ՌՃԳ. (1654) թուին Հայոց և ի թագաւորութեանն Վրաց Վախտանգայ, իսկ ի հայրապետութեանն և ի յառաջնորդութեանն՝ չկարացի գիտել: Բայց ի ծերոց լուեալ եմ, թէ ի սկիզբն շինման եկեղեցւոյն ի Սուրբ Նշան եկեղեցւոյ և ի միաբանութենէ նոցին Տէր Բարսեղ և Տէր Դաւիթ յանուն քահանայք ելեալ են արտաքս և սկսել են զժողովուրդսն յորդորել, ոմանք տեղ տալով, որք են Փիրղուլեանք և Տէր Դանիէլեանքն, մինն աղիւս ընծայելով և միւսն դրամ նուիրելով, սօքօք արկեալ են զհիմն և բարձրացուցեալ մինչ ցերկուս մարդաչափս և ապա վախճանեալ են յաստի կենաց:*

*Յետ այնորիկ ի բազում ամս մնալով եկեղեցին այն թերի, զկնի բազում ամաց ոմն գօրցի Բէթանբէգ յանուն այր ի ժամ մահուանն իւրոյ վաթսուն թուման կտակ առնելով վասն Սուրբ եկեղեցւոյն՝ այնու ևս հասուցանելով որմունքն մինչև ի թաղն, այնուհետև տեսանելով ոմանց չորից բարեպաշտ անձանց այնպէս կիսակատար, որք ի վերայ որմունցն մին տակ թաղ են տալի՝ լինելով այնպէս միջոցս ոչ սակաւ: Հուսկ յետոյ՝ ի գալ աղայ Յովհաննէս Ամատոնեանին ի Թիֆլիս, որոյ տեսեալ զթաղքն ճեղքեալք և մերձ ի փլանիլ, զայնն քակել կամեցաւ և զնորոգ շինելն ընտրեաց, էր թիւն Փրկչին 1777 ի թագաւորութեանն Վրաց երկրորդին Հերակլայ և ի հայրապետութեանն Տեառն Սիմէօնի սրբազան կաթողիկոսի, իսկ Յովհաննէս աղայն զաշխատանս բազումս կրեաց՝ զորս և տանիլ տկարացաւ և փոխեցաւ առ Աստուած, սակայն զորդի նորին զշինելն չկամէր, վասն որոյ ես նուաստս երբեմն աղաչանօք, եմբեմն քարօզիւ և յորդորմամբ այնքան հետևեցայ՝ մինչև կամաւորեցի*

զնա, որ և կոչեաց զիս և ասաց. Ես կխարջեմ թէ դու ևս վերակացու թիւնս առնես, յայնժամ և ես զաշխատանս յանձին կալայ, և սկիզբն առաք արևմտեան կողմն հատանել զնոր հիմն՝ մեծացուցանելով զեկեղեցին ամուր հիմամբ և որմով, զթաղքն կաթուղիկէիւ և զանգակատամբ հանդերձ Աստուծով յաւարտ հասուցաք ի մէջ եօթն ամի, որ միայն ի ձեռն իմ խարջեալ եմ հազար և եօթն հարիւր թուման, և ի նմանէ ո՛չ ինչ տրտունջ չեմ լուեալ, որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ: Եւ մին փոքր բաղ ևս ետուր վախմ Սուրբ եկեղեցւոյն: Բաց յայսմանէ ունի ևս եկեղեցին երկու դուքան և ի բոլոր տարին ունի զարդիւնս հինգ թուման:

Սրբագնութեանդ խոնարհ ծառայ Տէր Սիմէօն աւագ քահանայ Ջգրաշէն եկեղեցւոյ:

18 $\frac{11}{11}$ 15

*1 դուքանի քիրայն ամիսն 3 ապպասի է, և միւսն փակ է յայսմ ամսեանս: Այգին ի տարին 2 թուման՝ քահանայից ժամուցի արդիւնքն է և երբեմն աւելի ևս լինի ասկէ սակաւ ինչ:*

*[Այս են] Ջգրաշինոյ եկեղեցւոյ շինողն և մուլքն և տարեկան արդիւնքն:*

## [ՆԵՐՍԻ ՀԱԼԱԲԱՐԻ Ս. ԳԵՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ]

Ներսի Հալաբարու Սուրբ Գեորգայ *եկեղեցւոյ սկզբնաւորութիւնն եղև 1780 թուին հրամանաւ Վրաց արքային Հերակլայ և որդւոյ նորին Գիորգեայ ձեռամբ Տէր Աստուածատուր և Տէր Երեմիայ քահանայիցն*<sup>\*</sup> :

Տ Ե Ր Ա ս տ ու ա ծ ա տ ու Ր

[ԷԶՄԻԱԾՆԵՑՈՑ ՍՈՒՐԲ ԳԵՈՐԳ]

Ծայրագոյն կառավարիչամեծայն հոգեւորականացս հայոց՝ սրբազան արքեպիսկոպոս Տէր Ներսէս,

յատուկ խնամակալ հայր եւ տէր ողորմած,

*Ըստ հրամանի բարձր սրբազնութեանդ յայտ առնեմ ամենայն ճշմարտութեամբ զսկիզբն շինելութեան Սուրբ Գեորգ եկեղեցւոյն Հալաբարու, որ և կոչի Եկեղեցի Էջմիածնեցոց:*

*Այս ժողովուրդ էջմիածնեցի վարեալք առաջին իշխողէն Երևանու Մահմատ խանէն ընդ այլ բնակչաց աշխարհին դէպ ի Կարս յաշխարհ Օսմանցոց: Այլ հասեալ մեր ի գետն Արփայչայ՝ վարիչք մեր բռնադատէին զմեզ անցանել ընդ այն երկիր Օսմանցոց, այլ մեր ընդդիմացեալ մերոց վարչաց պատերազմաւ յղեցաք փայեակ առ հաւատարիմն տերութեան Ռուսաց Յոհաննէս ծայրագոյն կառավարիչն ամենայն հոգևորականացն Հայոց (որ ի ներկային ընդ հզօր կուսակալ Յիցիանովից երթայր պատերազմն Արարատեան) խնդրեցաք օգնութիւն ի նմանէ զի անցուսցէ զմեզ յերկիր մեծի Կայսեր: Որ և նա աճապարեալ առաքեալ էր զՆադի աղայ կոչեցեալ Տաճիկն (որ դեռ չէր ապստամբեալ ի տերութենէն), իսկ մեք քան զգալ Նադուն բազում վշտակրութեամբ և վնասու Տաճկաց հասաք ի Փամբակ և ամիսս հինգ մնացաք անդ և ի Լոռի: Եւ իբրև դարձ արար յԵրևանու ժառանգորդն արքայութեանն Քրիստոսի կնեազ Յիցիանով հզօր զօրապետն մեծի Կայսեր, ընդ նմա եկեալ և հաւատարիմ Ռուսաց տերութեան ծայրագոյն կառավարիչն Հայոց հոգևորականաց հան-*

<sup>\*</sup> *Ա-ի թերթի ծալման պատճառով այս ենթախորագիրը հայտնվել է 17<sup>ր</sup> էջում և ունի «1816 թիւն, Փետրվարի 3-ին» լրացում:*

գուցեայ Յովհաննէս Արքեպիսկոպոսն Հանդերձ միաբանիւք Արարատեան սրբոյ Աթոռոյն, եգիտ զմեզ ի Մատանն Լօռոյն և առեալ զմեզ անտի քած ի քաղաքս Տփլիս և բնակեցոյց զմեծ մասն ժողովրդեանն Էջմիածնի ի Հալաբար և զփոքր մասն ի Տափիթաղ. և այս ի կաթողիկոսութեան Տեառն Դանիելի նահատակ Հայրապետի ամենայն Հայոց, և ի թիւ Փրկչին 1806, յորում և չունէաք յատուկ եկեղեցի:

Իսկ ի յիշեալ թուոջն զառամեալ կին մի բուն քաղաքացի Հէքիմ Աննայ Դեղե կոչեցեալ ի Գուլիփաշեանց ազնիւ տոհմէ վասն անյիշատակութեանն մարմնաւոր զաւակի աղերս մատչի առ յայնմ ժամանակի հոգևորաց կառավարիչ Յովհաննէս Արքեպիսկոպոսն և հայցէ շինել յաղագս ժողովրդեանն Սրբոյ Էջմիածնի գեղեղեցի մի յիշատակ Արարատեան մեծի Աթոռոյն ի վերայ հայրենի գետնի հարց իւրոյ, որ և նա սրբազան կառավարիչն հրամայէ մեզ՝ Էջմիածնեցի քահանայից և ժողովրդեանս օգնել այրի և աղքատ Աննա Դեղեին, որ և մեք կամակար մտօք օգնեալ բարեպաշտահալոյն կատարեցաք եկեղեցին ի փառս Քրիստոսի:

Սուրբ եկեղեցիս Գեորգեայ բաց ի յինքենէ ունի յարկս ծածկեալս 7, միաբան քահանայս՝ 6, ունի Էջմիածնեցի ժողովուրդս՝ թէ աստ ի քաղաքիս և թէ ցրուեալք ի գեօղորեայս երկու հարիւրէ փոքր ինչ պակաս տունս:

Արդիւնք եկեղեցւոյս գոյանայ ի Էջմիածնեցի ժողովրդոց, զորս առնուն քահանայք՝ ի մկրտութենէ երեխայից լուսագին Բ. շահի, ի պսակաց՝ Ա. (1) ապասի, ի ննջեցելոց թէ պատարագաւ թաղիցի՝ Բ. (2) շահի, ի մոմավաճառութենէ բոլոր տարին ժԸՌ դիան (1018), ի ծաղկազարդի վարագոյր բանալոյն և նոյն կիւրակէի յերեկոյեան դռնաբացեքէն և Յայտնութեան ջրօրհնեքէն՝ ԶՌ. (6000) դիան:

Արդ՝ այսքան արդեամբք կառավարի եկեղեցին մեր ի բոլոր տարին անթերիութեամբ իմիք նիւթականաց ըստ սահմանի Արարատեան Աթոռոյն ի փառս Քրիստոսի Աստուծոյ

Ձերին բարձր և փառաւորեալ սրբազնութեան խոնարհ քահանայք և ժողովուրդք Սորբոյ Էջմիածնի:

Տէր Յօնան քահանայ Էջմիածնեցի Մարտիրոսով:

1815, Դեկտեմբերի 3

ի Հաւլաբարս Թիֆլիզու\*:

\* A-ի Թիֆլիսին վերաբերող գրութիւններն այստեղ ավարտվում են: Շարունակութիւնը՝ 18-25 էջերը առնչվում են Մարմաշենին, Անիին, Հոռոմոսին:

## [Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԿԱՍ ԲԵՐՂԻ ՍԵԾ ԵԿԵՂԵՑԻ]\*

Նորին բարձր սրբազանութիւն Տեառն Ներսիսի քաջիմաստ արքեպիսկոպոսի և հոգևորական ծայրագոյն կառավարչի ամենայն Հայոցն Վրաստանու և այլոց:

Հայոց Կաթողիկէ եկեղեցւոյ աւագ քահանայ Մելքիսեդէկ Ղամազեանէ

Խ ո ճ ա ր հ ա ք ա ր յ ա յ տ ա ր ա ր ո թ ի ն .

Ըստ առաջարկութեանն սրբազան Սինօղի օրեր պր[ո]կորօր պայծառափայլ Գալիցիանի և ըստ հրամանի նորին սրբութեանն Արարատեան ծայրագոյն պատրիարքի ամենայն Հայոց Տեառն Եփրեմայ, ձեռն էարկ Ձերդ բարձր սրբազնութիւնն ըստ հովուականի պարտաւորութեանն իւրոյ փոյթ տանել ի հաշուատեսութիւնս մտից և ելից արդեանցն ամենայն եկեղեցեացն Հայոց, որ ի տանս Վրաց՝ որպէս այլոցն, նոյնպէս և իմս աւագ քահանայական վերատեսչութիւնն վիճակեալ եկեղեցւոյն Կաթողիկէի, ընդ նմին բարեհաճեցաւ առ ի գիտել նաև զաշխատանս հանգուցեալ ծնողի իմոյ Տէր Առաքել աւագ քահանային սոյն եկեղեցւոյ, վասն որոյ և ես համեմատ հրամանի Ձերդ սրբազնութեանդ մի առ մի շարունակեմ աստանօր համահետեալ պարպերութիւնք:

Կաթողիկէ եկեղեցիս այս, որ ասի Բերթի մեծ եկեղեցի, ըստ «Աշխարհագրութեան չորից մասանց աշխարհի, ըստ առաջին մասին Ասիայու ի յօդուածն Գ և ի թղթահամարս 277» է կարի հնագոյն շինեալ ի 80 թուականին Հայոց, և թէ յորմէ է կառուցեալ՝ ոչ յիշատակի անդ և ոչ այլ պատմագիրս: Միայն ի գիրս վիպասանութեան որ ի Ռուսաստան տպեցեալ ընդ հովանեալ Սուրբ Խաչ վանիցն ի Նորն Նախիջևան ի 1792 ամի Տեառն, այսպէս յիշատակի «Ըստ որումն ես նուաստ Յօհաննէս Եզրնկայեցի, աշակերտ հոգելից հօրն և սուրբ վարդապետին Վ[ա]րդանայ, սպասաւոր Սուրբ Գրոց բանի ի թուին 21 Գ. (1284) պատահեայ զալ ի կողմանս աստուածապահ թագաւորութեան աշխարհին Վրաց, ի հռչակաւոր և ի մեծ մայրաքաղաքն ի Տփլիս՝ Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց, և հանդիպեցաւ մեզ խօսիլ բանս քարոզութեան ի դուռն եկեղեց-

\* Այստեղից մինչև աղյուսակները ներառյալ ըստ Arm. d. № 156:

ւոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխան Հաչոց պարոն Գարիմատիճի, զոր շինեալ էր աստուածասէր և բարեհոգի հայր նորա պարոն Ումէկն<sup>1</sup>», որ թուի գոլ սոյն եկեղեցիս, սակայն ի նորոճմս Թումանեան վերածայնի:

Տաճարս այս աստուածային ի վաղուց ժամանակաց յետէ մատնեցեալ էր ի ձեռս մահմետականաց, և քրիստոազօր արքայն Հերակլ զօրութեամբ խաչին Քրիստոսի ազատեալ էր ի ձեռաց նոցին, և նախ քան ազատ լինելն եկեղեցւոյս թշնամիք խաչին այնպէս քայքայեալ և ապականեալ էին յամենայն կողմանց, որ հայեցօղն շարժէր ի յողբ և ի կոծս: Նախ արարեալ էին մերձ եկեղեցիս աղբանոցս, այնքան մինչ զի գրեթէ բարձրութիւնն հաւասար տեսանիւր ընդ կաթուղիկէին: Երկրորդ՝ մինչ ցվերին լուսամուտն եկեղեցւոյն լցեալ տեսանիւր, ի վերայ որոյ նստեալ կանանց զՂահրայս մանէին, զլուացեալ հանդերձս ցամաքացուցանէին և գայլ անպատեհ իրս գործէին: Երրորդ՝ ի կողմն արևմտեան մինչև ի դուռն եկեղեցւոյն լցեալ էր որպէս զհարաւային կողմանն բոլոր հեղեղատն լեռնային՝ եթէ ի հարաւային կուսէն և թէ յարևմտեան կողմանէ գայր և անցնէր ի մէջ եկեղեցւոյս, և աստի անցեալ գնայր, բերելով ընդ ինքեան զքարաժեռս անթիւս, և ապականէր զեկեղեցիս: Չորրորդ՝ գլուխ եկեղեցւոյն այնքան հնացեալ և քայքայեալ էր, մինչ ի ժամանակս առատ անձրևաց լծանիւր եկեղեցին ի գագաթանէն և բազմիցս խափանէր զպատարագն, որ ոչ ոք կարողանայր մտանել յեկեղեցին: Ուստի յիշեալ ծնօղն իմ հանգուցեալ Տէր Առաքել աւագ քահանայն սոյն եկեղեցւոյս, ապաւինեալ նախ ամենակարօղ զօրութիւնն Աստուծոյ և Սրբոյ եկեղեցւոյս ևս յօգնականութիւնն և լուսաւորչադաւան ազգին մերոյ, երկրորդ՝ ի յուսադրական հրամանս յաւիտենական փառաց արժանի արքային Հերակլայ միանգամայն զկեանս իւր հանդերձ գոյիւք զոհ նուիրեալ ի սէր Սրբոյ տաճարին, ենթարկեաց զպարանոց իւր ընդ այնպիսի ծանր և անտանելի լծով:

Նա ի ձեռն էարկ յամի տեառն 1779 ի վերառումն լայնանիստ և լեռնակուտակ աղբանոցին ևս Աստուծով վերառեալ էր ի վայել<sup>2</sup> Կուր գետոյն: Երկրորդ՝ առ ի յազատ կացուցանել զՍուրբ եկեղեցին ի վերստին կուտակմանէ այնպիսւոյ ապականութենէ, ի տեղի անդ աղբանոցի ի 1781 ամի շինեաց զքանի մի տուն վասն

<sup>1</sup> Տե՛ս «Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք, արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յովհաննիսի Երզնկացւոյ, որ ասի Մործորեցի, Նոր Նախիջևան», 1792, էջ IX-X:

<sup>2</sup> Բնագրում՝ վայեր:

իւր և վասն յետագայից իւրոց սեպհական ծախիւք իւրով և եթող ետ կոյս տանցն զճանապարհս երթեկեկութեան: Երրորդ՝ ի դրանէ եկեղեցւոյն որ ի կողմ արեւմտեան ի հեղեղատէ լցեալ քարածէոն, որ մինչև ցվերին լուսամուտն ծածկեալ էր, գայնս վեր առնել ետ ի վայելս Կոր գետոյն և հեռացուց զեկեղեցիս: Ի քարէ և կրէ հաստատուն և ամրակառոյց պարիսպս ձգեաց բարձրանիստ, զի ի հեղեղատէ գերծեալ լինիցի եկեղեցին, որ յայտնի իսկ է այժմ ամենից: Չորրորդ՝ ի կողմն հարավային, հանդէպ<sup>1</sup> վեր առեալ աղբանոցին զպարիսպս կանգնեաց լայնանիստ, զորս՝ ի քարէ և ի կրէ, և զորս՝ ի ցխէ և ի քարէ: Հինգերորդ՝ դարձեալ ի հարաւային կրանէ հանդէպ եկեղեցւոյն բնակէր մինբաշի Լուարաբ Ծաշի որդին շնորհեցմամբ տեղւոյն արքայէն Հերակլայ, հանգուցեալ հայրն իմ մեծաւ խնդրանօք և օրհնամատոյց լինելով զխարջսն իւր շինութեանն քակեաց և զբազում ծախս առնելով մինչև յատակ եկեղեցւոյն վեր առեալ քարիւ և կրով հաստատուն պարիսպս ձգել ետ: Նաև ի լեռնէ ամրոցին, որ յայս կողմն հեղեղատն գայր և մտնէր յեկեղեցիս, արգիլեաց զճանապարհն, որ այլ ո՛չ ևս մտանէ: Վեցերորդ՝ յամի տեառն [...] <sup>2</sup> ձեռն էարկ ի շինութիւն կաթողիկէին, որ ըստ ամենայնի հնացեալ էր՝ որպէս վերագոյնդ ասացաւ: Զկաթողիկէն և զգագաթն շինել ետ և հասոյց յաւարտ խաչիւ պսակազարդելով: Եօթներորդ, ի ներքուստ կաթողիկէին և գագաթան սուաղեալ ետ և ծաղկազարդել: Վերնատունս շինել ետ և զանազան արծաթեայ անօթիւք և պատուական զգեստուք պճնազարդեաց: Իսկ ի վերջ այսր ամենայնի մատնել քաղաքս այս ի ձեռս Պարսից իշխօղ Աղա-Մահմադ-խանին վ[եր]ստին ամայի եղև սոյն եկեղեցիս և մերկացաւ յամենայն զարդուց և ի վայելչութեանց, որ բնաւ ոչ ինչ մնաց՝ բաց ի դատարկ որմոց:

Թէպէտ ի ներսին կողմանէ այրեցաւ շինութիւնն, սակայն արտաքոյ որքան շինութիւն էր արարեալ մնաց ամբողջ: Ապա ի վերադառնալն մեր ի քաղաքս վերստին կարգաւորեաց զեկեղեցիս այնպիսի պատրաստութեամբ և զարդուք, և շինեաց զգաւթն որ ի կողմն արեւելեան և զայլ շինութիւն արար այնպիսելոյ նեղսակիր ժամանակի ոչ միայն տրօք ժողովրդեան (այսինքն որում յայնմ վայրի չքաւորք և գերիդ եարկ), այլ և իւր սեպհական վաստակօք և անձնական արդեամբ իմով՝ ի Ռուսաստանի առաքեցելովն:

<sup>1</sup> Բնագրում՝ հանդէդ

<sup>2</sup> Թվականի տեղը բաց է թողած:

Ո՛վ ողորմած տէր, հանգուցեալ հայրն իմ այնպիսի ըղձիւ և փափականօք հոգածու գտանէր վասն վերստին պայծառութեան Սրբոյ եկեղեցւոյս՝ մինչ զի մոռացեալ զկորուստ իւրոց զաւակաց, ցաւալի հոգւով երգէր ըստ մարգարէին:

Արդ՝ իցէ թէ յաւելից հայել ի տաճար սուրբ քոյ: Ես գոլով անդրանիկ որդի նորա և ըստ ամենայնի ցուպ և գաւազան մխիթարութեան ծերութեանն, այնքան վշտացեալ եղև ի ծանրաբեռնութենէ պարտուց, մինչ զի տարագիր արար զիս ի հայրենաց հանդերձ եղբարբք իմովք, և ինքն ճգնէր աստ մեծաւ նեղսակրթութեամբ առանց օգնականի: Եւ թէպէտ ունէր այնքան խարջարարութեանց դաւթարն մի առ մի գրեալ՝ ընդ նմին զայլ բազում շահաւէտ գրեանս: Նաև զհրովարտակս և զկոնդակս ի յերանելի արքայից ի կորուստ գնացին, որք եթէ ներկայիս պատրաստ գտանիցէին իբրու զպսակ պարծանաց ունէի ընկալնուլ ի գլուխ իմ:

Ի 1817 ամի, Նոյեմբերի 29  
Ի Թիֆլիզ

[ՅԱՆԿ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԵԱՅ Ի ԹԻՖԼԻՍ ԵՒ  
ՇՐՃԱԿԱՅԻՑ]

1. Վանքի եկեղեցին, շինեալ ի 931 թւին Փրկչին յերից՝ եղբարց, ուրոց անուանքն են Ումէկ, Սուշաաթ, Առիծ և Ջալապ, 1430 թուին նորոգեալ ի Պապա Յաւսէփեան Երզնկեանց ք[ա]ռապատիկ մեծ քան զառաջինն, և 1715 ամին նորոգեալ է դարձեալ ի Փերիղուլեան Գեորգէ և ի Բաստամեան Մելքոնէ\*\* :
2. Սուրբ Նշան, շինեալ ի տանուտէր Ամիրէ և յորդւոյ նորա տանուտէր Ալամազայ: Իսկ զկնի 1703 նորոգեալ ի Մելիք Գեորկուոյն, և զկաթողիկէն յետոյ շինեալ է Մեհրապ աղայէ Ծարիպէլեան 1784:
3. Ջգրաշէն 1704 թուին շինեալ ի Տէր Բարսէղ աւագ քահանայէ և զկնի 1735 շինեալ մեծավայելուչ ի Նախիջևանցի կնիագ Թոհաննէսէ և յորդւոց նորա Յակոբջանէ 1735:
4. Սահակաշէն 1703 շինեալ ի Սահակ Դժշկէ\*\*\* Աւետիքեան ազնուականէ:
5. Սուրբ Կարապետ Քամոյենց, շինեալ ի Տէր Գաբրիէլէ 1778 և նորոգեալ ի Տէր Ահարոն թողանէ նորա 1804:
6. Սուրբ Գեորգ Քամոյենց. տեղն ընծայեալ է ի Բէժանքէլէ և շինեալ ի Տէր Գաբրիէլէ և նորոգեալ ի Կարապետ Խատակովեանց:
7. Սուրբ Կարապետ զարիվարի, շինեալ յազնուական Բաղդասար Իսահակ Ղամազովեանց[է] 1705 և զկնի նորոգեալ ի Հասարակութենէ:
8. Սուրբ Աստուածածին Ծամբորեցոց, շինեալ ի Հասարակութենէ 1809:
9. Սուրբ Մինաս Հին երևանցոց, շինեալ ի Հասարակութենէ 1811 (առաջին շինուածք):
10. Սուրբ Գեորգ էջմիածնեցոց, շինեալ յԱննայայ\*\*\*\* այրւոյ 1806:
11. Սուրբ Գեորգ Քարաբաշի, շինեալ հրամանաւ Հերակլ արքայի և որդւոյ նորա Գեորկուոյ:

\* Կարգա՝ ի չորից:

\*\* Այս վերանորոգումը դիտված է իբրև առանձին միավոր՝ 2-րդ համարի տակ: Մենք համարակալումը հանում ենք:

\*\*\* Լրացված է հետագայում մատիտով:

\*\*\*\* Մատիտով ավելացված է՝ «Հէքիմ Աննայ դէդէ»:

12. Սուրբ Աստուածածին Ծիրանաւոր (*անյայտ*):
13. Սուրբ Ստեփաննոս (*անյայտ*):
14. Սուրբ Գեորգ Քարափի: *Դրան գլխին քարի վրայ գրեալ է «Մենք՝ Զօհրապէնց Պետրոսնս և իմ կողակից Լաւիթարան, շինեցինք այս Սուրբ Գեորգայ եկեղեցին յիշելոյ հոգիս մեր և մօրն և հօրն Մելքոյին և Տունիաջաւարին: Ով որ կարդայք ողորմի ասացէք»:*  
*Թուին 1753 գրի սոյն եկեղեցւոյ յիշատակ գրչեա Աւետարանի, որ գրեալ է ի թուին 1496 ական գիւղէ (sic) Կամարակապ կոչեցեալ Լատիգենց Կիրակոսի որդի մահտեսի Յովակիմն յիշատակ է տուել Վարագ[այ] Սուրբ Գեորգեայ եկեղեցւոյն թուին 1728:*
15. Սուրբ Սարգիս. *կայ ի ճակատին գրեալ այսպէս. «Աստուած յիշեալ եկեղեցւոյն շինող Սաքէ-օղւան, նորա որդի Տէր Դաւիթին և Գրիգորն և փեսայ Յօհաննէսն, թուին 1770»:*
16. Սուրբ Գեորգ Զրկինենց: *Ղամազենց Զուրաբի որդի մահտեսի Պետրոսս և իմ եղբայր Յովսէփն, Սահակն և Դաւիթն, որ շինեցինք այս նոր հանգստարանս Սուրբ Գեորգեայ եկեղեցին՝ յիշատակ մեզ և մեր ծնողացն [ի] թագաւորութեանն Վախթանգի, թուին 1713:*
17. Կաթողիկէ:
18. Մօղնի սուրբ Աստուածածին:
19. Փոքր Մօղնի:
20. Նորաշէն. Սադաթ *անուամբ մարդ է եղեալ և նա է շինեալ թուին Հայոց ԶԺԶ. (1648?)\**
21. Բէթղէհեմ. *թուին Հայոց ՌձԿէ. (1718) Նարիմանեանց Բաղդասարն շինել է և նորոգեալ Փիլոյենց Ստեփանն, թուին Հայոց ՌձՂէ. (1748)\*\*:*
22. Հրեշտակապետաց *եկեղեցին* Զողայեցի Սագրազն (Սափրազն?) *շինեալ է թուին Հայոց ՌձԳ-ին (1654) և նորոգուած Տէր Յոհաննէսն ՌՄԸ-ին (1759): Յետ Աղայ-Մահմատ-խանին Տէր Առաքելն է նորոգեալ:*
23. Սուրբ Սարգիս *շինեալ է Եաւանգուլենց Գիօրգին իւրեանց հանգստարան: Շինեալ [է] ի ժամանակս Ռօստօմ խանին\*\*\* թուին Հայոց ՌձԿԵ-ին (1716). մէկ պատն որ քակեալ է Պապայ Մուղրուբն է նորոգեալ, որոյ թիւն ոչ գոյ:*
24. Զուխուրեթու սուրբ Գեորգ Երևանցի Պապէն և Յակոբն Քօչօրովն է շինեալ թուին 1807:

\* Հարցականը բնագրային է, պիտի լիներ՝ 1267, որը նույնպես սրբագրելի է:

\*\* Այլ ձեռագրով փակագծում ավելացված է. «իշխ. Գիվի Ամիլախվար 1740? Գրութ-լունը նոր ժամանակների է:

\*\*\* Կամ թիվն է սխալ, կամ Ռոստոմի անունը:

25. Կուկիոյ Սուրբ Գրիգոր, *չինեալ են ի Կուկիայ բնակողքն թուին* Հայոց *ՌՄԼԸ-ին* (1789):
26. Սուրբ Գեորգ ի Թելէթ. Թաթոսենց Սհակի *կողակից Մարմարիցն գնեալ են Տէր Առաքել, Տէր Սարգիս և Տէր Մովսէս քահանայքն և չինեալ են եկեղեցի թուին* Հայոց *ՌՄԽ-ին* (1791), *Յունեվարի 24-ին*:
27. Սուրբ Գեորգ Դաշտի Խաչ. Աննա *պարոնի դուստր և Թամազ Օրբելեանն տեղն յիշատակ են տուած, փոքր մատուռ չինել է Թամար Ապղիրդն (?) Բօլնիսեցի Աղատի կին է եղեալ՝ Մելիքատովի, թուին* Հայոց *ՌՄԽԶ-ին* (1797):
28. Սուրբ Գեորգ Թէկենամ. Տէր Ներսէսն է *չինեալ թուին ՌՃԶԵ-ին* (1736), *և նորոգեալ է Տէր Գեորգն թուին 1807-ին*:
29. Կոզմա և Դամիան:
30. Հավճալայ Սուրբ Աստուածածին, *չինեալ յորդորմամբ նացուալ Մկրտում Սուրգունովին և արդեամբ Թիֆլիզու ժողովրդեան 1812-ին*:
31. Սողանլուի Սուրբ Աստուածածին, *չինեալ Նաթլուղու և Սողանլուղու ժողովրդեանց թուին 1805*:
32. Կրծանիսայ Սուրբ Աստուածածին, *չինեալ [յ]արդեանց ժողովրդեանս քաղաքի թուին* Հայոց *ՌՄԻԷ* (1778) *և նորոգեալ Կրծանիսեցի Սուլոյինց Ամիրանի դուստր Աննայէ՝ յորդորմամբ և արդեամբ քաղաքի*:
33. Ծղնեթի Սուրբ Գեորգ (?)\*, *չինեալ դարբին Աստուածատուրէ 1810-ին*:
34. Ծղնեթի Սուրբ Աստուածածին:
35. Սուրբ Գեորգ [...] \*\*: Տէր Գրիգորն *չինեալ է ժողովրդեան արդեամբ, թուին ՌՄԼԴ-ին* Հայոց (1785):
36. Խաչի Թելետ Բաբոուի *որդիքն Կախէթու ազգաւ վրացի և թաւատք. սոցա նախնի պապունքն է չինեալ, որ քօշկի\*\*\* խաչքարի վերայ թիւն է ՌՃԼ-ին* (1681):

---

\* Հարցականը բնագրինն է:

\*\* Տեղանվան համար տեղ է թողած:

\*\*\* Բնագրում կօշկի:

ՅԱՐԳՈՅԱՊԱՏԻԻ ԱԻԱԳԵՐԻՑԱՆՑ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ  
ՏՓՂԻՍԱՅ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հոգևոր կառավարութեան քաղաքիս հարկաւոր է գիտել, թէ ո՞ք մերազգի ժողովրդականց այր կամ կին, մեծ կամ փոքր, ազնուական կամ սոսկական արժանապէս ջերմեռանդութեամբ խոստովանեալ հաղորդեցաւ ահաւոր խորհրդոյ մարմնոյ և արեան Տեառն յընթացս պահոցս աղուհացից, և ո՞ք ոչ:

Արդ՝ իւրաքանչիւր պաշտօնեայ փրկագործ խորհրդոյս հարկ անձին համարեցի մինչ ց30 Մարտ ամսոյն ծանուցանել մեզ զանուանս չհաղորդելոցն՝ առ ի յայտնել ամենախոնարհաբար գերարժան քահանայապետութեան Տեառն Ներսիսի առաքելագործ սրբազան արքեպիսկոպոսի բազմերախտ և կայսերապսակ առաջնորդի Հայոց Վրաստանի և այլոց: Աւելորդ եղիցի յիշատակել աստանօր՝ թէ և դոյզն ինչ անհարազատութիւն պաշտօնէից սրբութեան աստուածայինս պատուհասեցի՝ խստիւ ի խրատ և ի զգուշութիւն ամենայն տեսողաց և լսողաց:

Մի անս արքեպիսկոպոս,

Յարութիւն ա. քահանայ Ալամդարեանց

15 Մարտի 1828

\* \* \*

Մողնի մականունեալ Սուրբ Աստուածածին մեծ եկեղեցոյ և առ նովաւ Սուրբ Գերոգ փոքր եկեղեցոյ էրիցփոխանութիւնն յետ աւերութեան քաղաքի յամի ՌՄԽԵ (1796 sic) Հայոց, որ է ամ տեառն 1796 յամսեանն Մարտի, նոյն եկեղեցոյ գովութեան արժանաւոր աւագ երէց քահանայ Տէր Գրիգորն Տէր Ծմաւոնեան կնեազ Աբամելիքեանց, համակամութեամբ Հախբատայ առաջնորդ Դաւիթ արքեպիսկոպոսին և կնեազ Մելիք Դարչի Բեհրուդեանին և այլոց բազմաց կնեազաց և ազնուականաց, և սրբոյ Էջմիածնի և Հախբատայ վանաց գործակալ աւագ երիցանց և այլ եկեղեցեաց աւագ քահանայից հրյանձնարարեալ պարոն Եսայեայ Ստեփանեան Փիթոյեանց, այսպիսի դաշնագրութեամբ.

«Ըստ ընթացից հոլովման շրճանին ժամանակաց պատահեալ մեր ի կողմն ճախողակի, և յարդար իրաւանցն Աստուծոյ դատեալ խրատապատժեցաք ըստ յանցանաց մերոց, որ ի ՌՄԽԴ (1795) թուոջս և ի Սեպտ[եմբեր] ամսոյ ԻԳ Պարսից իշխող չէզոք Աղայ-Մահմատ-խանն եկն և տիրեաց վայելուչ քաղաքիս մերուս Թիֆլիզոյ,

որում և հասոյց զմեծ վնաս և զաղէտ տազնապի՝ անխնայաբար կոտորելով զբնակիչս, որոյ և զբազումս գերի առնելով՝ հանդերձ այրեցմամբ շինուածոց և յափշտակմամբ յոլով գանձուց և փարթամութեանց մինչ զի հասաք մեք ի յետին չքաւորութեան, և առ հասարակ փարթամք և անինչք ի կողմն մեծագոյն թշուառութեան և աղքատութեան միտեցեաք, սմին սարասի և եկեղեցիք մեր զրկեալք կահուց և ի կարասեաց՝ անկան ի պայծառագարդութենէ և աղաւաղեալք անչքացան, որ ի վայելչականէն զրկեալք գէթ հարկաւորին անգամ ոչ ձեռնհաս լինէին: Սակս որոյ համակամ հաւանութեամբ քաղաքիս մերոյ իշխանաց, եկեղեցականաց և աշխարհականաց և յատկապէս Մողնի եկեղեցւոյս քահանայականաց դասուց և ժողովրդոց ի շինութիւն և ի պայծառագարդութիւն սրբոյ եկեղեցւոյս մերոյ այսպէս ըմբոն և պատշաճ վարկեալ՝ զի որովհետեւ չունիմք մեք զառաջինն մեր կարողութիւն որպէս երեկն և եռանդն հոգատարութեան ընդ զհարկաւոր պիտոյսն Սրբոյ եկեղեցւոյս, վասն որոյ կարգեցաք Սրբոյ եկեղեցւոյս զմասն բաժնի յամէ ելիցն և մտիցն իբրև զմի բնիկ քահանայ՝ հանելով բաժին ի ժամէ եթէ ի տէրունական աւուրց և եթէ ի հասարակաց, զի զոր ինչ եկեղեցւոյն բաժին անկցի, զայնս համայն քահանայք եկեղեցւոյն պարտին կարգաւ առնել զժամն ի հասարակէ յերից մասանց, զմի մասն առնելով ինքեանց վարձ ըստ բնիկ սովորութեան եկեղեցւոցս և ի տերունականէ ի հինգերորդ մասնէն զմի մասն, և զմնացեալն տալ եկեղեցւոյն, որոյ հոգաբարձու և կառավար և երեցփոխան կարգեցաք զպարոն Եսային Փիրոյանն, որ զամենայն հասն Սրբոյ եկեղեցւոյ՝ թէ ժամուցս այս, թէ գանձանակի, թէ պսակ և կնքնոյ լուսադրամ, թէ ձիթադրամ և թէ մոմադրամ, որ հաւաքի ի Զատիկի և ի Զրօրհնեաց, և թէ այլ ինչ՝ թէ խանութի քիրայք և թէ գերեզմանահախք և որ ինչ յանուն եկեղեցւոյ արդիւնք՝ զամենայն հանգամայն պարտին յանձնել ի վեր յիշեալ պարոն Եսային առանց ումէկ ներհակելոյ և ձեռնամուխ լինելոյ, որ և նոյն պարոն Եսային զայն ամենայն յանձնեցեալ զարդիւնս պարտի հաւատարիմ պահպանութեամբ պահել և ի հարկաւոր պակասութիւնս եկեղեցւոյ ծախսել կարգաւոր հաշուագրութեամբ ելիցն և մտիցն:

Այսպէս և այսու օրինակաւ և կանոնաւորութեամբ պարտի մնալ եկեղեցիս այս ժամանակ ինչ, մինչև այց առնել Տեառն մերոյ և համայնից նախախնամողին, որ ի կարողանալ ժողովրդոց և ի ընդ հարկաւոր պակասութեանցն Սրբոյ եկեղեցւոյ յայնժամ ըստ վայելման ժամանակի լինելոց է կարգ և սահման: Եւ սոյն

այս դաշնագրու թիւնն էր ստորագրեալ ի սրբազան Յովսիփայ կնեազ Արղութեանց արքեպիսկոպոսէ Հայոց վերաբնակեցելոց ի Ռուսաստան»<sup>\*</sup> :

Սակայն մինչև ցամն Հայոց ՌՄԿէ., որ է ամ տեառն 1818 բազումք ի դաշնագրողաց անդի, ընդ որս և բարեգովեալ աւագ երէցն նոյն եկեղեցւոյ գորով վախճանեալք, չէր ումէք այլոց փոյթ եղեալ երբեմն յաղագս ունելոյ զվերահայեցողութիւն վասն եղանակի կառավարութեանցն եկեղեցական մտից և ելից, կամ զկնի լնլոյ հարկաւոր պակասութեանցն Սրբոյ եկեղեցւոյն՝ առնել որպէս պայմանագրեալն էին զայլ վայելչական կարգ և սահման: Այլ ամենեւին առանց վերահայեցողութեան ուրուք յայնմ օրէ մինչև ցվաղճան զամս քսան և երկու և ամիսս երկուս զամենայն զմուտս և զելս եկեղեցականս և զամենայն կառավարութիւնն միանգամայն ունեցեալ էր ի ներքոյ բացարձակ և ազատակամ իշխանութիւն իւրոյ յիշեալ երէցփոխ պարոն Եսայի Ստեփանեան Փիթոյեանց: Իսկ յամի 1818 յամսեան Յունվարի ըստ կարգի այլոցն եկեղեցեաց ստորագրեալքս ի խնդիր եղեալ վասն ամենայն անցեալ ժամանակաց մտիցն և ելիցն երկուց նշանակեալ եկեղեցեաց, եցոյց մեզ մինչև ցլրումն Ապրիլի յիշեալ երեցփոխն, զի Փոքր եկեղեցւոյ ամենայն արդիւնքն՝ թէ եկեղեցականն, լուսագին, մոմագին և կամ այլ ինչ և թէ Սուրբ Գեորգայ մասինսն նուրիանք ի յուխտաւորաց յամենայն ժամանակս երիցփոխանութեան իւրոյ եղեալ է միշտ կերակուր քահանայից և ո՛չ հասարակաց, այլ հզօրացելոցս ոմանց ընդ ժամանակ ժամանակ ժառանգաւորական իմն իրաւամբ իւրեանց: Առ որ ի սմին վերջին ժամանակի տիրապետող քահանայն ի խնդիր եղեալ ցուցին Տէր Խաչատուրն Յոհաննիսեան և Տէր Ծմաւոնն Սողոմոնեան սկսեալ ի հազար ութն հարիւր ութն թուոյ Օգոստոսի քսան և չորս (1808) մինչև ի հազար ութն հարիւր տասն և ութ (1818) Յունիսի տասն և մէկ ի միջոցի տասն ամաց արդիւն միայն երեք թուման մէկ հազար վեց հարիւր քսան և հինգ (3.1625) դիան և ծախս այնքան ամացն՝ 2.1050 դիան եւ մնացորդն հատուցին միայն 1.4875 դիան: Երեք չարէք մոմ, 6 ստիլ խունկ, 2 հատ մանր քեալատայի (?) ասացեալ աղլուխք:

Իսկ վասն Սուրբ Աստուածածին մեծ եկեղեցւոյ արդեանցն՝ զի ոչ գոյր նախապատրաստեալ կանոնաւոր թէֆթեր ընդ օրինի, բազում մեծ և փոքր հատուած-հատուած թղթովք սկսեալ ի 1796

<sup>\*</sup> Սույն «Դաշնագրութեան» բնագիրը առկա է նաև առանձին. տե՛ս այստեղ «Վավերական վկայութիւններ» բաժնում «Համախօսական վճիռ» վերտառութեամբ:

Մարտի երկու մինչև 1818 Մայիսի մուտն՝ նա ինքն յիշեալ էրեցփոխն եցոյց զամենայն տեսակ արդիւնսն եկեղեցական, թէ խաչ հանելոյ, թէ վարագոյր բանալոյ, թէ յաղագս մոմոյ, խնկի և ձիթոյ ժողովքն հանդիսաւոր աւուրց, թէ զատկական նուիրանքն կանանց վասն իւղաբերից մոմոյ, թէ լուսազին վասն մկրտութեանց և պսակաց, թէ գանձանակն եկեղեցական, թէ արդիւնք ի հասարակ ժողովոյ և թէ վասն եկեղեցւոյն յատկացեալ պատարագաց ժամուցի բաժինն, թէ նուիրանք ի գերեզմանատեղեաց ննջեցելոյ կամ կտակք ի ննջեցելոց և կամ այլ ինչ պատահական արդիւնք ստացեալ յինքենէ՝ որպէս իւրաքանչիւր յատկութեամբ շարակարգեալ ըստ իւրաքանչիւր ամաց մի առ մի տեսանին ի տետրակն արտագրեալ ի բազմահատուած թերթիցն, տրեցելոց մեզ ի նմանէ գումար դրամ 178, 339 դիան:

Եւ բաց ի սոյն գումարէ եկեղեցական արդեանց, նաև եկեղեցական չորս գումարնքն և մի օթախն, որոյ երեք գումարնքն են ի Մէլդանի բազագխանայն կից միմեանց՝ ի միում կարգի, և մի գումարնքն ի վերայ տանեաց երկուց նոցին և մի օթախն ի վերայ տանեաց միոյ նոցին, զորս ամենեսին յետ աւերութեանն քաղաքի ի վերայ պայմանադրութեան իրիք ընդ Տէր Գրիգոր աւագ քահանայն նոյն եկեղեցեաց ունեցեալ էր պարոն Շաքարօն Շատիւնեան՝ վասն ծախուց իւրոց յաղագս վերանորոգութեանցն նոցին, եցոյց պարոն Եսայի Ստեփանեան երիցփոխին, զի գառաջինն յամի 1798 պարտք առեալ ի Շատիւնեան՝ Մկրտումի որդւոյն ի Կօնիսէն և ի Բաբելէն 12 թուման, ամիսն երկու շահի շահով, և վճարեալ զայն պարոն Շաքարօյն զպահանջմունսն նորա յանձնեալ էր Կօնիսին և Բաբելին գառաջինն երից գումարնաց՝ սկսեալ ի հիւսիսային կողմանէ, հանդերձ ի վերայ նորին եղեալ մի օթախին: Այլև ի լրանալ պայմանեալ ժամանակի միևնոյն՝ զայնոսիկ ևս հետ զհետ է ընկալեալ ի ներքոյ կառավարութեան իւրոյ, յամի 1799 զգումարն որ ի վերայ տանեաց երկուցն ներքին գումարնաց, զոր բրուտն ունէր վարձեալ:

Եւ յամի 1803 յամսեան Մարտի զմիջինն երից գումարնացն, զոր Տէր Նիկողոսեանքն էին վարձեալ, եւ յամի 1807, յամսեանն Օգոստոսի զվերջինն երից ներքին գումարնացն դէպ ի հարաւակողմն, զոր Բրջենց Ստեփանն ունէր վարձեալ, և զարդիւնս քիրայից իւրաքանչիւր նոցին մինչև ցլրումն Ապրիլի 1818 ամի տեառն գրեալ էր ստացեալ ի Կօնիսէն և ի Բաբելէն զամս քսան և ամիսս չորս գումար դրամ 193, 6950 դիան: Ի բրտէն զամս 29 և ամիս

\* Կրկնված է:

4,448,450 դրամ: Ի ՏԵՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՍԵՆ զամս տասն և Հինգ (15) և ամիսս 2, 151,2300 դրամ: Ի ԲՐՋԵԱՆՍ ՍՈՒՖԻԱՆԵՆ զամս 10 և ամիսս 9, 144,4600 դրամ:

Միանգամայն գումար արդիւնք ի չորից դուքանացն 534 թուման 2300 դրամ: Այլ և զարդիւնս կարամիտինի\* գանձանակին ստացեալ էր ի ՏԵՐ ՍՈՒՖԻԱՆԵՆ ՏԵՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ Հինգ թուման 150000 [դրամ], զորս ընդ տասն և երկու թումանին՝ առեցելոյ ի ԿՕՆՏԱՆԵՆ և ԲԱՔԻՆԵՆ, և ընդ գումարին եկեղեցական արդեանց բովանդակեալ, լինի միանգամայն գումարն ամենայն արդեանց հասելոց առ պարոն ԵՍԱՅԻ ՍՈՒՖԻԱՆԵԱՆՍ ՓԻՅՈՅԵԱՆՍ ի ժամանակս 22 տար[ի] 2 ամիս էրիցփոխութեան իւրոյ՝ 729 թուման, 5690 դրամ:

Եւ որպէս վասն արդեանց, նոյնպէս և վասն ծախուց բազում հատուած-հատուած թղթովք եցոյց պարոն էրէցփոխն ծախս եկեղեցական յամենայն ժամանակս էրէցփոխանութեան իւրոյ ծախեալ ամի-ամի վասն մոմոյ, ձիթոյ, խնկի, աւելի, ճլօպի կամ այլ փոռոցի, ածուխի և այլ և այլ իրաց, նաև վասն ինչ-ինչ եկեղեցական անօթից գնեցելոց ևս և ծախս վասն երկուց կաթողիկոսացն Յովսէփայ և Եփրեմի ի գալստեանն նոցա և վասն նուիրակաց Սրբոյ Էջմիածնի և Երուսաղէմի և այլ կարգաւորաց պատահականաց 129 թ[ուման] 300 դրամ: Նաև արտաքոյ մանրամասն նշանակեալ ծախուց գումարն՝ եցեյց այլ ևս երեւելի\*\* գումարօք զգանազան ծախս: Նախ վասն ազատութեան միոյ դուքանի եկեղեցոյն, որպէս և նշանակեալն է ի վերոյ ի կարգի արդեանցն, 12 թուման, զոր յամի 1798 առեալ ի ԿՕՆՏԱՆԵՆ և ի ԲԱՔԻՆԵՆ Մկրտումեան Ծատիւնանց, տուեալ էր պարոն Ծաքարօյն Ծատիւնանց, որոյ և զշահն շարունակաբար զամս քսան և ամիսս չորս հատուցեալ է նոցա նոյն դուքանն մինչև զսոյն կէտ հաշուատեսութիւն մերոյ ի վերջն Ապրիլի 1818 ամի տեառն 29 թ[ուման] 2800 դրամ և ունի հատուցանել տակաւին մինչև ցժամանակ վճարման 12 թ[ուման] մայր դրամ պարտուցն:

Զկնի վասն տանն Օքրօյեանց եղելոյ մերձ առ պարիսպն եկեղեցւոյն՝ 221, 1420 դրամ, զոր յամի 1802 յամսեանս Յունիսի պատճառելով զվայելչութիւն լայնացուցման պարսպի եկեղեցւոյն, գնեալ էր 150 թ[ուման] արծաթ դրամովք յանուն եկեղեցւոյ հասարակ գրութեամբ իւրիք զբոլոր տունն, որոյ գետինն եղեալ էր 421 դազ, երեք չարէք և մէկ գրեհ, և շինուածք արդիւնարարք ի

\* Ընթերցումը կասկածելի է:

\*\* Բառը կրկնված է:

վերայ նորա գրաւականք 75 թումանի, առ Աղայ Սոլումոն Ստեփանեան կնեազ Աբամելիքեանց՝ մէկ դարբաս, մէկ սարտափ, մէկ սրահ, մէկ օթախ հանդերձ աշխանայիւն և յառաջոյ նոսայ փոքրիկ բաղջայիւն գրաւական 60 թումանի, և առ զանազան անձինս երեք այլ տունք ընդ մէջ բաղջային և դրանն արտաքնոց, որ ելանէ ընդ հասարակաց ճանապարհն, ի հանդիպոյ փոչտք կանթօրին, գրաւականք 15 թումանի, զորս ետ գնելոյն զհաւասար կէսն ամին իբրև երկու հարիւր տասն և մէկ գազ (211)՝ առանց գրոյ և առանց արդարակշիռ զուգահաւասարութեան ընդ գնոյն յատկացուցեալ ի ժառանգութիւն յիշեալ Աբամելիքեանի: Թողացուցեալ էր նմա միանգամայն զամենայն զնշանակեալ արդիւնաբեր շինուածսն ի մասին առ ի նմանէ հատուցանելի 75 թուման կէս գնոյն: Իսկ զմիւս ամենեւին անարդիւն կէսն 211 գազ յատկացուցեալ ի մասին եկեղեցոյ, զգինն նորա 75 թուման, մի թումանն ևս աւելի խալաթագին անուամբ՝ 76 թուման:

Այլ չունելով իսկոյն յայնմ ժամանակի զեկեղեցական գումար ըստ ցուցման հաշուազրութեանցն իւրոց աւելի քան 23 թուման 945 դրան և ըստ ցուցման սեպհական բանից բերանոյ իւրոյ աւելի քան 26 թուման, յետ վճարելոյն զայն գումար 26 թուման, վասն 50 թումանին ևս տուեալ էր վաճառողին զմուրհակ պարտաւորութեան հանդերձ շահուք: Եւ այսպէս զեկեղեցին արկեալ ընդ պարտուք և զամենայն զգնեալն շէն և անշէն թողացուցեալ միանգամայն յիշեալ Աբամելիքեանի ամենեւին առանց իւրք արդիւնաւորութեան վասն եկեղեցոյն, և առանց իւրք պիտանաւորութեան ինքն հատուցեալ է ամ ըստ ամէ զշահն 50 թումանի մինչև ցլրումն 1809 ամի տեառն զամս ութը՝ որպէս և գրեալ էր 45 թուման 5000 դրան: Ընդ որում և ի գումարէ պարտուցն միայն 20 թուման: Յետ որոյ յամի 1810 ունելով տակաւին զեկեղեցին ի ներքոյ ծանրութեան 30 թուման տուրիօք պարտուց և, անհոգացեալ վասն հատուցման այնորիկ, քակեալ էր զսարտափն և զդարպասն և փոխանակ եկեղեցական հաւասար կիսոյն, որ պարտ էր լինել երկու հարիւր տասն և մէկ գազ, յաժնժամ ևս վասն եկեղեցոյն անհարկաւոր անօգուտ, և աւելի ևս վնասակար կերպիւ յատկացուցեալ միայն 120 գազ, և զմի ամրակառոյց որմն արևելեան դարպասին թողացուցեալ Աբամելիքեանի, նորոգ ինքն հեռի յայնմանէ իբրև երկու գազ՝ հիմնեալ զայլ նոր հանրածախ հաստահիմ որմ, շինեալ էր զերկուս սարտափանման ներքնայարկս և ի վերայ նոցին ևս զերկուս փոքրիկ վերնայարկս, զորոց ևս զծախսն վասն քակմանն և վասն

չինուլթեանս՝ հանդերձ մասնաւոր ծախիւքն, վասն Բաշնջաղեան մատուրին գրեալ էր 55 թուման 7220 դրան: Իսկ զմնացորդն մինչև ցլրումն 211 գազ թողացուցեալ էր դարձեալ Արամելիքեանի ճրի 91 գազ: Իսկ և յամի 1815-ի յառաջադրեալ Արամելիքեանի զնեղ ճանապարհն, որ ի հիւսիսոյ կողմանէ տանն իւրոյ, լայնացուցանել ուղղագիծ մինչև զպարիսպ եկեղեցւոյն ըստ չափու լայնութեան սկզբանն նորա ի հասարակաց մեծ ճանապարհին խոստանայ նմա վճարել ի մասնէ եկեղեցւոյն զամենայն զգետինն, և աւելի ևս քան զնոյնս հատուցանէ նմա նաև զծախսն փոխադրութեան նորոգ հիմանցն պարսպի նորա մինչև ցկէս բարձրութեանն որման՝ 7 թուման 7700 դրան:

Այլ ևս այսու ամենայնիւ յետ փոխարինելոյ նմա ի մասնէ եկեղեցւոյն նաև զթողացուցեալն ի սեպհական գետնոյ իւրմէ վասն լայնութեան ճանապարհին 66 գազ, թողեալ էր նմա դարձեալ ճրի և առանց իրիք հաշուոյ նաև զմնացորդն մինչև ցլրումն 91 գազին՝ 25 գազ: Իսկ յաղագս վճարման 30 թուման պարտուցն ի մասին սոյնպիսի կերպիւ զնեալ և կառավարեալ տան, անհոգացեալ ըստ ամենայնի մինչև ցվաղճան, զչահն վասն նոր սկսեալ ի մտիցն 1800 ամի մինչև ցլրումն Ապրիլի 1818 զամս ութ և ամիսս չորս շարունակաբար վճարեալ էր 36 թուման 1500 դրան, որ ընդ առաջնոյն բովանդակեալ, գումարն շահուց վճարեալ վասն 50 թումանին զամս 15 և ամիսս 10, այն է Յունիսի 1802 սկսեալ մինչև ցելն Ապրիլի 1818 լինի 81 թուման 6500 դրան:

Յետ նորա վասն շինութեանց տանեաց եկեղեցւոյն և վասն գնոյ կրամիտի, սկսեալ 1804 մինչ 1808 ի միջոցի հինգ ամաց գցեալ էր մէկ հարիւր տասն և վեց (116) թուման, 6350 դրան: Եւ վասն շինութեանց որմոցն գաւթի և հաւասարելոյ որմոյն Աբուլեանց ի նոյն իսկ 1800 ամի՝ 21 թուման 8050 դրան: Դարձեալ վասն եկեղեցւոյն յամի 1811 առանց յատկութեան իրիք 9 թուման 3850 դրան: Եւ յամի 1812 10 թուման 6400 դրան: Յատկաբար ևս ի գին չորս շուրջառի 9 թուման 4150 դրան: Այլ և յամի 1813 վասն սուաղելոյ զեկեղեցին, և վասն վարձուց պատկերահանին 78 թուման 6000 դրան: Եւ յամի 1815, դարձեալ վասն ծաղկելոյ զեկեղեցին 22 թուման 6000 դրան: Եւ յամի 1815, դարձեալ վասն ծաղկելոյ զեկեղեցին 22 թուման 3750 դրան: Նաև վասն բերել տալոյ ի Մոզոկէ գիսաչկալն Եսայի Աղայեան Փիթոյեանց ընծայեալ վասն յիշատակի 10 թուման: Եւ վասն նորոգութեան բեկելոցն նոյն խաչկալի ի ճանապարհին և կառուցանելոյն ի տեղուջ իւ-

րում ի վերայ բեմին, ևս և վասն պատկերահանաց և վասն սուլաղելոյ զեկեղեցին, և վասն որմանն գաւթի նորոգելոյն յամի 1817 69 թուաման 1740 դիան: Այլ և ի գումարէ արդեանց բրտի դուքանին գրեալ էր հատուցեալ ամ ընդ ամէ Փոքր Մօղանոյ ժամուցն կարգադրեալ ի քահանայից նոյն եկեղեցւոյ յամի Հայոց 1238 (1789) Մայիսի 4-ին, յանուն Տէր Աբրահամ աւագ քահանայի իւրեանց գումարն դրամ 23 թուաման 2000 դիան: Ծախս ի վերայ նոյն դուքանին մէկ թուաման 2550 դիան: Դարձեալ ծախս ի վերայ դուքանացն յամի 1817 ըստ հարկադրութեան կառավարութեան վասն լամփայիցն և զառաջսն նոցին քարայտակելոյն և վասն այլ նորոգութեանց՝ 9 թուաման, 5415 դիան: Որոց ամենից գումարն, գումարաց ծախուց՝ վասն եկեղեցւոյն և վասն դուքանացն և վասն ժամուցի և շահուց դրամոց և այլոց նշանակեցելոց իւրաքանչիւր յատկութեամբ, բովանդակեալ ի միասին լինի 773 թուաման 4805 դիան:

Որոց իւրաքանչիւր գումարաց բացայայտ պարագայիւք մանրամասն ծանօթութեանցն կարէ կամեցողն տեղեկանալ արժանաւորապէս յօրինակէ բազմահատուած վրացերէն գրութեանցն յիշեալ Էրէցփոխի՝ շարակարգեցելոյ առ ի մէնջ հայերէն թարգմանութիւն:

Այլ որպէս տեսանի ահա ի մասին սոյն գումարի ծախուց ստացեալ պարոն Եսայի Ստեփանեան Էրէցփոխին զվերոգրեալ ամենայն գումարն իւրաքանչիւր ժամանակի եկեղեցական արդեանց այժմ ևս ի սմին ժամանակի հաշուատեսութեան մերում գտաւ Սուրբ եկեղեցին պարտական յիշեալ Էրեցփոխին 20 թուամանս հանդերձ շահուց և 23 թուաման 9115 դիան առանց շահուց: Այլ և դուքանն եկեղեցական գտաւ պարտական Շատիւնեան Կօնիցին և Բաբելին ի քսան ամաց հետէ հանդերձ շահուց տասն և երկու թուաման, որոց երկուց գումարն եկեղեցական պարտուց լինի 55.9115:

\* \* \*

Ի հրամանատրութեան Ռուսաստանի առաջին աստիճանի մետրոպօլիտի, երկրորդ աստիճանի արքեպիսկոպոսի, երրորդ աստիճանի եպիսկոպոսք ունին զաթոռ և նմանապէս զյատկացեալ վանս: Ի հնոց նախորդաց կաթողիկոսաց և պատրիարգաց Հայոց ունեցեալ են և ունիմք զվանս, յորոց մերձակայ ի մէջ պարսպի թաղեցեալ կան արժանաւորք ծառայողք արքայից Վրաց և Ռուսաց կայսրութեան, և որովհետեւ Վանքն կախի զհոգևոր իշխանութեանց՝ այսօր ևս ինձ հարկ համարի աշխատեցուցանել զՁերդ

բարձր գերազանցություններն, որովհետև յայտուիկ վանս բազում ժողովուրդք ծախեալ ունին ի վերայ շինութեան եկեղեցւոյն ոչ սակաւ դրամս, և բուն սովորութիւն է լեալ միշտ զննջեցեալս իւրեանց թաղել մերձ եկեղեցւոյն և հանապազ յայսպիսի ժամու ստիպմք աշխատեցուցանել գտերութիւն վասն թաղելոյ այս օրինակ արժանաւոր հանգուցեալ անձինս: Իսկ որովհետև հանդերձեալ եմ ելանել աստի և դիմել Յաթոռն սուրբ՝ վասն որոյ տացի ինձ ի ձէնջ վճռողութիւն, զի աշխատաւոր ծառայեալ անձանց իրաւունք իցեն մեզ թաղել տալ յայսմիկ պարսպի վանուց (մօնօստրի), իսկ եթէ չտացի ինձ իրաւունք, եկեղեցին ունի աղքատանալ, և Էջմիածնի մեծ վնաս յառաջացի, զի բոլոր վերոյիշատակելոց մետրապօլիտական մօնաստրից ունի[ն] հրաման թաղելոյ որպէս և ի Ս. Պետրոսի թուրգայ, և այնպես յերևելի թագաւորապատկան քաղաքաց, և այս սովորութիւն որովհետև աստ ևս գտանի, ուրեմն Դուք ևս բարեհաճեցիք, և եթէ այսպիսի համաձայնութիւն ի Ձէնջ անկար երևեսցի, տացի ինձ իրաւունք յայտնել ի բարձրագոյն տեղիս:

Արդ, եթէ այսպիսի արդիւնք եկամտից պակասեսցի, և իրօք կարօղ եղէց ես զնորագոյն կարգադրութիւնն և զիմոյ աթոռոյ եղբարսն պահպանել, աղաչեմ այսուիկ փոքու բանիւ յոյս տալ իմոյ միաբանութեան, որով միշտ և հանապազ լիցուք աղօթարար վասն ձեր:

Յայտնի է և գիտէք իսկ այս իմ մօնաստերն է յեզր քաղաքի և հեռի ի բնակչաց. հանգուցեալք թաղին յեկեղեցւոջ հեռի երեք սաժէնիւ և խորութեամբ մի սաժենիւ, և եթէ այս իմ խնդիր չունիցի կատարել, յայնժամ ունին կրել զմեծ նեղութիւնս հոգևոր միաբանութիւնք իմ:

\* \* \*

Ի Վրաստանի եղեալ մերձ Տփղիսայ պատրիարգական աթոռ և վանորայք Հայոց կախին ի պատրիարգաց և ո՛չ թէ ի վիճակաւորաց. յայտուիկ վանորայս (մօնաստերս) յիշատակին միայն զանուն պատրիարգի, և չունի վիճակաւորն իրաւունս տալ յիշատակել զիւր անուն:

- 1) Վանքն է, կառուցեալ յանուն Սրբոյ Աստուածածնի, որ հայի ի գետն Կուր:
- 2) Բեդլահէմ վանք Սրբոյ Աստուածածնի:
- 3) Թէլէթու Սուրբ Գեորգայ վանքն:

- 4) Սուրբ Կարապետի վանքն:
- 5) Սուրբ Սարգսի վանքն:
- 6) Փոքր եկեղեցին Քարափի, Սուրբ Դաստի խաչի վանք *անուանել*:

*Այսոցիկ բոլոր արդիւնք և կառավարութիւն պատկանին կաթողիկոսի Հայոց:*

### ԱԲԱԳ ԵԿԵՂԵՑԻՔ (ՍԱԲՕՐՔ)

*[1] Նախ՝ Կաթողիկէ եկեղեցի, որովհետև է նախկին միտրոպոլիտական և մերձ է փողոցի, պարտի լինել առաջին սաբօր:*

2. Սուրբ Նշանի եկեղեցին, որովհետև ի ժամանակս արքայից եղեալ է մերձ արքունի դրան և է ի մէջ քաղաքին, և զանազան ազնուականք Ռուսաց, Վրաց և Հայոց պատուեն միշտ զՍուրբ Նիկողայոսն և զեկեղեցին նորա, վասն որոյ երկրորդ սաբօր է սա:

3. Մողնի՝ որովհետև կառուցեալ է ի վերայ այնպիսի երևելի տեղոջ աւագագունից Հայոց իշխանաց և ազնուականաց՝ սա ևս անուանեսցի երրորդ սաբօր:

Վիճակաւորն Վրաստանի և կամ փոխանորդ նորա, յամենայն Հանդիսաւոր տօնից և տօնախմբութեան պարտի կարգաւ կատարել յիւրաքանչիւրում յայսորիկ յերեքից սաբօրաց զմօլէպին և զայլ սոյնպիսիս:

### ԱԲԱԳ ԲԱՎԱՆԱՅԱԿԱՆ ԵՒ ԿԱՍ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՔ

*[1] Նախ՝ Նորաշինու Սուրբ Աստուածածնայ եկեղեցին:*

2. Ջկրաշինու Սուրբ Աւետեաց եկեղեցին:

3. Սուրբ Գեորգայ եկեղեցին Քամօյեանց:

4. Հրեշտակապետաց եկեղեցին Փոքր բերդի:

5. Ներսի Հալաբարի Սուրբ Գեորգայ եկեղեցին:

*Բացի վերոյգրելոցս յայլ եկեղեցիս չիք իրաւունք ունելոյ զաւագ քահանայ, և զասակարգութիւն աւագ քահանայից եղիցի ըստ նախադասութեան եկեղեցւոյն ի սմին գրեալ կարգադրութեամբ:*

*Կանոն է և օրէնք, զի անդամն խղճմտանաց դատարանի իցէ աւագ քահանայ և կամ անուանի ոք ի գիտնական քահանայից: Եթէ աւագ քահանայ իցէ՝ պարտ է ի ներքոյ սաբօրի աւագ*

քահանայից ունել գտեղի, իսկ եթէ քահանայ է՝ ամենայն քահանայից դասագլուխ եղիցի:

Ի ներքոյ սորա է գրագիր քահանայն վիճակաւորի, զկնի որոյ՝ վարժապետ քահանայ երաժշտութեան, ետ որոյ վարժապետ քահանայն ուսումնարանի: Ի ներքոյ սոցայ գործակալն՝ եթէ չիցէ աւագ քահանայ:

Ի ներքոյ սոցայ՝ դէպուտատք, ի ներքոյ սոցայ՝ քահանայք ըստ ձեռնադրութեանցն:

Պատրիարքք և բոլոր եպիսկոպոսունք և ծայրագոյն վարդապետք պարտին ունել զմանտի: Մանտին պատրիարքի կանաչ թաւիչ ի վեր աղխից, այսինքն չափրաստաց՝ սերովբէք և քերովբէք, զարդարեալ մարգարտահիւսիւք և կամ ոսկէ թելիւք:

Արքեպիսկոպոսաց և եպիսկոպոսաց կապտագոյն ծաղկեայ կերպասի խարայ, ի տեղի սերովբէից՝ խաչ, և ծայրագոյն վարդապետաց սեաւ դանառուզի (°) ի տեղի սերովբէից կարովի խաչի ի վերայ կարմիր փուաքի, որով և որոշեսցին յիրերաց:

Յորժամ կայսերական մօլեպին իցէ կամ թաբօր և կամ ի վերայ ննջեցելոց հրաւիրեալ գտանիցին՝ արքեպիսկոպոսն ունիցի զփորուրար, զմանտի, զեմիփորոն, զվարդապետական խաչ, զբնակի և զթագ իւր: Իսկ ծայրագոյն վարդապետքն զփորուրար, զշուրջառ, զխաչ պարանոցի և զսաղաւարտ ընդ նմին և զպարգևս կայսերական:

Ուր ոչ իցէ արքեպիսկոպոս՝ կարօղ է ծայրագոյն վարդապետն կրել զվիչապաճև գաւազան:

Յայս եղանակ հանդիսի պարտին աւագ քահանայք կրել զփորուրար և զշուրջառ, իսկ արեղայք՝ զփորուրար, զշուրջառ և զվեղարս իւրեանց:

Իսկ քահանայք ի վերոյ գրելոցս՝ որք գտանին ի պաշտօնի իմիք ծառայութեան և ունիցին ի համարի աւագ քահանայից՝ զփորուրար և զշուրջառ, բայց միւս հասարակ քահանայք միմիայն զշուրջառ:

[<ԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՔ Ի ԹԻՖԼԻՍ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՍ]

- |                            |                     |
|----------------------------|---------------------|
| 1. Վերայի գերեզմանատուն    | 20. Կարմիր Աւետարան |
| 2. Զրկինեանց               | 21. Ս. Մինաս        |
| 3. Քամոյենց                | 22. Զորաբաշ         |
| 4. Վանք                    | 23. Խօջիվանք        |
| 5. Սուրբ Նշան              | 24. Լուսաւորիչ      |
| 6. Զկրաշէն                 | 25. Նաւթլուղի       |
| 7. Նորաշէն                 | 26. Ծաղկեվանք       |
| 8. Մողնի                   | 27. Կրծանիս         |
| 9. Կուսանաց                | 28. Թէլէթ           |
| 10. Բերդէհէմ               | 29. Ծամաբաթ         |
| 11. Բերդի Սուրբ Գէորգ      | 30. Սօղանլուղ       |
| 12. Քարափի թաղի [Ս. Գէորգ] | 31. Ծվինդիս         |
| 13. Հրեշտակապետաց          | 32. Ծաւկիս          |
| 14. Սուրբ Սարգիս           | 33. Կոչոռ           |
| 15. Կուկիոյ Թանդոյեանց     | 34. Ծղնէթ           |
| 16. [Կուկիոյ] Աստուածածին  | 35. Հաւնալայ        |
| 17. Չուղուրէթի ս. Գէորգ    | 36. Մցխէթայ         |
| 18. Ս. Կարապետ             | 37. Սոմխուրի        |
| 19. Էջմիածնեցոց            | 38 – 39*            |

---

\* Չի ընթերցվում:

19\*

Պատկեր ծախսը և արդեանց ամենայն եկեղեցեաց Տփլիսայ յընթացս 1829 ամի. նմանապէս և գումարաց եկեղեցական դրամոց նախընթաց ամաց՝ եղելոց ի ձեռս իւրաքանչիւր երեսփոխանաց՝ նախ զատաբար և ապա միահաղոյն գումարեալ: Յամի 1830 Յուն 9: Ի Տփլիսա :

Երկրորդական	Անուանակոչութիւնք ամենայն եկեղեցեաց Տփլիսայ:	Ծախք		Արդիւնք		Հին դրամք.		Պիւ. Բախումայից	Անուանք և մականունք երեսփոխանաց եկեղեցեաց Տփլիսայ
		Ուրբիլի.	Կոպէի.	Ուրբիլի.	Կոպէի.	Ուրբիլի.	Կոպէի.		
1	Սբ Աստուածածին Վանք ասացեալ:	110	85	718	30	1874	55	5	Աղայ Շերմագան Վարդանեանց:
2	Սբ Կաթողիկէ եկեղեցի:	108	40	648	30	870	15	4	Պարոն Աբրահամ Քէփինէանց:
3	Սբ Գէորգ Մողնի:	1073	20	302	..	990	65	5	Աղայ Գէորգ Քետիստեանց:
4	Սբ Աստուածածին Նորաշէն:	..	..	..	..	2795	29	4	Երեսփոխանն վախճանեալ է:
5	Սբ Նշան:	589	..	...	..	663	63	5	Պարոն Աւետիս Փիրոյեանց:
6	Սբ Բեթղեհէմ:	519	70	1222	53	7515	..	4	Պարոն Սկրտում Բարտաշեանց:
7	Սբ Աւետիք Ջկրաշէն:	45	3	406	57	350	8	4	Աղայ Յակոբ Մէլիքեանց:
8	Սբ Գէորգ Քամոյեանց:	1	50	36	75	..	..	1	Չունի զԵրեսփոխան որ:
9	Սբ Հրեշտակապետ:	27	30	55	59	86	11	1	Պարոն Գրիգոր Թամազեանց:
10	Սբ Սինաս:	42	80	108	50	362	80	3	Պարոն Պետրոս Մարգարեանց:
11	Սբ Ածածին Շամբորեցոց:	111	80	267	85	596	50	2	Պարոն Աւետիս Տուգուլեանց:
12	Սբ Կարապետ:	8	50	285	55	556	90	2	Պարոն Միրման Միրմանեանց:
13	Սբ Գէորգ Մասախլուի:	45	15	55	70	57	25	2	Պարոն Յովսէփ Զամոյեանց:
14	Սբ Սարգիս:	111	20	314	1	502	88	1	Պարոն Յակոբ Բաշինդուրեանց:
15	Սբ Գէորգ Քարափի:	20	85	92	30	412	55	1	Պարոն Կակալ Զօհրաբեանց:
16	Սբ Գէորգ Տէր-Աստուածատրոյ:	7	..	93	30	565	55	2	Պարոն Աւետիս Տուգուլեանց:
17	Սբ Գէորգ Էջմիածնեցոց:	15	65	61	45	59	70	2	Պարոն Սկրտիչ Մալխասեանց:
18	Սբ Ածածին Կուկիոյ:	...	..	44	10	113	..	2	Պարոն Զօհրաբ Զօնյեանց:

\* Տպագրական շարվածքով: Անփոփումը հաջորդ էջում:

Գումար եկեղեցական դրամոցն ի բաց հանեալ գծախսն՝ է քսան և երկու հազար իննսուն և վեց ռուբլի երեսն և չորս կոպէկ արծաթ դրամ. այսինքն 22096 ռբ. 34 կոպ:	2937	93	4717	75	18378	59	50	
---	------	----	------	----	-------	----	----	--

Հաշիւ Սբ Աստուածածին Նորաշէն եկեղեցոյն ցարդ չէ քննեալ:

17 Յունիսի 1830

ՏՓԽԻՍ

Կառավարիչ պարտաւորութեան Առաջնորդի Հայոց

Վրաստանի Սիմէոն Արքեպիսկոպոս Բզնունեանց:

<p>Կարգ Եկեղեցեաց Հայոց եղելոց ի Տփլիս քաղաքի՝ ըստ կարգաւորելոյ Տեառն Ներսիսի Վիճակաւոր Արքեպիսկոպոսի նորին և առաջնորդի: Յամին Տեառն 1827 ՌՄՀԶ:</p>			
1.	Առաջին՝ Վանք ասացեալ ժողովրդապետական Եկեղեցի սբ. Աստուածածին անուն վիճակաւոր արքեպիսկոպոսի՝ թեմի պատրիարքական նախագահ Աթոռոյն ամենայն Հայոց սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:	1	Եկեղեցի Թեկէնամ մականուանեալ Սուրբ Գեորգ անուն:
2.	Երկրորդ՝ Կաթողիկէ եկեղեցի Աթոռ վիճակաւոր արքեպիսկոպոսի՝ թեմի Սուրբ Նշան աթոռակալական նախապատիւ վանացն Հայոց, որ ի Հաղբատ:	3.	-----Սասախլու ----- Սուրբ Գեորգ անուն:
3.	Երրորդ՝ Մողնի կոչեցեալ Սուրբ Գեորգ:	4.	-----Սուրբ Սարգիս անուն:
4.	Չորրորդ՝ Նորաշէն ասացեալ Սուրբ Աստուածածին:	5.	-----Չրկինանց----- Սուրբ Կարապետ անուն:
5.	Հինգերորդ՝ Սուրբ Նշան:	6.	-----Փոքր Մողնի----- Սուրբ Գեորգ անուն:
6.	Վեցերորդ՝ Սուրբ Բեթղեմ:	7.	Մատուռն----- Սուրբ Կողմաս անուն:
7.	Եօթներորդ՝ Ջիկրաշէն մականուանեալ Աւետեաց Սուրբ Աստուածածին:	8.	----- Սուրբ Գեորգ Քարափի՝
8.	Ութերորդ Սուրբ Գեորգ Քամօյեանց:	9.	----- Սուրբ Սարգիս անուն:
9.	Իններորդ՝ Սուրբ Հրեշտակապետ:		----- Սուրբ Գեորգ Տր Ամատուրի:
10.	Տասներորդ՝ Սուրբ Մինաս:		----- Սուրբ Գեորգ Էջմիածնեցոց:
11.	Սետասներորդ՝ Սուրբ Աստուածածին Շամբորեցոց:		Գերեզմանատուն կնիազ Բեհբուդեանց Սուրբ Ծիրանաւոր անուն:
12.	Երկուտասներորդ՝ Սուրբ Կարապետ զառիվայրի:		
13.	Կուսանաց անապատ՝ Սուրբ Ստեփաննոս անուն:		

Յ| Էջ 22v - 23r-ը խրթին ձեռագրով կազմված ցանկ է, ստեղծված 1853 թ: Մեծադիր էջը բաժանված է երեք մասի, ուր առաջինը պիտի լիներ «Կարգ եպիսկոպոսաց Հայոց՝ եղելոց ի Տփլիս քաղաքի՝ ըստ կարգաւորելոյ նորին վեհափառութեանն Տեառն Ներսիսի յամի տեառն 1853 և ազգականին», սակայն ցանկը չի կազմված: Հաջորդ կեսը լրացված է.

կարգ ձեռնադրութեան կարգ արժանաւորութեան	Դասակարգութիւն աւագ երիցանց և առ հասարակ քահանայից ամենայն եկեղեցոց Հայոց ի Տփլիս ընդ կարգի ամաց ձեռնադրութեան իւրաքանչիւրոց նոցին համապատշաճեալ և վայելչական կարգ ըստ եկեղեցեաց և ըստ առանձնական արժանաւորութեան իւրաքանչիւրոց նոցին որոշեալ յերկուս դասս՝ հանդերձ պահպանութեան կարգի միադաս կացութեանց ամենեցուն նոցայ դարձուցանեն ի գլուխս անուանց իւրաքանչիւրոց թուանշանացն դասակարգութիւնք:	
	<table style="width: 100%; text-align: center;"> <tr> <td style="width: 50%;">Դաս առաջին</td> <td style="width: 50%;">Դաս երրորդ</td> </tr> </table>	Դաս առաջին
Դաս առաջին	Դաս երրորդ	

**Ծան.** - Ազգանուններից յուրաքանչիւրի դիմաց բնութագրութեան փորձ կա: Այսպէս՝ «պարկեշտ քահանայ», «կարդալն յարմար, բայց քահանայութիւնն տկար», «գրել չգիտէ և անպիտան ի քահանայութեան» և այլն, ընդ որում ցուցակ կազմողի և բնութագիր տվողի ձեռագրերը նույնական չեն: Թերևս և միաժամանակ չեն կազմված: Ընդօրինակումը ավելորդ նկատեցինք:

կարգ ձեռնարկության	կարգ արժանատության	<p>Դասակարգություն առաջերիցանց և առ հասարակ քահանայից ամենայն եկեղեցեաց Հայոց ի Տփլիսի ընդ կարգի ամաց ձեռնարկության իրաքանչիւրոց նոցին՝ համապատշաճեալ և վայելչական կարգ ըստ եկեղեցաց և ըստ առանձնական արժանատրութեանց իրաքանչիւրոց նոցին, որոշեալ յերկուս դասս՝ հանդերձ պահպանութեամբ կարգի միադաս կացութեանց ամենեցուն նոցա, զոր ցուցանեն ի գլուխս անուանց իրաքանչիւրոց թանջանացն դասակարգութիւնք*:</p>	
		<u>ԴԱՍ ԱՌԱՋԻՆ</u>	
1785 1814 1785 1794 1789 1799 1800 1777 1790 1790 1794 1795 1796 1810 1798	2. 3. 6. 7. 8. 10. 11. 12. 15. 20. 21. 24. 26. 28. 30.	<p>Առագերեց Տէր Յովհաննէս Սարգսեան:          Առագերեց Տէր Յարութիւն Ալամդարեանց:          Առագերեց Տէր Յովհաննէս Պարոնբէկեանց:          Առագերեց Տէր Յովհան Էջմիածնեցի:          Առագերեց Տէր Դաւիթ Քամոյեանց          Առագերեց Տէր Նիկողայոս Իզմիրեանց:          Առագերեց Տէր Յովհաննէս հին Երևանցոց:          Տէր Մելիքիստեղեկ Վանքի:          Տէր Ստեփաննոս Վանքի:          Տէր Յարութիւն Էջմիածնեցի:          Տէր Գաբրիէլ Հէճուբեանց:          Տէր Յարութիւն Տէր Դուկասեանց:          Տէր Յովհաննէս Զարափեան:          Տէր Յովհաննէս Տէր Ազարեան:          Տէր Յարութիւն Գեղամեան Շամբորեցոց:</p>	<p>Ըստ նախադասութեան Եկեղեցոյն:          Ըստ յատկացեալ առանձնական արժանատրութեանց:          Ըստ կարգի ամաց ձեռնարկութեան և գիտութեան:          Ըստ բազմազգոյշ վայելչական քահանայագործութեանցն:            Ըստ Առաջերիցութեանն:                        Ըստ Արժանատրութեանն:</p>

\* Նույն մեծադիր թերթի վարի կես՝ նախորդ կիսի հետ սկզբից շրջանակված: Յանկի պահպանված երկրորդ օրինակում (էջ 21v) որոշ անձնանուններ սև գծով ջնջված են, մասնավորապէս Առաջին դասից 2-րդը, 5-րդը, 6-րդը, 11-րդը, 18-րդը: Երկրորդ դասից՝ 1-3-րդը, 6-րդը, 10-11-րդը:

1801	31.	Տէր Յովակիմ Տէր Նիկողայոսեան:	
1799	32.	Տէր Առաքեալ Նախիջևանցի:	
1801	34.	Տէր Սողովուն Սուրբ Նշանի:	
1801	35.	Տէր Յարութիւն Տէր Սահակեան:	
1802	38.	Տէր Աստուածատուր Սուրբ Նշանի:	
1809	43.	Տէր Աստուածատուր Վանքի:	
1810	44.	Տէր Գրիգոր Տէր Դարբեան:	
1810	45.	Տէր Գաբրիէլ Պարոնբէկեանց:	
1811	46.	Տէր Վարդան Քամոյեանց:	
1826	52.	Տէր Գրիգոր Լօռումէլիքեանց:	
1826	53.	Տէր Աբրահամ Աբիմէլիքեանց:	

Կարգ ձեռնարկության	Կարգ արժանատության	<u>ԴԱՍ ԵՐԿՐՈՐԳ</u>	
1974	1.	Աւագերէց Տէր Մեքիսեղեկ Դամազեանց:	Ըստ նախապատուութեան եկեղեցւոյն և ըստ առանձնական շնորհաց գիտութեան և քարոզութեան: Ըստ կարգի ամաց ձեռնարկութեան:
1777	4.	Աւագերէց Տէր Մովսէս Նորաշինի:	
1781	5.	Աւագերէց Տէր Միքայէլ Մողնոյ:	Ըստ գիտութեան, քարոզչութեան և գործունէութեան: Ըստ արիական քահանայութեանց:
1798	9.	Աւագերէց Տէր Մեքիսեղեկ Դաւթեանց:	
1804	13.	Տէր Եսայի Մկրտումեան:	Ըստ վկայութեան վերակացուի բարեկարգութեան:
1797	14.	Տէր Գեորգ Տէր Ահարոնեան:	
1793	16.	Տէր Յարութիւն Տէր Վարդանեան:	Ըստ վկայութեան վերակացուի բարեկարգութեան:
1799	17.	Տէր Եսայի Դանդորեանց:	
1798	18.	Տէր Դազար Սանահնեցի:	Ըստ վկայութեան վերակացուի բարեկարգութեան:
1781	19.	Տէր Ստեփաննոս Տէր Մովսիսեան:	
1791	22.	Տէր Գրիգոր Կուսանաց վանքի:	Ըստ վկայութեան վերակացուի բարեկարգութեան:
1794	23.	Տէր Յարութիւն Արզնցի:	
1794	25.	Տէր Յովհաննէս Նախիջևանցի:	Ըստ վկայութեան վերակացուի բարեկարգութեան:
1797	27.	Տէր Աւետիք Մողնոյ:	
1798	29.	Տէր Խաչատուր Դաւթեան:	Ըստ վկայութեան վերակացուի բարեկարգութեան:
1813	33.	Տէր Մխիթար Տէր Ստեփաննոսեան:	
1801	36.	Տէր Մեսրոպ Տէր Գրիգորեան:	Ըստ վկայութեան վերակացուի բարեկարգութեան:
1801	37.	Տէր Յարութիւն Երևանցի:	
1805	39.	Տէր Պետրոս Երևանցի:	Ըստ վկայութեան վերակացուի բարեկարգութեան:

1806	40.	Տէր Ղազար Տէր Առաքելեան:	
1807	41.	Տէր Դանիէլ Տէր Չաքարեան:	
1808	42.	Տէր Սահակ Շամքորեցոց:	
1813	47.	Տէր Դաիթ Տէր Դարեան Մողմոյ:	
1814	48.	Տէր Ներսէս հին Երևանցոց	
1814	49.	Տէր Հայրապետ հին Երևանցոց:	
1822	50.	Տէր Դաիթ Տէր Մարտիրոսեան:	
1822	51.	Տէր Դանիէլ Տէր Յովհաննիսեան:	



ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ  
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1

[ՈՌՍՏՈՍ ԹԱԳԱՎՈՐԻ ՆՎԻՐԱԳԻՐԸ  
ԽՈՏԱ ԲԵՎՈՒԴԻՆ]

ԺԸ դարի սկզբին կատարված պատճեն, վրացերեն, անկից է պարսկերեն տարբերակը: Պահպանվում է Վրաստանի Կենտրոնական արխիվում (ֆոնդ 1450, թղթ. № 22, վավ. № 65): Հրատ. «Եօթոջը-եօթեջը օեթ. եօծյոյցծո», ՅձԹԵՆՅձ Յ. Յյոյոյրօծյծ, օծ., 1955, ՅՅ. 244-245: Վերահրատ. «Եւոյոյցծյոյցծ օծօլօսօս օեթօրօսօսօտյօս», (XVI-XIX եե.), ԲօՅԵՆՈ I, Յյօլօլօսօս եօյլօ ՅյօրօյեօՅյօլօլօ յօ մօմօեօ ՅյօրօմօնօՅյօլօլօ, օծ., 1962, ՅՅ. 17 (№ 12).

*Աստծո կամոք և օժանդակությամբ մենք՝ Աստուծով թագավորյալ, դույզ գահերի և իշխանության տիրակալ, արքայից-արքա իշխանակալ պատրոն Ռոստոմս, մեր կողակից՝ թագուհյաց թագուհի պատրոն Մարիամս, մեր անդրանիկ և ցանկալի որդի պատրոն Վախրանգը սուլյն այսուհետ ժամանակաց հավիտյան ավարտելիք, հաստատուն և անփոփոխ նվիրագիրն ու հավաստումը շնորհեցինք և պարգևեցինք ձեզ՝ մեր հավատարիմ և ի կարգի բազմերանգ անձնագոհությամբ ծառայած ծառայոց՝ զարբթուխուցես Խոջա Բեհրուդիդ, որդոցդ և ձեր գերդաստանի բոլոր գալիք [սերունդներին]:*

*Այն ժամանակ, երբ ներկայացաք արքունիք և Հավաբարին հարող քաղաքային հանգստարան որ կա, Մախաթա [սարի] ներքև, այնտեղ՝ ձեր նախնյաց ու սերնդոց ունեցած բնիկ գերեզմանոցում եկեղեցի կառուցելու թույլտվություն խնդրեցիք մեզնից. մենք էլ լսեցինք ձեր խնդրանքն ու խոսքը և թույլ տվեցինք՝ եկեղեցի կառուցեցիք, շատ էլ ծախս արիք ու կիրճից ջուր հանեցիք: Ձեր նույն գերեզմանոցի կողքին եկեղեցու վերևի կողմին այգի շինել կամեցաք, և այդ տեղն էլ խնդրեցիք մեզնից: Շնորհեցինք և պարգևեցինք քեզ ջուր՝ իր ակունքով. նրան միախառնելու Մախաթայի ստորտաից երկրորդ ջուր հանեցիք: Այգու սահմանը հասնում է ընդհուպ ձեր գերեզմանոցին, վերին կողմը՝ երկու առունների ակունքներ, մի կողմով մինչև կիրճ ու քաղաքի մայրուղի և Աստծո պատկերի աղոթարան: Սրանք լրիվ և ամենևին անվիճահարույց ձեզ և ձեր որդիներին ենք նվիրել՝ ի ժառանգություն և վերջնականորեն:*

*Արդ, հրամայում ենք ձեզ՝ արքունի վեբիլ-վեզիրներիդ, քաղաքի մովրավներիդ և այլ ձեռնավորներիդ, դուք էլ այսպես կա-*

տարեք և ոչ երբեք խանգարեք ու վիճարկեք՝ օգնությունից ու օժանդակությունից բացի:

Սուլյն հրամանն ու նշանակը գրվեց Քրոնիկոնի 342 (+1312=1654)-ին մեր արքունի դիվանադպիր Բիթվել Թումանիշվիու կողմից:

Ռ ո ս ս ո ս մ

Մենք՝ Աստուծով բարձրյալ և Աստուծով օծյալ թագակիր, Վրաստանի գահի հաստատ տիրակալ, ինքնիշխան, արքայից արքա պատրոն Թեյմուրազս նույնպես այս նվիրագրերը հաստատում եմ:

Քաղոցի 16 Քրոնիկոնի 444 (=1756):

Մենք՝ օծյալ տիրակալի որդի պատրոն թագավոր Հերակլս, նույնպես հաստատում եմ:

Քաղոցի 16, [Քրոնիկոնի] 444 (=1756):

## 2

### [ՍԱՀՏԵՍԻ ԱՆՏՈՆԸ ՎԱՆՔԻՆ ՎԱԽՍ Է ՏԱԼԻՍ ԻՐ ՂՈՒՔԱՆԸ]

Մատենադարան, Կաթ. դիվան. թղթ. 242. վավ. 12

Պատճառ գրոյ[ս] այս է. թուին ՌձՄէ. (1708) փետրվարի մէկ, որ ես՝ Դիւաքի որդի մահտեսի Անտոնս, ես իմ կամաւս և իմ կենդանութեամբս և իմ առողջ ժամանակիս իմ առած Դարպեցուի դուքանն տվի մեր աթոռ սուրբ Ստեփանոսի վանքին վախմ՝ ինձ հոգոյ բաժինի տեղ, որ քրէհօվ տան, քրէհն մեր վանքի միաբան[ք]ն առնին և վայելեն, որ ի ժամ սուրբ պատարաքին զիս և իմ ծնողքն յիշեն և յիշատակեն:

Այս իմ աշխատանօք գնած դուքանս, որ տվի մեր վանքին վախմ, սորա կողմանեն ո՛չ ում խօսք և կամ իլաղայ չկայ՝ ոչ եղբօր և ո՛չ քվեր, ո՛չ որդոց և ոչ դստերանց, ո՛չ թոռանց և ոչ ծ[ո]ռաց, ոչ ում խօսք և կամ իլաղայ հարկըզ չկայ և չլինի մեր վանքի առաջնորդին և միաբանին հետ՝ որ ես մահտեսի Անտոնս իմ կենդանութեամբս իմ դուքանն վախմ արարի մեր վանքին: Հարգահ հի յետ իմ մեռանելուն իմ որդի և թէ դստրէ, թոռնէ և ծ[ո]ռնէ յանդքնի և այս իմ տված վախմիս կողմանէն հակառակի և մեր վանքի միայբանէն դաւի անէ՝ ԳձժԸ. (318) հայրապետաց նզովեալ լինի և սէվերես առ յիս Քրիստոսի դատաստանն գայ:

**Այս եղև ներքոգրեալ մարդկանց գիտութեամբն և վկայութեամբն:**

Ես երեսիոյսան Թաթեոսս, որ եմ կնքահայր մղտսուն, վկայեմ:

Ես Տէր Հայրապետս, որ եմ խոստովան[ահ]այր վկայեմ

**Կնիք՝ Թաթեոս**

Ես փեալ Յկանս վկայեմ:

Կնիք

Ես Տէր Յովանէսս վկայեմ:

Ես խնամի Խաչատուրս վկայեմ:

Ես փեալ Յովանէսս վկայեմ:

Ես Խաչերեայի որդի Գասպարս վկայեմ:

Ես Մոռոթի Բունիաթս վկայեմ:

Ես փեալ Յոհանէսս վկայեմ:

Ես Ամիրի Թէվոմս վկայեմ:

Ես Չօպանէնց Միրճանս վկայեմ:

Ես Տէր Մաղարէս գրեցի, վկայեմ:

**Աջ լուսանցում.**

Ես Մելիք Վարդանս վկայեմ:

Կնիք *Ք(րիստոս)ի ծ(ա)ռ(այ) Վարթան*

Ես մահտեայ Պողոսի որդի խօճայ Վարդանս վկայեմ:

Ես Աստուածատուրի որդի Ղօջիս վկայեմ:

Կնիք

**Գարձերեսից**

Մէդանում է դուքանս այս:

Ծաթիկոթէս մահդասի Անտոնի դուքանի [ ] դասլամէն է:

## 3

[ԹԻՖԼԻՑԻ ԵՐԵՐ ԴՈՒՔԱՆՆԵՐԸ  
ԷՋՍԻԱԾԻՆԸ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՎ ԵՏ Ե ՂԵՆՈՒՄ]

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 242 վավ. № 12 (պժմ փոխված է):  
Հրատ. «Կալվաճագրեր և տնտեսական այլ գործարքների արխիվային վա-  
վերագրեր»: Առաջաբանով, ծանոթագրություններով, բառարանով կազմեց՝  
Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 130-131:

*Պատճառ գրոյ[ս] այս է, որ ես Խոջայ Բարխուդարի որդի Մար-  
տիրոս Սուրբ Էջմիածնայ փող կուղէի յԽԳ. (43) թուման: Ժամա-  
նակ անցաւ, Փաշայվանքի Տէր Դատիթն, որ էր Սուրբ Էջմիածնի գոր-  
ծակալ, հրամանաւ Նահապետ կաթողիկոսին մեզ հետ սօհլ արաւ  
Կ. (60) թումանով. Ոսկան վարդապետն նվիրակ էկաւ Վրաց տուն,  
նվիրակեց, Կ. (60) թուման թամամ չէլաւ, որ իմ փողի կտրվածքն  
Կ. (60) թուման էր ինձ հասել էր պակասեց, բերին Խօջայ Բեհբուտի  
տւած Գ. (3) դուքան կէր Սուրբ Էջմիածնայ վախմիաթ տված  
Նահապետ կաթողիկոսի հրամանով, մօհրով և թղթովն ղապալայ  
տւին՝ Ոսկան վարդապետն և Աշխարբէկն ինձ վրա ծախեցին, Նա-  
հապետ կաթողիկոսի հրամանովն այս Գ. (3) դուքանը ինձ վերայ  
ծախեցին, ղապալայ տւին. թէ որ քիչ մի պակաս փող էլ մնաց,  
Աղեքսանդր կաթողիկոսիցն մեզ հասաւ ձեռամբն Մետրոպ վար-  
դապետին:*

*Երբ ես՝ Մարտիրոս գնացի Սուրբ Էջմիածին, Աղեքսանդր կաթող-  
իկոսն երբ լսեց, թէ վախմիաթ դուքաններն ինձ վերայ ծախած  
է, ղաբուլ չարաւ, էլ վեստին դուքաններու փողն և գինը մեզ  
յետուր, էլ կրկին մեզմէն յետ գնեց և Սուրբ Էջմիածնայ վախմն  
արաւ: Աւուրս յետոյ ո՛չ ես, ո՛չ ուրիշ մարդ բան և խօսք չունի,  
ինձ մօտ էլ ուրիշ գիր չկայ. թէ որ գիր դուս գայ, էս գիրս էն  
գրին բաթալ անէ: Ինչ մարդ որ խօսի կամ այլ և այլ անէ, Սուրբ  
Էջմիածնայ կապ(ու)ած լինի և ՅԺԸ. (318) հայրապետաց նզովից  
ներքոյ լինի. ամէն:*

*Գիրս գրեցի ես՝ Մարտիրոս (ի) հաստատութիւն թղթոյս:  
Գրվեցաւ գիրս Ապրիլի ամսոյն, թվին ՌձԾԸ. (1709).*

*Ես՝ ՄԷլիք Գիօրգիս վկայ եմ (կնիք).*

*Ես՝ Մահտեսի Ամիրջանի որդի Գասպարս վկայ եմ.*

- Ես՝ Ջենալէնց Բուժիս վկայ եմ (կնիք).
- Ես՝ տանուտէր Փարսադանս վկայ եմ.
- Ես՝ Մահղեսի Գորգինի որդի Բեժոս վկայ եմ.
- Ես՝ նացալ Քախտսրովս վկայ եմ (կնիք).
- Ես՝ Օքոյի որդի Նասդիդես վկայ եմ (կնիք).
- Ես՝ Նարիմանի որդի Անչափս վկայ եմ.

4

[ՏԵՐ ՀՈՎՍԵՓԸ ԻՐ ԾԱԽՍԵՐԸ  
ԹՈՂՆՈՒՄ Է ՈՐԴՈՒՆ ԵՎ ԳԵՈՒՄ ՂԱՆՂԱՀԱՐ]

British Museum, Or. 5074, doc. 10. Հրատ. A. Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1913, p. 266-267: Հրատարակությունը մասնակի աղավաղումներով է: Առկից է Ֆ. Կոնիքիի թարգմանությունը:

Պատճառս գրոյս այս է, որ ես Տէր Յովսէփ գնացի Ղանղ[ահար], իմ սաբաբն Աստուածածնից առնէ պատուհասս ու պատիժ: Թողի այսչափ ժողովուրդ դաստուրով [ ] Տէր-Աբրահամին ձեռն: Նախ և առաջ Մէլիք Գիորկին և իւր եղբայր [ ]ն, Խօջայ Բարխուդարն, Ծատինին Գասբարն, Բաղկալ Խոտինինը, Անաշելինց Դաւիթն, Ծնէփէկինց Արութիւնն, իւր եղբայր Գիւրկին, Մանկօն և իւր եղբօր որդի Մովսէսն և իւր եղբաքն Մէլքօն և Բէրօն, Խոտինի որդի Փարսատան, Ծարհպանինց Սիմօն, Ղամազինց Դաթօի որդի Բէժան, Բաղկալ Կօկին և իւր փեսայ Գիօսն, Ասլանպէկինց Գասբարն և Աւետիսն, Բոասօ Զալին, մոնթ Պօղոսն, Բարաթն, Փասօն և Գասբարն, ալըցի Դաւիթն և իւր տղէրքն՝ Սօրօզանին, Գիւրկին, ալըցի Գուրկենինց Ամիրն, Գուրկենինը, ճոն Գոդերցին և եղբայր Գիւրկին, Յեզինց Ղազարի որդի Դաւիթն, Մանէսինց Գիւրկին, Զալին, Արութիւն, Սափարն, Նազարն, Զատիկօինց Զուրաբն և իւր որդիքն՝ Խատօն և Մէլքօն, միւս Զատիկօինց Արութիւն, Օդինց Նազարն և եղբայր Առաքելն, կանաղօք Արութիւն, Ծնէփէկինց իւր քվեր որդի Բաբէն, Նալչաքար Մուքելի որդի Մէրաբն և իւր եղբայրն, Զանդուխազ Մէլքօն և իւր որդի Սահակն, Խէշկիկինց Ծարճատի որդի Բաբէն, սառած Ծերմազանն, իւր որդի Էսդատէն և իւր գանաղօփնէրն և իւր եղբարքն Գիւրկին, Էսդատէն, Ծերմազանն և իւր որդի Գիօն, ծաւկցի Դաւիթն, Աւանինց քանարջի Գօգին, Արութիւնն, Զուրապն և եղբայր Զալին, Խատինի որդի Գիորկին և եղբայր Զուրաբն, դիվան Ծալվէն,

փալանդուզ Աւթանտիլն, Խորու Յովսէփն և իւր փեսայն, Սարու-  
խանինց Յիօն, դարփին Արուօին, խարազ Գաւաբն և իւր եղբօր որ-  
դին, Աբօվն և իւր քոյրն և փեսայն Մէրաբն, Աւանի որդի Խատօն և  
իւր եղբայր Գօգիէն, Բ (2) եղբայրք Մանկօն և Սիմօն, Սարուխանանց  
Սիրէլին, դամբուրչի Աւրանի որդի Գիորկին, Խնըպտու որդին,  
Միլածինց Նասիստէն և իւր եղբայրն և իւր փեսայ դարփին  
Արուօին, Մանկօի ճորտն Աւագն, Մովսէսի ճորտ Մարգարէն, մէկօտրէ  
Աւրան, Հուռմցի Արուօին, ալցի Ասատուրն, Գաւթի ճորտ Բիծիմէն,  
Կոստանդի որդի Գիորկին, ծինծղարեցի Յերմազան, Աւրապէկինց  
Գաւաբի ճորտ Յերմազան, լիսեցի թուր շինօղ Զաքարէն, Բ (2) որբ,  
որ մէկ Բարօինց Էստատէն, մէկն դամբուրաշի Աւրանի որդի Գիորկին  
ա մեծացնում, կախարդ Թամարօն և իւր փեսայն, գանջցի Բալասան  
ծակցի Յերմազան, որբիվէրի կնկտիքն՝ Էթերն, խլի քոյր Մարեամն,  
Շոնէինց Թինաթին, Թանդինինց Լալին, Հերիքնագն, Թումայի քոյր  
Մարանն, մէկ տուն ժողովուրդ Քարափի թաղում:

Այսչափ ժողովուրդ թողի իմ որդի Տէր Աբրահամի ձեռն ի հայ-  
րապետութեան տեառն Աղեքսանդր կաթողիկոսին և ի թագաւորու-  
թեանն Վախտանք խանին ես՝ Տէր Յովսէփս, որ գնացի Ղանդահար, էր  
թիւն ՌՃԾԹ. (1710) ի Մարտի ԺԲ գրեցաւ: Վերջ:

*Ծան.* Խոսքը վերաբերում է Ս. Նշանի ավագերեց Հովսեփ քահանային,  
որին Նահապետ կաթողիկոսը 1694 թ. միաժամանակ ս. Էջմիածնի գործակալ էր  
նշանակել (*Britisch Museum, Or. 5074, թ. 2: Նույնը տես ՄՄ դրսի միկրոֆիլմ,*  
*N 362): Նույն անձին ավագերեց հաստատելու և նրան հնազանդ մնալու կոչ է*  
*արել Ալեքսանդր կաթողիկոսը 1706 թվականին տված կոնդակով (նույն տեղ):*  
*Երկու տարի անց կաթողիկոսը հրահանգում է ս. Նշան եկեղեցին Հովսեփի*  
*որդի Տեր Աբրահամին հանձնել (1708 թ., ն. տ.):*

## 5

[ԽՈՏԱ ԲԵՎՈՒԴԻ ԹՈՈՆՈՐԴԻ ՍԷԼԻՔ ԱՂԱՅԻ ԵՎ ՆՐԱ  
ԵՂԱՅՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԱՐՏՈՆԱԳԻՐԸ ԸԱԲԱԹ ԵՎ ԿԻՐԱԿԻ  
ՕՐԵՐԻՆ ՊԱՏԱՐԱԳԻՉ ՔԱՎԱՆԱՆԵՐԻՆ ԽՈՏԱՅԻ  
ԲԱՂԱՆԻՔՈՒՄ ԱՆՎԱՐՁ ԼՈՂԱՆԱԼՈՒ ԵՎ ԲԱՂԱՆԻՔԻ  
ԴՐԱՍԱՐԿՐԻՅ 100 ԴԻԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹԵԱՆ ՍԱՍԻՆ]:

Արտոնագրի հաստատված բնագիրը մինչև XIX դարի սկիզբ պահպանվել է  
եղել Թիֆլիսի Կոնսիստորիայում, իսկ պատճենը՝ գործող հայոց եկեղեցիներում:  
Բեթղեմեմի եկեղեցու պատճենի հիման վրա բնագիրը հրատարակված ենք

գտնում «Լուսնայ» հանդեսում (1899, Գիրք Բ, Յուլիս, էջ 279-281), հավանաբար ի ձեռն խմբագիր Գյուտ ա. ք. Աղանյանի: 1745 թ.

**Այս բերանհեմունն է.**

Շնորհիւն ամենազօրին Աստուծոյ՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, և ողորմութեամբ նորին թուին Հայոց ՌՃՂԳ. (1745), Նոյեմբերի Ա-ի թիֆլիզեցի Մէլիք Աղայ հանդերձ հարազատ եղբարբ իմով Ստեփաննոսի, որդի Մէլիք Աշխարհբէկին, որդւոյ Խօջազաղային, որդւոյ Խօջա Բէհրուդին զայս մշտնջենական ուխտս եղի ընդ Թիֆլիզու բոլոր եկեղեցեացն, այսինքն է ընդ Վանքին, ընդ Քամօյինց եկեղեցոյն, ընդ Սուրբ Նշանին, ընդ Զգրաշինոյն, ընդ Նորաշինոյն, ընդ Մօղնոյն, ընդ Բեդլեհեմուն, ընդ Սհակաշէնուն, ընդ Քարափի եկեղեցոյն, ընդ Կուսանաց վանից և Հալաբարու մեր եկեղեցւոյն զայս պայմանաւ. ով ոք վերոյիշեալ եկեղեցեացն շաբաթ և կիրակի ժամարար լինի՝ ուրբաթ աւուրն երթայ ի մեր բաղանիսն և լուացուի՝ թարց դրամի, և ետ լուացմանն ձ(100) դեան ևս առցէ բաղանեաց դախլէն՝ շաբաթ և կիրակի զմեզ և զմեր ննջեցեալսն յիշեսցէ առաջի զենման անմահ Գառին Աստուծոյ:

Եւ եղաք զայս կարգս, զի Վանքի եկեղեցին և Հալաբարուն յիշեսցին զմեծ հաւն իմ զԽօջալի Բէհրուդն հանդերձ կողակցաւ իւրով, ի Սուրբ Նշանն և ի Մօղնու եկեղեցին յիշեսցին զպապն իմ զԽօջազաղայն հանդերձ կողակցաւ իւրով, ի Նորաշէն և ի Կուսանաց եկեղեցին յիշեսցին զհարյն իմ Մէլիք Աշխարհբէկն՝ հանդերձ մարբն իմով, ի Բեթլահեմու և ի Քամօյինց եկեղեցին յիշեսցին զեղբայրն իմ զԲէհրուդն հանդերձ կողակցաւ իւրով, ի Զգրաշէնու և ի Քարափի եկեղեցին յիշեսցին զիս և զկողակիցս իմ, ի Սհակաշէնու եկեղեցին յիշեսցին զեղբայրն իմ Ստեփանն հանդերձ կողակցաւ իւրով: Եւ զայս կացէ սահման մշտնջենական անջնջելի, վասն որոյ աղաչեմ յետագայիցդ մեր ազգաց մի՛ ոք ձեռնամուխ լինի քակելոյ հոգևոր ուխտադրութեանս, զի և դուք առջիք վաստակոց ձերոց մասն, իսկ եթէ ոք կամիցի քակել զուխտս մեր, ինքն լիցի պարտական զայսքան հոգւոցն առաջի ահեղ ատենին Քրիստոսի, և մեք լիցուք անպարտք, վասն զի յօժարութեամբ մերով եղաք ուխտս զայս և զրել ետուք ի գիրս յիշատակաց և կնքեցաք:

Կնիք

Կնիք

Դարձեալ մեք ևս Խօջի բաղնրսի միաբան դալաքներս մեր յօժարութեամբ ուրբաթի յաւուրն ժամարար քահանայքն որ լուսուիին մեք ևս սպասաւորեսցեմք ի փառս Աստծոյ առանց դրամի:



Հանդերձ կնքօք սորին նախատիպն տեսանելով՝ համեմատ նմին արտագրեցի Իզնատիոս Տէր Ստեփաննեան:

Տէ՛ր, մխիթարեա սպասաւորչացն Բեթլեհէմու Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ, որ և գրեցաւ 1813 և [...] յամսոջ 5, ի մայրաքաղաքն Փայտակարան:

6

[ԲԱՍՈՅԱՆՅ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ]

Սատենադարան, Կաթող. դիվան, թղթ. № 5, վավ. № 20

Դիցումն գրոյս այս է, որ ես՝ Տէր Մովսէսի որդի Տէր Գաբրիէլս կամեցայ ի մէջ քաղաքիս Սրբոյն Կարապետի անուամբ եկեղեցի շինել, որ էր թիւն Հայոց ՌՄԻ. (1771), և սակա եկեղեցւոյս կողմանց զհայրէնի տունս և զամենայն կայքսն իմ ծախեցի և ետու տեղագին եկեղեցւոյս: Եւ բաց ի այսց, Հէշուրեանց Ռօստօմի որդի Մկրտումն շնորհեաց եկեղեցւոյն յիշատակ իւրն հարիւր յիսուն և չորս գազ տեղ: Նաևս Տէր Աստուածատուրեանց Աստուածատուրն ետ վասն շինման եկեղեցւոյս երեսուն թուման և ապագայն և բազում դրամս տալ խոստացաւ, որ և յուսալով յԱստուած ձեռն ետու և ըսկսայ շինել: Բայց թէ տեղի և թէ վասն շինմանն յոլով խարջ և դրամս պիտոյացաւ, զի թէպէտ կատար հասուցի եկեղեցիս և յիշեցի ի մէջ պատարագին զվերոյիշեալ անձինքն, սակայն մնաց եկեղեցիս բազում պարտոց ներքոյ և անօթի՝ եկեղեցւոյս գրաւ ի ձեռս պարտատեարց: Որոյ յաղագաւ զմիամօր զաւակն իմ զՏէր Ստեփաննոսն յղեցաք ի երկիրն Հնդկաց

վասն իմդադրի: Իսկ նա ևս անդ վաղճանեցաւ յաղագաւ ծովացեալ մեղացս, և ես մնացի ըստ ամենայնի ի մեծի թշուառութեան միջի և կրէի գնեղութիւնս ի պարտատեարց:

Բայց ի ներքոյ թարեղոջս ազդամամբ Սրբոյ Հոգւոյն դա՛ դարադաղցի Տէր Մկրտչի որդի Խաչատուրոյ, կատարեալ հաւատով և հաստատուն սիրով յաղագս փրկութեան հոգւոյդ քում հալալ ընչիոքդ վճարեցեր զպարտս եկեղեցւոյս և ազատեցեր զգրաւ եղեալ զանօթսն, որ և ազատողն համայնից Տէրն մեր Յիսուս Քրիստոս ազատեսցէ զձեզ յամենայն չարէ և յամենայն փորձանաց և գրեսցէ զանունդ քո ի դպրութեան կենաց և լուսաւորեալ պայծառացուցէ զհոգիս ծնողացն քո, ամէն:

Ուստի և ես Տէր Գաբրիէլս միջնորդութեամբն Աստուծոյ և ամենայն սրբոց նորա զայս դաշնադրութեան թուղթս իմոյս յօժար կամօքն և հաճութեամբն հաստատեալ ետու քեզ՝ յիշեալ պարոն Խաչատուրիոյ, որ ի սարսափելի սրբոյ պատարագին անջնջելի յիշեսցի զանունդ քո յազգէ յազգս և որդոց որդիս: Նաև թէ ապագայն կամ յիշեալ պարոն Աստուածատուրն ըստ խոստացելոյն իւրոյ և կամ թէ այլ ոք կամեսցին վերստին քարամբք նորոգել՝ կրկին զանունդ քո ըստ վերոյ խոստմանս մերում անարգել յիշելոց եմք յաւիտեանս յաւիտենից:

Բայց մի արասցէ Աստուած, եթէ ոք իմային և կամ օտար՝ զայս ուխտիս և դաշնադրութեանց հակառակեսցի և ջանայցէ խափանել՝ մի կարասցի, և այնպիսի չարաշունչ անձն նզովեալ եղիցի ի Սուրբ Երրորդութենէն և պատժեսցի ընդ Կայենի և ընդ Յուդայի և ջնջեսցի զանունս նոցա ի դպրութենէն կենաց: Իսկ հաստատողքն և անջնջելի պահօղքն պահպանեցեալք լիցին ի խնամս Աստծոյ և զօրհնութիւնս Տեառն վայելեսցեն յաւիտենաս յաւիտենից, ամէն:

Գրեցաւ թուղթս ի տեսակս կոպարի ի ՌՄԸ. (1759) թուին չայոց, Նոյեմբերի ամսոյ Ժ-ին ի քաղաքս Թիֆլիզ:

Ինձ՝ Սրբոյ Կարապետիս ըսպասաւոր Գաբրիէլիս, այս վերու գրեալս ընդունելի է, վասն այն կնքեցաք:

Կնիք

Ես՝ Սրբոյ Կարապետի եկեղեցւոյ ծառայ և լուսարար Տէր Ստեփանս, վերոյ գրեալն վերահասու գոլով կնքեցի:

Կնիք

ამ წიგნის დამწერე და მოწამე ვარ მე-დავლავ ბევრთან ვიორვის შვილი სტეფანამ.

Կնիք

მე ტერფოანთ ესტატეს შვილი სტეფანამ ამ წიგნის დამხდური და მოწამე ვარ.

Կնիք

[Այս գրության մասնակից և վկա եմ ես՝ Դալաք Բերոանց Գեորգիի որդի Ստեփանս]:

[Ես՝ Տերփոանց Էստատեի որդի Ստեփանս, այս գրության վերահասուն եմ և վկա]:

ამ წიგნის დამხდური და მოწამე ვარ წურიბანთ ხატია შვილი მოსესამ.

Կնիք

[Սույն գրությանս վերահասու և վկա եմ Մուրինանց Խատիաչվիլի Մովսեսս]:

**Ծան.** Կաթ. դիվանի № 29 թղթապանակի № 125 վավերագրի նույն կապտավուն և նույն չափսի մեծագիր թղթի վրա գրված վավերագիր է: Ինչպես երևում է՝ ներսես Արքեպիսկոպոսի պահանջով ընդօրինակվել է նախնական մայր օրինակից՝ վրաց գրչությանը ծանոթ մարդու ձեռքով: Ընդօրինակություն լինելու լավագույն ապացույցը կնիքների փոխարեն նրանց շրջանակված «կնիք» ցուցումներն են:

Մենք ժամանակին ճշգրտել և արձանագրել ենք, որ այս վավերագրերը Քամոյանց Ս. Կարապետին են վերաբերում և ոչ՝ այսօր կանգուն Չուղուրեթի և Հավլաբարի միջև գտնվող և վերջին տարիներին վրացական եկեղեցի օծված Սուրբ Կարապետին:

[ՎՃԻՌ ՀԱՂԲԱՏԱՊԱՏԿԱՆ ՆՈՐԱՇԵՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՓԻԼԻՊՈՍ ՂԱՅՁԱԶՅԱՆԻ ՎԵՃԻ ԱՌՈՒՎ]

Վրաստանի Կենտր. պատմ. արխիվ ֆոնդ 1450, թղթ. № 4, վավ. 11: Պատճեն, բնագիրը տրված է 1779 թ., վրացերեն: Հրատ. «Ճարտըղո նամատղոն ժեղղեծո», թ. 5, օծ. 1974, շջ. 72-74. Հայ. թարգմ. տես «Լրաբեր հաս. գիտ.», 1998, № 3, էջ 188-189: Նաև՝ «Յիշատակարան Սամահոյ վամից», Ս. Էջմիածին, 2007, էջ 235-238.

Երբ Վրաստանի Հանգուցյալ Թագավոր Թեյմուրազի որդին՝ նորին բարձրություն Հերակլ երկրորդը՝ Քարթլիի ու Կախեթի Թագավորը և Ղազախի ու Բորչալոյի տիրակալը, Աստծուն ծառայող իր գորեղ բազկով Տփղիսի բերդը թաթարներից խլեց և առ ինքը գրավեց, այն ժամանակ բերդի ներսում նորաշենի այս հին տաճարը երևան եկավ և քանի որ հնում Հաղբատի եկեղեցուն էր պատկանել՝ նույն եկեղեցուն էլ նվիրեց:

Հետո, որոշ ժամանակ անց, Ղայթմազաշվիլի Տեր Փիլիպեն նրա շրջակայքում տան տեղ խնդրեց, և նորին մեծությունը այդ եկեղեցու պարսպից դուրս տան տեղ պարգևեց նրան: Եվ քանի որ այս եղելությունը մոտ ժամանակի էր՝ հարկավ շատերն էին հիշում, [Թե] որտեղ էր պարսպի հիմքը և կամ հատկապես որ տեղը պարգևեց, ուր այն ժամանակ խեղճ գլխներ էին խրճիթներով հաստատվել՝ այդ էլ նշանակելով գրված էր, որոնց ապացույցը սույն թղթի կոնակին է հայտարարված: Իսկ Տեր Փիլիպեն այդ տեղերը չէր անուանում: «Պարսպից ներս է տեղ գբաղեցնում», – ասում էին [բողոքողները]: Քանի որ սույն տեղերից այդ խրճիթները վերացրին և դուքաններ սարքեցին, եթե գիտակ մարդ չլիներ այդ տեղի առաջնորդը՝ որը ումն էր կշփոթվեր: Սակայն այս ընթացքում նման մարդիկ կային՝ ոմանք կառուցողներ և ոմանք՝ այդ տեղերում վարձ հավաքողներ, որ[ոնք] լաւ էին հիշում:

Հաղբատի եկեղեցու վիճակի և Տեր Փիլիպեի միջև այս խոսակցությունը որ սկսվեց, նորին բարձրություն Թագավորի և նորին սրբություն Անտոն Արքայազն կաթողիկոս-պատրիարքի հրամանով մենք՝ արքեպիսկոպոս Բեսարիոնը, վարդապետ Ստեփանեն, Տեր Ափրիան, Տեր Իսայի, Տեր Հակոբը (Ակոփը) և քաղաքի ուրիշ բազմաթիվ տերտերներ, ինչպես նաև աշխարհականներից ամիլխոր դիամբեկ Իեսեն, մզիվանբեկ Թեյմուրազը, դատավոր Իեսեն, մզիվան Սուլխանը, Թումանիշվիլի մզիլան Սուլխանը, մզիվան-մուլարեթխուցես Սուրմոն Բագթարեկիշվիլին, մզիվան Մանուշարը, սույն գործը քննելու և դատ անելու ուղարկվեցինք:

Ք.\* [Մեզ հետ էին] նաև քաղաքի մելիք-մամասախլիս Ավետիքը, Աբեսալոմանց Ասրաթը, Թաղումանց Մկրտումը՝ այս դուքանների կառուցողն ու սահմանները գիտեցողը, Նազարբեկի որդի Օսեփը՝ սա էլ այս գործի մեծ գիտակ, Ղորղանաշվիլի մուշրիբ Դավիթը՝ ի սկզբանե այս տեղերի վարձի հաշուառողն ու վերցնողը, և ուրիշ բազում մոքալաքներ:

\* Վրաց վավերագրերի ավանդական «Զանծիլին» է, որ պիտի կարդալ «Քրիստոսի»

Մեզ՝ դատավորներին, սրանք ոտը դնելով ցույց տվեցին, թե Տեր Փիլիպեին պարգևած տեղն այս է. եկեղեցու պարսպի հիմքին առնթեր դուքաններ որ կան, դրա դիմաց որ դուքաններ են՝ այնտեղ մոտիկ, որոնց երեսը դեպի հյուսիս է, և եկեղեցու պարսպն այն է, — ասում էին [հիմնողները], — որոնց երեսը դեպի արևելք է և թիկունքը՝ դեպի եկեղեցին: Այդ դուքանների գերանը ճիշտ եկեղեցու պարսպի հիմքի վրա է դրված, բատոնի ողորմածությամբ կալվածն էլ եկեղեցունն է և կառուցմամբ էլ Հաղբատի ծախսով է կառուցված: Այս խոսքը բոլորը ձեռքը հոգուն դրած և Աստուծո առաջ [երդուելով] ասացին և հավատացրին մեզ:

Մենք՝ միասին այստեղ գտնվող հոգևորականներս և աշխարհականներս, այսպես որոշեցինք. քանի որ այսքան մարդ ձեռքը հոգուն դրած այսպես է ասում, մենք նրանց հավատանք: Այսօր որ դուքաններ կան՝ երեսները դեպի արևելք և մեյդանի կողմը, իսկ թիկունքը դեպի եկեղեցին — սրանք Հաղբատին և այս եկեղեցուն մնացին:

Մարտի 2, ետ Քրիստոսի 1779, քրոնիկոնի 467:

\* \* \*

Սուլյնի իսկազիրը տեսա և այս պատճենը կնքեցի՝ Իենուքի որդի Մերաբ:

Սուլյն իսկազիրը տեսա և այս պատճենը կնքեցի՝ Տեր Շմավոնի որդի կրտսեր Ստեփան:

Սուլյն իսկազիրը տեսա և այս պատճենը կնքեցի ես՝ Տեր Ղազարանց Շաքրոյի որդի Աղալոս:

Սուլյն իսկազիրը տեսա նորին բարձրության կողմից հաստատված՝ այս պատճենին համապատասխան, ես՝ Իսայի Մկրտում Թաղոանց:

Սուլյն իսկազիրը տեսա և այս պատճենը ընդօրինակեցի ես՝ նորին սրբության կուսակրոն-քահանայ Նեոփիտես:

Մենք՝ համայն Վրաց պատրիարք, արքայազն Անտոնս, դատավորների կողմից վճռվածին համաձայն եմ և հաստատում եմ: Մարտի 2, 1779 թվին:

Հովհան (Իոանես) մզկիվանբեգ Օրբելիան[ա] վկայում եմ սուլյն վճիռը:

Նվաստ արքեպիսկոպոս Գերվիսան:

Անարժան վարդապետ Ստեփան:

Սկզբում

Մենք՝ հանգուցյալ թագավոր Թեյմուրազի որդի Հերակլ երկրորդ, թագավոր Վրաստանի՝ Քարթլիի, Կախեթի, այլոց և այլոց ու այլոց տերութեանց տիրակալ, հաստատում ենք սույն վճիռը:

Քանի որ այս եկեղեցին Թումանյանց է եղել, երբ Աստծո օժանդակութեամբ Տփղիսի բերդը գրավեցինք՝ եկեղեցիս Գորջասա մղիվանին հաստատեցինք և հաղբատապատկան կարգեցինք:

Գրվեց Մարտի 5-ին, քրոնիկոնի 477-ին:

8

[ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՌ ԱՅՆ, ԹԵ ՈՎՔԵՐ ԵՎ ԲԱՆԻ՞  
ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ ԵՆ ԵՂԵԼ ԲԱՂԱԲՈՒՄ]

«საქართველოს სიძველენი», ტ. III, ტფილისი, 1910, გვ. 15-17.

1784, Մարտի 1:

Ք. Քաղաքի մոուրավ Դավիթ սարդարը դիմում է քաղաքի հոգևոր սպասավորներից և քեղխուղաներիդ՝ երգվելով արարիչ Աստծով, Սուրբ Էջմիածնով և ձեր հոգով, ի՛նչ գիտեք ուղիղ և ճշմարիտ և տեսել եք ու լսել՝ այդ ուղիղն ու ճշմարիտը սույն գրութեան վրա գրեք. այս քաղաքում բացի թագավորի մոուրավից, մոուրավ և մելիքից, մամասուխիսից ու նացվալից բացի եղե՞լ է մեկը թե ոչ՝ բատոն թագավոր Հերակլի ժամանակ, թագավոր Վախթանգի ժամանակ և երանելի թագավոր Թեյմուրազի ժամանակ: Այս թագավորներից բացի սույն քաղաքում այլ պաշտոնայներ այս թագավորների օրոք ունեցե՞լ են որևէ մեկին, թե՞ ոչ մեկը չի ունեցել: Ուղիղն ու ճշմարիտը վկայեք Աստծո առաջ:

Գրվեց մարտի 1-ին, Քրոնիկոն շրժ-ին. (1784)

ԴԱՎԻԹ

<Սրան հաջորդում է հայերեն գրութիուն, հայագիր կնիքով>.

Առաջի Աստուծոյ, ես Սուրբ Նշանի մահտեսի ՏԵՐ Նիկողայոսս այսպէս եմ տեսի Վախթանգ պար[ո]նի ժամանակին՝ Ա. (1) մօրավ, մէլիք, Ա. (1) տանուտէր, Ա (1) նացվալ նաև Թեյմուրազ պար[ո]նի ժամանակին:

(կնիքի վրա) Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) ՄԱՀՏԵՍԻ  
Տ(Է)Ր - ՆԻԿՈՂՈՍ ՌՃՂԹ

<Այնուհետև այլևայլ գրչությամբ>  
վրացերեն.

*Առաջի Աստուծո, ես՝ Մողու մահտեսի Տէր Աբրահամն այսպես եմ տեսել, որ թագավորի նստած քաղաքում, նրա հրամանով մեկ մովրավ է եղել, մեկ մելիք - մամասախլիս (տանուտեր - Պ. Մ.) և նացվալ (փոխանորդ - Պ. Մ.) Վախթանգ թագավորի և Թէմուրագ թագավորի ժամանակ:*

Կ Ա Ի Ք

*Ք. Առաջի Աստծո, ես՝ Մողուի Տէր Իսայիս այսպես գիտեմ, որ Շահողուի-խանը երբ մովրավ (!) էր, նրա հրամանով մենք հոգևոր մարդիկս օրհնյալ Ավետիք վարդապետի ժամանակ մի մոքալաքի դատի եղանք և նրանից հետո մոքալաքները գնացել էին այլ դատ անելու և Շահողուի-խանը այդ մոքալաքներին բռնել էր ու տուգանք առել: Ես այսպես գիտեմ. քաղաքում մեկ մոուրավ է եղել և մելիք - մամասախլիս ու փոխանորդ: Աստծո առաջ ես այսպես եմ լսել և այսպես գիտեմ:*

հայատառ կնիք

<Այնուհետև կա հայերեն գրություն՝ հայատառ կնիքով>

*Ես Վանքի Սուրբ Աստուածածնայ սպասար Տէր-Աստուածատուրս այսպէս եմ տեսի Վախթանգ պարոնի ժամանակին Ա. (1) մովրավ, մելիք, Ա. (1) տանուտէր, Ա (1) նացվալ: Համ Թէմուրագ պարոնի ժամանակին էլ էսպէս:*

(Կնիք) Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՏՈՒՐ...

<Այնուհետև այլևայլ գրչությամբ>

*Ք. Իմ ժամանակ այսպես եմ տեսել, որ քաղաքում մեկ մոուրավ է եղել, մեկ մելիք, մեկ մամասախլիս և մեկ փոխանորդ: Նորաշենի սուրբ եկեղեցու փոքր ծառա Տէր Հակոբն է վկայում՝ առաջն Աստված այսպես եմ տեսել և նաև այսպես տեղեկացել:*

Կնիք (հայատառ)

*Ք. Աստծո առաջ, ես՝ Ջիգրաշենի ավագերեց Տէր-Օհանս այսպես եմ տեսել և այսպես լսել՝ ինչ իշխանավոր եղել է՝ մեկ մոուրավ և մեկ մելիք, մամասախլիս ու փոխանորդ է եղել:*

Կնիք (հայատառ)

<Լուսանցում այլևայլ գրչությունք>

Ք. Սուրբ Էջմիածնի վեքիլ և Վանքի բոլոր սուրբ եկեղեցի[ներ]ի անարժան սպասավոր ավագ քահանա Տէր Կոզա\* այս եմ տեղեկացել և տեսել, որ քաղաքում մեկ մոուրավ և մեկ մելիք ու մամասախլիս և փոխանորդ են եղել: Ես այսպես գիտեմ՝ առաջն Աստծո: ԿԱԻՔ (Ռայատաւ)

Ք. Աստծո առաջ ես՝ ավագ քահանա Տէր Գաբրիելս այսպես եմ տեսել ու լսել, որ Վրաստանում ինչ իշխանավոր եղել են՝ մեկ մոուրավ և մելիք - մամասախլիս ու փոխանորդ են եղել: Երկու իշխանավորներին էլ ես հասել եմ, որ այսպես էր: ԿԱԻՔ (Ռայատաւ)

<Երկրորդ էջին այլ գրչությամք>

Ք. Մեզանից որ հարցնում եք այս իրողությունը, մենք՝ քաղաքում եղած աշխարհականներս, երգմամբ հավաստում ենք, քեղխուղա թէ հասարակ մարդիկ՝ մենք ինքներս տեսել ենք և նախնիներից էլ լսել ենք, որ քաղաքում մեկ մոուրավ է եղել, մեկ մելիք է եղել, մեկ մամասախլիս է եղել և մեկ փոխանորդ է եղել: Ուրիշ ոչ ոք է եղել ոչ՝ մոուրավ, ոչ մելիք-մամասախլիս և ոչ էլ փոխանորդ է եղել: Եվ թող կատարվի նորին բարձր կամքը: <Վերջում դրված է քառասուն այլևայլ կԱԻՔ՝ վրացատաւ և Ռայատաւ>

<Սկզբում Հերակլ Բ-ի մակագրությունը>

Ք. Մեր հրամանն է՝ քանի որ այսքան հոգևորական և աշխարհական մարդիկ վկայում են, որ քաղաքում հնուց ի վեր մեկ մոուրավից ավելին չի եղել, մենք այսքան մարդկանց վկայության զորությամբ՝ մեր մոուրավից բացի ուրիշ ով էլ քաղաքում մոուրավ ունի՝ նրանց մոուրավությունից հանում ենք: Մեր սախասոյի<sup>1</sup> ծառային էլ ու քաղաքում ով էլ ծառա ունի՝ նրանց մոուրավը քաղաքի սարդար մոուրավը մեր փեսա Գավիթն է: Եվ եթե այս կապակցությամբ որևէ մեկը ճշմարիտ ասելիք ունի, որ այսքան վկայող անձանց կհակասի, թող ներկայանա:

\* Անշուշտ եղել է «Տէր Կիրակոզա»:  
<sup>1</sup> Իմա՝ արքունի տիրույթի:

9

[ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԿՈՆԴԱԿԻ  
ՆԱԽԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԲԱՏԻ Ս. ՆՇԱՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ  
ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴ ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ. 1784 Թ.]

ՄՄ, ձեռագիր № 2803, էջ 234-235: Հրատ. «Դիվան Հայոց պատմության»,  
Աոր շարք, գիրք Ա., Ղուկաս Կարմեցի, Ռատ. Ա. (1778-1785): Աշխատասիրու-  
թյամբ Վարդան Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 479-480:

...Վիճակեցելոցը Հախպատու Սուրբ Նշանի հրաշակերտ վանիցն,  
որք կայք զետեղեալք ի յաստուածախնամ քաղաքդ Թիֆլիզ ընդ  
հովանեալ եօթնից եկեղեցեացդ, այսինքն՝ Մօղան, Նորաշինու, Բերխե-  
նեմու, Կաթողիկէ եկեղեցույ, Հրեշտակապետի, Թէկեմամու և Սուրբ Սարգսի և  
արտաքոյ քաղաքիդ՝ իԳօրի, ի Կախէթ, ի Թէլաւ, ի Քիսեդ, ի բոլոր Վրաց-  
տուն, և ի Հախպատ և յայլս շէնս և ի գիւղորայս ի շրջակայից դո-  
ցին, որք նոյն սրբոյ վանիցն են թեմք, յորս կառուցեալ քրիստո-  
սահիմն սրբոց եկեղեցեաց և եկեղեցականաց դասուց: Նախ՝ հա-  
մայն միաբանիցդ դոյնոյ սրբոյ վանից, խոհեմամիտ վարդապե-  
տաց, պարկեշտաբարոյ աստիճանաւորաց և բնաւից բարեկրօն  
վանականաց, և ապա՝ սրբանուէր քահանայից, ուսումնասէր  
սարկ[կաւագաց] և համօրէն եկեղեցական մանկանց, բարե<համ-  
բաւ> իչ<խանաւորաց>, իրաւ<արար> մէլի<քաց>, փառա-  
զուարճ ազնէորդեաց, հաւա...

Զի ասէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս ի կենսածիր սուրբ Աւետարա-  
նի իւրում, թէ «Որ խնդրէ՝ առնու և որ հայցէ՝ գտանէ և որ բաղ-  
խէ՝ բացցի նմա»\*: Արդ և դուք՝ սիրելի և հոգևոր որդիքդ մեր,  
յառաջ քան զայս համակամ խորհրդեամբ և բարւոք դիտմամբ  
գրեալ էիք առ մեզ զթուղթ բազմակնիք և խնդրեալ ի մէնջ կա-  
ցուցանել սրբոյ վանիցն ձերում և ձեզ հոգևորապէս այցելու և  
տեսուչ զսիրելի և զչնորհածին որդին մեր և զբնիկ միաբանն  
սուրբ վանիցն ձեր՝ ԳԽաիթ խոհեմազարդ վարդապետն: Եւ մեր  
տեսեալ զօգտաւորութիւն շահաւէտ խնդրոյ ձերոյ, քաղցրացաք  
հայրական գթով առ հոգևոր որդիսդ մեր և կատարեցաք զհայցե-  
լին բարեխնդիր բաղխողացդ ի լրումն աւետարանական ամե-  
նաճշմարիտ բանին տէրունւոյ՝ գրելով զնամակ օրհնութեան և  
կարգելով զնա առաջնորդ:

\* Ղուկ. ԺԱ, 10:

Իսկ զի գրեալ էաք նմա յայնմիկ կոնդակոջն զպատուէր՝ առ ի գալ ի Սուրբ Աթոռս և ընդունիլ զխրատս հայրականս ի բազմադիմի օգտակարութիւնն ինքեան և սուրբ վանիցն և ձեզ, այժմ, ահա, որդիական հպատակութեամբ դիմեալ էր ի Սուրբ Աթոռ շնորհածին ծնօղս իւր և առ մերս հոգեւոր հայրութիւն, երկրորդ մահասարական թղթով հասարակութեան ձերոյ, որք ևս աղերսեալ էիք ի սէր և ի խնամս ընդունիլ և շահել, և երեւցուցանելով և զշնորհակալութիւն զշինարարութենէ և զլաւապէս կառավարութենէ նորին: Ուստի և մեք ի գալն նորա հայրական սիրով և գթով ընկալաք իբրև զորդի հնազանդ, արժանաւոր սիրոյ և օրհնութեան: Եւ որքան ի դէպն էր և հարկաւոր իսկ ասել դմա զբանս խրատականս և զպատուէրս ամենաօգուտս ի շինութիւն Սրբոյ Տանն այնմիկ ի բարեկեցութիւն ինքեան և ի բարւոք կառավարութիւն օրհնեալ վիճակայնոցդ իւրոց, ասացաք և պատուիրեցաք, զորս և ինքն յօժարութեամբ սրտի յանձն էառ ի պահել և ի կատարել, և դժուարակրելի ծանրութեանն իւրոյ և խղճալի վանիցն ևս ըստ ձեռնտուութեան ներկայիս կերպիւ միով օգնութիւն արարաք:

Եւ ապա այսու օրհնածիր կոնդակաւս վերահաստատեալ զսիրելի և զհոգեւոր որդիդ մեր և զհարազատ զաւակդ Սրբոյ Աթոռոյս՝ զՏէր Գաւրի Տաննաւորափայլ վարդապետդ և զարհիւպիսկոպոսդ ի յառաջնորդական գործն իւր և հոգեւոր խիլայիւք փառաւորեալ, ահա դարձուացք ի սուրբ վանսն ձեր և առ ձեզ, զի եկեալ յայդր հովուեսցէ զձեզ հոգեւոր իշխանութեամբ և աստուածային օրինօք և աւանդութեամբ սրբոյ եկեղեցւոյ և կանոնօք հարցն սրբոց և թարց ակնառութեանց:

Եւ արդ, որպէս լսելով մեր աղերսանաց ձերոց, վաղվաղակի կատարեցաք զխնդիր ձեր, պարտիք և... (գրեալ յօրինակէն, որ ի ճիւղ տետրն ի ԻԹ. (29) երեսն):

«ՀԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՎՃԻՌ ԵՎ ԿԱՐԳԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՍՈՂՆՈՒ  
Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԱՎԱԳ ԵԿԵՂԵՑՈՒ»

1797 թ. Հունվարին Մողնու եկեղեցու պարսպում (գավթում) Հովսեփ արքեպ. Արղությանի նախաձեռնությամբ գումարված ժողովի վճիռը, որի պատճենը «Մասագոյն թղթի վրայ գրուած, պահուած է Ս. Էջմիածնի Կաթողիկոսական դիվանում» (Աղ. Երիցեանց, Հարիւր տարուայ համախօսական վճիռ Թիֆլիզի Մողնու եկեղեցոյ.- «Արձագանք», 1897, № 11): Քաղում ենք ՄՄ պահպանվող բնագրից [թղթ. 6, վավերագիր 69]: Այլ հրատ. տես նաև՝ «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին»: Աշխատասիրությամբ Ռ. Տ. Տիտանյանի, Երևան, 1981, էջ 70-72:

*«Ըստ ընթացից հոլովման շրջանին ժամանակաց պատահեալ մեր (իմա՛ Յովսէփ արքեպ. Արղութեանցի – Պ. Մ.) ի կողմն ձախողակի և ի յարդար իրաւանցն Աստուծոյ դատեալ՝ խրատապատեցաք ըստ յանցանաց մերոց, որ ի ՌՄԽԴ. (1795) թուռջս և ի Սեպտեմբեր ամսոյ ԺԳ. (13) Պարսից իշխող չէզոք Աղա-Մահմադ-խանն եկն և տիրեաց զվայելուչ քաղաքս մեր Թիֆլիզ, որում և հասոյց զմեծ վնաս և զաղէտ տագնապի, անխնայաբար կոտորելով զբնակիչս, զորս և զբազումս գերի առնելով, հանդերձ այրեցմամբ շինուածոց և յափշտակմամբ յոլով գանձուց և փարթամութեանց, մինչ զի հասաք մեք ի յետին չքաւորութիւն, և առհասարակ փարթամք և անինչք ի կողմն մեծագոյն թշուառութեան և աղքատութեան միտեցաք: Սմին սարասի և եկեղեցիք մեր, զրկեալ ի կահուց և ի կարասեաց՝ անկան ի պայծառազարդութենէ և աղաւաղեալք անչքացան, որ ի վայելչականէն զրկեալք՝ գէթ հարկաւորին անգամ ոչ ձեռնհաս լինէին: Սակս որոյ համակամ հաւանութեամբ քաղաքիս մերոյ իշխանաց, եկեղեցականաց և աշխարհականաց և յատկապէս Մողնու եկեղեցւոյս քահանայականաց դասուց և ժողովրդոց, ի շինութիւն և ի պայծառազարդութիւն սրբոյ եկեղեցւոյս մերոյ, այսպէս ըմբոն և պատշաճ վարկեալ, զի որովհետև չունիմք մեք զառաջինն մեր կարողութիւն որպէս երէկն և եռանդն՝ հոգատարութեամբ լնուլ զհարկաւոր պիտոյսն սրբոյ եկեղեցւոյս, վասնորոյ կարգեցաք սրբոյ եկեղեցւոյս զմասն բաժնի յամենայնէ ելիցն և մտիցն իբրև զմի բնիկ քահանայ, հանելով բաժին ի ժամէ՝ եթէ ի տէրունական աւուրց և եթէ ի հասարակաց, զի զոր ինչ զեկեղեցւոյն բաժին անկցի, զայնս համայն քահանայք եկեղեցւոյս պարտին կարգաւ առնել զժամն ի հասարակէ յերից մասանց՝ զմի մասն առնելով*

ինքեանց վարձ, ըստ բնիկ սովորութեան եկեղեցւոյս, և ի տէրունականէ ի հինգերորդ մասնէ զմի մասն, և զմնացեալն տալով եկեղեցւոյն, որոյ հոգաբարձու և կառավար և երէցփոխան կարգեցաք զպարոն Եսային Ֆիթօյեան, և զամենայն հասան սրբոյ եկեղեցւոյս՝ թէ ժամուցս այս, թէ գանձանակ, թէ պսակի և կնքոյ լուսադրամ, թէ ձիթադրամ և մոմադրամ, որ հաւաքի ի Զատիկի և ի Զրօրհնեայս և թէ ամենայն ինչ՝ և թէ խանութի քերայք, և թէ գերեզմանահախք, և որ ինչ յանուն եկեղեցւոյ արդիւնք - զամենայն համանգամայն պարտին յանձնել ի վեր յիշեալ պարոն Եսայում առանց ումեք ներհակելոյ և ձեռնամուխ լինելոյ: Որ և նոյն պարոն Եսային զայնս ամենայն ինքեան յանձնեցեալ զարդիւնսն պարտի հաւատարիմ պահպանութեամբ պահել և ի հարկաւոր պակասութիւնս եկեղեցւոյ ծախել կարգաւոր հաշուադրութեամբ ելիցն և մտիցն:

Այսպէս և այսու օրինիւ և կանոնաւորութեամբ պարտի մնալ եկեղեցիս այս զժամանակ ինչ, մինչև այց առնել Տեառն մերոյ և համայնից նախախնամողին, որ ի կարողանալ ժողովրդոց և ի լնուլ հարկաւոր պակասութեանցն սրբոյ եկեղեցւոյս, յայնժամ ըստ վայելման ժամանակին լինելոց է կարգ և սահման:

Արդ և ոչ արժան իսկ էր զանց առնել զայսու, որ ի գալ և ի տիրել նոյն անիծեալ Աղա-Մահմադ-խանին զքաղաքս զայս, թէ զիարդ և որքան անտանելի տանջանս կրեաց Տէր Յմատնեան Տէր Գրիգոր մաքրասուն և մեծաշխատ աւագ քահանայն սրբոյ եկեղեցւոյս՝ արբամբ սաստիկ զանից և խարամբ բոլոր անդամոց՝ յաղագս անօթից եկեղեցւոյն, բայց նա զօրացեալ ի շնորհացն Աստուծոյ, ամենևին ոչ զանգիտեցեալ ի յայնքան դառն տանջանաց, այլ իսպառ տոկալով ի նեղութեանն այնմիկ, որ գրեթէ հասեալ մինչև ի դուռն մահու, բայց ոչ ցուցեալ ի պահեստ եղեալն զանօթ, զի թէ և ոմանք գիտելով զմասն ինչ ի պահեստի եղելոցն՝ անհամբեր եղեալ ցուցեալ էին անօրինացն և բոլորովին տարեալ նոցա, բայց զայնս զոր ումեք ոչ գիտացեալ բաց յինքննէ, զայն մասն ամբողջ գերծուցեալ, զորս ամենայն ի հաշուագրի նշանաւորեալ յականէ և յանուանէ, և ի ստորև ձեռագրեալ և կնքեալ՝ զհուշուագիրն ընդ թղթոյս յանձնեցաք պարոն երիցփոխ Եսայուն, և զանօթսն անդրէն ի Տէր Գրիգոր աւագ քահանայն յաւանդեցաք՝ ըստ պատշաճի եկեղեցւոյն ի գործ ածցէ և ըստ իւրում ժամանակի վայելեսցեն ի պաշտօնս և ի հանդէսս եկեղեցւոյն:

Գրեցաւ և եղաւ այս թուղթ ի ՌՄԽԵ (1796) թուոջս, ի Մարտի ամսոյ ԻԵ.(25): Վերջ:

Կարգադրուլթիւնս այս հաճոյ է ինձ. վասն որոյ և իմով ձեռամբ հաստատեմ՝ Յովսէփ արքեպիսկոպոս Ռուսաց երկրի Հայոց և այցելու աշխարհիս Վրաց»:

Հաղպատայ սրբոյ վանից առաջնորդ Դաւիթ արքեպիսկոպոս վերահասու գոլով, վասն որոյ կնքեցի:+

Յ. ամեն ժով՛ամբ ժջոցան յօղլոմոն.+

[Վկայ եմ՝ դիւան Սօլօմոն]

Յ. ամ յետօղլոն ցարօցցոն տանանմա ղա ժով՛ամբ ցար

– ժջոլօլոն Յջոլլօ ղարհօս+

[Այս բարի կարգավորման համաձայն և վկայ] եմ՝ Դարչի՝ մելիքի որդի]

Յ. ամ յետօղլոն տանանմա ցար ղա ժով՛ամբ – տայօա Յջոլլօ օնօս.+

[Այս լավությանը համաձայն եմ և վկայ] եմ՝ Թաղուպլիլի Իսայի]

Յ. ամ յետօղլոն ցարօցցոն տանանմա ղա ժով՛ամբ ցար – ժջոլլօն այջլօլ.+

[Այս լավ կարգավորմանը համաձայն եմ վկայ] եմ՝ դիվան Աւետիք]

Յ. ամ յետօղլ ցանջլլոնս տանանմա ցար ժջ յօլլօլաջ շլօրնօ ղա շժաձլլոն ժոնա լլլր ցրօլլլր. ծլլլլլօլ արօ ժլլոնղա. յն հլլմօ հլլլօս.

[Այս բարի կարգավորման համաձայն եմ ես՝ ամենայն անարժան և ցածրագուլն ծառա Տեր Գրիգորս: Կնիք չօլնեի, սա իմ ձեռքն է]:

[Վավերագրերի դարձերեսին].

Սոլլն կանոնիս համաձայն և համակամ գոլլով՝ կնքեմ՝

Սրբոյ Էջմիածնի գործակալ և Վանքի եկեղեցւոյ աւագ քահանայ Տեր Ղազար:+

Ընդ սոյն կանոնիս համակամ գոլլով կնքեմ. Կաթողիկէ

եկեղեցւոյ սպասաւոր Տեր Առաքել:+

Ընդ սոյն կանոնիս համակամ գոլլով կնքեմ. Նորաշէնու

Սուրբ եկեղեցւոյ անարժան սպասաւոր Տեր Յակոբ:

*Ընդ սոյն կանոնիս համակամ գոլով կնքեմ. Բեթլէհէմու  
Սուրբ եկեղեցւոյ սպասաւոր Տէր Ստեփան:*<sup>+</sup>

*Դ. ձմեռ թո՛ղձոյ շա՛ր թոյ ծանձմանո թողջօնոն թոյջոյ  
ե՛ծոյջան.*<sup>+</sup>

*[Սուլնի վկա եմ ես՝ Բաստամանց Մղղեսի որդի Ստեփանս]*

*Ստեփան Տէր Շմաւոնեան:*<sup>+</sup>

*Դ. ձմեռ թո՛ղձոյ շա՛ր ցօտօանօ օնձօն թոյջոյ յճա.*<sup>+</sup>

*[Սուլնի վկա եմ՝ Փիթոնաց Իսախայի որդի Աղա]:*

## 11

## [ԹԻՖԼԻՍԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՍՈՒՄԸ &lt; ԱՐԴՈՒԹՅԱՆԻՆ ]

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 6, վավ. 88: Հրատ. «Հայկական արք-  
յուրները Աղա-Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին  
(1795-1797 թթ.)»: Աշխատասիրությանը Ռ. Տ. Տիտանյան, Երևան, 1981, Էջ 90-  
91:

Գերերջանիկ և պասկազարդեալ սրբազան հայր Յովսէփ արքեպիսկոպոս,  
գթաձագունեղ տէր և բարերար

*Ի շնչասպառ և ի վշտակրեալ ժամանակիս այսմիկ աշխարհի  
զգօրացուցիչ ազդու իմն հոտ բուրեալ ի քիմս մեր իբր զարթու-  
ցիչս և յուշաբերս առօղ զմեզ ի նուազեցմանէ, զկարգեցումն ա-  
սեմք զթաշատի Հօրդ մերոյ առ գերագանց գրաֆ Վելարիոն Զու-  
պովն, ի խորհրդատուութիւն նորին պայծառափայլութեան, զոր  
այս անօրէնութիւն ի յերկնուստ և յաստուածայինն մարդասիրու-  
թենէ խնամարկութիւն մեզ զգամք, զի մեծ երջանկութիւն է հա-  
մարելի վասն մեր, և զյոլով բարիս ստանալ յուսամք ի սրբազ-  
նութենէ ձերմէ, ըստ այնմ զի ըստ բնածին բարեսէր բարուցդ,  
մշտապէս ի յապահով և յանդորր ժամանակի մերում, հետեւեալ ես  
ի բարձրագունեղ դրանն նորին ինքնակալութեան, զվայելչա-  
կանս յաւելուլ վասն մեր և երկրիս մերում, ապա այժմ քանի՞ օն  
առաւել հետեւելոց ես որ վասն մեղաց մերոց յամենայնէ զրկեալ  
հարկաւորին անգամ ոչ եմք ձեռնահաս, որ գրեթէ հասեալ եմք  
յափն յուսահատութեան, չունիմք զերկբայութիւն առ այս, այլ  
քաջ գիտեմք և յուսամք հայրախնամ զթասրտութեամբ հետեւելոց*

ես քան զոր խնդրեմք և իմանամք, սակայն կամիմք ծանուցանել սրբազնութեանդ թէ մի ինչ է, որ վերջապէս շինութեան և կազմութեան մերոյ հարկաւորն է, զի ըստ բազում և մեծամեծ ողորմութեանցն, որ եղև մեզ ի մեծէ ինքնակալութենէ նորին, եղիցին այս պարգևք ի վերայ մեր, զի շնորհեսցի մեզ ի թագաւորական գանձուց ողորմութիւն իմն, ի շինութիւն քակուածոց և այրեցեալ տանց և խանութաց մերոց, և առ ի կալ մեզ ի վերայ գործոց մերոց՝ որպէս և էաքն յառաջ, առ որս օժանդակութիւն և ձեռնտութիւն ի սրբազնութենէդ խնդրեմք տալ մեզ զպատճէնն, և ցուցանել մեզ զմուտն այսր դրան, որով կարեցուք ստանալ զողորմութիւնս զայս, զի թարց այսորակ անկարելի գոլ թուի մեզ ի յանկմանէս յայսմանէ կանգնիլ ի յոտին, և ելով մեր միշտ ի սոյն խորհուրդ վաղուրեմն կամէաք ազդել զայս հօրդ մերում սրբազանի, բայց մինչ եղբօր որդին ձեր և սիրելին մեր կնեազ Վասիլ Բէժանիչն եկն աստ, պատկան համարեալ մեր սովիմբ մատուցանել, զոր ահա մատուցեալ և ակնադէտ եղեալ սպասեմք հրամանի տեառնդ և հօրդ մերոյ:

Ի բոլոր սրտէ վասն սրբազնութեանդ յԱստուծոյ միշտ զբարիս հայցօղ ծառայք և որդիք սրբազնութեանդ մնացորդք ժողովրդեանս աւերեալ Թիֆլիզու:

1796 ի Մայիսի 24

ի յաւերեալ Թիֆլիզում

Քր[իստոսի] ծառայ Դարչի Բէհրուդ

Խոնարհ ծառայ Ըստեփան Տէր Շմաւոնեանց

ձոնա շօտրջօ ժց նաճարձեցօց

[Մառա Գեորգի որդի Նազարբեգով]

Նվաստ Յեսայի դի Մկրտում Թագօեան

յ. շլօրնօ ձոնա օնօօ ցօտօնօց

[Անարժան ծառա Իսայի Փիթոնով]

յ. շլմօնձեցլօծօն ձոնա ցօտօնօց

[Սրբազնութեան ծառա Փիթոնով]:

1796-ի Մայիսի 24, ի յաւերեալ Թիֆլիզում:

[ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ԿՈՆԴԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԹԻՖԼԻՍԻ  
ԲԵՌՂԵՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆՆԵՐԻՆ]

Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. № 6, վավ. 131 (պատճեն): Հրատ. «Հայկական աղբյուրները Աղա-Մուհամմադ Խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.)»: Աշխատասիրությամբ Ռ. Տ. Տիտանյան, Երևան, 1981, էջ 118-119:

...Արդ՝ ըստ ասացելոյս այսմիկ՝ Տէր Մխիթար ծերունի քահանայն, որ ի բազում ամս աւագ իրիցուլթեամբ տեսուչ էր սրբոյ եկեղեցւոյդ, յետ վճարելոյ կենաց նորա սպանմամբ ի դիւազունդ զօրացն Պարսից յարձակեցելոց ի վերայ քաղաքիդ յաղագս ոչ յայտնելոյ նորա զթագուցեալ պահեստս սրբոյ եկեղեցւոյդ (որոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ և ընդ սուրբ քահանայն դասեսցէ), յանցելումն ամի հարազատ որդին նորա Տէր Ստեփաննոս խոհեմամիտ քահանայն ընտրեցեալ է ի հասարակութենէ ձերմէ կարգել ի տեղի հանգուցեալ հօրն աւագերէց ի սուրբ եկեղեցւոջդ ձերում:

Եւ չունելով ձեր յայնժամ զձեռնահասութիւն առ այսոր՝ վասն վրդովմանց ժամանակին ի խռովութենէ Պարսից, Դաւիթ վարդապետ առաջնորդն ձեր տուեալ էր նման զթուղթ ի հաստատութիւն ընտրութեանն, յոգունց անձանց ևս կնքելով զնոյն: Իսկ նարդենիս բազմակնիք մահսէրիւ հասարակութեանդ ձերոյ և միւս եկեղեցեաց աւագ քահանայիցն եկն ի Սուրբ Աթոռ և առ մեզ: Զոր և մեք ի հայրական սէր և ի խնամս վերընկալաք: Եւ զի միաբանութեամբ վկայեալ էիք արժանաւորութիւնն, վասնորոյ ըստ սրբազան առաքելոյն բանի, թէ «Որք բարւոք վերակացուք լինին երիցունք, կրկին պատուոյ արժանացին»\*, ահա զսիրելի և զհոգևոր որդին մեր և զհաւատարիմ զաւակն Սրբոյ Աթոռոյն զՏէր Ստեփաննոս հանճարունակ քահանայն արժանի համարեալ կրկին պատուոյ այսու օրհնածիր կոնդակաւս մերովս կարգեցաք աւագերեց ի Սուրբ Բեթղեհեմ հրաշագարդ եկեղեցւոջդ ձերում, զորդին ընդ հօրն յաջորդեցուցանելով աւանդեալ զպատուերս կարևորս և օգտակարս, սիրով և օրհունութեամբ և խիլայիւ դարձուցաք առ սիրելի և հոգևոր որդիսդ մեր: Որպէս ամենայնիւ վստահութեամբ և քաջաջան արիութեամբ կառավարեսցէ զձեզ ըստ աստուածային պատուիրանացն և ըստ ուղիղ աւանդութեանց և սահմանադրու-

\* Առ Տիմոթ., I, Ե, 17:

Թեանց սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց: Եւ բարւոք տնտեսութեամբ և վերակացութեամբ հոգասցէ զամենայն հոգս Սրբոյ եկեղեցւոյդ ձերոյ՝ յարամնալով և ի հարազատ որդիութիւնն և ի անձնազիր ծառայութեանն լուսատու ծնողին ձերոյ Սրբոյ Աթոռոյս և հոգևոր հայրութեան մերոյ, և զձեզ ևս ի նոյնս յորդորելով, եւ դուք ուրեմն համայն սրբանուէր քահանայքդ և քրիստոսասէր և օրհնեալ ժողովուրդքդ պարտիք ամենայնիւ յօժարութեամբ և աննախանձաբար լսողք և կատարող լինել ամենից անմեղսածին հրամանաց դորին և լինել դմա յամենայնի հնազանդք և պատուել զդա ըստ օրինի և ըստ իւրոյ արժանւոյն որպէս զհոգևոր վերակացու և կառավարիչ ձեզ և աւագ քահանայ:

Եւ կատարողքդ հրամանաց մերոց եղիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ, և շնորհք սրբոյ Իջման տեղւոյս Քրիստոսի ընդ ձեզ լիցի միշտ, ամէն:

Գրեցաւ առ ի թուական մերում ՌՄԽԶ. (1797) յՕգոստոս ժԸ. (18) ի բարձրագահ Աթոռս Սուրբ Էջմիածին:

13

[ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԷՋՄԻԱԾՆԱԿԱՍԿԱՆ ԱՅԳԵՏԵՂԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՍԱՐ]

Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 242, վավ. 58 (այժմ փոխված է): Հրատ. «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների արխիվային վավերագրեր»: Առաջաբանով, ծանոթագրություններով, բառարանով կազմեց Հար. Աբրահամյան, Երևան, 1941, էջ 105-106:

*Զսոյն գրութիւն Սիւնհոգոսի վերահաստատեալ՝ կնքեմ սեպհական ստորագրութեամբ իմով և դրոշմամբ Հայրապետականս կնքոյ.*

*Կաթողիկոս ամենայն Հայոց և ասպետ Սրբոյն Աղեքսանդրու Նևացւոյ Յովհաննէս (կնիք)*

Տուեալ եղև այս պարոն 14-կլաս աղա Գալուստի Ելիմիրգեանց առ այն, զի նա որովհետև կամէր գնել ի սրբազան Սիւնհոգոսէ Սրբոյ Աթոռոյս Էջմիածնի՝ զպատկանեալն Սրբոյ Աթոռոյ տեղին այգւոյ ի Տափիթաղ անուանեալ մասին Թիֆլիզ քաղաքի, որ ի վերայ ճանապարհին Սօլօլակի մերձ առ տունն կնիազ Լուարսաբ Սումբաթովի, որ ի ժամանակս արքեպիսկոպոսին Ներսիսի ինքնագլուխ սեպհականեալ առանց գիտութեան հոգևորական կառավարութեան, ի տեղւոյ

անտի զմասն ինչ սկսեալ ի բոլորաձև բրջէն իւրմէ շինեալ է ինքեան զփաթեր, զոր այժմ սկսեալ ի փաթերէն մինչև ցսեպհական տուն նորայ պահանջէ ի նմանէ սրբազան Սիւնհոգոսն: Եւ որովհետև այժմ անօգուտ համարի տեղին այն վասն Սրբոյ Աթոռոյ, սրբազան Սիւնհոգոսն ըստ բարձրագոյն բարեհաճութեան նորին վեհափառութեան Տեառն Յովհաննու աստուածընտիր և կայսերապսակ կաթողիկոսին ամենայն շաչոց, լիովին ընկալեալ ի յիշեալ աղայ Գալուստ Էլիմիրգեանէ զգին տեղւոյն այնորիկ՝ վաճառեաց նմա զայն բաց ի յիշեալ փաթերէն ի ժառանգութիւն նորին յորդոց յորդիս: Եւ սահմանք տեղւոյն են այսոքիկ. յարևելեան կողմանէ՝ իւր սեպհական տան բուրջն և վերոյ յիշեալ փաթերն և ճանապարհն հասարակաց, որ ի վեր տանն. յարևմտեան կողմանէ՝ Բաստամեանց Բեժանի այգին, և ընդ մեջ նոյն այգւոյն և յիշեալ կնիազի շինեալ փաթերին է մեր այգին միջանկեալ. ի հիւսիսային կողմանէ՝ է Թագաւորական այգին, որ էր յառաջն Վրաց Գիորկի արքային. իսկ ի հարաւային կողմանէ՝ է հասարակաց ճանապարհն դէպի Սօլօլակ, որ յառաջն էր կտոր մեր այգւոյն, զոր յետոյ հատեալ ճանապարհացոցին: Վասն որոյ սրբազան Սիւնհոգոսն Սրբոյ Աթոռոյ Էջմիածնի տայ նմա՝ աղայ Գալուստ Էլիմիրգեանի, զայս հաստատուն դապալայ ստորագրութեամբ անդամոց խորհրդականաց և դրոշմամբ կնքոյ իւրոյ յաղագս միամտութեան նորին և առ այն, զի այսուհետև մի՛ ոք ի հոգևորականաց մերոց, թէ ի ներկայից և թէ յապագայից, ունիցի զիշխանութիւն ինչ ի վերայ վերոյիշեալ վաճառեալ տեղւոյն:

Յամի Տեառն հազար ութն հարիւր երեսուն և երկու, յամսեանն Օգոստոսի քսան և եօթն: № 127, ի Սուրբ Էջմիածին:

Եւ առ այն, զի ստացեալ եղև ամբողջ գին վաճառեալ տեղւոյն վեց հարիւր մանէթ արծաթ դրամ, որ առնէ վաթսուն թուման Թիֆլիզոյ:

**Աւագ լուսարար Բարսեղ արքեպիսկոպոս, կաւալեր:**

- Գրիգոր արքեպիսկոպոս:
- Վեհապետեան Յովսէփ եպիսկոպոս:
- Ղուկաս եպիսկոպոս:
- Ստեփաննոս վարդապետ Արարատեանց:
- Յովհաննէս վարդապետ Գէորգեան:

(Սինոդի կնիքը).

[ԹԻՖԼԻՍԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՑԱՆԿԻ  
ՊԱՏԱՌԻԿ]

Վրաստանի ԳԱ Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտի (այժմ՝ Ձեռագրերի ազգային կենտրոնի) Վրաց մեջ գրագիտության տարածման (S) ընկերության վավերագրերի հավաքածո (d.)՝ Sd-2343: Երկու թերթից բաղկացած ցանկ-անարագրություն, վրացերեն: Առաջին թերթն սկսվում է հերթական 16 համարակալումով: Գրչությունը մխեդրովի է, բավական հապճեպ գրված: Տեղ-տեղ կան ջնջումներ, թերևս սևագրություն է: Ունի և երկրորդ համարակալում Sd-3056: Վերջին թերթի (2v) գրչությունը փոխվում է:

- 1r 16. Այստեղ կա փոքր տաճար՝ Աստվածածնի, այժմ կառույցը փայտածածկ է: Ծխականները կառուցել են 1805-ին:
17. Դեպի արևելք դաշտին կանգնած է գմբեթավոր մեծ եկեղեցի՝ Խոջաի տաճար կոչվող: Կառուցված է խոջաների կողմից 1700 թվին հանուն Սուրբ Աստվածածնի: Տաճարում ներքուստ Բեհբուդով իշխանների տապաններն են, իսկ արտաքուստ՝ Թբիլիսի բնակիչների գերեզմաններն են:
18. Կուր գետի ափին ժայռի վրա, Թբիլիսի ցամաք իջնող [տեղում] կառուցված է գմբեթավոր եկեղեցի, քարուկրով գեղեցկատես՝ հանուն Սուրբ Կարապետի, այսինքն Մկրտչի: Նախապես կառուցել է մոքալաք Ղամագովը և նորոգյալ է Տեր Դավիթ առաջինի կողմից: Հիմնարկված է 1000 թվին, իսկ ապա նորոգված 1790-ին: Այստեղ է հանգչում Մկրտչի հրաշագործ մասունքը: Գիտեն նաև տոն, որ գրված է:
19. Կուրի ափին, Կուկիա կոչված տեղում Սուրբ Աստվածածնի անվան փոքր եկեղեցի կա, քարուկրով - աղյուսով ծածկված: Ծխականներն են կառուցել 1804 թվին:

\* \* \*

- 1v 1. Հարանց վանք՝ Գարեթուբանում, Կուրի ափին: Կառուցված է միջին խորանը Սուրբ Աստվածածնի անունը կրող եկեղեցի, հյուսիսային խորանը՝ Սուրբ Առաքելոց, հարավայինը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի: Այս տաճարը կանգնած է վեց սյուների վրա՝ երեք մեծ գմբեթներով և երկուսը՝ հարավում և հյուսիսում, այսինքն հինգ գմբեթավոր: Այս եկեղեցու մոտ կա երկհարկանի այլ տաճար՝ ներքևը Սուրբ Հակոբի, վերևը՝ ամենայն բժշկաց: Այս ամբողջ կառույցը [պատկանում] է Թբի-

լիսիի մոքայաքններ Ամսարգիսովներին, Բաստամովին, Նազարբեգով իշխանին Սոլովակում:

Կառուցված է 1480-ին. սուլյն շենքը նորոգեց տեղիս ավագերեց Տեր Ղազար Լազարովը 1800-ին: Այս տաճարը կոչվում է Փաշիվանք, որովհետև կառուցման ժամանակ թրխիսի կառավարիչ է եղել Օսմանյան փաշան, ուստի և Փաշիվանք անունն է կրում: Այս վանքում են նստում Վրաստանի Հայոց հովվապետն ու Հայոց եկվոր արեղաները: Այստեղ կա երկու մեծապես շքեղ զանգակատուն, հին ճարտարապետների ձեռքով կառուցված:

Այս վանքում է հանգչում Սուրբ Հակոբի մասունքը՝ բազուկը, որին նրա տոնի ժամանակ երկրպագում են շատ բազումք:

2x 2. Հարավային կողմում ժայռի վրա է կառուցված Կուսանաց վանքը՝ քարուկրով, Սուրբ Ստեփանոսի անվամբ: Այստեղ է հանգչում նույն սրբի բազկաց մասունքը: Եկեղեցիս կղմինդրածածկ է, փոքր գմբեթով, ամենայն կանանց: Կառուցված է իշխան Աշխարհբեկ Բեբուդովի կողմից և այսօր ապրում են կանայք, մինչև այս ու այսուհետ սուլյն Բեբ[ուդ]ովի ժառանգները:

Կառուցված է 1707 թվին:

\* \* \*

- 2v Ք. Բնակիչների թիվը - այր և կին:
- Ք. Բարեձնունդների թիվը - այր և կին:
- Ք. Վաճառականների թիվը՝ այլևայլ ազգաց, այսինքն՝ Ռուսաց, Վրաց, Լատինացոց, Հայոց, Գերմանացիների, Քրդերի:

\* \* \*

[ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՑԱՆԿ՝ ՎՐԱՅԵՐԵՆ ԱՅԼ ԳՐՉՈՒԹՅԱՄԲ]

1. Վանք
2. Պալատի
3. Զրկինաց
4. Քամոյանց
5. Զիգրաշեն
6. Սուրբ Նշան
7. Մուղնի մեծ

8. Մուղնի փոքր
9. Կուսանաց եկեղեցի
10. Բերդեհեմ
11. Քարափի տաճար
12. Նորաշեն:
13. Բերդի տաճար մեծ:
14. Բերդի տաճար փոքր:
15. Հավլաբարի աջ վերելքի գլխին, Մետեխի ամրոցի դեմդիմաց Տեր Աբրահամի տաճար:
16. Հավլաբարի ձախ վերելքի գլխին, Էջմիածնեցոց տաճար:
17. Հավլաբարում Երևանցոց տաճար: Դրսի Հավլաբարում՝ Սուրբ Մինաս:
18. Խոջայի տաճար
19. Սուրբ Կարապետ
20. Կուկիայի տաճար
21. Նույն Հավլաբարում փոքր տաճարով (այսպես): Ներքին Հավլաբարում Ծամբորեցոց:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ  
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## 1

## ԱՐԲԷԼ ԳՈՒԼԱՍՊԵԱՆ ԹԻՖԼԻՉԵՑԻ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐԱՅ

Վրաստ. ԳԱ Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստ. Arm. 49, էջ 193-195, գրված է 1780 հետո և միացված մինչ այդ կազմված ձեռագրին: Վրաստանին վերաբերողը 14-րդ պատմությունն է, թերևս գրված Մոսկվայում:

\* \* \*

...Տասն և չորսերորդ. Մեծագոր թագաւոր Վրաց, որ ըստ լեզուս իւրեանց կոչի Նէփէ կամ Խելմծիփէ (այսինքն է արքայ): Են դաւանակից Յունաց և Ըռուաց, որ և քարոզութեամբ սրբոյՏոյ կուսին Նունէի եղեն քրիստոնեայք: Եւ յաժմս ունի արքան Վրաց երեք գաւառս՝ Վրացտուն, Կախէթ և Սոսիսէթ մերոցս աշխարհէն: Եւ կարէ ժողովել ի ժամ մեծ պատերազմի զօրք 40 հազար այլ և այլ ազգաց, ձիաւորք և հետեակ՝ հսկայք սրդոտ և զօրճէղք: Եւ ունի տարէն գէլուր մադանից, գումրուկից և ժողովրդոց 20 հազար թուման և թողս այլ գէլուրն և ընծայքն այլիւք մօտակայ այլ և այլ տէրութեանց: Եւ ունի ենթ իւրն հնազանտ մահմէտականաց խաներ Թարիզու, Երևանու, Գանջալու, Սալմաստու, Ծաքու, Ծուշու և բէկէրաց Լազգաց, մօտակայ Չարքագաց և յՕսաց: Եւ տայ նոյն բէկէրաց տօնլուխ առ ի հպատակ և հաւատարիմ ծառայեսցին հարկայոր ժամանակին:

Եւ արքայն Վրաց առնու պարգև ընծայ ի վերն յիշեալ խանք մահմեդականաց: Եւ ունի քաղաքն Թիֆլիզ իւրն փայլիթախտ, և քաղաքս այս բարեխառն հաւովք, լեռներով և դաշտերով, և ունի ի միջի իւր Կուր գետն՝ Քուր և հիանալի շահաւէտք բաղանիք 8, և այգիք մրգաւէտ գանազան պտղով, առատ բուսք և տունք: Եւ իշ[խ]է արքայն անդ աւել 3 հազար տնուորք ազգէս մերոյ և առնուի նոցանէ խարջ, մալ, գումրուկ: Եւ ունի ազգս մեր անդ 20 եկեղեցի, պայծառ և գեղեցիկ, և յառաջնորդարան վանք: Եւ իւրեանց եկեղեցիք Վրաց 16, և կաթողիկոսն նոցայ նստի յաթոռ իւրենաց Յրիսթայ: Եւ ունի արքայն մարդէն արծաթի, առճիճի, ի գաւառս միւս՝ տեղիք արկաթի ևս: Եւ է յոյժ յաղօթասէր և հեզ և ողորմասիրտ արքայ և խնամատու ժողովրդոց, մանաւանդ ազգիս մերոյ, և պահի ապահով և առնու հարկս չափաւոր: Եւ է օգնող յաթոռոյս մերոյ սրբոյ Էջմիածնի, և սիրէ և պատուէ սրբազան Հայրապետին մերոյ, և ոչ է ներհակ հաւատոյս մերոյ սրբոյ և ուղղա-

*փառ դաւանութեանց: Եւ եկեղեցի մեր ընդունի և ի սիրով մտանէ երբեմն եկեղեցի մեր և աղօթէ անդ և ուխտ առնէ, և երբեմն տայ նուէրս եկեղեցւոյ և ի քահանայից և կուսանաց մերոց, ի տօնի Ծննդեան Քրիստոսի և ի Զատիկի և ոչինչ հարկ առնու եկեղեցական կղերիկոսաց:*

*Եւ ունի ի տիրել գաւառում բազում եկեղեցիք իւր և մեր ազանց և ի գիւղօրայք բազում: Եւ ի թիւն Փրկչին 1784 պատուեաց ի ձեռս դեսպանաց և ի կայսերէն մեծի Ըղոստաց և պսակ և գաւազան իշխանութեան արքայեականի ընկալաւ զայս կայսերէս արքայն Վրաց Հերակլէս. և ենթ իշխանութեան նորայ և յայժմս որ կայ մինչև ցայսօր արքայն բարեպաշտն Հերակլէս և վարէ թագաւորութիւն, զոր Տէր պահեսցէ յերկար ամօք ի խաղաղութեան, ամէն:*

2

Հ. ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃԵԱՆ, ՄԱՍՆ ՀԱՅԱՍՏԱՆԵՅՅ Ի ՍԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՑ

Հայր Արսեն Ղազիկյանի գնահատությունները Մխիթար Սեբաստացու և Միքայել Չամչյանի աշխատությունների հրատարակումները «Լեզուն յղկուած էր, ազգային պատմությունն յօրինուած էր, լոյս տեսեր էին քերականություններ, բայց դեռ կարևոր բանի մը պակասն զգալի էր, հարկ էր յօրինել նաև Հայաստանեայց ստորագրությունն ու Հնախօսությունը, որպէսզի հայրենիքէ տարագիր որդիք՝ տեղեկանային իրենց բնաշխարհին դրից, տարածութեան, օգին, լեռներուն, գետերուն, բերքերուն, վաճառականութեան, բնակիչներուն, կառավարութեան, դրօշներուն, սովորութեանց, օրինաց, բարուց, լեզուին, դպրութեանց և արուեստից և այլն, և այլն. այս պատուական ծառայությունն ընող անձը պիտի ըլլար Հ. Ինճիճեան» (Հ. Ա. Ղազիկեան, Համառօտ գրական պատմություն նշանաւոր Մխիթարեան հարց Վենետիկ.- «Մխիթարեան յօբելեան», Վենետիկ, ս. Ղազար, 1701-1901, էջ 95):

Եւ հիրավի, «Ստորագրություն հին Հայաստանի», «Հնախօսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհին» և Ստ. Ագոնցի «Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի» բազմահատոր աշխատության Ասիային նվիրված առաջին հատորի (Հայաստան) Ղ. Ինճիճյանի հատորները լիովին գլուխ բերին հիմնադիր Աբբասոր և նրան փոխարինած սերնդի գիտական ծրագրումները: Պիտի հավատալ Հ. Ա. Ղազիկյանի խոսքին, թե «Բոլոր այն տեղեկությունները՝ զորս կաւանդէ, հաւաքած է ի Կ. Պոլիս, իւրաքանչիւր քաղաքաց բնակիչներէն, որոնք կերթեկէին հոն» (անդ, էջ 98):

Հ. Ղ. Ինճիճյանի Թիֆլիսում լինելու մասին տեղեկություն չունենք, ուստի կարելի է ասել, թե Թիֆլիսի նկարագրությունն ու պաշտամունքային կառույցներին վերաբերող տեղեկությունները քաղված են Կ. Պոլիս երթեկող հայրենակիցներից:

\* \* \*

Վիրք, որպէս զբոլոր Հայաստան, նոյնպէս և զայն սահման Հայաստանեայց, որ անկանի ընդ տէրութեամբ իւրեանց՝ կոչեն Սօմխէթ, և զՀայս՝ Սօմէխի: Այս անուն գտանի յիշատակեալ և առ նախնիս, քանզի Վարդան ցուցանէ թէ Վիրք զկողմանս Տաշրայ և կամ զԳուգարս, ուր էր Տաշիր, կոչէին յաւուրս իւր Սօմխէթ: «Եւ կրտսեր եղբայրն, ասէ, Բ. Սմբատայ Տիեզերակալին ժառանգէ զՏաշիր Սևորդովքն Չորոգետին, և զԿայեն, և զԿայծոն, զԽորխորունիք որ ի Խոռայ շինցաւ, որ է Խոշոռնի և Խորակերտ. և զԲաղունք, որ է Բաղկերտ ի գաւառն Տաշրայ. և այլ բերդք անուանիք եհաս Գուրգենայ, զոր Վիրք Սօմխէթ կոչեն»:

Այս մասն, որ է հիւսիսային կողմն Մեծին Հայոց, է փոքրագոյնն ի մէջ այլոց երկուց մասանց, յորում ի հին նահանգաց Մեծին Հայոց անկանին Ուտի, մեծ մասն Գուգարաց և մասն ինչ Արցախայ: Անծանօթ է սա գլխովին եւրոպացուց աշխարհագրաց, զի զայս երկիր. ըստ մեծի մասին դասէ ընդ բնիկ սահմանս Վրաց: Յառաջագոյն էր ընդ տիրութեամբ Վրաց, այլ այժմ ընդ համօրէն Վիրսեանց ընդ տիրութեամբ Ռուսաց: Դիրք սորա թէպէտ է հիւսիսակողմն, բայց ցրտութիւն օդոյ նորա ոչ է որպէս զԷրզրոնմայն, զՄշոյն և զայլ ցրտային տեղեաց Հայաստանեայց: Երևելի տեղիք են յետագայքդ.

Թիֆլիս: Է աղաւաղութիւն կամ տառադարձութիւն անուան Վրաց, առ որս կոչի Թպիլիս քալաքի, և երբեմն սոսկ Քալաքի, որ նշանակէ Քաղաք. նոյն անուն առ նախնիս մեր տառադարձութեամբ կոչեցաւ Տփիսի կամ Տփղիս, զորմէ տես ի «Հին Հայաստան»: Էր մայրաքաղաք արքայանիստ տիրութեան Վրաց, ի Քարթլ նահանգի Վրաց, առ Կուր գետով ի հարաւոյ նորա, տասնօրեայ հեռի յԵրևանայ ի հիւսիսակողմն նորա, և վեցօրեայ հեռի յԱխալցխայէ ընդ արևելու նորա, կառուցեալ յոտս լերին, որ է գօտւոյն լերանց Վրաստանի, ի գետոյն կողմանէ անպարիսպ է, իսկ յայլ կողմանց պատեալ է ամուր պարսպաւ: Ունի դրունս 5. ի հարաւ կուսէ ունի բերդ հզօր ի վերայ բլրոյ՝ շինեալ ի Տաճկաց յամին 1576, յորժամ առին զհամօրէն երկիրն Քարթլայ, առաջնորդութեամբ հուշակաւոր Մուսաֆայ փաշային, որում ոչ կարաց զդէմ ունել Սիմոն խանն, որ առ նովին ժամանակօք իշխան էր Քարթլայ: «Ճիհանիւմայն» դնէ բերդս 2 և դրունս 3, որոց դրունք հանդէպ են միմեանց, և գետն Կուր անցնէ ընդ մէջ: Պարիսպքն յերկուց կողմանց շինեալ կան ի վերայ երկուց մեծամեծ առապարաց որոց միջոց անձկագոյն գոլով, լայնութիւն գետոյն է իբրև 10 կանգուն:

Քաղաքն է մեծ բազմավաճառ, բնկաեալ ըստ մեծի մասին ի Հայոց և ի սակաւուց Վրաց և յայլազգեաց, յորում յառաջ քան զխոռովութիւնն, որ եղև 1795, յոյժ նուաղեալ էին պարսիկք և նկուն եղեալք: Ապարանք խանին Վրաց, որ է ի սարահարթի առ Կուր գետով, է մի ի գլխաւոր զարդուց քաղաքին. հանդէպ այնր հրապարակ՝ և առ նովաւ շուրջանակի կրպակք վաճառուց, ունի և այլ շուկայս և վաճառանոցս:

Երկու առաջնորդք Հայոց նստին և Թիֆլիս, յորոց մին առաքի յԷջմիածնէ, իսկ միւսն է նոյն ինքն առաջնորդ վանացն Հաղբատայ. երկօքին ևս ունին զանագան եկեղեցիս, որք կոչին

1. Բերդի մեծ եկեղեցին, որ է հին շինեալ ի 80 թուականիս Հայոց, ուր նստի առաջնորդն Հաղբատու:

2. Բերդի փոքր եկեղեցին:
3. Վանք կամ Վանքի եկեղեցին՝ յանուն վերափոխման Կոնստին, յեզր քաղաքին առ Կուր գետով, ուր նստի առաջնորդ Թիֆլիսու առաքեալ յԷջմիածնէ. կոչի սա յոմանց և Փաշա վանք:
4. Սահակաշէն յանուն Սուրբ Աստուածածնի:
5. Քաղաքի եկեղեցին յանուն Յովհաննու Մկրտչի:
6. Բերդէհէմ Սուրբ Աստուածածին, ի բարձր վայրի քաղաքին:
7. Կուսանաց եկեղեցին, ստորև վերոգրելոյն և մերձ առ այն, յանուն Ստեփանոսի նախավկային, ուր ցուցանեն զբազուկ նորին և զմասն ինչ գազաթան:
8. Մուղնի Սուրբ Գեորգ. կոչեցաւ այսպէս յանուն միւս Մուղնի Սուրբ Գեորգայ, որ է ի Հայաստան առ Արագած լեռամբ, ուստի բերին զմասն ինչ սրբոյն Գեորգայ, առընթեր սուրբ է և մատուուն նորաչէն:
9. Մկրաշէն. կոչեցաւ այսպէս՝ ըստ որում շինութիւն նորա սկիզբն էառ ի բարկութենէ, զի ճրկր առ Վրացի Հայս նշանակէ բարկութիւն, այլ եկեղեցին է յանուն Աստուածածնի:
10. Նորաշէն:
11. Կոզմայի եկեղեցի՝ յանուն Կոզմայի և Դամիանոսի, ուր գոյ մասն նշխարաց Սրբոյն Գեորգայ:
12. Սուրբ Նշան:
13. Քամօյնց Տէր Գաբրիէլի եկեղեցի:

Եպիսկոպոս Վրաց կոչի Թաիլելի, այսինքն՝ Թիֆլիսեան. բաց ի նմանէ ի Թիֆլիս նստի և կաթողիկոս Վրաց, որ առ նոսա կոչի գաթալիզոս, սակս մերձ գտանելոյ առ իշխանն որպէս թուի, քանզի աթոռանիստ քաղաք նորա է Յիսեթա: Մայր եկեղեցի նոցա կոչի Սիոն, որ է Հին և գմբեթաւոր առհասարակ յորձաքար վիմաց շինեալ, ուր նստի եպիսկոպոսն: Անշիս խատի, որ պարտ է լինել Աշնտիս խատի, այսինքն տպաւորեալ պատկեր, զի է յանուն դաստռակի պատկերին Քրիստոսի, զոր առաքեաց Փրկիչն մեր առ Աբգար, զորմէ աւանդեն Վիրք՝ թէ ընդ բազում ժամանակս պահեցաւ յայս եկեղեցի. սա է երևելի եկեղեցի գկնի Սիոնին, որ հայի յարևելից կուսէ ի Կուր գետ՝ կառուցեալ ի վերայ սարահարթի: Մերձ ի սա ի նոյն գիծ է եկեղեցի գաթալիզօսի, առ որով է և տուն կաթողիկոսին:

Խարէպա, այսինքն Աւետման եկեղեցի վայելչակերտ, շինեալ ի լատինացւոց յայսմ դարու, այլ ի ծագել դժուարութեան ինչ ընդ լատինս յաւուրս Դահմորէս կամ Դամոագ խանին՝ հօր Էրէկլի թագաւորին, առեալ ի լատինացւոց փոխեցին ըստ ծիսի իւրեանց. և փո-

խանակ այնր ետուն լատինացոց տեղի ինչ մօտակայ, ուր շինեցին եկեղեցի փոքր:

Սուրբ Գէորգ է առաջի պալատան խանին: Ծմինտա Սամէպա, որ է Սուրբ Երրորդութիւն: Պետրէ-Պաւլէ, այսինքն Պետրոս-Պօղոս:

Մետեխ, որ է գմբեթաւոր յանուն Սուրբ Աստուածածնի յայնկոյս կամրջի ևն:

Երկու մզկիթք են ի Թիֆլիս՝ դատարկացեալք յառաջ քան զվերոգրեալ խռովութիւն. և արգելեալ ձայնատուութիւն ի մէնարէսն:

Արտաքոյ քաղաքին յարևելից հարաւոյ են ջերմուկք առողջարարք, ի վերայ ականց ջրոյն ոմանց ի նոցանէ շինեալ կան ի նախնեաց աւագանք քարաշէնք փոքր գմբեթիւք. ի ջերմաջուրց աստի ընկալաւ այս քաղաք զիւր անուն Թպիլիս քալաքի, որ առ Վիրս նշանակէ Ջերմ ջրոյ քաղաք: Մերձ ի ջերմուկսն է եկեղեցի Հայոց յանուն Սրբոյն Սարգսի: Ի միւս ծայր քաղաքին յայնկոյս հեղեղատին է տափարակ տեղի, որ կոչի Տափի թաղ. յորում են առանձին բնակութիւնք Հայոց և եկեղեցիք՝ անուանեալք Տափի թաղի Քամօյննց եկեղեցի<sup>1</sup>: Տափի թաղի սուրբ Սարգիս, յափն Կոյր գետոյն՝ մերձ ի Վանքն. մերձ ի սա է և այլ եկեղեցի: Ի ժամանակս վերոգրեալ Դահմուրէս խանին բազում քանդմունս և աւերմունս գործեցին Լէզկիք ի շրջակայս Թիֆլիսու և յամենայն մօտակայ տեղիս զամս բազումս, մինչև քաղաքք, աւանք, շէնք և զիւրօրէք առհասարակ եղծան և դատարկացան ի բնակչաց: Իսկ ի 1795 յՕգոստոսի յարձակեցաւ ի վերայ Թիֆլիսու Պարսից խանն, միաբանեալ ընդ Լէզկիից. և զաւուրս 21 ի նմա կացեալ՝ զոմանս սպան, զոմանս փախոյց. և առհասարակ յաւարի առեալ ի գերութիւն խաղացոյց գերիտասարդս և զկուսանս՝ բնակեցուցեալ զնոսա յԵրևան, ի Կէնճէ, ի Թէվրիզ: Սակս բերոց Թիֆլիսու տես ի Քարթլ նահանգ Վրաց:

Հաղապար: Գիւղ յայնկոյս կամրջոյն ի կողմն նախայիշատակեալ Մէտէխ եկեղեցւոյն, յորում բնակին յազգէս Հայոց և ունին եկեղեցիս կոչեցեալ Մէլիքի վանք. Տէր-Աստուածատուրի եկեղեցին. Մէլիք Միսայէլի եկեղեցին:

Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի: Աշխատասիրութեամբ տեսուն հայր Ղուկաս վարդապետի Ինճիճեան Կոստանդնուպօլսեցոյ: Յամի Տեսուն 1806, ի թուին ՌՄԾԵ.: Մասն Առաջին, հատոր Ա., էջ 275-279:

<sup>1</sup> Քամօյննք է անուն տոհմի ինչ հայոց Թիֆլիսու, յորոց անուն կոչին երկու եկեղեցիք:

ԷԳՆԱՏԵ ԻՈՍԵԼԻԱՆԻ, ԹԻՖԼԻՍԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ  
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս խորագրով ներկայացվող 1837 թ. գրված ձեռագիրը պահպանվել է «Վրաց մեջ գրագիրտություն տարածող ընկերություն» հավաքածուում (այժմ Վրաստանի ԳԱ Կ. Կեկելիձեի անվան Ձեռագրերի ինստիտուտի S-3034 գրչագիր): Այն երեք գրվագով նկարագրում է Թիֆլիսում ԺԹ. դարի 30-ական թվականներին եղած պաշտամունքային կառույցները՝ հույն-ռուս-վրաց եկեղեցիներ, հայոց դավանության եկեղեցին և հռոմեադավան եկեղեցիներ: Դատելով ձեռագրում եղած բազում ջնջումներից ու լրացումներից, ինչպես նաև շատ հաճախ գրադաշտի միայն ձախ կեսը զբաղեցնելու փաստից, կարելի է կռահել, որ պահպանվածը (18 թերթ, ուր բաց են մնացել 5v-6v, 7v-12r, 16v, 17v-18v էջերը) այսպես կոչված սևագրություն է, այլ կերպ՝ նկարագրության նախնական օրինակ, որը այլևս չի մաքրագրվել<sup>1</sup>:

Ձեռագրի բովանդակած նյութերի կարևորությունը առաջինը նկատել է հին Թիֆլիսի ու նրա շրջակայքի հուշարձանների անխոնջ ուսումնասիրող և հայ-վրացական բանասիրության վաստակաշատ երախտավոր պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը: Նա վերծանել է մխեղբուլի գրչության տեքստը և նկարագրական համառոտ առաջաբանով այն հրատարակել 1923 թվականին<sup>2</sup>: Լ. Մելիքսեթ-Բեկը իրավացիորեն նկատել է, որ նկարագրության անանուն հեղինակը արքեպիսկոպոս, եկզարքոս Եվգենի (1834-1844) ժամանակակիցը պիտի լինի, իսկ վերջին հատվածը (Սոմխիթի եկեղեցիների մասին) շարադրելիս հեղինակը «գրեթե բառացիորեն կրկնում է այն, ինչ Վախուշտի Արքայագնի «Աշխարհագրություն» մեջ է գտնվում: Ընդ որում նա մեկն է, որ մերձավոր հարաբերություններ ունի ուղղափառ ու լուսավորչական հոգևորականների հետ և «օգտվում է այնպիսի տեղեկություններից, որպիսիք նա կարող էր քաղել միայն պաշտոնական վավերագրերից»<sup>3</sup>:

Տասնամյակներ անց պարզվեց այս կարևոր վկայությունները գրառող հեղինակի ինքնությունը. «Էգնատե Իոսելիանի գրական ժառանգության ուսումնասիրության շուրջ» հոդվածում<sup>4</sup> Յ. Ճանկիևան պարզեց, որ S-3034 անհեղինակ ձեռագիրը գրչությամբ նույնական է Էգնատե Իոսելիանի ինքնագիրը հանդիսացող S-3029 երեք գրական միավոր բովանդակող ձեռագրի գրչությանը: Ընդ որում վերջիններս երեքն էլ («Մեկնություն սաղմոսաց», «Մեկնություն 50-րդ սաղմոսի» և «Յա-

<sup>1</sup> Ձեռագրի նկարագրությունը տե՛ս յարտուլ Եվգենա՛վերտա յալ՛ճերիլոբա, S, Ե. IV, տոմոսիս, 1965, Եջ. 255.

<sup>2</sup> Լևոն Եվգենի-Յեգի, մասալեբո Եվգենիսիս ևա “Տոմեոտիս” Տոքեվլեյտա օնԵորիօսաոտիս.- “Նեյնի ԵվԵնիերեբա”, 1923, № 1, Եջ. 81-96.

<sup>3</sup> Անդ, էջ 82:

<sup>4</sup> Ե. Յանկիևոյ, ԵյնաԵյ օոսեվոյանիս ևոԵերաԵերուլոյ Եյեքեյլոբոսի Մեյն՛Վա-վոլիսաոտիս.- Եվգեն. օնսԵ. “Մոսմեյ”, V, 1963, Եջ. 57-66.

ղագս մարդոյ») 1821-1825 թվականների միջոցին Իոսելիանին թարգմանել է Հայերենից: Թարգմանչի ինքնությունը քաջ Հայտնի է վրացագիտությունը. ապրել է 1764-1844 թվականներին, հարաբերություններ ունեցել վրաց արքունիքի հետ, պալատական եկեղեցու ավագերեց ծառայել: Նրա հայրը Օնիսիմե քահանան էր, որդին՝ ծանոթ պատմաբան-վրացագետ Պատոն Իոսելիանին<sup>1</sup>, որը, ինչպես երևում է, հորից ժառանգել է նաև Թիֆլիսի հնուկությունների հանդեպ ունեցած հետաքրքրությունը<sup>2</sup>, թեև, պիտի խոստովանել, հաճախ չի կրկնում նրա նկարագրած մանրամասները, ինչը ժամանակին նկատել է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Յեկը՝ «Անանունու հնագետի» (Իմա Էզնատե Իոսելիանիի) նկարագրությունը Հայոց եկեղեցիներին վերաբերող մասի (Բ) թարգմանությունն առաջաբանում<sup>3</sup>: Կարելի է նաև ավելին ասել. Էզնատե Իոսելիանին երբեմն ցուցաբերում է այնպիսի լայնախոհություն և դավանական հանդուրժողականություն, որպիսին, ցավոք, չունեն մերօրյա առանձին տիտղոսակիր հետազոտողներ: Այդպիսին է նա, օրինակ, Մթածմիդայի վրաց եկեղեցու նորոգությունը Հայ կանանց բերած մասնակցությունը ներկայացնելիս կամ Հաղբատի ու Սանահնի վանքերի մասին խոսելիս առանց անունը տալու քաղում է կատարում Վախուշտիի երկից, թէ այդ վանքերը վրաց թագավորներն են կառուցել<sup>4</sup> և տեղնուտեղը ավելացնում է, որ իր կարծիքով Հայ թագավորների կողմից կառուցված լինելն է ճիշտ<sup>5</sup>: Այժմ այդ երկու մայրավանքերի պատերին եղած հարյուրավոր արձանագրությունների հաղորդումներից ու «Յիշատակարան Սանահնոյ վանից» ժողովածուի վկայություններից հաստատապես գիտենք, որ ճշմարիտը Էզն. Իոսելիանին է և ոչ մեր օրերում էլ հաճախ վկայակոչվող վրաց անվանի պատմաբան-աշխարհագետ Վախուշտին<sup>6</sup>:

Յ. Ճանկիևան խղճատորեն համեմատել է Հայոց եկեղեցիների Էզն. Իոսելիանու և Պլ. Իոսելիանու նկարագրությունները և ճշգրտել, որ հոր մոտ եղած 22 միավորի դիմաց որդին ներկայացրել է 9 նշանավորներ: Ընդ սմին Էզն. Իոսելիանու արձանագրած 22 թիվը փաստական նկարագրությունները սրբագրել է 21-ի, մինչդեռ որդու մոտ ասված է «Ихъ 6 Тифлисе всехъ числомъ 23»: Թե որ եկու եկեղեցին է դուրս մնացել 1837 թ.

<sup>1</sup> Անդ, էջ 58: Հմմտ. օ. Ծաթոնիճցոլու, յալմաստո, տծ., 1948, Ծ. II, թ. 201.

<sup>2</sup> Մասնագիտական շրջանակներին լայնորեն հայտնի է որդու Древние памятники Тифлиса աշխատությունը (Тифл., 1844), Հմմտ. П. Иоселиани, Описание древностей города Тифлиса, Тифл., 1866.

<sup>3</sup> Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Յեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Հատոր Գ, Երևան, 1955, էջ 364: Ի դեպ՝ Պլ. Իոսելիանին 1838-1842 թվականներին Ներսիսյան դպրոցի դասատու է եղել (տե՛ս Աղ. Տրիցեանց, Պատմութիւն 75-ամեայ դոյութեան Ներսիսյան Հայոց հոգևոր դպրոցն, որ ի Թիֆլիս, Թիֆլ., 1898, էջ 422-423, Հմմտ. Լ. Թեղևիշտի-Յեկ, Երտո Եթոթոլու յալ. օթեղեանիս Եթեղեցիներ, 1938, № 31.

<sup>4</sup> «Երտոլիս Եթեղեցի», Ծ. IV, Ծաթոնիճցոլու Եթեղեցի, յալմաստո Նաթարտեղեցի, Եթեղեցի Եթեղեցի... և. Եթեղեցիներ Եթեղեցի, տծ., 1973, թ. 308.

<sup>5</sup> Տե՛ս Լ. Մելիքսեթ-Յեկ, նշվ. աշխ., էջ 270:

<sup>6</sup> Վիճակների Հրատ. տե՛ս Կարո Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957: Նույնի՝ Հաղբատ, Երևան, 1963: Յիշատակարան Սանահնոյ վանից, աշխատասիրություններ Պարույր Մուրադյանի, Երևան, 2007:

ցանկից կամ կառուցվել մինչև 1844 թիվը՝ մասնավոր Հարց է: Բոլոր պարագաներում Պ. Իոսելիանին ծանոթ է եղել հոր նյութերին և դրանք գործածել իբրև նախնական գրառում: Յ. Ճանկիևան տողատակում մատնացույց է անում Sd-2343 համարակալում ունեցող մի ցանկ, ուր ներկայացված է Հայկական 6 անուն եկեղեցի, իսկ verso էջին նույն եվգ. Իոսելիանիի ձեռքով հիշված են այդ եկեղեցիների անունները<sup>1</sup>:

էգն. Իոսելիանիի թարգմանական գործունեությունը Հայերենից վրացերեն արժանի է մասնավոր ուշագրություն: Տասնամյակներ առաջ տողերիս հեղինակը հիշատակել է այդ իրողությունը<sup>2</sup>: Այժմ թարգմանությունների ցանկը լրացվում է նոր միավորներով Ախթարք (յօճօճօճօճօճօ-H-2199), Նմանությունք (ՅյժՅՅՅՅՅՅՅՅՅՅ-S-138<sup>3</sup>):

\* \* \*

Վերադառնալով «Թիֆլիսի Հնությունների նկարագրությունը» հիշեցնենք, որ վրացերեն բնագիրն ամբողջությամբ հրատարակված է Լ. Մելիքսեթ-Բեկի կողմից 1923 թ.: Հետագայում իր «Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին» գրքի երրորդ հատորը կազմելիս գիտնականը Հայերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով հրատարակել է էգն. Իոսելիանիի («Անանուն հնագետի») աշխատության II և III հատվածները<sup>4</sup>, բաց թողնելով Թիֆլիսի «Հույն-ուսուվրաց եկեղեցիների նկարագրությունը»:

Մենք նպատակահարմար գտանք լրացնել Լ. Մելիքսեթ-Բեկի մոտ եղածը և Հայերեն թարգմանությամբ ներկայացնել էգն. Իոսելիանիի ամբողջական բնագիրը:

Ձեռքի տակ ունենալով S-3034 ձեռագրի նմանահանությունը, մենք այն համեմատեցինք եղած միակ հրատարակության հետ և կատարեցինք որոշ սրբագրություններ, որոնց արդյունքը արտացոլված է բոլոր հատվածների Հայերեն տեքստերում: < > փակագծերի մեջ եղած հավելում-լրացումները Լ. Մելիքսեթ-Բեկին են պատկանում:

<sup>1</sup> Գ. ՋճԵՅՅՅՅ, նշվ. աշխ., էջ 61, ծան. 16:

<sup>2</sup> Ս. Մ. Мурадян, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ереван, 1966, стр. 75, 169, 203.

<sup>3</sup> Գ. ՋճԵՅՅՅՅ, նշվ. աշխ., էջ 64.

<sup>4</sup> Լ. Մելիքսեթ-Բեկ, նշվ. աշխ., էջ 265-271:

## ԷԳՆ. ԻՈՍԵԼԻԱՆԻ

1837 ԹՎԻ ԱՊՐԻԼԻ [ ] ՕՐԸ:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ՍԱՍԱՆՑ՝ ԹԻՖԼԻՍՈՒՄ, ՀԱՎԱԲԱՐՈՒՄ ԵՎ ԳԱՐԵԹՈՒԲԱՆՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՒՅՆ-ՈՈՒՄ-ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԵՆ ԹՎՈՎ [17].

[Ա.]

*Առաջինը:* Թիֆլիսում կա Սիոն կոչվող գմբեթավոր մեծ եկեղեցի, կառուցված դեղին քարուկրով և սրբատաշ դեղին քարով՝ հանուն օգոստոսի 15-ին ամենասուրբ Աստվածածնի վերափոխման, որի հիմքը դրվեց 39-րդ թազավոր Գուրամ Բագրատովանին Քրիստոսի 589 թվին և ապա կառուցեց ոմն այրի, և ի վերջո Վրաստանի 41-րդ իշխան Ադարնասեն ամբողջովին ավարտեց 631 թվին: Եվ այս բազմիցս ավերակված [եկեղեցին] բազմիցս [էլ] նորոգեցին արքաները, իսկ վերջին ավերածությունը նորոգեց 94-րդ թազավոր Վախթանգ վեցերորդը 1710-ին, ուր այժմ նստում է մեր սրբազնագույն և արդարագույն Սինոդի արքեպիսկոպոս, համայն Վրաց եքզարքոս Եվգենը:

Այս եկեղեցին մայրավանք է (սոբոր) և եքզարքոսական աթոռանիստ հաստատված: Այստեղ է թաղված ամենայն քահանայից Սուրբ Հովհան Մանգղիսեցու տոհմով Սա[հ]ակաձեի մարմինը: Օգոստոսի 15 օրը այստեղ տոնելու են զալիս ողջ Թիֆլիսում ապրող վրացիներն ու հայերն իսկ: Նրանում կան մեկ ավագերեց և երեք քահանա: Այստեղ նույնպես սույն եկեղեցում հարավային կողմից կից է վաղուց քարուկրով կառուցած կամարապատ զավիթ՝ հանուն Սուրբ հրեշտակապետ Միքայելի և ամենայն երկնային անմարմին զորաց... Նոյեմբեր ամսի 8, 1824 թվին եկեղեցի օծեց ամենայն քահանայից բարձր մետրոպոլիտ Հովհանը:

Երկրորդը: Նույն Թիֆլիսում Սեպտեմբերի 8-րդ օրը հանուն Աստվածածնի ծննդյան եկեղեցի կա՝ վաղուց ի վեր պալատով հանդերձ կառուցված կաթողիկոս Բաբիլի կողմից 634-ին՝ իբրև Մցխեթից Թիֆլիս եկող կաթողիկոսաց վանատուն: Թեև սիրոնական անգմբեթ է, սակայն քարուկրով բարվոք շինված և բավական մեծ, և օրինակ ունի գեղեցիկ գմբեթավորի: Այստեղ է հանգչում Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի պատկերը՝ Լևոն Իսավրացու պատկերամարտության շրջանում Կոստանդնուպոլսից Անչեթի աթաբեկական երկիր պատսպարված և հետո այնտեղից այս եկեղեցու մեջ հանգրվանած: Այ-

դու ինչպես այս պատկերը, այնպես էլ սույն եկեղեցին Անչիսխատ<sup>1</sup> են կոչվում: Եվ այս պատկերը միշտ և այժմ էլ հավատավոր խնդրարկուհին բազում բժշկություն է պարգևում: Օգոստոսի 16-ին բոլոր թիֆլիսցիները սույն պատկերի տոնին այս եկեղեցի են գալիս: Եկեղեցում կան մեկ ավագերեց և մեկ քահանա:

Երրորդը: Դարձեալ Թիֆլիսում կա հանուն Սուրբ առաքյալ Թովմայի փոքր եկեղեցի, առանց գմբեթի, 1703 թվին կառուցված եպիսկոպոսապետ Քրիստափոր Ամիլախվարովի կողմից՝ իբրև իր վանատուն: Այստեղ կա մեկ քահանա:

Չորրորդը: Թիֆլիսում կա քարուկրով 1690 թվին սարգար Ալեքսանդրե Յիցիանովի մոր, Ծահնավագ կոչված Վախթանգ հինգերորդ թագավորի դուստր Հեղինե արքայադստեր կառուցված փոքր եկեղեցի և նրանից հետո փլված՝ դարձյալ նախկին հիմքի վրա Հերակլ երկրորդ թագավորի դուստր, նորին Ալեքսանդրե Յիցիանովի որդի, քաղաքի մոտերավ սարգար Դավիթ Յիցիանովի տիկնոջ՝ արքայադուստր Մարիամի կողմից վերանորոգված 1780 թվին: Եվ ի վերջո 1835-ին թավադ Փարսադան Յիցիանովը նորոգեց պատերը, կատարեց խաչկալը և ծածկեց կղմինդրով, մանավանդ որ այս եկեղեցին գտնվում է նրա տան [չրջափակում] և սպասում է նրա օրհնությանը: Այս Աստվածածնի տաճարի խմբման Դեկտեմբեր ամիս 26-ի օրվա [տեղին] է, ուր որ ոչ ժամ կա, ոչ էլ աղոթք:

Հինգերորդը: Թիֆլիսում կա թագավորաց պալատի աղոթարան ծառայող եկեղեցի, հանուն սուրբ և զորավոր մեծավկա Գիորգիի, ապրիլ ամսի քսաներեքին, քարուկրով սիրոնավարի, կառուցված 1712 թվին թագավոր Վախթանգ վեցերորդի եղբոր՝ արքայազն Սիմեոն Բագրատովանու կողմից:

Այս եկեղեցու վրա կանգնած է մի խաչակիր փոքր գմբեթ և մեկ փոքրիկ զանգակատուն: Նրանում կա մեկ ավագ քահանա:

Վեցերորդը: Թիֆլիսում կա քարուկրով Խաչի (Ջուարի) եկեղեցի, գմբեթակիր: Հայտնի է նրա կառուցման ժամանակը և ոչ էլ կառուցողը: Միայն գրված է, որ նորոգել է Իմերիշվիլի<sup>2</sup>, և այն հատկացված է Երուսաղեմի սուրբ գերեզմանին: Այսու նրան տիրում են հույները՝ իբրև իրենց վարդապետարան: Նրանում մեկ քահանայ է:

Յոթերորդը: Թիֆլիսում հանուն մեծն սուրբ կույս նահատակ Եկատերինեի, [որի հիշատակը] նոյեմբեր ամսի 24-ին է, կառուցված է

<sup>1</sup> Իմա՝ Անչեթի պատկեր:

<sup>2</sup> Իմերեցու (հայնկուսացու) որդին:

Հունաստանից եկած առաջնորդ Հովհաննիկի կողմից 1780-ին քարուկրով ու առանց գմբեթի՝ կամոք և արդյամբ Հերակլ երկրորդ թագավորի՝ ի հիշատակ նույն թագավոր Հերակլ երկրորդի որդի Լևոնի: Այս եկեղեցին իր շրջակայքի տեղերով նվիրած է Սինայի լեռան վանքին և այսօր էլ անկատար է: Նրանում մեկ ավագերեց կա:

Ութերորդը: Թիֆլիսի կաթողիկոսական այգու մեջ ամառային պալատի եկեղեցի կա, որ սկսել է Վրաստանի սրբազնագուլյն Սինոդի անդամ, ամենայն քահանայից էքսարքոս Մովսեսը 1834 թվին, քարուկրով, հանուն վշտացյալներին մխիթարություն տվող Աստվածածնի: Այն ավարտեց և կարգավորեց այժմ ներկա սրբազանագուլյն Սինոդի անդամ, ամենայն քահանայից արքեպիսկոպոս, Վրաստանի եկսարքոս և կավալեր Եվգենը 1836-ին:

Իններորդը: Հավաքարում հանուն Աստվածածնի փառավոր եկեղեցի կա՝ Ակաթիստոս կոչված, հինգերորդ կիրակի՝ Մեծ պասի շաբաթ օրը հաստատված: Կառուցված է Վախթանգ Գորգասալի կողմից 480 թվին՝ բարձր ժայռի վրա, գմբեթավոր, քարուկրով և սրբատաշ քարով խառը: Այս եկեղեցու լեռ ժայռի հիմնամասում, Տփղիսի կամորջի մոտ սուրբ վկա Աբո Պարսի՝ աղոթախորշ կա, որը նահատակվեց քրիստոնեության համար այդ տեղում 791 թվին պարսկի ձեռքով, և նրա տոնը Վրաց եկեղեցին տոնում է հունվար ամսի 8-րդ օրը:

Ասում են նաև, թե այս [տեղի] եկեղեցում է հանգչում և թաղված է հանուն Քրիստոսի չարչարանքով սպանված սուրբ վկա Շուշանիկ թագուհին, որը նահատակվեց 432 (sic) թվին՝ նոր կռապաշտացած իր ամուսին Վասքենի կողմից: Այստեղ կա երկու քահանա:

Տասերորդը: Նույն հավաքարում կա եկեղեցի հանուն Սուրբ վկաներ Հերակլ և Դարիա իններորդի, [որի տոնը] Մարտ ամսի 19-ի է: Կառուցված է Հերակլ երկրորդի կին թագուհի Դարիայի կամոք և արդյամբ 1789-ին, քանի որ այս անուններով են իրենք՝ այստեղ հիշատակված թագավորն ու թագուհին: Այս եկեղեցում են հանգչում բազում սրբերի մասունքներ և նաև այն պնակը, որ դրվում էր Տեր Հիսուսի առաջ՝ այստեղ բերված Քուարթախևի վանքից: Իսկ Վրաստանի ամենայն քահանայից մետրոպոլիտը էքսարքոս Հովհաննի երկրորդ օծմամբ այս տաճարը վերափոխվեց Ալլակերպոթյան [...] թվին:

Սա վանք է կարգված և նրանում կան միայնակյացներ միայն:

<sup>1</sup> Այստեղ «պարսիկ» էթնոնիմը գործածված է «մահմեդական» նշանակությամբ: Իրականում նա արաբ էր:

**Տասնմեկերորդը:** Նույն Հավաքարում կա սուրբ կույս Մարինային նվիրված եկեղեցի, [տոնը]՝ հուլիս ամսի 17-րդ օրը: Անգմբեթ է Սիոնի նման, քարուկրով՝ կառուցված Հունաստանից եկած արեղաների կողմից: Սրա կառուցման ժամանակը ոչ մի տեղ չի երևում: 1821 թվին Վրաստանի ամենայն քահանայության միտրոպոլիտ եկաարքոս Հովհանն Երկրորդ օծմամբ այն փոխեց Տեառնդառաջի եկեղեցու՝ Փետրվար ամսի 2-րդ օրը: Եկեղեցում մեկ քահանա կա:

**Տասերկուերորդը:** Նույն Հավաքարում կա հանուն հրեշտակապետ Միքայելի և երկնային բոլոր անմարմին զորաց՝ եկեղեցի, [տոնը]՝ Նոյեմբեր ամսի 8-րդ օրը, կառուցված Մետեխիի եկեղեցու ավագերեց Ջաքարիայի և նրա եղբայր Հովսեփ քահանա Սուլխանովների կողմից 1805-ին և մինչև այժմ այն գերեզմանական եկեղեցի էր: Եվ նրա մեջ ոչ ոք քահանա չի կարգում:

**Տասերեքերորդը:** Դարձյալ Հավաքարում Չուղուրեթում<sup>1</sup> Խաչի հայտնության եկեղեցի կա՝ Մայիս ամսի 7-րդ օրը նշանակված, առանց գմբեթի սիոնական, փոքր, քարուկրով, որը կառուցվել է քրիստոնյա ժողովրդի կողմից, քահանայությամբ այժմ հանգուցյալ Պետրե Իմնաձեի՝ նախապես եղած հիմքի վրա 1812-ին: Նրանում մեկ քահանա կա:

**Տասչորսերորդը:** Գարեթուբանում կա հանուն Սուրբ Երրորդության եկեղեցի, [տոնը]՝ Ջատկի շաբաթի երեքշաբթի, երրորդ օրը: Առանց գմբեթի է, ցեխով, աղյուսով և քարուկրով շինած, փայտե առաստաղով ծածկած, կառուցված է Պետրե Ղարաույի Աղնիեվի կողմից իր սեփական ծախսով 1790-ին: 1835 թվին կից կառուցվեց քարաղյուսով զանգակատուն եկեղեցու քահանայի կողմից, և այն էլ անավարտ է: Եկեղեցում մեկ քահանա կա: Ժողովուրդը այստեղ է գալիս Ջատկի շաբաթի երեքշաբթի տոնախմբության:

**Տասնհինգերորդը:** Գարեթուբանում կա սուրբ և հաղթությամբ փառավորյալ Մեծավկա Գիորգի եկեղեցի, [տոնը]՝ Ապրիլ ամսի 23-րդ օրը, այս քաղաքի հին անվամբ՝ Կալոսուբանի<sup>2</sup>: Թեև անգմբեթ է, բայց տեղ-տեղ քարուկրով կամարակապ և որոշ մասեր փայտե տանիքով ծածկված: Ժամանկն ու կառուցողը ոչ մի տեղ չի երևում: Կանգնած է զանգերի գմբեթավոր փոքր զանգակատուն: Այս եկեղեցում երկու քահանա կա, այստեղ տոնախմբությանը շատ ժողովուրդ է լինում, թեև ոչ իր օրը: Բազում մանուկներ այստեղ գրքեր կարդալ ու գրել են սովորում:

<sup>1</sup> Թարգմանաբար՝ Փոսորակում:

<sup>2</sup> Թարգմանաբար՝ Կալաթաղ:

*Տասնվեցերորդը: Նույն Գարեթուրանում սուրբ Հաղթուլթյամբ փառավորյալ Մեծավկա Գիրոգիի եկեղեցի կա, [տոնը]՝ Ապրիլի 23-ի օրը, Քաշոնթ անունով, գմբեթավոր, խաչամաս քարուկրով: Սա պարսպապատի հետ կառուցել է թավադ Շահդուլիխան կոչված Գիվի Ամիլախվարը 1742-ին, երբ նա Քարթլիի կառավարիչ էր: Նրանում մեկ ավագերեց կա: Այս եկեղեցում թիֆլիսեցիները և շրջակայքի գյուղերից եկածները հավաքվում են Ապրիլի 23-ին տոնակատարուլթյան: Այժմ ևս այլ օր էլ ունի:*

*Տասնյոթերորդը: Գարեթուրանում է գտնվում Մթածմինդա լեռան վրա Հանուն ամենասուրբ Աստվածածնի եկեղեցին, կառուցված 1542 թվին Դավիթ և Նիկողայոս կուսակրոն քահանաներ Գաբալսների կողմից: Հետագայում, 1808-ին հնուլթյունից գոյացած փլուզումները Թիֆլիսի բնակիչ վրացի և հայ կանանց կազմակերպուլթյունները իրենց հավաքած սեփական ծախսով մաքրեցին նրա հիմքերը: 1810 թվականին նույն կանայք մաս առ մաս հավաքած միջոցներով նորոգեցին այժմ եղած եկեղեցին քարուկրով, գաջով ու աղյուսով և ծածկեցին փայտե առաստաղով՝ առանց գմբեթի, տան նմանեցնելով: Նաև ամենաերանելի կաթողիկոս Անտոնի կամոք օծել տվեցին Նեփիտե վարդապետին՝ հանուն արժանավոր հայր Դավիթ Գարեջեցու: Այս եկեղեցում կա մեկ քահանա: Այն կարգված է իբրև կանանց վանք: Այստեղ Թիֆլիսի բնակիչների խոռոներամը աղոթում է տերունական Համբարձման ճիշտ հինգշաբթի օրը, իսկ ողջ տարվա ընթացքում ամեն հինգշաբթի առանց բացառուլթյան աղոթում են հույժ ջանադրուլթյամբ ու մղումով այնտեղ բարձրացող թիֆլիսաբնակ կանայք:*

[Բ]

1837 ԹՎԻՆ ՕԳՈՍՏՈՍԻ 4-ԻՆ.

ԵԿԵՂԵՑՈՒԹՅՈՒՆ ՏՓՂԻՍՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀԱՅՈՑ (ՀԱՈՍՅԱՆ-ԵՐԻ) ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԹՎՆ Է 22

*Առաջին: Հարանց վանք: Այստեղ է նստում Էջմիածնից ուղարկված եպիսկոպոս կամ արքեպիսկոպոսը, առաջնորդ կոչվածը, Վրաստանի հայերի (հասոյանների) կառավարիչը: Քարուկրով կառուցված մեծ եկեղեցին հինգ խորան-սեղան ունի: Առաջինը՝ միջինը՝ հանուն Ամենասրբուհի Աստվածածնի, մյուսը՝ հյուսիսային՝ հանուն Սուրբ Առաքելոց, և երրորդը՝ հարավայինը՝ հանուն Սուրբ Լուսա-*

վորչի՝ Գրիգոր Պարթևացու: Այս մեծ եկեղեցուն արևմտյան կողմից կցված է երկհարկանի եկեղեցի. ներքևի եկեղեցին է հանուն Սուրբ Հակոբի, որն այժմ փակված է, և վերևինը՝ հանուն Ամենափրկչի: Եվ այս ամբողջ շենքը կառուցված է Տփղիսի քաղաքացիների (մոքալաքների)՝ Ավսարքիսովի, Բաստամովի, Նազարբեկովի, Օղաանց և վրացի իշխան Սուլադովի ծախքով 1480-ին (sic): Եվ այս շենքը մեծ ջանասիրտությամբ վերանորոգեց Տփղիսի քաղաքացիներից (մոքալաքներից) մեկը՝ սուլյն եկեղեցու ավագերեց Տեր Ղազար Լազարովը 1800 թվին: Այս եկեղեցու մամփոփված է Մծբնա (Նիզիբիսի) եպիսկոպոս Սուրբ Հակոբա մասունքը: Այս վանքը ունի հինգ գմբեթ, երկուսը փոքր և երեքը մեծ: Այս եկեղեցին կանգուն է չորս սյան վրա (sic) և ծածկված է կարմիր կղմինդրով: Այստեղ ևս կա երկու հոյակապ զանգակատուն, որոնք շինված են ճարտարապետության [ոճ]ով: Այստեղ են մի ավագ քահանա և վեց քահանա:

Երկրորդ: Տփղիսի բերդի տակը, վաճառաչահ հրապարակին կից կա գմբեթավոր եկեղեցի հանուն Ամենասրբուհի Աստվածածնի: Սա թեև Բերդի ժամ է կոչվում, սակայն հնուց Հաղբատի մայրավանքի (մետրապոլիտական) <եկեղեցի> է, որ հնուց շինված է բարեմունդ ունի Ումեկովի ծախքով, քարուկրից, կղմինդրով ծածկված, ունի երկրորդ փոքր գմբեթ ևս՝ իբրև զանգակատուն: Կանգուն է չորս սյան վրա: Այստեղ են մի ավագ քահանա և չորս քահանա:

Երրորդ: Իշխան Բեհբուտովների պալատին կից կա գմբեթավոր եկեղեցի հանուն Սուրբ Գեորգի՝ Մողնին կոչեցյալը, որ կանգուն է չորս սյան վրա: Բացի մեծ գմբեթի, այս եկեղեցու երեք կողմում անկյուններում դրսից շինված են երեք փոքր գմբեթներ: Այս երեք փոքր գմբեթներից մեկը զանգակների համար է, իսկ <մնացած> երկուսը՝ դատարկ: Այս եկեղեցու մամփոփված է սուրբ Գեորգի մասունքը: Սա կառուցված է քաղաքացիներ (մոքալաքներ) Մանդեկովի, Բաստամովի և Բաշինջաղեղովի ծախքով: Ներքուստ ավելի դուրեկան տեսք ունի, քան թե դրսից: Այստեղ են մի ավագ քահանա և չորս քահանա: Այս եկեղեցու գավթում, հինգ սաժեն հեռավորությամբ, կա մի այլ եկեղեցի՝ նույնպես սուրբ Գեորգի, նույնպես Փոքր Մողնին կոչեցյալ, գմբեթավոր քարուկրով կառուցված հնուց Տեր-Շմավոնովների ծախքով, որոնք <այժմ> իշխան Աբիմելիքով են կոչվում: Սա էլ Մեծ Մողնին է վերագրված:

Չորրորդ: Թագավորական քարվանսարայի արևմտյան կողմում կա Նորաշեն (Ախալշենի) կոչված մի եկեղեցի, հանուն վերափոխման Աստվածածնի, գմբեթավոր, բարեշեն՝ աղուսից և կրով, չորս

սյան վրա կառուցված: Գմբեթը սև տաշած սալաքարով է ծածկված, իսկ թևերը՝ կարմիր աղյուս-կղմինդրով: Դրսից սրա տեսքը ավելի դուրեկան է, քան ներքուստ: Հիմնադրված է նախ ոմն Խոջա Նազարի ծախքով և ապա շենքը շարունակել են և ավարտել՝ Տփղիսի կանանց և արանց ձեռներեցությամբ <Հավաքած> միջոցներով՝ 1737 թվին. և նրանից հետո մինչև այժմ էլ շինվում է: Այստեղ են մի ավագ քահանա և հինգ քահանա:

Հինգերորդ: Սուրբ Նշանաց եկեղեցի կոչվածը հոյակապ է, գմբեթավոր, հանուն Սուրբ Նիկողայոսի, չորս սյան վրա կառուցված: Սրա գմբեթը կանաչ աղյուսով է ծածկված, իսկ եկեղեցին ու թևերը՝ կղմինդրով: Սրա մեջ կա երեք խորան. միջինը մեծ, հանուն Սուրբ Նիկողայոսի, հյուսիսայինը՝ հանուն Անդրեաս Առաքյալի, և հարավայինը՝ Սուրբ Գեորգի: Այստեղ կա բազմամասն պատկեր Սուրբ Նիկողայոսի, հույժ սքանչելագործ, որի մեջ ամփոփված է Անդրեաս Առաքյալի ճակատը: Բացի սրանից, այս եկեղեցու ավագերեց Օհաննես Զարափովն իր տանը պահում է ինչպես կենարար փայտը, նույնպես և այլ սրբոց մասունքները, որ նրա նախնիները ժառանգաբար թողել են նրան և որը շատերին բուժում է. սրանք պաշտելի են ինչպես հայերից, նույնպես և վրացիներից, իսկ հին ժամանակները թագավորական տնից ևս պաշտված են եղել: <Այս քահանան> երբեմն փոխադրում է դրանք իր տնից եկեղեցի, որպեսզի քրիստոնյաները պաշտեն և համբուրեն, ու կրկին իր տունը վերադարձնում: Այս եկեղեցին կառուցված է քաղաքացի (մոքալաք) Ամիր Մամասախիսի ծախքով, որի տոհմից այժմ կենդանի է Զուրաբ Մելիքովը:

Վեցերորդ: Տփղիսից դեպի հարավ, Քարափի թաղում, բարձրաբերձ ժայռի վրա կա եկեղեցի գմբեթավոր, Վերափոխման Աստվածածնի, Բեթղեհեմ կոչեցյալ: Այս եկեղեցին սրբատաշ քարից է կառուցված, գմբեթը նույնպես սրբատաշ սև քարով է ծածկված: Սույնպես և այս եկեղեցին ու նրա թևերն ամբողջապես սրբատաշ սև սալաքարով են ծածկված: Սրա մեջ կա երեք խորան. միջինը՝ Աստվածածնի, հյուսիսայինը՝ Գրիգոր Լուսավորչի, և հարավայինը՝ <Հովհաննու> Մկրտչի: Այստեղ ամփոփված է Ամենասրբուհի Աստվածածնի սքանչելագործ պատկերը, որ հնումն է նկարած, <և> որին երկրպագում էին հայերը... Եկեղեցին իր բարձր դիրքով և գմբեթով Տփղիս քաղաքի բոլոր տեղերից լավ երևում է և գեղեցկացնում է քաղաքը: Եվ Աստվածածնա այս պատկերի մասին ասում են, որ սա նկարված է այն մսուրի տախտակի վրա, որտեղ, Բեթղեհեմում, ծնվեց Տեր Փրկիչ Հիսուս Քրիստոսը: Սա կառուցված է

1500 թվին Տփղիսի քաղաքացիներ (մոքալաքներ) Խոջա Փարուխի, Տեր-Սարգսի, Նարիմանովների և Ղուրթոնովների ծախքով: Վերջինիս թեկերը և սալաքարերը պատրաստված են Վրաց իշխան Գիվի Ամիրխանյանի՝ Ծախ-Ղուլի խան կոչեցյալի ծախքով: Այստեղ են՝ մի ավագ քահանա և հինգ քահանա:

Յոթերորդ: Եկեղեցի հանուն Ավետյաց Աստվածածնի, որը ջգրուկամ նախանձից գրգռված է (Ջգրաշէն) շինված, գմբեթավոր, չորս սյան վրա կանգուն, կարմիր աղյուսից և քարուկրով կառուցված, կղմինդրով ծածկված: Ունի երկու գմբեթ, մեկը մեծ և մյուսը փոքր: Այս փոքր գմբեթում կախված են զանգեր: Սա հիմնադրված է Տեր-Փարսադան Մոհնովի ծախքով, որը հենց այս տաճարի ավագերեցն էր, ապա այս եկեղեցին շինված և ավարտված է իշխան <Հ>ակոբջան Ամատունովի ծախսով 1729 թվին: Այստեղ են՝ մի ավագ քահանա և վեց քահանա:

Ութերորդ: Տփղիս քաղաքի դրսում կառուցված է մի եկեղեցի գմբեթավոր, որ Քամոյանց ժամ է կոչվում, հանուն Սուրբ Գեորգի, բավականին մեծ, կարմիր աղյուսով և քարուկրով շինված քաղաքացի (մոքալաք) Խուրիմովի և Տեր Գաբրիել Քամոնի ծախքով 1727 թվին: Ծածկված է կղմինդրով:

Իններորդ: Բաղանիքների կամրջով տանող ճանապարհին կա եկեղեցի թեև ոչ մեծ, սակայն և ոչ փոքր, գմբեթավոր: Սա կառուցված է հին շենքի ձևով՝ հանուն Հրեշտակապետի: Սրա մասին ասում են, որ իբր թե հույների շինած է եղել՝ հանուն Քառասնից վկայից. սակայն այս ասմունքը բանավոր է և ոչ մի գրուկթյան մեջ չի երևում: Սա նորոգեցին և <վերա>շինեցին Տփղիսից հայերը 1792 թվին: Այս եկեղեցին տփղիսեցիք Բերդի փոքր ժամ են կոչում:

Տասներորդ: <Հ>ավլաբարում, <Հ>ավլաբարի Վրաց եկեղեցուն մոտ կա Հայոց ժամ՝ հանուն սուրբ Մինասի, ոչ հեռու այն տեսարանից, որ բացվում է Տփղիսի Կուր ավազոտ գետափի վերևից, առանց գմբեթի, որը հին տան նման է, շինված 1790 թվին <Հ>ավլաբարցիների ծախքով, կղմինդրով ծածկված, հանուն Սուրբ Մինաս վկայի:

Տասնմեկերորդ: <Հ>ավլաբարի միջամասում, ժողովրդական շենքերի կենտրոնում կա եկեղեցի Ծամբորեցոց կոչեցյալ, կառուցված 1775 թվին, հանուն Աստվածածնի, առանց գմբեթի և փայտով ծածկված, որ կառուցվել է ժողովրդի ծախքով 1775 թվին:

Տասնևերկուերորդ: <Հ>ավլաբարի Դարիվերի գլխին, դեպի աջ, որտեղից տեսարան է բացվում դեպի Կուրը և այգիները, Մետեխի բերդի մեծ դռան դիմաց, կա փոքր ժամ գմբեթավոր, հանուն Սուրբ

Գեորգի, որ ծածկված է փայտով և շինված է Սուրբ Նշանի ավագերեց Զարափովի ընտանիքի <ծախքով> 1775 թվին:

Տասններեքերորդ: Չուղորեթ տանող ճանապարհի կողքին, արևելքից գտնվող ձորում, դեպի <Հ>ավլաբար տանող դարիվերին կից, գտնվում է եկեղեցի գմբեթավոր վայելչատես, քարուկրով <շինված>, հանուն Սուրբ Կարապետին, որ կառուցված է՝ նախ հիմնադրուկամբ քաղաքացի (մոքալաք) Ղազազովի ծախքով 1400 թվին, իսկ վերջին անգամ նորոգված 1790-ին: Այստեղ է ամփոփված Սուրբ Կարապետի սքանչագործ մասունքը, որը և տոնում է ժողովուրդը:

Տասնևչորսերորդ: <Հ>ավլաբարից դուրս, հարթավայր տեղում, <Հ>ավլաբար թաղից մի փոքր հեռավորուկամբ, կա եկեղեցի փառաշեն գմբեթավոր, քարուկրով <կառուցված>, պարսպով պատած, հանուն ամենասրբուհի ծիրանազարդ Աստվածածնի, որ Խոջա Բե<հ>բուդովի ժամ է կոչվում և որը կառուցված է հենց նույն իշխան Բե<հ>բուդովների ծախքով 1780 թվին և հետագայում նրանցից բազմիցս նորոգված: Այս եկեղեցին կառուցված է իշխան Բե<հ>բուդովներից իբրև իրենց դամբան:

[Տասնհինգերորդ]: Կուր <գետ>ի կողմը, Կուկիա կոչված թաղում կա եկեղեցի փոքր, հանուն Ամենասրբուհի Աստվածածնի, կառուցված քարուկրով, առանց գմբեթի և աղյուսով ծածկված, որ շինել է տեղական ժողովուրդը 1807 թվին:

Երկրորդ [=տասնևվեցերորդ]: Վերոգրյալ՝ առաջին տեղում նկարագրած մեծ Վանքին կից կա եկեղեցի հանուն Սուրբ Գեորգի, որ Ղափլանենց է կոչվում, առանց գմբեթի, փոքր, կառուցված 1790 թվին այժմ հանգուցյալ Տեր Գրիգոր քահանա Սանուլովի ծախքով:

Երրորդ [=տասնևյոթերորդ]: Վերա տանող ճանապարհի սկզբին, դեպի ձախ, ճանապարհց վերև, Կոմարովսկու տներին կից տեղում կա եկեղեցի, առանց գմբեթի, հանուն Սուրբ Գեորգի, Ջրկինյանցի ժամ կոչեցյալը, որը կառուցել են քաղաքացի (մոքալաք) Ղազազովները 1717 թվին:

Չորրորդ <=տասնևութերորդ>: Իշխան Բե<հ>բուդովների պալատին կից, անմիջապես ժայռի վրա կառուցված են վանական եկեղեցի, տներ և խցեր կույս վանականների բնակուկթյան համար, որը քարուկրով շինել է իշխան Աշխար<հ>բեկ Բե<հ>բուդովը 1717 թվին, հանուն առաքելապատիվ նախավկա և սարկավագապետ Սուրբ Ստեփանոսի: Այստեղ ապրում են տասի չափ կույս վանականներ: Այս վանքում ամփոփված է նույն նախավկա Սուրբ Ստե

փանոսի մասունքը՝ աջը: Այս եկեղեցին փոքր է, փոքր գմբեթով ծածկված. և ինչպես մինչև այժմ ապրել են տասը, նույնպես և այժմ ապրում են նրանք իշխան Բե<հ>բուդովների ժառանգների <ծախքով>:

<Տասնևիններորդ>: Տփղիսի հարավային կողմում՝ Քարափի թաղում, բարձր ժայռի վրա կառուցված է փոքր եկեղեցի՝ փոքր գմբեթով, լավ և գեղեցկատեսիլ, հանուն Սուրբ Գեորգի, ուր ամփոփված է Սուրբ Գեորգի սքանչելագործ մասունքը: Այս եկեղեցին կառուցված է 1600 թվին ոմն Ղարիբ հայ վանականի սեփական ծախքով: Սա կղմինդրով է ծածկված և Քարափի եկեղեցի է կոչվում:

<Քսաներորդ>: Բաղանիքների կամրջից հայնկույս, մեծ Դարիվեր գնացող խճուղու վերջում, կան այլևայլ շենքեր և բնակարաններ և սրանց միջում Սուրբ Սարգիս եկեղեցին: Այս եկեղեցին կառուցվել է յոթերորդ կեսում նկարագրված Տփղիսի նորաշեն եկեղեցու ավագերեց Տեր Սուքիասը 1737 թվին: Այս եկեղեցում գտնվում է Սուրբ Սարգիս սքանչելագործ մասունքը, և այս սրբի հիշատակը տոնում են մաքսավորի և փարիսեցու շաբաթ օրը, և այստեղ ժողովրդի մեծ բազմություն է գալիս, մանավանդ կանանցից:

<Քսանևմեկերորդ>: <Հ>ավլարարից դեպի ձախ, Դարիվերին կից, Կախեթ տանող ճանապարհի սկզբին կա եկեղեցի՝ հանուն Սուրբ Գեորգի Էջմիածնեցոց կոչեցյալը, առանց գմբեթի, փոքր, փոքր զանգակատնով, փայտով ծածկված, որ կառուցվել է ժողովրդի ծախքով 1805 թվին:

<Քսանևերկուերորդ՝ երրորդին կից տե՛ս վերևը>:

[9]

ՏՓՂԻՍԻ ԹԵՄԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՉՏՆՎՈՂ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

<1> Հաղբատն և Սանա<հ>ինը իբրև հոյակապ եկեղեցիներ, նույնպես և գյուղեր, <ասում են իբրև թե> Վրաց թագավորների շինած են, իսկ հայերը գրում են, որ հայ թագավորներն են կառուցել. և ես այն կարծիքի եմ, որ այս վերջինը պիտի լինի ճիշտ: Սրանք խիստ գեղեցիկ և հոյակապ են: Հաղբատի եկեղեցին քառասուն խորան է պարունակում: Այնտեղ այնքան վանականներ կային, որ երբ ննջեցյալ էին բերում, մի օրումն էին կատարում քա-

ուսուունքը: Այժմ Հաղբատն այնպես փառավոր չէ, ինչպես հին ժամանակներում: Այստեղ Վրաստանի թագավորի հովանավորությամբ նստում էր Հայոց եպիսկոպոսը (բնագրում սխալմամբ՝ կաթողիկոսը Լ.Մ.-Բ), որի մասին <նախօրոք> գրում էր Էջմիածնի ընդհանրական <Հայոց> հոգևոր տեր (օքեվարտեր) կաթողիկոսին, և նրա հոտն էին կազմում Քարթլիում բնակվող հայերը: Պատմությունից երևում է, որ Հաղբատն ու Սանահինը որպես գյուղեր, նույնպես <և> հոյակապ գմբեթավոր եկեղեցիներ, կառուցված են 961 թվին Բագրատունյաց Աշոտ երրորդի, Շնորհալի (sic) կոչվածի ամուսին Խոսրովանուշի հոգսով:

2. Հաղբատից վերև կա փոքր վանք, կառուցված հանուն Կենարար փայտին, որ գրաված ունին հայերը: Այստեղ փորված են բազմաթիվ այրեր և այդ այրերից մի քանիսի մեջ բազմաթիվ հին գրքեր կան, և նրանց մուտքը փուլ գալու պատճառով խափանված է, և՛ անանցանելի լինելով՝ անգործածելի են մնացել:

3. Հաղբատից ցած դեպի հյուսիս կա եկեղեցի Ագարակի, որն այժմ Ախթալա է կոչվում և որի գմբեթը քանդել է Լանգ-Թեմուրը: Սա հոյակապ է, գեղեցկատեսիլ, հնում մետրոպոլիտական և հոտով հանդերձ, իսկ այժմ՝ երեցի բաժին. և գրաված ունին այն հունա-վրացական դավանանքին հետևողները:

4. Ախթալայի դիմացը, դեպի արևելք, Բերդուշ լեռան մեջ, կա երկու վանք, որոնցից մեկը խելագարին խելքի է բերում, իսկ մյուսում բխում է աղբյուր, որի ջուրը եթե քառասուն օր <անընդհատ> խմել տրվի մոլեգին կատաղածին, հաջորդ քառասուն օրն այլևս երկյուղալի չպիտի լինի նրա համար...

## ՍԱՆՈՒԷԼ ԿԻԲՍԻԺԵԼԱՆԵՑԻ «ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏՍՈՒԹԻՒՆ»

Ի պատասխան Մանվել Կյուժյուլյանեցու խնդրագրի՝ թույլ տալ իրեն հաստատվելու Հաղբատի Ս. Նշան վանքում կամ գնալու Գանձակի (Կէնճէու) Մուռութ վանք և «անսպաղ անցուցից գկեանս իմ», 1831 թ. սեպտեմբերի 6-ին նորանշանակ Հովհաննես Կարբեցի կաթողիկոսից ստանում է այս հրամանագիրը:

«Ի Յօհաննէս Արքեպիսկոպոսէ ամենայն Հայոց բարձրագոյն բարեհաճութեամբ հաստատեցելոյ ի կաթողիկոսութիւն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի:

Առ բարձր արժանապատիւ Մանուէլ վարդապետ առաջադրութիւն.

Որովհետեւ Տփխիսու Սէյտապար եղեալ Սուրբ Սարգիս ուխտատեղին սեպհականեցաւ սրբոյ Էջմիածնի, վասնորոյ և մեզ հարկ ի վերայ կայ հուզունակ լինիլ վասն շինութեան և պայծառութեան նորին առ ի հիմանէ նոր ի նորոյ վայելուչ բարձրութեամբ կառուցանել՝ ընդ նմին և քանի մի սենեակս յարմարաւորս կազմել ի բնակութիւն եկաւորեալ ուխտաւորաց: Առ այս նկատելով զխոհական գովանի կառավարութիւնս ձեր և զարիաջան հետեմունս վասն աթոռապատկան գործոց տամ ձեզ զամենայն կառավարութիւն նորա անկախ գումեքէ, զորոյ արդիւնս միանգամայն ունիք վայելել ի պիտոյս ձեր՝ վասն հաւատարիմ հպատակութեանդ սրբոյ Աթոռոյն:

Ուրեմն պարտ է քեզ գնալ և բնակիլ անդ, և յորդորելով զաստուածասէր ժողովուրդս յօգուտ սրբոյ եկեղեցւոյն, սկիզբն առնել շինութեան արժանաւոր եղանակաւ տնօրինելով, զոր որպէս յուսամս ունիք անմահ յիշատակ և անթաւամ պարծանք թողու քում ծերութեան:

Ընդ նմին յանձնեմ ձերդ խոհունակութեան և զԴաշտի խաչ դեղին<sup>1</sup> առ ի ջանալ հնաքրիւք իմն ստանալ՝ որպէս ձեզ յայտնի է եղանակ նորա, և յառողջ ածել որպէս հարկն է: Յանձնեմ նաև զՏափիթաղի այգատեղին, որ առ քնէազ Սումբաթովն առ ի նոյնպէս ջանադիր լինիլ քեզավայել հետեողականութեամբ ի սեպհականութիւն սրբոյ Աթոռոյն, և հոգս ունիլ ի վերայ այլ աթոռապատկան կալուածոց գործոցն որք պատահեցին:

<sup>1</sup> Կարգա՝ «տեղին»:

Չալսորիկ յանձնելով հանճարալիր կառավարութեան ձեռք յուսամ լիապէս թէ ունիք յօգուտ սրբոյ Աթոռոյն յառաջ ածել ձերդ գործունէութեամբ, առ ի յիշատակ կացուցանել ձեզ... և այլն, յանձնելով զձեզ շնորհաց և խնամոց սուրբ Աստուածութեան, եմ ձեզ բարեացակամ բարձրագոյն բարեհաճութեամբ հաստատեալ կաթողիկոս ամենայն Հայոց Յովհաննէս ի 1831, ի 6 Սեպտեմբերի, ի Տփլիս, № 485»<sup>1</sup>:

Շարունակելով իր կենաց պատմութիւնը, Կյումյուլշխանեցին «ԽԳ. Յօժութիւն նոր կաթողիկոս Յովհաննէս Կարբեցւոյ» դրվագում հայտնում է. «Մեք ըստ յանձն առեալ պարտաւորութեան մերոյ, ի 1832 մարտ ամսոյ սկզբանն զնշանակեալ յանձն Աէյտապատու զՍուրբ Սարգսի ուխտատեղին, քակեալ որպէս թէ ի հիմանց, նոր ի նորոյ շինեցուցաք ողորմութեամբն Աստուծոյ և օգնականութեամբ բարեպաշտ մերազանց յընթացս երեք ամիսն ժամանակի, վայելուչ և կարևոր կերպիւ, որ յառաջն էր իբր աղքատ գիւղացւոյ խարխուլ տուն մի, փոքրիկ և անվայելուչ՝ յորում ոչ կարէր պարունակիլ յիսուն այր և կին. այժմ ըստ օրինի եկեղեցեացն մերոց գտեղին կանանց կրկնայարկ յօրինեալ, ուր պարունակին աւելի քան զերկու հարիւր աղօթաւորք երկոտասան լուսամտիւք, պահարանաւ և այլ ամենայն հարկաւորօքն ըստ կարգի եկեղեցեաց լուսաւորչակրօնից:

Մինչդեռ մեք յայսպիսի ապառնի յուսոյ բարելաւութեան աստուածահաճոյ գործառնութեամբ զբաղեալ կայաք ի Տփլիս, փոխանակ անցեալ ժամանակացս մարդահաճոյ ծառայութեանց երից կաթողիկոսաց և երկուց արքեպիսկոպոսաց՝ թերևս այսու տքնութեամբ անկորուստ ունել և զառաջինսն առ Աստուած՝ միջնորդութեամբ Սրբոյն Սարգսի արագահաս օգնականի և որդւոյ նորին Մարտիրոսի...»<sup>2</sup>:

Մանուէլ Կյումյուլշխանեցու «Անձնական պատմութեան» ԽԷ. գլուխը նվիրված է Ս. Սարգիս ի նորոգ կառուցյալ եկեղեցու օժման նկարագրութեանը:

<sup>1</sup> «Դիւան Հայոց պատմութեան», գիրք ԺԲ. Մանուէլ Կիւմիւլշխանեցի, մասն I, ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ ա. ք. Աղանեանց, Թիֆլիս, 1917, էջ 158-159:

<sup>2</sup> Անդ, էջ 161-162:

## ԽԷ. ՕԾՈՒՄՆ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՈՒԽՏԱՏԵՂԻՈՅՆ

Ըստ բարեխնամ այցելութեան և յաջողութեան վերնոյն զօրութեանց և արագահաս օգնականութեան սրբոյն Սարգսի և որդւոյ նորին Մարտիրոսի պսակաւորեալ մեր զշինութիւն պաշտելի տաճարի նոցա կարևոր հանգամանօք, այսինքն հոյակապ սեղանովք անմահ Գառինն խորհրդական զինարանաւ, աւագ խորանն ընծայեցաւ յանուն թագուհւոյն երկնից զօրութեանց Սուրբ Աստուածածնի, աջակողման աւագանի դասուն փոքր սեղանն Սրբոյն Գեորգայ, և ձախակողմանն Սրբոյն Սարգսի, որպէս և բոլոր եկեղեցին կառուցեալ սրբագործեցաւ յայս անուն սրբոյն Սարգսի զօրավարի և որդւոյ նորին Մարտիրոսի, հանդերձ յահեկակողմեան պահարանաւ, երկոքումբք դասութք, ներքնայարկ և վերնայարկ կանանց կացարանօք, երկոքումբք դրամբք, հնգետասան պատուհան կանոնաւոր լուսամտիւք, և սոյն այսպիսի արձանագրութեամբ ի ճակատ հիւսիսային դրան, ի կճեայ վէմ փորագրեալ:

«Նուիրօք մերագնէի, ի ձեռն կառավարչի Ծահնեան Կիւմիշխանցի Մանուէլ վարդապետի, շինեցաւ Սէյտապատի Սուրբ Սարգիս ուխտատեղի:

Ի 1832 և ի Մայիսի մէկին:

Այսունակ և վրացերէն տառիւք գրեալ կայ ի նոյն արձան:

Ապա ի հոլովիլ այսմ ամի ի հետեեալ թուականիս՝ ի 1833 և ի հոկտեմբերի 1 ժողովեալ պատուաւոր դասուց հոգևորականաց Միսաս Սաշլեան և Ստեփաննոս Արղութեան եպիսկոպոսաց, աւագ երիցանց, և բարեպաշտ մերագն արանց և կանանց բազմախոռոն բարեպաշտ գումարեցելով, որում աւուր նուաստութիւն մեր էր ժամարար, Ստեփաննոս եպիսկոպոսն Արղութեանց սրբագործեաց օծմամբ զայս եկեղեցի, և կատարեցաք զնաւակատիս սորա ութն օրեայ հանդիսաւոր պատարագաւ:

Եւ զանցս պատմաբար ուխտատեղւոյս այսմիկ ըստ կարևոր ծանօթութեանց մեզ յայտնեցելոց գրեալ արձանացուցի յօրագրութեան ժուռնալ եկեղեցւոյս այսորիկ, և ընդ գաղեալ մասանց սրբոյն Սարգսի, և զմասն սրբոյն Գեորգայ, իբր հրաշիւք իմն ի ձեռս բերեալ, եդաք յայս եկեղեցի և զհռչակաւոր զօրութիւնս բժշկութեան յայնմ օրէ օծմանն հետ զհետէ վայելեն հաւատով յուսով դիմեալ ախտաւորք, զորոց ճառելն աստանօր ոչ ներէ նպատակ պատմութեան մերոյ:

Արդ՝ յաւարտ այսպիսի խնամօք Նախասահմանողի՝ ի լրութեան շինուածոց՝ և սրբագործութիւն ուխտատեղւոյս, ի 1833, և ի Հոկտեմբերի 14. ի Դեկտեմբերի 9, և ի 1834, Փետրվարի 24, և ի Մայիսի 7, յաջորդաբար խնդրամատոյց եղէ առ բարեկաւութեան իմոյ ցանկացող սրբազնագործ Յօհաննէս հայրապետն, թերես ազատելով զիս ի յաջորդականութեանց հոգևոր կառավարիչ հարց Միսնաս և Ստեփաննոս եպիսկոպոսաց շնորհմամբ բաշփորթի՝ արձակեսցէ զիս վերադառնալ ի Ղրիմ, ուստի եկեալն էի՝ սին դատողութեամբ:

Բայց և ոչ մի խնդրագրութիւն իմ եզրտ գտեղի առաջի նորին սրբազնագործութեան, որպէս թէ խնայելով ծերութեան մերոյ, զի մի թափառիցիմք միւսանգամ յանմատչելի լերինս Կովկասու. վերապատուելի էր խորհուրդ և հրամանս հայրագութ, եթէ ի բարեկարգութեան ճախրէր կառավարութիւն հայրապետական և աթոռային: Սակայն յաւուր օծութեան սոյն հայրապետիս Յօհաննոս մինչև ցայժմ անախորժ հռչակք, և միաբանիցն անհամաձայնութիւնք, ուռուցեալք իբր յԵւակիկլոն հողմոց բամբասանաց, և այլում անշրջանկատ կառավարութեանց, օրըստօրէ կուտակին խռովութեանց ալիք գալեօք:

Որպէս ի սոյն 1834 Մայիսի 26, բերեալ եղեն յԷջմիածնէ ի Տփիսիս Սիմէօն արքեպիսկոպոսն Բզնունեան, որ ընդ իշխանութեամբ ներսէս արքեպիսկոպոսի, սա յաջորդ եղեալ էր ի Տփիսիս:

Նոյնպէս զՆիկողոս եպիսկոպոսն, զՅօհաննէս վարդապետն Ղրիմեցի, և զՄարտիրոս վարդապետն Աշտարակեցի, զսոսա զչորեսեան իբր ընդդիմակ գտեալ հայրապետական կառավարութեան, աքսորեցին ի Տփիսիսու. զՍիմէօնն ի Ծամախի, զՆիկողոս եպիսկոպոս և զՅօհաննէս վարդապետ ի Սևան կղզին, և զՄարտիրոս վարդապետ ի կողմն Կենճէու, Չարեգու անապատն:

Եւ յանցանք նշանակեալ հոգևորականացս, համաձայն ընդ այլ միաբանիցն էին, թէ կաթողիկոսն զամենայն արդիւնս վանուցն միայնակ ինքնակամ մի՛ մըսիսեսցէ ի դէպս և ի տարադէպս, մանաւանդ ազգայնոց իւրոց: Եւ երկրորդ՝ զոմն Գէորգ սարկաւազ զսպասաւոր իւր, վասն հռչակեալ ապիրատութեան, հեռացուցէ ի վեհարանէն:

Բայց փոխանակ զանկարգսն կարգադրելոյ, և զանվայելուչսն ի միջոյ բառնալոյ, զողորմելի հայրենասէր հոգևորականսն բարձեալ ի վանուցն, առաքեցին յաքսորս ի նշանակեալ տեղիսն:

Եւ զնոյն բամբասեալ Գէորգ սարկաւազն, հայրապետն ինքնին ձեռնադրեաց առաջադէմ վարդապետ, և կայ ի սպասու նորա,

յուսալի է ազգին մերոյ փութով տեսանել զնա արքեպիսկոպոս և կաւալէր, որպէս յայտ 1835, և Յունիսի ամսոյն եղև ի Տփիսիս Մինաս եպիսկոպոսն Մաշլեան Տանիսլաւսկի առաջին աստիճանի կաւալեր, Ստեփաննոս եպիսկոպոսն Արդոթեանց 35 ամեայ հասակի երկրորդ աստիճան Տանիսլաւսկոյն ասպետութեան աստեղամբ, վեհապետի սպասաւոր Բարսեղ և Յովսէփ եպիսկոպոսք Աննայի առաջին աստիճանաւն ասպետք, և Ղուկաս եպիսկոպոսն նորածին ասպետ Տանիսլաւսկու, իւր փոքրաւորն Մատթէոս վարդապետ և Եփրեմ կաթողիկոսի փոքրաւոր Յովսէփ վարդապետքն երիտասարդք եղեն ակնակուռ խաչիւք պսակեալ յողորմած կայսերէ խնդրանօք և առաջադրութեամբ արդարամիտ Յօհաննէս վեհապետի:

Ահա ընդհանրական Հոգևոր Հայր, որ խնամէ միայն զիւրային վաստակաւորսն, ահա մայր՝ որ երկու ստեամբ բուծանէ և եթ զմիաբան կամակիցսն իւր: Ահա համատարած արեգակն բոլոր եկեղեցւոյն լուսաւորչակրօնից, որ լուսաւորէ միակողմանի զմի դասն սուրբ Էջմիածնի, ընդ Ռոբո՛ւսմայ գանդակիցս իւր, և թողու ի նսեմ յուսահատութեան զմիւս դասի հինաւուրց գեպիսկոպոս և զվարդապետսն, որք պատուոյ և բարձի ակն ունէին վասն բազմաթամանակեայ մտերիմ ծառայութեան իւրեանց, նոցա զթածօրէն շնորհէ բանտ, կապանք և աքսորանս յանմխիթար տեղիս:

Եւ ահա հովիւ բարի՝ որ անփոյթ լինի ի փեռեկտմանէ միամիտ հօտիցն, հովուէ արթնութեամբ զմերձաւոր ազգայինս իւր ի վայրի դալարոջ սրբոյ Աթոռոյ գանձարանին, ոմանց աստիճան չին և պատիւ բերելով ի կայսերէ, այլոց ջրաղաց, տուն և այգի գնելով տրօք մերագանց:

Եւ ևս ահա սրբագան, որ իսպառ սրբէ զխղճահարութիւն բարեպաշտից, մինչ զի պարկեշտ և աղքատ հոգևորականք ծաղր և առակք նշաւակի եղեն յաշխարհի յաւուրս սորա, և ոչ ոք կարէ ի մէջ ազգի մերոյ գլուխ ամբառնալ, թէ կարգաւոր իցէ, զի առ ժամայն լուէ, եթէ տէր և գլուխ ձեր նա իցէ, իսկ դուք զինչ: Վասն այսոցիկ ամենայն տեսանելով իմ, եթէ որք ի Տփիսիս են հոգևոր կառավարիչք Մինաս և Ստեփաննոս եպիսկոպոսք և կաւալերք, իբր հոգովն Համանայ ի դրան Արտաշիսի, և ոչ գոյ Եսթեր ազգասէր, զի փրկեսցէ զազգ իւր, և զՄուրթէ ի մեքենայից սոցա, որոց ծանր էր տեսանելն զմեզ աստ ի Տփիսիս, կարծելով թէ կողմնակից եմք Աշտարակեցի ներսէս արքեպիսկոպոսին ի Քիչնէ լուեցելոյ:

Ուստի բաց ի շինութենէ Սուրբ Սարգսի եկեղեցւոյ երանգ երանգ գեղեցկորակ ծաղկօք զնոյն նկարեցուցեալ, և ոսկեզօծ զխաչկալսն զարդարեալ ամենայն վայելչութեամբ, ապա վերստին

խնդրամատոյց եղէ առ բարեկալութեան իմոյ ցանկացող ընդհանուր հօր Յօհաննէս Հայրապետի, կամ յեկեղեցեացն Հայոց հրամայեցէ տալ մեզ փոխ երկու հարիւր թուման երեք տարի ժամանակաւ, որով զշինութիւն սենեկացն հոգասցուք, և ապա յարդեանցն վճարեսցի այն պարտք, առ որ առաքեցի և զօրինակ տալի ձեռագրոյն մերոյ որ է այս:

«Ստորագրեալս վասն շինութեան ի Տփխիս յանցս Սէշտապատու Սուրբ Սարգիս ուխտատեղւոյ հարկաւոր սենեկաց, բարձր հրամանաւ սրբազնագործ Յօհաննէս հայրապետի՝ միջնորդութեամբ սոյն Տփխիսու հոգևոր կառավարութեան, յայս ինչ եկեղեցւոյ պարտք վեր առի այսքան դրամ արծաթ մանէթ յայսմ օրէ երեք ամ ժամանակաւ առանց տոկոսի, որով զկարևոր շինութիւնսն յառաջացուցից եթէ Տեառն իցեն կամք կենդանութեամբ աւարտ հասուցանել զայնս: Յետ լրութեան շինուածոցն, յաւելեալ յարդեանցն հոգածու լինիցիմ հատուցանել զայս պարտս յիշեալ եկեղեցւոյն, իսկ թէ արարչական սահման վերակոչման ինձ հասցէ յառաջ, քան զվճարել պարտուցս այսոցիկ, կամ տեղափոխութիւն յառաջասցի ինձ յինչ և իցէ դիմաց, յայնժամ ես ստորագրեալս ազատ լինիցիմ յայսմ պարտուց, հոգևոր կառավարութիւն տիրելով սոյն եկեղեցւոյ արդեանցն ամենայնի նա պատասխանատու եղիցի այս գունակ գումար պարտուցս, վասն որոյ ստորագրեմ իմով ձեռամբ»:

#### ԽԸ. ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԵՒ ԳՈՐԾՔ ՅՕՀԱՆՆԵՍ ԿԱՌՈՂԻԿՈՍԻ ԸՆԴ ՍԱՆՈՒԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

«Ահա օգտակար համարելով մեզ և ձեզ զմին յերից խնդրոց ձերոց անտի՝ կամեցաք ածել ի լրութիւն, յաղագս բաւականացուցանելոյ զբարենախանձ եռանդ հոգւոյ ձեր և սրտի՝ ոյր վասն և հրամայեցաք ընդ այսմ յատուկ գրութեամբ մերով, հոգևոր կառավարութեան մերոյ այդր ի Տփխիս, զի փոխ կալցեն երեք տարի ժամանակաւ առանց տոկոսեանց զերկու հարիւր թուման արծաթ դրամ ի հինգ եկեղեցեաց տեղւոյ՝ նշանակելոյն ի մէնջ, և ընկալեալ ի ձէնջ զմուրհակս հաստատեալս վկայութեամբք ի վերայ զերպովայի թղթոյ յանուն իւրաքանչիւր եկեղեցեացն տացեն ձեզ զայն գումար, կամ հասուցեն հետ զհետէ վասն շինութեան Սուրբ Սարգիս եկեղեցւոյն:

«Գրեմք և ձեզ՝ զի ստասջիք ի հոգևոր կառավարութենէ տեղւոյդ եկեղեցական երկու հարիւր արծաթ թուման դրամքն՝ և տաջիք զմուրհակս ընդ նշանակեալ կերպիւ ի վերայ յաղագս հաւատարմութեան ապագային, և յայտնեսջիք մեզ:

Ի 1834, ի Նոյեմբերի 3, համար 548:

Կաթողիկոս ամենայն Հայոց Յօհաննէս»:

Երեք խնդիրքն մեր յառաջացեալ էր յայնցանէ, զի հոգևոր կառավարիչք նորա ի Տփլիս ոչ կամելով այն շինութիւն ի ձեռն մեր լինիլ, պատուիրեալ էին Տէր Նիկողոսին արհեստաւոր համքարաց յորոց ակն ունէաք իմտատիայի, ոչ տալ մեզ զայն:

Վասն որոյ յուսաբեկ եղեալ մեր ի ժողովրդոց, խնդրեցաք յայս վեհապետէ, կամ երկու հարիւր թուման ըստ մեր գրեցելոյն փոխ տալ մեզ երեք տարի ժամանակաւ, կամ բաւական ժողովուրդ սեպհական ծուխ յատկացուցանել մեր այս եկեղեցւոյ, զի արդեամբք նոցա շինել կարասցուք զսենեակսն և զշրջապատսն, և կամ շնորհեսցէ մեզ զիր ճանապարհի գնալ ուստի եկեալ եմք ի Ղրիմ:

Նա գրէ ըստ վերնոյն, զի զմեզ պարտաւոր կացուցէ հաստատուն վեքսելովք յիւրեանց շահեկանութեան, զի թէ մահ կամ յայլուր գնալ մեզ պատահեսցի, ի կայից մերոց վճարեսցեն, այս է հայրախնամ գթութիւն նորա առ մեզ, ուստի գրեցի նորա ըստ հետեւելոցն ի սոյն.

«Երրորդ՝ որ հրամայէք մեզ՝ վկայեալ մուրհակ [ը]երպօվոյ թղթով տալ այն եկեղեցեացն ոչ կարացի որոշել՝ թէ վասն ո՞յր են այդ, ճիշտ պնդութիւն մուրհակացն արդեօք այնպիսի դրամօք շինելիքն յատկապէս ինձ և ազգային ժառանգաց իմոց սեպհական կալուած պարտին լինել, որ ես այնպիսի մուրհակօք պարտականութիւն կրեցից յանձն իմ, թէ յետ և յառաջ շինեցեալք ինև ի վայելս լուսաւորչակրօնից, և յարդիւնաւորութիւն Աթոռոյն կամ բարւօք ասել այլ վեղարաւորաց կան և մնան»:

Վաթսուն և հինգ ամ կենաց իմոց հոլովեալք են, տակաւին ումեք ոչ թէ հաստատեալ մուրհակաւ, այլ և հասարակ տոմսեկաւ ևս ոչ եմ պարտաւորեալ, զի՞ արդ այժմ արդիւնաւորութեան այլոց բարեհաճի բազմախնամ տէրդ կաշկանդել զիս այնպիսի խստագոյն օրինօք, միթէ այս ի՞ցէր առհաւատչեայ անցեալ քառասունամեայ ծառայութեանց իմոց երից կաթողիկոսաց, սրբազան Դանիէլի, Եփրեմայ, և Տեառնդ և երեք արքեպիսկոպոսաց՝ Գրիգոր պատրիարզի, Ներսէս արքեպիսկոպոսի և Յօհաննէս առաջնորդին յԱծ-

դարխանու, որ ամենեքեան էին Աթոռային տեարք: Այժմ սակաւատի պաշտօնակիցք իմ Տեառնէդ զանազան պարգևօք, խաչիւք, պնակէիւք, կաւալերովք, եպիսկոպոսութեամբ և լի հարուստ վիճակօք պերճացան: Զնուաստութեան մեր զկեանս ի խարխուլ ծերութեան ժամու Տփխիտոյ հինգ եկեղեցեայ պարտաւորութեամբք, հինգ զայիմնի վէքսիւք ի պարանոց մեր կախեալ, այնպիսի փառաւորութեամբ բարեհաճիք իջուցանել ի գերեզման:

Մի՛, Տէր իմ, մի՛ բարեհաճիր ի վերայ տարաբաղդիս զայսպիսի բեռն բարդել, քանզի գիտակ իսկ ես, իմ առանց ձեռագիր տասն և հինգ հազար ուուպլիսն Ներսէս արքեպիսկոպոսին յանձնելն, և այլոց ինձ պարտապանաց և զմեծամեծ պաշանջելիս թողեալ եմ առանց հետևութեան, որոց դատաստանական գրութիւնքն են առ Սինօթն Աթոռոյդ, անօգնական ինձ, և զուլթն մանկունս ի Մօսկով ուսմամբ զարգացուցեալ եմ, զբազմութիւն ընտիր ձեռագիր հին նախնեաց մատենից տալով իմ ի ձեմարան վեհագն Լազարեանց, և զայլ մատեան և զինչս յանապատն Սևանու, ինչ են այդ երկու հարիւր թումանք, զորովք կամիս կաշկանդել զմեզ: Ո՛չ քեզ, տէր իմ, այլ՝ որք առաջարկեալ են Տեառնդ այդպիսի օրէնք ինձ առաջնորդել՝ նոցա են մեծ մեղք: Իմ կամաւ ձեռագիր տալս օրինակն այն էր՝ զոր տեսիք, եթէ ոչ հաճիք առ այն՝ շնորհեցէք մեզ ընդարձակ ճանապարհ, և զամենայն բարեաւ վայելեսձիք:

Իսկ թէ և այն ոչ են կամք ձեր արձակել զմեզ, ըստ որում հայր էք ամենայն հոգևորականաց, յատկացուցել մեզ ապրուստ մի, եղիցի կամք Տեառն օրհնեալ, և ի վերայ անցեալ ծառայութեանս՝ առէք և զայս Սուրբ Սարգիս ուխտատեղին և մի պարտաւոր ի գերեզման զիս իջուցանել յօժարեսձիք:

Մնամ սրբազնակատար Տեառնդ  
ամենախոնարհ ծառայ Մանուէլ վարդապետ»:

Ի 1834 Նոյեմբերի 9. ի Տփխիս:

Պատասխան սորա յայն թիւ ի 25 Նոյեմբեր յետ բազում ապարդիւնաբանից գրէ զայս բան.

«Պարտաւոր եմք ասել՝ ըստ ձեր բազում անդամ թախանձելոյ ի գրութիւնս ձեր, թէ գրեցէք ուրեմն զօրինակ պաշտօնի վասն ձեր, թէ ո՞ւր կամիք գնալ դուք և որ՞ով դիտաւորութեամբ կամ ո՞ւր կամիք հանգուցանել զնպատակ մտաց ձերոց, և առաքեցէք առ մեզ, զի ըստ այնմ և մեք գրեսցուք զպաշտօնի յանուն ձեր և յղեսցուք առ ձեզ յաղագս ընդարձակելոյ ձեզ զճանապարհն ցանկացեալ ի ձէնջ»:

Զգալով իմ գներքին կամս ընդհանրական Հայրապետ բարերարին իմոյ, որպէս և մտաւորաց տեսանի ի գրութեանցն, յՑ Դեկտեմբերի գրեցի Տփիսիսու հոգևոր կառավարիչ հարց օտարասիրաց, գալ տեսանել զհաշիւն իմ, զի ըստ այնմ կարացից խնդրել զարձակումն անձինս: Նոքա պատասխանեն ի 10 Դեկտեմբերի, թէ չունին տակաւին հրաման ի վեհէն տեսանել զհաշիւն իմ, խոստանան գրել և հարցանել զկամս նորա:

Ի 1835, Յունվարի 28 գրէ առ մեզ վեհապետ բարերարն մեր ընդ այլ բանից և գայս.

«Յառաջ քան գայս ի պատասխանի գրութեան ձերոյ կոնդակաւ մերով ի 25 Նոյեմբերի ծանուցաք ձեզ... թէ կամիցիք գնալ ի Ռուսաստան, որպէս գրեալ էիք մեզ, առաքել առ մեզ զօրինակ բաշորդի ձերոյ առ ի տալ ձեզ զօրինաւոր արձակագիր ...վերստին գրեմք յատուկ պարտաւորութիւն եղեալ ձեզ ի ստանալ գայս կոնդակ մեր՝ առաջին փոշտիւ յայտնել մեզ զհաճութիւն ձեր... զի մեք ի գալ այսր յաջորդին Թիֆլիզու բարձր սրբազան Ստեփաննոսի, որում յանձնեալ եմք անպատճառ յառաջնում եօթնեկի ելանել մեծի պահոցն կարասցուք մեք անձամբ անձին խորհել ընդ նմա, և տնօրինել զարժան և զօգտակարն»:

Այս այսպիսի հարկադրիչ հրաման վեհապետիս, կշռադատեալ զամենայն միտս գրութեանց նորին յետ և յառաջ գրեցելոցն, մանաւանդ կամի խորհել ընդ յիշեալ եպիսկոպոսին, թէ և իբր խոստացեալ էր մեզ կամ այլ առաջնորդութիւն ի խորագոյն տեղիս, ի Մողայ, ի Խորվիրապ կամ յայս կոյս Կովկասու նուիրակութիւն, և կամ յաթոռն մնալ ի 1835, և ի Փետրվարի 16 յետ այլոց բանից պատասխանեցի այսպէս:

«Արդ՝ ողորմած Տէր առանց արդիւնաւոր ծառայութեանց՝ ըստ սովորութեան ուխտատեղւոյս, հիւանդաց, կուրաց, և կաղաց, ի խունկէ և ի մոմէ աւելացեալ զբամոցն ռոճիկ առնուլ և ապրել, այնպիսին անդամագուրկ հոգևորականաց են թոշակ: Վիճակաց առաջնորդ կամ նուիրակ զկնի վաթսուն և եօթն ամեայ հասակի ձեռնամուխ լինելն, եղբայր է ծանծաղմտութեան, զի յետ այսորիկ ի հաճոյս նախագահի իմոյ ոչ կարեմ ումէք ծանրանալ և արդիւնք ժողովել, որով արժանի լինիցիմ զովութեանց, և ոչ աչք և մատուկ իմ օգնեն ինձ օրինաւոր տուժար գրել և հաշիւ տալ ըստ ժամանակին և առանց հաշուոյ գործակատարութիւն, է նպատակ անգոհունակութեան և բամբասանաց:

Վասն որոյ ամենախոնարհաբար խնդրեմ... եթէ վերադարձ գնալն իմ ի կողմն Ռուսաստանու պարզ միամտութեամբ և եթ վասն

ապահով կացութեան իմոյ զգացեալ էք առանց այլ և այլ նկատմանց, զորս և ոչ երազեալ իցեմ, շնորհեսջիք բաշփորդ մի, այս մի և եթ մտօք թէ Մանուէլ վարդապետն Յաննան, որ եկեալն էր ի Ռուսաստանու, շնորհեցաք նմա զայս պաշփորդ կրկին վերադառնալ յայն կողմունս, ուր ինքն գտցէ բնակութիւն:

Այս է զոր խնդրեմ զառաջինն զի գնացեալ իմ անդ ապրեցայց առանց ումէք գործոց ձեռնարկութեան: Իսկ եթէ և այն նրբանկատ տէրութեան ձեր տհաճութիւն իցէ, գոնէ զերկրորդս զայս մարդասիրութեամբ տնօրինեսջիք, այսինքն հրամայել մեզ զնալ յանապատն Սևան, և գրել նոցա ընկալնուլ զիս անձնայօժար միաբան իւրեանց, առ որս յառաջագոյն գնալն իմ էր բռնութեան ներգործութիւն, բայց այս երկրորդս յօժարութեան է ծնունդ, զի երեկոյացեալ կեանքն իմ զայնպիսի իմն տեղի ունել ցանկայ»...

5

[ԱՆԱՆՈՒՄ]

## ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՏՓԽԻՍ ԲԱՂԱՔԻ

Տփղիս կամ Թիֆլիս մայրաքաղաք Վրաստանի, Հին Վրաց թագաւորութեան ժամանակին էր արքայանիստ կամ աթոռանիստ քաղաք, այժմ է գլխաւոր քաղաք բոլոր գաւառաց՝ որչափ երկիր որ ունի Ռուսաց տէրութիւնն՝ Կովկասու սարերու այս կողմն և Կուսակալ իշխանի կամ Փոխարքայի տեղի բնակութեան՝ Կտր կամ Քտր գետի երկու երեսին շինած: Թիֆլիս անունը դուրս է եկած Վրաց «թբիլի» խօսքէն, որ է՝ տաք, ջերմն. որովհետև շատ տաք ջրեր կգտնվին. և մերձաւորութիւն Ռուսաց менуагы բառին, որ կնշանակէ ջերմուկ:

Վախտանկ և Վախուշտ ժամանակագրաց ասածովն Թիֆլիս քաղաքը շինել է Վախտանկ Գորգասլան թագաւորը Քրիստոսի 455 թուականին: Գորգասլանի որդին և ժառանգը 44 տարուց յետ բերէց իւր աթոռը Մծխիթայէն Թիֆլիս և այստեղ հաստատեց իւր թագաւորութեան իշխանութիւնը և այնուհետև Թիֆլիսը դառաւ Վրաստանի բոլոր թագաւորութեան մայրաքաղաք և աթոռանիստ, իսկ Մծխիթայուց մնաց հոգևոր իշխանութեան Աթոռը:

Որովհետև մէկ կողմն Կովկասու սարերն էին և սարի բնակիչքը, և միւս կողմն՝ այժմ Պարսից և Օսմանցոց տէրութիւններն կան, իսկ Հին ժամանակներումն՝ և Հայոց տէրութիւնը կայր: Թիֆլիս, որպէս և բոլոր Վրաստանը, մեծ ճանապարհի վրայ լինելով, համարեա թէ միշտ ոտնակոխ էր լինում: Հայոց թագաւորութեան ժամանակը կամ բարեկամ, դաշնակից լինելով, կամ ենթադրեալ իշխանութեան ներքոյ լինելով, միշտ նեղութիւն է ունեցել սարի բնակիչներէն և Պարսից կամ Օսմանցոց տէրութիւններէն. և այդ պատճառաւ շատ անգամ քարուքանդ է եղել և աւերել է: Զարմանալի է, որ մինչև ցայժմ ունի դեռևս մնացած զանազան Հին շինուածքներ: Բէթղէհեսի թաղումն մէկ Հին շինուածի համար ասում են հնասէր հնախօս հնագէտ մարդիկը, թէ առաջ եղել է ատրուշան, կրակատուն, այսինքն կրակ պաշտելու տաճար: Այդ ցոյց է տալիս, որ Հայոց Արշակունեաց թագաւորութեան ժամանակի կամ փոքր ինչ յետոյ շինած հրապաշտներու կամ կրակապաշտներու մոխրանոց կամ տաճար պիտի լինի Սասնեանց իշխանութեան ժամանակը: Այս Սասնեան ազգն է, որ Պարսից երկրէն Արշակունեաց Պարթևական աթոռն ջնջեցին, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ծնած ժամանակէն մէկ քա-

նի տարի առաջ. և Հայոց Խօսքով թագաւորին սպանել տուին նենգութեամբ՝ Անակի ձեռքով: Կարելի է որ այն ժամանակն երբ Հայաստանն ընկաւ Սասանեանց ձեռքը, Վրաստան էլ նուաճվեցաւ. և երբ Տրդատ Հայաստանն ազատեց Հռովմայեցոց օգնութեամբ, Վրաստանն էլ ազատվեցաւ, որովհետեւ Տրդատայ և Լուսաւորչի ժամանակն երբ որ Հայաստանումն տարածեցաւ քրիստոնէական հաւատոյ լոյսն, Վրաստանի թագաւորն Միհրան, Սուրբ կոյս Նունէի քարոզութեամբ լուսաւորեցաւ, և Վրաստանի մէջ քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնն Լուսաւորչի զրկած եպիսկոպոսաց և քահանայից ձեռքով հաստատեցաւ:

Այլ այս երկար ժամանակ չմնաց: Արշակունեաց Պարթևական թագաւորութիւնն Հայաստանից վերացաւ. այն ժամանակն քրիստոնէութիւնն ընկաւ հայածանաց մէջ: Վրաց մէկ իշխանն՝ բղեշխն Վազգէն, որ Մեծին Վարդանաց Մամիկոնէի փեսան էր, իւր մարմնաւոր իշխանութիւնն պահպանելու համար քրիստոնէական հաւատն ուրացաւ. շինեց մոխրատուններ, սկսեց կրակը պաշտել և իւր կնոջն, որ է Շուշան կամ Շուշանիկ, իւր ձեռքով սպանեց քրիստոնէական հաւատոյ համար, որովհետեւ այս սուրբ կինն՝ Շուշան, լինելով Հայոց ազգէն, Մեծին քաջին Վարդանայ Մամիկոնեան իշխանի դուստր, և Սրբոյն Մեծին Սահակայ Պարթևի Հայոց հայրապետի թոռնեայն, իւր ամուսնոյ նման չկամեցաւ քրիստոնէական հաւատն ուրանալ և կրակ պաշտել. էնտուր համար՝ Վազգէն իշխանն նրան սպանեց չարաչար տանջանքով: Այժմ Մէտէիի եկեղեցւոյ մէջ՝ ձախակողմեան խորանումն ցոյց են տալիս նորա գերեզմանն և յիշատակ ևս կայ դրած, և ջերմեռանդից համար ուխտատեղի է:

Որովհետեւ Թիֆլիս քաղաքի պատմութեան մէջ այնքան զուարճալի բան չկայ, որքան տրտմալի, և ամենայն տեղ երևում է թշնամեաց խստութիւնը և բնակչաց նեղութիւնը, նորա մանրամասն պատմութիւնը թողունք այլ ժամանակի. միայն յիշենք նորա այժմեան շինուածքներն, որն որ հին ժամանակներէն մնացել են, կամ որն որ նոր շինուել են Ռուսաց տէրութեան ժամանակն՝ կամ թագաւորական ծախուք, կամ հասարակաց:

Հին շինուածոց մէջ երևելի են՝ ա) Կաթողիկէ եկեղեցին, որ կասվի Բերդի մեծ եկեղեցի, Հրեշտակապետաց եկեղեցիէն որոշելու համար, որ կասվի Բերդի փոքր եկեղեցի: Այս Կաթողիկէ եկեղեցւոյ շինութիւնը՝ հինգ հարիւր իննսուն և երեք տարի է, որովհետեւ շինած է Քրիստոսի 1251, իսկ Հայոց Չ թուականին: Թէ եկեղեցւոյ տաճարը և թէ իւր շրջապատի շինուածքը չէ կարելի համարիլ նոր. և եթէ նորոգութիւն ևս պատահել է շրջապատի շինուածքի

մէջ, էլի նոյն հին հիմքի վրէն է շինած: Ուրեմն քաղաքի շինութեանց մէջ հազիւ կը գտնվի սրա նման հին շինուածք, բացի յիշեալ կրակատունէն, և մէկ քանի հին հին շինութիւններէից, որոց թիւն յայտնի չէ: Այս եկեղեցւոյ անունն սկիզբէն ևս Կաթողիկէ է էլած, որովհետև Հայաստանի քարուքանդ ժամանակն այս եկեղեցումն նստել են Գանձասարայ կամ Աղուանիս կաթողիկոսք, կարելի է թէ և Էջմիածնի կաթողիկոսք, և միշտ՝ Հաղբատայ առաջնորդք:

Եկեղեցւոյ դրսէն աջակողմեան դրան վերի կողմն կայ քարի վերայ փորագրած յիշատակ: Այս յիշատակէն յայտնուում է նախ՝ որ եկեղեցւոյ անունն էլած է Կաթողիկէ, երկրորդ՝ շինողն եղել է Ռմէք իշխանը Հայոց. երրորդ՝ եկեղեցւոյ շինութիւնը եղել է Ձ. թուին Հայոց: Բայց այս յիշատակարանն, որպէս երևում է, նենգամտութեամբ ակրված է: Նոր յիշատակարան կայ նոյն պատի վրայ՝ դրան ներքի կողմն, և այն տեղ գրած է թէ այս եկեղեցին շինվել է Հայոց Ձ. թուականին. և այս վերջին թիւն հաստատելու համար և եկեղեցին ակելի հին ցոյց տալու համար այն անգուգական արձանն եղծել են:

Այս եկեղեցւոյ մօտերումն Քարիմատին իշխանի տանն, որ էր որդի վերոյիշեալ Ռմէք իշխանի, 1284 թուին կեցել է սուրբ վարդապետն Հայոց Յովհան Երզնկացին կամ Ծործորեցին, որ Պլուզ կասվէր<sup>1</sup>, այսինքն՝ կապուտակն, և յիշեալ Ռմէք իշխանի կրտսեր որդւոյ Վախթանգի խնդրանօքն շարադրել է Երկնային վիպասանութիւն ասացեալ գիրքն, որ տպուած է Ռուսաստանումն, և շատ ժամանակ իւր աստուածաբանական քարոզներն խօսել է այն եկեղեցւոյ մէջն՝ բարեպաշտ հայազգի քրիստոնէից համար: Հայոց պատմութիւնն Չամչեանի (հատ. Գ. երես 272) այսպէս է գրում. “Դէպ եղև նմա այսինքն սուրբ վարդապետին Յովհաննու Երզնկացոյն գնալ ըստ պատմելոյ իւրոյ ի Տփլիս մայրաքաղաք Վրաց, ի թուին Հայոց ՁԼԳ 1284 և ազաւ անդ ի տան մեծի իշխանին Հայոց, որ կոչիւր պարոն Քարիմատին, որդի դստեր քաջ իշխանին Ջալալայ՝ տեառն Խաչենոյ և ըստ իւրում առատ և հոգելից վարդապետութեան քարոզէր անդ յեկեղեցւոջ, զոր շինեալ էր Ռմէկ իշխան՝ հայրն Քարիմատինայ: Եւ ի միում նուագի խօսեցաւ ի վերայ սքանչելարուեստ արարչագործութեանց Աստուծոյ, և մանաւանդ յաղագս զարդու երկնից և շարժման երկնային մարմնոց. և եղև այն ախորժելի յոյժ լսողաց բանին յոր առաւել հարեալ սիրով Վախթանգ գուարթամիտ պատանի, կրտսեր որդի Ռմէկայ աղաչեաց բա-

<sup>1</sup> Իրականում նրանք տարբեր հեղինակներ են - Պ. Մ.

զուրկ թախանձանօք զՅովհաննէս վարդապետ յօրինել զրով ճառ ընդարձակ ի վերայ այնց իրաց և շնորհել ինքեան: Ի նոյն ստիպեաց զնա և Յովհաննէս եպիսկոպոս Հայոց՝ առաջնորդ տեղւոյն: Եւ նա շարագրեաց գիրք մի իմաստուն բանիւք, յորում խօսի ի վերայ թուոյ երկնից և շարժման լուսաւորաց, և կարգի տարերաց, և եղեանակաց տարւոյ, և ի վերայ այլոց բնական իրաց»:

Այս եկեղեցւոյ հնուիւթիւնն ցոյց է տալիս, որ Հայոց ազգն շատ ժամանակ է, որ Թիֆլիս քաղաքումն բնակուած են: Թէպէտ պատմութիւնն հարեանցի յիշում է, բայց նշաններն ևս ցոյց են տալիս, որ Հայոց բնակիւթիւն այս քաղաքի մէջ հազար տարւոյ չափ կայ: Թողունք քան զայն յառաջ բնակութիւնն: Երևում է. որ Բագրատունեաց թագաւորութիւնն, որ հաստատուեցաւ Վրաստանի մէջ, այնուհետև Հայոց ազգն ևս այս կողմերն բնակուեցան, և նոցա բազմութիւնն որ մինչև ցայժմ երևում են Սոմխէթի կողմն, յայտնի հաստատում են, որ այն կողմերու հին վաղեմի բնակչաց մասն են: Այս ամենայն գուշակում ենք Կաթողիկէ եկեղեցւոյ հնուիւթիւնիցն: Այլ այս եկեղեցին միշտ իւր պայծառութեան մէջ մնացած է: Շատ անգամ այլազգիք այն եկեղեցին քարուքանդ են արել և Հայոց ձեռքէն յափշտակել են որպէս որ ինչ ժամանակ մեծն Ծահ Աբբաս եկաւ Վրաստան 1617 թուին և Թիֆլիս քաղաքն առաւ. Կաթողիկէ եկեղեցին որովհետև բերդի մէջն էր, միջնաբերդի նարիդալայի մօտ, և Հայոց ձեռումն պատշած չտեսաւ որ մնայ, բոլորովին խլէց. այն ժամանակն Հայոց ազգն եկան քաղաքի մէջ, շինեցին միւս Փոքր Կաթողիկէ եկեղեցի, և անունն դրին Նորաշէն: Նորաշէն կաթողիկէ եկեղեցւոյ շինութիւնն որ էլաւ 1649 և 1650 թուին, Հայոց Ռ.Ղ.Ը. և Ռ.Ղ.Թ. թուին, այլ պատճառ ևս ունի: Որովհետև հին Կաթողիկէ եկեղեցին շինուած էր այն հրապարակի մօտ՝ որ կասկի Թուրքի մէջտան, մեր Հայոց կանանց պարկեշտութեան չէր վայելում թուրքաց մէջէն անցուղարձ անել, էնտուր համար Նորաշէն Կաթողիկէն ուզեցան ունենալ քաղաքի մէջ, որ իսկական Հայոց թաղումն էր, և կանանց՝ թուրքաց աչքէն պահպանուելու յարմար: Նորաշէն եկեղեցւոյ մէջ կան երեք մարմարիոն խաչքարի վրայ գրած յիշատակներ, որոց առաջինն 1649 Ռ.Ղ.Ը. թուին գրած է այս օրինակ. Սուրբ Խաչս բարեխաւս է Նազարին և կողակցուն Եագունդուն, և որդւոցն՝ Պալիան, Բաղդասարին, և ծնողացն՝ Բերդիմին, Բէգի խաթունին, և եղբարցն՝ Ծարոյին և Զուրապին, ի թուականին Ռ.Ղ.Ը. Հայոց:

Երկրորդն 1650 թուին, Հայոց Ռ.Ղ.Թ. գրած Սուրբ խաչս բարեխաւս է Ուստայ Պետրոսին ջուղայեցի, որ շինեց զԿաթողիկէ Սուրբ եկեղեցիս, յիշեցէք և Աստուած ողորմի ասէք՝ ամէն:

Երրորդն, Սուրբ Խաչս յիշատակ է Խոջայ Սարգիս ասպաճանցոյն և իւր որդւոյն Մարտիրոսին... ըբար եղև ի շինութիւն սուրբ եկեղեցւոյս. թուին ՌՁԹ:

Այս երեք քարի յիշատակներն ցոյց են տալիս, որ այս նորաշէն եկեղեցին այժմ՝ երկուհարիւր տարուան եկեղեցի է, և սրա շինողքն եղած են ջողայեցի Ուստայ Պետրոսն, Խոջայ Նազարն, և Խոջայ Սարգիսն: Բայց ժամանակաւ նորոգվել է, և վերջին նորոգութիւնը՝ քաղաքի քանդակէն յառաջ սկսաւ, բայց Աղայ Մահմատ Խանի գալով՝ կարօտ եղաւ նոր նորոգվելու: Վերջապէս բարեպաշտ ժողովրդոց տուրքով Խոջա Նազարի ժառանգներու ջերմեռանդութեամբ, նորոգ շինուեցաւ, լայնացաւ, ընդարձակվեցաւ, և իւր իշխանաց փողով և Թամամշովեանց առատ օգնութեամբ՝ երեսփոխան Գաբրիէլ Քափանակովի ժամանակն վերջացաւ. և այժմ օր ըստ օրէ զարդարուում է: Խոջայ Նազարի գերեզմանն այժմ՝ ևս ցոյց են տալիս եկեղեցւոյ մէջն, իսկ այլոցն չէ երևում կամ այնտեղ չեն թաղւած, կամ տեղն մոռացւել է:

Բայց երբ որ Օսմանցիք՝ Պարսից ազգին դուրս արին, այն Հին և մեծ Կաթողիկէ եկեղեցին ևս նոցա ձեռքէն ազատուեցաւ. և այնուհետև երևում է, որ թէպէտ քաղաքն զանազան փորձութեանց մէջ ընկաւ, բայց ամենայն փոփոխութեանց ժամանակին՝ այն Կաթողիկէ եկեղեցին մնում էր ազատ: Ռոստոմ թագաւորի ժամանակն՝ 1658 թուին<sup>1</sup> կատարեալ նորոգւեցաւ. և այն օրից դէս, մինչև Աղա Մահմատ Խանի գալն մնաց անվնաս: Այն ժամանակն, այսինքն 1795 թուին միւս եկեղեցեաց նման Կաթողիկէ եկեղեցին ևս թշնամեաց ձեռք ընկաւ, բայց էլի միւսանգամ շուտով շինուեցաւ. և երբ Ռոսսաց տէրութեան ներքոյ ընկաւ Վրաստանը, այնուհետև ոչինչ փոփոխութիւն չունեցաւ:

«Արարատ», Ա. տարի, № 4, 1850 Սեպտեմբերի 23, էջ 49-54:

<sup>1</sup> Բնագրում՝ 1758 թուին:

## 6

## [ԱՆԱՆՈՒՄ]

## ԹԻՖԼԻՍ

Այս քաղաքի մէջ բնակվող մարդը՝ հազիւ թէ կարող է իմանալ քաղաքի օր ըստ օրէ պայծառանալը, լքցվիլը, բազմամարդ դառնալը, որովհետեւ ամենայն օր շինուում է, ամենայն օր նոր նոր բաներ է աւելանում. այսօրւան տեսածդ երեկւան տեսածիդ վերայ շատ մեծ զանազանութիւն է ցոյց տալիս, վասն որոյ աչքդ սովոր լինելով, չէ կարողանում իմանալ՝ թէ որքան ժամանակի մէջ որքան բան է աւելացած:

Թող մէկ մարդ թիֆլիզէն մէկ տարի հեռանայ և վերադառնայ, այն ժամանակ կ'իմանայ թէ ի՞նչ փոփոխութիւն կայ: Այն մէկ տարւայ մէջ քանի երևելի շինուածք է աւելացել. քանի՞ ճանապարհներ են շինուել. քանի գեղեցկութիւն է ստացել քաղաքը: Ես 1846 սկիզբը եկայ այս քաղաք: Մոսկովէն սկսած մինչև թիֆլիս, բաց ի Օդեսա քաղաքը, չկայր այնպիսի քաղաք, որ հաւասարէր թիֆլիսին: Բայց այժմ թո՛ղ տեսնեն թիֆլիսը. այս վեց տարւան մէջ որչափ մեծացել և որչափ գեղեցկացել է: Քաղաքի սիրտը կհամարվի Երևանայ որդոստայն. այս ընդարձակ լայն և հարթ որդոստայի մէջ բարձրացել է թիֆլիսու Պալէ Ռոյէալը, նոր թէատրոնի շինութիւնը, որ հայազգի աղայ Գաբրիէլ Թամաշեանը շինել է, չորեքկարգեան խանութներով, շրջապատված սիւներով, կամարայարկ պատշգամբներով, առանց չափազանցութեան խօսելով, քաղաքի մէջ առաջին մեծակառոյց շինուածքը: Այս թէատրոնի շինութեան հարաւային կողմը ընդարձակ և լայն որդոստայի ճակատումը երևում է ոստիկանութեան (պոլիցի) շինութիւնը: Որդոստայի բոլոր ընդարձակութիւնը քարայտակ է արած և դեռևս չէ աւարտած: Քարայտակը այն տեղէն սկսած՝ հասանում է մինչև Փոխարքայի ապարանքը. ուր որ սկսում է Գոյովիանեան պողոտայն (պրոսպեկտ):

Այս երևելի պողոտայն, որ Ռուսաստանէն եկող ճանապարհորդներու՝ թիֆլիս քաղաք մտնելու ճանապարհն է, շատ գեղեցիկ և պայծառ զարդարած է զանազան շինուածքներով. որոց մէջ՝ Փոխարքայի տանէն դէպ ի հարաւ (դէպ ի պոլից կամ դէպ ի Թէատրոնը) կան ընդարձակ պարտէզ՝ զբոսարան հասարակաց, Գլխաւոր շտաբի տունն, առաջին դէպոյ Արծրունոյ տանը, գաւառական դատաստանատեղիք, իշխանազնեայ Սմբատեանցի տունն, և այլ զանազան

խանութք և կրպակք մեծամեծք գեղավաճառութեան, և նոր գեղեցիկ գործուածքներու, արհեստներու, Եւրոպացի արհեստաւորներու: Այս շինուածոց երեսն է դեպ արևելք: Սորա հանդիպահայեաց կողմն, որոյ երեսն է դէպ արևմուտք: Հին Գիմնագիայի տեղն, որ գնեց պատուանուն քաղաքացի Յովսէփ Միրիմանեանցն, լցել է զանազան եւրոպացի արհեստաւորաց կրպակներով, որոց ծայրը հասանում է մինչև Հայոց սուրբ Գէորգ եկեղեցին՝ անուանեալ Քամոյեանց: Այստեղ՝ Փոխարքայի ապարանից առջևն բացվում է լայն ընդարձակ և մեծ որգոստայ, որոյ արևելեան կողմն է ժողովավայր (Գլուրն), նորա մօտ՝ հին ծառատունկն (Բուլեվարն), նորա հանդէպ գլխաւոր Ղառակտվախտն, նորա հանդէպ արևմտեան կողմն Զինարանն (արսէնալ) նորա մօտ Ճեմարանն (գիմնազիա) և այնուհետև անընդհատ եռայարկ և քառայարկ տներ, որոյ ծայրը հասանում է մինչև Մոսկովեան քաղաքադուռը: Այս ուղղագիծ պողոտայի վերայ՝ Մեծ պարտէզի դուռնէն սկսած, գնում է մէկ նոր սալայատակ լրիկ կամ մայթ (տրոտուար) որոյ երկու կողմէն կայ ծառատունկ: Սալայատակը և ծառատունկը իսկապէս Պետրբուրգայ հիւրանոցի (Ղօստիննի դվորի) սալայատակին և ծառատունկին նմանն է, բայց սորա ծայրը պիտի հասնի մինչև Մոսկովեան քաղաքադուռը և այն ժամանակ 530 գրկաչափ երկայնութիւն ունենալով, համարեա՛ թէ 30 գրկաչափ երկայնութեամբ կլինի աւելի քան զՄոսկովու Տվերեան բուլվարն: Բացի սալայատակ տրոտուարէն, բոլոր պողոտայն քարայատակ գեղեցիկ սիւներ, սիւներու գլխին լապտերներ՝ կազով գիշերները քաղաքը լուսաւորելու համար՝ ինչպէս որ է Պետրբուրգայ Նեվաեան պրոսպեկտն:

Քանի տարի առաջ այս տեղերու ցեխն անտանելի էր. այժմ ոտքիդ կօշիկները թաց չի լինիր, թէև որչափ անձրևային լինի եղանակն: Առաւօտէն մինչև երեկոյ, երեկոյէն մինչև լոյս անցողարձ անողները՝ թէ հետեակ, թէ ձիով, թէ սայլով, թէ կառքերով, անդադար որպէս թէ եռացման մէջ են, մանաւանդ նոր Թէատրոնի շրջապատումն, որ որովհետև քաղաքի կեդրոնումն է կամ լաւ ևս՝ հին և նոր քաղաքի միջակէտն, և կրպակները ապրանքով լիքը, և շրջակայ մեծամեծ տներու ներքին յարկը բոլորովին խանութ են դառել, այն պատճառաւ երբէք չէ կարողանում այնտեղ լուռութիւն լինել: Գիմնագիայի պողոտայէն դէպ արևելք դէպ ի վայր իջնելով, առջևդ կելանէ Ալեքսանդրեան որգոստայն՝ ընդարձակ և լայն. ուր որ ձախակողմդ Թումանովեանց տանն բովանդակվում է Յենստրի Կոմիտեան, փոքր ինչ դէպ ՚ի վայր՝ Կորպուսնի աւագ եկեղեցին նորաչէն, քան զայն վայր՝ Շտարի հրամանատարի տունն, քան

զայն վայր՝ նորա օգնականի տունն, և Ինժեներնի հրամանատարի տունն, այն տեղէն՝ պողոտայի միւս կողմն գլխաւոր Հրամանատարի քաղաքական կառավարութեան յայսկոյս Կովկասեան ծագաց ապարանքն, և Գլխաւոր խորհրդարանի այս մեծ կառավարութեան ատեանն, որոց երկուսի մէջն՝ Կուր գետոյ վերայ շինուում է հրաշակառոյց քարաշէն կամուրջն՝ մի յերևելի շինուածոց այս ծագաց:

Քաղաքի նոր փոփոխութեանց հետ յիշելու արժանի է և այն նոր պողոտայն, որ կոչուեցաւ Փոխարքայի անուամբ՝ Վորոնցովեան, որ սկսում է Թաքար Բագար ասած որդոստայէն, և Կուր գետոյ ընթացիւք գնում է մինչև մաքսատունը, չորս հարիւր քսան և հինգ գրկաչափ երկայնութեամբ, որ ըստ մեծի մասին քարայրատակ է շինած. և ժամանակաւ կլինի Թիֆլիսու Անգղիական գեաեզր, ուր որ շինուում է միւս ևս նոր գեղեցիկ կամուրջ, որով քաղաքը չորրորդ կամրջով կմիաւորուի Նախընդարձանի հետ, որովհետեւ երկու հին կամրջով միաւորուած է Հալապարի հետ և մէկ անհաստատ կամրջով՝ Կուկիայի հետ և Գերմանցոց կոլոնիայի հետ: Անհաստատ ասացի. որովհետեւ իւրաքանչիւր տարի՝ երբ որ Կուր գետը ջրոյ յորդութիւնով կամ մակընթացութիւնով աւելանում է, այն կամուրջն խափանւում է, և այն հրաշակառոյց քարեայ կամուրջն փոխանակ սորա է շինվում: Եթէ որ այն կամուրջը աւարտուի, այնուհետեւ Կուկիայ և միւս արուարձանները, ուր որ այժմ գեղեցիկ և լայն պողոտաները և մեծամեծ ապարանաձև տները և կրպակները անթիւ են, այնքան կգեղեցկանան և կպայծառանան, որ համարեա թէ կգառնան միւս ևս Թիֆլիս: Չեմ կամենում յիշել աւագուտ ծանծաղը Կուր գետոյ միւս երեսին, ուր որ մէկ ժամանակ միայն ուղտերամակաց մակաղատեղ էր, այժմ գեղեցիկ շինուածներով լցւել է:

«Արարատ», Ա. տարի, № 30: 1851, Ապրիլի 7, էջ 469-472:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ



ԳԻՏԵԼԻՔ

Ձեռագրական հիշատակարանների այս համեստ քանակությունը հարկավ չի ամփոփում Թիֆլիսի հայոց միջավայրում ստեղծված կամ գործածված գրչագրերի ամբողջությունը, այլ պարզապես կոչված է վկայելու այդ կարգի հետաքրքրության ներկայությունը հայաշատ այս քաղաքում: Ընդ սմին՝ պիտի նկատի ունենալ, որ նոր է սկսվել հայկական ձեռագրական հավաքածոներից խոշորագույնը՝ Մատենադարանի գրչագրերի նկարագրությունը, իսկ Թիֆլիսի Ձեռագրերի ինստիտուտի հայկական հավաքածոն նկարագրված է, բայց հրատարակված չէ: Լրացումների կարոտ են արդեն տպագրությամբ հայտնի հիշատակարանային ժողովածուները, ընդ որում ԺՁ. և ԺԸ. դարերի նյութերը դեռ պետք է հավաքվեն, իսկ ԺԷ. դարի երկրորդ կեսը՝ լրացվի:

Մեր ժողոված հիշատակարան-հիշատակագրությունները բավականաչափ օգտակար եղան Թիֆլիսի հայոց առանձին եկեղեցիների հիմնարկության ժամանակն ու գործիչների ժամանակագրությունը ճշտելուն: Սակայն երկար ժամանակ ու աղբյուրագիտական հանգամանալի պրպտում կպահանջվի մանավանդ վավերագրերի ամբարած նյութը ճանաչելու և գնահատելու համար: Չպիտի մոռանալ, որ Վրաստանի մայրաքաղաքում ապրող հայության համար հասկանալի ու գործածական էր նաև վրացերեն լեզուն, իսկ իրավական գործություն ունեցող փաստագրումները կատարվում էին հիմնականում երկրի ու պաշտոնեություն լեզվով: Մի խոսքով, անհրաժեշտ է տևական ծրագրված աշխատանք վերահայության պատմությունը գրելու համար: Մեր կատարածը առ այդ կոչված քայլերից մեկն է:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հիշ. Ե-ԺԲ. = Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ. դդ.: Աշխատասիրությունը Ա.Ս. Մաթևոսյանի, Երևան, 1988:
- Հիշ. ԺԳ. = Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ. դար: Կազմեց Ա.Ս. Մաթևոսյան, Երևան, 1984:
- Հիշ. ձեռ. = Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա. (Ե. դարից մինչև 1250 թ.), ՌՆ.=1951: Անթիլիաս:
- Հիշ. ԺԴ. = ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Կազմեց Լ.Ս. Խաչիկյան: Երևան, 1950:
- Հիշ. ԺԵ. Ա. = ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Մասն առաջին (1401-1450 թթ.): Կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1955:
- Հիշ. ԺԵ. Բ. = ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Մասն երկրորդ (1451-1480 թթ.): Կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1958:

- Հիշ. ԺԵ. Գ. = ԺԵ. դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Մասն երրորդ (1481-1500 թթ.): Կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1967:
- Հիշ. ԺԷ. Ա. = Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.): Հատոր Ա: Կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան: Երևան, 1971:
- Հիշ. ԺԷ. Բ. = Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.): Հատոր Բ: Կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1978:
- Հիշ. ԺԷ. Գ. = Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.): Հատոր Գ.: Կազմեց Վազգեն Հակոբյան, Երևան, 1984:
- Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի = Ցուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, Հատ. Բ.: Կազմեց Լ.Գ. Մինասեան, խմբագրութեամբ Օ.Ս. Եգանեանի, Վրեննա, 1972:
- Մայր ցուցակ հայ. ձեռագրաց = Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հատ. Ա, կազմեցին Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, խմբագրութեամբ Աս. Մնացականյանի, Օ. Եգանեանի, Երևան, 1984: Բ. կազմեցին Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան, Երևան, 2004: Գ. կազմեց Օ. Եգանեան, Երևան, 2007: Գ. կազմեցին Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, Երևան, 2008:
- Մայր ցուցակ... ի Վենետիկ, Հատ. Ե., յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1995, Հատ. Է, Վենետիկ, 1996:
- Մայր ցուցակ... Երոպայի... = Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու, Հտ. Ա, Փարիզ, 1950:
- Մայր ցուցակ... = Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Հ. Գ., Դ., Ե. ... Է., ԺԱ., կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուս., 1968, 1969, 1971, 1974, 1991:
- Manuscrits arméniens... = *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France. Catalogue, Paris, 1998.*

*А. И. Туманов*, Армянские гревные рукописи монастыря св. Фомы, СМОМК, вып. XXIX, Тифл., 1901, отг. I, стр. 1-18.

1

ՇԱՐԱԿՆՈՑ\*

(ՍՍ, կաթող. դիվան, թղթ. 228, վավ. 17)

1073

Գրիչ՝ Մկրտիչ քահանայ  
Վաչր՝ Տփխիս

«...79. Շարական. վայելուչ հին բոլորգիր, որպէս երևի ի յիշատակարանէ գաղափարեալ է. ի ՇԻԲ (1073) թուականին (առանց յիշելոյ մարդեղութեան թէ Հայոց), ի Փայտակարանի ի մեծ քաղաքին, որ Տփխիս ասի, ընդ հովանեալ Կամակատար Սուրբ Աստուածածնի և Սուրբ Սարգսի ի Մկրտիչ քահանայէ ի խնդրոյ Ամիրի՝ ի վայելումն որդւոց նորա սարկաւագ Եգեկիւղի»:

Յաւելեալ է այլ իմն ձեռագրով, թէ «Աստուածատուր եպիսկոպոսն նորոգեալ և կազմեալ է գայն ի ՌԽՐ (1093) թուին յերուսաղէմ, ի վանքն Հայոց ընդ հովանեալ Սրբոյն Յակոբայ Տեառն եղբօր Յոհաննու Աւետարանչիւն, յառաջնորդութեան տէր Դաւիթ աթոռակալ արքեպիսկոպոսի Երուսաղիմայ և ի հայրապետութեան Կիրիկիոյ տեառն Ազարիայ քաջ ըրբունեպետի» (էջ 6րv):

Հմմտ. Հիշ. Ե-ԺԲ, էջ 108

\* «Յուցակ գրչագիր մատենից Գալստի Շերմազանեանց, ժողովեալք ի միջոցս 30 ամսոց ճանապարհորդութեան իւրոյ»: Համառոտակի ցուցակագրված է, երբեմն նաև ուշագրավ հիշատակարանների ընդգրկմամբ, Գալուստ Շերմազանյանցի հավաքածոյի 204 գրչագիր միավոր (էջ 1r-18r): Նկարագրութեանը հաջորդում է նույն անձի ունեցած սպագիր գրականութեան ցանկ, բայց առանց համարակալման, նույն գրչութեամբ: - Տպագիրները օժտված են հրատարակութեան թվականով, որոնց մեջ ամենաուշը 1863 թ. «Կռունկն» է: Հետևաբար այդ թվականից հետո է կազմվել ողջ ցուցակն ու ցանկը, ներառյալ 20v էջում եղած 16 միավոր առարկաների թվարկումը: Հնարավոր է, որ վերջում այլ նյութեր են եղել, բայց այս նյութերին չառնչվելու հանգամանքով կտրվել են:

Գ. Շերմազանյանցի ձեռագրական հավաքածոյի հետագա ճակատագրի մասին Լևոն Գյանջեցյանին գրած նամակում էնֆիւլյանցը հայտնում է. Թիֆլիսի քաղաքագլուխ Գ. Շերմազանյանցի մահից հետո «ձեռագիրները անցան զանազան անձանց ձեռք, որոնք փչացնում են՝ ոմանք այրելով, ոմանք ջուրը գցելով և այլն, որովհետև վախենում էին բռնվելուց (քանի որ տունը թալանելիս էին դրանց տիրացել Պ. Մ.)»: Հավաքածոյից Հակոբ Կարենյանի գնման շնորհիվ փրկվածներից է ՇԿԲ (1113) թվականի Դրազարկի Ավետարանը, որ Կարենյանի մահից հետո գնել է նշյալ գրավաճառ էնֆիւլյանը և ծախել Տյուբինգենի համալսարանի գրադարանին (տե՛ս Verzeichniss der armenischen Hamschriften der Koniglichen Universitätsbibliothek von F. N. Finck und L. Gyandschezian, Tübingen, 1907, S.5.):

## 2

ՂԱՎԻՌ ՔՈՒԱՅՐԵՑԻ, ՍԵԿՆՈՒԹԻՒՆ ՃԱՌԻՑ ԳՐԻԳՈՐԻ  
ԱՍՏՈՒԾԱԲԱՆԻ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՆԻՒԱՅԻՆՈՅ

(Երևան, ՍՍ, № 5602, էջ 271 րv)

1178

Գրիչ՝ Դավիթ Քոբայրեցի  
Վայր՝ Հաղբատ

...Իսկ նա (իմա Վրաց թագաւոր Գէորգին - Պ. Մ.) վասն զի տակաւին ընդ ձեռամբ ունէր զքաղաքս և զամրոցս սեփականս թագաւորելթեան իւրոյ, և զգանձարանսն արքունիս, ընթանայ ի մեծ շահաստանն Տփլիս և ի խորհուրդ միաբանութեան կոչէ զմտերիմս թագաւորութենէ իւրոյ, և նոցին խորհրդակցութեամբ խոստանայ և բաշխէ գանձս ոսկւոյ և արծաթոյ և հանդերձս պատուականս ըստ արժանի խառնիճաղանջ հետեակ սպառազինացն Գուալեթոյ, և ոյք ի սահմանս Քարթլ գաւառի, զորս ի մի վայր գումարեալ՝ գայ հասանէ ի հայրենի գաւառն սպարապետին, և յաւարի խաղացոցեալ՝ հրձիգ առնէ զապարանս նոցա, և ինքն խաղա[յ] հասանէ ի սահմանս ապստամբացն, զոր ի բացուստ տեսեալ ապստամբացն, զանգիտեալ ի փախուստ դառնային՝ ամրանալ ուր և դիպեսցի:

Իսկ սպարապետն Իւանէ որդովքն և կնաւն և ամենայն աղխիւն գայ մտանէ յանառիկն Լաւոէ, և եղբայր նորին Լիպարիտ իւրովքն ժողովովք և յարտաքուստ միաբանեցելովքն առնու զորդի թագաւորին զԳեմետրէ և դիմէ յանմատոյցն Վաչան, որոց զհետամտեալ հրամանաւ թագաւորին բարեպաշտ ամիրապետն Տփլեաց Քորդն առնուանեալ, հասանէ ի կիրճս ճանապարհի նոցա՝ իւր սեփական գաւառն Մահկանաբերդն կոչեցեալ, հարկանէ դէմ յանդիման նոցա զաւազափողն պատերազմի և ի փախուստ ընդ կրու[ն]կն դարձուցանէ, որոց զհետմտեալ առնու զկահ և կարասի բանակին, և ձիապուրծ միայն զերծեալք հասանեն և նոքա ի դղեակն Լաւոէ, և ամենայն ազգ ապստամբացն ի մի վայր գումարին...

Հիշ. Ե-ԺԲ դարեր, էջ 223-224

3

ՃԱՌԸՆՏԻՐ

(Երևան, ՄՄ. ձեռ. № 3777, 2v)

1195

Գրիչ և ստացող՝ Մարկոս և Մխիթար կրոնավորներ  
Վայր՝ Գուին, Սաղմոսավանք

*...Նտինքս ի կրանաւորքս և առաջինքս ի մեղաւրքս՝ Նս Մարկոս և Մխիթար ստացաք զգիրս զայս բազում աշխատութեամբ, զի գերեցին զմեզ և ալափեցին և տարան ի Գուին, և զմասն ի սմանէ ընդ մեզ, զոր դրամագին արարեալ, դարձուցեալ, կատարեալ կազմեցաք ձեռամբ մերով և տուաք ի Սաղմոսավանք՝ յիշատակ մեզ և ծնողաց մերոց, ի զարդ եկեղեցեացս Սուրբ Գրիգորիս, Աստուածածնիս, Կարապետիս և Գեորգա[յ] Զարավորիս:*

*...Զեղբայրն մեր Քառասունքն կրանաւորական կարգաւք պատուեալ, որ զնիւթ կազմութեան սորա եբեր ի Տփխեայ, և զաւղ և կոճակ՝ յԱն[յ], յիշեսլիք ի Քրիստոս, և Տէր յիշողացդ ողորմեսցի, ամէն:*

Հիշ. Ե-ԺԲ դարեր, էջ 285

4

ԱԲԵՏԱՐԱՆ

(Երևան, ՄՄ., № 7570, 15 228r)

1214

Գրիչ՝ Յոհաննէս Հոռմկլայեցի  
Վայր՝ Հոռմկլայ (°)

*Ի Վեցհարիւրերորդի վաթսուներորդի երրորդի շրջագայութեան տոմարի Հայոց, ի հայրապետութեան տեառն Յոհաննիսի կորովամիտ և խոհեմ առաջնորդի, և ի թագաւորութեան Լևոնի որդոյ Ստեֆանէի, և ի սուլտանութեան Մելք-ըլ-ետերն, որ տիրէր Եգիպտոսի, և սուրբ տեղեացն՝ մայրաքաղաքին ամենայն տիեզերաց Երուսաղէմի և Գամսակոսի, և Եղեսեա, և Ծոփաց երկրին, Ղլաթա[յ] մինչև ի սինաւոն Վրաց, և ի թագաւորութեան Վրաց Լաշու, որ տիրէր Տփխեաց և Անույ և այլ բազում քաղաքաց առաջին տանուտերացն Հայոց, Ալանաց և Աղւանից, ի Կարնոյ մինչև ի Պարս, և ի բռնակալութեան որդւոյ Խաւարովշահին, որ տիրէր երկրին Հոռոմոց, Կեսարիոյ, Սեբաստոյ և Կաւնիւն...*

*Գրեալ եղև ձեռամբս նուաստ գրչի Յոհաննիսի սարկաւագի <Հոռ>մկլայցւո...*

Հիշ. ԺԳ դար, էջ 84-85

## 5

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Գ. Յովսեփեան, Յիշատակարանք, էջ 1017-1018)

1232 (?)

Գրիչ՝ Ստեփանոս  
Վայր՝ Գետիկ

*Յիշեսջիք ի Քրիստոս զսուրբ վարդապետն Մխիթար (խոսքը Գոշի մասին է - Պ. Մ.) և զամենայն միաբան եղբարքս սուրբ ուխտիս, որք կամակից և ձեռնտու եղեն սուրբ Աւետարանիս:*

*Յիշեսջիք զՍաղունն՝ զբարեպաշտ իշխանն\*, որ զծախսն սորա ետ: Յիշեսջիք զՍերոբ և զՅովսասփ և զեղբարս նոցա և զծնողսն իւրեանց, որ զնիւթս պատրաստեցին և ետուն կազմել զԱւետարանս:*

*Յիշեսջիք զՍարգիս իմաստուն Հռետոր և սրբասէր կրօնաւոր՝ և զծող սորա զՍտեփանոս աշակերտ նորին, որ սպասաւորեցի նմա; Եւ որք յիշէք՝ Քրիստոս Աստուած ամենեցուն վարձս բարեաց պարզեցցէ և նմա փառք յաւիտեան: Ամէն:*

Հիշ. ԺԳ դար, էջ 183-184:

## 6

## ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Երևան, ՍՍ, ձեռ. № 4823, էջ 156r)

1238

Գրիչ՝ Վանական վարդապետ  
Տեղ՝ Տփիսիս

*Ես Վանական գրեցի իմով ձեռամբս ի Տփիսիս քաղաքի, ի զբան Սուրբ Քառասնիցս, զի գերեալ էր Աւետարանս ի Տաղշոյ ի Մողան ի Թաթարէն, և յետ երից ամաց աստ բերե(ա)լ անվնաս վաճառեցին ի ՈԶԷ. (1238) Թուիս, զոր փառաւոր աւագէրէց Սարգիս, հասարակ պատուական քահանայիւք և աստուածասէր ժողովրդական տանուտէրաւք, բազում ծախաւք և աշխատութեամբ զնե(ա)լ ետուն ի մեզ, որոց տացէ Քրիստոս փոխադարձ զսուրբ արքայութիւնն և զզրախտն, արձակե(ա)լ ի կապանաց մեղաց, հանե(ա)լ ի խաւարէ ի լոյս անմատոյց, աստէն պահելով ի շինութեան և ի խաղաղութեան բարեխաւսութեամբ Սուրբ Աւետարանիս և ամենայն սրբոց իւրոց, ամէն:*

Հիշ. ԺԳ դար, էջ 203

\* Իմա՝ Թիֆլիսի ամիրա Քրդի որդի Սագուն Մահկանաբերդցուն:

7

ՅԱՂԱԳԱ ԵՐԿԼԱՅԻՆ ՆԱՐԺՄԱՆՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ  
ԵՐՁԵԿԱՅԻՈՅ

(Երևան, ՍՍ, ձեռ. № 10337, էջ 167r - 168v)

1284

Հեղինակ՝ Յովաննէս Երզնկացի  
Վայր՝ [Տփխիս]

Յաղագս երկնածին շարժմանն նուաստ Յոհաննիսի Եզնկեցոյ շարագրեալ  
ինաստնոյն բանից ի խնդրոյ բարեպաշտ և երկիղազարդ պատանոյն պարոն Վախ-  
թանկայ

*Ամենայն ոք որ զբան, որ է ծնունդ անմարմին մտաց, գրով ի  
քարտիսի կամիցի դրոշմել՝ պարտի և զնորին պատճառն յանդի-  
ման կացուցանել, որպէս զի վերջին ժամանակին ծննդոց մարդ-  
կան յօժարութիւն ի սէր խնդրողի բանին, և աշխատանք տուողի  
խնդրոյն մի ծածկեսցի ի բանասիրաց և յաշխատասէր անձանց,  
զի կարօտքն բանի իբրեւ զերկիր ծարավուտ գցօղ քաղցրու-  
թեանն երկնի խնդրեսցեն, և ապա սպասաւորին բանի իբրեւ  
զամբ ընդունակ ցօղոյ զառեալն յանսահման ծովէ իմաստից և ի  
գետոց հոսմանէ՝ յաղագս ծուլութեան մի արգելցեն:*

Ըստ որում և ես նուաստ Յոհաննէս Եզնկեցի, աշակերտ հոգելից  
հօրն և սուրբ վարդապետին Վարդանայ, սպասաւոր Սուրբ Գրոց  
բանից, ի թվին ՉԼԳ (1284) պատահեաց գալ ի կողմանս աստուա-  
ծապահ թաղաւորութեանս աշխարհիս Վրաց, ի հռչակաւոր և ի  
մեծ մայրաքաղաքս ի Տփխիս, Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատ-  
մողաց, և հանդիպեցաւ խօսել մեզ բանս քարոզութեան ի դուռն  
եկեղեցւոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխանին Հայոց  
պարոն Քարիսատիան, զոր շինեալ էր աստուածասէր և բարեհոգի  
հայրն նորա պարոն Ոմէկն, և էր խօսեցեալ բանն՝ յաղագս երկնա-  
յին շարժմանն:

Վասն որոյ ախորժելի եղեւ զուարթամիտ պատանոյն Վախթան-  
կայ, որ էր որդի կրսեր հռչակաւոր անուանն պարոն Ոմէկին, և  
մայրենի ազգաւ թոռն մեծ իշխանին Զալալին, տեառն Խաչենոյ, որ-  
դի մօր բարեպաշտի, որ էր Քրիստոսի օրինօքն զարդարեալ յոգի,  
և ի խնդիր բանիս յորդորող զորդի: Սա խնդրեաց ի մէնջ յաղագս  
երկնի և նորին շարժմանն, յորս հարկեալ յորդորեաց գտկարու-  
թիւնս մեր մեծազգ եպիսկոպոսն տէր Յոհաննէս ազնուական զար-  
մից և բարեսոսմիկ հարց ծնունդ, որ և շարժեալ ի սիրոյն և ի  
յուսոյ խնդրողաց, և ակն առեալ ի պատուոյ շնորհաշուք տեառն  
և գերապատիւ եկեղեցւոյ գլխոյն ի նրբաշաւիղ և ի կորովամիտ

բանից սուրբ հարցն, և վարդապետաց մերոց, և իմաստախոհ արանց, պարզեալ գրեցի համառօտ բանիւ և աշխարհական խօսիւք, վասն դիւրաւ հասկանալի լինել ընթերցողաց:

Արդ, որք գրէք յաղագս օգտի զսակաւ աշխատութիւնս մեր, գրեսցիք և զայս նախադրութիւնս, և զբան յիշատակի անուան խնդրողաց և գրողի սորին գրեալ լիջիք և դուք ի գիրն կենաց, և որ ծուլանայ, թողու զսա, ոչ լիցի առանց պատժոց՝ իբր յոլով աշխատութեանց զիւր սակաւն գին տալ ոչ կամեցաւդ այլոց:

Հիշ. ԺԳ դար, էջ 561. Հմմտ. Մայր ցուցակ, էջ 1152

## 8

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Երևան, ՍՍ, ձեռ. № 5476, էջ 126 ր)

1300

Ծաղկող՝ Զաքարիա  
Վայր՝ Տփլիս

[գ]Զաքարիա նկարիչ սուտանուն քահանա[յ] Տփլիսց[ի] յիշեալ աղաչեմ վասն Աստուծոյ: Ի թվին ՉԽԹ(1300): Շտապեցաք ի բազում վշտաց և ի տրամոլթեանց: Տերտէր աւագերիցու որդի\*:

Հիշ. ԺԳ դար, էջ 865. Հմմտ. ԿԻՅ, I ցր. 156.

## 9

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Վենետիկ, ձեռ. № 109 (546), Յուզակ, հատ. Ա, էջ 488)

1304

Գրիչ՝ Խաչատուր սարկաւագ  
Վայր՝ Թիֆլիս

Փառք [քեզ], Քրիստոս Աստուած ճշմարիտ, որ արժանի արարեր զմեղաւոր և զչարագործ ծառայս՝ զսուտ գրչակս զԽաչատուր, հասանել ի յետին գիր ձերում հիագաւր հրամանաց... Եւ արդ, Տէր իմ Յիսուս Քրիստոս, ողորմեա ծառայի քո Մարտիրոսի՝ ստացողի սուրբ Աւետարանի քո, որ ստացաւ զսա ի բարեխասութիւն և ի յիշատակութիւն ծնաւդաց իւրոց: Ով մանկունք լուսոյ, յորժամ հանդիպիք այս աստուածաշունչ գրիս, յիշեցէք սրտի մտաւք յաղալթս ձեր զծնաւդոն իմ՝ զՏԱԿԻԿ և զՔԵՄԵՐԱՆ, զԱստուածատուրն և զՄԻՆԱՏԻԿԻԿԱՆ և զիս՝ զմեղուցեալ Մարտիրոս և զկողակիցն իմ զԹարքան և

\* Ձեռագիրը գրվել է Սուրբ-Մարիում և նկարագրվածան բերվել Թիֆլիս:

զեղբարսն իմ զՅակոբ և զԳրիգորն, և Աստուած զձեզ յիշեսցէ և ողորմեսցի յիւր միւս անգամ գալուստն...

Արդ, գրեցաւ սա ի թագաւորական քաղաքս ի Տփլիս ձեռամբ Խաչատուր սարկաւազի՝ մեղուցեալ և անպիտան գրչի, ի վայելումն Մարտիրոսի որդւոյ Աստուածատուրի... Ընդ Հովնեաւ Սուրբ Տիրուհո և Մարիամ Աստուածածնի և այլ սրբոցս: Գրեցաւ ի թվիս Հայոց 209 (1304), ի յԱւագոստոս Թ.(9), ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ և Վրաց՝ Դաւթի, ի հայրապետութեանն տեառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի, ի յաշխարհակալութիւնն Խարպանդիս եղբաւր Ղազանիս՝ որդւոյ մեծի Արղունի ինքնակալի...

Հիշ. ԺԴ դար, էջ 28

10

ՍԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅՈՎԿ. ՂԱՍԱՍԿԱՅԻՈՅ

(Երուս. № 1297, Մայր ցուց. Դ., էջ 521)

1363

Գրիչ՝ (եղծուած)  
Ստացող՝ Յովհ. Որոտնեցի  
Վայր՝ Տփլիս

...Փառք Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և մի[շտ]: Արդ, գրեցաւ ի թուաբերութեանս Հայոց Պ. և ԺԲ. (1363) ի մայրաքաղաքս Տփլիս, ընդ հովհանեաւ Սուրբ Ամենափրկչիս ի խնդրոյ տիեզերալոյս վարդապետին Յոհաննիսի, որոյ գաւառն և հայրենիքն Որոտն է, զոր Տէր Աստուած վայելել տացէ, և զմեղաւոր գրիչ (եղծուած) յիշեսցէ ի Քրիստոս, և Աստուած զձեզ յիշէ (էջ 229)\*:

11

ԱԲԵՏԱՐԱՆ

(Երևան, ՄՄ, ձեռ. 9223, ԺԲ պատասիկ)

1432

Գրիչ՝ Կարապետ աղթամարցի  
Վայր՝ Տփլիս

Ա.

...Շնորհիւ տեառն սկսա[յ] և ողորմութեամբ Տեառն Աստուծոյ կատարեցի ի ՊԶԱ. (1432) թվականիս Հայոց, յԱւագոստոս ամսոյ ի ԺԶ.

\* Ձեռագրի 152ր էջում կա «Կատարումն վաստակոց Յոհաննու Դամասկացոյ, կոչեցեալ Մանսուր: Համառօտ ասացեալ նորո շնորհաց աւանդութիւնք. և թարգմանեալ Սիմէոնի ի վրաց լեզուէ ի հայ բառ:

(16): Գրեցաւ ձեռամբ սուտանուն արեղայի Կարապետի ի մայրաքաղաքս Տփլիս, ի վանքս պարոն Սալաղենց, ի դրան Սուրբ Ամենափրկչիս, զոր Տէր Աստուած զանձեռագործ խորանն պարգևեցցէ՝ զերկնից արքայութիւնն շինողաց սուրբ ուխտիս, ամէն:

Եւ ես մեղսամած գրիչ աղաչեմ զամենեսեան, որք աւգտիք ի սմանէ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զիս և զծնաւդսն մեր՝ զՊետրոս քահանայ և զԾնորհաւիտր, և զեղբայրն իմ զՅովնան, և զքեռն իմ զՍուլտան՝ զՀանգուցեալն ի Քրիստոս, որ և զմիւս եղբայրս, որ աւգնական եղև ի կոկել թղթիս, զոր Տէր Աստուած յիշողացդ և յիշեցելոցս ողորմեսցի յիւր միւս անգամ զալուստն և հանգուցէ ի հանդերձեալ կեանս, ամէն և եղիցի:

Եղբարք, խոշորութեան գրիս և սղալանացս անմեղադիր լերուք, զի կարն մեր այդ չափդ էր:

Բ.

Յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս պարոն Չալաբէն, և ետ իւ. (40) աւուր փոխեցաւ արհիեպիսկոպոսն տէր Յովնան՝ եղբայր նորին, որդիք պարոն Փաշի, երիտասարդական մահուամբ, և թողին սուք անբժշկելի իւրոցն և աւտարաց: Զոր Տէր Աստուած թողցէ զամենայն սխալանս նոցա ի յաւուր դատաստանին, ամէն:

Հիշ. ԺԵ դար, Ա, էջ 420-421\*

12

## ԳԱՆՁԱՐԱՆ

(Երևան, ՄՄ. ձեռ. № 4117, էջ 293v - 295v)

1436

Գրիչ՝ Յովնանէս  
Վայր՝ Կրծանիս

Փառք... որ հասոյց յաւարտումն այսմ աստուածունակ տառիս զիս՝ զանարժան ծառայս Աստուծոյ զՅովնանէս գրիչս: Արդ, ես՝ մեռեալ մեղաւքս և սեպեալ հոգովս, որ ձևով միայն ունիմ զքահանայութիւն և ոչ գործովք, որ անարժանս եմ մեղապարտ: Արդ, գրեցաւ ձեռամբ մեղաւոր և անարուեստ գծողիս, և գլխազրեցաւ ձեռամբ տէր Սարգսի Աղուվանից արհիեպիսկոպոսի, որ հայրաբար

\* Հիշատակարանը ստուգել ենք բուն ձեռագրով և որոշ լրացումներ կատարել: Բ մասը - մանրատառ է:

գուժ ունէր ի վերա մեր, որ հանապազ գայր և քաջալերէր ի գրեկն:

Գրեցաւ սայ ի թվականիս Հայոց ՊԶԵ. (1436), ի յաշխարհս Վրացտան, ի մայրաքաղաքիս Տփլսեաց մերձակայ գեղս Կրծանիս, ընդ հովանեաւ կաթողիկէ Սուրբ Աստուածածնիս և այլ ամենայն սուրբ եկեղեցեացս, ի հայրապետութեան տեառն Կոստընդնայ, ի Աղուվանից Տէր Մաթեոսի և մեր՝ բազում երախտաւոր, քաջ և իմաստուն Եզեկիւի վարդապետին, ի թագաւորութեան Վրաց Ալէքսանդրին, ի նեղ և ի դառն ժամանակիս, որ վասն իմ ծովացեալ մեղացն եկն չար անաւրէն Շաղառլսն, ու մեծ աւերումն <արար> աշխարհին: Ապայ գնացաք ի տեղիքն երախտեաց՝ Երուսաղէմ, և համբուրեցինք զՍուրբ Գերեզմանն, և այլ ամենայն Սուրբ տնաւրինականքն: Հետ գալն ի Դմրշխայ զգրոցս թուխթն և այլն գրանաց առաք, և եկաք բերաք ի Վրացտուն: Թողաք զթողթս ու գնացաք ի Գանձակ, մեր եղբաւր և ընդանացն կարաւտ էաք: Այլ չարիքն ու պատուհասն անաւրէն Ջաղաթին նեղեցուց զմեզ, այլ մեք առաք զմեր եկեղեցւոյ հանդերձն՝ շուրջառներ, զԱւետարան, ու զգրանք, ու զբուրվառ, և զայլ ամենայն հոգւոյ և մարմնոյ զինչ որ կայր՝ զամէն առաք ի Վրացտուն կու գայաք բազում կարվան: Եկաք մինչև Աղէտս, հանդիպեցաւ Ջաղաթին իլղարն՝ բազում հեծեալ. և թալանեցին զմեզ ու զամէն քրիստոնեայքն, և մերկեցուցին, որ քան զոտից ամանն այլ իրք չթողին, այլ ձմերան աւուրք և ցուրտ: Այլ եկաք ի Գավազանիս բերթն, քրիստոնեայքն ի վերա եկին և ծածկեցին զմեր մերկութիւնն: Այլ մեք եկաք լալագին աչաւք, առաք զթողթս:

Յիշեցէք զՍարգիս արեղէն Տփլսեաց Կաթողիկին աւագերէցն, որ զաւրինակն շնորհեց. Քրիստոս Աստուած նորայ զերկնից աքայութիւնն պարգևէ այլ և զհամշիրայ հոգևոր եղբայրքն իմ՝ զՅորդանան արեղայն և զՍտեփաննոս քահանայն Կրծանեցին:

Արդ, գրեցաւ սայ ի ընտիր աւրինակէ Գանձատետր և Տաղատետր, մեղեդի և զամենայն բովանդակ, արդ, և սուրբ գանձարանս պայծառացուցիչ տաւնից և ուսումնասիրաց: Արդ, աղաչեմ զձեզ, որ խոշորութեան և սխալանաց գրոյս անմեղազիր լերուք, քանզի կար մեր այս էր, բայց սէր ունէաք և արուեստ ոչ:

Քանզի անարժանս Յոհաննէս՝ անուամբ և ոչ գործաւք քահանայ, ըստացայ զսա յիշատակ ինձ և ծնողաց իմոց, և ամենայն արեան մերձաւորացն՝ կենդանեացն և ննջեցելոցն և ամենայն երախտաւորաց, իմ եղբաւրն՝ Յովաննիսին, և իմ քոյուէրն՝ Թուղթէնուն, և իմ գնացելոցն ի Քրիստոս՝ իմ Հոռուսին, և իմ մաւրն Գուհարին և

իմ քուերացն նիւրաթին, Ղատամին և Հերիքին, և իմ զաւակացն՝ Մելքիսէդին և Մխիթարին, զկենդանիսն փրկեսցէ յամենայն յորոգայթից, և փոխեցելոցն հանգիստ և ողորմութիւն պարգևեսցէ ի Քրիստոս Աստուած: Այլ և զիմ սանամայրն զԱրուս-Խաթունն, և զիւր որդիքն՝ Վաչանն և զՍաւրթանն, և զիւր դստերսն՝ զԻսա ապաշխարողն, զԱննայ-Խաթունն և զիւր հարսն զՀռիփսիմին, այլ և զԿրծանե[ա]ց զամէն ժողովուրդն՝ զա<յ>ր և զկին, զծեր և զտղայ, զայգապան և զամենայն աշխատաւոր, որք մեզ մէկ կտոր հաց բերելով, կամ մէկ քարեղէն ապուր, և կամ մէկ փառչ ջուր տալով: Քրիստոս Աստուած մեկին աստ զհարիւրապատիկն հատուցէ և հանդերձեալն՝ զհազարապատիկն, և զերկնից արքայութիւնն պարգևեսցէ:

Այլ և որք աւգտիք ի սմանէ կարգալով կամ աւրինակելով յիշեսջիք ի սուրբ աղաւթս ձեր զմեղապարտ ծառայս, և Աստուած զձեզ յիշէ իւր յերկնից արքայութիւնն, և Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն, ամէն:

Եւ զեղբայրայ դուստր իմ Խոստրովիթուիթն և զայրն իւր ղՂազանն յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր...:

Հիշ. ԺԵ, Ա, էջ 461-463

13  
ԳԱՆՁԱՐԱՆ  
(Անթիլիաս, № 74)\*

1437/8

Գրիչ՝ Կարապետ  
Վայր՝ Տփլիս

317բ ... Ծնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբն Աստուծոյ կատարեցի զսուրբ գիրքս, որ կոչի Գանձարան: Գրեցաւ սայ ի թվականութիւնս Հայոց ՊԶԶ. (1437), և ի Փոքր թվականութիւնս ՅԾԴ. (354+1084), և ի Հռոմոցն ՌՃԶԹ, (1189), ի թագաւորութիւն Վրաց Ալէքսանդրոս, ի մայրաքաղաքս Տփլիս, ի յանապատս Բեղղա-հէմ, ի դրան Սուրբ Աստուածածնիս, ձեռամբ սուտանուն արեղայի Կարապետի, ըստ անուանս որ ունիմ, ի գործոցն խիստ թափուր և ունայն գտանիմ:

\* Զեռագիրը Անթիլիաս է բերված Կիպրոսից: Մ. Տեր-Մովսիսյանի Ցուցակից քաղելով, սույն ժողովածուի Ա. մասում (էջ 475, հիշատակարան № 520), տպագրել ենք այս հիշատակարանի համառոտագրությունը: - Լ. Խ.:

Սույն հիշատակարանի նոր հրատարակություն տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան», Կազմեց՝ Անուշաւան վարդ. Դանիէլեան, Անթիլիաս-Լիբանան, 1984, էջ 293:

*Արդ, աղաչեմ զամենեսեան որ աւգտիք ի սմանէ եղանակելով կամ աւրինակելով կամ տեսութեամբ՝ յիշեցէք ի սուրբ յաղաւթս ձեր զիս և զծնաւղն մեր զՊետրոս քահանայ և զԹնահատր, և Աստուած զձեզ յիշէ\*:*

Մայր ցուցակ... էջ 293: Հմմտ. Հիշ. ԺԵ, Ա, էջ 384

## 14

## ԱԲԵՏԱՐԱՆ

(«Միաբանք և այցելութ Երուսաղէմի», էջ 70)

1438

Կազմի պատվիրատու՝

Խոնայ Ծանազիզ Թիֆլիզեցի

*...Ողորմիա Խոնայ Ծանազիզի և ծնողաց իւրոց, որ եկն ի Տփլիս քաղաքէ և բազում արդիւնս արար ի յաղքատս և ի կրանաւորս և յեկեղեցիս, և զՍուրբ Աւետարանս ետ վերստին կազմել պատուէլի և ճգնազգեաց եպիսկոպոսին Գաբրիէլի Կարբեցոց, որով արքայութեան արժանի առնէ Քրիստոս Աստուած զԾանազիզ Խոնայն և զծնողսն իւր, ամէն:*

*Ի թվ. Հայոց ՊԶԷ. (1438) կազմեցաւ Սուրբ Աւետարանս ի Սուրբ քաղաքն Երուսաղէմ:*

Հիշ. ԺԵ. դար, Ա, էջ 494

## 15

## ԳԱՆՁԱՐԱՆ

(Երևան, ՄՄ, № 7839, էջ 357r - 358v)

1438

Ստացող՝ Դաւիթ կուսակրոն քահանայ

Վայր՝ Տրփիսիս

*...Արդ\*, գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց ՊԶԷ. (1438), ի մայրաքաղաքս Տրփիսիս, ընդ հովանեաւ սուրբ և հրաշափառ Կաթողիկէին Սուրբ Աստուածածնին, ի հայրապետութեան տեառն Կոստանդեա, և ի թագաւորութեանս Վրաց Աղէքսանդրէի աստուածասիրի և բարեպաշտի, զոր Տէր Աստուած պահեսցէ զսա անփորձ կենաւք և պարագայց ամաւք՝ զաւրաւք և զաւակաւք իւրովք՝ ի վանումն և ի հերքումն անաւրինաց խրմբից և ի հաստատութիւն Սրբոյ եկեղեցւոյ:*

*Արդ, որք հանդիպիք սմա երգելով կամ աւրինակելով, կամ տեսութեամբ, յիշեսձիք ի մաքրափայլ և ի մեղսաքաւիչ յաղաւթս*

ձեր գյառաջասացեալ ստացաւդ սորին զԴաւիթ կուսակրաւն քահանայ\*, և զհայրն իւր զԱւետիս քահանայ, և զմայրն իւր զԷստուգան, և զեղբայրսն զՆերսէս և զՍիմէոն՝ զփոխեցեալսն առ Քրիստոս, և զմնացեալ եղբայրն զԱբել, և զսիրելի որդին իւր ըստ հոգւոյ\*\*, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զննջեցեալսն...:

Ընդ վերոյ գրելոցս յիշեսջիք և զերջանիկ և զսրբակրաւն զհայր մեր ըստ հոգւոյ զտէր Սարգիս փիլիսոփայն՝ զփակակալ և առաջնորդ Սուրբ Կաթողիկէին զգծագրող սորին, և զիս՝ զանարժան ծառայս ծառայիցդ Աստուծոյ, որ զսակաւ պակասորդս գրեցի, հանդերձ ծնողաւք և ազգականաւք, և Աստուած զձեզ յիշէ, ամէն:

[[[[ Մրիաթուն ապաշխարողն յիշեսջիք ի Քրիստոս, որ աւզնական եղև ի ծախս սորին:

Բ

Հետ. ստացող՝ Գուլշար

...Արդ, երես անկեալ աղաչեմ զձեզ, ով դասք լուսեղէն, որ ամէն տաւնի և տաւնականի գլխատակարանս կարդայք և մէկ բերան Աստուած-ողորմի ասէք Սուրխենց հին և նոր ննջեցելոց, ամէն:

Արդ, ես Գուլշարս առի սուրբ Գանձարանս իմ հաւրանց գերեզմանատան՝ ի Սուրբ Կաթողիկէն, իւր ննջեցելոց հոգոյն համար, որ ամէն տարի յիշատակուին մեր զարիպ ննջեցեալքն: Եւ ոչ ոք ունի իշխանութիւն հանելոյ զգիրքս ի դրանէ Սուրբ Կաթողիկէիս, ո՛չ իմոց, և ո՛չ աւտարաց, ո՛չ եպիսկոպոսէ և ո՛չ քահանայից, և ո՛չ աշխարհականաց, զի ազատ է գիրքս այս, ով ոք որ անտքնի կամ յայտնի լրբութեամբ, կամ գողանալով, կամ բաշխելով, կամ ծախելով՝ դատի յԱստուծոյ և ամենայն սրբոց, և զհոլրն անշէջ առցէ, ամէն\*:

Հիշ. ԺԵ, Ա, էջ 487-488

\* Հիշատակարանի սկզբի մասում լրացուցիչ ասված է, որ Դաւիթը «յետ ստանալոյ բազում տառից Հին և Նոր կտակարանաց, յաւել և գսա ի գանձս աստուածային»:

\*\* Անունը ջնջված է: - Լ. Ն.:

\* Հնագրական տվյալների համաձայն հետ. ստացող Գուլշարի հիշատակարանը գրված պետք է լինի ԺԵ. դարի կեսերին: - Լ.Ն.:

16

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Երևան, ՄՄ, № 5784, էջ 557rv)

1444

Նորոգող և կազմող՝ Յովհաննէս  
Վայր՝ Տփխիս

...Ըստ յաճախման աստուածային բանին և զՀոգւոյն Սրբոյ, որով լուսաւորէ զՀոգիս աստուածասիրաց անձանց և տպաւորէ ի նոսա զլոյս աստուածագիտութեան իւրոյ և մերձաւորս առնէ աստուածային երանութեանն, որ և զհոգւոյ սիրոյ իւրոյ արկեալ ի սիրտ աստուածասէր ամենամաքուր և ամենաբարի, հեզ և ընտրեալ կրաւնաւորի և անյաղթ փիլիսոփայի Տէր Սարգսի՝ սպասաւորի և առաջնորդի սուրբ և հրաշափառ Կաթողիկէի մայրաքաղաքին Տրփխե՛աց, որ և ցանկացող եղեալ այսմ աստուածային տառիս և կենսաբեր Սուրբ Աւետարանիս, և ստացաւ զսա ի յարդար վաստակոց իւրոց, ետ վերըստին նորոգել ոսկէնկար և բազմերանգ գունովք գտնաւրէնութիւնն և զայլ սքանչելիսն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ի զուարճումն և ի պայծառութիւն նորոյ Սիրովնի: Զի յետ ստանալոյ բազում տառից և բազում արդեանց, զոր ունէր յեկեղեցի Աստուծոյ՝ յաւել և զսա ի գանձս աստուածային, ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց՝ հաւր իւրոյ Սողոմոնի և մաւր իւրոյ Ուլու-Խաթունի, և եղբաւր իւրոյ Ամիր-Ազրգի, և հաւրեղբաւր իւրոյ Դաւիթ արեղայի, և մաւրքուերորդւոյ իւրոյ և ձեռնասնունդ աշակերտի Վարդան քահանայի, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց՝ կենդանեաց և ննջեցելոց:

Արդ, որք աւգտիք ի սմանէ և լուսաւորիք յաստուածային բանիցս՝ յիշեսլիք սրտի մտաւք առաջի Քրիստոսի զնախագրեալ ստացաւզ զՏէր Սարգիս արեղայ, հանդերձ աստուածասէր զարմիւքն իւրովք, ամէն:

Ընդ նոսին և զձեռնասնունդ աշակերտն իւր՝ զորդի պարոն Թումանի գՂուկաս սարկաւազ և զհոգւոյ եղբարսն իւր զՍտեփանոս քահանայ, և զԾնաւոն քահանայ, և զԿիրակոս քահանայ, և զԱստուածատուր քահանայ, և զԽաչատուր քահանայ...:

Նորոգեցաւ և կազմեցաւ Սուրբ Աւետարանս ի թվականիս ՊՂԳ. (1444): Ընդ նոսին, որք վերոյ յիշեցան, յիշեսլիք և զիս՝ զՅովհաննէս մեղապարտ գրիչ, որ զսակաւ յիշատակարանս գրեցի\*:

Հիշ. ԺԵ, Ա, էջ 574 - 575

\* Բուն ձեռագիրը ընդօրինակված է 1293 թվականին Սկևռայում - Լ.Խ.

## 17

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Երևան, ՄՄ., № 8875, էջ 286r - 287r)

1447

Գրիչ՝ Յովհաննես  
Ստացող՝ Ներսէս  
Վայր՝ Տփլիս

Շառաւիղն աւրհնութեան և սեռն բարենշան, աստուածասէր և բարեպաշտ և երկիրըածն յԱստուծոյ Ներսէս ցանկացող եղեալ այսմ կեանսունակ և մեղսաքաւիչ տառիս և աստուածախաւս մատենիս: Զի յետ ստանալոյ բազում զգեստուց և սպասուց եկեղեցւոյ՝ յաւել և զսա ի գանձս աստուածայինս, ի մտի ունելով զբան մարգարէին, որ ասէ՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և. յընդանի յԵրուսաղէմ, ստացաւ զՍուրբ Աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ, և ծնաւղաց իւրոց, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց:

Արդ, որք հանդիպիք սմա տեսութեամբ, ընթերցմամբ կամ աւրինակելով, յիշեսջիք սրտի մտաւք առաջի Քրիստոսի զվերոյգրեալ ստացաւ Սուրբ Աւետարանիս զՆերսէս և զհայրն իւր զԿարապետ քահանայ, և զմայրն զԴաւիթ, և զկենակիցն իւր զԱւսմէլիք, և զեղբարսն զՅովսէփ քահանայ և զՅուսիկն, և զեղբաւորորդին իւր զՍուրբանշէն, և զհաւրեղբայրն նորին զՏէր Յովհաննէս, և զորդին զՏէր Միսիթար, և մօրքվերորդին զԿարապետ, և զպապն իւր զՏէր Մարթոս, և զքոյրն զԾնահավորն, և զքվերորդին զԱմիր-Մէլիքն, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն: Եւ որք յիշէք բարի յիշմամբ և աներկբայ հաւատով՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

Ընդ նոսին, որք վերոյ գրեցան, յիշեսջիք և զիս՝ զՅովհաննէս մեղապարտ գրիչս և զծնաւղսն իմ, որ զսուրբ Աւետարանս գրեցի և աւարտեցի ի մայրաքաղաքս Տփլիս, ընդ հովանեաւ կամակատար Սուրբ Աստուածածնիս, ի թվիս Հայոց ՊՂԶ. (1447):

Հիշ. ԺԵ. Ա, էջ 606 - 607

## 18

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Երևան, ՄՄ, № 6806, էջ 281v - 282v)

1452

Գրիչ՝ Յովհաննէս  
Վայր՝ Տփլիս

Ա

...Արդ, գրեցաւ լուսաւոր և կեանսունակ Սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց ԶԱ. (1452), ի մայրաքաղաքս Տփլիս,

ընդ հովանեաւ կամակատար Սուրբ Աստուածածնիս և Գէորգեա Ջօրավարիս, ի լաւ և յընտիր աւրինակէ Սըսցի:

Աղաչեմ զամենեսեան, որք կարդայք և լուսաւորիք յաստուածային բանիցս, յիշեսջիք սրտի մտաւք առաջի Քրիստոսի զնախասացեալ բարեպաշտուհի կինն Ջհան, և զ'ի Քրիստոս փոխեցեալ զայր զԱջիս, և զորդիսն իւր զՎարդան և զՄուրատ և զՄըսըր, և զգոուսոր իւր զԵղիսաբէթ, և զհանգուցեալ որդին իւր զՍարգիս, և զամենայն արեան մերձաւորսն իւր՝ զկենդանիսն և զհանգուցեալսն, և որք յիշէք բարի յիշմամբ և աներկբայ հաւատով՝ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

Եւ զՍուրբ Աւետարանիս յիշատակարանն կարդան ի տաւնի Զատկին, և Յայտնութեանն և հանգստեան շարականն և Քրիստոս որդի Աստուծոյ ասեն: Եւ Աւետարանս լաւ դաստառակով պահեն:

Ընդ վերագրելոցս յիշեսջիք և զիս՝ զմեղապարտ և զանարհեստ գրիչս զՅոհանէս, և սխալանաց և խոշորութեան անմեղադիր լերուք, զի կար մեր այս չափ էր:

Բ

Նկարիչ՝ Մանուէլ

82v ԶՄանուէլ նկարող յիշ<եցեք> ի Քրիստոս\*:

Հիշ. ԺԵ, Բ, էջ 16-17

19

ԹԱՐՈԶԳԻՐՔ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵՎԱՅԻՈՑ

(Երևան, ՄՄ, № 2156, էջ 496v - 497r)

1452

Գրիչ՝ Յովանէս  
Վայր՝ Տփլիս

...Արդ, գրեցաւ աստուածային մատեանս և վարդափթիթ բուրաստանս այս, որ կոչի Քարոզգիրք, արարեալ և հաւաքեալ արի և քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի Գրիգորի Որոտնեցոյ՝ փոխեցելոյն առ Քրիստոս: Եւ եղև զրաւ աւարտման սորա ի Փայտակարան մայրաքաղաքս որ կոչի Տփլիս, ի դրան կամակատար Սուրբ Աստուածածնիս և Գեորգեայ զօրավարիս, ի հայրապետութեան տեառն Գրիգորի՝ Վաղարշապատու պատրիարքի, եւ ի վերագրիտողութեան նահանգիս Վրաց Տէր Ղուկասու՝ Հաղբատայ արքեպիսկոպոսի, եւ ի թագաւորութեան Վրաց Գեորգեայ Բագրատունոյ, զոր պա-

\* Կազմողի անունը ջնջված է: - Լ. Խ.

Հեսցէ տէր Աստուած պարագայց ամաւք յաղթող ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի:

Բայց ցանկացող եղեալ այսմ հոգելից և արդիւնաշահ մատենիս երիցս երանեալ երջանիկ և սրբասնեալ և գերիմաստ գիտութեամբ ճոխացեալ և շքեղացեալ քաջ ըաբունիս Ստեփանոս, և իւրով ձեռամբն գրեաց մինչ ի յաղուհացից երրորդ կիւրակէն, և զայլն գրել ետ ի վայելս անձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւդաց իւրոց:

Արդ, յերես անկեալ աղաչեմ և հայցեմ ի ճաշակողացդ ի հոգևոր սեղանոյս և աղաչանս բազումս մատուցանեմ սիրողացդ իմաստութեան, որք լուսաւորիք գիտութեամբ ի սմանէ և մասին սակս հանդիպիք գաղափարելով կամ կարգալով, կամ տեսանելով, յիշեսջիք զվերոյգրեալ զստացօղ սորա՝ զանյաղթ փրլխսոփայ և զսրբասնեալ ըաբունապետս զՍտեփանոս, և զհայր սորին զՎարդան, և զմայրն զ Գեղա-Խաթուն, և զեղբարսն, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն ի Քրիստոս: Այլ և, զըստ հոգւոյ հարազատն զսնընդակից եղբայր սորա զՅովանէս ճգնագրեաց կրօնաւոր, որ առիթ եղև սմա և օգնական ի յուսմունս իմաստութեան և բազում աշխատութեամբ ծառայեաց, զոր Տէր հատուցէ զվարձս վաստակոց սորա ընդ միոյն բիւրապատիկ ի հանդերձեալ կանոնս:

Նա[և] զգերապատիւ և զնրբահայեաց և զգարդարեալն իմաստութեամբ և զբարձրացեալն աստիճանաւ զըստ հոգոյ հայր և զուսուցիչ սորա զՎարապետ ըաբունապետ, որ բազում աշխատութեամբ ուսոյց զվարդապետական և գերաժշտական գիտութիւնս. զոր Տէր Աստուած պահեսցէ զնա որպէս զշահ անշիջանելի ի պարծանս և ի պայծառութիւն կաթողիկէ եկեղեցոյ, եւ յետ աստեացս ըստ սրբոց վարդապետացն դասակից և պսակակից արասցէ: Դարձեալ, աղաչեմ զհանդիպողսդ, զի ընդ վերագրելոցս յիշման արժանի առնէք և զիս՝ զմեղուցեալ գծող սորա զՅովանէս անուամբ քահանայ և ոչ գործով: Այլ և յիշեսջիք և զեղբարքս մեր ըստ հոգոյ, որք օգնական եղեն գրոցս՝ որք քարտէս կոկելով, որք խագելով և որք այլ պիտոյիւք: Եւ որք յիշէք բարի յիշմամբ և աներկբայ հաւատով, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

Բայց աւարտեցաւ սա ի թվաբերութեան Հակագեան տովմարի ՁԱ. (1452), Մայիս ամսոյ յերեքն, ընդ վերագրելոցս յիշեսջիք և // \* իմաստուն և հանճարեղ քահանայ զկազմող սորա, հանդերձ ծնողաւք և ազգականաւք:

20

ԱԲԵՏԱՐԱՆ  
(Երուսաղեմ 3431)

1455

Գրիչ՝ Յովանէս  
Վայր՝ Տփխիս

...Աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ աստուածաշունչ և կենսունակ Սուրբ Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով, կամ տեսանելով յիշեսլիք առաջի Քրիստոսի զնախասացեալ ստացաւ սորա զՄարիամ և զայրն իմ Ենիբէկ, և զծնողսն իւր՝ զհայրն Մխիթար և զմայրն Ղամաթ, այլ և զծնողսն Ենիբէկին՝ զՇրվան և զՀրատ, և զեղբայր Մարիամին զՍողովմոն, և զպապն զԱբրահամ, այլ և զՅովանէս, և զՍտեփանոս, և զամենայն արեան մերձաւորս նոցին՝ զկենդանիսն և զննջեցեալսն: Եւ որք յիշէք բարի յիշմամբ և աներկբայ հաւատով, յիշեցեալ լիջիք յանմոռաց յիշատակութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն:

Ընդ նոսին, որք վերոյ գրեցան, յիշեսլիք և զիս՝ զմեղապարտ գրիչս զՅովանէս անւամբ քահանայ և ոչ գործով, հանդերձ ծնաւղաւք և ազգականաւք, այլ և զՄանուէլ հանճարեղ և ձեռնահամուտ քահանայ՝ զնկարող սորա...

Գրեցաւ սա ի թվաբերութեան Հայկազեան տովմարի ԶԴ. (1455), ի մայրաքաղաքս Տփխիս, ի դրան կամակատար Սուրբ Աստուածածնիս և Գէորգեայ Զաւրավարիս, ի լաւ և յընտիր Սըսցի աւրինակէ, ի հայրապետութեան տեառն Գրիգորի Վաղարշապատու պատրիարքի, և ի թագաւորութեան Վրաց Գեորգեայ, և ի վերադիտողութեան մերոյ նահանգիս տէր Ղուկասու, զոր պահեսցէ զսոսա Տէր Աստուած անփորձ հոգով և մարմնով, ամէն:

Հիշ. ԺԵ, Բ, 425

21

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Բոմբեյ. Ս. Պետրոս եկեղեցի, Մ.Տ.-Մ.)

1462

Գրիչ՝ Դաիթ  
Վայր՝ Տփխիս

Ա

Զստացող Սուրբ Աւետարանիս Վարդան քահանայս և ծնաւղքն մեր՝ զհայրն մեր Յովանէս և զմայրս մեր Հաւաս-Խաթուն, և զկողա-

կիցն իմ զՄարթայ-Խաթուն, և զաւակսն իմ զԳիրսամ, և զԱլէքսանոս, և զՂոստակէս, և զեղբայրն իմ զՄարշէն և զՄկրտիչ, և զննջեցեալքն մեր զԱղոտ, Մրվան, Բաղշիկ, Ստեփանոս, և զփոխեցեալն ի Քրիստոս զՄկրտիչ արեղայն, որ Աւետարանիս Համար կանգնեցաւ Ծ. (50) թանկով... և զփցուն գրիչս՝ զսուտանունն Դաւիթ արեղայս, Փայտակարան, Տուփխիս յիշեցէք<sup>(°)</sup>:

## Բ

III Ոմն Դաւիթ քահանայ, և էր ի յարքայանիստ Տուփխիս, ընդ Հովանեաւ հրաշափառ կաթողիկէ Ծիրանօր Սուրբ Աստուածածինիս և բազմայհաւաք սրբոց, ի հայրապետութեան տեառն Զաքարիայ կաթողիկոսի, և յառաջնորդութեան տէր Ղուկաս Հաղբատայ արհեսպիսկոպոսի, և ի թագաւորութեան Վրաց Գիարգու, ի թվ. Հայոց ԶԺԱ. (1462) և ի քրաւնիկոնն ՃԾ. (150), Ապրիլի ԻԲ. (22), Զատիկի շաբթին, որ զսեւ Զատիկ արարաք: Հինգշաբթի աւրն Ռ. (1000) թուրք մարդ էր եկել ի Լաւնիս՝ ի ջրի տարին յետև թափել. Ի. (20) ձիւտոր էր եկել թաբով զԳրդան զՀաւնալայու տաւարն տարել: Եւ ձէն ընդաւ քաղաքս, թէ քիչ հեծել է. ի քաղաքէս ԲՃ. (200) լաւ տղամարդիկ ի դուրս ելան յետնէ՝ ինչուր ի Լաւնիս՝ ի ջրի էն դէհն գնացին հետևակ, դադրած, նետերն հատած և անարոչ<sup>(°)</sup> և անսլեհ, անկասկածի իմ մեղացն և իմ չար գործոցն: Եւ մեծ հեծելն ի դուս էին եկել, և երկու դիմաց բոլորել, և զամէն կոտորել և ի սուր քաշել, և զամենոց զլուխն տարել: Վա՛յ ինձ գէն աւուրս սուքն, զլացն ով կարէ բերան պատմել, որ գէն տղամարդիկն անգլուխ և մերկ բերէին դասու ի դաս, հէնց որ ոչ ով զիւր մեռելն չկարէր ճանաչել: Եւ զայն աւուր լացն, զողբն ոչ ով չի կարել պատմել, վայ ինձ Ռ. (1000) բերան: Քրիստոս Որդին Աստուծոյ Սուրբ Աւետարանիս բարեխաւսութեամբ զիւրեանց հոգին՝ էն սուրբ նահատակաց ու արեամբ ներկեալ մարտիրոսացն դասակից ու պսակակից արասցէ, ամէն:

Ես զսուտանունն Դաւիթ քահանայս, որ զԱւետարանս գրեցի, մի բերան Աստուած ողորմի հրամայեցէք, ...ի դառն և ի դժար մահտարածամիս և կոտորումն Զատիկի հինգշաբթիս: Ախ վա՛յ, ախ վա՛յ, ի՞նչ անեմ գերիս:

## ԱԲԵՏԱՐԱԼ

(Նոր-Ձուղա, № 13, էջ 289ր - 291ր)

1463

Գրիչ՝ Մկրտիչ քահանայ  
Ստացող՝ Ամիր  
Վայր՝ Տփլիս

Փառք... Աստուածասէր, բարեպաշտ եւ երկիւղած Աստուծոյ առն Ամիր անուն, որ ստացաւ զսա ի հալալ վաստակաց իւրոց ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց՝ հաւրն իւրոյ Հասանին եւ մաւրն իւրոյ Աթանէլիքին եւ կենակցաց իւրոց Աղշին եւ Խոնդիկին եւ որդոյ իւրոյ Քուրդամիրին եւ միւս որդոյն Մուրադին, որ նահատակեցաւ ի յանաւրինաց, եւ դստերաց իւրոց Սադիկին եւ Թանկսուխին եւ թոռին իւրոյ Քուրդամիրի դստերն Աղուդին եւ ամենայն արեան մերձաւորաց իւրոց կենդանեաց եւ մեռելոց: Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք յայսմ լուսաւոր եւ կենսունակ Սուրբ Աւետարանիս, յիշեալիք սրտիւ մտաւք զնախասացեալ սորա զԱմիրն եւ զիւրսն ամենայն:

Արդ, գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թուականութեան Հայոց ԶԺԲ (1463), ի մայրաքաղաքս Տփլիս, ընդ հովանեաւ կամակատար Սուրբ Աստուածածնի եւ Գեորգեա Ջաւրավարիս, ձեռամբ մեղապարտ եւ փծուն գրչի Մկրտիչ սուտանուն քահանայ, գրեցաւ ի ժամանակս աստուածասէր թագաւորաց թագաւորին Գորգու, զոր Տէր Աստուած պահեսցէ զնա պարագայից ամաւք, յաղթող ի վերայ թշնամեաց ի խաչին Քրիստոսի, եւ ի հայրապետութեան տեառն Ջաքարիայի, եւ ի վերատեսչութեան տեղոյս տէր Ղուկաս արհեպիսկոպոս Հաղբատայ, զոր Տէր Աստուած պահեսցէ զնա մինչեւ ի խորին ծերութեան անփորձ ի սատանայէ, ամէն:

Ես մեղապարտ Ամիրս, որ գնեցի զՍուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իմոց՝ յիշատակ հաւրն իմոյ Հասանին եւ մաւրն իմոյ Աթանէլիքին եւ կողակցին իմոյ Աղշին եւ Խոնդիկին եւ իմ որդուն Քուրդամիրին, որ նահատակեցաւ ի յանօրինաց վասն անուան Քրիստոսի, եւ Քուրդամիրի եւ Մուրադին, դուստրն Ազատու եւ իմ եղբարքն մեծ աղբեր Քուրդամիրն, եւ միջնէկն Ծահրամիրն եւ փոքր Աղազարն եւ իմ Գ (3) դստերքս, մեծն Սաթեւ եւ միջնէկն Թանսուխ եւ փոքրն Մանիշակս, որ տարափոխ առ Քրիստոս: Տէր Աստուած Յիսուս Քրիստոս թող նոցա կամայն եւ զակամայն զխորդացն, զբանիցն եւ ըստ գործոցն եւ ջնջեայ զձեռաց գիրն յանցանաց նորա եւ զախտ հնութեան լուայ. Տէր Աստուած Յիսուս Քրիստոս վասն Սուրբ Աւետարանիս

բարեխօսութեամբ զիւրեանց հոգին, էն արեամբ ներկեալ մարտիրոսաց եւ սուրբ կուսանաց եւ ճգնաւորաց, դասակից եւ պսակակից արասցէ եւ զերանաւէտ ձայնն լսել տայ իւրեանց հոգուն եւ զյարութիւն կեանքն պարգեւեսցէ...

140v. Զստացող Սուրբ Աւետարանիս զԱմիրն յիշեցէք ի Քրիստոս եւ զամենայն արեան մերձաւորսն իւր:

1v. ԶՄանուէլ Նաղաշ յաղօթս յիշեայ աղաչեմ, ով սուրբ ընթերցող:

Յուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի, րատ. Բ., Վիեննա, 1972, էջ 222 - 223:

## 23

## ՇԱՐԱԿԱՆ

(Երուս., ձեռ. № 1684, Մայր ցուցակ, Ե., էջ 545)

1473

Գրիչներ՝ Դաւիթ արեղայ, Աստուածատուր  
Վայր՝ <Տփխիս>\*

ա) Զմեղուցեալ գծողս զԴաւիթ արեղայս հանդերձ ծընաւղաւք և ամենայն ազգականաւք յիշեցէք ի Քրիստոս և առատ սրտիւ Աստուած ողորմի ասացէք, ով ընթերցող ուսումնական: Վայ ինձ մեղաւորիս, ախ վայ: (էջ 505)

բ) Զսակաւ նորոգողս գրիչս և խազաւղս յիշեցէք ի սուրբ յուղաւթս ձեր, ով երգող քաղցր ձայինս, և ասացէք Տէր Աստուած ողորմի աշխատողի սոցա և ստացողիս, ամէն (էջ 283)

գ) <Գրչի յիշատակագրութեան ներքեւ>՝ 1473

## 24

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Փիրղ., 6273, էջ 320)

1474

Գրիչ՝ Աստուածատուր  
Վայր՝ Տփխիս

...Սուրբ Աւետարանս գրեցաւ ի թուաբերութեան Հայոց տումարիս ԶԻԳ. (1474):

Ոհ և եղուկ և վայ է մեր լսելեաց, և վայ է մեր տեսանել աչաց. որ վասն մեղաց մերոց բարկացաւ անբարկանալին Աստուած ի

\* Գրչութեան վայրի ճշտումը Մայր ցուցակի կազմողին է պատկանում:

վերայ Տփխիս քաղաքիս. և էր խիստ մեծ մահ, որ ոչ կարենք պատմել գրովք:

Այ, վայ է մեզ հազար բերանով: Այն ահ եղև օրն և ժամ <վայ է մեզ հազար բերանով>, որ գալարէր սրտերս ի փորիս, որ մեր զաւակս հրեշտակ տեսանէր և մեզ ցուցանէր և խօսելով զարդար հոքին աւանդէր:

Երբ լուսանէր՝ ճիչ և լալ քաղաք ընկնէր. ոչ աղբէր կարէր երթալ ի մխիթարել զեղբայրն. անպէս ողբոյն ո՞վ կարէ պատմել:

Ի ամս՝ հայրապետութեան տեսուն Տէր Սարգսի, և արհիեպիսկոպոսութեան մերոյ Տէր Ղուկասի, որ յայսմ ամի շինեաց զանգակատուն բարձր և խաչ ի գլուխ նորա՝ ոսկի խնձորով, Տէր Աստուած ընդ երկայն, աւուրս արասցէ..., և թագաւորութեան Վրաց Բակրատայ: Գրեցաւ սուրբ Աւետարանս ի քաղաքս Տփխիս, ընդ հովանեաւ Սուրբ Կաթողիկէ Աստուածածնիս, ձեռամբ անարհեստ գրչի Աստուածատուր անարժան քահանայի, ի խնդրոյ Գիշատ տանուտէր բարեպաշտի:

Հիշ. ԺԵ, Բ, էջ 361-362

25

## ՏԱՂԱՐԱՆ

(Երուսաղէմ, 1193, էջ 460v)

1476

Գրիչ՝ <Ստեփանոս Չմշկաձագցի՞>

Յ ի շ ա տ ա կ ա ր ա ն ա ղ է տ ի ց

Եւ այս լինի ըստ իմ մեղաց,  
Որ բարկանայ մեզ տէր Աստուած,  
Շրջէ զսիրտ բռնաւորաց,  
Առ ի բառնալ զմեզ ի կենաց:  
Որպէս ևղև ի յայսմ ամի  
Յինըն հարիւր Հալոց թուի  
Ել ի քսան հինգ սկսեալ ամի (1476),  
Որ տանուտէր Կարիճն ասի,  
Հասան փաղշահըն մեծ սուլտան  
Յամէն դիմաց հրաման եհան,  
Որ զօրք բազում ժողովեցան,  
Վասըն աւերմանցն Վրաց տան:  
Հարիւր հազար թիւ էր համակ

Ի ձիաւոր 'ւ ի հետեակ.  
 Տփխիս մտին խիստ համարձակ,  
 Առեալ արին զնա աւերակ:  
 Բագրատ թագաւորն Վրաց տան  
 Գնացեալ էր ի Լակզտան,  
 Մնացեալ աշխարհն անտիրական:  
 Եւ այս կամօքն աստուածային  
 Վասն չարեաց Վրաց ազգին,  
 Որ ըզսուլթանն կաշառեցին  
 Եւ գոողորթայ ի մէնջ առին:  
 Զթուրքմանի ճայնն երբ լսան,  
 Ամենեքեան ելեալ փախան,  
 Մայրս 'ւ ի մացառուտս գնացեալ մտան,  
 Ի այլքն ի բերդերն ամրացան,  
 ԶՏփխիս առեալ և նստէին,  
 Զմնացեալսն ինքեանց հնազանդէին,  
 Գունդ մի հեծեալ պատրաստեցին  
 Գօրոյ վերայ յուղարկեցին:  
 .....  
 .....

Հիշ. ԺԵ, էջ 394-395. Հմմտ. Մալր ցուցակ Սրբոց Յակոբեանց, ր. Դ., էջ 315

26

ԱԲԵՏԱՐԱՆ\*

(Երևան, ՍՄ., № 6319, էջ 246v - 248r)

1477

Գրիչ՝ Մելիքսէթ  
Վալր՝ Էգէպատ գիւղ

...Յամի յինն հարիւր քսան և վեցերորդի թուականութեանս  
 Հայոց (1477) գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ անարժան և ա-  
 նարհեստ գրչի Մելիքսէթ սուտանուն իրիցու, որ անուամբս եմ կո-  
 չեցեալ և գործովս ոչ, ընդ հովանեաւ Սուրբ Փրկչիս, ի գաւառս  
 Բասենոյ, ի գիւղս որ կոչի Էգէպատ, ի դառն և յանբարի ժամանա-  
 կիս, որոյ արդարութեանն կողմն հակեալ էր և անիրաւութիւն և  
 անկարգութիւնն ամենայն ուրէք զաւրացեալ, և ուր ուրէք գտա-

---

\* Թեմաների ուրույն ընտրությամբ, կատարողական ինքնատիպությամբ և տեխնիկայով  
 ուշադրության արժանի են այս Ավետարանի մանրանկարները, որոնք պատկանում են  
 հայ մանրանկարչութեան ժողովրդական ուղղությանը: - Լ.Խ.

նէր ճշմարտութիւն վասն ծովացեալ մեղաց իմոց, ի բազմանալ անաւրինացն և ի նուագել քրիստոնէիցն, ի թագաւորութեան Վրաց Բագրատա, և ի յաթաբեկութեան Ղարղարէի, և ի ղանութեան Տաճկաց թոռինն Աւթանա՝ Ուզուն-Հասանին:

Ի թուականութեանս Հայոց Զ. և ԻԵ. (1476) ամի, ամսոյն Սեպտեմբերի ժողովեցան անթիւ զաւրքն Տաճկաց և գնացին ղազա ի Վրացտուն, և իջեալ բանակեցաւ առ ափն Քոռ գետոյն, ի քաղաքն Փայտակաւարս, որ այժմ ասի Տփլիս, և սփռեաց զաւրսն իւր յաշխարհն Վրաց, և հասեալ մինչև ի սահմանս Ափխազից, և ելեալ ի կատար լերինն Կովկասու, և անդի ժողովեցին բազում աւարս և գերիս ի մի վայր, և շատ ոճիրս գործեաց: Քանզի ԼԲՌ. (32,000) գերեցաւ և ԽԼՌ. (48,000) մարդ ի սուր սուսերի մաշեցաւ: Զայս ամենայն մեր լուեալ և տեսեալ զարհուրէաք, զի ողորմածն Աստուած յանողորմն սուրն մատնեաց զազգս քրիստոնէից վասն մեղաց իմոց. քանզի թոյլ ետ ողորմածն Աստուած, և մտեալ սատանա ի սիրտ յանողորմ յազգին Տաճկաց և կատարեաց զցանկութիւն իւր, զոր Տէր Աստուած փրկեաց զամենայն քրիստոնայքս ի յանաւրինաց և ի սատանա[յ]ի փորձանաց, ամէն, եղիցի, եղիցի:

Նաև յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր, ո՛վ սուրբ ընթերձաւք Սուրբ Աւետարանիս, զստացող սորա զԳրիգորն՝ զԵղիին որդին, զի յոյժ փափաքանաւք և ջերմեռանդ սիրով ստացաւ զՍուրբ Աւետարանս ի հալալ յ<ը>նչից իւրոց յիշատակ իւր, և զաւակաց իւրոց Մխիթարին և Հարապետին, և դեռաբուս մանկանցն Ազիզբէկին, Եղիին, Մուսէսին, և եղբաւրն Սահակին, և ծնաւղացն իւրոց՝ փոխեցելոցն առ Քրիստոս՝ զհայրըն իւր զԵղիէն և զմայրն իւր զՄարթան, և զայլ ամենայն առուարեան մերձաւորսն և զհանգուցեալսն յիշեցէք առ Քրիստոս...:

Եւ խոշորութեան գրիս և սղալանաց անմեղազիր լերուք, զի կար մեր այս էր:

Այլ և յիշեցիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զփցուն գրիչս զՄելքիսէթ սուտանուն երէցս, և զհայրն իմ զՍիմէոն քահանայն, և զմայրն իմ զՂալաթ-Խարունն, և այլ զամենայն արեան զմերձաւորսն իմ՝ զփոխեցեալքն առ Քրիստոս...:

## ԱԲԵՏԱՐԱՆ

(«Արարատ», 1911, Մարտ, էջ 219 - 220)

1477

Գրիշ՝ Զաքարիա  
Վայր՝ Աշոտա-ձոր,  
Յանկիւնեայ վանք

...Եւ արդ, գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թվին Հայոց Զ. և ԻԶ. (1477) ամի, ի ձորս Աշոտա և ի վանս Յանկիւնեաց, ընդ Հովանեաւ Սուրբ Լուսաւորչիս, և Սուրբ Վարդիհաւր գերեզմանիս տես<sup>(Ը)</sup> տաճարիս, և սքանչելագործ Սուրբ Նշխարացս, ձեռամբ մեղսամած և անարժան գրչի Զաքարիաի, ի թագաւորութեան Հասան պարոնի, որ առ ու գերի արաւ գաշխարհն Տփլիս՝ ԿՌ. (60,000) մարդ. ԼՌ. (30,000) ի սուրն անցուցին, ԼՌ. (30,000)՝ գերի, վա՛յ ինձ հազար բերան. ի հայրապետութեան Տէր Սարգսի: Եւ արդ, յերես անկեալ աղաչեմ զմանուկս սուրբ եկեղեցւոյ յիշել ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող աստուածաբան սուրբ Աւետարանիս՝ զհաւատարիմ և զհոգևոր քրիստոնէն զԱզնեոն, և զկողակիցն իւր զԳրշիտյ-Մելիքն, և հարազատ որդին իւր Մխիթար քահանայն և զկենակիցն իւր Գոհար, և զորդին իւր Մելիքսեթ քահանայն, որ ստացաւ զՍուրբ Աւետարանս իւրեանց յիշատակ, և ծնաւդաց նոցին, և եղբարցն Մարտիրոսին և Յովհաննիսին, պարոն Սէթ սարկաւազին, և քվերն նորա Ազնեոն, և ետուր զսայ նորայընձայ քահանայիս տէր Մխիթարիս...:

Դարձեալ, կրկին աղաչեմ յիշել ի Քրիստոս զպատեական և զսրբասնեալ քահանայն զուսուցիչն իմ զՏէր Կարապետն, և զմիւս վարպետն իմ զՏէր Ոնոփրիոսն, որ փոխեցաւ..., և զհայրապետն մեր զՏէր Գրիգոր եպիսկոպոսն, և զտէր Աստուածատուր հրարպետն, և զտընտեան՝ զՀնէրիքն, որ սիրով հոգւոյն նեղացան և սպասաւորեցին Սուրբ Աւետարանիս և հոգ տարան ի թուղթ նշայել, որ ի յաւել ածելն, որն ի ջրին բերելն, որ և ինքն Տէր Աստուած Յիսուս Քրիստոս անթառամ փառօքն զարդարեսցէ զնոքօք, ամէն: Եւ զիս՝ զանարժասն գրիչս Զաքարէ քահանայս, որ զանուն ունիմ և զգործս ոչ՝ յիշման արժանի արարէք միով Աստուած-ողորմիւ, և զծնողսն իմ զՄելիքսեդն, և զմայրն իմ զՄելիքն, և զեղբայրն զՎասիւն, և զքոյրն իմ զՍալի-Մելիք, և զՏովլաթն, և զՄարիամն, և զամենայն արեան մերձաւորսն՝ զկենդանիս և զհանգուցեալսն, ամէն: Եւ զՄարկոսն, որ զթուղթն կոկեց, և զուր յիշողքդ և մեք յիշեցեալքս մասն բարեաց ընկալցուք ի Քրիստոս Աստուծոյ մեր<ոյ>, ամէն և եղիցի:

Աւարտեցան Սուրբ Աւետարանս Յուլիս ամսոյ ի Ե. (5)...:  
 Զեռս երթայ՝ դառնայ ի հող,  
 Գիրս մնայ յիշատակող...:

Հիշ. ԺԵ, Բ, էջ 418 - 419

28

ԳԱՆՁԱՐԱՆ

(Երևան, ՄՄ, № 7593, էջ 273v, 194r)

1484

Գրիչ՝ Ստեփանոս

Ա

Փառք... որ ետ կարողութիլն [տ]կարիս հասանել ի յաւարտ  
 գծիս:

Աւերտե<ց>աւ քրիստոսահիմն և հոգիաբուղի Գանձարանս  
 <ի> թուաբերութեանս Հալիագեան տաւմարիս ԶԼԳ. (1484), <ի>  
 հայրապետութեան տեառն Սարգսի ի յաթոռ Սուրբ Էջմ<հա>ծինն, որ  
 ի Վաղարշապատ, եւ ի յառաջնորդութեան> ուխտիս զմեծ դիտա-  
 պետ զՏէր Յոհաննէս արհեստակրպոսի և> զեղբայր նորին զՏէր  
 Ստեփանոս եպիսկոպոս: Եւ ի յաշխ<ար>հակալութեանն կորովի և  
 յաղթող մանկանն <Եա>ղուբէկին, որդոյ մեծին Հասան-բէկին, որ բա-  
 զում <քա>ղաք և տեղիք էառ և աւեր արար, և գնաց ի Վր-  
 <աց>տուն, և զաւ<ր>քն սրփռեալ տարածեցան յերկիր /// և մտեալ  
 ի մեծ քաղաքն Տրփիսիս, և սուր ի <վերայ եդ>եալ կոտորեցին առ-  
 հասարակ գծերս և գտ<ղայս, ա>ռհասարակ՝ զքահանայքն և  
 <գսա>րկաւագ<ունքն> ի յեկեղեցո միջին զենուին: Եւ զորս  
 փախըստա<կան ի> մացառս մայրոյ որոնէին և գտեալս <զենէին  
 որ>պէս զանասուն, և զբազումս գերեցուցին /// աւերեցին և բա-  
 զում նոճիրս գործեցին /// փախըստական արարին ///

Բ

194r Զանպիտան մեղաւք ի լի Ստեփանոս գրիչս յիշեա:

Հիշ. ԺԵ, Գ, էջ 55

29

## ՇԱՐԱԿՆՈՑ

(Երուսաղեմ 1657, էջ 728-729)

1485

Գրիչ՝ Մկրտիչ  
Վայր՝ Տփլիս

Ա

...Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Շարակնոց, ձեռամբ յոգնամեղ և անարժան գրչի Մկրտիչ յիրիցի, ի թուի Հայոց ՋԼԴ. (1485)-ի. գրեցաւ սուրբ երգարանս ի քաղաքս Տրփլիս, ընդ հովանեաւ սուրբ Կաթողիկէիս և բժիշկ ցաւոց Մաւղնոյ սուրբ Գէորգիս: Արդ, ցանկացող եղև այսմ աստուածաշունչ երգարանիս, տէր Տիրատուր քահանայ, եւ ետ գծագրել մեծաւ ծախիւք ի վայելս վայելուչ անձին իւրոյ, և յիշատակ իւր, և ծնաւոց իւրոց՝ հաւր իւր Թաթեոսի և մօր իւր Աւրտու-Մելիքի, և կենակցին իւր Ասանթեոյ, և նորաբողբոջ գաւակաց իւր՝ Աստուածատրին և Զեկելիս և Դանիէլիս, և այլ որդի Միրիշանիս և Ուսեփիս, և հարազատ հղբարց իւրոց:

Արդ, եղև աւարտ գրչութեան այս մեծահանդէս ոսկիազարդ և հոգելից տառիս և շրջագայութեան Հայկազեան տուժարի ՋԼԴ. (1485), ի դառն և ի չար ժամանակի, որով նեղիմք ի բռնութենէ յանօրինաց, ի դանութեան Հասան-բէկիս, որ և գերեաց զՎրացտուն, և աւերեաց զքաղաքն Փայտակարան: Ի հայրապետութեան տեառն Սարգսի յառաքելական աթոռն ի Սուրբ Էջմիածին, որ ի Վաղարշապատ, ի խնդրոյ և յարդեանցս երիցս երանեալ Տիրատուր քահանայս, ի վասն որոյ յերեսս անկեալ աղաչեմք զամենեսեան, որք լուսաւորիք սովաւ ուսմամբ կամ գաղափար առնելով, յիշեցէք ի Քրիստոս զվերոյգրեալ ստացողք տառիս Տիրատուր քահանայ, հանդերձ ծնօղաւք և ամենայն արեան մերձաւորօք... ասելով ի խորոց սրտէ, թէ Տէր Աստուած ողորմեա նոցա և ջնջեա զձեռագիր յանցանաց նոցա, ամէն:

Բ

Ծաղկող՝ Ստեփանոս Առնցեցի

Նկարեցաւ Շարակնոցս ձեռամբ Ստեփանոս եպիսկոպոսի յԱռնցեցոյ ի խնդրոյ Տիրատուր աւաքիւրիցոյ: Աստուած վայելել տացէ իրն և որդոց իւրոց, ամէն. թվ. ՋԼԶ. (1487) ծաղկեցաւ:

Գ

ՋՏէր Տիրատուր անկեալ առ ոտս գերեզմանին յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ, ամէն:

Պ

*Ջանարժան նկարող զՍտեփանոս եպիսկոպոս յիշեց՝ ք ի Քրիստոս  
և Աստուած զձեզ յիշէ, ամէն:*

*Ծաղկեցաւ Շարակնոցս ի խնդրոյ Տիրատուր իրիցու, յիշեցէք ի  
Քրիստոս միով ողորմայիւ և Աստուած զձեզ յիշէ, ամէն:*

Հիշ. ԺԵ, Գ, էջ 466 - 467

30

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Մայր Աթոռ 129, «Էջմիածին», 1960 թ. Թ, էջ 63)

Ա

1488/1489

Գրիչ՝ Մկրտիչ  
Վայր՝ Տփլիս

*Փառք... Ըստ յաճախման աստուածային Բանին և զՀոգւոյն  
Սրբոյ, որով լուսաւորէ զՀոգիս աստուածասիրաց անձանց և  
տպաւորէ ի նոսա զլոյս աստուածագիտութեան և մերձաւորս առ-  
նէ աստուածային երանութեանն: Որ և զհոգւր սիրոյ իւրոյ արկեալ  
ի սիրտ աստուածասէր սրբասնեալ հեզահոգի Ղազար քահանային,  
որ մեծաւ ջանիւ և փափագանաւք ետ գրել զսուրբ Աւետարանս ի  
վայելումն անձին իւրոյ, և ծնաւդաց իւրոց՝ հաւրն իւրոյ Սքանդա-  
րին և մաւրն իւրոյ Բեգի-Խաթունին, և կենակցին իւրոյ Գուլումին, և  
եղբարց իւրոց Ջանդարին, Մարտիրոսին, Թադէոսին, Ստեփանոսին, Ջաֆարին,  
Սպանդարին, Խաչատուրին, և որդւոյ իւրոյ Ղուկասին, և դստերաց իւ-  
րոց Թանգիկին, Նարինին, Ազիզին, և քրքերաց իւրոց Դեղա-Խաթունին և  
Մարթա-Խաթունին, և այլ ամենայն արեան մերձաւորացն:*

*Արդ, գրեցաւ զՍուրբ Աւետարանս ձեռամբ մեղապարտ և ա-  
նարժան գրչի Մկրտիչ սուտանուն քահանայի, ի թվիս ԶԼԷ. (1488),  
ի մայրաքաղաքս Տփլիս, ընդ հովանեաւ կամակատար Սուրբ Աս-  
տուածածնիս և Գեորգայ Զարավարիս, ի դառն և շփոթ ժամանակիս:*

*Արդ, աղաչեմ զամենեսեան, որք կարգայք և կամ աւրինակէք  
յիշեսլիք նախ ասացեալ զստացող սորա զՏէր Ղազարն և զիւրան  
ամենայն, ընդ նմին և զհոգւոր եղբայրն և զքաջ վարդապետն  
զԱբրահամն՝ զնկարող և զկազմող սորա, այլ և զհոգւոր եղբայրքն՝  
զՏէր Վարդանն՝ և զՏէր Յովհաննէսն, և զՏէր Եսայի աւագերէցն, և  
զԲարսեղն:*

*Ել որք յիշէք բարի յիշմամբ և աներկբայ հաւատով՝ յիշեալ լի-  
ջիք ի Քրիստոս Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ա-  
մէն:*

Բ

Նկարիչ՝ Աբրահամ

*Ձստացող Սուրբ Աւետարանիս գՂազար քահանայ, գԱբրահամ նկարիչ յիշեա, թվին ԶԼԷ. (1489):*

Հիշ. ԺԵ, Գ, էջ 120

31

## ԱԲԵՏԱՐԱՆ

(ՍՄ, ձեռ. № 219, էջ 142rv)

1599

Ստացող՝ Ամիրջան  
Վարձ՝ Տպխիս

*Փառք... Արդ գնեցաւ Սուրբ Աւետարանս ի դառն և դժար ժամանակիս: Ես՝ Ամիրջանս գնեցի զայս աստուածաշունչ Աւետարանս յիշատակ ինձ և ծնողացն իմոց՝ հաւրն իմ Ալեքսանին և մաւր իմ Նսէփին և կողաքցին իմոյ Ազիզին և որդու իմո[յ] Ալադարտին և քու՛վէր իմ Վարդիսաթունին և ամենայն արեան մերձայորաց, ամէն: Ի հալալ ընչից իմոց և քրտանց գնեցի:*

*Արդ, երես անգ[ե]ալ՝ աղաչիմք զձեզ, ով սուրբ քահանայք, որք հանդիպիք ի սմայ Սուրբ Աւետարանիս կարգալով կամ աւրինակելով, լի սրտիւ և առատ բերանով ողորմի ասէք պարոն Ամիրջանին և մեր մերձայորացն առհաւասարակ՝ մեծի և փոքու, ամէն: Ի թվին ՌիւԸ. (1599)այս Աւետարանս որ գնեցի, էստուր հեղ Գ. (3) գերի գնեցի, ազատ արի:*

*Այս Սուրբ Աւետարանս գնեցինք ի քաղաք որ կոչի Տպխիս, ի դուռն Սուրբ Ծիրանատր Սուրբ Աստուածածնին դրինք ի վախմ: Ով սուրբ քահանայք, ով որ հանդիպիք ի սմայ, միաբան Ա. (1) բերան ողորմի ասէք լի բերանով, որ ով մեզ յիշէ՝ Աստուած զինքն յիշէ աւուր դատաստանին յաւիտեանս, ամէն: Հայր մեր...\**

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց..., հատ. Ա, Երևան, 1984, էջ 985-986:

\* Բուն ձեռագիրը գրված է ԶԺԸ. (1469) թվականին Գորի գյուղաքաղաքում «ընդ հովանեալ Կաթողիկէ Սուրբ Աստուածածնիս, ձեռամբ անարհեստ և փցուն գրչի՝ Գրիգորի, վասն յիշատակի ինձ և ծնաւդաց իմոց՝ հաւրն Զաքարին, մօրն՝ Վարդետիկնայ, նաև եղբարցն և ամենայն արեան մերձաւորացն: Եւ ետու զսայ անջինջ յիշատակ ի դուռն Սուրբ Լուսաւորչին Բրէժու ձեռամբ կուսակրոն արեղային Յովանիսն և սրբասէր քահանային՝ Վարդանին և եղեկիելին...» (էջ 301r):

ՔԱՐՈԶԳԻՐՔ ԵՎ ԱՅԼ ԻՆՉ

(Երևան, № 7951, էջ 259v-261, 29v, 215r )

1614

Գրիչ՝ Յովանէս արեղայ  
Վար՝ Տփխիս  
Ստացող՝ Դաւիթ քահանայ

Ա

Փառք... <Ա>րդ՝ գրեցաւ սբ. գիրքս, որ կոչի Քարոզգիրք և Կանոնգիրք, զոր արարեալ են սբ. վարդապետքն և սբ. հայրապետքն վասն փրկութեան մարդկան և դեղ, և բժիշկ վիրաց մարդկսուն, որք հաւատով յանձն առնուն, զոր ի սմազ գրեալ կան՝ ազատին յօրտենական տանջանացն և փրկին յանշէջ հրոյն: <Արդ> որ և տեսեալ զայսպիսի աստուածաշունչ և զհոգի ընկալ սբ. գիրս, բարեմիտ և հեզաչհոգի սբ. քահանայն Տէր Դաւիթս, և՛ եռապատիւք, և՛ ջերմն սիրով ետ գրել զսալ, ի վայելումն անձին իւրոյ և իւր եղբարցն և իւր որդոցն, ի հալալ և յարդար վաստակոց իւրոց: Զոր և Տէր Աստուած բարով վայել տացէ իւրն և խաղաղական կենաւք պահեսցէ մինչև ի խորին ծերութիւն. ամէն:...

Արդ՝ ով ոք հանդիպիք սմազ կարդալով կամ աւրինակելով յիշեսջիք յերկնագնաց յաղաւթս ձեր զհեզաչհոգի սբ. քահանայն զՏէր Դօթին և զկողակիցն իւր զԹիմայթին, և զծնաւդսն իւր զՏէր Մխիթարն, և զկողակիցն իւր զՇամոյն, և զեղբարքն իւր Շամոն սարկաւագն, զՀոգիջան, զՇահբադին, զմեծ և զփոքր առ հասարակ ողորմի ասացէք. ամէն:

Դարձեալ ողորմի ասացէք Տէր Դօթին, և իւր գաւքանչին Էթար ապաշխարողին, ընդ Սրբոց կուսանացն դասակից և պսակակից լինի. ամէն: Զի բազում աշխատանք ունի ի վերայ Տէր Դօթիս, Աստուած զիւր մեղքն թողու. ամէն:

Արդ՝ և ես յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ դասք լուսերամից, կարգացողք և հանդիպողք սմազ, միով բերանով արժանի արարէք զմեղաւոր Յովանէս գրիչս, զի զանունս ունիմ և զգործս՝ ոչ, ոչ եմ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքոյ գայլ եմ յափշտակող, զի եմ խաբեբայ և ոչ արեղայ վասն բազում մեղաց իմոց: Տեսի զսէր և զփափաք Տէր Դաւիթ քահանային և ըսկսայ գրել զսայ զաւրաթեամբ Քրիստոսի, և աւարտեցի շնորհաւք Հոգոյն Սրբոյ ի թվականիս Հայոց ՌԿԳ. (1614), ի թագաւորութեանս Վրաց Լաւարսափին, որ կամք ընդ ձեռամբ նորա:

Արդ՝ ով ոք կարէ ասել կամ պատմել կամ ընդ գրով արկանել զաղէտ սորայ, զոր առնէ ընդ ազգիս Հայոց, զոմանց որդիքն կու

խլէ, և զոմանց ապրանքն կողոպտէ և հանապազ խարճ ու մալն ու զուլուամն պակաս չէ ի քաղաքէս:

Արդ՝ վայ է ինձ մեղապարտ արեղայիս, որ եկայ և տեսայ զաղետ սոցայ: Զի թագաւորն տղայ է և չէ իմաստուն և կատարեալ, և դռան մարդիքն զինչ որ կամենան զայն կառնեն: Այլ և Պարսից թագաւորն՝ Շահ Ապագ հետ այս թագաւորիս չէ լօ. զի Գ(3) և Դ(4) անկամ էլչի յաղարկեց, թէ արեկ ի մաւտս: Եւ սալ ոչ գնաց: Եւ մեռք յոյժ ահաբեկ կու լինինք ի յահէ նորա. և աւր զաւուր կու սարսենք: Եւ սալ էլ փախաւ ի բերդէս և գնաց յայլ տեղ, և այնուհետև սկսաւ զքրիստոնայքն կեղեքել, կողոպտել: Աւա՛ղ անձին իմոյ, զի կամ ես ի միջի սոցա և հանապազ կու տեսանեմ զտրտմութիւն սոցա. այլ այս ամենայն վասն ծովացեալ մեղաց մերոց, որ ոչ դառնամք ուղիղ սրտիւ ի չարեաց մերոց:

Արդ՝ գրեցաւ սբ. գիրքս ի մայրաքաղաքս Տփլիս, ընդ հովանեաւ Կաթողիկէ Աստուածածնիս և այլ սրբութեանցս, որ յայս տեղս կան: Եւ ես նըստայ ի սորայ գանկակայտանս, որ է շինեալ Ղուկաս արհեսպիսկոպոսն Հաղբատու, Աստուած զիւր մեղքն թողու, որ այսպէս յիշատակ է թողեր հոգոյն իւրոյ: Աստուած ողորմի ասացէք նորա հոգոյն. ամէն»:

Աստուած ողորմի Տէր Մկրտչին և իւր կողակցին, որ զաւրինակն շնորհեաց մեզ. Աստուած զիւր մեղքն թողու և զիւր մեղաց զիրն ջնջէ. ամէն:

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք Տէր Դաւթին և իւր ծնաւդացն, որ լաւ պատուական մատանի մի բաշխեց զբազրիս: Աստուած իւրն բարի որդի պարգևէ, որպէս Աբրահամու զԻսահակ պարգևեց, այնպէս աւրհնէ և պարգևէ զաւակ սորայ, զի յոյժ սէր ունի և փափաք հետ աստուածային գրոց և զարիպ քհանայից և աղքատաց:

Աստուած ողորմի Տէր Դօթի հօրեղբօրն՝ Տէր Շնաւունին, որ հանգուցեալ է առ Քրիստոս: Աստուած զիւր մեղքն թողու, ամէն:

Դարձեալ յիշեցէք առ Քրիստոս զմիայբան Ս. Կաթողիկէ Աստուածածնին՝ զտէր Միխթարն, և զորդին իւր՝ զՏէր Դաւիթն զըստայցող սբ. գրիս և զՏէր Մաթէոս քահանայէն: Աստուած զիւրեանքն սէր ու միաբան պահէ, և զիւրեանց որդիքն առ հասարակ և զմանկունս Ս. Աստուածածնիս՝ զՇնաւուն սարկաւազն, որ աշխատեցաւ ի կոկել թաթիս, զՀոգիշան, զՇահբատին, զՏէր Մաթէոսի որդին՝ Գրիգորն: Աստուած զիւրենքն անփորձ պահէ յամէն փորձանաց. ամէն:

Արդ՝ և ես յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, որ ոչ ով հեռացնել կարասցէ զսբ. գիրքս ի դրանէ Ս. Կաթողիկէ Աստուածածնին՝ ոչ ծախելով և ո՛չ գրաւելով, ո՛չ տանելով կամ գողանալով՝ ո՛չ ի մերոց և ո՛չ յաւտարաց: Եւ ով յանդգնի՝ զանէծքն զԿայննին առցէ...

Բ

Եւ ես Դօհիթ էրէցս զերեսս ի գետնի դնեմ ձեզ, ո՞վ գիտէ թէ այս գիրքս ինչպէս կու լինի. աղաչեմ զձեզ, յորտեղ որ տանին զսալ՝ թէ յանօրինաց ձեռն անկանի, նալ թափէ և դարձուցանէ ի Տփլսեց քաղաքս, ի Կաթողիկէ Ս. Աստուածածնինն: Զի ես յոյժ սիրով և փափաքանաւք տվի գրել զսայ և ընծայ ի դուռն Ս. Կաթողիկէ Աստուածածնին: Ով որ զիմ աւրհնանքն կուգէ, նալ աւրհնութիւն ամենազաւր Փրկչին եղիցի ի վերայ իւրն:

Գ

Աւա՛ղ, յաչացս քունն չի պակասիր, ես ինչ լինիմ:

Դ

Յետ լուսանալ առօաւտին,  
Գնաց Տէր Դաւիթն ի փողոցին,  
Եբեր մեզ թուզ աղլուխով իլին,  
Ի կերակուր գրագրին:

Աստուած զինքն փառօրէ, ուրախանան՝ ինքն և իւր կին աստէն կենան խաղաղութեամբ, անդէն՝ արժան լինին զրախտին:

Ե

Աստուած ողորմի Ազգին որ Ժ. (10) մոմ ետուր գրապրիս, որ գիշերն գրէի և վառէի:

Հիշ. ԺԷ, Ա, էջ 526 - 527

1624

Նուիրատու Անդի Կեսարացի  
Վայր՝ Տփլիս

Գրեցաւ ի թուին ՌՉԳ. (1624), ետուր գիրս զայս ես՝ Անդրի Կեսարացի քահանայ եկեղեցւոյն Ս. Նիկողայոսի, ի քաղաքն Տփլիս: Մի ոք հանցէ զայն:

Հիշ. ԺԷ, Բ, 155

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Երևան, № 7721, էջ 308v-310v, 146v, 238v)

1639

Գրիչ՝ Մուքայել  
Վայր՝ Թրվխս

Ա

Փառք...: Ըստ այսմ աւրինակի փափաքաւղ եղև աստուածային Սբ. Աւետարանիս աստուածասէրն Կարապետ: Արդ՝ եղև զրաւ կատարման սորայ ի թվիս ՌՁԸ. (1639), յորում ղեզերեալ կամք առ զրան սորայ՝ ալն ունելով ամէնաւրհնեալ մայրն լուսոյ Աստուածածնին խնդրել ողորմութիւն մեզ և միեզեն եղբայրութեանս և ամենայն աշխարհի թագաւորաց քրիստոնէից: Եւ ի թագաւորութեան Պարսից Յահ Սաֆուն, և ի Բագրատունեան ազգէ փոքր թագաւոր Ռուսամ խան Թրվխս քաղաքէ, ևս և բարեպաշտ թագաւորին Վրաց Թամրազին, զոր աջն Աստուծոյ պահեսցէ զսալ և զորդին իւր՝ Գաթունան, Հանդերձ ամենայն մերձաւորաւք և հնազանդեցելովք իւրովք ի կամս Աստուծոյ ի խաղաղութիւն: Իսկ քահանայական աթոռոյ սբ. և անբիծ Հայրապետին Տեառն Փիլիպոսի, որ և քահանայապետն մեր Քրիստոս պահեսցէ զսալ, մանաւանդ զքաջ բարունակետն և սրբայնունդ առաջնորդն Մինաս վարդապետն, զոր և Տեառն պահեսցէ իւրովք եպիսկոպոսիւ, քահանայօք, սարկաւագիւ և զքնաւ ուխտ<sup>ե</sup> եկեղեցւոյ սրբոյ. անարատ և ուղիղ Հաւատով մինչև ի գալուստ սբ. քահանայապետին մեր Յիսուսի...<sup>6</sup>:

Եւ արդ՝ մեռօք մեռեալ Հոգիս, անպիտան և Հոգս Կրեմնցի Կարապետ, որ այժմ մականունն Կուլի ասեն, Հայր իմ Թաթեոս և մայրն իմ՝ Վարդիաթունն, քեռին իմ՝ Ճանճանն, եղբայրիս Հասանն, որ ուսումն ունէր և մանուկ տիաւք հառ զվաղձանն, որ փոխեցաւ յերկրէ յերկին և դասեցաւ ընդ անմարմին, քուրն իմ՝ Եղիսայբետ, և կողակցածն իմ՝ Թէթրան և Թորվանտայ, որ փոխեցան առ Քրիստոս, յայժմն Թէթրան, և փեսայն իմ՝ Պաղտասարն, Աստուածայտորն, Պինեաթաղայչին, որ բազում աշխատանք ունին ի վերայ իմ, զոր և ինքն Յիսուս իւրեանց մեղքն չ[յ]իչէ...:

Եկեսցուց ի զրաւ բանիս Սբ. Աւետարանիս գծագրողս, նուաստս և անպիտան, Հոգ և ի գազախ նման Մուքայել, որ կարողութեամբ Տեառն սկսայ և աւգնականութեամբն Աստուծոյ յաւարտեցի ի թվականիս Հայոց ՌՁԸ. (1639), առ ուսուցիչն իմ՝ քաջ

\* Հմմտ. 1641 թ. գրված Աւետարանի Հիշատակարանի հետ:

քարտուղարն Մկրտիչ դպիրն, որ շատ աշխատանք ունի ի վերայ <մեր>, որ չէի արժանի: Բայց ըստ առաւել գթոյն իւր շնորհեաց և ուսոյց՝ և սև գիրն և խամ ծաղիկն առնել երեստ, և նայ ոսկով զարդարեց, զոր Քրիստոսէ առնէ զհատուցումն:

Բ

Յիշեցէք և ի գրչացն մեր հարազատ Տէր Յոսկանն, զոր շատ ջանաց և պատճառ եղև Սբ. Աւետարանի[ս]:

Գ

Յիշեցէք զհոգևոր հայր իմ Տէր Մկրտիչն, զոր որդորիչ եղև Սբ. Աւետարանիս, մանաւանդ մխիթարէր զմեզ՝ ամենայն ժամ յոյս տալով և խրատ մէջ պանդխտութեան:

Գրիչ՝ Մկրտիչ դպիր

Դ

Դարձեալ ես՝ հուսք Մկրտիչ դպիրս զոր ի պանդխտութեան ժամ զայս սբ. Աւետարանս գրել տուի աշակերտին իմոյ, ի դուռն Ս. Բէտլահէմու Աստուածն դուռն և սպասաւոր և տէր սորա տէր Գրիգորն, զի յոյժ կարի աշխատեցաւ Գ. (Յ) ամ ի վերայ իմ համշիրա գուլութեամբ, յիշողքն սորա՝ ի Քրիստոս յիշեալ լինին:

Հիշ. ԺԷ, Բ, էջ 770 - 771

35

ՏՈՆԱՅՈՅՑ

(Վեներ., ձեռ. № 840)

1641 թ.

Գրիչ՝ Սարգիս քահանայ Վայր՝ Թրիխիս

...Արդ գրեցաւ Տօնացոյցս ձեռամբ անարհեստ և փծուն գրչի Սարգիս անուամբ միայն քահանային, ի քաղաքն Թրիխիս, ի լաւ և ընդիր աւրինակէ Ղուկաս վարդապետին Կեղեցոյ, ի խնդրոյ Միգաս վարդապետին Թուխաթցոյ, ի վայելումն իւր, ի թվ. ՌՂ. (1641):

Արդ յիշեցէք զուսուցիչն ի<մ>՝ զՄկրտիչ դպիրն, որ շատ երախտիք ունի ի վերայ իմ:

Մայր ցուցակ... ի Վեներտիկ, ճատ. Ե, էջ 1002\*: Հմնտ. Հիշ. ԺԷ, Գ, էջ 34-35

\* Յուլյակի Ե. Հատորին վերաբերող և Թիֆլիս ներկայացնող ցանկը նույնությամբ կրկնված է Զ Հատորում (1996 թ., էջ 1233):

36

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Երևան, ՄՄ, № 7641, էջ 311v-313r, 94r, 149r-150r, 239rv, 277r, 278v, 68r)

1641

Ստացող՝ Ուլթաևտի  
Վաչր՝ Թախիս

Ա

*Փառք...: Բայց գրեցաւ լուսազարդեալ Աւետարանս ի լուսալրական ժամանակի սկզբանց արարչութեանն մինչև առ մեզ ԻԿԶ. (7066), իսկ ի Կենարարին գալստենէն ՌՈՆԳ. (1643), իսկ ի Շահ Սաֆին Պարսից սկսեալ մերս թիւ ՌՀԶ. (1627): Եւ գրեցաւ սալ ի քաղաքն Թախիս, որ Թրվիս կոչեն: Արդ՝ եղև զրաւ կատարման սորայ ի թվիս ՌՂ. (1641), յորում դեգերե<ա>լ կամք առ դրանն Բեթղեէմայ՝ ակն ունենալով ամենաւրհնեալ մաւրն լուսոյ Աստուածածնին խնդրել ողորմութիւն մեզ և միեղեն եղբայրութեանս և ամենայն աշխարհի թագաւորաց քրիստոնէից: Եւ Բագրատունեան ազգէ թագաւոր Ռուսդամ խան ևս և բարեպաշտ թագաւոր Վրացոց Թամրագ, և որդին՝ Տաթունայն ի Կախէթ, զոր աջն Աստուծոյ պահեսցէ զսայ և զորդիս իւր հանդերձ ամենայն մերձաւորաւք հնազանդեցելովք իրովք ի կամս Աստուծոյ ի խաղաղութիւն: Մանավանդ զքահանայապետական աթոռոյ սբ. և անբիծ հայրապետին տեառն Փիլիպոսի, որ և քահանայապետն մեր Քրիստոս պահեսցէ զսա: ...Եւ արդ՝ մեղաւք մեռեալ հոգիս անպիտան և հողս Ուլթաևտի ետու գրել զՍբ. Աւետարանս ի յողորմութենէն Աստուծոյ...:*

Բ

*Եւ ես՝ Ուլթաևտիէս ըստացայ ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ինձ և իմ որդոցն վայելումն: Ով որ անտգնի՝ ազգ կամ աւտար գողանայ կամ գրաւէ կամ յոյժով ըստանայ ի իմ զարմէն՝ նա ինձ պարտական և աբ ի բերան լինի Քրիստոսի դատաստանին առաջ...:*

Գրիչ՝ Մկրտիչ դպիր  
Վաչր՝ Դրախիս

Գ

*Արդ՝ ես նուաստ ոգնայմեղ քարտուղար Մկրտիչ դպիրս ի քաղաքէն Եբերիոյ, որ եմ տամ[բ]ք ի Շաւշ, և յետոյ նեղութեամբ մեծ պանդրխտեցա[յ] եկի հասայ ի քաղաքն Դրախիս, և թելադրութեամբ Հոգւոյն ըսկիզբն արի Սբ. Աւետարանիս, և գրեցի մատեամբ իմով զչորեքին գլուխն, և ծաղկեցի ոսկով, և Ժ. (10) գունով զարդարեցի զհամայնարբառքն Դ. (4) Աւետարանչօքն զամե-*

նայն: Որ ողորմի Տէրն ամենի հոգոյ սորայ ստացողի պարոն Ութանտիլին և կողակցուն՝ Մարիամին, հաւրն՝ Սուլխանին, մաւրն՝ Թամարին, և իւր որդուն՝ Սուլխանին, Պաքթայակէին, և դուստր Թինաթին, Տարանանին, Լէլային, և եղբայրցն՝ Սորազանին, Պէժանին, Լիպարիտին, Ծանշէն, Ծալուին, հաւր աղբէրն՝ Սորազանն, Ղանտուրալին, պապն՝ Ղարան Մարտիրոսն:

Սոքայ են ի ազգէն Ծանշիանայ: Այս Ծանշիանն է ի ազգէն Հայոց իշխանաց եկեալ է բնակեալ է ի սահմանքն Վերի Քարթլ, ի գեաւղն Վախայ, ընդ հովանեաւ Ս. Աստուայծամաւրն:

Սայ [յ]իշատակ անջնջելի,  
 Բարի գաւակ հոգոց սոցին,  
 Յորժամ որ գայ Տէրն երկնային,  
 Յանճառ փառաւք իւր հայրենին...:

դ

Արդ՝ եղև գրաւ աւարտ Աւետարանիս ի թրւականութեան Հայոց Ռ.Ղ. (1641), ի գաւազանութեան Յախբատայ Ս. Նշանին Միգաս վարդապետին, և առաջնորդութեան Կարոյ՝ Անդրիաս եպիսկոպոսին և Բարսեղ եպիսկոպոս, զոր աջն Աստուծոյ պահեսցէ, կայտառացուցէ հաստայհիմն արասցէ ի վերայ իշխանութեան իւրեանց մինչև ի խոր ծերութիւն:

ե

Ազգիս Հայոց թրւականին,  
 Կրկին քառակ երկ հարիւրին,  
 Ղ. (1641) ամին,  
 Աւարտ եղև գանձս աստուածային:  
 Աւետարան խորհրդով լին,  
 Չորրորդ գլուխ զոր կարգեցին,  
 Ս. առաքեալքն անեղ Բանին...:  
 Ես աղաչեմ կողկողագին,  
 Հանդիպողաց այս սբ. տառին,  
 Որ ննջեցեալս իմ առնէք յիշման,  
 Արժան և ձեզ աւրհնէ անմահ Արքան:  
 Նախ զհայրն իմ՝ տէր Մարգարէն,  
 Եւ զմայրն իմ՝ Նառմելիքն,  
 Եւ պապն իմ՝ Տէր Մկրտիչն,  
 Եւ զեղբայրքն իմ՝ Մկրտիչն,  
 Սիմէոնն, քոյր իմ Մարիամն,

\* Իմա Գաւրոյ (Գորիի) - Պ. Մ.

և այլ ամենայն յարեան մերձաւորքն իմ, որ հանգուցեալ են ի Քրիստոս: Եւ զեղբայրն իմ՝ զքաջ ըրաբունապետն Սիմէոն. ամէն:

Դարձեալ յիշեցէք զհոգևոր հայրն իմ հեզահոգի Տէր Մկրտիչն, [որ] [յ]որդորեց զխոստովան որդին իւր՝ զայս պարոն Ովթանտիւն, որ ըստացաւ զՍբ. Աւետարանս, մանաւանդ զաւրինակն ետ, որ գրեալ և ծաղկեալ ի ժամանակին Հայոց թագաւորութեան Հերթմաչ, և հանապազ ըսփոփէր քաղցրութեամբ զպանտուխտ սիրտս մեր, յոյս դնելով զոր տէր Քրիստոս լցի յաւէտ իւր աւգնական և կարգէ ըստ Մելքեսէդեկի և Ահարոնի նորոյս Սիոնի, մեր Ղևոնդի և այլ ընտրեալ դասի:

Եւս առաւել զսանաչհայրն իմ զՏէր Գրիգորն, որ էի իւր եկեղեցին՝ Ե. (5) ամ Ս. Բեթլահէմն, և էր ըսբասու զտիւ և գիշեր, ըստ կարեացն ծառայէր հոգևորով և մարմնաւորիւ յիշելով զԲանն Տեառն ըստ Ժ. (10) հրամանին, թէ «Աւտար էի և ժողովեցիք, քաղցայ և կերակրեցիք»: Յիշեցէք, որք հանդիպիք այս տառիս կարգալով կամ օրինակելով, և դու<ք> յիշեալ լիցիք ի Քրիստոսէ, ասելով «Եկայք առ իս» և այլն:

Գ

Անեղ Աստուած, անճառական, անհուն և անհաս... Յոր և իւր բազմապատիկ շնորհն և մակացութիւնն ի եղականքս տալով միմեանց մինչև ուսուցիչն իմ Յովանէս վարդապետն և ըրաբունապետն, և նա ևս մասն ինչ շնորհեաց մեզ, զոր և Տէրն տացէ իւր փոխարինեաց...:

Արդ՝ եղև Աւետարանս այս սկսեալ և աւարտեալ ի պանդուխտութեանս, և ոչ էին առ իս աշակերտք իմ կատարեալ, այլ նորահասք քարտուղար Ե. (5)՝ Տէր Յակոբ, Տէր Սարգիս և Տէր Սարգիս, Սրապիոն փոքր և Գրիգոր ցաւակից և սպասաւոր, գտիւ և զգիշեր լաց ընդ լացողս, խնդայ ընդ խնդացողս և զ<հ>ամաքարբառքին մագաղաթն նաչ եհան և գլխոցն Աւետարանչացն: Եւ էին Ե. (5)՝ էքին ի ծառայութիւն ամենայն ոք ըստ իւրեան չափուն: Տէր Յիսուս, տուր սոցա զփափաք սրտիցն, զի մի՛ կարաւտ մնասցին, և տուր համբերութեամբ և խոնարութիւն, զի տպաւորի շնորհ Ա. Հոգոյն...:

37

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Երևան, ՄՄ, № 333, էջ 277r-278v, 68r)

1643

Գրիչ՝ Գրիգոր դպիր  
Վայր՝ Տպխիզ

Ա

Աւարտեցաւ Սբ. Աւետարանս ի քաղաքն Տպխիզ, ի դուռն Բեթխայճեմայ Աստուածածնին, ի ձեռամբ ոգ<ն>ամեղ և անարժան Գրիգոր դպրի, վարպետն իմ՝ Մկրտչին, հայրն՝ Աբրիհամ, մայր իմ՝ Սաթաթուն, եղբայրն՝ Յովանէսն, քոյրն իմ՝ Յեղիսափէթն, և հոգևոր մայրն իմ՝ Մերհուրան: Ո՛վ եղբայրք, կարդալով կամ աւրինակելով Ա. (1) բերան ողորմի ասացէք՝ Աստուած ողորմի ձեզ. ամէն: Թ՛վականին <Ռ> ՂԲ (1643):

Բ

Փառք...: Մանաւանդ ըստացող եղև Սբ. Աւետարանիս նորընծայ Գրիգոր քահանայն աւժար կամաւք և փափաք սրտիւ, և հայրն իւր Վելիճանն, և մայրն իւր՝ Գինարն, և կենակիցն իւր՝ Խանումն, և եղբայրքն իւր՝ Մարգարէն, Ղազարն, Մինասն, և հանգուցեալ եղբարքն՝ Գրիգորիսն, Բեկիճանն, Սարգիսն, Միրզապէկն, Խաչատուրն. և քոյրքն իւր՝ Մարեանն, Գուլին. և հանգուցեալ քոյրքն՝ Խանաղէն, Մարթայն, և փեսայքն իւր՝ Թորոսն, Նաւասարդն: Դարձեալ յիշեցէք զՔաւչարն, Փարին, Դավլաթն և իւր որդիին Էտկեարն և\*:

Գ

Ստացող՝ Գրիգոր քահանայ

Արդ՝ աշխատող եղև Սբ. Աւետարանիս հեղահոգի և բարէմիտ, աստուածասէր Յովասափ քահանայն, մեծաւ ջանիւ պատճառ եղև այսմ աստուածաշունչ սբ. Աւետարանիս ինքենէ տրաւք և իւրոցն որդորելովք՝ վարձահատուցն ամենայնի Քրիստոս Աստուածն մեր հարիւրապատիկ հատուցէ և ի հանդերձելումն. ամէն:

Արդ, և ես անպիտան և մեղաւոր Գրիգոր քահանայ կոչեալ անուամբ և ոչ գործով, աղաչեմ զձեզ յիշման արժան առնէք զիս և զծնողսն իմ. ամէն\*\*:

Հիշ. ԺԷ, Գ, էջ 103. Հմմտ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց... Բ, էջ 80 - 81:

\* Շարունակութիւնն ընկած է: - Վ. Հ.

\*\* Սրա ներքեւում նոտր գրով, հավանաբար Աղվանից կաթողիկոս Պետրոս Դ Խանձկեցին (1653—1675 թթ.) գրում է. «Ես Պետրոս կաթողիկոս քննեցի վկայութեամբ Տէր Տէրունին և այլոց, որ Աւետարանս Գրիգոր իրիցուն է, տուրք ողորմութեան նորա է, նորա լիցի. այլ ոչ ոք բան չունի հետ Աւետարանիս: Ով ոք յանդանի՛ դատի ի աւրէնէս»: Այնուհետև կնիք: - Վ. Հ.

38

## ԺՈՂՈՎԱԾՈՒ

(Մայր ցուց... Երոսպայի..., № 33, էջ 77)

1644

Գրիչ՝ Յակոբ Երեց  
Վայր՝ ԹՎԼԻՍ

Քրիստոս Աստուած ողորմեա իմ ծնողացս... և մաւրս... Քրիստոս Աստուած քո Սբ. ծնաւորի բարեխաւուրթեամբ ողորմեա իմ աղբրտոցս և քվերտացս և ամենայն արեան մերձաւորացս, քրիստոնեաց, լսողաց, օրինակողացս և իմ աներոջս... և իմ զաւքընչիս... ընկերոջս... և ինձ մեղաւոր և անարժան սուտանուն Յակոբ էրիցս՝ թարմատար գրչիս, ամէն:

Գրեցաւ գիրքս ձեռամբ Յակոբ իրիցէս ի քաղաքն ԹՎԼԻՍ ի դուռն Ս. Գաբրիէլ-Միքայէլի, թվականին ՌՂԳ. (1644)-ին մայիսի ԻԴ. (24)-ումն աւարտ եղև: Ամէն:

Հիշ. ԺԷ., Գ, էջ 130

39

## ԳԱՆՁԱՐԱՆ

(Երևան, ՄՄ, № 7491, էջ 234v, 211v)

1656

Գրիչ՝ Աղամալ Զուղայեցի  
Վայր՝ Տըփիսիս  
Նովրատու՝ պրն. Զուրաբ

Ա

Փառք..., որ ետ կարողութիւն տկար և անիմաստ, փծուն գրչի Աղամալ Զուղայեցույ Հասանել ի յաւարտ Հոգիաբուղիս եղանակաւ<որ տառի>ս, որ կոչի Գանձարան, ի մայրաքա<ղաքն> Տըփիսիս, ի դուռն Մօղնոյ Ս. Գեորգե[ւայ] Զօրատարին և կամակատար Ս. Աստուածածնին, ի թուաբերութեանս Հայկազեան տումարիս ՌՃԵ. (1656), ի հայրապետութեան Տեառն Յակոբ կաթողիկոսին, ի թագաւորութեանն տանս Վրաց յազգէն Բագրատունեաց Ռուստամ խանին, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ, ամէն:

Արդ՝ յիշեցէք ի Քրիստոս Աստուած զստացող սբ. տառիս զբարեւէր պարոն Զուրաբն և զծնողսն իւր՝ զՓիթօն, և զԼալիան, և կողակիցքն իւր՝ զԳունդինն զԹէթօն, և ծաղկեալ որդիքն իւր՝ զԽօսանն, զԷստատէն, զԳասպարն և զՆազարն. և զստերքն իւր՝ զՌուսուդանն, զՔիշմիշն, զԹիթօն և զԼալօն, և եղբարքն իւր՝ զԽօսինն, զՊապին, զԲէթօն, զԳեօրկին, զՕտինն, զՇահվերտին, զՄիթգէն և զՓասինն, և քորքն

իւր՝ զԾամօն և զՄիրանդուխն, յիշեցէք և լի սրտիւ Աստուած ողորմի սասցէք. ամէն:

Բ

Զգծող սորա Աղանալ Զուղայեցի յիշեցէք:

Գ

Արդ՝ ես բազմամեղ Զուրաբս ստացայ զսուրբ տառս և եղա յիշատակ ի դուռն Ս. Նշանին, ի ձեռն Տէր-Ոհան քահանային, յիշեցէք...

Հիշ. ԺԷ., Գ., էջ 720-721

40

## ԱԲԵՏԱՐԱՆ

(Ծաղիկ, 1892 թ., № 38, էջ 439)

1657

Կազմող՝ Գարեանէ

Փառք... Կատարեցաւ խնդրու<ա>ծս Յաւետիս եպիսկոպոսիս և միաբանացն ամենեքեան, որ է առաջնորդ Հախպատայ Ս. Նշանիս յիշեցէք...: Դարձեալ յիշեցէք հոգևոր մայր իւր Ազիզ ապաշխարողս, որ շատ աշխատանք ունի այս սրբոց դրունս, յիշեցէք...:

Զվերջին կազմողս մեղսապարտ և սուտանուն Գարեանէ ապաշխարողս յիշեցէք և Աստուած զի ձեզ յիշէ, եղբայրք իմ թողութիւն շնորհեցէք ինձ՝ աչքս վատ այ տեսեր, խիստ խաղաղութիւն էր ժամանակս, թ<ա>գօրութիւն Առեստում խանին էր, առաջնորդութիւն՝ Էջմիածնայ Տեառն Յակոբայ, որ երեկ Վրաստան Թիպլիս քաղաքն Ե. (5) ամիս եկաց, եպիսկոպոսունքն ամենեքեան յինքեան ունէր, շէն կենայ քաղաքն, դարձաւ ուրախութեամբ աթոռն իւր, որ շինեալ էր Յաւետիս եպիսկոպոսն եկեղեցիքն իւր, և խիստ աշխատեցան ամենեքեան, յիշեցէք...\*:

Հիշ. ԺԷ., Գ., էջ 795

\* Թեև ընդօրինակութեան տարեթիվը չի նշված, բայց պայմանականորեն գրեցինք 1657 թ. շարքում. նկատի ունենալով Վրաց թագավոր Ռոստոմի 1634-1658 թվականների թագավորության և Հակոբ Զուղայեցու 1655-1680 թվականների կաթողիկոսութեան տարիները, այսինքն՝ Ռոստոմի թագավորության վերջին և Հակոբ Զուղայեցու կաթողիկոսության սկզբի տարիները՝ 1655-1658 թթ.: - Վ.Ն.

## ՍԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԴԻՈՆԻՍԻՈՍԻ ԱՐԻՍՊԱԳԱՅԻՈՅ

(Երևան, ՄՄ, № 5053, էջ 7r, 286v-287r)

1659

1660

Գրիչ՝ Բարսեղ արեղայ

Վաչր՝ [Թիֆլիս]

Ա

*Եւ զիս մեղաւոր Բարսեղ արեղայս յիշեալի Տէր յաղօթս քո:*

Բ

*Փառք... Ետ փափագ և ցանկութիւն ունայնակրի և փինատական հոգւոյ Աւետեաց Տփխեցւոյ անուամբ ևեթ համանաւորի\* և աշակերտի երիցս երանեալ և երջանկազարդ Յակովբայ հայրապետի Ջուղայեցւոյ և կաթողիկոսի իջման Միածնի բանին: Վասն որոյ սէր արբեալ ըղձամբ բաղձացող այսորիկ Դիոնէսիոսի իմաստալից գանձարանիս և աստուածատեսակացն թաքնուեաց կարգաց աւրհնաբանողի եղէ տառիցս յիմում կենդանութեանն հոգի և ներանձինն արարողականի և կրողականի ճառագայթ: Եւ զկնի իմ յելիցն յաղցաւորէս թողցի յիշատակ ինձ հոգւոյ և զաւակաց Սիօնի առ մեծարգոյ հարցդ և բարեբաստիկ յեղբարսդ, որպէս զի յընթերցմանն ժամու և յառնելն գաղափար և կամ ի տեսութիւնն ժամանել, յիշեսջիք ի ձերում յարածօնականն աղօթս և ներերկնաճեպական իղձսն առաջի արդար և էին և գերակատարողապետ պատարուն տուփելոյն զոստաքանցս և պտղածախս հանդերձ հոգւոր և մարմնաւոր ծնօղքն, որք յոգնալիր պատարուն երկամբք դարմանեալ հասուցին յայսմ աստիճանի, որոց վարձահատոյց Տէրն բոլորից և Աստուածն բարձանց լիցի այժմ և յապագայն և յարակայ երանութեանն: Ընդ սմին մաղթեմ յիշել զքաջաբան ըբբունիսն զԳալուստ Նորգցին և զԻսահակ Մակուեցին, որք են երախտաւորք առ յիմաստս աստուածային գրոց: Եւ մանաւանդ սիրասնունդ և հարազատ եղբայրն մեր զՎարդան արշիղիակօնն, որ եղև առիթ առ ի ստացումն մատենիս այսորիկ: Եւ զգծօղ սորին զՄարգարէն և զճաղկօղ տէր Յակոբն: Գրեցաւ ի թուոյս Արամեանս ազնի Ռերորդի հարիւրերորդի եւ ութերորդի (1659) և Արեգի ամսոյ ի ԻԵ. (25)\*\**

\* Այս բառի վերևում տողամեջ, հավանաբար մեկ ուրիշը գրել է «վարդապետ»:

\*\* Հայոց ՌձԸ թվականի արեգի 25-ը շարժական տոմարի հաշվով կլինի 1659 թ. մայիսի 30-ին: - Վ.Հ.

42

## ԺՈՂՈՎԱԾՈՅ

(Երուս., № 992, Մայր ցուցակ, Գ., էջ 592)

1703

Գրիչ՝ անհայտ  
Վայր՝ Թիֆլիզ

*Թողղթ Կոստանդնուպոլսեցի Գեորգ վարդապետին՝ գրեալ Ֆռանկսըզ-  
զերէն առ ասորի ոմն, սնունդ դպրատաւնն Փարիզու, վասն դար-  
ձուցանելոյ զնա ի մոլորութենէ փափապաշտից: Եւ թարգմանեալ  
ի հայ բարբառ ի պետս Ֆռանկացեալ Հայոց: Ի հայրապետութեան  
իմաստափառ և սրբազան Աղէքսանդր Կաթողիկոսին, ինքնագլուխ և  
տիեզերական եպիսկոպոսապետին ամենայն Հայոց: Ի թվին Հայոց  
ՌՃԾԲ. (1703), ի Թիֆլիզ մայրաքաղաքին Վրաստանայ:*

43

## ԺՈՂՈՎԱԾՈՅ

(Վենետ., ձեռ. № 1238, էջ 134, 158)

1724

Գրիչ՝ Մարտիրոս  
Վայր՝ Կտուց, Թիֆլիզ

*Գրեցաւ Կտուց անապատն, ձեռամբ անպիտան մեղօք ներկեալ,  
ցաւագարեալ կենօք, մոլեալ, տարակուսեալ և շխարեալ, միշտ ե-  
րերեալ տարաբախտեալ, անհանգիստ լեալ, թափառական աստ-  
անդ շրջեալ Սորիտրամէ (իմա՝ Մարտիրոս) անուամբ յետնեալ, ՌՃ.  
թվին հասեալ, ԽԶ. նմին լրեալ (1697), Աւգուստոսի եղև գրեալ,  
վայ ինձ (էջ 134):*

*«Գրեցաւ ի Թիֆլիզ, ՌՃՀԳ. (1724), Մարտի ԻԲ. (22) Մարտիրոս  
վարդապետէ» (էջ 158)*

Մայր ցուցակ...ի Վենետիկ, հատ. Է., էջ 246

44

## ԱՄԻՐՂՈՎԱԹ ԱՄԱՍԻԱՅԻ, ԱՆԳԻՏԱՅ ԱՆՊԵՏ

(Երևան, ՄՄ, ձեռ. № 411, էջ 206ր)

1745

Գրիչ՝ Գրիգոր քահանայ  
Վայր՝ Տփլիզ

*...Աւարտեցաւ գիրքս, որ կոչի Բժշկարան ի ժամանակս հայրա-  
պետութեան Տեառն սրբազան Ղազար Կաթողիկոսին և թագաւորու-*

*Թեան ի Վրաց Թեմորագ-խանին, ի քաղաքն Տփլիզ, որ է Փայտակարան, ընդ հովանեալ Մուղնու Սուրբ Գեորգայ բազմաչարչար Զօրավարին:*

*Գրեցաւ ձեռամբ մեղաւոր և անարժան Տէր Գրիգոր լոկ անուն քահանայիս, ի խնդրոյ հաքիմ Մկրտումի որդի հաքիմ Ովսէփին: Աստուած իւրեան վայելեալ տացէ որդոց մինչև որդիս. ամէն:*

*Արդ, ով ընթերցողք, յորժամ բանաք զայս գիրս՝ կարգալով կամ օրինակելով, մի բերան լի սրտիւ յիշեսջիք և ողորմի ասացէք զգծողս սորին Տէր Գրիգոր քահանայս, և դուք յիշեալ լինիք սոսկալի օր դատաստանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Ամէն:*

*Թվին ՌՃՂԴ. (1745)-ին, Դեկտեմբեր Ժ. (10):*

*Ո՛ր գիր, որ մնաս,*

*Ո՛ր ձեռն, որ հող դառնաս:*

*Ո՛վ եղբայր, որ կարդաս*

*Մեղաւորիս ողորմի տաս:*

Մայր ցուցակ հայ. ձեռագրաց... հատ. Բ., էջ 392:

45

### ԱԲԵՏԱՐԱՆ

(Մասնավոր հավաքածո, Յուցակ ձեռ. որ ի «Հանդես ամսօրեայ»,

Խմբ. Հայր Հ. Ոսկեան, Վիեննա, 1976, էջ 89)

1749

Գրիչ՝ Մեսրոպ Յոնյանց

Վայր՝ Ծօշ-Ասպահան

*Յիշատակ է Ս. Աւետարանս Թիֆլիզցի կուսակրօն և վարպետ Մարիամին. միթէ Տէրն Քրիստոս զվերոյգրեալ Վերինն յերուսաղէմայ արժանիս առնէ և Սուրբ Աւետարանս բարեխօս լինի իւր հոգոյն և ծնողացն և որվ ասէ Յեկայք օրհնեալք հօր իմոյ, ամէն: Հայր մեր, և որ կարթ[այք] Ա. (1) բերան յողորմի ասէք, ամէն:*

*Թվ. ՌՃՂԸ. (1749), Ապրիլի Ժ. (10)-ին:*

46

### ՎԱՍԻԼ ԲՐԱՏՏԻՇՉԵՎ

*Բացատրութիւն անցիցն անցելոց ի մէջ Ծառ Նադիրա և աւագ որդւոյ նորին Ըորգա-դուլի Միրզին տրտմալի պատմութեանց ի երկրին Պարսից յամս 1741-1742, արարեալ ի դատաստանական խորհրդակից Վասիլի Բրատիշչևի... տպեալ ի Ս. Պետերբուրգ, յամի 1766:*

1803 (Երևան, ՄՄ, ձեռ. № 10899, էջ 1r)  
Գրիչ՝ Ստեփանոս Մանդենով  
Վայր՝ Թիֆլիս

*...Իսկ այժմ յամի 1778 Ստեփան դի ի Մանդենովս գրեցիմ այսպէս, թիւն 1803\*, Յունվարի 22-ամն ի Թիֆլիս:*

47

## ՏԱՂԱՐԱՆ

(Երու., ձեռ. № 3665)

1809 Հեղինակ՝ Մկրտիչ վրդ.  
Վայր՝ Տփլիս

*Ոգեալ ի Մկրտիչ վարդապետէ Երևանցոյ ի միաբանութենէ Ս. Երուսաղէմի, ի գոյն յարմար ձևովին, թուին ՌՄԾԸ, ի Տփլիս քաղաքի, ի դառն պանդխտութեան, ի սէր Ս. Երուսաղէմայ (էջ 1):*

*...Զբացմանէ վարդին զմայլումն սոխակին, ոգեալ ի նուաստ անձնէ Յոհաննէս Աբասելեքեան Թիֆլիզցոյ ի գոյն Սարի Ղզին, 1805 ամի:*

Մայր ցուցակ..., ԺԱ., էջ 84:

48

## ԲԱՐՈՉԳԻՐՔ ՊԵՏՐՈՍ ՎՐԴ. ԱՂԱՍԱԼԵԱՆԻ

(Երու., № 615)

1822 Գրիչ՝ Յօհան Զմիտնացի  
Վայր՝ Թիֆլիզ

*«Գիրք քարոզից», արարեալ հեղինակութեամբ Ս. Գրոց և մատենից եկեղեցականաց ի Պետրոս վարդապետէ Նախիջևանցոյ Աղամալեան կոչեցելոյ արքեպիսկոպոսէ ի փառս Աստուծոյ և յօգուտ ազգիս բանասէր քարոզչաց: Ի հայրապետութեան Ս. Էջմիածնի Տեառն Սիմէօնի յոգնահանճար կաթողիկոսի ամենայն Հայոց: Իսկ նարդեանս նորոգ գաղափարեցաւ ի յընտիր յօրինակէ աշխատասիրութեամբ Զմիտնացի Յօհան սևակրի՝ յետին միաբան և ավելածո Ս. Երուսաղէմի, յամի Տեառն 1822, Հայոց՝ ՌՄՀԱ. (1822), ի Թիֆլիզ:*

Մայր ցուցակ, Գ., էջ 73

\* Թվականը գրված է հետագայում, այլ գրություններում:

49

## ԳԱՆՁԱՐԱՆ

(Վեներ. ձեռ. № 1282)

1823

Կազմող և գրիչ՝ տիրացու  
Յոհաննես Էջմիածնեցի  
Վաչր՝ Թիֆլիզ

«Քանձարան գեղեցիկ և վայելուչ համառօտիւ ժողովեալ ի բուն իսկ եկեղեցական Քանձարանէն պատշաճաւոր զրութեամբ, յորում պարունակին նախ մեղեդիք տէրունական տօնից և ամենայն սրբոյն Աստուծոյ: Երկրորդ Քանձարան և Տաղարան տէրունական աւուրց և տօնից ամենայն սրբոցն, սկսեալ սկիզբէ ամին մինչև զկատարումն տարոյն, ուղղապէս հետեւելով ըստ առաջին հատորի, նոր Տօնացուցի Հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ:

Օրինակեալ ի Թիֆլիզ, աշխատասիրութեամբ Էջմիածնեցի Աստուածտուրեան Տէր Յարութիւնի որդի տիրացու Յոհաննեսին, ի ժամանակի տէրութեան ի յաւուրս հայրապետութեան Տեառն Եփրեմայ երիցս երանեալ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց, յամի Տեառն 1823 և ի Հայոց ՌՄՀԲ. (1823), Սեպտեմբերի 1»:

Մայր ցուցակ... ի Վեներիկ, րատ. Ե, էջ 614

50

## ԲԺՇԿԱՐԱՆ

(Երևան, ՍՄ, ձեռ. № 10484, էջ 7v)

1831

Գրիչ՝ Մահտ. Գաբրիէլ  
Վաչր՝ Թիֆլիս

Գրեցաւ եւս Սեպտեմբերի Ա. (1)-ին ի Թիֆլիս ձեռամբ մահտեսի Գաբրիէլի: Օվ որ հանդիպիք միք մեղադրել. տունս-տեղս Ղարս զարկեցի, դարտարկ եկի Թիֆլիզ, ումեքէ օգնութիւն չունէի, միայն Աստուած ապաւի[ն]ելով կամ, խնդրեմ սխալականս ներէք՝ ա) ուղիղ սրտիւ Հայր մեղայ ասէք, որ Աստուած ողորմի պապօս՝ Տէր-Վարդան, հայրս՝ Տէր-Գրիգոր, եղբարս՝ Տէր-Աբրահամ, մուսու եղբայրս՝ Տէր-Սիմոն, եղպարս՝ տիրացու՝ Միքայէլ, որդիս՝ տիրացու Յակոբ, մայրս Մարիամ. սոքա հանգուցեալ են, Աստուած ողորմի իւրեանց:

Ես՝ մեղօք լցեալ մահտեսի Գաբրիէլս ձերացեալ տարիս ԿԳ. (63) էր, սիրական որդիք Աստուծոյ տիրացու Ըստեփանոս, տիրացու Մկրտիչ, տիրացու Գրիգոր տերամբ զօրացեալ են: Աստուած բարի

կենօք ուրախ սրտիւ, մաքուր սիրով բարի աջողում առանց գործանաց աներևութից սուրբ խորին ձերութիւն. եղիցի և եղիցի:

ՌՄԶ.ին (1831)\* Սեպտեմբերի Ա (1)-ին, մայրաքաղաքն Տիպոլիս, որ է Թիֆլիս, մնամ բարի կենօք, յիշեցէք, ողորմի ասէք, Աստուած ձեզ ողորմի, ամէն:

Եւ 1279\*-ին (1830) եկի Թիֆլիս սակաւ ապրանքով, տան միջի III հաղարով գողինք կամ գիրեանք բերինք Թիֆլիս, և անդ մնացի մահտեսի Գաբրիէլս...

51

ՍԱՆՈՒԷԼ ԿԻՄԻԻՇԵԱՆԵՏԻ, ԴԵՂԱԹԱՓ ԵՎ ԹԻՐԱԿԵՍ

(Երևան, ՄՄ, ձեռ. 490, էջ 1r, 2r, 87r)

1836

Թարգմանիչ՝ Մանուէլ Կիմիշխանցի  
Վայր՝ Թիֆլիս

Դեղաթափ և թիւրակէս ընդդեմ մոլեխինդ վարդապետութեան «Հաշտութիւն» անուանեալ տետրակին աղանդապետ լօթարական միսիօնա<րաց> ի 1832 ամի ի Կալկաթայ տպեցելոյ: Յօրինեալ ի Կիմիշխանցի Մանուէլ վարդապետ Ծահինեանէ, ի Տիֆլիս, ի 1836, Յունվարի 25:

Ի 1836. Յունվարի 25, յաւատս տօնի Սրբոյն Սարգսի Զօրավարի, ի դռան տաճարի նորին յանցս Սէլտապատու, յորմէ արտահանեալ պահուն ի Տիֆլիս:

Մայր ցուցակ հայ ձեռագրաց..., Բ, էջ 966, 968

52

ԿԱՐԱՊԵՏ ԴԱՀՐԱՍԱՆԵԱՆ ԱԲԱՆՏԻԼԵԱՆՅ, ՀԱՍԱՆՈՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՏԵԱՅ ԼԵԶՈՒԻ

(Ֆրանս. Ազգային գրադ., ձեռ. № 280)

1842

Պատուիրատու՝ Գեորգ արքեպ.  
Վայր՝ Թիֆլիս

...Յամի Տեառն 1842, Ապրիլի 16-ին, իսկ ըստ Հայոց թուականին ՌՄՂԱ. (1921) ետ օրինակել զգիրս ի Թիֆլիզ քաղաքի, ի Վանք անուանեալ եկեղեցւոջ, վիճակաւոր առաջնորդն Պրոսպերու Գեորգ սրբազան և ուսումնասէր արքեպիսկոպոսն Կոստանդնուպօլսեցի:

Manuscripts armnians, Paris, 1998, p. 852

\* Նույնը նաև արաբատառ:  
\*\* Արաբատառ է, բայց Հայոց տոմարով:

53

## ԲԺՇԿԱՐԱՆ

(Երևան, ՄՄ, ձեռ. № 10645, էջ 157v)

1856

Գրիչ՝ Ստեփաննոս արեղայ  
Վայր՝ Թիֆլիս

*Գաղափարող զընդայեցի Ստեփաննոս ապարդիւն արեղայս յիշողքդ ի Քրիստոս կրկին կենօք յիշեալ լիջիք ի նմանէ, ամէն: 18<sup>3</sup>/<sub>16</sub> 56 աւարտեցաւ ի Թիֆլիզ քաղաքի լաւ յօրինակէ:*

54

ՍՏԵՓԱՆՈՍ Ա. Ք. ՍԱՆԴԻՆԵԱՆՑ, ԸՆԴՔԱՆՈՒՐ  
ՊԱՏՍՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

(Երուս., ձեռ. № 2245)

1863

Հեղինակ և գրիչ՝ Ստեփանոս ա. ք. Մանդինեանց  
Վայր՝ Տփլիս

*ա) Պատմութիւն եկեղեցական, ի սկզբանէ հիմնարկութեան եկեղեցւոյ նորոյ ուխտի մինչև ցժամանակս մեր: Աշխատասիրեաց Ստեփանոս ա.ք. Մանդինեանց, ի պէտս Հայոց ուսումնարանաց: Հատոր առաջին. Ա-Դ դարի: Ի հայրապետութեան տեառն Մատթէոսի կաթողիկոսի ամենայն Հայոց: Յառաջնորդութեան Վրաստանի և Իմերեթի տեառն Մակարայ արքեպիսկոպոսի (էջ Գ):*

*բ) Սիրելի աշակերտաց Ներսիսեան Ազգային-հոգևոր ուսումնարանի Հայոց Տփլիսոյ. նուէր յաշխատասիրողէ (էջ Ե):*

*գ) Ուսումնարանն Հայոց, հիմնարկեալն ի Տփլիս յերջանկայիշատակ հայրապետէն ամենայն Հայոց Ներսիսէ. ...և մնամ վասն ձեր և վասն ամենայն մարդկանց ազգիս, միշտ աղօթարար առ Տէր՝ Ստեփանոս ա.ք. Մանդինեանց, ի 1-ն Յուլիսի, 1863 ամի, ի Տփլիս (էջ Է):*

Մայր ցուցակ, է., 339 - 340

# ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## ԱՄԲՐՈՍԻՈ ԿՈՆՏԱՐԻՆԻ

Կաֆայից Ուզուն-Հասանի երկիրը (իմա Պարսկաստան) մեկնած դեսպան Ա. Կոնտարինին Թավրիզից վերադառնալիս անցնում է Նախիջևանից Լոռի տանող ճանապարհով և պատմում.

«Հուլիսի 12-ին, 1475 թ. անցանք Տիգրիս (sic) անունով մի գետից, հասանք այս թագավորին պատկանող մի քաղաք՝ կոչված Թիֆլիս, զետեղված մի փոքր բլրի վրա՝ իր ամրոցով, որ շատ զորավոր է, ավելի բարձր բլրի վրա: Այս քաղաքը շատ մեծ լինելու համբավը ունի, բայց մեծ մասը քանդված է: Ինչ որ մնում է պարունակում է բազմաթիվ բնակչություն, որոնց մեջ շատ կաթոլիկներ կան: Այստեղ նույնպես հանդիպեցինք մի հայ կաթոլիկի, որի մոտ բնակեցինք:

[Հուլիսի] 15-ին, երբ ձիավարում էինք Վրաստանի միջով, մեծ մասամբ լեռների վրայով, մենք շատ քիչ գյուղերից անցանք և պատահաբար տեսանք մի ամրոց՝ մի լեռան կատարին»<sup>1</sup>:

Նույն դեսպանը 1475 թ. Սեպտեմբերին Սամեգրելոյից Քութայիս է գալիս, ապա շարունակում ճանապարհը և Սեպտեմբերի 30-ին նորից հասնում Թիֆլիս:

«Այստեղ՝ ավելի մեռած քան կենդանի, իջեվանեցինք մի հայ կաթոլիկ եկեղեցի. թե քահանան և թե ուրիշները անտարակույս շատ լավ ընդունեցին մեզ: Այս քահանան մի գավակ ուներ, որ մեր չար բախտից հիվանդացավ ժանտախտով, որ այդ տարվան ընթացքում տարածված էր այստեղ: ... Խորհուրդ տվին ինձ փոխադրվել մի այլ տեղ: Մի տեղ, ուր գիշերները կովեր էին պահում. որքան կարելի էր մաքրելուց հետո, ինձ դրին <խոտի> վրա հանգստանալու՝ իմ շատ ծանր տկարութեան պատճառով: Քահանան թույլ չէր տալիս, որ Մաֆիոն <սպասավորը> այլևս մնա իր տանը, և որովհետև ուրիշ տեղ չկար, անհրաժեշտ էր նրան տեղավորել մի անկյուն, ուր որ ես էի գտնվում: Ստեֆանոն սպասարկում էր նրան, բայց նա մեռավ: Ապա շատ խնդրանքից հետո

<sup>1</sup> Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ա, ԺԳ. - ԺԶ. դար (1253-1582), Երևան, 1932, էջ 244-245:

ձեռք բերի մի ուրիշ ախոռ, ուր ես գետեղվեցի միևնույն կերպ: Ամեն մարդ լքած էր մեզ, բացի մի ծերունուց, որ մի քիչ հասկանում էր թուրքերեն, և շարունակեց սպասարկել մեզ:

Մենք մնացինք Թիֆլիս մինչև Հոկտեմբերի 21-ը, որի նախընթաց օրը, իմ լավ բախտակից, այնտեղ ժամանեց թուրքական դեսպանը, որ ընկերացած էր Անտիոքի պատրիարք եղբայր Լուդովիկոյին, որից ես իմացա, թե երբ նրանք գնացել էին մինչև Ավոզասիս [իմա՝ Նիկոպոսիա], նրանք կողոպտվել են ամեն բանից, և թե գողությունը վերագրվում էր պատրիարքին: ...Ես ցանկություն հայտնեցի նրան, և մենք միասին մեկնեցինք Հոկտեմբերի 21-ին: Թիֆլիս[ը] պատկանում է Վրաստանի թագաւոր Բանգրատին»<sup>1</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 250-251:

**ՇԵՎԱԼՅԵ ՇԱՐԴԵՆ  
ՃԱՆԱՊԱՐՎՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ  
ԱՅՆ ՎԱՅՐԵՐ**

Շարդենը Թիֆլիսում գտնվել է 1672-1673 թվականներին (Սեպտ. - Փետրվար) և հանգամանորեն ծանոթացել ու նկարագրել քաղաքը, նրա կառույցները, բնակչության նիստուկացը, էթնիկական նկարագիրը, իշխեցողներին, հարաբերությունները և այլն: Մեզ այստեղ հետաքրքրում են «ճանապարհորդության» այն էջերը, որ վերաբերում են պաշտամունքային կառույցներին: Քաղումները կատարել ենք Լ. Լանգլեի (L. Langlès) խմբագրությամբ լույս տեսած խնամյալ հրատարակությունից (*Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, par. L. Langlès, t. 2, Paris 1811, pp. 73-79*): Համեմատության համար ձեռքի տակ ունեցել ենք Վրաստանին վերաբերող տեղեկությունների Մզխա Մգալբլիշվիլու ֆրանսերենից կատարած թարգմանությամբ, ուսումնասիրությամբ ու ծանոթագրություններով: (շօճ Մճճջջոճ ժոջ Նճճ-ճոճճ Նճճճջոճ ճճ ճճճճճջջոճ Նեջճ ճճջջջջճճ ժճ, 1975), Մեզ այստեղ հետաքրքրող տեղեկությունները ուշադրության են առնվել և որոշ լրացուցիչ մեկնաբանությունների ենթարկվել Պ. Իոսելիանի Օրսանու ժրեւոսթեյ յօրօճ Դւփւսճ, (Դւփւ., 1866, սթր. 231-234) գրքում:

Խմբագիր Լանգլեի ծանոթագրությունից տեղեկանում ենք, որ Շարդենի հատորը պատրաստելիս նա օգտվել է «մի հայի» սրբագրություն-թարգմանությունից: Ցավոք, այդ հայ մարդը բոլորովին անտեղյակ է եղել վրացերեն, մասամբ և հայերեն անվանումներին: Հարկադրված ենք որոշ ճշգրտումներ կատարել:

Մեր քաղած հատվածի ուղևորներն թարգմանությունը կարելի է գտնել նաև պրոֆեսորներ Մ. Պոլիեկտովի և Գ. Նաթաճեի “Старый Тифлис в известиях современников” գրքում. (Դւփւս. 1929, սթր. 14-25).

\* \* \*

Այդ քաղաքը՝ Տփղիս<sup>1</sup>, Պարսկաստանի ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է, թեև շատ մեծ չէ: Այն տեղակայված է լեռան ստորոտում, որին արևելքից ողողում է Կուր գետը: Վրաստանի լեռներում սկիզբ առնող այս գետը՝ Կիրը (իմա՝ Կուրը - Պ. Մ.) կամ Կիրի վտակը, միանում է Արաքսին Շամախի քաղաքի մոտակայքում գտնվող Փայնար կոչվող վայրում, որտեղից նրանք միասին թափվում են ծովը:

<sup>1</sup> Ավելի ճիշտ Թիֆլիս: Այս քաղաքը վրացերենով անվանվում է Տփիլիս քաղաքի (տաք քաղաք) կամ պարզապես Թբիլիս կամ Թլիֆլիս, տաք աղբյուրների պատճառով, որ գտնվում են նրա պարիսպներից ներս և դուրս, և որոնցում բնակիչները լողանք են ընդունում, ինչը նրանց մոտ շատ ընդունված էր: Համաձայն Ռայնեգգի, այն գտնվում է Հյուսիսային լայնության 42° 45' աստիճանի և արևելյան երկայնության 62° 40' 30'' աստիճանի վրա, Սանկտ Պետերբուրգից 2627 վերստ հեռավորության վրա Չերքեսի վրայով, Կուր գետի ձախ ափին, որի շնորհիվ կազմում է բովանդակուն եռանկյուն: Այն ամբողջ գետեզրով շրջափակված է աղյուսե պատով: Արևելյան կողմում գտնվում է Նարեկլա կոչվող ամրությունը, իսկ արևմուտքում՝ Շարդաբեյ ամրությունը: ...Այս փոքր տարածության վրա բնակվում է 20 հազար բնակիչ: Տները կառուցված են աղյուսից և միակցված կղմինդրից: Դրանք ընդամենը մեկ 15 ֆութանոց հարկ ունեն: Տանիքը և ամանեղենը կավից է: Սենյակը, որ գերմանացիների մոտ վառարան ունի, այստեղ ունի նաև վառարանի յուղոտ թղթով պատված խողովակ, որը դուրս է հանվում պատուհանի ապակուց: Բոլոր շինությունները զուրկ են գեղեցիկությունից, բարվոքությունից, կեղտոտ են և աղքատիկ: Քաղաքի արևելյան մասում Կուր գետի վրա կամուրջ է կառուցված: Այս կամուրջը տանում է դեպի գետի ձախ ափին գտնվող Մետեխի ամրոցը: Ներքևում, քաղաքից քիչ հեռու, Կուրի աջ ափին գտնվում են տաք աղբյուրները, որոնց վրա երկու սեռերի համար նախատեսված բաղնիքներ են կառուցվել: Բաղնիքներից և Գարեթուրանի արվարձանից ներքև հին Թիֆլիսն է: Մրգատու և խաղողի այգիները անշատում են քաղաքը այս արվարձանից և պիտվում գետի երկայնքով 15 վերստ տարածության վրա: Դրանք ոռոգվում են փոքրիկ ջրատարների կամ առուների միջոցով:

Բացի Թիֆլիսի պատերից ներս եղած 20 հազար բնակիչից, կան նաև շատ եկեղեցիներ ու գերեզմանոցներ: Քանզի քաղաքը շատ փոքր տարածություն է զբաղեցնում՝ բնակչության մեծ մասը բնակվում է բարձունքի միջնամասում կավահողերի վրա, որ անձրևից քիչ է քայքայվում և որտեղ այն գոյացնում է ցեխաջուր, որը ելքի տեղ չունի: ...1770 թ. ժանտախտի ժամանակ, որի մասին մենք խոսում ենք, բազմաթիվ հիվանդներ կային տներում, փողոցում: Հիմք ընդունելով տարբերակումները, մահացությունը առավել մեծ էր նրանց մեջ, ովքեր ապրում էին տներում: Այս քաղաքի բնակչության կեսից ավելին կազմում էին հայերը, մնացածը՝ վրացիներ և թաթարներ էին: Հայերի մեջ հաշվվում էին 400 կաթողիկ, որոնք ղեկավարվում էին քահանաների կողմից: Այս բնակչության մեծամասնությունը ապրում էր իրենց - խաղողի այգիների և այգիների արտադրանքի, մասնավորապես՝ բամբակ անեցնելու շնորհիվ: Շատերը զբաղվում էին ընդհանուր կամ մասնակի առևտրով, որը նրանց կյանքի և ապրուստի մեծ բարեքներ էր ապահովում: Նրանցից ոմանք կաշեգործներ էին, ջուլհակներ, մահուղագործներ, դարբիններ: Ցարը այստեղ ուներ աղի գործարան և դրամատուն... *Reineggs, Allgemeine historisch-topographische Beschreibung des Kaukasus: 2-er theil, Seit. 90, Guldenstedt, Reisen durch Russland, I-er th., Seit. 268-271 (L-s.)*.

Գետափին կառուցված շենքերից շատերը հենված են ժայռերի վրա: Բացառությամբ գետի կողմի, քաղաքը շրջափակված է գեղեցիկ և ամուր պարսպով: Երկարությամբ այն տարածվում է հարավից հյուսիս, հարավային կողմում ունենալով մեծ ամրոց, որը գտնվում է լեռան լանջին, և որում ինչպես զինվորները, այնպես էլ բնակիչները միմիայն մաքուր պարսիկներ են: Առջևում գտնվող Զորահրապարակը, միաժամանակ հասարակական հավաքատեղի է և շուկա: Այդ ամրոցը ապաստան է. բոլոր հանցագործներն ու պարտազանցներն այստեղ իրենց անվտանգ են զգում: Վրաստանի տիրակալը, համաձայն ավանդույթի, արքայի նամակներն ու նվերները առնում է քաղաքի պարսպներից դուրս, քանի որ երբ Պարսկաստանից Թիֆլիս են գալիս, պետք է անցնեն ամրոցով: Սակայն պարզ է, որ տիրակալը այստեղով երբեք չի անցնում՝ առանց իրեն ուղեկցող վախի, թե արդյո՞ք կառավարիչը գաղտնի հրաման չունի իրեն բռնելու վերաբերյալ:

Պարսիկները շատ խելամտորեն կարգ են հաստատել Վրաստանի փոխարքայի և իրենց կայսրության նահանգների մյուս կառավարիչների միջև՝ քաղաքից դուրս ստանալ այն ամենը, ինչ նրանց ուղարկում է արքան, քանի որ սա նրանց ձերբակալելու անվտանգ և դյուրին միջոց է: 1576 թ. Թիֆլիսի այս ամրոցը նվաճվել էր թուրքերի կողմից, երբ նրանք իրենց գեներալիսիմուս անվանի զորահրամանատար Մուստաֆա Փաշայի գլխավորությամբ դարձան քաղաքի և շրջակա բոլոր երկրների տերերը, որին չկարողացավ ընդդիմանալ երկրի այն ժամանակվա թագավորը՝ Սիմոն խանը: Մուստաֆան Սուլեյմանին խորհուրդ տվեց Վրաստանում տարբեր ամրոց-կայաններ (բերդ-ամրոցներ) կառուցել, առանց որոնց երբեք հնարավոր չի լինի երկիրը հնազանդության մեջ պահել: Եվ իսկապես՝ Վրաստանի բերդ-ամրոցներից շատերը կառուցվել են թուրքերի կողմից: Մուստաֆան հարյուրից ավելի թնդանոթ տեղադրեց դրանց բերդապարսպներին, որոնց հրամանատարությունը նա հանձնեց մի փաշայի, որին կոչում էին Մուհամեդ:

Վերադառնանք Թիֆլիս քաղաքին. այն ուներ բազմաթիվ եկեղեցիներ, որոնց թիվը հասնում էր 14-ի: Սա շատ է մի երկրի համար, որտեղ խիստ աստվածապաշտ չեն: Վեցը պատկանում և ծառայում է վրացիներին, մյուսները պատկանում են հայերին: Մայր տաճարը, որը կոչվում էր Սիոն, գտնվում է գետեզրին և ամբողջովին կառուցված է սքանչելի տաշած քարից: Սա հնագույն ամուր կառույց է, նման Արևելքում եղած բոլոր հնագույն եկեղեցիներին, որոնք բաղկացած են 4 նավից և որի կենտրոնում չորս

մեծ սյուների վրա հենված է զանգով եզրափակվող գմբեթը: Ավագ խորանը գտնվում է Արևելքին նայող նավի մեջտեղում: Եկեղեցու ներքին հարդարանքը հունական ապաշնորհ որմնագարդումներն են, արված այն վատ նկարիչների կողմից, որ աշխարհում զժվարընկալելի են, թե ինչ են ցանկանում նրանք ասել: Եպիսկոպոսական նստավայրը հարում է եկեղեցուն: Այստեղ ապրում է Թբիլեյիմ: Այսպես են մշտապես կոչել Թիֆլիսի եպիսկոպոսներին: Կաթողիկեից հետո վրացական գլխավոր եկեղեցիներն են Թեթրաշեն (նշանակում է Սպիտակ շենք), որը կառուցվել է Մարիամ Թագուհու կողմից, և Անչխատը (նշանակում է Աբգարի պատկեր) Աբգարին վրացիները անվանում են Անչես, և կարծում են, որ հրաշագործ պատկերը, որն ըստ ավանդույթյան, նրան տվել է Հիսուս Քրիստոսը, երկար ժամանակ եղել է այս եկեղեցում: Այն կոչում են նաև Կաթողիկոսի եկեղեցի, քանի որ այդ առաջնորդի պալատը հարում է նրան, և նա երբեք չի գնում այլուր ժամեղութուն կատարելու: Այս եկեղեցին գտնվում է գետափին՝ եպիսկոպոսարանին զուգահեռ: Վրացիներն ունեն ևս մեկ գեղեցիկ եկեղեցի՝ հարավային կողմում՝ քաղաքի եզրին: Սրանից մի քանի տարի առաջ իշխանը այն ձեռք բերեց վառողի պահեստի վերածելու համար: Ճիշտն ասած, այն այլևս սպասավորութան համար պիտանի չէ, քանի որ շատ ժամանակ առաջ կայծակից մասամբ ավերվել է: Իշխանը այն վերափոխեց, և այդ պահեստը մշտապես կրում է իր հին անունը՝ Մետեխի եկեղեցի: Այս անունը այն պատճառով են նրան տվել, որ Վրաստանի մի թագավոր այն հիմնել է մեղքերի քավութան համար, երբ նա առանց պատճառի խախտել է իր հարևան իշխանի հետ ունեցած հաշտութունը:

Հայկական գլխավոր եկեղեցիներն են՝ Փաշա-վանքը (նշանակում է փաշայի վանք): Թիֆլիսի հայ եպիսկոպոսը նստում է այս վանքում: Հայերը պատմում են, որ այդպես են կոչում, որովհետև այն կառուցել է Թուրքիայից փախած մի փաշա, որն այս քաղաքում քրիստոնեություն էր ընդունել, Սուրբ Նշանը<sup>1</sup> (կիրառվում է Սուրբ Խաչ ձևը), Բեթսեն կամ Բեթղեհեմ, Նորաշեն կամ Նոր շինություն և Մողնի: Մողնին հայկական մի գյուղի անվանումն է Երևանի մոտակայքում, ուր, ինչպես հավատացնում են, երկար տարիներ պահվում էր Սուրբ Գևորգի գանգը: Սակայն, քանի որ այդ

<sup>1</sup> Այս երկու բառերից առաջինը հայերեն է և նշանակում է saint, իսկ երկրորդը՝ պարսկերեն, և ինչպես բոլոր մյուս միանման լեզուներում, հայերենում ընդունված է, որ խորհրդանշում է խաչ: (L-S).

գանգի մասունքները հետագայում տեղափոխվել են այս եկեղեցին, նրան տրվել է այն վայրի անունը, որտեղից այն բերվել է<sup>1</sup>:

<sup>1</sup> Տողատակին ֆրանսերենի խմբագիրը այլ աղբյուրներից քաղելով և աղավաղումները կրկնելով (հատկապես Գյուլդենշտեդտից ու Ռայնեգսից) թվարկում է վրացական 15 եկեղեցի և հայկական՝ 20: Այլ տեղեկությունների հետ համեմատելու համար բերում ենք հայկականների ցանկը.

Հայկական եկեղեցիներ

1. և 2. Յիխի սաղարի՝ Բոլոր Սրբերի եկեղեցի (sic, կարդա՛ Բերդի Մեծ և Փոքր եկեղեցի – Պ. Մ.)

3. Փրկչի սաղարի՝ Փրկչի եկեղեցի

4. Կսեբիս՝ սուրբ Գեղարդ եկեղեցի

5. Պետրոս՝ Սուրբ Պետրոս

6. Սահակաշենի՝ Սուրբ Սահակ եկեղեցի

7. Նորաշենի՝ նոր եկեղեցի

8. և 9. Մողնիի՝ մեղսավորների եկեղեցի, [Մողնիի եկեղեցիներ]

10. Զիգրաշենի՝ իշխան Զիգրատի (sic) կողմից կառուցված եկեղեցի

11. Սուրբնիշանի՝ Սուրբ Նշան (Խաչ) եկեղեցի

12. Կոսմանի՝ սուրբ Կոսմաս եկեղեցի

13., 14 և 15. Վանքից սաղարի՝ Վանքական եկեղեցիներ

16. Քամուանի, Կամուանց սուրբ եկեղեցի

17. Սիոնիանի (°) (իմա Զրկիհանց – Պ. Մ.) Սուրբ Կյուրեղի եկեղեցի

18. Սուրբ Կարապետի Սուրբ Հայտնություն կամ Հովհաննես Մկրտչի եկեղեցի

19. Մելեքիս՝ Թագավորների կամ Իշխանների եկեղեցի

20. Սուրբ Սարգիսի սաղարի՝ Սուրբ Սարգսի եկեղեցի

Այս եկեղեցիներից 12-ը գտնվում են քաղաքի ներսում, 8-ը՝ արվարձանում: Հայ կաթոլիկները, թվով մոտ 400 մարդ ունեն իրենց եկեղեցին: Քաղաքում կա նաև մեկ հայկական վանք:

Մահմեդական թաթարները ունեն երեք մզկիթ՝ Guldenstädt, Reisen ...և այլն: I-er th. Seit 270, 271.

Ծան. Մի հայ ինձ համար սրբազրել և թարգմանել է եկեղեցիների անունները (L-s).

## ԺՈՉԵՖ-ՊԻՏՏՈՆ ՏՈՒՐՆԵՖՈՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱՍՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Փրանսիացի կենսաբան, որը Լյուդովիկոս ԺԴ-ի հորդորով 1700-1702 թվականներին ճամփորդել է Արևելյան երկրներ՝ պարտավորություն ունենալով տեղեկություններ հայթայթել այցելած երկրների աշխարհագրության, ժողովրդագրության, առևտրի, կրոնի, բարքերի մասին: Փաստորեն Կովկասի տնկաբանության (ֆլորայի) առաջին ուսումնասիրողներից մեկն է: Թիֆլիսում է եղել 1700 թ. հունիսի 21-26, ապա Դիլիջանի ճանապարհով մեկնել է Ջմիածին (օգոստոսի 1-8): Հանգամանալի են Կարսի, Թիֆլիսի, Երևանի նկարագրությունները՝ այլևայլ պատկերազարդումներով: Աշխատությունը լույս է տեսել նախ Փրանսերեն (1717 թ.), ապա ունեցել մի քանի թարգմանություններ: Շարադրելիս, ինչպես գրականության մեջ նկատված է (Տուրնեֆորը հղում է կատարում իր նախորդին), օգտվել է Շարդենի գրառումներից: Եվրոպացի ուղեգիրների ժառանգության քաջագիտակ Մ. Ա. Պոլիեկտովի գնահատությամբ Տուրնեֆորի տեղեկագրերը, մասնավորապես Վրաստանին վերաբերողները «հատկապես ուշադրության են արժանի. Վրաստանի վիճակի ընդհանուր բնութագրությունը, հայերի առևտրին վերաբերող հաղորդումները, առանձին տեղանքների նկարագրություններից՝ Թիֆլիսի (լավագույններից մեկը) և էջմիածնի նկարագրությունը (XVIII, XIX նամակներ, տեղեկագրեր XX): Տրված են Այսրկովկասին վերաբերող պատկերներ. Թիֆլիսի կանաչք, Թիֆլիսի ընդհանուր տեսարանը, Արարատը, էջմիածինը, հայ հոգևորականները...»<sup>1</sup>: Այնուհանդերձ, 1929 թվականին լույս ընծայած քաղումների վերջում արդարացիորեն նկատված է, թե «հանգամայնությունում ու ճշգրտությունում առանձնանալով հանդերձ՝ բացահայտ սխալներից զերծ չէ, օրինակ նրանից, որ Տուրնեֆորը Թիֆլիսի Սրոն տաճարը կոչում է հայոց եկեղեցի...»<sup>2</sup>:

Ստորև ներկայացվող գրվագը կրկնում է Մ. Պոլիեկտովի ու Գ. Նաթաձեի հրատարակության մեջ եղած քաղվածքը՝ Շարդենից վերապատմությամբ բերված սկզբնամասի կրճատմամբ, թեև այդպիսիք կան այլ հատվածներում ևս:

\* \* \*

...Ամրոցից ներքև գտնվող իշխանի ապարանքը շատ հին է և այդպիսի ոչ մեծ երկրի համար շատ լավ է պահպանվում: Պալատական պարտեզները, թռչնանոցները, շնանոցը, բազեով որսը,

<sup>1</sup> М. А. Полиевктов, Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, Тифлис, 1935, стр. 186-187: *Մատենագիտություն տե՛ս անդ.*, էջ 187:

<sup>2</sup> Проф. М. Полиевктов и проф. Г. Натадзе, Старый Тифлис в известиях современников, Госиздат Грузии, 1929, стр. 32.

ապարանքի առաջ եղած հրապարակն ու շուկան դիտարկման արժանի են:

Մեզ ներս տարան մի մեծ դահլիճ, որը շատ լավ տպավորութիւն է թողնում, թեև այն փայտաշեն է: Նրա պատուհանները բացվում են ամեն կողմ՝ կապույտ, դեղին, կարմրա-գորշագույն և այլ գույներով: Կան և մի քանի վենետիկյան հայելիներ, սակայն ոչ մեծ և գեղեցկութեամբ շատ զիջում են փարիզյաններին: Առաստաղը զարդարված է ոսկեգօծված դրվագավոր կաշով: Մեզ հավատացնում էին, թե կանացի կացարանն ավելի ճոխ է, սակայն նրա բանալին չգիտեմ ինչու չկարողացան գտնել, թեև անկեղծորեն ցանկանում էին մեզ ցույց տալ: Իշխանն ու նրա արքունիքը այդ ընթացքում գյուղում էին:

Ապարանքից հետո մենք գնացինք ոչ հեռու գտնվող բաղնիքները դիտելու: Հիանալի ջերմուկ-աղբյուրներ են, որոնց տաքութիւնը սակայն փոփոխական է. այն մոտավորապես այնպիսին է, ինչպես Էլիայի ջրերը Էրզրումի մոտ: Թիֆլիսի բաղնիքներում կանալ տաք ու պղ ջուր: Բաղնիքները լավ են պահպանվում, կառելի է ասել՝ քաղաքացիների միակ ուրախութիւնն են:

Թիֆլիսի գլխավոր առևտուրը մորթեղենն է, որ այստեղից գնում է Պարսկաստան կամ Էրզրումի վրայով Կոստանդնուպոլիս, այդպես էլ Ծամախից ու Գանձակից, բայց ծայրահեղ բարձր տուրքի պատճառով՝ որ պետք է լինում այստեղ վճարել, ոչ Թիֆլիսի անցումով: Հայերը այն գնում են տեղերում և ուղարկում Ջմյուռնիա և Միջերկրականի այլ նավահանգիստներ, որտեղից հասնում է Ֆրանսիա: Տարեկան երկու հազարից ավելի ուղտերի քարավան է ուղարկվում Թիֆլիսից ու մնացյալ Վրաստանից Էրզրում բոհա՝ կոչվող արմատիքով: Էրզրումից այդ արմատիքը գնում է Դիարբեքի, ուր այն գործածվում է Լեհաստանի համար այստեղ պատրաստվող կտորեղենը ներկելու համար: Բացի այդ, այս արմատիքից շատ են սպառում ներկված ամենալավ կտորեղեն պատրաստող Հինդուստանում:

Մենք առիթ բաց չէինք թողնում անցնելու Թիֆլիսի բազարով, ուր ամենայն տեսակ միրգ կա, հատկապես սալոր ու տանձ՝ “de Bon Chretien d’Ete”.

Մենք այցելեցինք նաև իշխանի՝ քաղաքից դուրս գտնվող պալատ, որ գտնվում է Թիֆլիսի արվարձանում, որով անցնում է Թուրքիա գնացող ճանապարհը: Պալատը նշանակալի է նրանով,

\* Գործածվում է կտորեղեն ներկելու համար:

որ նրա առաջ է գտնվում ցցահանման տանջանքի հարմարանքը: Պալատի մոտ սքանչելի այգիներ կան, որոնք ավելի խնամյալ են, քան Թուրքիայում եղածները: Այգիներում մեզ հիացրին ծխախոտի նման տերևներ ունեցող ջրապղպեղները:

Քաղաքում լավագույն շենքը մեծ վեզիրին պատկանողն է: Նրա կառուցումը մեր գալուց առաջ նոր էր ավարտվել: Նրա սենյակները օթյակներով են, սակայն ցածր, ինչպես առհասարակ [տներն] այս երկրում: Նրանք զարդարված են ծաղկյա ծոփորներով և պատմական պատկերներով: Այդ ամենը հույժ ցածր ճաշակով է. վատ է նկարված, անհաջող ներկված և ավելի վատ ի մի զետեղված: Պարսիկները թեև մահմեդական են, սակայն կենդանագրություն հանդուրժում են: Թիֆլիսում նկարում են սովորաբար *al fresco*, խոնավ կրի վրա, ինչը բավական հաճելի տպավորություն է թողնում: Կիրն այստեղ, ինչպես և փայտը, շատ է, թեև տները տաքացվում են կոռով:

Թիֆլիսում կա շուրջ 20000 բնակիչ՝ 14000 հայ, 3000 մահմեդական, 2000 վրացի և 500 հռոմեական-կաթոլիկ: Այս վերջիններս դարձի բերված հայեր են, իրենց մնացած հայրենակիցների երգվյալ թշնամիներ: Իտալացի կապուչինները ոչ մի կերպ չեն կարողանում հաշտեցնել:

Մենք իջևանեցինք այդ բարի հայրերի մոտ, որոնց վրաստանում շատ են սիրում. նրանք այստեղ թե հոգու, թե մարմնի բժիշկներ են: Նրանք շատ աշխատանք ունեն, որովհետև ընդամենը երեքն են՝ երկու արեղա և մեկ մոնթ: Հավատի տարածման միաբանությունը նրանցից յուրաքանչյուրին տարեկան տալիս է ընդամենը 45 հռոմեական էկյու, որ հավասար է 100 ֆրանսիական լիրի: Փոխարենը նրանց թույլատրվում է բժշկություն անել, քանի որ նրանց համարում են բժշկության հույժ գիտակներ, թեև ըստ էության նրանց գիտելիքներն այս բնագավառում շատ մակերեսային են:

Թիֆլիսում ամեն մեկը իրավունք ունի վառող պատրաստել անձնական օգտագործման համար. ծծումբը բերում են Գանձակից, իսկ բորակը հանում հարևան լեռներում: Լեռնային աղ շատ կա Երևան տանող ճանապարհներին: Զիթապտղի յուղը շատ թանկ է. կերակրի ու լուսավորման ծախսում են միայն վուշի ձեթ: Հարևան գյուղերում առատ վուշ կա, սակայն այն ցանում են միայն հատիկի համար, իսկ ցողունը թափում են առանց մշակման: Սա հսկայական կորուստ է, քանի որ նրանից կարելի էր աշ-

խարհում լավագույն կտոր պատրաստել: Ի դեպ, գուցե այդ կարող էր խանգարել տեղական մետաքսի առևտուրը:

Թիֆլիսում հունական դավանության 5 եկեղեցի կա, 4-ը քաղաքում, մեկը՝ արվարձանում, հայկական՝ 7, և 2 մզկիթ ամրոցում (մեկն էլ է եղել, բայց այն անգործածելի է): Հայերի կաթողիկե եկեղեցին կոչվում է Սիոն<sup>\*</sup>: Այն Կուրի մյուս կողմում է, դեք ժայռի վրա, սրբատաշ քարով կառուցված հզոր շենք՝ քաղաքին պատիվ բերող գմբեթով: Թբիլեյլը՝ այդպես են կոչում Թիֆլիսի եպիսկոպոսին, ապրում է այս եկեղեցուն մոտիկ: Քրիստոնեական եկեղեցիները ոչ միայն զանգակ ունեն, այլ նաև խաչակիր զանգակատներ: Արևելքում դա մեծ հրաշք է: Հակառակը, մուսուլմանները (կանչող մահմեդականները) այստեղ երբեք չեն համարձակվում ամրոցի մզկիթների մինարները բարձունքից աղոթքի ժամ հայտարարել՝ ժողովուրդը կսպաներ նրանց քարերով: Կապուցիների եկեղեցին մեծ է, բայց երբ շինարարությունը ավարտվի գեղեցիկ լինելու հեռանկար ունի:

---

<sup>\*</sup> Թյուրիմացությունը նկատված է և ուղղված ուղևորների թարգմանչի կողմից (էջ 31, ծան. 1):

## ՅՈՒՎԱՆՆԵՍ ԳՅՈՒԼԴԵՆՇՏԵՐՏ ՃԱՆԱԴԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ (1772 թ.)

1745 թ. Ռիգայում ծնված Յոհ. Գյուլդենշտեդտը 22 տարեկան հասակում արդեն գիտություն դոկտոր էր: 1768-1775 թվականներին Կայսերական ակադեմիայի կազմակերպած գիտական արշավախմբերի ընթացքում նա հանգամանորեն ուսումնասիրում էր Կովկասը՝ իր աշխարհագրություն, հանածոներով, ազգագրություն, ցեղակցություն, լեզուներով և այլն: 1771 թ. Մայիսին նա այլևս ավարտել էր Պետերբուրգից մինչև Ղզլար ընկած տարածքում իր անելիքը և ուղեկիցների հետ Սեպտեմբերին արդեն Վրաստանում էր, և Մցխեթում Հերակլ II-ի հետ հանդիպելուց հետո Նոյեմբերի 14-ին ժամանում է Թիֆլիս, ուր մնում է մինչև 1772 թ. Փետրվար ամիսը:

Յոհ. Գյուլդենշտեդտի արշավախմբային գրառումները՝ «Reisen durch Russland und im Caucasischen Geburge» երկհատորը լույս է տեսել P.-S. Pallas-ի խմբագրությամբ 1787 և 1791 թվականներին Ս. Պետերբուրգում:

1962 թ. «Օտար աղբյուրները Վրաստանի մասին» մատենաշարով թրջիխիում լույս տեսավ գերմանագիր հեղինակի «Գյուլդենշտեդտի ճանապարհորդությունը Վրաստանում» (գոյլադենշտեդտիս մոց Նաւրոբա Նախարոցեղո՞ւմի տծ., 1962) աշխատության առաջին հատորը՝ Գ. Գելաշվիլու պատրաստած գերմաներեն ընագրով, վրացերեն թարգմանությամբ ու ուսումնասիրությամբ, որին երկու տարի անց հետևեց երկրորդ հատորը՝ նույն աշխատասիրողի հոգածու հրատարակությամբ:

Ստորև ներկայացվող դրվագը քաղվում ենք առաջին հատորի 86/87-92/93 էջերից: Անհրաժեշտության պարագայում հատուկ անունների գրություն ինքնատիպություններ հանդիպելիս, դիմում ենք հանդիպակաց էջերում եղած թարգմանությանն ու գերմաներեն ընագրին:

Գ. Գելաշվիլին խղճատորեն ուսումնասիրել է Գյուլդենշտեդտի Սանկտ-Պետերբուրգում գտնվող արխիվը և իր հրատարակությունը լրացրել գրառումների ու գեկուցագրերի անտիպ նյութերով, ինչպես նաև ճանապարհորդ-ընագետի կազմած և նյութերն ուղեկցող քարտեզներով<sup>1</sup>:

<sup>1</sup> Այդպիսիք կցված են երկրորդ հատորին. տե՛ս «Գոյլադենշտեդտիս մոց Նաւրոբա Նախարոցեղո՞ւմի», Երևան, Գերմանական Երկրագրաբանության Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1964.

\* \* \*

Մինչև Թիֆլիսը թողնելս՝ ձեզ եմ առաջարկում այս տեղանքի համառոտ նկարագրությունը: Թիֆլիսը պարսկական և եվրոպական տեսքի մայրաքաղաք ու Քարթլիի թագավորի նստոց է: Նրան վրացիները կոչում են Թբիլիս քաղաք, այսինքն՝ Տաք քաղաք, քանզի նրա մերձակայքում տաք աղբյուրներ կան, իսկ նրանց մոտ՝ բաղնիքներ:

Այն գտնվում է Կուր գետի աջ ափին, որը այստեղ հարավային Կովկասի նախալեռան բազկի գառիվարի պատճառով թեքված է, իսկ քաղաքից վերև և ներքև՝ ավելի կտրուկ: Իմ համոզմամբ Մոզդոկի հետ նույն միջօրեականի վրա է՝ և երկու աստիճան դեպի հարավ: Առաջ ստորին արվարձանը՝ բաղնիսներից ցած քաղաքն էր՝ Թբիլիս քաղաքը:

Ժամանակակից քաղաքը ներկայացնում է գրեթե բուլթանկյուն եռանկյունի և, բացառությամբ Կուրի մոտ եղած մի տեղից, գոտեվորված է աղյուսե պատով. սրա մոտ արևելյան անկյունում նարիդալա փոքր բերդ կա, իսկ արևմուտքում՝ Ծարդախտի ամրոցը: Նրանց միջև քաղաքի պարիսպը 600 սաժեն երկարություն ունի, իսկ ողջ քաղաքի շուրջը կազմում է մոտավորապես 3 ուսական վերստ կամ 1500 սաժեն: Այս ոչ այնքան մեծ տարածքում ապրում է շուրջ 20000 բնակիչ, ուստի փողոցները մոտավորապես 1 սաժեն լայնություն են, նրբանցքները՝ ավելի նեղ:

Տները շինված են աղյուսով ու սալերով, կավախառն կիրով, միահարկ, շուրջ 15 փուլթ բարձրության, տանիքները հարթ, կավով պատած. սենյակներն ունեն բուխարիներ և լուսամուտներին ապակու փոխարեն յուղոտված թղթեր են: Ամեն ինչ թեթև է, վատ, ծուռ և շատ անհարմար շինված: Քաղաքի արևելյան մասում Կուրի վրա կամուրջ կա: Այս կամուրջով ենք մտնում Մետեխի փոքր ամրոց՝ Կուրի ձախ ափին:

Քաղաքի ներքևում, նրան մոտիկ ու Կուրի աջ ափին տաք աղբյուրներ կան և նրանց մոտ՝ հասարակաց բաղնիքներ երկու սեռի համար էլ: Բաղնիքներից ներքև քաղաքի առաջամասն է, արվարձանը, կամ ավելի լավ՝ Հին Թիֆլիսը: Քաղաքի և արվարձանի շրջակայքում նշանակալի խաղողի և պտղի այգիներ են, որոնք գետից ներքև 5 վերստի են հասնում և ջրաղացների և փոքրիկ առուների միջոցով ոռոգում Կուրի ջրով: Այգիների մոտ և նրանցից ներքև կան նաև ցորենի փոքր հանդեր: Այդպես էլ Կուրի ձախ ափին, քաղաքի դեմ դիմաց, այգիներ ու հանդեր կան:

20000 բնակչության համար առանց այն էլ փոքր տարածքում մեծ տեղ են գրավում եկեղեցիներն ու գերեզմանոցները: Բնակչության այս նեղվածքը, քաղաքի կավե մակերեսի թեք դիրքը, որը անձրևի ժամանակ բոլորովին ցելս է դառնում, ջրատարերի չգոյությունը, գերեզմանոցները, վատ ոստիկանությունը, որը թույլ է տալիս, որ փողոցները ծածկվեն աղբով և այլն, <այս ամենը> թունավորում է օդը, ուստի փորլուծը, չարաղես ջերմը և վարակները, ինչպես նաև համաճարակը առանձնապես հազվադեպ չեն: 1770 թվականին այս վերջինը 4000 բնակիչ կոտորեց: Մեծ մահացությունը էլ ավելի կծավալվե՞ր՝ եթե տները օդառատ չլինեին, քանզի վատ փակվող դռներից, թղթածածկ լուսամուտներից, բուխարիներից և այլն միշտ օդափոխություն է կատարվում:

1770 թ., համաճարակի ժամանակ, հիվանդներին հիմնականում փողոցներում էին պառկեցնում, և նկատվում էր, որ նրանցից համեմատաբար շատերն էին փրկվում, քան տանը պառկածներից:

Քաղաքի բնակչության կեսից ավելին Հայեր են: Երկրորդ կեսն են կազմում գլխավորապես Վրացիները, և բացի նրանցից կան նաև Թաթարներ: Հայերի մեջ շուրջ 400-ը հռոմեադավան են, նրանք ունեն իրենց պատերները, բոլորը առատորեն ապահովված են եկեղեցիներով:

Վրացիներին են պատկանում.

1. Սիոնի տաճարը (*Սիմեոնի (sic) եկեղեցին*), որը կաթողիկէ [ուսեցող] եկեղեցի է: Նրանում կա վրացերեն ընդարձակ արձանագրություն<sup>1</sup>:
2. Ջվարիս մամիս սաղարի, *այսինքն՝ Խաչի հոր* (այսպես են կոչում *աբեղաներին*) տաճար:
3. Մկրտչի տաճար, *այսինքն՝ եկեղեցի*:
4. Թագավորի պալատի տաճար, *այսինքն՝ Արքունի եկեղեցի*:
5. Պալատի Աստծո տաճար, *այսինքն՝ Պալատի Աստվածածնի եկեղեցի*:
6. Կոլեթի տաճար:
7. Մետեխի տաճար:

<sup>1</sup> Արձանագրության վերծանությունը տրված է հրատարակչի ծանոթագրության տեսքով (էջ 88-89).

«Ք. Երրորդությունը փառավորող Դավթեան անվանի թագավոր Գիորգիի եղբորորդի և մեծապես պատվական Ասոնի որդի, Քարթլիի կառավարիչ արքայազն Վախթանգս՝ հանուն թագավոր հորեղբոր, հոր ու մոր և իմ ու կողակցիս հոգիների, որդուս և դուստրերիս կենաց, նորոգող սույն վանքի գմբեթի՝ սալածածկով: Ետ Քրիստոսի 1710 [թվին], Վրաց քրոնիկոնի 398-ին (+1312=1710)»:



19. Մեկիքի և

20. Սուրբ Սարգիսի տաճար[ներ]

Սրանցից 12 քաղաքում են և 8-ը՝ արվարձաններում: Կաթողիկե հայերը, որոնք 400 [հոգի] պիտի լինեն, բավականանում են մեկ տաճարով: Քաղաքում կա նաև մեկ հայկական վանք<sup>1</sup>:

Մահմեդական Թաթարներն ունեն 3 մեջիտ:

Քաղաքի բնակչությունն ապրում է հիմնականում այգիներով ու ցանքերով, հատկապես բամբակի մշակությամբ: Շատ են վաճառականները կամ ավելի ստույգ՝ մանր կրպակավորները, որոնց մոտ մարդ կարող է ձեռք բերել պահանջմունք ունեցող ապրանք, մանր ապրանք, սպասեղեն, համեմունք և այլ բաներ: Կան այլևայլ <արհեստավորներ>՝ կաշեգործներ, ներկարարներ, գործողներ, դրվագողներ: Ամեն տեսակ քաղաքային արհեստագործություններ են զբաղվում քիչ քանակությամբ մարդիկ, այն էլ անվարժներ և ոչ վարպետներ:

Այստեղ թագավորն ունի աղաղաց գործարան և դրամահատարան:

1772 թ. Թիֆլիսում վաճառվում էր.

1 բաթման, այսինքն 1 գրվանքա հացը ռուսական փողով՝ 8 կոպեկ, 1 գրվանքա տավարի միսը՝ 25 կոպեկ, ոչխարի միսը՝ 30 կոպեկ, պանիրը՝ 20 կոպեկ, աղը՝ 20 կոպեկ, բրինձը՝ 20 կոպեկ, կարագը՝ 80 կոպեկ:

Ցորենն ու գարին գալիս են Գորիից և Սուրամից՝ լաստերով, որոնք կապված են սոսու ձողակտորներով, Կուր գետով վար: Այս լաստերը հետո վաճառվում են իբրև շինանյութ:

<sup>1</sup> Այս պարբերությունը կրկնված է Շարդենի հրատարակչի ծանոթագրության մեջ: Ինչպես երևում է Թիֆլիսի բնակչության ու դավանական համայնքների քանակական ցուցումից, ուղեգիրները հաճախ օգտվում են նախորդների արձանագրումներից:

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԵԳՐԻ ԳԵՆԵՐԱԼ ԵՐԱՍՈՒՈՒԿԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԱԳԻՐԸ

1817 թ. Ռուսաստանի կայսրը գեներալ Երմոլովի գլխավորությամբ արտակարգ դեսպանություն ուղարկեց Պարսկաստան: Դեսպանության կազմում իբրև խորհրդական ընդգրկված պետական իսկական խորհրդական Ա. Նեգրին կազմել է հիշյալ առաքելության օրագիրը՝ Փրանսերեն: Ընդարձակ այդ ձեռագիրը (302 էջ) 1848 թվականից գտնվել է իշխանուհի Էլիզե Սուտցոյի մոտ, ապա անցել Պատմության և Հնությունների Օբեկսայի ընկերությանը, ուր և ժամանակին այն տեսել և հին Թիֆլիսին վերաբերող էջերը (7-10) քաղել ու Փրանսերեն բնագրին զուգադիր ռուսերեն թարգմանությամբ հրատարակել է երիտասարդ կովկասագետ Լևոն Մելիքսեթ-Բեկը (Старый Тифлис по описанию А. Негру (1817) и М. Медвца (1824-1830 г. г.) Թիֆլիսում լույս տեսնող «Аrs» հանդեսում (1918, № 2-3, էջ 104-114)։

Թե ուր է գտնվում այդ ձեռագիրն այժմ և Լ.Մելիքսեթ-Բեկի քաղածո հրատարակությունից հետո ինչ է կատարվել ամբողջական բնագրի հետ՝ տողերիս հեղինակին հայտնի չէ: Ստորև թարգմանաբար հրատարակում ենք այն, ինչ ներկայացված է պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի նշված հոդվածում:

\* \* \*

Թիֆլիսը Վրաստանի գլխավոր կառավարչի և բոլոր շրջակա երկրների վարչական կենտրոնն է: Քաղաքը տեղակայված է լեռան ստորոտում: Կուրը այն կիսում-անցնում է ամբողջ երկայնքով: Քաղաքում օդը առողջարար է, ջուրը՝ հրաշալի: Նրա բնակիչների թիվը անցնում է 20.000-ը: Նրանում գտնվող երկու հազար տներից միայն 150 կամ 200 են վրացական, բոլոր մնացածները հայերին են պատկանում: Այս քաղաքի շուկան բաղկացած է հազարից ավելի կրպակներից: Այստեղ է պարսկական, թուրքական ու ռուսական և տեղական արտադրանքների հավաքատեղին: Հայերը առևտրական խոշոր գործարքներ են կատարում: Եվ միայն նրանց մեջ կարելի է բավական մեծահարուստներ գտնել:

Տները կառույցը այնպիսին է, ինչպես Պարսկաստանում: Դրանք ուրիշ բան չեն, քան քառանկյունիներ՝ ավել կամ պակաս բարձր, ներքուստ մռայլ, մի քանի անցքերի բացումով, որոնք իբրև լուսամուտ են ծառայում: Սովորաբար դուք քաղաքում մեկ հարկանիից ավելի տներ չեք գտնի, ընդ սմին՝ դրանք գետնափոր են: Գրեթե բոլոր տների դռները չափազանց փոքր են: Այդ նույն

տանիքները միաժամանակ հարթակներ են, ուր տղամարդիկ ու կանայք զբոսնում են և քնում ամառվա գիշերներին:

Տների մեծ մասը թաղակապ է, իսկ թաղերի վրա երգիքներ կան՝ բնակարանի լուսավորման համար: Բնակիչներից առավել կարողութուն ունեցողները տանն առկից «դերբաս» են կառուցում, այսպես կոչված բավական լայն թաղեր և նրանց հատումով եղած սենյակները ավելի լավ են ու շատ ավելի մեծ, քան բնակարանները: Ցերեկվա լույսը բնակարան է թափանցում ոչ այլ կերպ, քան երգիքից: Բավական մռայլ այդ կացարանները ամառվա շոգերին շատ հով են լինում:

Թիֆլիսի դիմաց Կուրից ձախ կան գետնափոր բավական մեծ թվով հյուղակներ [...]

Հունա - ռուսական դավանության մեկ մետրոպոլիտ, Հայոց մեկ արքեպիսկոպոս և երեք կաթողիկե հայրեր քաղաքի ծիսակատարություններն են ներկայացնում: Թիֆլիս քաղաքում կա նաև այստեղ թափանցած շիա-մահմեդական վարդապետության մեջիտ:

Թիֆլիսը կիսող Կուրը այն երկու մասի է բաժանում. այս արագընթաց և ձկնառատ գետը նկատելիորեն նպաստում է օդի առողջարարությանը:

Վրացիների զգեստը գրեթե չի տարբերվում պարսիկների հագուստից: Նրանց կանայք ոտից գլուխ փաթաթվում են սպիտակ չադրայի մեջ. այն ծածկում է ողջ դեմքը, ինչպես նաև ողջ մարմինը. ճիշտ դիմագծեր, կտրուկ [հայացք] ունենալով, նրանք այլանդակում են իրենց նրանով, որ կարմրադեղով շպարում են երեսները և ներկում հոնքերը:

Վրաստանում կլիման չափավոր է, ձմեռը՝ խիստ մեղմ ու կարճատև:

Վրաստանում բազում մրգեր կան և տարատեսակ խաղող, որից բավական լավ գինի են պատրաստում՝ կարմիր ու սպիտակ...

ՍՈՐԻՍ ՖՈՆ ԿՈՒՅԵԲՈՒ  
ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ, 1817

Ռուսական բանակում ծառայող այս գերմանացի գեներալ Երմոլովի Պարսկաստան կատարած զեսպանության անդամ էր:

Նրա ուղեգրությունը լույս է տեսել նախ գերմաներեն (1818 թ.), ապա անգլերեն (Narrative of a Tourney into Persia ...London, 1819): Կա նաև Ֆրանսերեն հրատարակություն: Ստորև վկայակոչվող դրվագը քաղված է Ուղեգրության Հովհ. Հակոբյանի հայերեն թարգմանությունից:

\* \* \*

«...Ճանապարհները բոլոր նահանգներում անգործածելի էին, և Թիֆլիսն իսկ թաղված էր ցեխի մեջ: Այս քաղաքը իր ներկա բարգավաճ վիճակը պարտական է գեներալ Երմոլովին: Կարճ ժամանակվա ընթացքում նա կառուցել է տներ, մայթեր և փողոցներ, բացել է հրապարակներ՝ որպեսզի օդը շարժի քաղաքի նեղ ու աղտոտ փողոցներից: Կարճ խոսքով, ով որ մի տարի առաջ հեռացել է Թիֆլիսից, հիմա չպիտի ճանաչի այդ: Երբ բնակիչները վերջապես զգացին, թե շատ ավելի հաճելի է ապրել տների՝ քան ցեխակույտերի մեջ, երբ դուրսը դիտելու համար լուսամուտների պերճանքը բանտարկյալ կանանց համար ընթարմացման առիթ դարձավ, կառուցման մոլի տենչանքը հանկարծակի այնքան արագությամբ տարածվեց, որ ոչ մեկ հատ անգործ բանվոր իսկ չէր ճարվում: Ընդհանուր հրամանատարի նախկին տունը՝ եվրոպական և ասիական ճարտարապետության ծիծաղելի մի խառնուրդ, քանդված է և նրա տեղը շինված մի արդիական շենք, մի գեղեցիկ նախազավթով: Բնակիչները սկզբում ծուռ էին նայում այս նախազավթին, բայց շուտով ոչ ոք գոհ չէր առանց մի նախազավթի: Եթե այս մոլի տենչանքը շարունակվի մի քանի տարի, Թիֆլիսը պիտի դառնա մի գեղեցիկ քաղաք: Այնտեղի տաք բաղնիքները գերազանցորեն լավ են, և եթե նրանք ավելի պատշաճորեն դասավորեն, մարդը կարող է փորձել՝ ամբողջ օրը այնտեղ անցկացնելու համար, բնակիչների նմանությամբ, որոնք շաբաթ օրը ամբողջովին անցնում են այնտեղ: Նրանք բաղնիք են տանում իրենց հետ ծխամորձ, գինի, պանիր ու կիթառ և ուրախ ժամանակ են անց կացնում ամբողջ օրը: Նույնն են անում և կանայք, միայն նրանք ավելի ուշադրություն են դարձնում իրենց անձին...»<sup>1</sup>:

<sup>1</sup> Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատոր 2, Երևան, 1934, էջ 501-502:

ԳՆԴԱՊԵՏ ՏՈՆ ՏՈՆՍԸՆ  
ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ (1817 թ.)

Հնդկաստանում երկար ժամանակ ծառայած բրիտանական այս սպան Անգլիա դառնալու ճանապարհին այցելել է Այսրկովկաս և եղել Թիֆլիսում: Նրա ուղեգրությունը լույս է տեսել 1818 թվին: Հայերեն քաղվածաբար թարգմանվել և հրատարակվել է Հով. Հակոբյանի «Ուղեգրություններ» Զ հատորում (Երևան, 1934):

\* \* \*

«...Հուլիսի 9. - Մեր հաջորդ ճանապարհորդության նպատակակետը Թիֆլիսն էր, երեսունյոթ մղոն հեռու: Տասնութը մղոն ու կես առաջ գնալուց հետո հասանք Քոդի (Kodi) չորս ժամում. որովհետև այստեղ միայն մի ենթասպա կար, շատ քիչ հարմարություններ ունեցանք և նախաճաշեցինք մի պարտեզում: Նորից ճամփա ելանք և կես մղոնից հասանք մի բնական ավազան կամ լիճ, որ թվում էր թե աղի էր, մի կողմ միայն ունենալով ջուր: Պատված էր բլուրներով և ուներ ութը մղոն երկարություն և չորս մղոն լայնություն: Այդտեղ անցնելուց հետո, սկսանք բարձրանալ անմշակ ու լերկ բարձրությունից և ինը մղոն դեպի առաջ հասանք Սողանլուխի (Soganlook) կայարանը, Կուր գետի մոտ: Այս վայրը ճանապարհորդների համար հարմարություն չունի: Ճանապարհը այստեղից գնում էր Կուրի աջ ափից և նրա ու բլուրների միջև մինչև Թիֆլիս: Այդ քաղաքին մի մղոն մնացած քառասուն ըոպե մեզ պահեցին կարանտինայի մի կայանում: Հեռավորությունը Սողանլուխից Թիֆլիս գտանք որ ութը և կես մղոն էր. ճանապարհը այս կարճ հեռավորության վրա անսովոր կերպով լավ էր:

Անցնելով քաղաքի միջից, մեզ դիմավորեց քաղաքի գլխավոր հայ բնակչի ծառան, որ մեզ առաջնորդեց իր տիրոջ տունը, ուր հրավիրված իջևանեցինք: Նա որդին էր Արուստուն Իսայա խանի (Arratoon Issaya khaun), անգլիացիների վերաբերմամբ մասնավորապես լավ տրամադրված մի մարդ, որին մենք նամակներ ունեինք և որ հուզումով տեղեկացանք՝ վերջերս կայծակնահար էր եղել: Տունը հիանալի էր. գետեղված էր գեներալի ու կառավարչի թաղամասում և նրանց բնակարանների մոտ: Որովհետև մենք գտնվում էինք Վրաստանի մայրաքաղաքում, մեր նամակներն ուղարկեցինք գեներալ Կուտուտովին, որ հաջորդ առավոտ մեծ քաղա-

քաղաքացիական ընդունեց ինձ և հրավիրեց ճաշի, որ մենք ընդունեցինք: Երախտագիտությունը պետք է ավելացնել, թե պարզապես բրիտանական սպա լինելուն՝ մեր հանդեպ ունեցած հարգանքի համար, ցույց տվավ ամեն հնարավոր ուշադրություն, և անմիջապես սկսավ հարցնել մեր ցանկությունների մասին, և փութով աջակցեց մեզ նրանց իրականացման համար: Հիրավի, ես շատ հազվադեպորեն փորձառություն եմ ունեցած վայելելու այնքան անշահախնդիր քաղաքացիականություն...:

Թիֆլիս գտնված միջոցին ամեն օր նա մի նոր նշան ցույց տվավ իր սրտի բարություն և պարտավորեցնող տրամադրություն: Երեկոյան, այս առաջին ծանոթության, գեներալը՝ երևակայելով, որ մենք բավական հարմարություններ չունենք մեր հայ հյուրընկալի տանը, մեզ առաջարկեց մի տուն, որ այդ միջոցին պատրաստել էին իր համար, և որ բարի եղավ անձամբ մեզ ցույց տալ. քայլեց մեզ հետ բազարներում և քաղաքի լավագույն մասում, մատնանշելով ուշադրության արժանի ամեն բան: Սակայն, մենք չէինք կարող ընդունել իր հյուրընկալ հրավերը այդ տան համար, մեր հայ հյուրընկալի հանդեպ ունեցած հարգանքի պատճառով, որ միշտ նպաստավոր էր եղել անգլիացիներին և մասնավոր խնամք էր տանում մեր բարություն համար:

Հուլիսի 11. - Մենք կրկին ճաշի հրավիրվեցինք գեներալ Կուտուտովի կողմից, որ ասաց, թե մենք պետք է որ մեզ համարեինք իր հյուրերը: Երեկոյան այցելեցինք կառավարչին, որ նոր էր վերադարձել գավառից: Ժամը վեցին, գնացինք վրացի մի իշխանի, իշխան Բեյրուդովի բնակարանը, ուր տեսանք նրա ընտանիքը, և մեզ մեծարեցին Կովկասյան շրջանների տարբեր ցեղերի տարօրինակ պարերով: Այս պարերից մի քանիսը կատարեցին վրացի երիտասարդներ, և նրանց հետ յերկու տիկին, որոնք դանդաղորեն կատարում էին ձևական շարժումներ, որ հետաքրքիր չէր: Այս պարերը տեղի ունեցան տիկիների ու պարոնների կողմից գեներալ Կուտուտովի պահանջով, որպեսզի մեզ ցույց տար վրացական պարի կերպերը:

Կանանց հագուստը մեծ չափով անհարմար է. դա մեր ամենահին նորաձևությունների ոճին է նմանում, ցուցադրելով երկար բաճկոններ և տափակ կուրծքեր, փաստորեն կանացի կազմվածքը չէր երևում, բացի մի տեսակ նեղ շալից՝ կապված մեջքին: Նրանց կերպարանքը այլակերպված է շինված կամար հունքերով և նրանց գլխանոցը բոլորովին անշնորհ է. դա նմանում է մի տեսակ շրջված սկահակի կամ սանդի, պարզապես մի ծայրատ կոն:

Նրանց հագուստը մետաքսից է, և նրանց բարձր կրունկով կոշիկները ներկված են կանաչ ու կապույտ: Այս տիկիներին ընթացքը բոլորովին սառն է, պարզ վերապահությունից ավելի, նպատակավոր կերպով դիրք բռնած այս պարագայում, որ նրանք կարծում են, թե պետք չէ ազատություն տալ իրենց, անկասկած նրանք ուրախ պիտի լինեին այս ձևական վերապահումից ազատվելու:...

Չորս-հինգ մարդ կիթառի կամ ջութակի նմանող երաժշտական գործիքով և երկու թմբուկով նվագում էին պարողների համար, և երբ պարը ընդհատվում էր, նրանք երգում էին: Բոլոր ներկաները ծափ էին տալիս շարժման համաձայն և թվում էր թե կատարելապես վայելում էին երաժշտությունը: Ներկաները բոլորը, ազատորեն գինի էին խմում, և մի երկար սեղան ներս բերին, բեռնավորված պտուղներով, հյուրասիրություն համար:...

Գալով վրացի կանանց գեղեցկության, որ արևելյան առակախոսներն ու բանաստեղծները, ինչպես նաև նրանց նմանողները, ընդհանուր համաձայնությունը գովասանում են, ես ավելի նվազ չափանցրած գաղափար էի կազմել, հետևաբար շատ հուսախաբ չեղա՝ գտնելով, որ իմ տեսածները ոչ մեկ գեղեցկություն չունեին<sup>1</sup>:

<sup>1</sup> Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. 2, էջ 653-656:

ՈՐՐԵՐՏ ԿԵՐ ՓՈՐՏԸՐ  
ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆ, 1817-1820 թթ.

*Մանրամասնորեն նկարագրում է Թիֆլիսը, նրա դիրքը, տները, մարդկանց, սովորույթները, պարերը, զգեստը և այլն: Դավանությունների ու պաշտամունքային կառույցների մասին խոսելիս նկատում է<sup>1</sup>.*

\* \* \*

*«...Քրիստոնեական տարբեր դավանանքի պատկանող բազմաթիվ գեղեցիկ եկեղեցիներ կան Թիֆլիսում. այն, որ պատկանում է Հռոմեական կաթողիկ հավատքին, ամենից գեղեցիկն է: Հայկական մեծ եկեղեցին՝ Սուրբ Սիոնի [Թաղից ոչ հեռու] մայր եկեղեցին<sup>2</sup>, ավելի ընդարձակ է, բայց չի հավաստում իր հարստությամբ ու ճարտարապետության շնորհքով իր մրցակցին, բայց ունի դիրքի առավելություն և նրա բնական դիրքի վեհությունը թվում է թե համապատասխանում է իր անվան: Նրա ստորոտից հոսում է արագ ու աղմկալից Կուրը:...*

*...Այս նեղ վայրում մի կամարով կամուրջը կապում է քաղաքը մի ընդարձակ արվարձանի հետ, որ կոչվում է Հավլաբար: Այնտեղ բնակում է գլխավորաբար հայերի մի գաղութ, որոնք փախել<sup>3</sup> են Երևանի չրջակայքից ռուս-պարսկական պատերազմների ժամանակ...»<sup>4</sup>:*

<sup>1</sup> Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. 2, Երևան, 1934, էջ 720:

<sup>2</sup> Սա պարզ թյուրիմացություն է, պիտի լինեք «Վրացական մեծ եկեղեցին՝ Սուրբ Սիոնի մայր եկեղեցին»:

<sup>3</sup> Հայերի «փախած» լինելու տեղեկությունը ստույգ չէ, և ինչպես Մ.Բժշկյանցն է ճշտում՝ Թիֆլիսում էին հաստատվել Ցիցիանովի հորդորով:

<sup>4</sup> Կեր Փորտըրը Թիֆլիսում եղած ժամանակ շփումներ կամ հանդիպումներ է ունեցել հայ հոգևորականության հետ և Հալաստան ուղևորվելիս կաթողիկոսին հանձնելիք նամակներ է տարել Թիֆլիսի Հայոց եպիսկոպոսից... (նույն տեղում, էջ 754):

## ԺԱԿ ՖՐԱՆՍՈՒԿ ԳԱՄԲԱ ՃԱՆԱԿԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Ֆրանսիացի վաճառականի ընտանիքում ծնված Ժ. Ֆ. Գամբան (1763-1833) նախ փայտանյութի հայթայթմամբ էր զբաղվում, շարունակելով հոր գործը, ապա Բուրբոնների ռեստավրացիայի շրջանում կազմում և կառավարությունն է ներկայացնում Հնդկաստանի հետ առևտուրը աշխուժացնելու ծրագիր, որի մեջ տեղ էր հատկացվում Այսրկովկասով անցնող ճանապարհներին: Այդ առնչությամբ նա շահում է նաև Ա. Երմոլովի համակրությունը և իբրև թագավորական հյուպատոս 1821-1824 լինում է Վրաստանում, մասնավորապես Թիֆլիսում: 1824-26 թվականներին հայրենիք վերադարձած Գամբան շարադրում և երկու հատորով հրատարակում է ճանապարհորդական տպավորություններն ու հիշողությունները: Վրաստանին վերաբերող և այստեղ մեզ զբաղեցնող հարցերի մասին նրա վկայությունները գտնվում են գրքի երկրորդ հատորում: Նյութերն ընտրելիս կամ գրառումներ կատարելիս Ֆրանսիացի հյուպատոսը որևէ շահագրգռություն չունեի գուտ տեղական իրողություններ (մարդիկ, զբաղմունք, հարաբերություններ, վիճակագրական տեղեկություններ և այլն) աչառու կամ նենգափոխմամբ ներկայացնելու: Այլ բան է, որ նա կարող էր սխալվել կամ առաջնորդվել շրջանառող լուրերով ու բանավոր ասություններով: Ավելին, նրա ճամփորդական նոթերում նկատելի է Այսրկովկասին, այդ թվում և հատկապես Թիֆլիսին վերաբերող Ֆրանսիացի նախորդ ճանապարհորդների (Շարդեն, Տուրնեֆոր և այլք) վկայությունների հետ ծանոթության հետքեր: Ինչ վերաբերում է Թիֆլիսի հայերի առևտնին գործունեությանը, նրանց ունեցած պաշտամունքային կառույցների տեղորոշումներին, քաղաքային բնակչության էթնիկական պատկանելիության նկարագրին ու զբաղմունքին, եթե այդպիսիք գրական որևէ աղբյուրից քաղված իրողություններ չեն, պիտի որ կասկածի հիմք չտան<sup>1</sup>:

<sup>1</sup> Այս պարագան ոչ պատահականորեն ենք ուշադրության առնում. Ֆրանսիացի ճանապարհորդներ Տուրնեֆորի և Գամբանի ուղղագրությունների վրացերեն թարգմանությունները գրախոսելիս պատմաբան Գուրամ Մայսուրաձեն փորձում է կասկածի ենթարկել Թիֆլիսի բնակչության էթնիկական պատկանելությանը վերաբերող հարցումները: Այսպես, նա համաձայնում է Տուրնեֆորին, որ 1701 թ. Թիֆլիսի բնակչությունը 20 հազար էր և որ «Թիֆլիսում հայ բնակչությունը բազմաթիվ էր», սակայն «ամենևին հիմնադրվել է այն թվային հարաբերակցությունը, որ երկուսն է սրվում»: Վախթանգ Ջ.ի և Վախուշտիի օրոք ԺԼ. դ. առաջին քառորդին տեղի ունեցած մարդահամարի նյութերը չտեսած ու չկարդացած պատմաբանը թիֆլիսահայերի քանակը բնակչության «մեկ երրորդ» է սահմանում, (Տուրնեֆորը 20 հազարից հայ է հաշվում 14.000, վրացի՝ 2.000, մահմեդական՝ 3.000, հայ-կաթոլիկ՝ 500): Այդ 14.000-ից Գ. Մայսուրաձեն հանում է «վրացի միաբնակներ» (լուսավորչական վրացիների) հորինովի մի գանգված, ապա անցնում «հայ» և «վրացի» տերմինների սոցիալական բովանդակությանը, որ իբր «հայը» «գլխավորապես վաճառական էր նշանակում, իսկ «վրացի»-ն՝ բնակչության ազնվական մասը» («Լեոնթյոն Երզնկյանի «Սոցիալական պատմությունը», 1990, 12 րժժ., թ. 13-14): Մեզ հասկանալի է դ-ր Մայսուրաձեի մղումը, սակայն խորհուրդ կտայինք կարգալ իվ. Ջավախիշվիլու եսյե-ն ցյոնոմոյրո օնցորոօս

Գամբայի «Ճանապարհորդություն» երկհատորը ժամանակին թարգմանվել է գերմաներեն, հատվածաբար՝ ռուսերեն (մատենագիտություն տես *М. А. Полиевктов, Европейские путешественники по Кавказу, Тб., 1946, стр. 89*). Թիֆլիսին վերաբերող տեղեկությունները ռուսերեն քաղածո թարգմանությամբ լույս են տեսել Մ. Պոլիևկտովի և Գ. Նաթանի «Старый Тифлис в известиях современников» ժողովածուում (Тифлис, 1929, стр. 76-83)։ Մեր օրերում Գամբայի երկհատորը լույս է տեսել վրացերեն թարգմանությամբ (ԵՅԵ ԳՐԱՆՆՅԱ ԶԱՅՃՅ, մոզ Խաչրոծա ամյերյայյասոսի, լոմի քորյեյլո, ցրանցյուլոճան տարյոմն, յոմյեցարյոմ լաչրոտո միոս մջալոծլոմյոլոմ, տծ., 1987: Երկրոր հատորի թարգմանությունը տողերիս հեղինակը չի տեսել)։ Առևտուրին վերաբերող Գամբայի հայացքների քննարկմանն է նվիրված Պ. Գուգուշվիլու հոդվածը (Եջ. Նახ. Յն. Մրոմյոմ, III, Եջ. 1936)։

Թիֆլիսին վերաբերող այստեղ ներկայացված դրվագը քաղել ենք Մ. Պոլիևկտովի և Գ. Նաթանի կազմած ժողովածուից։

\* \* \*

Ցիրուսը կամ Կուրը Թիֆլիսը բաժանում են երկու մասի. աջ ափին են գտնվում հին քաղաքը, հանքային բաղնիքները և նոր քաղաքը, ձախին՝ արվարձան Հավլարարն ու Իսանին և գերմանաբնակ մի գյուղ։ Երկու ափերը միավորող կամուրջը խարխուլ էր։ Երեք տարի առաջ կառուցվել է փայտաշեն միակամար կամուրջ՝ աղյուսաչար այնքան ամուր սյուների վրա, որ գետի արագ ընթացքից կարելի է չսարսել։ Այս նոր կամուրջը կառուցված է հնից պահպանված ամուր հիմքի վրա։

Երբ ես 1820 թ. տեսա հին քաղաքը, նրա բոլոր փողոցները լեցուն էին աղբակույտերով, ինչը պարսիկների հարձակման ցավալի հիշողություն էր։ Այդ աղբակույտերը հաղթահարելով դժվարությամբ կարելի էր հասնել դռներին, շուրջ չորս ֆուտ բարձրությամբ կարելի էր հասնել դռներին, շուրջ չորս ֆուտ բարձրությամբ կարելի էր հասնել դռներին, որոնց վրայով տներ էին մուտք գործում։ [Իսկ տները] գրեթե գետնափոր էին, որոնք իբրև կացարան էին ծառայում։ Ուրոշ տների դարատափերը գրեթե փողոցի մակարդակին էին՝ նեղլիկ ու ծուռ։ Երեք տարին բավարար էր, որպեսզի իր ավերվածությամբ այս ասիական սանձարձակության բռնության վկայություն հանդիսացող քաղաքը եվրոպական լուսավոր սկզբունքներով կառավարվող քաղաքի տեսք ստանար։ Նման էական փոփո-

Ժյզլյոմ, I, տծ., 1967, թ. 140-182; Մ. Կաչրոծ, տծոլոսոս մոսնեյլոմ, 1803-1970 ՎՎ., տծ., 1979; Նաև՝ *П. М. Мурадян, Арм. эпиграфика Грузии: Тбилиси, Ер., 1988, стр. 116-117.*

խուժյան համար ոստիկանություն պետք ինժեների և մի քանի ծառայողների ուղեկցությամբ հետևողականորեն սահմանել է բուլոր փողոցների լայնությունն այն հաշվով, որ նրանցով փոխադրական կարողանա անցնել: Ընդ սմին հսկում էին, որ փողոցներն անցնեին ուղիղ գծով: Բնակիչներին բավական քիչ ժամկետ էր տրվել ավարտելու սովորաբար 12-15 ֆուտից ոչ ավելի բարձրություն ունեցող աղյուսակերտ տները: Աշխատանքները արագացնելու համար աղյուս պատրաստելու ահռելի տարածություն էր հատկացվել, այս աշխատանքներին էին լծվել մեծ թվով զինվորականներ, նրանցից ոմանք անտառներում կաղնի ծառեր էին հատում և Գորիից Կուր գետով հասցնում Թիֆլիս: Այս պայմաններում հին քաղաքի վերականգնումը այնպիսի արագություն էր ընթանում, ինչպիսին երևակայելն իսկ դժվար է:

Հին քաղաքը շրջապատող խորխորատները աստիճանաբար լցվում են, և մի քանի տարի հետո այն կհավասարվի նորին: Նոր քաղաքում կարելի է տարածքի հետ ազատ վարվել, ուստի փողոցներն անց են կացվում վաթսուն ֆուտ լայնությամբ: Աքանչելի հրապարակներ, մեծ խնամքով թրծած, մասամբ արևի տակ չորացրած աղյուսով զորանոցներ, հիվանդանոցներ, պետական հաստատությունների համար կառուցված շենքեր: Այս բոլորը լրացնում են գեներալ Երմոլովի կատարած հասարակական աշխատանքների ընդհանուր պատկերը: Վերականգնման, կարելի է ասել՝ նրա խնամքին հանձնված երկրամասի մայրաքաղաքի լիակատար վերականգնման հանդեպ նրա հոգածությունն ու ջանադրությունը ոչնչի հետ համեմատելի չեն: Հայտնի է, թե ինչ բավականություն են պատճառում նրան Թիֆլիսի ընդարձակումը, տեսնելը և ահա գեներալները, տեղացի իշխաններն ու մեծահարուստ հայերը միմյանց մրցակցելով աշխատում են առանձնանալ իրենց կառույցների նրբություններով:

Նույնը աշխատանքների կազմակերպիչների միջից բոլորից ավելի աչքի է ընկնում հայոց եպիսկոպոս Ներսեսը: Այս նշանավոր հովվապետը նոր քաղաքում հսկայական քարվանսարայ է կառուցել, որ կարծես խոսում է այս քաղաքի առևտրի պարփակություն մասին:

Հայերի հոսքի պատճառով Թիֆլիսի բնակչությունը մեծանալով մեծանում է. նրանք այստեղ թուրքերի բռնություններից ու պարսիկների պատճառած նեղություններից պատսպարան են որոնում: 1820 թ. Թիֆլիս հաստատված մի հայ ընդարձակ քարվանսարայ է կառուցել: 8 սաժենից ոչ ավելի լայնության և 30-40 եր-

կայնության տեղանքի համար նա վճարել է 81.000 ուղբլի թղթադրամով (81.000 ֆրանկ), իսկ բացի այդ՝ իր տիրույթը Կուրի հեղեղումից պարսպելու համար ստիպված էր պատ կառուցել ու լայն լիցք կատարել: Այս քարվանսարայր նշանակալի չափով ընդարձակ է դարձյալ հին քաղաքում գտնվող մյուս երկուսից:

Այստեղ եկող ու ետ գնացող ձիերը և ուղտերը, պարսիկ վաճառականների արագաշարժությունը և նրանց հակադարձը՝ թուրքերի ու հայերի հանգստությունը, հեռավոր երկրներից եկող ամենաալյազան ապրանքների փոխադրականները՝ այս ամենը հատուկ տեսք ու աշխուժություն է հաղորդում այդ ինքնատիպ հյուրանոցներին, ուր այդքան տարբեր երկրների ու լեզուներով խոսող վաճառականներն ապրում են կարծես մեկ համայնք կազմած: Հյուրանոցի ու ապրանքի պահեստի համար այստեղ ոչ մի վճար չի գանձվում. քարվանսարայի տիրոջը միայն կոմիսիոն տոկոս է հատկացվում:

Երեք քարվանսարա տեղակայված են շուկայի կենտրոնական մասում: Այս շուկան բաղկացած է մի շարք հրապարակներից ու փողոցներից, ուր միշտ լեցուն է ժողովրդով: Արհեստի յուրաքանչյուր տեսակի համար շուկայում հատկացված է հատուկ թաղամաս: Երկու հին քարվանսարայներից մեկում կենում են բացառապես պարսիկները, իսկ Կարսից, Էրզրումից և Թուրքիայից եկող հայերը սովորաբար իջևանում են մյուսում:

Վերջին տարիների Թիֆլիսի բնակչությունը սկսել է էապես մեծանալ: 1820 թ. Թիֆլիսում կար շուրջ 24.000 բնակիչ: 1825 թ. նրա բնակչությունը հաշվվում էր առնվազն 33.000: Այս տարի ինչպես բուն քաղաքում, այնպես էլ նրա արվարձաններում հաշվվում էր 2.500 հայ ընտանիք, 1.500 վրացական և 500 թաթարական ու պարսկական, ընդամենը 4.500 ընտանիք, յուրաքանչյուրը բաղկացած առնվազն 6 շնչից, որով կազմում է 27.000 շունչ, գումարած գարնիզոնը, չինովնիկությունը և արտասահմանցիները 6.000 շունչ, իսկ ընդհանուրը՝ 33.000 հոգի:

Հնդկաստանից Եվրոպա գնացողները սովորաբար Թիֆլիսով անցնող ճանապարհով են մեկնում: Բոմբեից ծովով ուղևորվելով, նրանք 15-20 օրում հասնում են Բենդեր-Բուշեր Պարսից ծոցում: Այդ նավահանգստում անգլիական գլխավոր հյուպատոսություն կա, և անգլիացիները այստեղ մեծ առևտուր են անում, այստեղից Պարսկաստանում տարածելով Հնդկաստանի և իրենց հայրենական մանածագործության արտադրանքները: Բենդեր-Բուշերից վեց շաբաթվա ընթացքում նրանք հեշտությամբ հասնում են Թիֆլիս: Քարվաններն

այդ ճանապարհն անցնում են վեց շաբաթվա ընթացքում: Թիֆլիսից անգլիացիներն Անգլիա են մեկնում կամ ծովով՝ Ռեդուտ-Կալեից Օդեսա հասնելով, կամ ցամաքային ճանապարհներով՝ Կովկասով, ուսական գավառներով ու Ավստրիայով: Երբեմն նույն օրը Թիֆլիս են գալիս Փարիզից խոշոր վաճառականներ, սուրհանդակներ Պետերբուրգից, աւստրականներ Կոստանդնուպոլսից, Կալկաթայից ու Մադրասից ժամանող անգլիացիներ, Զմյուռնիայից, Յագոնից՝ հայեր, և Բուխարայից՝ ուզբեկներ. այնպես որ այդ քաղաքը կարող է համարվել Եվրոպայի ու Ասիայի միջև գլխավոր հանգուցակետ: Երբ առևտուրն այստեղ լիակատար զարգացում ստանա, Սամարկանդից, Տիբետից ու Չինաստանի սահմաններից ժամանող բուխարացիները Թիֆլիսի շուկայում կհանդիպեն Լահորի ու Հազարաթի հնդկաստանցիներին հետ:

Շաբաթը մեկ անգամ կանոնավորապես Եվրոպայից Թիֆլիս է հասնում փոստը: Պետերբուրգից և Օդեսայից՝ 25-րդ օրը, Փարիզից՝ 50-55-րդ օրը:

Վերջին տարիներին վրացական իշխանները զբաղվում են պարտեզներ աճեցնելով: Հերակլի հրաշալի այգին նշանավոր իր սովերախիտ սոսիներով ու բարդիներով քաղաքային նոր թաղամաս է խորհրդանշում: 1820 թ. ուսական կառավարութունը այն վաճառքի հանեց և դիմացը ստացավ ընդամենը 5.000 ու. արծաթով (20.000 ֆրանկ), 1823 թ. այն արժեք 20.000-21.000 ու. արծաթով (84.000 ֆրանկ): Սեմայի ափերին երևան եկած շինարարական կիրքը նույնով ընդգրկել նաև Կուրի ափերը:

Թիֆլիսի վրա իշխող բարձունքի հարավային լանջին, որտեղից հոյակապ տեսարան է բացվում, գեներալ իշխան Բեհբուդովը մերձքաղաքային տուն է կառուցել և նրա մոտ ճաշակով հարթակներով վար իջնող պարտեզ սարքել: Նույն շրջանում հանրության համար այգի է բացված, որը հարում է գլխավոր կառավարչի պալատին. այն գեղեցիկ բուսականությամբ և ճաշակավոր ծրագրումով ընդարձակ այգի է: Մի քիչ վերև՝ կաթողիկական նոր հանգստարանն է. այն զբոսանքի վայր է դարձել, ուր գնում են Շիրազի խաղողի գեղեցիկ ողկոյգներով հիանալու, որ աճեցվել են այստեղ վերջին երեք տարիներին: Այդ վազերը ուղարկվել են այստեղ անգլիացի ռազմական ճարտարագետ, Աբաս-Միրզայի մոտ գտնվող և Հնդկաստանում երկար ապրած լեյտենանտ-գնդապետ Մոնսիսի կողմից: Դժվար է ավելի պատրաստակամ մարդ գտնել:

Կաթողիկական հանգստարանի ծայրերից մեկում գեղեցիկ տաղավար կա, որի մեկ մասը հատկացված է հասարակաց հանգստի, իսկ մյուսը՝ մատուռ է:

Քսան տարի առաջ Թիֆլիսում իշխում էին ասիական սովորույթները: Առհասարակ հազվադեպ այցելող ճանապարհորդներին բնակիչներից յուրաքանչյուրը շտապում էր հյուրասիրութուն ցուցաբերել, իսկ վաճառականները իջևանում էին քարվանսարաներում: Այժմ այս մայրաքաղաքում հայերի կողմից խնամվող մի քանի հյուրանոց կա, ուստորանատեր և երկու հացավաճառ՝ Փրանսիացի:

Կուրի ափին գտնվող արվարձանի գերմանացի բնակիչները քաղաք են բերում կանաչի, յուղ, ապխտած միս և այլ երչիկային մթերքներ: Այս գերմանացիների մեծ մասը Վիրտեսբերգից են: Սույն գերմանական համայնքին, ինչպես նաև Կուրի ձախ ափին, Թիֆլիսից հինգ վերստ հեռու ապրող մյուսներին է Վրաստանը պարտական կարտոֆիլի աճեցմամբ: Երբ ես 1820 թվին Թիֆլիս եկա կարտոֆիլի ֆունտի համար վճարում էին 10 սոլ<sup>1</sup>, իսկ այժմ նրա արժեքը, ինչպես որ ողջ բանջարեղենինը Վրաստանում, շատ չափավոր է: Գերմանացիները, որոնց մասին ես խոսում եմ, իրենց բախտից շատ գոհ են. բոլոր տվյալները կան, որ նրանք այստեղ կծաղկեն:

---

<sup>1</sup> Հավանաբար «պենի» անգլիական դրամ, որ այստեղ հավասար է ֆրանսիական «սոլ»-ին (1/20 ֆրանկ) - Ա.Պ.:

## Հ. ՄԻՆԱՍ ԲԺՇԿԵԱՆՑ

Մխիթարյան Հայր Մինաս վարդապետ Բժշկեանցի «Ճանապարհորդութիւնն ի Լեհաստան և յայլ կողմանս՝ բնակեալս ի Հայկազնեաց, սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, շարագրեալ Հանդերձ զանազան բանասիրական տեղեկութեամբք» (Վենետիկ, 1830 թ.) աշխատութիւնը, ինչպես խորագիրն ու Հեղինակային «Յառաջաբանն» են Հավաստում, նպատակ ունի տեղեկագրելու և ուսումնասիրելու այն երկրներն ու բնակավայրերը, ուր Անիից գաղթած Հայերի ժառանգներն են ապրում: Բնականաբար՝ Հարևան Վիրքի մայրաքաղաք Թիֆլիսը նրա ցանկից դուրս չպիտի մնար, քանի որ Անիի քաղաքային բնակիչները նրա Հետ վաղորոք երթևեկ ունեին և ապա՝ Թիֆլիսը աշխարհագրորեն առավել մերձավոր քաղաքներից էր, ուր Հայերը ըստ պատշաճի Հյուրընկալ էին լինում:

1824-1830 թվականների միջոցին կատարած ճանապարհորդութիւնների ընթացքում նա առավելապես քաղաքային բնակչության մեջ էր անցրիններ փնտրում, իսկ Թիֆլիսը նրա օրոք Հայաշատ ասիական երկրորդ քաղաքն էր՝ Հայտնի անտեսական ու մշակութային կյանքով (Կ. Պոլսից հետո կամ նրան համընթաց):

Ուշագրավ է բազմազգ քաղաքի վերաբերմամբ Հ. Մինաս վրդ. Բժշկեանցի պատկերացումը, ինչպիսին էր Թիֆլիսը. «Նւ քանզի ի կենակցիլ բազմաց ի միասին մեծ զօրաւոր լինի ոգի ընկերական, անպակաս ուսանելով յիրերաց զպիտանիս և Հաղորդելով միմեանց զհանճար և զգիւտ. նմին իրի անդէն և անդ ծովանայ ոյժն, և յառաջ գան Հիասքանչ մեծագործութիւնք և իմաստուն կարգք մեծիմաստ աշխարհաշինաց ի մայրաքաղաքս աշխարհի, յորս թագաւորէ պանծանօք ոգի ընկերական և քաղաքականութեան: Նորին աղագաւ ուղղադատ իմաստունք ընդ տեսանելն ի քաղաքամէջս գերեւելի և հոյակապ շինուածս՝ անվրէպ կշռադատէին, թէ գոյ անդ ընկերական ոգի և անպակաս միաբանասէր աշխարհաչէնք»:

Դատելով Թիֆլիսի քաղաքային տեղանքի և տեղանունների ճիշտ ու Հստակ ճանաչումից և անվրէպ գրառումից, Մխիթարյան վարդապետը տեղաբնակ գրագետ ուղեկիցներ է ունեցել, բանասերի հմտությամբ ստուգել գրառելիքը:

Մեր Հեղինակի՝ Թիֆլիսին վերաբերող տեղեկութիւնները ժամանակին արժանացել են Հին Թիֆլիսի անցուղարձով զբաղված Հայագետ-վրացագետ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի ուշագրութիւնը (տե՛ս նրա *Смарный Тифлис по описанию А. Негру (1817) и М. Медиси (1824-30 г.г.)*. - "Ars", Тифлис, 1918, № 2-3, стр. 104-114 և առանձին):

Ստորև քաղվածաբար հրատարակվում է Թիֆլիսի նկարագրութիւնը վերաբերող դրվագը (էջ 412-414):

<sup>1</sup> Մինաս վրդ. Բժշկեանց, Ճանապարհորդութիւնն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 02:

ԹԻՖԼԻՉ

615. Է մայրաքաղաք կուսակալութեան Վրաստանու և երբեմն թագաւորանիստ վաղեմի քաղաք Վրաց, որ յարեւմտից ընդ հարաւ պատեալ է ապառաժ լեռամբք. յարեւելից ունի գկուր գետ՝ հոսեալ ի հիւսիսոյ ընդ հարաւ: Յայնկոյս գետոյն է լեռան Հավլապար. յորոյ վերայ է ընդարձակ դաշտ, ուր բնակին գիւղականք Էջմիածնի, զորս վարեաց աստ մեծ կուսակալն Ռուսաց Յիցիանով ի վերջին պատերազմի ընդ Պարսից: Ուրանօր սկսան շինել բնակութիւնս և ընդարձակել զքաղաքն:

Այս մեծահռչակ քաղաք կառուցեալ է ի զառ ի վեր լեռին սկսեալ յեզերաց անտի Կուր գետոյն, և ունի պարիսպ կաւակերտ խճախառն: Անդր քան զկամուրջն ի հարաւակողմն ընդ արեւելս են 5 բաղանիք բնական ջերմաջերմ ջուրց, որք շինեալ են բազում կամարօք և մեծագործութեամբ, ունելով զանազան քարուկիր աւազանս խորինս: Ի ճախակողմն բաղանեաց է ճանապարհ Պարսկաստանու. իսկ յայսկոյս կամրջին բաղանեաց է բարձր աշտարակ Նարիգալէ ձայնեալ. ուր պահեն զէնս և կարասիս պատերազմի:

616. Ի հիւսիսակողմն արտաքոյ քաղաքին գոյ դաշտ տափարակ, ուրանօր է արուարձան, որ է ծայր մեծի թաղին կոչեցելոյ Տափիթալ: Անդ մերձ ի գետն է Վանք Հայոց կամ Առաջնորդարան արքեպիսկոպոսանիստ. հնաչէն եկեղեցին Կաթողիկէ անուամբ հիմնեալ է ի 600 թուականին տեառն, որ ունի 3 սեղանս միակարգս և 5 կաթուղիկէս, նկարեալ ի ներքուստ զանազան պատկերօք:

Երևելի է ուսումնարանն նորաչէն՝ կանգնեալ ի մեծանուն Ներսիսէ արքեպիսկոպոսէ Հայոց Վրաստանու, յորում մարգին մանկունք հայկազնեայք ի լեզու հայ, ռուս, պարսիկ, ընդ վկացութեամբ խոհական Յարութիւն վարդապետի Ալամդարեան: Բնակիչք մեծի քաղաքիս են զանազան ազգք. ընդ ամենայն հաշուին քսան հազար տունք, իսկ տունք Հայոց են 5000, որք յառաջագոյն ունէին 24 եկեղեցիս. այլ յառնուլ Մեհեմետ խանին զայս քաղաք՝ շատք քանդեցան: Այժմեան եկեղեցիք Հայոց բաց ՚ի վանաց են 10, զորս նոքա կոչեն ա) Սուրբ Նշանի, Մօղնո՞, բ) Ծիկրաշեն, գ) Բերդեհեմի, դ) Մեծ Բերդի, ե) Փոքր Բերդի, զ) Սուրբ Գեորգայ, է) Սուրբ Սարգսի, որ է արտաքոյ քաղաքին մերձ ի վանս, ը) Եկեղեցի Խօճենց որ ի Հավլապարն, թ) Սուրբ Սարգսի մերձ ի բաղանիս, ժ) Սուրբ Կարապետի յայնկոյս գետոյն:

\* Մ. Բժշկյանցը Ս. Նշան և Մուղնի եկեղեցիները թյուրիմացաբար նույնն է նկատել, ուստի համարակալումը վերանայելի է:

617. Անապատն Կուսանաց է մենաստան հայկազն միանձնուհեաց, որք կրօնաւորին ի վաղուց հետէ ընդ հպատակութեամբ արբասուհւոյ:

Միոն է մայր եկեղեցի Վրաց թագաւորաշէն գմբեթայարկ է բարձրագոյն հանդերձ բարձր զանգակատամբ, կառուցեալ յափն Կուր գետոյ, որ ընդարձակ է և մեծագործ՝ նկարեալ ի ներքուստ բոլոր պատմութիւն Աստուածաշնչի: Նոյնպէս մեծաշէն է եպիսկոպոսարանն Ռուսաց: Գոն ի Թիֆլիզ և հայկազն հռովմէականք իբր 40 տունք. ունին քարաշէն եկեղեցի յանուն սուրբ Աստուածածնին հիմնեալ ի 1803. ընդ նմին և վանատուն, յորում բնակեալ Լատին քահանայից՝ հովուեն զժողովուրդն: Ուրանօր գոն և Յոյնք, եկեալք յայլևայլ կողմաց: Տունք մեծամեծաց են կրկնայարկք և աղիւսակերտք. միջակայնոց՝ միայարկ, իսկ հասարակ ժողովրդեան՝ կաւաշէն խճախառն, որոց տանիք կոչին Դարպաս: Փողոցք քաղաքիս նեղ են և անկանոն, տունք այնպէս խճողեալ են առ միմեամբք, զի տեղիք ինչ և ոչ փողոցս ունին:

Այժմ սկսան ի Տափիթաղի շինել տունս ձեւաւորս ի վերայ լայնածիգ և ուղիղ փողոցաց ըստ եւրոպեան կարգի. ուրանօր կառուցեալ կայ մեծ պալատ կուսակալին. առ որով և զարդարուն պարտէզ արքունի, կանոնաւոր կրպակք, և պալատք մեծամեծաց:

Ի թիկանց Տափիթաղին ընդ արևմուտս են այգիք և գեղեցիկ պարտէզք. այնպէս զի ի նկատել ի բարձանց անտի կարի իմն զուարճալի երևի դիրք և տեսիլ մեծի քաղաքիս՝ ունելով ի միջի զգեղեցկահոս և զբարեբեր Կուր գետ: Յերկոսին ծայրս քաղաքին շինեալ են կրկին արգելանոցք. մին սակս եկաւորելոց ի Պարսկաստան և միւսն ի Կովկաս:

618. Առաջի Թիֆլիզին կառուցեալ կայ լայնանիստ կամուրջ փայտաշէն ձգեալ ի լեռն Հավլապար: Ուրանօր աստ և անդ հաստատեալ կան ի գետ անդր 10 շարժական ջրաղացք, որք հոլովեալ ի հոսանաց գետոյն՝ մատակարարեն զալիւր քաղաքին. այլ երբեմն յափշտակեալ ի բռնութենէ ջուրց՝ աստ և անդ տարուբերին:

Այս անուանի գետ կոչի հասարակօրէն Քիտ, որ ելեալ կրկին վտակօք ի լերանց Արտաճանայ և ի լճէ Ծավշեթի՝ գայ միանայ յԱշուխապաշ, ապա անցեալ ընդ կիրճն Պերտէի և ընդ Թիֆլիզ՝ ընդունի 7 երեւելի վտակս: Հոսկ յետոյ մերձ ՚ի Ծելատ խառնեալ յերասխ գետ՝ նովաւ հանդերձ թափի ի ծովն Կասպից:

Ի Կուր գետոյ յաճախ ելանեն բազմատեսակ ձկունք. մանաւանդ ձուկն Օրակու պարարտ յոյժ, և Մերսին, զոր նոքա կոչեն Չուկէլ, յոր-

մէ հանեալ խավեար բազում մերձ ի Կէնճէ, առաքեն այլուր: Գտանի ի նմա և ջրշուն, այլ չէ այնչափ յաճախ մերձ 'ի Թիֆլիզ:

Կոր գետ ի ստորին ծայր Թիֆլիզի յերկու թևս բաժանեալ և ի մղոնաչափ հեռաւորութեան անդրէն միաւորեալ կազմէ երկայնաձև գեղեցիկ կղզի, որ կոչի Օրդաճալա, ուր են վայելուչ պարտէզք և բարեբեր ծառատունկք:

619. Սօլօլակ է վտակ, որ հոսեալ ի գլխոյ լերին՝ անկանի յաւազանն առ ստորոտով լերին, յորմէ բաշխեալ ոռոգանէ զայգիս: 'ի վերայ այսր լերին գոյ եկեղեցի Վրաց Թաճմինտայ կոչեցեալ. այսինքն Սուրբ լեառն, ուր բոկոտն յաճախեն ուխտաւորք յիւրաքանչիւր եօթնեկի յաւուրս հինգշաբաթուց:

## ՍԱՐԳԻՍ ԵՊՍ. ՁԱԼԱԼԵԱՆՑ

Իր «Ծանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատութեան առաջին մասը 1842 թվականին հրատարակելուց հետո, վերահայոց թեմակալ Սարգիս եպս. Ջալալյանց Սանահնեցին որոշեց ձեռնպահ մնալ երկրորդ մասի հրատարակութիւնից՝ մանավանդ որ նրան գոհացում էր տալիս Հովհ. եպս. Շահխաթունեանցի հրապարակ հանած երկհատորը՝ «Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» (հ. Ա, Բ, էջմիածին 1842): Սակայն շատ չանցած համոզվեց, որ նախորդի ընդգրկած «հինգ գաւառաց»-ից բացի կան «աշխարհներ» «յորս կամ հայրէնի ժառանգութեամբ և կամ գաղթականութեամբ բնակութիւն կալեալ հայրենազուրկ Հայկազեանց՝ արարին ինքեանց հայրենիս, ամենայն ուրեք ցուցեալ զհանդէս հանճարոյ, անխոնջ վաստակաց և մանաւանդ աստուածապաշտութեան իւրեանց»: Ահա, Շահխաթունյանցին լրացնելու և 1846 թվականին կաթողիկոս օծված Ներսես Աշտարակեցու հանձնարարութիւնը կատարելու պատեհութեամբ Վրաստանի, Իմերեթի և այլոց թեմակալ նշանակված հեղինակը ձեռնամուխ է լինում «Ճանապարհորդութեան» երկրորդ մասի կազմութեանը, որը լույս տեսավ 1858 թվին «ի Տփլիս»: Գիրքն սկսվում է Անի քաղաքի նկարագրութեամբ և մանավանդ նրա հուշարձանների վրա եղած վիմագրերի վերծանութեամբ ու նախնական մեկնաբանութեան փորձով և ապա անցնում Թիֆլիս շահաստան քաղաքի պատմութեանն ու այստեղ հաստատված հայութեան ստեղծած մշակութային ժառանգութեան ներկայացմանը (էջ 53-74): Կարելի է նույնիսկ վիճարկել, թե արդյո՞ք արդարացի է Թիֆլիսում առաջնորդական աթոռ ու նստոց ունեցողի համար այդ քաղաքի հնութիւնները «Ճանապարհորդութեան» գիրք մուծել: Բայց պիտի ընդունել, որ հատորը միայն մեզ զբաղեցնող քաղաքին չի վերաբերում, և այդ մի քանի էջի համար գրքի խորագիրը չպիտի փոփոխութեան ենթարկվեր, առավել ևս որ առաջին մասը լույս էր տեսել մինչ այդ (1842 թ.):

Կարևոր է նկատել, թե Սարգիս Ջալալյանցը ժամանակ ու հնարավորութիւն է ունեցել ներկայացվող հուշարձաններ բազմակի այցելութիւններ կատարել, ստուգել ու վերստուգել իր գրառումը և ի լրում՝ «ի գիտող արանց» հարցուփորձ անել: Ուստի նրա հաղորդումների արժանահավատութիւնը կասկած չպիտի հարուցի:

## ՏՓԽՍՍ

է երևելի և շահաստան քաղաք ի նահանգին Գուգարաց յափն Կուր գետոյ ի հարաւային կողմանէ, վասն զի Գուգար էր նահանգ Հայոց և ունէր զինն գաւառս, որոյ սահմանն ի հիւսիսոյ ձգէր ցգետն Կուր. գորս ունէին Վիրք, - ասէ Խորենացիս, - և բնակիչս հարաւային կողման Կուր գետոյ Վիրք անուանէին Սօմէխք, այնէ հարաւայինք. զիրք տեղւոյն սակաւիկ զառ ի վայր, օդն առողջարար և

Ջուրն բարեհամ. երկիրն արգալանդ և բերրի. ի թիկանց ունի զլեառն Մթածմինդայ, այն է՝ Սուրբ լեռան, առեալ զանուն ի Դաւիթ սրբակեաց առնէ միոջէ, որոյ եկեղեցին անկանի առ սարաւանդակաւ այնր լերին և կամ ի լերկ և ի սուկաւէա գոլոյն, զի գուրկ է ի յարեւելից կողմանէ ի դալարագուարճ բուսոց և ի հովանաւոր ծառոց:

Ի հարաւոյ ապառաժն Նարնդալայի, ի վերայ որոյ է բերդ ամուր և հզօր, կառուցեալ ի թագաւորաց Պարսից յամի տեառն 379, նորոգեալ և յաւելեալ ի Տաճկաց և ի Վրաց, զի յառաջ զընտան էր յանցաւորաց, իսկ այժմ վառօդատեղի: Ի ներքին ծայր ապառաժիս են յորդաբուղիս հանքային աղբիւրք ջերմ ջրոց, ի վերայ որոց գոն ուլթն բաղանիք և որպէս կարծի անուն քաղաքիս ծագեալ է ի ջերմ ջուրց ըստ Վրաց՝ Թփիլիս, սակայն ի կողս միոյ գրչագիր մատենի կայր գրեալ թէ՝ Քաղաքս այս յառաջն անուանէր Ադրապու, յետոյ անուանեցաւ Փայտակարան՝ յաղագս ունելոյ զպարիսպ և զաշտարակ իւր ի մայր գերանաց, և ապա Տուփխիտ՝ վասն խիտ առ խիտ գոլոյ պալատաց և տանց: Իսկ եթէ ստոյգ իցէ՝ չկարեմ հաւաստել:

Վախտանկ Գորգաւան արքայ Վրաց ի 455՝ ամի յաղագս ամրութեան տեղւոյն և յարմարութեան փոխեաց զաթոռ արքայութեան իւրոյ ի Մցխիթայ աստ, զոր առաւել ճոխացոյց և պայծառացոյց և յօրէ յայնմանէ եղև հռչակաւոր շահաստան և արքայանիստ քաղաք:

Բայց զնոյն երջանկութիւն չկարաց վայելել շարունակ քաղաքս այս, այլ գօրէն հողմակոծեալ և տատանեալ նաւու տարութերէր ի կատաղի կոհակս նախանձու զանազան թշնամեաց, այն է Պարսից, Խազրաց, Արաբացոյ և Տաճկաց: Զառաջինն Խաքան թագաւոր շոնաց միաբանեալ ընդ կայսեր Յունաց Հերակլի պաշարեաց զսա և ջան եղեալ հիմն ի վեր տապալել որպէս գրէ Մովսէս Կաղականդուացին՝ թէ «Յետ այսր ամենայնի դիմէին ուղիւքն յարուցեալ գետն յորձանուտ (այն է արքայն Խաքան) ընդդէմ Վրաց աշխարհին և պատեալ պաշարէին զփափկասուն վաճառաշահն քաղաք հռչակաւորն և մեծն Տփլիս: Ազդ լինէր և մեծի կայսերն (այն է Հերակլի) ժողովեալ և նորա զամենայն գօրս գօրութեան իւրոյ գայր վաղվաղակի հասանէր առ նիզակակից օգնականն իւր ... ապա այնուհետև անդ էր տեսանել զաղէտս եղկելի անձանցն որ փակեալ էին

\* Բնագրում վրիպակով՝ 555:

\* Կարգա՝ Կաղանկատուացին:

ի բերդին, հասեալ ի վերայ նոցա թշուառութիւն ի վերայ թշնամութեան. բայց չեւեւ հասեալ ժամանակն որ առաջի կայր: Եւ եղև այսպէս, զի իմացեալ Խոսրովու զժամադիր մեծ թագաւորացն երկոցունց ի քաղաքն այն, յառաջ քան զպաշարելն զօր փութանակի առաքէր յօգնականութիւն նոցա և պահպանութիւն քաղաքին զյօժարն և զքաջ պատերազմօղն, զգօրագլուխն իւր զՅարսապալակն, և յընտիր հեծելոց թիկնապահաց և դռնապահաց իւրոց ընդ նմա իբրև արս ՌՍ, զոր իբրև տեսին բնակիչք քաղաքին զօրաւիգն առաքեալ հանդերձ յաղթանդամ և կիրթ պատերազմակցօքն յոյժ զօրացան յանձինս իւրեանց և սկսան ծաղր առնել զերկուս թագաւորսն: Զի թէպէտ և տեսանէին զանթիւ բազմութիւն զօրացն հիւսիսոյ և արևմտից, զի ի նմանութիւն լերանց ճակատեալ շուրջ զքաղաքաւն: Թնդայր, դողայր երկիրն ի բազմութենէն, նաև ընդ նմին զմեքենայսն, և զչորեքանիւսն, և զայլ ազգի հնարս յօրինեալ ի ձեռաց ճարտարացն Հոռվմայեցոց: Նաև զուռուցիկ տիկսն մեծամեծս քարալիցս աւազալիցս, որով զգետն մեծ զԿուր, որ պատէ զքաղաքին կողմն, ուռուցեալ յետս ընդ դէմ ընդ պարիսպն դիմեցուցանէին, այլ նոքա ո՛չ ինչ վատեալք և յոչ մի ինչ իրաց, այլ քաջալէրէին զմիմեանս... Յուսկ յետոյ զկորստեանն իւրեանց խաղային զխաղ. զդդում մի մեծ եղեալ առաջի նկարէին ի վերայ նորա զպատկեր Հոռաց թագաւորին, կանգուն մի յերկայն և կանգուն մի ի լայն և գտեղի արտեանացն աչացն յօդ մի ծրագրեալ, որ ոչ ոք կարէր նշմարել, նոյնպէս և գտեղի մօրուացն լերկս ժպիրհս և գտեղի շնչառու քթացն, թիզ մի լայն, թուով մագուցն պերեկտիցն թէ կարէր ոք ճանաչել: Եւ բերեալ զայն եղին ի վերայ պարսպին յանդիման նոցա, և աղաղակէին առ զօրսն և ասէին՝ Ահաւասիկ թագաւորս ձեր ո՞ւր կայս, դարձարո՞ւք երկրպագէ՛ք սմա Զեքու խաքանեայս, և առեալ գեղարդս ի ձեռն ծակոտէին յանդիման նոցա զդդումն, նոյնպէս և զմիւս թագաւորն ծաղրէին, ձաղէին, այպանէին, անբնադէտս կոչելով:

Թէպէտ առաջին անգամն չկարացին կորզել զսա ի Պարսից, բայց յետոյ դիմեալ նոյն արքային Խաքանաչ առ ի թափել ի վերայ այսր քաղաքի զմթերեալ ոխս առաջին նախատանացն, և վերցուցեալ զսուր առ հասարակ, պատեցին զքաղաքն և դիմեալ ի պարիսպն կոյս զմիմեամբք դիզանալով թափեցան ի ներս, այնուհետև ասէ. «Թուլացան և լուծան ի քաջութեանց, մատնեցան ի պարտութիւն և անկան յետ ի պարսպէն և խուճապեալք որպէս զճնճղուկս ըմբռնեալ ի գործիս որսորդաց, ո՛չ ուրեք կարելով ժամանել ի տուն իւր, ձայն տալով գուժիւ ահագին հրամայել սիրե-

լոյ ամուսնոյ իւրոյ կամ գլխաւ ի ծնունդս որովայնի իւրոյ, այլ պարտասեալք և պակասեալք ջանային ծածկել զանձինս իւրեանց, ելանէր գոչումն հառաչանաց նոցա ըստ նմանութեան բազմամբոյս հօտից մաքեաց առ դառինս և զհետ նոցա հնձօղք անողորմք, որոց ձեռք իւրեանց հեղուին զվտակս արեանց և ոտք իւրեանց կոխէին զգլխակունսն և աչք իւրեանց տեսանէին զղիթաւալն իբրև զհեղեղս կարկտի: Իբրև հատան ճայնք ողբոցն և վկայիցն, ո՛չ ոք մնաց ապրեալ և ո՛չ մի: Ապա գիտացին նոքա թէ յագեցան սուրք նոցա: Ածին և գերկուս իշխանսն՝ զմի իշխան պետ կողմնակալ թագաւորութեանն Պարսից և զմիւսն ի բուն բնակչաց իւրոց ի տոհմէ իշխանութեան Վրաց աշխարհին հրամայեաց փորել զաչս նոցա, փոխանակ զի կոյր նկարեցին զպատկեր նորա. ապա մորթազերծ արարեալ, լցեալ զմորթն խոտով կախեցին զպարսպէն. հուսկ յետոյ պարապեցան ի ժողովել զաւարս. շեղջս և կոյտս կոյտս դնել առաջի բռնաւորին, որոց յաճախութեանց հայիլն ձանձրանայր տեսանելով զանթիւ և զանհամար տաղանդս ոսկւոյ և արծաթոյ այլ և զարդուց եկեղեցեացն, զականակապ մարգարտաեռ սպասուցն ո՛ր կարէ պատմել: Նոյնպէս զըմպոցսն զեղջիւրեղէնս և զլորամաձև փայտեղէնս, ա՛յն է՝ զանձի և կուլայ» զոր այժմ ածեն ՚ի գործ:

Յետ նորա Բուղա ամիրայ չագարացոց ի հուր դատեաց զամենայն շինութիւնս նորին և դարձոյց աւերակ, զնոյնն արար և Լանկթամուր բռնաւոր Օզբէգաց: Յետ նորա նոյնպէս արարին ոտնակոխ Օսմանցիք: Շահաբաս վարեաց զբնակիչս նորա ի Պարսկաստան: Եւ Նատիր առաւել ծանրացոյց զհարկս, թէպէտ կամեցաւ տանել ի Խորասան զերիս հարիւր գերդաստան չաչս ի թիկնապահութիւն իւրոյ անձին, սակայն զիջեալ ի խնդիր Աբրահամ կաթողիկոսի Կրետացոյ և Մելիք Քալանթար աղայի՝ որդւոյ Մելիք Աշխարանի Բեհբուդեանց զանց արար, միայն պահանջեաց ի նոցանէ զտուգանս ի միում նուագի քառասուն հազար սօմառ ցորեան և չորս հազար թուման դրամ:

Նոյնպէս սոսկալի եղեն հարուածք քաղաքիս ի վերջին ժամանակս ի ձեռն Աղայ Մահմատ - խանի. և իսպառ եղծաւ, հրդեհեցաւ և աւերեցաւ և կարօտացաւ ողբոց մարգարէին Երեմիայի: Եւ թէ յորպիսի ողբալի դրութեան մնայր քաղաքս այս պարզապէս յայտ առնեն նամականիք արքայից Վրաց Հերակլայ, Գէորգեայ և ընտանեաց նոցին առ կաթողիկան չաչոց Յովսէփ Արղութեանց, որոց իսկն գտանի առ իս ի պէտս պատմութեան\*:

\* Զամենայն հրովարտակ թագաւորաց Պարսից և զգրութիւնս արքայից Վրաց առ Յով-

ւուրս արքայութեան Գիօրգույ որդւոյ Հերակլեայ եմուտ ընդ հզօր պաշտպանութեան Ռուսաց կայսեր և ի 1801 թուին իսպառ միացաւ ընդ նմա՝ ընդ որոյ հովանաւորութեամբն ազատեալ ի սոսկալի հարուածոց զանազան թշնամեաց վայելէ զխորին խաղաղութիւն:

Յետ ո՛չ սակաւ ժամանակաց քաղաքս այս կերպարանափոխ եղև, հնագոյն և անշուք տունք շինեցան ըստ եւրոպիական ձևոյ, և մոլորաշաւիղ պողոտայք պարսպապատ քաղաքին եղան ի կարգի ըստ կարելոյն, այնուհետև հեղան զեղան յամէնուստեքէ բազմութիւնք բնակչաց: Պարսպափակ հին քաղաքն ոչ գոլով բաւական տարածեցաւ շինութիւնն ի շրջակայ վայրս նորին. ի Տափիթաղ. ի Կուկիայ ի Խարփուխ և այլն, և որք յառաջն էին տեղիք արօտական անասնոց և վարուցանի: Արդէն լցան բազմաթիւ շինութեամբք. զառաջինն շինեցաւ ի Տափիթաղ պալատ կուսակալին՝ շրջապատեալ ծաղկազարդ և ծառատունկ բուրաստանօք, և ապա տունք բնակչաց հոյակապ և յարմար ձևովք և ուղիղ պողոտայիւք. ուրանօր դեռ ևս՝ շարունակին անդադար եռայարկ և քառայարկ շինուածք: Բայց զբնակիչս Հալուաբարայ նախ քան զհարուածն Տիփիսայ էած աստ արքայն Վրաց Հերակլ ի Գանձակայ և յԵրևանայ, զորս անուանեն Յամքոտեցիք և Երևանցիք, ի վերայ որոց յաւել զմասն ինչ ի բնակչաց Երևանու կնիազ Յիցիանով, ուր և նոքա հետ զհետէ փոխեցին և փոխեն զանշուք սենեակս իւրեանց ի հոյակապ և ի յարմարաւոր տունս ըստ եւրոպիական ձևոյ:

Պալատ արքայից Վրաց անկանէր առ ափն Կուր գետոյ յարևելս հիւսիսոյ քաղաքին, իսկ այժմ աւերակ և աննշան: Ի տեղի որոյ կառուցաւ շքեղաձև տուն քաղաքական նահանգապետի, յորում այժմ բնակի մետրապօլիտն Ռուսաց:

Բնակիչք են աստանօր Ռուսք, Հայք, Վրացիք, Յոյնք, Գերմանացիք, Տաճիկք և գաղթական Գաղղիացիք, յորոց մեծ մասն հաշուին Հայք՝ աւելի քան զհինգ հազար գերդաստանս, ի ձեռս որոց են գրեթէ գլխաւոր մասն վաճառականութեան և արուեստից, և ըստ բնատուր հանճարոյ և ընդունակութեան յառաջացեալ են և յառաջանան ի լաւ անդր:

Կարվանսարայք են տասն և երեք, յորոց տասն են Հայոց և երևելիքն ի նոցանէ՝ Թամամշեանց և Արծրունեաց, և կրպակք վաճառականաց աւելի քան զչորս հազար ըստ մեծի մասին Հայոց հուպ ի կարվանսարայն Արծրունեաց, [որ] է սալայատակ և բարձրաձեղուն

---

սէփ կաթողիկոսն Արղութեանց, զգտեալն առ իս յաղագս անկորուստ պահպանութեան և ի պէտս պատմութեան երկից ի վախճան ծանապարհորդութեան իմոյ:

վաճառանոց Բագագխանայ անուանեալ, ուր նստին ի միասին Հայք և առնեն զվաճառ:

Եկեղեցիք Ռուսաց և Յունաց տասն և հինգ, Հայոց՝ տասն և չորս, Հայ Հոռովմեականաց՝ մէկ: Առաջին մայր եկեղեցի Հայոց կոչի Փաշի վանք, ըստ որում փաշայ ոմն հայազգի ապաշաւեալ զյանցանս իւր տայ բերել ի Սադիմայ զհող ի վանից սրբոյն Յակոբայ և եղեալ ի սմին տեղւոջ, ի վերայ որոյ կառուցանէ զգմբեթայարկ փոքրիկ եկեղեցի, անուանելով սորբ Յակոբ: Կից որոյ կառուցանի ՚ի նորոյ հոյակապ աղիւսակերտ եկեղեցի ի վերայ վեցից սեանց յանուն Սուրբ Աստուածածնայ, որ ունի գերիս խորանս սրբազան խորհրդոյ, երեք կաթողիկէիւք վայելչացեալ: Աստանօր ի հնումն նսէին առաջնորդք ի կողմանէ Էջմիածնայ և հովուէին միմիայն զտէրունի ժողովուրդս՝ թուի թէ զգաղթականս, ըստ որում Տփիսիս նահանգաւն հանդերձ վիճակ էր Հաղբատայ վանից և ունէր զառանձին առաջնորդ, իսկ այժմ երկուց վիճակաց միացեալ ի մի կայ ընդ իշխանութեան առաջնորդին Էջմիածնայ, և Հաղբատ յետս կացեալ է իւրոց իրաւանց:

Բարսեղ կաթողիկոս և Գրիգոր զտէրունի ժողովուրդս Փաշի վանաց, ընդ որս էին և տէրունի անուանեալք Կոսիս, Վաշլեվան, Տապախմելայ, Դուղամ, այժմ՝ Դեղում, Վարդիսուբան, Կիկէթ, Տագնագիղ, Լիս և Թէլէթ շնորհեցին թէ՛մ և վիճակ վանիցն Սանահնու, յանձն առնելով ի հովուութիւն Բարսեղ արքեպիսկոպոսին Բերեքեան Արդութեանց, բայց այժմ որպէս սոյն վիճակ, նոյնպէս և զսեպհական թէ՛մս նորա զտուեալն ի թագաւորաց Հայոց և Վրաց և հաստատեալն կոնդակօք կաթողիկոսաց ցաւուրս Յօհաննէս կաթողիկոսի Կարբեցոյ: Երբայքին արարեալ ի 1836 ամի՝ զկէս մասն միացուցին ընդ վիճակին Երևանայ և զկէսն ընդ Վրաստանի, այնուհետև և վանքն Սանահնի զօրէն Հաղբատայ յետս եկաց իւրոց իրաւանց, և զուցէ երկոքին վանօրայք ի սուղ ժամանակի համարեսցին ի թիւս աւերակացն Անուոյ:

Ներսէս կաթողիկոս ի ժամանակս իւրոյ առաջնորդութեան յետ կառուցանելոյ զհոյակապ ուսումնարան ի սմին քաղաքի և զընդարձակ բազմասենեակ խանութս հանդէպ նմին, կառոյց նաև ի պարսպի այսր վանաց զեռայարկ գեղեցկաշէն կրաշաղախ և աղիւսակերտ առաջնորդարան և զայլ հարկաւորեալ նմին պարագայս:

Ղազար աւագ քահանայ գործակալ սրբոյ Էջմիածնի ի 1789 ամի ի հայրապետութեան տեառն Ղուկասու և ի թագաւորութեան Վրաց Հերակլէայ երկրորդի նորոգեաց զեկեղեցիս ի ներքուստ և յարտաքուստ և գեղանկար յօրինուածովք շքեղազարդեաց օգնականութեամբ

*Եղբորն իւրոյ պարոն Աղալօյի: Նոյնպէս զգլուխ տաճարին Առաքելոյ անուանեալ արդեամբք պարոն Յովսէփայ Պապայեան Ծարիկեանց և մօր նորա Խանումին, Եղբորն Մկրտումին և տիկնոջ իւրոյ Թամարին:*

**Արձանագրութիւն Փաշի վանաց:  
ի ճակատ հարաւային դրան:**

Թուին ՌՄԼԷ, յամի ծննդեան Քրիստոսի 1788, ի հայրապետութեան Ղուկաս կաթողիկոսի և թագաւորութեան Վրաց Հերակլեայ Բագրատունոյ զայս վանքի Սուրբ Աստուածածնայ քաղաքիս նախկնաշէն եկեղեցին սորին սպասատր և աւագ քահանայ Տէր Ղազարոս և եղբայրն իմ Աղալօն կրկին նորոգեցինք ըստ բոլորին ներքուստ և արտաքուստ յիշատակ հոգոց մերոց և ծնողաց մերոց Դաւթին և Լալիթրան եկեղեցիս Մարիամին: Որք հանդիպիք զԱստուած ողորմի ասացէք:

**Ի ճակատ հիւսիսային դրան:**

Յամի տեսուն մերոյ Փրկչին հազար եօթն հարիւր ութսնի, ևս աւելորդ ինն համարի, ի յամսեանն Փետրվարի:

Ի հովուութեան Հայոցս տոհմի տեսուն Ղուկասու վեհապետի, իշխանութեանն Վրաց ազգի՝ երկրորդ Հերակլայ արքայի:

Այլ ի հոգին սպասիմեալ, որոյ շնորհօքն զօրացեալ, յօժարութեամբ յառաջ դիմեալ և ի շինումն ձեռնարկեալ:

Զտենչմունս սրտի մերոց կատարեալ, զհամայն շինուածս աւարտեալ,

Ապա ներքուստ և յարտաքուստ յօրինուածովք շքեղազարդեալ:

Ի յիշատակ մերոյս ազգի, Տէր Ղազարեան շառաւիղի. ի հոր մերոյ առն Դաւթի, մականուանեալ Ծաքարօյի:

Եկեղեցիս էր քայքայեալ, որոյ միջին կամարն անկեալ, բոլոր շինուածքն աղաւաղեալ, յոյժ անվայել տօգեղացեալ:

Նաև եղբօրս հարազատի, որ Աղալօյ անուն կոչի, ի գործս ընդ իս համախոհի, յօժարապէս ջանացողի:

Հուսկ յետոյ և ինձ նուաստի՝ Տէր Ղազարոս քահանայի. գործակալիս գահոյն մեծի Սուրբ Աթոռոյն Էջմիածնի:

**Յարևելեան կողմն հիւսիսային դրան:**

Կամա Փրկչին տեսուն Յիսուսին, և օգնութեամբ Աստուածածնին. նորոգեցաւ զլուս տաճարին, առաքելոց աջ դասին:

Սա յիշատակ անջնջելի բարի գաւակ աշխատողին. շինեցաւ արդեամբ Պապին որդի Ծարիկեանց Յովսէփին:

Եւ մօր սորա Խանութիւն, ան եղբօր Մկրտումիւն, համեատ տիկնոջ իր Թամարին, և համօրէն իրեանց ազգիւն:

Որքան պատարագ որ մատչի՝ լիցի սոցա մասն և բաժին:

Հազար հարիւր թուականիս իննսուն և ինն անգամ:

*Երկրորդ եկեղեցի, որ կոչի Կաթողիկէ, կառուցեալ ի ստորոտս ապառաժին Նարինդալայի ի Ռմէկ իշխանէ Հայոց ի Թուրքի Հայոց ՉԼ Դ\* . ի վեր քան զմեծ հրապարակն Պարսից անուանեալ, հոյակապ և շքեղ վայելչացեալ սրածայր կաթողիկէիւ, և անսիւն. ի պարսպի սորա բնակէին առաջնորդք վանիցն Հաղբատայ, այժմ այնոքիկ տունք ի նորոյ նորոգեալք կան ի վարձու: Հուպ ի սոյն եկեղեցի անկանի միւս Հրեշտակապետաց եկեղեցի, կրաշէն և կամարակապ, ուր իջևանս կալնուին առաջնորդք վանիցն Սանահնու:*

*Ի Կաթողիկէ եկեղեցւոջ գտանի մասն ի Կենաց փայտէ, զետեղեալ ի միջակիտի ոսկեզօծ խաչի, ի պատուանդանի որոյ գրի «Յիշատակ է սուրբ խաչս Գրիգոր վարդապետին ի դուռն Զարեքայ մեծ անապատին: Ի թուին Հայոց ՌՃԷ»: Նոյնպէս արծաթեայ պահարան երկփեղկեայ ոսկեզօծ դրամբք, յորում է մասն սրբոյն Գեորգեայ Զօրավարին, յիշատակ որոյ գրի ի քամակ պատկերին. «Պատկեր սրբոյն Գեորգայ յառաջնագոյն ի հանգուցեալ հօրէն իմմէ Գրիգոր Սուլթանեանէ ի տիպ սրբոյն Գեորգայ երագահաս Զօրավարին քանդակեցուցեալ նուիրեալ էր նորին հիսհրաշ նշխարի, որ ի Բօլնիս եղելոյ, իսկ այժմ էս՝ որդի Գրիգորի Գաիթ Սուլթանեանս, մինչ տեսի զայս յիշատակ հօրն իմոյ յաւետ իմն փոքր բարեաւ լցայ նախանձու, զոր և ետու մեծացուցանել եռապատիկ մեծութեամբ քան զոր յառաջն էր, որոց բոլոր արծաթի գումարն եղև 394 մսխալ, որով վերստին նորոգեալ պահարանիւք և օծմամբ ոսկւոյ յօրինել և զարդարել ետու ի յանուն նոյն մասին Գեորգեայ և մշտնջենաւոր յիշատակ ինձ Գաիթ Սուլթանեանիս և կողակցոյն իմոյ Մարիամին և ծնողաց հանգուցելոց իմոց Գրիգորին և Եղիսաբեթին, և որդւոց իմոց կենդանեաց Յովհաննիսին և Ովսանային և հանգուցելոցն Շուշանին և Փեփրոնեայ. զրեցաւ ի 1824 ի Թիֆլիզ»:*

*Բաց ի վերոյ գրելոցն են ի պարսպապատ քաղաքի այլ ևս հոյակապ, շքեղ և աղիւսակերտ եկեղեցիք՝ վայելչացեալք շքեղ կաթողիկէիւք և զարդարեալք ի ներքուստ և յարտաքուստ զանազան յարմար ձևօք և նկարիւք, որք են հին և նոր Մօղնի յանուն Սուրբ Աստուածածնայ և Սրբոյն Գեորգայ Զօրավարի, Սուրբ Նշան, Զիկրաշէն յանուն Սուրբ Աստուածածնայ, Սուրբ Գեորգ Քարափի թաղի, Սուրբ Բեթղէմէմ, Նորաշէն Սուրբ Աստուածածին և Անապատ կուսաց, զոր կառուցին*

\* Այս 1285 թվականը քաղված է Հովհ. Երզնկացու առաջաբան - հիշատակարանից և շինարարութեանը չի վերաբերում, այլ՝ իր ճառ խոսելու ժամանակին:

իշխանագնեայ Բեհբուդեանք և ապահով արարին զանազան արդիւնաբեր կալուածովք, յորում և բնակին միաբան կուսանք. զհիմնադրութիւն սորին և զկարգադրութիւն յայտ առնէ հետեւեալ նամակ պարկեշտուհի իշխանագնեայ մայրապետին Գալիանեայ, գրեալ ի ք. Իսպահան:

Պարկեշտատուն մայրապետի և արդարամիտ կուսանաց սուրբ Կատարի-  
նէ կուսանոցին Նոր Ջուղայու հոգեհարազատ քերց ի Քրիստոս:

Ողջոյն.

Անագան և կարի անագան եհաս ի ձեռս իմ պատուական նամակ սրբագումար միաբանութեանդ՝ գրեալ ի 15-ն Օգոստոսի անցելոյ ամի ընդ գովելի ձեռագործաց յիշատակելոց ի նոյն նամակի, ուստի և յամեցումն փոխադարձի գրութեան Ձերոյ գրեսցի ի յանցանս դիպաց ժամանակի:

Եթէ հեռացեալ եմք յաշխարհէ ըստ իսկական կոչման մերոյ վայել է մանաւանդ թէ պարտք են մեզ հեռանալ և յաշխարհային շողոքորթութեանց, և բանք մեր առանց աւելորդ պաճուճանաց պարտին լինել, այոն՝ այո՛, և ոչն՝ ո՛չ, և ահա ես և միաբանակից քորք իմ պարզաբար ասեմք, զի ընթրցեալ զցանկալի նամակ հեռացելոց ի մէնջ տեղեալ, այլ մերձ եղելոցդ հոգևով, բերկրեցաք յոյժ յոյժ և փառս վերառաքեցաք վերնախնամ Տեսչութեանն, որ ետ մեզ առիթ լսելոյ և ընթեռնելոյ ի գիր զորպիսութենէ սրբասունդ միաբանութեանդ, որ մայր և դայեակ համարի մերում կուսանոցի, որպէս տեսցի ՚ի ստորև...<sup>1</sup>

...Առ ի ընուլ զգովելի փափագ սրտի սրբասունդ քերցդ ցանկալի և կարի ցանկալի էր ինձ գրել ոճով իմն զհիմնարկութենէ մերում կուսաստանի զփոփոխութեանց, զանցից և զայլոց կարևորաց դիպելոց նմին մինչև ցմեր աւուրս, այլ աւաղ, զի ի լրումն այսպիսի բարի ցանկութեան Ձերոյ և այլոց բազմաց պակասին հաւատարիմ փաստք, քանզի ի ժամանակի աւերման քաղաքիս յանօրէն բռնաւորէն Աղայ Մահմադ-խանէ, ի ցաքուցրիւ փախստական լինիլ ընդ բոլոր բնակչաց քաղաքիս և կուսակրօն միաբանութեան մերում ի վայրս օտարօտիս, ընդ անդարձ գերութեան սրբազան անօթաց և եկեղեցական զարդուց մատնեցան ի կորուստ և մատեանք յիշատակաց և մուրհակք և պարզեազիրք և այլ թուղթք անապատի մերոյ, և ցայսօր ժամանակի ամենայն հե-

<sup>1</sup> Մեկ պարբերութիւն սղում ենք.- Պ. Մ.

տազօտութիւնք մեր ելեալ են ի դերև: Բայց առ ի լնուլ գտենչանս սրտի Ձերոյ ահաւասիկ ո՛չ ձանձրանամ դրոշմել ի գիր ընդ այժմեան վիճակի մերում կուսաստանի և զանցելոցն տեղեկութիւնս, զորս ի հատուկտոր թղթոց և յաւանդութեանց որդի ի հօրէ ընկալեալ եմք:

Առաջին. Իբրու հարիւր յիսուն ամօք յառաջ նախահաւն իմ Մեւիք Աշխարբէկ Բեհրուդեանց, չգիտեմ ի լինելն իւր ի Պարսկաստան ահանատես եղեալ, թէ ի լրոյ իմացեալ զբարեկարգ վարուց կուսանոցին Նոր Ջողայու, ցանկացեալ է և ինքն կարգել ի Տփխիս զկարգ աղօթաւոր կուսանաց, այլ յամին 1727 ի տիրապետութեան Օսմանեանց ի վերայ Տփխիսայ նահատակեալ նորա մարտիրոսական մահուամբ՝ եթող զկատարումն ցանկութեան սրտին իւրոց ժառանգաց, հարազատ որդի նորին և երիցագոյնն ի տոհմին Բեհրուդեան Մեւիք Աղան, որ ընդ Նատր Թահին նուաճեաց ցեղերս Ինդոսի, ի կատարումն բարի ցանկութեան հօր իւրոյ հրաւիրեալ է ի Ջողայէ զերկուս կուսանս և կարգեալ ի տան իւրում զառանձին աղօթանոց՝ սահմանեալ է զկարգ կուսանաց, և ընդ յաւելուլ թուոյ կուսանաց և ի դոյզն ինչ անդորրանալ Վրաստանի իշխանագուն Բեհրուդեանք ի թիկանց կողմանէ տան իւրեանց ի վերայ սեպհական գետնի իւրեանց կառուցեալ են զեկեղեցի յանուն Նախավկային Ստեփաննոսի և առ նովաւ զսենեակս, ուր և տեղափոխեալ են զկուսանսն նուիրելով ի սեպհականութենէ իւրեանց զկրպակս, զեկեղեցական անօթս և զայլ կարևոր պէտս: Թիւք կուսանաց մերում Կուսաստանի՝ ի հնումն, որպէս և այժմ ըստ դիպաց, է՛ զի առաւելեալ են և է՛ զի նուագեալ, միայն յաւուրս վերջին աւերածոյ քաղաքիս եղեալ են այնոքիկ քսան և եօթնի չափ:

Ահաւասիկ, քորք իմ պատուականք, այսչափ և ե՛թ մարթացայ ծանուցանել զայսմ կարևոր խնդրոյ, զմնացեալսն թողլով ժամանակին յաջողութեան, մինչև յաջադկոտ ձեռք ժամանակին, որք մատնեցին զհնութիւս յիշատակաց մերոց ի կորուստ, քաղցրացեն յերևան հանել զայնոսիկ ցանկալ ի հողոց մերոց զգանձս, դարձուք այժմ առ այժմեան վիճակ մերում Կուսաստանի:

Երկրորդ՝ որպէս ի վեր անդր գրեցի անապատն մեր կառուցեալ է ի Հարաւային կողմն քաղաքիս առ ստորոտով Սօլօլակ անուանեալ լերին ի թիկնաց կողմանէ տանն երից հարազատ իշխանաց Վաալի, Գրիգորի և Գաթի իմոց հարազատ և սիրելի եղբարց ի թաղին անուանելոյ Բեհրուդեանց. տնապատն ի չորից կողմաց պատեալ է պարսպաւ՝ ունելով զդուռն մի առ ճանապարհաւ Բեդդէճէճ եկեղեցւոյ և զառանձին դուռն, որ ելանէ ի գաւիթ յիշատակեալ իշխա-

նաց, եկեղեցին կառուցեալ յանուն սրբոյ Ստեփաննոսի (որոյ և մասն նշխարաց պահի ի նմին ընդ այլոց մասանց) շինեալ է սագածև ի հիմանց ի գլուխն քարուկիր, ունելով զփոքրիկ զանգակատուն գմբէթարդ, դիրք եկեղեցւոյն չէ ինչ մեծ և փառաւոր, այլ այնչափ և եթ, որչափ ներէր ժամանակն և տեղին. յարեմտեան կողմանէ եկեղեցւոյն կառուցեալ էին սենեակք ի բնակութիւն կուսանաց, խոհանոցն, ամբարանոցն և այլն, որք ըստ ձախողութեան ժամանակին շինեալ էին, այնչափ նեղ և անձուկ, զի առաւել բերէին զնմանութիւն հիւղից մրգապահոց, քան բնակութեան մարդկան, և չէր ինչ մեզ հրաժարելոցս յաշխարհային վայելութեանց անցուցանել զաւուրս մեր ի նոսին, այլ զի այսոքիկ հնացեալ մերձ էին ի կործանումն, և յաչս մերոց՝ մանաւանդ բազմազգի և բազմալեզու օտար ազանց նախատական իմն էր՝ հակառակ այժմեան անդորրութեան ընդ օրհնաբանեալ տէրութեամբ Ռուսաց և վայելչութեան կողմանցս քաղաքիս այնպիսի բնակութիւն, ուստի յայսմ ամի վերակացութեամբ վերատեսչի բարեկարգութեան եկեղեցեաց Հայոց Տփլիսայ Ղազար աւագ քահանայի Գաթեան քանդեալ ի հիմանց և ընդարձակեալ գտեղին քարահատութեամբ ի կողմանէ լերինն կառուցաք ի նորոյ զվայելուչ սենեակս ըստ եւրոպիական տարազու ըստ ձևոյն գծագրելոյ ի քաղաքական իշխանութենէ, յորս և բնակիմք արդէն: Իսկ ի վայելուչ նորոգ շինութիւն եկեղեցւոյն ձեռնարկցուք Աստուծով յառաջիկայ ամի: Դուք, քորք իմ պատուականք, աղաչեցէք զՏէր յաջողել զգործս ձեռաց մերոց, իսկ վասն իմ առանձին տեսանել զլրումն շինութեան սրբոյ տաճարիս և ապա վճարեալ համարելով վասն իմ զամենայն ցանկութիւն սրտիս երթալ առ Արարիչն իմ՝ տալ զհամար տնտեսութեանս, ո՛չ ըստ իւրումն արդարութեան, այլ ըստ մարդասէր գթութեան:

Երրորդ՝ ի պաշտել զկարգ պաշտաման եկեղեցւոյ և ի մատուցանել զսրբազան խորհուրդ պատարագի երկիցս յեթնեկի և յաւուր հանդիսաւոր տօնից նշանակի ի թեմակալ առաջնորդէ վիճակիս ոմն ի բարերարոյ քահանայից ըստ մերում ցանկութեան, իսկ զպաշտօն սարկաւագի և դպրի կատարեմք ինքնին:

Չորրորդ՝ ի միաբանութիւն վանացս ընկալեալ լինին օրիորդք ո՛չ կարի մանկահասակք և ո՛չ անցեալք զաւուրքք, իսկ այրիք ո՛չ բնաւ, օրիորդք ցանկացօղք մտանել ի կարգ կուսանաց պարտին վկայեալ լինիլ ըստ բարի վարուց և գիտել գոնէ զհասարակ հայերէն ընթերցումն. ցանկացօղն մտանել ՚ի կարգ կուսանաց միաբանութեանս ո՛չ իսկոյն կոչի յոր և իցէ աստիճան, այլ կարգեալ ի

Թիւս ունկնդրաց պարապին յաղօթս և յուսումն հայերէն ընթերցանութեան, եկեղեցական արարողութեանց և ի նշանակեալ ժամս՝ ի ձեռագործս, մինչև ի փորձառութեան քանի մի ամաց ինքնին ի չափ կատարելութեան հասեալ ընտրեսցէ, թէ կարող է արդեօք բառնալ զլուծ զինուորութեան Քրիստոսի ցօր վախճանի կենաց իւրոց: Ի լրանալ ժամանակի փորձոյ, եթէ մնայ նա ըստ ազատ կամաց յիւրումն ընտրութեան և միաբանութիւն վանացս ըստ միաձայն խորհրդոյ արժանի վարկանի զնա ընդունելոյ ի կարգ միաբանից՝ յայտնէ զայսմանէ վիճակաւոր առաջնորդին, և կարգի ի թիւս միաբանից: Ծնօղք, ազգականք կամ հոգաբարձուք օրիորդին նուիրելոյ զանձն ի կուսութիւն պարտական են ըստ իւրեանցն կարողութեան մատուցանել ի կուսանոցն զօժիտն՝ զորս տալոց էին ի հարսնացուցանել զնա աշխարհի: Այս գումար միանայ ընդ գումարաց վանացն և զկնի վախճանի կուսին և ո՛չ դառնայ առ ծնօղս կամ առ ազգականս նորա: Հանադերձք, ուտեստ և այլ կարևոր պէտք կուսանաց յօրէ մտից նոցա յանապատն ցօր վախճանի նոցա տնտեսին ի գումարաց վանացս ըստ տնօրէնութեան մայրապետին և երկուց գործակցաց նորին ընտրելոց ի կուսանաց և հաստատելոց ի վիճակաւոր առաջնորդէն վասն ամենայն արդեանց և ծախուց կուսանոցին յամի յամի տուեալ լինի ի վիճակային իշխանութենէ կնքեալ և երիզապաղեալ մատեան, ուր գրին ամենայն մուտք և ելք գիտութեամբ մայրապետին և երկուց գործակցաց նորին, և ի վախճան տարւոյն այնօքիկ հաշուական մատեանք առաքին առ հոգևոր վիճակային իշխանութիւնն ի վերազննութիւն: Մի սեղան է բոլոր միաբանութեան վանացս՝ մեծաց և փոքունց և միատեսակ զգեստ, ի միասին ննջեն և ի միասին յառնեն, մի կամք են ամենեցուն և միատեսակ խորհուրդ, ստորադասութիւնն ճշդիւ պահպանի ի Կուսանոցիս, առանց գիտութեան և հրամանի մայրապետին ո՛չ կարէ ելանել ոք ի միաբանից ընդ դուռն վանացս և ո՛չ ձեռնարկանել ի գործ ինչ, որ չէ՛ հրամայլ նմա ո՛չ ոք ՚ի միաբանից: Առանց գիտութեան մայրապետին կարէ գրել առ ոք զնամակ, թէ և առ մերձաւոր ազգականս, և ո՛չ յումեքէ ընդունել զայն: Եթէ ոք գտցի անհնազանդ կարգի և կանոնաց վանացս յետ միանգամ և երկիցս խրատելոյ, եթէ ստահակեսցի՝ զրկի ի կարգէ միաբանութեանս և օժիտն նորա դարձուցանի յետս իբրև անարժան մտանելոյ ի զանձարան ուխտիս:

Հինգերորդ՝ պարապումն մեր հոգևոր կատարի այսպէս. յառաւօտուն վազքաջ ընդ առաւօտն ի ձայն զանգակաց յարուցեալ ամե-

նեցողն գկնի դոյզն ինչ մտածական աղօթից կամ սաղմոսելոյ ժողովին յեկեղեցին, ուր սկսանի կարգ գիշերապաշտաման մինչև ցճաշու ժամն և ապա ելեալ երթան յիւրաքանչիւր սենեակս կամ ի պաշտամունս նշանակեալս ի մայրպետէն: Ի 10 ժամու կրկին ժողովին յեկեղեցին և կատարեալ զպաշտօն ժամերգութեան ճաշու և ի նշանակեալ աւուրս առաջիկայ սպասաւոր գտեալ զենման անմահ գառին երկնաւորի ելանեն յեկեղեցւոյն և ժողովին ի սեղանատուն, ուր օրհնութեամբ մայրապետին վայելեն զսեղան ո՛չ շուսլ, և ապա երթան յիւրաքանչիւր պաշտօն: Յերեկոյեան պահու ժողովեալ յեկեղեցին կատարեն զերեկոյին աղօթս և զկարգ հանգստեան. յուր ժամու նստին ի սակաւաքանակ ընթրիս, յետ այնորիկ ժողովեալ յեկեղեցին ասեն. «Եկեսցեն իւր սարօք» և զաւուրն ձայնի մի կանոն սաղմոսն ընդ ի նեղութեան կանոնին և ապա երթեալ ի սենեակս, որք կամինն ննջենն, և որք կամին պարապեն ցժամս ինչ յաղօթս և յընթերցումն գրոց:

